



Center for European Studies




Global Campus  
Caucasus

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

# ԴԻՄԱԿԱՅՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԳՄՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

(Հայաստան, Արևմտյան Ադրբեջան, Թուրքիա,  
Իրան, Աուստրալիա, Ուկրաինա)

ԽՄԲԿԻՐ՝  
ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ





Global Campus  
of Human Rights

**This document has been produced with the financial assistance of the European Union and as part of the research activities of the Global Campus of Human Rights. The contents of this document are the sole responsibility of the authors and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union or of the Global Campus of Human Rights.**

ԴԻՄԱԿԱՅՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ  
ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԵՎ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա,  
Իրան, Ռուսաստան, Ուկրաինա)

Խմբագիր՝  
ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2024

ՀՏԴ 32  
ԳՄԴ 66.0  
Դ 490

*Հրատարակության է երաշխավորվել  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի  
և եվրոպական ուսումնասիրությունների  
կենտրոնի գիտական խորհուրդների կողմից:*

**Դ 490 Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան, Ուկրաինա) / Խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2024, 364 էջ:**

Սույն կոլեկտիվ մենագրությունը Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությամբ կատարված համեմատական վերլուծություն է տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերի վերաբերյալ: Մասնավորապես դիտարկված են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքական կայունության միտումներն ու փոխակերպումները: Երկրների ընտրությունը պայմանավորված է տարածաշրջանում աշխարհաքաղաքական բարդ զարգացումներով, դերակատարների նոր նախաձեռնություններով և ուժերի վերադասավորությամբ: Աշխատանքը ներառում է ինչպես ներերկրային, այնպես էլ միջերկրային վերլուծություններ: Ներերկրային վերլուծությունն ընդգրկում է տարածաշրջանի երկրների կայունության քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների համակողմանի ուսումնասիրությունները 2000-2021/2022 թվականներին: Միջերկրային վերլուծության շրջանակում դիտարկվում են 2022 թվականի քաղաքական կայունության համեմատական ցուցանիշներն ըստ նշված երկրների: Հետազոտությունը նախատեսված է համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների գիտնականների, փորձագետների և ուսանողների համար:

*Հայաստանի ազգային գրադարանի համահավաք գրացուցակ:  
Այս գրքի փյվյալները գրանցված են համահավաք գրացուցակում և հասանելի են Հայաստանի ազգային  
և Երևանի պետական համալսարանի գրադարաններում:*

ՀՏԴ 32  
ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2693-1  
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426931>

© Հեղ. խումբ, 2024  
© ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2024  
© ԵՊՀ հրատարակչություն, 2024

## **Խմբագիր և հետազոտական խմբի գիտական ղեկավար, համահեղինակ՝**

Արուսյակ Ալեքսանյան

ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտությունների բաժնի ղեկավար, դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

## **Գիտահետազոտական խմբի անդամներ, համահեղինակներ՝**

Աշոտ Ալեքսանյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գոհար Իսկանդարյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Արտյոմ Տոնոյան

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող

Վանատուր Շերենց

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի վերլուծաբան

Աննա Սարկիսյան

Միջազգային և եվրոպական անվտանգության մագիստրոս, փորձագետ-վերլուծաբան

Տվյալների հավաքմանը օժանդակել է ԵՊՀ ԵՈՒԿ փորձագետ Մերի Մարտիրոսյանը

## **Հետազոտական խմբի խորհրդատու՝**

Վլադիմիր Մարտիրոսյան

ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

## **Գրախոսներ՝**

Գարիկ Քեոյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ.

Ալեքսանդր Մարգարով

ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ, քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Հապավումներ և համառոտագրություններ .....</b>	<b>9</b>
<b>Հեղինակների մասին.....</b>	<b>12</b>
<b>Ներածություն .....</b>	<b>15</b>
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
<b>Հեղազոտության կատարման ամփոփագիր .....</b>	<b>18</b>
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
<b>Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը .....</b>	<b>23</b>
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
<b>Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում.....</b>	<b>34</b>
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
<b>Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք.....</b>	<b>61</b>
<i>Աննա Սարկիսյան</i>	
<b>Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները.....</b>	<b>113</b>
<i>Արփյոմ Տոնոյան</i>	

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպավորումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021) ..... 157**

*Վանապուր Շերենց*

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը. ազդեցության գործոններն ու սպառնալիքները..... 201**

*Գոհար Իսկանդարյան*

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև ..... 241**

*Աշոտ Ալեքսանյան*

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. խնդրահարույց գործընկերություն և անհամաչափ առճակատում ..... 291**

*Աշոտ Ալեքսանյան*

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջերկրային վերլուծություն ..... 329**

*Արուսյակ Ալեքսանյան*

**Անունների և հիմնաբառերի ցանկ ..... 347**

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա	Առևտրաշրջանառության ծավալ
ԱԶԿ	Արդարություն և զարգացում կուսակցություն
ԱԷՄԳ	Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն
ԱԺՃԿ	Ադրբեջանի Ժողովրդական ճակատ կուսակցություն
ԱլԳ	Արևելյան գործընկերություն
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
Ադք.	Ադրբեջանի մակարդակ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՇԿ	Ազգայնական շարժում կուսակցություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՊՆՀ	Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամ
ԲԴ	Բյուջեի դեֆիցիտ
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
Գ	Գնաճ
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԴԺՀ	Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
Զբ.	Զբաղվածության մակարդակ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԶՈՒ	Զինված ուժեր



ԺԺԿ	Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԻԱ	Իրական աշխատավարձ
ԻԻՀ	Իրանի Իսլամական Հանրապետություն
ԻՀԴ	Իմամ-հաթիփ դպրոց
ԻՀՊԿ	Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս
ԼԺՀ	Լուգանսկի ժողովրդական Հանրապետություն
ԽՀԱԱՀ	Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԳՎ	Կրոնական գործերի վարչություն
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿՄՎ	Կովկասի մուսուլմանների վարչություն
ՀԱ	Հակամարտության առկայություն
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԳՀԾ	Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր
ՀԺԿ	Հանրապետական ժողովրդական կուսակցություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանել
ՀՌԳ	Հատուկ ռազմական գործողություն
ՀՌԻ	Համաշխարհային ռազմականացման ինդեքս
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՔ	Հանցագործությունների քանակ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի ԱԽ	Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ
ՄԱՇ	Միացյալ ազգային շարժում

ՄԶԻ	Մարդկային զարգացման ինդեքս
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՇՀԿ	Շանհայի համագործակցության կազմակերպություն
ՉԳ	Չգիտեմ
ՊԱԾ	Պետական անվտանգության ծառայություն
ՊԱՀՀ	Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան
ՊԱՍՆ	Պետական անվանական սոցիալական նպաստ
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՊԾ	Պարեկապահակային ծառայություն
ՊՊԿ	Պետական պլանավորման կազմակերպություն
ԶԻ	Զինի ինդեքս
ՌԲՄՊ	Ռուսաստան-Բելառուս միութենական պետություն
ՌԲՆ	Ռազմավարության և բյուջեի նախագահություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԳԻ	Սոցիալական գործոնների ինդեքս
Ստ.	Ստվերային տնտեսության մակարդակ
ՎՊԾ	Վիճակագրության պետական ծառայություն
ՏԱԻ	Տնտեսական ազատության ինդեքս
ՏԳԻ	Տնտեսական գործոնների ինդեքս
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՎ	Տնտեսության վարկավորում
ՔԱ	Քաղաքացիական անհնազանդություններ
ՔԱԻ	Քաղաքացիական ազատությունների ինդեքս
ՔԳԻ	Քաղաքական գործոնների ինդեքս
ՔԻԻ	Քաղաքական իրավունքների ինդեքս
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՔՀԿԻ	Քաղաքական համակարգի կայունության ինդեքս
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Արուսյակ Ալեքսանյանը** քաղաքական գիտությունների թեկնածու է, դոցենտ, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտությունների բաժնի ղեկավար և դասախոս: Նա դասավանդում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնում: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է համեմատական քաղաքական վերլուծությունը, եվրաինտեգրման գործընթացները, քաղաքական կայունության ու ժողովրդավարության ինդեքսները, հետազոտության մեթոդները և այլ թեմաներ: 2009 թ.-ին Արուսյակ Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում մշակել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը, իսկ 2012 թ.-ին ՀՌԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի հետազոտական ծրագրի շրջանակներում՝ Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը: Արուսյակ Ալեքսանյանի մասնագիտական խմբագրությամբ և համահեղինակությամբ հրատարակվել է 7 աշխատություն, որոնցից 6-ը՝ երկլեզու:

**Աշոտ Ալեքսանյանը** քաղաքական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, ինչպես նաև Երևանի համալսարանի «Journal of Political Science: Bulletin of Yerevan University» հանդեսի գլխավոր խմբագիր: Նրա հիմնական հետաքրքրություններն են քաղաքացիական հասարակությունը, սոցիալական գործընկերությունը, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: 2002-2016 թթ. եղել է Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) և ԵՄ «Էրազմուս Մունդուս»-ի հրավիրված գիտնական (Հաննովերի, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյանի, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի, Լյուվենի Կաթոլիկ և Բեռլինի ազատ համալսարանի):

րանների քաղաքագիտության ինստիտուտներում): 2016 թվականից նա Գերմանիայի Ֆրիդրիխ Շիլլերի անվան Յենայի համալսարանի քաղաքագիտության ինստիտուտի հրավիրված գիտնական է: 2024 թվականից նա նաև Հայաստանում DAAD-ի դեսպանն է:

**Գոհար Իսկանդարյանը** պատմական գիտությունների թեկնածու է, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ: Նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում են Իրանի տարածաշրջանային քաղաքականությունը ժամանակակից շրջանում, Իրան-ԱՄՆ հարաբերությունները, Իրանի պետական համակարգի կառուցվածքը: Հեղինակ է երկու մենագրության, առավել քան 30 հոդվածների, մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների, կազմակերպել է իրանագիտական մեկ տասնյակից ավել միջազգային գիտաժողովներ և կլոր սեղան քննարկումներ:

**Արտյոմ Տոնոյանը** բանասիրական գիտությունների թեկնածու է, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ: Նա նաև ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող է: Զբաղվում է Ադրբեջանում խոսվող իրանական լեզուների, ինչպես նաև Ադրբեջանի էթնիկական, կրոնական և լեզվական քաղաքականության ուսումնասիրությամբ: Վերջին տարիներին նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում է նաև հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական համակարգի ուսումնասիրությունը:

**Վանատուր Շերենցը** Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի շրջանավարտ է, իսկ ներկայումս կրթությունը շարունակում է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում որպես ասպիրանտ: Նա դասավանդել է ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում: Այժմ դասախոսում է Երևանի Գլաձոր համալսարանում: Նրա գիտական հետաքրքրության հիմնական թեմաներն են թուրքերենը որպես օտար լեզու, Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցությունը և Թուրքիայի եվրաինտեգրման գործընթացը:

**Աննա Սարկիսյանը** միջազգային և եվրոպական անվտանգության մագիստրոսի կոչումը ստացել է Ժնևի համալսարանից: Շուրջ քսան տարի զբաղվում է սոցիալ-տնտեսական և անվտանգային հարցերի հետազոտու-

թյուններով և զարգացման ծրագրերով՝ իր մասնագիտական ներդրումն ունենալով Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի հետազոտական և վերլուծական ծրագրերին, Նյու Յորքում Միացյալ ազգերի կազմակերպությունում Հայաստանի մշտական ներկայացուցչությունում, ՄԱԿ Զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակում, միջազգային և տեղական մի շարք այլ կազմակերպություններում: Ներկայումս ղեկավարում է միջազգային կառույցների կողմից իրականացվող հումանիտար և տնտեսական զարգացման ծրագրերը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաքաղաքական միտումների՝ արագ փոփոխվող և համաշխարհային նոր դերակատարների երևան գալու արդի պայմաններում ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջաններում քաղաքական համակարգերի կայունության ուսումնասիրությունները ինչպես գիտնականների, այնպես էլ քաղաքական գործիչների ուշադրությանն արժանացած առանցքային հիմնահարցերից են: Այդ համակարգերի դիմակայությունը առավելապես հիբրիդային պատերազմների և անկայուն խաղաղության պայմաններում անչափ կարևոր է տարածաշրջանային և համաշխարհային անվտանգության պահպանման տեսակետից:

**«Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում»** խորագրով սույն աշխատությունը առանցքային յոթ երկրի՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքական համակարգերի կայունության վերաբերյալ միջգիտակարգային հետազոտություն է:

Թեմայի և երկրների ընտրությունը պայմանավորված է այդ երկրներում ընթացող քաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ զարգացումներով, նրանց փոխազդեցություններով և աշխարհաքաղաքական նշանակությամբ: Այդ փոխազդեցությունները և՛ պատմական հակամարտությունների, և՛ ժամանակակից քաղաքական փոխակերպումների արդյունք են, որոնք հետազոտության կարևոր օբյեկտ են տարածաշրջանային կայունության փոփոխությունների ընկալման և վերլուծության համար:

Աշխատանքում կիրառվում է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) մեթոդաբանությունը՝ համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրություններ կատարելու համար: Այն ազգային գործիք է և կիրառվում է ինչպես գիտնականների, այնպես էլ ուսանողների կողմից: Այս առումով տեղին է նշել, որ ՔՀԿԻ-ի մեթոդաբանության կիրառման փորձը

սկսվել է դեռևս 2009 թ.-ին հրատարակված «Քաղաքական համակարգի կայունության գնահատման մոդելի մասին (ՀՀ օրինակով)» գիտական հոդվածում: Հաջորդիվ, Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությամբ իրականացվել են մի շարք հետազոտություններ, որոնցից է, օրինակ՝ 2013 թ.-ին ԵՊՀ-ում հրատարակված **«Հարավային Կովկասի, ԵվրԱզԵՍ և ԵՄ անդամ-պետությունների քաղաքական կայունության ինդեքսը (ներերկրային և միջերկրային վերլուծություն)»** թեմայով աշխատությունը, 2019-ին՝ **«Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)»** աշխատանքը, իսկ 2021 թ.-ին՝ **«ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները. Քաղաքական գործոնների ինդեքսը»** հրատարակությունը: Միևնույն ժամանակ սույն հրապարակումը կարևորվում է տարածաշրջանային երկրների քաղաքական գործընթացների համալիր վերլուծության համատեքստում: Գրքում կիրառված տարածաշրջանային մոտեցումը շեշտադրում է այդ երկրների փոխկապվածությունը և ընդհանուր մարտահրավերները, որոնց նրանք առերեսվում են՝ սկսած չլուծված հակամարտություններից մինչև ներքաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները: Աշխատանքի ուսումնասիրություններն անդրադառնում են ինչպես առանձին երկրների կայունության միտումներին, այնպես էլ նրանց փոխազդեցության և աշխարհաքաղաքական փոխակերպումների հետևանքով առաջացած տարածաշրջանային օրինաչափություններին: Այսպիսի համալիր վերլուծությունները հնարավորություն են տալիս առավել խորքային հասկանալու տարածաշրջանային կայունության հետագծերը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, կատարման ամփոփագրից, ինը գլխից, ինչպես նաև հապավումների և համառոտագրությունների ու անունների և հիմնաբառերի ցանկերից: Առաջին գլուխը նվիրված է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանության ներկայացմանը, որին հաջորդում են յուրաքանչյուր երկրի վերջին երկու տասնամյակների ընթացքում քաղաքական կայունության միտումների և դրանք պայմանավորող գործոնների մանրամասն ուսումնասիրությունները: Եվ վերջապես վերջին՝ իններորդ գլուխն անդրադառնում է միջերկրային վեր-

## **Ներածություն**

---

լուծությանը՝ սանդղակավորելով դիտարկվող պետություններն ըստ քաղաքական կայունության ինդեքսի 2022 թվականի համար և կատարելով քաղաքական, տնտեսական և սոցիալական ենթահինդեքսների և ցուցանիշների համեմատական վերլուծություն:

**ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**



## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան, Ուկրաինա)» գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտությունների բաժնի ղեկավար, փորձագետ և դասախոս Արուսյակ Ալեքսանյանի (ք.գ.թ.) ղեկավարությամբ և մեթոդական ցուցումներով: Հետազոտությանը մասնակցել են ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ Աշոտ Ալեքսանյանը (ք.գ.դ.), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ Գոհար Իսկանդարյանը (պ.գ.թ.), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դոցենտ Արտյոմ Տոնոյանը (ք.գ.թ.), ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի վերլուծաբան Վանատուր Շերենցը, ինչպես նաև միջազգային և եվրոպական անվտանգության մագիստրոս, փորձագետ-վերլուծաբան Աննա Սարկիսյանը:

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանության շրջանակում, կիրառելով քանակական և որակական մեթոդներ, հեղինակները համեմատական վերլուծություն են կատարել տարածաշրջանի 7 երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների վերաբերյալ: Արդյունքում հավաքվել, մշակվել, գնահատվել և հաշվարկվել են 7 երկրի ԲՀԿԻ-ի և դրա 3 ենթաինդեքսների՝ Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի և Ա<sub>ԳԻ</sub>-ի տվյալները 23 տարվա կտրվածքով (2000-2021/2022 թթ.):

Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի, Ա<sub>ԳԻ</sub>-ի, հետևաբար, դրանց հիման վրա հաշվարկված ԲՀԿԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է աննշան

տարբերվեն նախորդ հրապարակումների (տե՛ս Ներածություն բաժինը) համապատասխան տարիների արժեքներից: Դա պայմանավորված է մոդելում ներմուծվող տվյալների շտեմարանների պարբերաբար վերամշակմամբ, համալրմամբ և ճշգրտմամբ: ՔՀԿԻ-ի և դրա ենթաինդեքսների տվյալների աննշան տարբերությունը նախորդ հրապարակումների համեմատ կարող է պայմանավորված լինել նաև ՔՀԿԻ-ի մոդելում նոր տվյալների ներմուծմամբ և դրա հետևանքով որոշ փոփոխականների ժամանակագրական շարքերում նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխմամբ:

Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում հեղինակները հիմնվել են Համաշխարհային բանկի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ազգային վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների տվյալների շտեմարանների վրա: Դրանց համատեքստում ՔՀԿԻ-ի հաշվարկներում դիտարկվել են նաև վերոհիշյալ երկրների պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական հրապարակումները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց ելույթները և հարցազրույցները, փորձագիտական վերլուծությունները և ՋԼՄ-ների հրապարակումները:

2000-2021/2022 թթ. ՔՀԿԻ-ի չափումների և համեմատական վերլուծության արդյունքում ստեղծվել է շուրջ 3500 տվյալից բաղկացած շտեմարան:

ՔՀԿԻ-ի հետազոտության տվյալների հավաքման, մշակման և հաշվարկների իրականացման համար հիմք են հետևյալ աղբյուրները.

## **1. Քաղաքական գործոնների ինդեքս՝**

- 1.1. օտարերկրյա ուղղակի ներդրումները\*, ԱՄՆ դոլար/ՀՆԱ% (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),

---

\* Տվյալ փոփոխականի ընդգրկումը մոդելի քաղաքական գործոնների շարքում ընդունելի է, քանի որ այն ներքաղաքական իրադարձությունների գնահատման «զգայուն» ցուցանիշ է, և քաղաքական կայունության տատանումները բավականին

- 1.2. Տնտեսական ազատության ինդեքսը\* («Հերիթիջ» հիմնադրամի զեկույց),
- 1.3. Քաղաքական իրավունքների ինդեքսը («Ազատության տան» «Ազատությունն աշխարհում» զեկույց),
- 1.4. Քաղաքացիական ազատությունների ինդեքսը («Ազատության տան» «Ազատությունն աշխարհում» զեկույց),
- 1.5. Կոռուպցիայի ընկալման համաթիվ/ինդեքս («Թրանսփարենսի Ինթերնեշնլի» զեկույց),
- 1.6. քաղաքացիական անհնազանդությունների քանակը/մակարդակը (գնահատված է հետազոտողի/հեղինակի կողմից),
- 1.7. հակամարտության առկայությունը (գնահատված է հետազոտողի/հեղինակի կողմից),

## 2. Տնտեսական գործոնների ինդեքս՝

- 2.1. համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.2. առևտրաշրջանառության ծավալը, ԱՄՆ դոլար/ՀՆԱ% (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 2.3. տնտեսության վարկավորման ծավալները, ՀՆԱ% (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.4. գնաճը (%) (ազգային վիճակագրական ծառայությունների, Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.5. ստվերային տնտեսության մակարդակը, ՀՆԱ% (Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույց),

---

կարճ ժամանակահատվածում իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ներդրումների ծավալի վրա:

\* Տնտեսական ազատության ինդեքսն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում, քանի որ այն արտահայտում է նաև օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները, դատական համակարգի արդյունավետությունը և համարվում է քաղաքական կայունության ու ժողովրդավարության կարևոր ցուցանիշներից մեկը:

2.6. բյուջեի դեֆիցիտը, ՀՆԱ% (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),

**3. Սոցիալական գործոններն են՝**

3.1. Մարդկային զարգացման համաթիվը (ՄԱԿ-ի զարգացման ծրագրի զեկույցներ),

3.2. իրական աշխատավարձը, ԱՄՆ դոլար (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների հիման վրա հետազոտողի/հեղինակի հաշվարկներ),

3.3. զբաղվածության մակարդակը (%) (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),

3.4. հանցագործությունների քանակը 1000 շնչի հաշվով (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),

3.5. աղքատության մակարդակը (%) (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),

3.6. Զինի ինդեքսը (ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ):

**Հղման կարգ**

Աշխատանքում կիրառվել է Չիկագոյի համալսարանի ներտեքստային հղման կարգը (The Chicago Manual of Style 18th edition, author-date style): Իրավական փաստաթղթերի (օրինակ՝ օրենքներ, նախագահի հրամանագրեր) և հիմնական շտեմարաններից տվյալների ներկայացման պարագայում աղբյուրները նշվել են տողատակում:

**Սահմանափակումներ**

Տվյալների հավաքման ժամանակ որոշ երկրների պարագայում առկա են եղել մի շարք սահմանափակումներ՝ կապված դրանց բացակայության, չթարմացվածության և արժանահավատության հետ: Այսպես օրինակ՝ Ադրբեջանին վերաբերող ուսումնասիրությունների ժամանակ որոշակի բարդություններ են առաջացել միջազգային շտեմարաններում սոցիալական ցուցանիշների չթարմացվածության (օրինակ՝ Զինի ինդեքս, աղքատության մակարդակ) կամ դրանց բացակայության պատճառով, ինչը Ադրբե-

ջանի վիճակագրության պետական կոմիտեի ներկայացրած տվյալները այլ աղբյուրների հետ համեմատելու և քննական լույսի ներքո դիտարկելու հնարավորություն չէր տալիս՝ բարձրացնելով նաև դրանց արժանահավատության հարցը:

Թուրքիայի պարագայում խնդրահարույց էր հանցագործությունների մակարդակի ամփոփ տվյալների հավաքումը, որոնք 2013-ից չեն հրապարակվել: Այս պարագայում 1995-2012 թթ. ընդհանուր տվյալները վերցված են Eurostat-ի շտեմարանից, իսկ 2013-2021 թթ. տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ համադրելով Թուրքիայի Ներքին գործերի նախարարության անվտանգության գլխավոր տնօրենության (հայտնի է որպես թուրքական ոստիկանություն) և Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության զեկույցներում և հաշվետվություններում զետեղված տվյալները:

Հանցագործությունների մակարդակի ամփոփ տվյալները բացակայում էին նաև Իրանի պարագայում: Այս դեպքում հեղինակի կողմից հաշվարկները կատարվել են Իրանի վիճակագրական կենտրոնի տարեգրքում ներկայացված տվյալների հիման վրա: Խնդրահարույց էր մի շարք տվյալների վերջին տարիների հասանելիությունը, իսկ դրանց այլ աղբյուրների հետ համադրելու և լրացնելու անհնարինության պարագայում օգտագործվել կամ կրկնվել են նախորդ տարիների տվյալները:

**ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ԳԼՈՒԽ 1.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆՂԵՔՍԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

### ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սույն գլխում ներկայացվում է Քաղաքական համակարգերի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) մեթոդաբանությունը, որը հենքային է տվյալ աշխատության համար: Մասնավորապես, հաջորդ բոլոր գլուխներում ներկայացված ուսումնասիրությունները իրականացվել են ՔՀԿԻ-ի մեթոդաբանության հիման վրա:

Քաղաքական համակարգի կայունությունը մոդելավորելիս կիրառվել է ինդեքսների կառուցման մեթոդը (*Ալեքսանյան 2009, Mazziotta & Pareto 2013*): Մոդելավորման ժամանակ հիմք է ընդունվել այն դրույթը, որ քաղաքական համակարգի կայունության վրա ազդող գործոնները, ընդհանուր առմամբ, բաժանվում են երեք խմբի՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական\*\*:


---

\* Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) մեթոդաբանությունը մշակել է Արուսյակ Ալեքսանյանը՝ թեկնածուական ատենախոսության շրջանակում:

\*\* ՔՀԿԻ մոդելում ընդգրկված փոփոխականների ընտրությունն իրականացվել է դրանց կոռելյացիոն մատրիցի կառուցման և արտաքսման մեթոդով: Նախնական փուլում ընդգրկվել են շուրջ 30 փոփոխական, այնուհետև մոդելից դուրս են բերվել այն փոփոխականները, որոնք կոռելյացիոն ուժեղ կապ ունեն ( $R \geq 10,71$ ): Բացառություն է «Ջինի գործակից» փոփոխականը, որն ունի ուժեղ կոռելյացիոն կապ աղքատության մակարդակի հետ, սակայն քանի որ հասարակության բևեռացվածությունը կարևոր և ազդեցիկ գործոն է քաղաքական կայունության գնահատման համար, այն նույնպես ընդգրկվել է մոդելի մեջ:

Գծապատկեր 1

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի գործոնները



Քաղաքական համակարգի կայունությունը պայմանավորող *քաղաքական գործոններն են՝*

1. օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ),
2. Տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ),
3. Քաղաքական իրավունքների ինդեքսը (ՔԻԻ),
4. Քաղաքացիական ազատությունների ինդեքսը (ՔԱԻ),
5. Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ),
6. քաղաքացիական անհնազանդությունների քանակը/մակարդակը (ՔԱ),

7. հակամարտության առկայությունը (ՀԱ):

Քաղաքական համակարգի կայունության վրա ազդող *սոցիալական գործոններն* արտահայտվում են հետևյալ փոփոխականներով՝

1. Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ),
2. իրական աշխատավարձը (ԻԱ),
3. զբաղվածության մակարդակը (Զբ.),
4. հանցագործությունների քանակը 1000 շնչի հաշվով (ՀՔ),

**Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը**

---

5. աղքատության մակարդակը (Աղք.),
6. Ջինի ինդեքսը (ՋԻ):

*Տնտեսական գործոններն են՝*

1. ՀՆԱ մեկ շնչի հաշվով (ՀՆԱ),
2. առևտրաշրջանառության ծավալը (Ա),
3. տնտեսության վարկավորման ծավալները (ՏՎ),
4. գնաճը (Գ),
5. սովերային տնտեսության մակարդակը (Ստ.),
6. բյուջեի դեֆիցիտը (ԲԴ):

ՔՀԿԻ-ն կազմված է ինչպես պաշտոնական վիճակագրությունից, այնպես էլ մշակված նոր փոփոխականներից և գործող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ցուցանիշներից: Այդ ինդեքսների և մի շարք փոփոխականների բնույթն ու հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն են.

- «Տնտեսական ազատության ինդեքսը» (Index of Economic Freedom) գնահատվում է «Հերիթեջ» (Heritage) հիմնադրամի կողմից 0-100 բալանոց համակարգով, որտեղ 0-ից 49.9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59.9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69.9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79.9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: Այն հիմնված է հետևյալ 12 գործոնների վրա՝ 1. սեփականության իրավունքի պաշտպանություն, 2. արդարադատության արդյունավետություն, 3. կառավարության ամբողջականություն (կոռուպցիայի բացակայություն), 4. հարկային բեռ, 5. պետական ծախսեր, 6. հարկաբյուջետային կայունություն, 7. գործարարության ազատություն, 8. աշխատանքի ազատություն, 9. դրամավարկային ազատություն, 10. առևտրի ազատություն, 11. ներդրումների ազատություն, 12. ֆինանսական ազատություն: 2022 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել 2023 թ. ՏԱԻ-ն (Kim, Tyrrell, Roberts 2023), քանի որ այն ընդգրկում է 2021 թ. հուլիսի 1-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ն ընկած ցուցանիշները: Ընդհանուր առմամբ ՏԱԻ-ն արտահայտում է օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները և համարվում է քաղաքական կայունության



ու ժողովրդավարության կարևոր ցուցիչներից մեկը: Այդ իսկ պատճառով այդ ցուցանիշն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները գնահատում է «Ազատության տուն» (Freedom House) կազմակերպությունը «Ազատությունն աշխարհում» (Freedom in the World) հետազոտության շրջանակում: 2022 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար կիրառվել է «Ազատությունն աշխարհում» 2023 թ. զեկույցը (*Freedom House 2023a*), քանի որ դրա գնահատման հիմքում 2022 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի զարգացումներն են 195 երկրի և 15 տարածքի վերաբերյալ: Հաշվետվությունները կազմող և գնահատող վերլուծաբաններն օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, այդ թվում՝ լրատվական նյութերից, ակադեմիական վերլուծություններից, հասարակական կազմակերպությունների հաշվետվություններից, փորձագետների հետ կապերից: Այսպես՝ Քաղաքական իրավունքների ցուցանիշը հիմնված է 10 կետանոց հարցաշարի վրա՝ բաժանված երեք ենթակատեգորիաների՝ ընտրական գործընթաց (3 հարց), քաղաքական բազմակարծություն և մասնակցություն (4 հարց) և կառավարության գործառնություն (3 հարց): Քաղաքացիական ազատությունների հարցաշարը բաղկացած է տասնհինգ կետից՝ բաժանված չորս ենթակատեգորիաների՝ ինքնարտահայտման և հավատքի ազատություն (4 հարց), միավորման և կազմակերպչական իրավունքներ (3 հարց), օրենքի գերակայություն (4 հարց), անձնական իրավունքներ ու ազատություններ (4 հարց): Յուրաքանչյուր հարցի տրվում է 0-4 միավոր: Քաղաքական իրավունքների բարձրագույն նիշը 40 է, քաղաքացիական ազատությունների բարձրագույն նիշը՝ 60: Ստացված միավորներն այնուհետև վերաբաշխվում են 1-ից մինչև 7 միավորային սանդղակի շրջանակում, որտեղ 1-ն առավելագույն ազատության նիշն է, 7-ը՝ նվազագույն. 1-ից 2.5 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5.5-ից 7-ը՝ «անազատ» (*Freedom House 2023b*): Մոդելում տվյալները նորմալացնելիս որպես առավելագույն (max) արժեք է ընդունվում 1-ը, նվազագույն (min)՝ 7-ը:

- «Կոռուպցիայի ընկալման համաթիվը» գնահատում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպությունը, և վերա-

**Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը**

---

բերում է աշխարհի 180 երկրի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակին (*Transparency International 2022*): Այն հիմնված է փորձագետների հարցման վրա և գնահատվում է 0-100 բալանոց համակարգով, ընդ որում՝ 0-ն նշանակում է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 100-ը՝ ամենացածր: ԿԸՀ-ի տվյալները հաշվարկվում են մի շարք անկախ կազմակերպությունների (Քաղաքական և տնտեսական ռիսկերի խորհրդատվություն, «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ», «Ազատության տուն», Համաշխարհային տնտեսական ֆորում, Համաշխարհային բանկ, Բերթելսմանի հիմնադրամ, «Գլոբալ Ինսայթ» համաշխարհային տնտեսական ֆորում և այլն) ներկայացրած աղբյուրների հիման վրա: Հարցման թեմաները վերաբերում են կոռուպցիային, շահերի բախմանը, հակակոռուպցիոն միջոցառումներին և ձեռքբերումներին, պետության քայլերին՝ պատժամիջոցների կիրառման և կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ: Առկա են հարցեր, որոնք վերաբերում են պետական կառավարման պրակտիկայում կոռուպցիայի տարածվածության, քաղաքացիների ընկալման և ՁԼՄ-ների հաղորդագրություններում կոռուպցիային վերաբերող նյութերին՝ սկսած մանր բյուրոկրատական կոռուպցիայից մինչև իշխանության բարձրագույն օղակներում կոռուպցիոն ռիսկերը (*Transparency International 2019*): Այս փոփոխականի կարևորությունն այն է, որ կոռուպցիայի ցուցանիշները վկայում են բյուրոկրատական համակարգի և պետական կառավարման որակի մասին: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն (max) արժեք է ընդունվում 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- Օտարերկրյա ուղղակի ներդրում է համարվում կապիտալի ցանկացած տեսակ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է տվյալ պետության տարածքում ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթ ստանալու կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Ներդրումների և քաղաքական կայունության միջև կապը երկակի է: Մի կողմից ներդրումների ծավալները շատ կարևոր են քաղաքական կայունության չափման գործընթացում, մյուս կողմից՝ քաղաքական կայունության ցուցանիշները հաշվի են առնվում ներդրումային քաղաքականության իրականացման համար: Տվյալ փոփոխականի ընդգրկումը մոդելի մեջ, այն էլ քաղաքական գործոնների շարքում, ընդունելի է, քանի որ քաղաքական կայունության տատանումները բավականին կարճ ժա-

մանակահատվածում իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ներդրումների ծավալի վրա, իսկ մոդելում ներդրումների վերաբերյալ տվյալները հաշվարկվում են մեկ տարվա կտրվածքով: Միջերկրային վերլուծության համար հաշվարկվում է այդ ցուցանիշի տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ:

- Քաղաքացիական անհնազանդությունների քանակը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, հավաքների, սոցիալական անկարգությունների քանակը: Այն կարևոր փոփոխական է քաղաքական կայունության գնահատման համար, սակայն հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով մամուլի տեղեկատվության ուսումնասիրությունների և վերլուծության վրա՝ դրանց գնահատականը հետազոտողները սահմանում են 0-5 սանդղակի շրջանակում, որտեղ 5-ն անհնազանդությունների առավելագույն քանակն է՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ, 0-ն՝ դրանց իսպառ բացակայությունը:

- Հակամարտության առկայության ազդեցությունը քաղաքական կայունության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ հակամարտության բացակայություն (0), պասիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով (1), ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (2): Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն (max) արժեք ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

- Մարդկային զարգացման համաթիվը (HDI) առաջարկվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) կողմից, որի հաշվարկման համար որպես մարդկային զարգացման մակարդակի բնութագրիչներ են համարվում բնակչության եկամուտը, մարդկանց կրթական մակարդակը, կյանքի սպասվող միջին տևողության ինդեքսը: ՄԶՀ-ն համարվում է հասարակության բարեկեցության չափման կարևորագույն ցուցանիշներից մեկը: Այն գնահատվում է 0-ից 1-ն ընկած սանդղակի շրջանակում, որտեղ 0-ն մարդկային զարգացման ցածրագույն մակարդակն է, 1-ը՝ բարձրագույն (UNDP 2023a, 2023b): Տվյալների նորմալացման ժամանակ 0-ն ընդունվում է որպես նվազագույն (min) արժեք, իսկ 1-ը՝ առավելագույն (max):

- Ջինի ինդեքսը (եկամուտների կենտրոնացման գործակիցը) բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավա-

**Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը**

---

սարաչափի բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է 0-ի, բացարձակ անհավասարության պայմաններում՝ 1-ի: Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 1-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

- Իրական աշխատավարձը բնութագրում է անվանական աշխատավարձի գնողունակությունը դիտարկվող ժամանակահատվածում, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով՝ ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Իրական աշխատավարձը հաշվարկվում է՝ միջին ամսական անվանական աշխատավարձը հարաբերելով սպառողական գների ինդեքսին: Երկու ցուցանիշներն էլ վերաբերում են միևնույն ժամանակաշրջանին: Միջերկրային վերլուծության ժամանակ միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշով:

Մոդելում ընդգրկված փոփոխականներն արտահայտված են չափման տարբեր միավորներով, այդ իսկ պատճառով դրանք նորմալացվում են հետևյալ բանաձևով\*՝

$$X' = \frac{x_i - \min\{x_i\}}{\max\{x_i\} - \min\{x_i\}}$$

որտեղ՝

- $x_i$ -ն  $i$ -րդ բնութագրիչ ցուցանիշի մեծությունն է,
- $\min\{x_i\}$ -ն՝  $i$ -րդ բնութագրիչ ցուցանիշի նվազագույն արժեքը,
- $\max\{x_i\}$ -ն՝  $i$ -րդ բնութագրիչ ցուցանիշի առավելագույն արժեքը:

Միջերկրային վերլուծությունների ժամանակ որոշ փոփոխականների համար որպես առավելագույն և նվազագույն արժեքներ ընդունվել են աշխարհի երկրների վերջին հինգ տարվա երեք նվազագույն և երեք առավելագույն տվյալների միջինացված ցուցանիշները, մեկ երկրի ուսումնասիրությունների դեպքում՝ նրա տարբեր ժամանակահատվածների համապատասխան արժեքները:

---

\* Բանաձևով դուրս բերված նորմալացված արժեքները գտնվում են 0-ից 1 միավորային սանդակի միջակայքում, որոնք կիրառվում են ներերկրային վերլուծության ժամանակ: Միջերկրային վերլուծության պարագայում ստացված համապատասխան արժեքները վերափոխվում են 0-ից 100 միավորային սանդակի:

Քաղաքական ( $P_{qh}$ ), Տնտեսական ( $S_{qh}$ ), Սոցիալական ( $U_{qh}$ ) գործոնների ինդեքսների հաշվարկն իրականացվում է քաղաքական կայունության վրա ազդող դրական և բացասական գործոնների նորմալացված արժեքների պարզ միջինների տարբերության հաշվարկով՝

$$P_{qh} = (O\text{ՈՒՆ} + S\text{ՍԻ} + \text{ՔԻԻ} + \text{ՔԱԻ} + \text{ԿԸՀ})/5 - (\text{ՀԱ} + \text{ՔԱ})/2$$

$$U_{qh} = (U\text{ՉՀ} + \text{ԻԱ} + \text{ՉԲ.})/3 - (\text{ՀՔ} + \text{ԱՊԲ.} + \text{ՋԻ})/3$$

$$S_{qh} = (\text{ՀՆԱ} + \text{Ա} + \text{ՏՎ})/3 - (\text{Գ} + \text{ՍԿ.} + \text{ԲԴ})/3$$

Քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնները քաղաքական համակարգի վրա ունեն ազդեցության տարբեր աստիճաններ, ըստ որի էլ հաշվարկվել և ձևակերպվել է այդ գործոնների աստիճանակարգությունը: Ըստ այդմ՝ ՔՀԿԻ-ն հաշվարկվել է դրանց ( $P_{qh}$ ,  $U_{qh}$  և  $S_{qh}$ ) կշռված միջին թվաբանականի հիման վրա\*.



$$\text{ՔՀԿԻ} = (55 * P_{qh} + 30 * U_{qh} + 15 * S_{qh}) / 100$$

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի վերոնշյալ բանաձևի համաձայն՝ քաղաքական կայունության վրա առավելագույն ազդեցությունն ունեն քաղաքական, այնուհետև՝ սոցիալական և տնտեսական գործոնները: Այսպես՝ Քաղաքական համակարգի կայունության ներերկրային ինդեքսն արտահայտվում է -1-ից +1 միավորային սանդղակով, իսկ միջերկրա-

\* Կշիռները սահմանվել են տրամաշափարկման միջոցով, մասնավորապես՝ չափանմուշ մի շարք երկրների (Ֆինլանդիա, Շվեդիա, Դանիա) Քաղաքական կայունության ինդեքսի հաշվարկման և դրանցում ենթաինդեքսների գործակիցների որոշման, ինչպես նաև ժողովրդավարության տեսական դրույթների և առկա մոդելների ուսումնասիրությունների հիման վրա: Սույն հետազոտության շրջանակում լրացուցիչ և համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա մեթոդաբանությունում կատարվել են կշիռների ճշգրտումներ:

**Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը**

յին ինդեքսը՝ -100-ից +100-ը միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ քաղաքական համակարգերը որակվում են հետևյալ կերպ.



**Բարձր մակարդակի կայունություն** ունեցող քաղաքական համակարգերն առանձնանում են հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման բարձր մակարդակով: Այս մակարդակն ուղեկցվում է նաև հասարակության սոցիալ-տնտեսական ոլորտի կայուն զարգացմամբ, որը քաղաքացիներին ապահովում է կյանքի բարձ որակ և սոցիալական երաշխիքների արդյունավետ համակարգ: Կայուն քաղաքական համակարգերում իշխանության հերթափոխության գործընթացը չի ուղեկցվում այդ համակարգի ապակայունացմամբ: Քաղաքացիական խաղաղությունը կայուն քաղաքական համակարգերի կարևոր բնութագրիչներից է:

**Միջին մակարդակի կայունություն** քաղաքական համակարգերում ժողովրդավարական գործընթացները և սկզբունքները՝ որոշ թերություններով, հիմնականում գերակայում են հասարակության քաղաքական կյանքում: Սոցիալ-տնտեսական զարգացումը որոշ տատանումներով և անկումներով, այնուամենայնիվ, ունի աճի միտում: Մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ոլորտներում թերությունները չեն բացառվում: Այս մակարդակը կարող է բնորոշ լինել նաև ավտորիտար քաղաքական համակարգերին, որոնցում կայունությունն ապահովվում է ոչ այնքան քաղաքական, որքան սոցիալ-տնտեսական գործոնների շնորհիվ:

**Կայունության ցածր մակարդակը** բնորոշ է այն քաղաքական համակարգերին, որտեղ առավել գերակայում են ամբողջատիրական և ավտորի-

տար սկզբունքները, քան ժողովրդավարական գործընթացները: Նման համակարգերում առկա են սոցիալական սրված հակասություններ. բնակչության բևեռացում, հիմնական աշխատող բնակչության աղքատացում ու նեղ շրջանակի մարդկանց հարստացում: Այդ ամենի հետևանքով երկրում կարող է բարձրանալ քաղաքացիական անհնազանդությունների մեծ ալիք, տեղի ունենա հեղաշրջում կամ հեղաշրջման փորձ: Կոնֆլիկտներն ու պատերազմներն այլ պետությունների հետ ևս հաճախակի երևույթ են:

**Անկայուն** քաղաքական համակարգերում առկա են իշխանությունների խորը ճգնաժամ և լեգիտիմության կորուստ, սոցիալական կոնֆլիկտներ, պատերազմական վիճակ, ոտնահարվում են մարդու իրավունքները, ուժի կիրառմամբ ճնշվում են քաղաքացիական անհնազանդությունները: Տնտեսությունը գտնվում է խորը ճգնաժամում, հասարակությունը, ըստ եկամուտների, խիստ բևեռացված է, առկա է աղքատության բարձր մակարդակ:

Մոդելը հնարավորություն է տալիս՝

- վերլուծել և համեմատել պետության քաղաքական կայունությունն ու դրա միտումներն՝ ըստ տարբեր ժամանակահատվածների,
- համեմատել երկու և ավելի պետությունների քաղաքական կայունությունը և դասակարգել պետությունները համապատասխան սանդղակի սահմաններում՝ ըստ նրանց կայունության,
- վեր հանել այն գործոնները, որոնք առավել բացասական կամ դրական ազդեցություն են ունենում տվյալ երկրի քաղաքական կայունության վրա:

## Գրականության ցանկ

- Freedom House (2023b) “Freedom in the World 2023: Methodology Questions.” Accessed February 20, 2023. [https://freedomhouse.org/sites/default/files/2023-03/FITW\\_2023%20MethodologyPDF.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/2023-03/FITW_2023%20MethodologyPDF.pdf).
- Freedom House. 2023a. “Freedom in the World 2023. A Leaderless Struggle for Democracy.” Accessed February 20, 2023. <https://freedomhouse.org/report/freedom-world>.
- Kim, Anthony B., Patrick Tyrrell, & Kevin D. Roberts. 2023. “2020 Index of Economic Freedom.” Heritage Foundation and the Wall Street Journal. Accessed

## Գլուխ 1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը

---

- December 25, 2023. [https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/-book/2023\\_IndexOfEconomicFreedom\\_FINAL.pdf](https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/-book/2023_IndexOfEconomicFreedom_FINAL.pdf).
- Mazziotta, Matteo and Adriano Pareto. 2013 “Methods For Constructing Composite Indices: One For All Or All For One?” RIEDS - Rivista Italiana di Economia, Demografia e Statistica - Italian Review of Economics, Demography and Statistics, SIEDS Societa' Italiana di Economia Demografia e Statistica, (67): 67-80. April-Jun. Accessed February 15, 2023. [https://www.istat.it/en/files/2013/12/Rivista-2013\\_Mazziotta\\_Pareto.pdf](https://www.istat.it/en/files/2013/12/Rivista-2013_Mazziotta_Pareto.pdf).
  - Transparency International. 2019. “Corruption Perceptions Index 2019: Short Methodology Note.” February 25, 2023. [https://images.transparencycdn.org/images/2019\\_CPI\\_methodology.pdf](https://images.transparencycdn.org/images/2019_CPI_methodology.pdf).
  - Transparency International. 2022. “Corruption Perceptions Index 2022.” February 25, 2023. <https://www.transparency.org/en/cpi/2022>.
  - UNDP. 2023a. “Human Development report 2023: Human Development Insights.” Accessed February 27, 2023. <https://hdr.undp.org/data-center/-country-insights#/ranks>.
  - UNDP. 2023b. “Human Development Index: HDI Dimensions and Indicators.” Accessed February 27, 2023. <https://hdr.undp.org/data-center/-human-development-index#/indicies/HDI>.
  - Ալեքսանյան, Արուսյակ. 2009. «Քաղաքական համակարգի կայունության գնահատման մոդելի մասին (ՀՀ օրինակով)», Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N2, էջ 186-199:



**ԳԼՈՒԽ 2.**  
**ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՈՉ ՊԱՏԵՐԱԶՄ, ՈՉ**  
**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԽԱԶՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ**

**ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Լև Տրոցկու «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» հայտնի արտահայտությունը արդիական է նաև ժամանակակից «սառեցված» ակտիվ հակամարտությունները բնութագրելու առումով:

Արցախյան հակամարտությունը, Ռուսաստան - հավաքական Արևմուտք ուժային կենտրոնների մրցապայքարը, ռուս-ուկրաինական պատերազմը, տարածաշրջանում Թուրքիայի ակտիվացումն ու նրա դերակատարության բարձրացումը, Իրան-Իսրայել հարաբերությունների մշտական լարվածությունը տարածաշրջանը պահում են տուրբուլենտության բարձր աստիճանի վրա: Օրակարգային են դառնում ոչ միայն քաղաքական համակարգերի՝ որպես առանձին միավորների կայունությունը պահպանելու, այլև տարածաշրջանում պայթուցավտանգ իրավիճակները կանխելու հիմնահարցերը: Ստեղծվել է մի իրողություն, երբ տարածաշրջանում ձևավորվող և ընթացող խմորումները, որոնք «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» երկարատև ձգվող իրադարձությունների հետևանք են, հանգեցրել են նոր զարգացումների, որոնցում տեղի են ունենում հարաբերությունների վերագնահատման, ուժերի և նրանց դերակատարությունների վերադասավորման, որոշ պետությունների համար նույնիսկ գոյաբանական պայքարի գործընթացներ:

Տարածաշրջանում նման փոխակերպումների մեկնարկի պատճառ էին մասնավորապես 2020 Արցախյան երկրորդ, այնուհետև՝ ռուս-ուկրաինա-


**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում**

Կան պատերազմները, որոնք ձևավորեցին և շարունակում են ձևավորել նոր օրակարգեր:

Սույն գլխում քննարկվում են Հայաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միտումները տարածաշրջանային նոր զարգացումների համատեքստում:

**Գծապատկեր 1**

**Հայաստանի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

Հայաստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2022 թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	ՔՀԿԻ
2000	-0.050	-0.501	0.029	<b>-0.094</b>
2001	-0.053	-0.518	0.045	<b>-0.094</b>
2002	0.022	-0.355	0.071	<b>-0.020</b>
2003	-0.078	-0.304	0.095	<b>-0.060</b>
2004	-0.065	-0.344	0.134	<b>-0.047</b>
2005	0.022	-0.180	0.231	<b>0.054</b>
2006	0.053	-0.164	0.277	<b>0.088</b>
2007	-0.001	-0.044	0.350	<b>0.098</b>
2008	-0.180	0.073	0.383	<b>0.027</b>
2009	-0.023	-0.367	0.298	<b>0.022</b>
2010	-0.021	-0.234	0.278	<b>0.037</b>
2011	0.003	-0.010	0.277	<b>0.083</b>
2012	-0.029	0.256	0.301	<b>0.113</b>
2013	-0.117	0.230	0.320	<b>0.066</b>
2014	0.034	0.314	0.359	<b>0.174</b>
2015	-0.125	0.048	0.351	<b>0.044</b>
2016	-0.307	0.197	0.350	<b>-0.034</b>
2017	0.012	0.331	0.350	<b>0.161</b>
2018	-0.104	0.515	0.301	<b>0.111</b>
2019	0.002	0.632	0.288	<b>0.183</b>
2020	-0.370	0.456	0.293	<b>-0.047</b>
2021	-0.050	0.420	0.260	<b>0.113</b>
2022	0.082	0.669	0.250	<b>0.221</b>

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:


Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի, Ս<sub>ԳԻ</sub>-ի և դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի որոշ տարիների արժեքները հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

## 2.1 Աշխարհաքաղաքական փոխակերպումների ազդեցությունը Հայաստանի կայունության հետագծի վրա

Հայաստանին առնչվող քաղաքական կայունության հիմնահարցերը, մասնավորապես վերջին զարգացումների համատեքստում, դուրս են եկել ոչ միայն ներպետական, այլև տարածաշրջանի սահմաններից: Մասնագիտական շրջանակներում շարունակաբար շրջանառվում է այն կարծիքը, թե 2018 թ. հեղափոխությունը ոչ այնքան ինքնաբուխ ժողովրդական շարժում էր, որքան արտաքին միջամտությամբ հրահրված գործողություն, իսկ Արցախյան հակամարտության «կարգավորումը» տեղի է ունենում աշխարհաքաղաքական հիմնահարցերի լուծման և պետությունների արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխման ներքո:

### Գծապատկեր 2

Հայաստանի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2022 թթ.)\*



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Դիտարկելով Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) վրա քաղաքական գործոնների ազդեցության միտումները 2000-2022 թթ. (տե՛ս *Գծապատկեր 2, Աղյուսակ 1*)՝ նկատելի է, որ 2015 թ.-ից սկսած՝ Քաղաքական գործոնների ինդեքսի (ՔԳԻ) տատանումները շատ ավելի խորն են, ավելին՝ դրանք տեղափոխվել են բացասական տիրույթ: Այսինքն՝ վերջին տարիների իրադարձությունների զարգացման ներքո Քաղաքական գործոնների ինդեքսի միտումը եղել է բացասական, իսկ 2020 թ. արձանագրվել է ՔԳԻ-ի պատմական նվազագույն ցուցանիշը 1995 թ.-ից ի վեր՝ պայմանավորված Արցախյան 44-օրյա պատերազմով: ՔԳԻ-ի երկրորդ նվազագույն ցուցանիշն արձանագրվել է 2016 թ.՝ կապված Ապրիլյան պատերազմի, ՊՊԾ գնդի գրավման և բողոքի ցույցերի մեծ ալիքի հետ (*Ալեքսանյան 2018, 38, 40-41*): 2021 թ.-ին տեղի է ունենում ՔԳԻ-ի վերականգնում, իսկ 2022 թ.-ին՝ աճ՝ գրանցելով դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը: Այդուհանդերձ ՔԳԻ-ի խորը տատանումները արդեն իսկ ցուցանիշ են համակարգի ճկունության կորստի և արտաքին ու ներքին գործոններին դիմակայելու ներուժի նվազման մասին:

44-օրյա պատերազմով պայմանավորված՝ ՔԳԻ-ի ամենախորը անկումը վկայում է դրա մասշտաբայնության, կողմերի ներգրավվածության և տարածաշրջանի վրա ունեցած ազդեցության ու հետագա հետևանքների մասին: Այն նաև տարածաշրջանում ուժային վերադասավորումների և հավասարակշռության խախտման պատճառ էր, որի ելքը իր հերթին էլ ավելի խորացրեց այդ գործընթացները (*Ղևոնդյան 2022, 4*):

Այսպես՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ սանձազերծեց արցախաադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Պատերազմում, որը հիբրիդային էր, օգտագործվեցին ինչպես ավանդական, այնպես էլ նորագույն ռազմական միջոցներ և տեխնիկա, քարոզչական և տեղեկատվական տեխնոլոգիաներ: Պատերազմն աննախադեպ էր նաև Թուրքիայի և նրա կողմից ներգրավված վարձկանների մասնակցության առումով (*Մովսիսյան 2021, 154-155, MFA RA 2020*): Ընդ որում Թուրքիայի մասնակցությունը ենթադրում էր ոչ միայն ռազմատեխնիկական աջակցություն, այլև՝ ռազմական գործողությունների պլանավորում, համակարգում և հետախուզություն (*Հովսեփյան 2021*): Անկարայի՝ ռազմաքաղաքական նման ծավալի միջամտությունը կտրուկ փոխեց տա-

**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում**

---

րաձաշրջանում նրա դերակատարությունը՝ ձեռնոց նետելով Մոսկվային աշխարհաքաղաքական գործընթացներում առաջնությունը ստանձնելու առումով: Եվ չնայած Թուրքիայի գործադրած ջանքերին՝ այդուհանդերձ նա չկարողացավ ստանձնել հիմնական միջնորդի «առաքելությունը» հայադրբեջանական բանակցություններում: Այդպիսի ակտիվացումը և տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդումը, անշուշտ, նոր մտավախությունների տեղիք տվեցին ոչ միայն Ռուսաստանին, այլև Իրանին (Пухов, 2021, 26):

Վ. Պուտինի, Ի. Ալիևի և Ն. Փաշինյանի 2020 թ. նոյեմբերի իննի եռակողմ հայտարարությունը<sup>1</sup> կանգնեցրեց պատերազմական գործողությունները, սակայն այն բոլորովին էլ հակամարտության կարգավորման փաստաթուղթ չէր և խնդիրների լուծման փոխարեն առաջ բերեց նորերը: Հայաստանի որդեգրած խաղաղության օրակարգը հանգեցրեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» նոր կարգավիճակի ձևավորմանը, որում պարսվող և կորուստներ կրող կողմը հենց Հայաստանն էր: 2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայի գագաթաժողովում Փաշինյանը բարձրաձայնեց, որ Արցախը Ադրբեջանի մաս է: Հենց այս արտահայտությունը այնուհետև պետք է շահարկվեր Պուտինի կողմից և հիմք ընդունվեր Ռուսաստանի թողտվությամբ Արցախի հայաթափությանը: Այսօր արդեն իրավիճակը դուրս է եկել երկու պետությունների ազդեցության տիրույթից և պայթուցավտանգ է ամբողջ տարածաշրջանի համար:

Տարածաշրջանը շարունակում է մնալ ամենառազմականացվածներից և անկայուններից (Маркедонов 2007, 336): Այսպես՝ Հայաստանի և իր անմիջական սահմանակից երկրների միջինացված ռազմական ծախսերը 2022 թ. կազմել են ՀՆԱ-ի 2.8%-ը, այն դեպքում, երբ համաշխարհային միջինը 1.9% է, իսկ Հարավային Կովկասի երեք երկրների այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ գերազանցում է աշխարհի միջինը՝ կազմելով ՀՆԱ-ի 3.4%-ը<sup>2</sup> (տե՛ս Գծապատկեր 3):


---

<sup>1</sup> Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 10 ноября 2020 года. <http://kremlin.ru/events/president/news/64384> (10.07.2023).

<sup>2</sup> Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների հիման վրա // <https://www.sipri.org/databases> (02.03.2023):

Գծապատկեր 3

Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի ռազմական ծախսերը (ՀՆԱ%)\*




Վերլուծելով Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի ներկայացրած 2006-2022 թթ. տվյալները՝ նշենք, որ Վրաստանի ռազմական ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, 2007-2008 թվականներին ամենաբարձրն են եղել (9%), որն ըստ էության պայմանավորված էր 2008 թ. ռուս-վրացական պատերազմական գործողություններով: Այնուհետև դրանք զգալիորեն կրճատվել են՝ 2022 թ. հասնելով ՀՆԱ-ի 1.4%-ի: Մինչույն ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի ռազմական ծախսերը որոշ տատանումներով պահպանել են բարձր մակարդակը, որոնց 2022 թ. ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 4.3 և 4.6 ՀՆԱ տոկոս (տե՛ս Գծապատկեր 3):

\* Գծապատկերը պատրաստվել է Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների հիման վրա // <https://www.sipri.org/databases> (02.03.2023):

**Գծապատկեր 4**

**Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի ռազմական ծախսերը (ԱՄՆ մլրդ դոլար)\***



Ուսումնասիրելով վերոնշյալ պետությունների ռազմական ծախսերը՝ ակնհայտորեն կարող ենք առանձնացնել Թուրքիային և Իրանին: Ընդ որում 2020-2022 թվականներին այդ ծախսերի միտումները զարգանում են խիստ հակադիր ուղղություններով: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում Թուրքիայի ռազմական ծախսերը զգալիորեն կրճատվում են՝ 17.5 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 10.6 միլիարդի, իսկ Իրանինը, ընդհակառակը, աճում են՝ 3 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 6.8-ի (տե՛ս Գծապատկեր 4): Այսինքն՝ եթե Թուրքիան 2020-2022 թթ. ռազմական ծախսերը կրճատել է գրեթե 40%-ով, ապա Իրանը ավելացրել է դրանք 125.7%-ով: Ինչ վերաբերում Հայաստանին և Ադրբեջանին, ապա վերջինիս ռազմական ծախսերը 2017-2022 թթ. ունեցել են անընդհատ աճի միտում, իսկ Հայաստանի պարագայում շարունակական աճի միտումը ընդհատվում է պատերազմի և դրան հաջորդող տարում (2020 և 2021 թթ.): Այդուհանդերձ, 2022 թ.-ին 2017-ի համեմատությամբ Հայաստանի ռազմական ծախսերը աճել են

\* Գծապատկերը պատրաստվել է Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների հիման վրա // <https://www.sipri.org/databases> (07.11.2023):



գրեթե 80%-ով՝ 443.6 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 795 միլիոնի, իսկ Ադրբեջանինը՝ 95.6%-ով՝ 1.5 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 2.9 մլրդ-ի:

Տարածաշրջանում երկրների ռազմականացման աստիճանի պատկերն առավել ամբողջացնելու համար ներկայացնենք նաև Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի Համաշխարհային ռազմականացման ինդեքսի (ՀՌԻ) 2022 թ. տվյալները (տե՛ս Աղյուսակ 2): Կենտրոնի գնահատած աշխարհի 149 երկրների շարքում Հայաստանը 3-րդ տեղում է, Ադրբեջանը՝ 9-րդ, Իրանը՝ 28-րդ, Թուրքիան՝ 41-րդ, իսկ Վրաստանը՝ 43-րդ:

## Աղյուսակ 2

### Համաշխարհային ռազմականացման 2022 թ. ինդեքսը (BICC 2022)

Երկիր	Ռազմական ծախսեր	Ռազմական անձնակազմ	Ծանր զենք	ՀՌԻ	Վարկանիշ
Հայաստան	2	1.79	2.28	223	3
Ադրբեջան	2.37	0.93	2.26	204	9
Իրան	1.67	0.87	1.49	147	28
Թուրքիա	1.04	0.7	1.94	135	41
Վրաստան	1.07	0.57	1.94	131	43

Նախորդ տարվա տվյալների համեմատությամբ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ունեցել են ՀՌԻ-ի համապատասխանաբար 4.5, 3.5 և 1.5 միավորային անկում, որը սակայն չի անդրադարձել դիրքային փոփոխությունների վրա: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այն արձանագրել է նկատելի՝ 18.7 միավորային անկում, որը նրան 29-րդից տեղափոխել է 41-րդ հորիզոնականը: Անկման պատճառը ռազմական ծախսերի զգալի կրճատումն էր: Ի հակադրություն դրան, Իրանը, ավելացնելով ռազմական ծախսերը, ուսումնասիրվող պետությունների շարքում զբաղեցրել է 28-րդ տեղը՝ նախորդ 35-րդի փոխարեն: ՀՌԻ-ի 2022 թ. տվյալներով՝ Հայաստանը նշված պետությունների շարքում ռազմական անձնակազմ և ծանր զենք ենթահինդեքսներով առաջատարն է (*Bayer & Hauk 2023, 8; BICC 2022*):

Անդրադառնալով Հայաստանի կայունության վրա ազդող ներքաղաքական գործոններին՝ նշենք, որ հետպատերազմյան շրջանը (մասնավորապես՝ 2020-2022 թթ.) առանձնացել է զանգվածային անհնազանդությունների բարձր մակարդակով: Դրանք սկսվեցին 2020 թվականի նոյեմբերի

**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»  
իրողությունների խաչմերուկներում**

---

10-ին, երբ Ն. Փաշինյանը հաղորդեց 44-օրյա պատերազմի դադարեցման՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի համատեղ հայտարարության մասին: Այդ նույն օրը բողոքի ցույցը վերաճեց վարչապետի հրաժարականը պահանջող քաղաքացիական անհնազանդությունների և անկարգությունների մեծ ալիքի: Յուցարարները վնասեցին կառավարության շենքը, ներխուժեցին խորհրդարանի շենք, փողոցում բռնություն կիրառեցին ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ (*Մխիթարյան 2020*): Յուցերը դարձյալ ակտիվացան դեկտեմբերին, երբ վերացվեց սեպտեմբերի 27-ի ռազմական դրությամբ<sup>3</sup> նախատեսված զանգվածային հավաքների և գործադուլների իրականացման սահմանափակումը<sup>4</sup>: Ձևավորվեց «Հայրենիքի փրկության շարժումը»՝ բաղկացած խորհրդարանական և արտախորհրդարանական 17 ընդդիմադիր կուսակցություններից: Շարժման նպատակն էր սահմանադրական ճանապարհով հասնելու իշխանությունների հրաժարականին, ձևավորելու անցումային և հակաճգնաժամային կառավարություն, որը պետք է կազմակերպեր արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Հայրենիքի փրկության շարժման խորհուրդը առաջադրեց Վազգեն Մանուկյանի թեկնածությունը՝ որպես անցումային կառավարության ղեկավար (*Factor.am 2020*): Փետրվարի 25-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածը ցնցումային և ակտիվ քաղաքական իրադարձությունների շրջան էր: 2021 թվականի փետրվարի 25-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը հրապարակեց հայտարարություն՝ շտաբի պետ Օնիկ Գասպարյանի և 40 բարձրաստիճան սպաների ստորագրությամբ, որում բողոք էր արտահայտվում շտաբի պետի 1-ին տեղակալ Տիրան Խաչատրյանի պաշտոնից ազատելու կապակցությամբ: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր. «ՀՀ վարչապետը և կառավարությունն այլևս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային և ճակատագրական իրավիճակում: ... Ստեղծված իրավիճակով պայմանա-

---

<sup>3</sup> ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշում «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» // <https://www.e-gov.am/gov-decrees/item/34842/> (07.09.2023):

<sup>4</sup> ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 2-ի N 1917-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» // <https://www.e-gov.am/gov-decrees/item/35144/> (07.09.2023):

վորված՝ ՀՀ զինված ուժերը պահանջում են ՀՀ վարչապետի և կառավարության հրաժարականը»: Ն. Փաշինյանը Գլխավոր շտաբի հայտարարությունը ռազմական հեղաշրջման փորձ անվանեց՝ կոչ անելով իր կողմնակիցներին հավաքվել Հանրապետության Հրապարակում (*Azattyun.am 2021a; Armedia.am 2021*): Այս իրադարձություններին հաջորդեց ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանի պաշտոնից ազատումը (*Primeminister.am 2021*):

Ընդդիմության բազմահազարանոց հանրահավաքների ներքո մարտի 1-ին իշխանությունը Ն. Փաշինյանի գլխավորությամբ Հանրապետության հրապարակում կազմակերպեց իր աջակիցների մեկ այլ հանրահավաք: Նույն օրը դրան զուգահեռ Ազգային ժողովի դիմաց՝ Բաղրամյան պողոտայում ընթանում էր ընդդիմության հավաքը (*Գևորգյան 2021*): Արդեն մարտի 18-ին վարչապետը հայտարարեց հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու (*Armenpress.am 2021*), իսկ ապրիլի 25-ին՝ իր հրաժարականի մասին (*Azattyun.am 2021b*): Ընտրությունները, սակայն, չհանգեցրին իշխանափոխության, իսկ ընդդիմության օրակարգը մնաց անփոփոխ:

Անդրադառնալով մոդելում ընդգրկված այլ փոփոխականներին՝ նշենք, որ ըստ «Ազատության տան»՝ Հայաստանը քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտներում շարունակել է զբաղեցնել «մասնակի ազատ»<sup>\*</sup> երկրների շարքը: Հայաստանի գնահատականները քաղաքացիական ազատությունների (4 միավոր) համար մնացել են անփոփոխ 2012 թ.-ից ի վեր, իսկ քաղաքական իրավունքների (4 միավոր) գնահատականը 1 միավոր առաջընթաց է գրանցել սկսած 2018 թ.-ից (*Freedom House, n.d.*): Առավել խնդրահարույց ոլորտը, որը նվազագույն միավորն է ստացել «Ազատության տան» փորձագետների կողմից, օրենքի գերակայությունն է: Մասնավորապես, դատարանների վրա գործադրվում են քաղաքական ճնշումներ, իսկ դատական համակարգում առկա են կոռուպցիոն մեծ դիսկեր: Այս առումով տեղին է հիշատակել 2022 թ. աղմկահարույց


\* «Ազատության տան» Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ցուցանիշները գնահատվում են 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2.5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5.5-ից 7-ը՝ «անազատ»:

**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում**

միջադեպը, երբ հրապարակվեց մի ձայնագրություն, որտեղ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախագահի պաշտոնակատար Գագիկ Զհանգիրյանը սպառնում էր ԲԴԽ-ի գործող նախագահ Ռուբեն Վարդազարյանին քրեական մեղադրանք ներկայացնել, եթե վերջինս հրաժարական չտա (*Freedom House 2023*):

Գնահատելով Կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ)\* ցուցանիշները՝ ևս կարող ենք փաստել, որ 2022 թվականին տեղի է ունեցել հետընթաց, և ԿԸԻ-ի 2020 և 2021 թվականների աճին հաջորդել է 3 միավորային նվազում: Այսպես՝ 2022 թ.-ին Հայաստանը 35 միավորով 180 պետությունների և տարածքների շարքում զբաղեցրել է 63-րդ տեղը (տե՛ս *Գծապատկեր 5*): «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության վերլուծություններում և զեկույցներում ևս բարձրաձայնվում են զսպումների և հակակշիռների խախտման, դատական համակարգի անկախության և իրավապահ մարմինների բարեվարքության հիմնախնդիրների մասին (*Transparency International 2022*):

**Գծապատկեր 5  
Հայաստանի Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (2012-2022 թթ.)**




\* Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գնահատվում է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» (*Transparency International*) կազմակերպության կողմից 0-100 սանդղակի միջակայքում (մինչև 2012 թ.՝ 0-10), որտեղ 0-ն նշանակում է ամբողջական կոռումպացվածություն, իսկ 100-ը՝ կոռուպցիայի բացակայություն:

Այսպիսով՝ Հայաստանի քաղաքական համակարգի կայունությունը պայմանավորող քաղաքական գործոնները հետպատերազմյան շրջանում ներառում են արտաքին և ներքաղաքական գործընթացների ողջ սպեկտրը: Ստեղծված իրավիճակը ներքաղաքական և աշխարհաքաղաքական համաժամանակյա փոխակերպումների հետևանք է, որը պահանջում է նախկինում գործող ուղենիշերի վերանայում և նոր մոտեցումների մշակում:

## 2.2 ՀՀ տնտեսական աճի և կայունության ռիսկային գործոնները

Գծապատկեր 6  
Հայաստանի քաղաքական համակարգի կայունության Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2022 թթ.)\*



Քաղաքական համակարգի կայունության Տնտեսական գործոնների ինդեքսի ( $S_{ԳԻ}$ ) միտումների դիտարկումը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում այն դրական է եղել՝ սակայն մի քանի խորը անկումներով ուղեկցվող՝ հիմնականում պայմանավորված արտաքին գործոնների ազդե-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»  
իրողությունների խաչմերուկներում**


---

ցությամբ: Այսպես՝ 2009 թ. անկման պատճառը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էր, իսկ 2015 թ. անկումը՝ Ռուսաստանի տնտեսության թուլացումը: 2014 թ.-ին Ղրիմի հիմնահարցի և Ուկրաինայի արևելքում հակամարտության հետևանքով Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, համաշխարհային նավթի գների տատանումը, ռուբլու արժեզրկումը և այլ գործոնները խաթարեցին Ռուսաստանի տնտեսությունը: Այդ ամենն իր ուղղակի ազդեցությունն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, քանի որ Ռուսաստանի և Հայաստանի տնտեսությունները սերտ փոխկապակցված են, ուստի անկումներն ու վերելքները հիմնականում համաժամանակյա են: ՏԳԻ-ի վերջին նկատելի անկումը եղել է 2020-2021 թթ.:

Մասնավորապես ԲՈՎԻԴ-19 համավարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ 2020 թվականին Հայաստանում գրանցվեց 7.2% տնտեսական անկում, որը վերջին տասնամյակում 2009 թվականի 14.1% անկումից հետո բացառիկ էր: 2021 թ. վերականգնման տարի էր՝ 5.8% տնտեսական աճով: 2021 թ. վերականգնման տեմպերն արագացան հաջորդ տարում, որի շնորհիվ գրանցվեց վերջին 15 տարիների ընթացքում առաջին երկնիշ՝ 12.6% տնտեսական աճը (տե՛ս *Գծապատկեր 7*): Տնտեսական գործոնների ինդեքսում ևս արձանագրվել է նկատելի աճ. ավելին՝ այդ տարի գրանցվել է ՀՀ անկախությունից ի վեր պատմական ամենաբարձր ցուցանիշը: Այսպես՝ 2022 թ. երկնիշ տնտեսական աճը պայմանավորված էր ռուսուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից մարդկանց ներհոսքով, զբոսաշրջության զգալի ավելացմամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան և մարդկային կապիտալի 25%-ոց աճով: Միգրանտների նոր հոսքը նպաստեց տնտեսական ակտիվության աճին հատկապես ծառայությունների ոլորտում: Մի շարք տվյալների համաձայն՝ Հայաստան է տեղափոխվել 108-110 հազար Ռուսաստանի բնակիչ (*ՄԺԾԾ 2024-2026, 16-21; Городилов 2023*):

Գծապատկեր 7


Իրական ՀՆԱ-ի անկումներն ու աճը տնտեսական ճգնաժամերի և հաջորդող տարիներին (2009-2022 թթ.) (ՄԺԾԾ 2024-2026)



Վերջին տարիների ՀՆԱ-ի կառուցվածքում տնտեսական ճյուղերի մասնաբաժնի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՀՆԱ աճի խթանիչը հիմնականում ծառայությունների ոլորտն է եղել, որի տեսակարար կշիռը 50%-ից ավելին է: Դրան հաջորդում է արդյունաբերությունը՝ 18.5-20% տեսակարար կշռով, իսկ գյուղատնտեսությունն ու զուտ հարկերը ՀՆԱ կառուցվածքում ունեն գրեթե հավասար մասնաբաժին և կազմում են 10.4-11.5%: Նվազագույն մասնաբաժինը շինարարությանն է (6-7%) (տե՛ս Գծապատկեր 8): 2022 թ. երկնիշ տնտեսական աճը ևս հիմնականում պայմանավորված էր ծառայությունների աճով, որի մասնաբաժինը կազմել է 9.4 տոկոսային կետ (ՄԺԾԾ 2024-2026, 17):

**Գծապատկեր 8**

**ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ ճյուղերի տեսակարար կշռի 2019-2022 թթ., %  
(ՄԺԾԾ 2024-2026)**



2022 թ. աննախադեպ է եղել նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) աճը: Դիտարկելով Հայաստանում ՕՈՒՆ-ների ծավալների միտումները վերջին երկու տասնամյակի ընթացքում՝ կարող ենք առանձնացնել երեք փուլ (տե՛ս Գծապատկեր 9):

Առաջին՝ 2001-2008 թվականները ակնհայտ վերելքի տարիներ էին. այստեղ նկատվում է աստիճանաբար, բայց անընդհատ աճի միտում:

Երկրորդ՝ 2009-2020 թվականներին նկատվում են որոշակի տատանումներ, սակայն աստիճանաբար նվազման ակնհայտ միտումով: Նվազումը սկիզբ է առել 2009-ին ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով և շարունակվել մինչև հաջորդ ճգնաժամը՝ 2020 թ. համավարակով պայմանավորված: Հատկանշական է, որ այդ տարի արձանագրվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ դիտարկվող ժամանակահատվածի նվազագույն ցուցանիշը՝ ընդամենը 58.6 մլն ԱՄՆ դոլար:


Երրորդ՝ 2021-2022 թթ. ՕՈՒՆ-ների կտրուկ աճի շրջան է: Եթե մինչ այդ՝ 2008 թվականին արձանագրված ցուցանիշն ամենաբարձրն էր համարվում անկախությունից ի վեր (944 մլն ԱՄՆ դոլար), ապա 2022 թվականին երկու տարվա ընթացքում հնարավոր է եղել վերջին քսանամյակի



2020 թ. արձանագրված նվազագույն ցուցանիշից օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը հասցնել պատմական բարձրագույն ցուցանիշի՝ 998 մլն ԱՄՆ դոլարի: Առաջին անգամ վերականգնվել է մինչճգնաժամային տարիների ներդրումների ծավալը (տե՛ս Գծապատկեր 9):

Գծապատկեր 9

Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՀՀ-ում 2000-2022 թթ.-ին (մլն ԱՄՆ դոլար)<sup>5</sup>



Այս առումով տեղին է նշել, որ այս աննախադեպ աճը մասամբ պայմանավորված է եղել նաև դրամի արժևորմամբ: Ինչ վերաբերում է տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհուսքի ոլորտային բաշխմանը, ապա պետք է արձանագրել, որ դրանում 58% մասնաբաժնով շարունակաբար գերակայում են էլեկտրականության և գազի մատակարարման ոլորտները՝ կազմելով 578 մլն ԱՄՆ դոլար: Հաջորդիվ՝ 15% և 7% մասնաբաժիններով համապատասխանաբար հանքագործական արդյունաբերության (\$146 մլն) և անշարժ գույքի (\$71 մլն) ոլորտներն են: Նախորդ տարվա համեմատությամբ աննախադեպ 94% աճ է արձանագրվել օդային տրանսպորտի ոլորտում, որի մասնաբաժինը ներդրումների

<sup>5</sup> Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD> (01.11.2023):


**Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում**

ընդհանուր ներհոսքում 4% է (\$40 մլն): Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքում Ռուսաստանը շարունակում է պահպանել առաջատար ներդրողի դիրքերը. նրա մասնաբաժինը կազմում է 70% (\$697 մլն): Ներդրումների հիմնական ոլորտներն են էլեկտրաէներգիան, գազի մատակարարումը և հեռահաղորդակցությունը (*Modex 2023, 5-6*):

Ի համեմատություն այլ երկրների՝ մեծ է նաև Ռուսաստանի տեսակարար կշիռը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ: 2022 թ. այն կազմել է 36%, այն դեպքում, երբ երկրորդ խոշոր առևտրային գործընկեր ԵՄ-ի մասնաբաժինը 16% է: Գծապատկեր 10-ում ներկայացված է ԵՄ երկրների և Ռուսաստանի հետ ՀՀ առևտրաշրջանառության համեմատական վերլուծությունը 2020-2022 թթ.: 2022 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 14.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 69%-ով, որից 5.4 միլիարդը եղել է արտահանումը, իսկ 8.8 մլրդ-ը՝ ներմուծումը: ԵՄ երկրների և Ռուսաստանի արտահանման տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են 14% և 45%, իսկ ներմուծմանը՝ 17% և 30%:

**Գծապատկեր 10**

**ՀՀ արտահանումն ու ներմուծումն ըստ երկրների 2020-2022 թթ.-ին (մլն ԱՄՆ դոլար)<sup>6</sup>**



<sup>6</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ [99541138.pdf](https://armstat.am) (armstat.am) (01.11.2023):

Դիտարկելով Գծապատկեր 10-ում ներկայացված տվյալները՝ նկատելի է 2022 թվականին դեպի Ռուսաստան արտահանման աննախադեպ աճը: Վերջինս հիմնականում պայմանավորված է եղել 2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմով, որի հետևանքով արձանագրվել է Ռուսաստանից Հայաստան մարդկանց և կապիտալի մեծ ներհոսք: Հատկանշական է, որ արտահանման մեջ զգալի աճ արձանագրածների ցանկում են կա՛մ Հայաստանում բացակայող, կա՛մ արտահանման ծավալներով արտադրությանը զիջող ապրանքատեսակներ: Այս իրողությունները, ըստ մասնագետների, վկայում են ապրանքների վերաարտահանման զգալի ծավալների մասին, որի հիմնական պատճառը Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներն են եղել, ինչը արտաձին գործոն է և պարունակում է ռիսկեր (*Lnysu հիմնադրամ 2023, 2, 18*):

Անդրադառնալով ՔՀԿԻ-ի մոդելում ընդգրկված Հայաստանի Տնտեսական ազատության ինդեքսին (ՏԱԻ)՝ նշենք, որ 2023 թ.-ին այն նախորդ տարվա համեմատ անկում է ապրել 0.2 միավորով\*: «Տնտեսական ազատության ինդեքս 2023» զեկույցի համաձայն՝ Հայաստանը 65.1 միավորով աշխարհի 176 երկրների շարքում 50-րդ տեղում է: Միևնույն ժամանակ Եվրոպայի տարածաշրջանի 44 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 28-րդ հորիզոնականը և իր ցուցանիշով բարձր է համաշխարհային և սակայն ցածր է տարածաշրջանային միջինից: Ըստ «Հերիթիջ» հիմնադրամի մասնագետների՝ Հայաստանի տնտեսությունը «չափավոր ազատ է» (*Kim, Tyrrell, Roberts 2023, 5, 9, 38-39*):


---

\* ՏԱԻ-ի 2023 թ. ինդեքսի արժեքը ՔՀԿԻ-ի մոդելում ընդունվել և դիտարկվել է որպես 2022 թ. ինդեքս, քանի որ ՏԱԻ-ի 2023 թ. ինդեքսի համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները մեծ մասամբ հիմնվել են 2021 թ. հուլիսի 1-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի տնտեսական ցուցանիշների վրա:

## 2.3 Քաղաքական կայունության առանցքային գործոնները. հայացք սոցիալական խնդիրների դիտակետից

Գծապատկեր 11

Հայաստանի քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2022 թթ.)\*



Քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսի (ՍԳԻ) 2000-2022 թվականների միտումների համաձայն՝ 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո 2012-2014 թվականներին տեղի է ունենում վերականգնում, որը սակայն չի հաղթահարում մինչ-ճգնաժամային ցուցանիշների շեմը: Նշված ժամանակահատվածից հետո ՍԳԻ-ն ունենում է նվազման միտում, որը շարունակվում է մինչև 2022 թվականը՝ սահմանելով հետճգնաժամային շրջանի նվազագույն ցուցանիշը (տե՛ս Գծապատկեր 11):


Հայաստանում սոցիալական կարևոր խնդիրներից է աղքատության մակարդակը\*: 2022 թվականին այն կազմել է 24.8%՝ նախորդ տարվա

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

համեմատ նվազելով 1.7 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ ծայրահեղ աղքատության\*\* մակարդակը 1.2% է, ինչը նշանակում է, որ բնակչության այս հատվածը չի կարողանում բավարարել սննդամթերքի նվազագույն պահանջները (*«Վիճակագրական կոմիտե 2023ա, 34»*): 2019-2022 թթ. աղքատության մակարդակն ունեցել է նվազման միտում: Միայն 2020 թվականին նկատվում է նշված ցուցանիշի աճ՝ պայմանավորված համավարակով և պատերազմի գործոնով: Հատկանշական է, որ ի տարբերություն դրա՝ ծայրահեղ աղքատությունը 2020 թվականին ամենացածրն է եղել:

**Գծապատկեր 12**


**Աղքատության մակարդակի ցուցանիշները, 2019-2022 թթ., (%)**  
*(«Վիճակագրական կոմիտե 2023ա, 36»)*



\* Աղքատ են գնահատվում նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության միջին գծից՝ ամսական 52883 դրամից (կամ՝ 121.4 ԱՄՆ դոլարից):

\*\* Ծայրահեղ աղքատ կամ թերսնված են գնահատվում նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության պարենային գծից՝ ամսական 29934 դրամից (կամ՝ 68.7 ԱՄՆ դոլարից):

**Աղքատությունն ըստ մարզերի և ք. Երևանի, 2022 թ., (%)**  
**(ՀՀ վիճակագրական կոմիտե 2023ա, 37-38)**



Երևան քաղաքում աղքատության ցուցանիշը կազմել է 18.5%, իսկ մարզերում դրա ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շիրակում, ամենացածրը՝ Այունիքում (տե՛ս *Գծապատկեր 13*): Աղքատության մակարդակը 2022 թվականին գյուղական բնակավայրերում ավելի բարձր է, քան քաղաքայինում՝ համապատասխանաբար 29 և 22.1 տոկոս: Այս առումով մտահոգիչ է այն, որ գյուղական բնակավայրերում աղքատության բարձր մակարդակը քաղաքայինի համեմատ ուղեկցվում է զբաղվածության բարձր ցուցանիշով: Առհասարակ զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանի համար արդիական խնդիր է (*Սահակյան, Կարապետյան 2021*): Այսպես, օրինակ՝ 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 56.8%, ինչը նշանակում է՝ աղքատ բնակչության յուրաքանչյուր երկրորդը զբաղված է և աշխատանք ունենալով հանդերձ՝ չի կարողանում հոգալ իր նյութական և ոչ նյութական կարիքները (*Խաչատրյան 2024, 32, ՀՀ վիճակագրական կոմիտե 2023ա, 42*):

Անդրադառնալով զբաղվածության ցուցանիշներին՝ նշենք, որ չնայած 2020 թ. խոշոր ցնցումներին՝ վերջին տարիներին, ստվերի նվազմանը զու-

գահեռ, աճել է վարձու աշխատողների թիվը, իսկ գործազրկության մակարդակը 18.2%-ից նվազել է՝ հասնելով 13.0%-ի (*ՄԺԾԾ 2024-2026, 23*):

Աճ է գրանցվել նաև ՔՀԿԻ-ի մոդելում ընդգրկված Մարդկային զարգացման համաթվի (ՄՂՀ)՝ Հայաստանի 2022 թվականի ցուցանիշում, որով երկիրը դասվում է մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խմբին: 1990-ից 2022 թվականներին Հայաստանի ՄՂՀ արժեքը 0.658-ից փոխվել է 0.786-ի՝ բարելավվելով 19.5%-ով: ՄՂՀ-ի 2022 թվականի ցուցանիշով Հայաստանը 193 երկրների և տարածքների շրջանում զբաղեցնում է 76-րդ հորիզոնականը (*UNDP 2024, 28*):


Չնայած 2022 թվականին վերոնշյալ և մի շարք այլ սոցիալական ցուցանիշների բարելավմանը (անվանական աշխատավարձ, Ջինի ինդեքս)՝ այդուհանդերձ պետք է նշել, որ զուգահեռաբար գրանցվել է հանցագործությունների մակարդակի աճ: 2022 թվականի ՍԳԻ-ի նվազման հիմնական պատճառը հենց հանցագործությունների կտրուկ աճն է եղել: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին հանցագործությունները աճել են 23.3%՝ 30245-ից հասնելով 37612-ի, ինչը պատմական բարձրագույն ցուցանիշն է անկախությունից ի վեր (*ՀՀ վիճակագրական կոմիտե 2023թ, 308*):

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ աղքատության մակարդակի կրճատումը, զբաղվածության և անվանական աշխատավարձերի և մի շարք այլ ցուցանիշների աճը այդուհանդերձ չեն մեղմել բնակչության սոցիալական լարվածությունը և չեն հանգեցրել կենսամակարդակի իրական բարելավմանը: Բնակչության գնողունակությունը շարունակում է ցածր մնալ՝ այն թույլ չի տալիս բավարարել նյութական և ոչ նյութական կարիքների անհրաժեշտ մակարդակը (*Խաչատրյան 2024, 34*):

## 2.4 Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միտումները

Գծապատկեր 14

Հայաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2022 թթ.)\*



Գծապատկեր 14-ում ներկայացված են Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) միտումները 2000-2022 թթ.: Ըստ տվյալների՝ եթե 2000-2014 թթ. որոշ տատանումներով հստակ նկատելի է ՔՀԿԻ դրական միտումը, ապա 2015-2022 թթ. տատանումների խորությունը վկայում է, որ Հայաստանը անցում է կատարել տուրբուլենտության ավելի բարձր մակարդակով տիրույթ: Սա նշանակում է, որ քաղաքական կայունությունը պայմանավորող արտաքին և ներքին գործոնների ազդեցության ներքո քաղաքական համակարգն ավելի խոցելի է դարձել: Եվ թեև 2022 թվականին արձանագրվել է դիտարկվող ժամանակահատվածի ՔՀԿԻ բարձրագույն

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ՔՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:



ցուցանիշը, այդուհանդերձ հետընթացի վտանգը դեռևս բարձր է: 2015-2022 թթ. ժամանակահատվածն ուղեկցվել է երկու խոշոր անկմամբ՝ պայմանավորված Ապրիլյան և 44-օրյա պատերազմներով: 2020 թ. ՔՀԿԻ-ի ցուցանիշի նվազումն ուղեկցվել է ՔԳԻ-ի և ՏԳԻ-ի համաժամանակյա անկմամբ: Վերջինիս վրա ազդեցություն է ունեցել համավարակը՝ հանգեցնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների զգալի կրճատման: 2020 թ. գրանցված ՀՆԱ-ի անկումը վերջին տասնամյակում 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո առաջինն էր: 2021 և 2022 թթ. վերականգնման տարիներ են: Թեև 2021 թվականին տնտեսական և սոցիալական գործոնները համավարակի ազդեցությամբ շարունակել են նվազել, այդուհանդերձ Քաղաքական գործոնների ինդեքսի վերականգնման հաշվին աճ է գրանցել նաև կայունության ինդեքսը: ՔՀԿԻ-ի աճը շարունակվել է նաև 2022 թվականին՝ պայմանավորված ՔԳԻ-ի և ՏԳԻ-ի համաժամանակյա աճով: 2022 թ. ՏԳԻ-ի վերելքին նպաստել է երկնիշ տնտեսական աճը՝ պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից մարդկանց ներհոսքով և զբոսաշրջության զգալի ավելացմամբ:

Չնայած 2022 թվականին ՔՀԿԻ-ի աճին՝ իրավիճակը կայունության առումով շարունակում է խոցելի մնալ: Արցախյան 44-օրյա պատերազմը ոչ միայն հարվածեց Հայաստանի քաղաքական համակարգի կայունությանը, այլև հանգեցրեց տարածաշրջանային անկայունության, ինչպես նաև տարածաշրջանում ուժերի նոր դասավորության՝ որոշ դերակատարների ներգրավման ակտիվացմամբ և միևնույն ժամանակ մյուսների թուլացմամբ:

## Գրականության ցանկ

- Armedia.am. 2021. «ՀՀ վարչապետը և կառավարությունն այլևս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ. ՀՀ ԳՇ»: Փետրվարի 25 (վերջին մուտքը՝ 27.08.2023)՝ <https://armedia.am/arm/news/92502/hh-varchapety-ev-karavarutyun-n-aylevs-i-vitchaki-chen-yndunelu-adekvat-oroshumner-hh-gsh.html>:
- Armenpress.am. 2021. «Փաշինյանը հայտնել է Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման օրը»: Մարտի 18 (վերջին մուտքը՝ 30.08.2023)՝ <https://armenpress.am/arm/news/1046442/arm/rus/>:
- Azatutyun.am. 2021a. “Armenian Military Demands Government’s Resignation.” February 25. Accessed August 25, 2023. <https://www.azatutyun.am/a/3112110-4.html>.

## **Գլուխ 2. Հայաստանը «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրողությունների խաչմերուկներում**

---

- Azatutyun.am. 2021b. «Նիկոլ Փաշինյանը հրաժարական տվեց» (վերջին մուտքը՝ 30.08.2023)՝ <https://www.azatutyun.am/a/31221630.html/>:
- Bayer, Markus, & Stella Hauk. 2023. “Global Militarisation Index 2023.” BICC, Bonn. Accessed January 15, 2024. [https://bicc.de/Publikationen/GMI\\_2023\\_GB\\_-231204.pdf~dr2712](https://bicc.de/Publikationen/GMI_2023_GB_-231204.pdf~dr2712).
- BICC. 2022. “GMI Ranking Table | Global Militarisation Index.” Accessed January 15, 2024. <https://gmi.bicc.de/ranking-table?year=2022>.
- Factor.am. 2020. «17 կուսակցությունների խորհուրդը «Հայրենիքի փրկության շարժում» է ձևավորել»: Դեկտեմբերի 3 (վերջին մուտքը՝ 27.05.2018)՝ <https://factor.am/317012.html>:
- Freedom House. 2023. “Freedom in the World: Armenia.” Accessed May 15, 2023. <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2023>.
- Freedom House. n.d. “Freedom in the World.” Accessed May 15, 2023. Freedom House. <https://freedomhouse.org/report/freedom-world>.
- Kim, Anthony B., Patrick Tyrrell & Kevin D. Roberts. 2023. “2023 Index of Economic Freedom.” Heritage Foundation. Accessed September 20, 2023. [https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/book/2023\\_IndexOfEconomicFreedom\\_FINAL.pdf](https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/book/2023_IndexOfEconomicFreedom_FINAL.pdf).
- MFA RA. 2020. “Statement by the Foreign Ministry of Armenia regarding the deployment of foreign terrorist fighters in the region by Turkey and Azerbaijan.” November 1, 2020. Accessed May 18, 2023. <https://www.mfa.am/en/press-releases/2020/11/01/fm-statement/10622>.
- Modex. 2023. “FDI performance of Armenia 2022.” April, Yerevan. Accessed October 13, 2023. <https://modex.am/wp-content/uploads/2023/04/RA-FDI-performance-2022.pdf>.
- Primeminister.am. 2021. «ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Օսիկ Գասպարյանին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնից իրավունքի ուժով ազատված համարելու մասին»: Մամուլ հաղորդագրություն, մարտի 10 (վերջին մուտքը՝ 27.08.2023)՝ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/03/10/-Announcement/>:
- Transparency International. 2022. “2022 Corruption Perceptions Index: Armenia.” January 31, 2023. Accessed May 15, 2023. <https://www.transparency.org/en/cpi/2022/index/arm>.
- UNDP (United Nations Development Programme). 2024. “Human Development Report 2023-24: Breaking the gridlock: Reimagining cooperation in a polarized world.” New York.
- Городилов, Михаил. 2023. «Как устроена экономика Армении», Тинькофф Журнал, Сентябрь 1. Дата доступа: 20.10.2023. <https://journal.tinkoff.ru/news/armenia-economic/>.
- Маркедонов, Сергей. 2007. «Постсоветский Южный Кавказ: традиционализм плюс модернизация», Прогнозис. N 1: 332-348.

- Пухов, Руслан (ред). 2021. “Буря На Кавказе”. Москва Центр анализа стратегий и технологий.
- Ալեքսանյան, Արուսյակ (խմբ.). 2018. Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա: Եր., ԵՊՀ հրատ.:
- Գևորգյան, Արմինե. 2021. «Մարտի 1-ի քաղաքական օրակարգը»: Հայաստանի հանրային ռադիո, մարտի 1 (վերջին մուտքը՝ 27.08.2023)՝ <https://hy.armradio.am/archives/322203>:
- Լույս հիմնադրամ. 2023. «ՀՀ տնտեսության արտահանման կտրուկ աճը՝ պայմանավորված արտաձին գործոններով», 2023(03) օգոստոս:
- Խաչատրյան, Անի. 2024. «Զբաղվածության պատկերը Հայաստանում», «Ամբերդ» տեղեկագիր, 2024 /1(26), DOI: 10.52174/2579-2989\_2024.1-29.
- ՀՀ վիճակագրական կոմիտե. 2023ա. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական-վերլուծական զեկույց (վերջին մուտքը՝ 20.10.2023)՝ <https://armstat.am/am/?nid=82&id=2617>:
- ՀՀ վիճակագրական կոմիտե. 2023բ. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2022 թվականին», վիճակագրական ժողովածու (վերջին մուտքը՝ 20.10.2023)՝ <https://armstat.am/am/?nid=81&id=2591>:
- Հովսեփյան, Լևոն. 2021. «Ներպետական գործոնների ազդեցությունը Թուրքիայի ռազմաքաղաքական վարքագծի վրա արցախյան առաջին և 44-օրյա պատերազմներում. համեմատական վերլուծություն»: Գիտական Արցախ, № 3(10):195-208. DOI: 10.52063/25792652-2021.3-195:
- Ղևոնդյան, Ալեն. 2022. «Արցախյան 44-օրյա պատերազմը և Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դերակատարման փոխակերպման գործընթացը»: Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 13 (1 (37):9-22. <https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.009>:
- ՄԺԾԾ (2024-2026) «ՀՀ 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», ՀՀ Կառավարություն (վերջին մուտքը՝ 20.10.2023)՝ [https://minfin.am/hy/page/petakan\\_mijnazhamket\\_tsakhseri\\_tsragre/](https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/)
- Մխիթարյան, Էլիզա. 2020. «Բողոքի ցույցեր՝ պատերազմն ավարտելու հայտարարությունից հետո»: Հայաստանի հանրային ռադիո, նոյեմբերի 10 (վերջին մուտքը՝ 27.10.2023)՝ <https://hy.armradio.am/archives/302777>:
- Մովսիսյան, Մարինե. 2021. «Վարձկանների մասնակցությունը 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմին և դրա ազդեցությունը միջազգային անվտանգության համակարգի վրա»: Գիտական Արցախ, № 4(11):153-168. DOI: 10.52063/25792652-2021.4-153:
- Սահակյան, Մարիա և Լուսինե Կարապետյան. 2021. «Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում», վերլուծություն, Երևան (վերջին մուտքը՝ 25.10.2023)՝ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/17944-20210722.pdf>:

### **ԳԼՈՒԽ 3.**

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՂՔ**

### **ԱՆՆԱ ՍԱՐԿԻՍՅԱՆ**

2018-2021 թթ. Վրաստանն անցավ քաղաքական այնպիսի զարգացումների և վայրիվերումների միջով, որոնք երկարատև ցնցումների մեջ գցեցին երկրի քաղաքական կայունությունը: Քաղաքական լանդշաֆտը շարունակում էր կրել խորը բևեռացվածության ախտանիշներ, որոնք առավել նկատելի էին իշխող «Վրացական երազանք» կուսակցության և ընդդիմադիր կուսակցությունների, մասնավորապես «Միացյալ ազգային շարժում» (ՄԱՇ) և «Եվրոպական Վրաստան» կուսակցությունների միջև: Այս բևեռացումը հաճախ խոչընդոտում էր քաղաքական տարբեր ուժերի միջև կառուցողական երկխոսությունն ու համագործակցությունը: Նշված ժամանակահատվածում Վրաստանում անցկացվեցին համապետական մի քանի ընտրություններ, որոնց արդյունքները միանշանակ չընդունվեցին ինչպես տեղական քաղաքական ուժերի, այնպես էլ դիտորդական կազմակերպությունների կողմից: Ավելին, դրանց արդյունքների շուրջ քննարկումները օրըստօրե խորացրին հակասությունները, որոնք վտանգեցին ժողովրդավարական գործընթացի վստահելիությունը: Վրաստանյան հասարակության տարբեր շերտեր նախաձեռնեցին բողոքի մի շարք ակցիաներ և ցույցեր՝ առաջադրելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին ժողովրդավարության հետընթացը, ընտրական գործընթացի անկատարությունը, լրատվամիջոցների ազատությունը և այդ ամենում կառավարության դերն ու ազդեցության լծակների գործադրումը: Պետք է նշել, որ քաղաքացիական հասա-


րակության կազմակերպությունները նշանակալի դեր խաղացին հասարակական տրամադրությունների համախմբման և հոգուտ քաղաքական փոփոխությունների քարոզչության գործում: Մտահոգություններ էին հնչում Վրաստանում ՁԼՄ-ների ազատությունը և բազմակարծությունը ճնշելու վերաբերյալ: Որոշ ընդդիմադիր կուսակցություններ և քաղաքացիական հասարակության խմբեր մեղադրեցին կառավարությանը ՁԼՄ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեջ՝ հարցականի տակ դնելով ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը և քաղաքացիների՝ բազմակարծ ու անաչառ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Ընդհանուր առմամբ, 2018-2021 թթ. Վրաստանի քաղաքական կյանքը բնութագրվում էր քաղաքական բևեռացմամբ, ընտրական հակասություններով, բողոքի ցույցերով, քաղաքացիական հասարակության ներգրավվածությամբ և ժողովրդավարական ինստիտուտների և լրատվամիջոցների ազատության վերաբերյալ մտահոգություններով: Ժամանակաշրջանն ընդգծեց անցումային ժողովրդավարությունը կառավարելու, տարածաշրջանային դինամիկայով կողմնորոշվելու և ներքին ու միջազգային շահերի հավասարակշռման բարդությունները: Թեև Վրաստանը չի ապրել համատարած անկայունություն կամ ցնցումներ, քաղաքական լանդշաֆտը մնաց դինամիկ և հաճախ վիճելի:

Ստորև ներկայացված գծապատկերը (տե՛ս *Գծապատկեր 1*) ցուցադրում է քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների ազդեցությունը Վրաստանի քաղաքական կայունության վրա, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվում աշխատանքի ենթագլուխներում:

**Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք**

**Գծապատկեր 1**

**Վրաստանի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2021 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

Վրաստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2021 թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	ՔՀԿԻ
2000	-0.075	-0.448	0.187	<b>-0.052</b>
2001	-0.328	-0.418	0.201	<b>-0.183</b>
2002	0.031	-0.438	0.204	<b>0.012</b>
2003	-0.263	-0.356	0.196	<b>-0.139</b>
2004	-0.413	-0.321	0.163	<b>-0.226</b>
2005	0.137	-0.243	0.065	<b>0.058</b>
2006	0.129	-0.023	-0.032	<b>0.058</b>
2007	0.034	0.007	0.052	<b>0.035</b>
2008	-0.224	0.056	0.211	<b>-0.051</b>
2009	-0.060	-0.107	0.257	<b>0.028</b>
2010	0.187	0.014	0.244	<b>0.178</b>
2011	0.018	0.292	0.299	<b>0.143</b>
2012	0.070	0.491	0.342	<b>0.215</b>
2013	0.164	0.560	0.357	<b>0.281</b>
2014	0.251	0.575	0.405	<b>0.346</b>
2015	0.240	0.458	0.382	<b>0.315</b>
2016	0.249	0.509	0.377	<b>0.326</b>
2017	0.281	0.576	0.353	<b>0.347</b>
2018	0.120	0.708	0.260	<b>0.250</b>
2019	0.219	0.677	0.204	<b>0.283</b>
2020	0.109	0.437	0.212	<b>0.189</b>
2021	0.162	0.610	0.263	<b>0.259</b>


\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի, Ս<sub>ԳԻ</sub>-ի և դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի որոշ տարիների արժեքները հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

### 3.1 Քաղաքական կայունության հակառակ կողմը

Գծապատկեր 2

Վրաստանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2021)\*



Գծապատկեր 2-ում արտացոլված է Վրաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) քաղաքական գործոնների կորը: Այն պարզ արտացոլում է քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունների ազդեցությունը քաղաքական կայունության վրա: Վերլուծելով այդ տվյալները՝ կարող ենք նշել, որ 2011-2017 թվականներին Քաղաքական գործոնների ինդեքսի տատանումները նվազել են, ինչը նշանակում է, որ այդ ժամանակահատվածում քաղաքական կայունության վրա դրանց բացասական ազդեցությունը նվազել է, և դաշտը համեմատաբար կայուն է եղել: Նույնը չի կարելի ասել 2018-2021 թթ. համար, որը քաղաքական վայրիվերումների շրջան է դիտվում:

Իրավամբ, 2018-2021 թթ. ժամանակաշրջանը Վրաստանի քաղաքական դաշտը ուսումնասիրողների համար ներկայանում է ծայրաստիճան

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:



բևեռացված: Վրաստանում գործող երկու՝ ընդդիմադիր և իշխանական կուսակցությունների՝ միմյանց միջև պայքարը ժողովրդի համար որպես միակ այլընտրանք ներկայացնելու միտումը բավականին ակնհայտ էր: «Վրացական երազանքը» չէր ցանկանում մրցակցել վստահություն վայելող մեկ այլ քաղաքական ուժի հետ, իսկ Միացյալ ազգային շարժումը ցանկանում էր պահպանել կառավարություն ձևավորելու և «Վրացական երազանքին» միակ այլընտրանքը մնալու կարգավիճակը, որը ապահովում էր վերջինիս սոցիալական աջակցության բազան և ֆինանսական աղբյուրների կայունությունը: Նշված ժամանակահատվածի քաղաքական բևեռացումն ավելի ցայտուն դրսևորվում էր քաղաքական բանավեճերում, քան բռնություններ կիրառելով: Վերլուծաբանները դա բացատրում են ավելի զարգացած ժողովրդավարական ինստիտուտների առկայությամբ: Երկիրը գտնվում է սոցիալական և քաղաքական վերափոխումների փուլում՝ ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ծրագրերի շրջանակներում, ինչը ենթադրում է հանրային ավելի զգուշավոր քաղաքականություն բոլոր մասնակիցների համար:

Բևեռացման բացասական հետևանքները, այնուամենայնիվ, զգացվում էին առօրյա կյանքի տարբեր ոլորտներում: Շուրջ երկու տարի վրաստանաբնակները գրեթե մշտական քաղաքական լարվածության մեջ էին ապրում, քանի որ խորհրդարանի աշխատանքները բոյկոտվում էին ընդդիմության կողմից: Բացի այդ, դատական համակարգը ճգնաժամի մեջ էր բարձրագույն դատավորների նշանակման պատճառով: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ լրատվամիջոցները հիմնականում լեցուն էին քաղաքական պայքարի շրջադարձերը լուսաբանող նյութերով:

Այս պայմաններում գրեթե քրոնիկ բնույթ ստացած քաղաքական բևեռացումը և դրանից բխող երկարատև ճգնաժամը բնակչությանը մղում էին անտարբերության և ապամոտիվացում քաղաքական գործընթացներին մասնակցելու ցանկությունը, ինչն իր հերթին նվազեցնում էր վստահությունը ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ:

Իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը 2017 թվականին շտապեց հաստատել խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու մտադրության մասին և ձեռնարկեց սահմանադրական բարեփոխումներ արագ կատարելու գործընթաց՝ առանց ավելի լայն քաղաքական

համաձայնություն ապահովելու: Ընդդիմադիր կուսակցությունները, նախագահը և հասարակական կազմակերպությունները (<Կ-ները) քննադատեցին նոր սահմանադրությունը՝ կարևոր ընտրական բարեփոխումները մինչև 2024 թ. հետաձգելու համար: Վենետիկի հանձնաժողովը՝ Եվրոպայի խորհրդի իրավական հարցերով խորհրդատվական մարմինը, թեև դրական գնահատեց բարեփոխումը, սակայն ափսոսանք հայտնեց համամասնական ընտրակարգը մինչև 2024 թ. հետաձգելու կապակցությամբ (*Council of Europe 2018, 4*):

### ***Սահմանադրական բարեփոխումներ***

2017 և 2018 թթ. Վրաստանի խորհրդարանը էական փոփոխությունների ենթարկեց երկրի Սահմանադրությունը՝ թե՛ տեխնիկական, թե՛ բովանդակային առումով: Բարեփոխումների գործընթացը, անշուշտ, ներքին նոր անհամաձայնություններ և լարվածություններ առաջացրեց, ինչն իր ազդեցությունն ունեցավ երկրի քաղաքական կայունության վրա: Խորհրդարանական համակարգը ամբողջությամբ կգործի 2024 թվականից, ինչպես հայտարարել է կառավարությունը: Մինչև փոփոխված սահմանադրության լիովին ուժի մեջ մտնելը պետք է գործեր անցումային շրջան՝ հետևյալ պայմաններով.

1. 2018 թ. նախագահը կընտրվի համընդհանուր քվեարկությամբ: Նախագահական ընտրությունների նոր կարգը կգործի 2024 թ., երբ կավարտվի համընդհանուր քվեարկությամբ ընտրված նախագահի լիազորությունների ժամկետը:

2. Ինչպես նախկինում, համամասնական ընտրակարգով ընտրություններին կարող են մասնակցել քաղաքական կուսակցությունները և քաղաքական կուսակցությունների դաշինքները:

3. 2020 թվականի համար ընտրական շեմը կնվազեցվի միայն մեկ անգամ՝ 5%-ից իջնելով 3%-ի:

4. Գործող ընտրական մոդելը ուժի մեջ կմնա 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների համար՝ խորհրդարանի 77 անդամ կընտրվի համամասնական, իսկ 73 անդամ՝ մեծամասնական ընտրակարգով:

Ինստիտուտների մասով առաջարկվող փոփոխությունները հետևյալն են.

#### Նախագահ

- Նախագահը շարունակում է մնալ պետության գլուխ, գերագույն գլխավոր հրամանատար և արտաքին հարաբերություններում երկրի ներկայացուցիչ, սակայն այլևս չի ապահովում «Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պետական մարմինների գործունեությունը»:
- Նախագահը կորցնում է «կառավարության նիստում կոնկրետ հարցեր քննարկելու և քննարկմանը մասնակցելու պահանջի» իրավունքը:
- Նախագահն այլևս չի ընտրվի ուղղակի համընդհանուր քվեարկությամբ. այդ մանդատը կփոխանցվի 300 անդամից կազմված ընտրիչների մարմնին, որը բաղկացած կլինի պատգամավորներից, տեղական և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչներից (սկսած 2024 թ.-ից) և այլն:
- Նախագահը կընտրվի բաց քվեարկությամբ՝ առանց նախնական բանավեճի խորհրդարանի նիստերի դահլիճում և կպաշտոնավարի հինգ տարի ժամկետով (բացառությամբ՝ 2018-2024 թթ.՝ վեց տարի): Միևնույն անձը կարող է նախագահ լինել միայն երկու ժամկետով:
- Նախագահի ընտրվելու տարիքը 35-ից փոխվում է 40-ի: Փոփոխության է ենթարկվել նաև բնակության ցենզը. պոտենցիալ թեկնածուն պետք է առնվազն 15 տարի ապրած լինի Վրաստանում: Սակայն այլևս պարտադիր չէ, որ ընտրություններից առաջ վերջին երեք տարիների ընթացքում ապրած լինի Վրաստանում
- Ազգային անվտանգության խորհուրդը, որը նախկին Սահմանադրությամբ ղեկավարում էր Նախագահը և «կազմակերպում էր երկրի ռազմական զարգացումն ու պաշտպանությունը», կդադարի գործել: Փոխարենն ըստ նոր ընդունված Սահմանադրության կստեղծվի Ազգային պաշտպանության խորհուրդ, որը կգործի միայն ռազմական դրության ժամանակ՝ համակարգելու սահմանադրական մարմինների աշխատանքը, և բաղկացած կլինի Վրաստանի նախա-

գահից, վարչապետից, խորհրդարանի նախագահից և զինված ուժերի ղեկավարից (*Constitution of Georgia 1995, Chapter 4*):

**Խորհրդարան**

- Խորհրդարանն ամբողջապես կանցնի համամասնականի՝ չբաշխված մանդատները համամասնորեն կբաշխվեն այն կուսակցությունների միջև, որոնք կհաղթահարեն 5 տոկոսի ընտրական շեմը:
- Ընտրական դաշինքներն այլևս չեն թույլատրվելու:
- Մեկ քաղաքական կուսակցության ցուցակով ընտրված պատգամավորները կարող են կազմել խորհրդարանական միայն մեկ խմբակցություն:
- Պատգամավորի թեկնածուի տարիքը նախկին քսանմեկից դառնում է քսանհինգ (*Constitution of Georgia 1995, Chapter 3*):

Ընդունված փոփոխություններով սահմանեց, որ 2020 թ. խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են գործող խառը ընտրակարգով, որտեղ ընտրողները մեծամասնական, միամանդատ ընտրատարածքներում ընտրում են 73 պատգամավոր, իսկ մնացած 77 մանդատը բաշխվում է համամասնորեն՝ կուսակցական փակ ցուցակով (*IRI 2021, 7*): Խորհրդարան մտնելու շեմը նվազում է՝ 3 տոկոս, իսկ կուսակցություններին թույլատրվում է ստեղծել նախընտրական դաշինքներ: Վերջին փոփոխությունները Վենետիկի հանձնաժողովի երեք հիմնական նկատառումներից երկուսն էին, որոնք սահմանափակեցին համամասնական համակարգով առաջադրվելու առավելությունն՝ ի հաշիվ փոքր կուսակցությունների և բազմակարծության: Ուստի խորհուրդ է տրվել վերանայել շեմը (*Council of Europe 2018*):

**Վարչապետ/Կառավարություն**

- Վարչապետը կազմակերպում է կառավարության գործունեությունը և նշանակում ու ազատում նախարարներին:
- Կառավարության գործունեության համար վարչապետը հաշվետու է խորհրդարանի առջև: Նա խորհրդարանին կներկայացնի Կառավարության ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը (*Constitution of Georgia 1995, Chapter 5*):

Սահմանադրական փոփոխությունների տրամաբանությունն ընկալելու համար հարկ է ներկայացնել քաղաքական այն պայմանները, որոնք հան-

գեցրին փոփոխություն կատարելու անհրաժեշտությանը: Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ բանավեճը պաշտոնապես մեկնարկել է սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով ձևավորելուց հետո, որը ստեղծվել է 2015 թ. դեկտեմբերին՝ կազմված 73 անդամ փորձագետներից և 7 քաղաքական կուսակցությունների, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Նախագահական ընտրությունների մոդելի հարցը ի սկզբանե եղել է այս տևական բանավեճի առանցքում: Իշխող «Վրացական երազանք» կուսակցության քաղաքական գործիչները և մասնավորապես խորհրդարանի այն ժամանակվա նախագահ Իրակլի Կուկաչիտեն պնդում էին, որ ուղիղ համընդհանուր ընտրական իրավունքով նախագահական ընտրությունների համակարգը հակասում է խորհրդարանականին, ուստի պետք է համապատասխանաբար փոփոխվի: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից 2017 թ. ապրիլին ներկայացրած առաջարկը հենց դրա վերաբերյալ էր: Այնուամենայնիվ, որպեսզի տպավորություն չստեղծվեր, թե բարեփոխումների իրական նպատակը այդ ժամանակ գործող նախագահ Մարգվելաշվիլիի հեղինակության թուլացումն է, առաջարկվեց, որ նոր համակարգով առաջին ընտրությունները տեղի չեն ունենա 2023 թ. շուտ, իսկ 2018 թ. նախագահական ընտրությունները տեղի կունենան գործող Սահմանադրության կարգով: Բացի այդ, 2023 թ. սկսած ընտրությունները կանցկացվեն ոչ թե համընդհանուր ընտրական իրավունքով, այլ ընտրական մարմնի միջոցով, որը չի սահմանափակվի միայն պատգամավորներով: Այսպիսով, առաջարկվեց ստեղծել հատուկ մարմին՝ 300 հոգանոց ընտրիչների քոլեջ, որը, բացի 150 պատգամավորներից, կներառի նաև տեղական ինքնակառավարման մարմինների ևս 150 ներկայացուցիչներ, այդ թվում՝ Աջարիայի և Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունների Գերագույն խորհուրդներից: Սույնով նաև կփարատվեին ընդդիմության մտահոգություններն առ այն, որ 2023 թ. խորհրդարանում կարող էր շարունակել գերակայել «Վրացական երազանքը»:

Ի սկզբանե այս փոփոխությունը որոշակի դժգոհություն առաջացրեց թե՛ խորհրդարանական ընդդիմության, թե՛ գործող նախագահի մոտ: Հավանություն չէր տրվում նախագահի՝ մեծ լիազորություններով օժտված նա-

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

խագծին: Նրանք մտահոգված էին, թե արդյոք ավելի թույլ իրավասություն ունեցող նախագահը կկարողանա կատարել արբիտրի դերը պետական կառույցների միջև հակասությունների դեպքում, արդյոք նա ի վիճակի կլինի հավասարակշռել հակընդդեմ ուժերի տարաձայնությունները: Ի վերջո համաձայնություն ձեռք բերվեց՝ պայմանով, որ նախագահի պաշտոնավարման ժամկետը կերկարացվի 6 տարով՝ մինչև 2024 թ.:

Խորհրդարանական ընտրությունները նույնպես պետք է ենթարկվեին հիմնովին բարեփոխման: Գործող մեծամասնական-համամասնական խառը ընտրակարգի փոխարեն պետք է ներդրվեր զուտ համամասնական համակարգ: Հինգ տոկոսի շեմը կպահպանվի՝ թույլատրելով ընտրական կուլիցիաների ստեղծումը և հատուկ բնույթ կտրամադրվի պատգամավորական ամենաշատ մանդատներ ստացող կուսակցությանը: Այսինքն՝ վերջինս կստանա բոլոր այն կուսակցությունների մանդատները, որոնք չեն կարողացել հաղթահարել ընտրական շեմը: Ըստ այդ համակարգի կողմնակիցների՝ այն նախ կհավասարակշռի ընտրական համակարգի երկու հիմնական նպատակները՝ բազմակարծությունը և իշխանության ու համակարգի միջև կայունությունը: Իսկ դրա քննադատները նշում էին, որ ընտրություններում ստացված աջակցությանը համաչափ խորհրդարանական ներկայացվածություն ապահովելու նպատակը կխեղաթյուրվի համեմատաբար բարձր ընտրական շեմի միջոցով: Առաջարկվող հավելումը մերժվեց հետագա քննարկումների ժամանակ և փոխարինվեց կուսակցությունների ստացած մանդատները այդ շեմը հաղթահարած բոլոր կուսակցությունների միջև բաշխելով և ոչ թե դրանք ամբողջությամբ առավել շատ քվե ստացած կուսակցությանը հատկացնելով:

Ընդդիմադիր կուսակցությունները սահմանադրական փոփոխությունների առաջարկները համարեցին իշխող կուսակցության կողմից նախագահի նկատմամբ վերահսկողություն հաստատելու և այդ պաշտոնը յուրացնելու փորձ: Նրանք իշխող մեծամասնությանը մեղադրում էին իրենց իշխանությունն ամրապնդելու մեջ: Այս բանավեճն այնքան խորացավ, որ ի վերջո մինչև աշխատանքի ավարտը սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովից հերթով դուրս եկան քաղաքական մի շարք կուսակցություններ (*Civil.Ge 2017*):

Վենետիկի հանձնաժողովի՝ 2017 թ. հոկտեմբերին ընդունած եզրակացությունից հետո (*Council of Europe 2017*)՝ 2018 թ. մարտին, բարեփոխված սահմանադրությունը ևս մեկ անգամ փոփոխվեց՝ 2020 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ: Անցումային կանոնների համաձայն՝ այդ ընտրությունները պետք է անցկացվեին խառը՝ մեծամասնական-համամասնական ընտրակարգով՝ 3 տոկոսի նվազեցված քվեարկության շեմով: 2018 թ. մարտի փոփոխության մեջ նշվում էր, որ, ի տարբերություն հաջորդ ընտրությունների, այդ ընտրություններում կարելի է կազմել կոալիցիաներ: Դեռևս 2017 թ. աշնանը «Վրացական երազանքը» փորձում էր այս և այլ ուղղումներ մտցնել՝ Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին համապատասխան: Սակայն փոփոխության նախագիծը պատրաստ էր միայն երկրորդ ընթերցումից հետո, իսկ քանի որ երրորդ ընթերցմամբ նախագծերում փոփոխություններ մտցնելն արգելված էր, նախագահին առաջարկվեց օգտագործել իր իրավասությունները՝ այդ փոփոխությունները կյանքի կոչելու համար:

### **2018 թ. նախագահական ընտրություններ**

Պետք է նշել, որ 2018 թ. նախագահական ընտրությունները չէին փոխելու Վրաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը: Երկու գլխավոր թեկնածուների նախընտրական ծրագրերը շեշտադրում էին Վրաստանի՝ Եվրոպային և ԱՄՆ-ին ավելի մերձենալու դրույթը:

2018 թ. հոկտեմբերի 28-ին Վրաստանի քաղաքացիները գնացին ընտրատեղամասեր՝ ընտրելու հաջորդ՝ թվով յոթերորդ նախագահին: Սա անկախացումից ի վեր նախագահական վերջին ուղղակի ընտրություններն էին. նախատեսվող բարեփոխումներով նախագահները կընտրվեն 300 հոգանոց Ընտրիչների կոլեգիայի կողմից:

Ընտրությունները տեղի ունեցան երկու փուլով, քանի որ առաջատար թեկնածուներից ոչ մեկին չհաջողվեց ստանալ քվեների գերակշռություն: Ստորև ներկայացվում է ընտրությունների երկու փուլն ամփոփող արդյունքների աղյուսակը (տե՛ս *Աղյուսակ 2*):

**Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք**

Աղյուսակ 2.

2018 թ. նախագահական ընտրությունների արդյունքները  
(OSCE/ODIHR 2018, 37)

Թեկնածու	Կուսակցություն	Առաջին փուլ		Երկրորդ փուլ	
		Քվեներ	%	Քվեներ	%
Սալոմե Ջուրաբիշվիլի	Անկախ, Վրացական երազանք	615,572	38.64	1,147,701	59.52
Գրիգոլ Վաշաձե	Միացյալ ազգային շարժում	601,224	37.74	780,680	40.48
Դավիթ Բաքրաձե	Եվրոպական Վրաստան	174,849	10.97		
Շավվա Նաթելաշվիլի	Վրաստանի աշխատանքի կուսակցություն	59,651	3.74		
Դավիթ Ուսուպաշվիլի	Զարգացում շարժում	36,037	2.26		
Զուրաբ Զափարիձե	Գիրչի	36,034	2.26		
Կախա Կուկավա	Ազատ Վրաստան	21,186	1.33		
Գիորգի Անդրիաձե	Անկախ	13,133	0.82		
Թեյմուրազ Շաշիաշվիլի	Անկախ	9,481	0.6		
Թամար Ծխորագաուլի	Թավիսուփլեբա	4,004	0.25		
Բեսարիոն Թեդիաշվիլի	Անկախ	3,713	0.23		
Միխեյիլ Սալուաշվիլի	Արդարադատության վերականգնման միություն	2,970	0.19		
Լևան Չխեիձե	Նոր քրիստոնյա դեմոկրատներ	2,895	0.18		
Ակակի Ասաթիանի	Վրաց ավանդապաշտների միություն	1,994	0.13		



**Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում**

Վախթանգ Գաբունիա	Քրիստոնեադեմոկրատական շարժում	1,958	0.12		
Գելա Խուցիշվիլի	Վրաց վետերանների և հայրենասերների քաղաքական շարժում	1,623	0.1		
Կախաբեր Չիչինաձե	Անկախ	1,418	0.09		
Միխեիլ Անթաձե	Պետություն ժողովրդի համար	1,074	0.07		
Գիորգի Լիլուաշվիլի	Վրաստան կուսակցություն	892	0.06		
Ջվիադ Մեխաբիշվիլի	Վրաց քրիստոնեապահպանողական կուսակցություն	713	0.04		
Օթար Մեունարգիա	Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը	664	0.04		
Վլադիմեր Նոնիկաշվիլի	Անկախ	633	0.04		
Իրակլի Գորգաձե	Ազատ Վրաստանի համար շարժում	531	0.03		
Ջվիադ Բաղդավաձե	Քաղաքացիական հարթակ - Նոր Վրաստան	477	0.03		
Ջվիադ Իաշվիլի	Ազգային ժողովրդավարական կուսակցություն	444	0.03		
		1,593,170	100	1,928,381	100

Վրաստանի նախագահական ընտրությունների երկրորդ փուլն ավարտվեց ամենականխատեսելի ելքով. իշխող ուժի աջակցությունը վայելող Սալոմե Ջուրաբիշվիլին ընտրվեց Վրաստանի անկախության պատմության մեջ առաջին կին նախագահը: Վրաստանի քաղաքական դաշտում վայրիվերումները հանդարտվեցին, և քաղաքականությունը վերադարձավ բնականոն հուն, սակայն ընտրությունները բացահայտեցին մեծ թվով ռիսկեր քաղաքական դաշտի կայունության համար:

Պետք է նշել, որ Սալոմե Ջուրաբիշվիլիի հաղթանակը միանշանակ չընկալվեց վրաց հասարակության կողմից: Լինելով իշխող ուժի առաջ քաշած թեկնածու, ինչպես նորընտիր Նախագահ Ջուրաբիշվիլին էր նշել The Daily Beast-ին (*Nemtsova 2018*) տված հարցազրույցում, «Վրացական երազանք» կուսակցության աջակցությունը նրա ընտրվելու գրավականն էր: Սակայն, ըստ նրա, դա չէր ենթադրում նախապայմաններ, որոնք կպահանջեին հավատարիմ մնալ Իվանիշվիլիին և նրա կուսակցությանը հետագայում: «Ես պարոն Իվանիշվիլիին տեսա ընտրություններից հետո: Նա ինձ ասաց՝ դու պարտք չես իշխող կուսակցությանը, կարող ես անկախ լինել»:

Ընտրությունների կազմակերպման և դրանց ընթացքի ուշագրավ դրվագներից է այն, որ, ըստ տեղական հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ընդդիմադիր կուսակցության հայտարարությունների, տեղի էր ունեցել վարչական ռեսուրսի չարաշահում: Հատկապես աղմկահարույց էր ընտրությունների երկրորդ փուլի օրվա նշանակումը աշխատանքային օր: Թեև դա օրինական էր, դիտորդ կազմակերպությունները անհանգստություն հայտնեցին, որ «երկրորդ փուլի անցկացումը աշխատանքային օրերին նաև խնդրահարույց կլինի Վրաստանում բնակվող քաղաքացիների համար, քանի որ հաճախ ընտրողները պետք է մեկ քաղաքից մյուսը մեկնեն իրենց հաշվառման վայր հասնելու համար: Այդ նպատակով մեկ աշխատանքային օրը տոնական հայտարարելը բավարար չէ» (*Isfed 2018*):

Բացի այդ, Ջուրաբիշվիլիի քննադատները նշում էին, որ նա իշխանության է եկել Վրաստանի պատմության «ամենակեղտոտ արշավի» արդյունքում: «Այն ուժերը, որոնք նրան սատարել են՝ քաղաքական կուսակցություններից մինչև անհատներ, Վրաստանի քաղաքական սպեկտրի ամենաայլատյաց և սեքսիստականներից են», - ասում է Նատալյա Անտելավան՝ վրաց լրագրող և Թբիլիսիում տեղակայված Coda Story միջազգային մեդիա հարթակի հիմնադիրը: ««Առաջին կին նախագահը» հիանալի վերնագիր է, որը ենթադրում է առաջընթաց, բայց դա հսկայական հետընթաց էր Վրաստանի ժողովրդավարական զարգացման համար» (*Nemtsova 2018*):

Նման քննադատության հիմք էր նաև այն, որ իշխող ուժն ընտրությունների երկրորդ փուլին ընդառաջ հայտարարեց, որ պատրաստ է ներել շուրջ

600 000 քաղաքացու պարտքերը ֆինանսական կառույցներին: «600 000 քաղաքացի մինչև դեկտեմբերի 31-ը վստահաբար կհեռացվի պարտապանների ռեգիստրից և Նոր տարին կդիմավորի առանց պարտքերի», - 2018 թ. նոյեմբերի 19-ին կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Մամուկա Բախտաձեն (*Transparency International Georgia 2018*): Սա, անշուշտ, դիտորդական մի շարք կազմակերպությունների կողմից դիտարկվեց որպես ընտրակաշառքի տեսակ. նրանք իրենց անհանգստությունն արտահայտեցին այդ կապակցությամբ (*Transparency International Georgia 2018*):

Առաջին փուլի վերաբերյալ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) հրապարակած զեկույցը (*OSCE/ODIHR 2018*) արձանագրել է, որ «ընտրությունները եղել են մրցակցային և մասնագիտորեն կազմակերպված: Թեկնածուները իրականացրին ազատ քարոզարշավ, իսկ ընտրողներն ունեին իրական ընտրության հնարավորություն, թեև եղել են դրա չարաշահման դեպքեր: Քարոզարշավում գրանցվել են վարչական ռեսուրսի առկայություն և իշխող կուսակցության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցություն: Նվիրատվությունների անհամաչափությունը և ծախսերի չափազանց բարձր սահմանաչափերը հետագայում նպաստեցին անհավասար խաղաղաշտի ստեղծմանը»:

Երկրորդ փուլի վերաբերյալ նույն զեկույցում (*OSCE/ODIHR 2018*) նշվում է, որ ընտրությունները «մրցակցային էին, և թեկնածուները կարող էին ազատ քարոզարշավ իրականացնել, սակայն արձանագրվել է վարչական ռեսուրսի չարաշահումների աճ, որով լրոզվել է կուսակցության և պետության միջև սահմանը»:

### **2020 թ. խորհրդարանական ընտրություններ**

2020 թ. հոկտեմբերի 31-ին Վրաստանի քաղաքացիները քվեարկեցին խառը ընտրակարգով 150 անդամից բաղկացած խորհրդարան ընտրելու համար. 120 պատգամավորական տեղ բաշխվեց կուսակցական ցուցակներով, իսկ 30 օրենսդիր պետք է ընտրվեին մեծամասնական ընտրատարածքներից: Ընտրական համակարգը զգալիորեն փոփոխվել էր 2019 թ.

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

հունիսի 20-ին մեկնարկած և ամիսներ տևած բողոքի ակցիաներից հետո, երբ արտաքին միջնորդությամբ իշխող «Վրացական երազանք»-ի և ընդդիմադիր կուսակցությունների միջև բանակցությունների արդյունքում հաստատվեց որոշակի համաձայնություն:

Վրաստանի ընտրական գերատեսչությունը հայտարարեց, որ նախնական արդյունքներով երկրի իշխող կուսակցությունը հաղթել է խորհրդարանական ընտրություններում: Սակայն ընդդիմությունը մերժեց այդ թվերը, և հազարավոր մարդիկ դուրս եկան փողոց՝ բողոքելու: «Մենք չենք ընդունի այս արդյունքը և կոչ ենք անում մարդկանց գալ Ռուսթավելիի պողոտա ժամը 16:00-ին...», - կիրակի օրը ընդդիմության այլ առաջնորդների հետ խորհրդակցություններից հետո լրագրողներին ասաց ՄԱԿ-ի անդամ Նիկա Մելիան (*Al Jazeera* 2020): Պետական դրոշներ ծածանելով՝ հազարավոր ցուցարարներ հավաքվեցին խորհրդարանի շենքի առջև: Նոյեմբերի 3-ին առաջադրված քաղաքական կուսակցությունները ստորագրեցին համատեղ հայտարարություն, որում ասվում էր, որ չեն մասնակցելու նոր գումարման խորհրդարանի աշխատանքներին: Հայտարարությունը ստորագրեցին ինչպես խորհրդարանում անցողիկ շեմը հաղթահարած կուսակցությունները, այնպես էլ մեկ տոկոսից ցածր հավաքածուները:

«Մենք՝ ընդդիմադիր կուսակցություններս, վայր ենք դնում մեր մանդատները խորհրդարանում և կձեռնարկենք քաղաքական ու իրավական բոլոր քայլերը՝ դե յուրե և դե ֆակտո թույլ չտալու այս, այսպես կոչված, խորհրդարան մտնելը: Մենք չենք ճանաչում այս խորհրդարանի լեգիտիմությունը, քանի որ այն ընտրվել է կեղծ գործողությունների արդյունքում և չի արտահայտում ժողովրդի կամքը», - ասվում է հայտարարության մեջ (*Nikoladze* 2020): Հայտարարության հիմնական պահանջը ընտրությունների արդյունքների չեղարկումն էր և նոր ընտրությունների անցկացումը:

ԵԱՀԿ միջազգային դիտորդական առաքելությունը հաստատեց, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ խախտումներ, սակայն հայտարարեց, որ ընտրությունները եղել են «մրցակցային» և հարգել են «հիմնարար ազատությունները» (*OSCE/ODHR* 2020a): Վրաստանի միջազգային հիմնական գործընկերները նույնպես հանդես եկան նման հայտարարություններով՝ պնդելով, որ խախտումները «շարունակում են թի-

րախավորել Վրաստանի ընտրական գործընթացը և անընդունելի են», բայց «բավարար չեն արդյունքները անվավեր ճանաչելու համար» (*Civil.Ge 2020*): Գործող օրենքով «Վրացական երազանքը» կարող էր միակողմանիորեն ճանաչել նորընտիր խորհրդարանի լեգիտիմությունը: Այնուամենայնիվ, դա քաղաքականապես թանկ կնստեր կուսակցության վրա, իսկ Վրաստանի միջազգային գործընկերները հազիվ թե հարգեին այդ մոտեցումը:

Միջազգային դիտորդական առաքելությունը, որը բաղկացած էր ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովից, Եվրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովից և ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովից, նոյեմբերի 1-ի «Արդյունքների նախնական հռչակագրով» նշեցին, որ ընտրություններն «անցել են մրցակցային, և ընդհանուր առմամբ հարգվել են հիմնարար ազատությունները: Այնուամենայնիվ, ընտրողների վրա ճնշումների և իշխող կուսակցության ու պետության միջև սահմանը լրզելու մասին համատարած պնդումները նվազեցրին գործընթացի որոշ հանգամանքների նկատմամբ հասարակության վստահությունը: Ընտրություններն անցկացվեցին էապես վերանայված օրենսդրական դաշտի պարագայում, որը կայուն հիմք է ստեղծել ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար, սակայն անհրաժեշտ են հետագա ջանքեր՝ թերությունները շտկելու համար: Ընտրությունների տեխնիկական հանգամանքներն արդյունավետ կառավարվեցին՝ չնայած COVID-19 համաճարակի մարտահրավերներին, սակայն ընտրական հանձնաժողովներում իշխող կուսակցության գերակայությունը բացասաբար ազդեց նրանց անաչառության և անկախության ընկալման վրա: Քարոզարշավի ֆինանսավորման ընդհանուր շրջանակը, ներառյալ ծախսերի բարձր սահմանները, անբարենպաստ էին փոքր և նոր կուսակցությունների համար: Տարբեր և բազմակարծիք լրատվամիջոցները խիստ բևեռացված էին, և քիչ էին վերլուծական հաշվետվությունները և քաղաքականության վրա հիմնված քննարկումները, ինչը խոչընդոտում էր ընտրողների՝ լիովին տեղեկացված ընտրություն կատարելու հնարավորությունը: Մեր այցելած սահմանափակ թվով ընտրատեղամասերում հիմնականում պահպանվել են ընթացակարգերը, սակայն կուսակցությանը կից դիտորդական խմբերի չափազանց մեծ ներկայու-

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

թյունը, որոնք երբեմն միջամտում էին գործընթացին, նպաստում էր մարդաշատությանը» (OSCE/ODHR 2020b):

2021 թ. սկիզբը նախանշվեց քաղաքական մեծ իրադարձությամբ. երկրի իշխող կուսակցության հիմնադիր և նախագահ Բիծինա Իվանիշվիլին հունվարի 11-ին քաղաքականությունից հեռանալու հրաժեշտի ուղերձ հղեց վրաց հասարակությանը (*Georgian Dream 2021*): Ուղերձում նշելով, որ թեև վրաց ավանդույթի մեջ ընդունված էր «սուփրայից» հեռանալ երախտիքի խոսքով, և որ վրաց տղամարդու համար սա ուղենիշային ավանդույթ է, սակայն չի կարող անտեսել յուրաքանչյուր քաղաքացու ներկա և ապագա ճակատագիրը և, հետևապես, պետք է հիշատակի «Վրացական երազանքի» կատարած հսկայական աշխատանքը՝ ի համեմատություն մինչ այդ իշխող ուժի: Իր ուղերձում նա արձանագրեց կուսակցության ձեռքբերումները 2012 թ. ի վեր՝ մասնավորապես նշելով երկրում ժողովրդավարական արժեքների հաստատման, ազատ և արդար ընտրությունների անցկացման, դեպի եվրահինտեգրում հաստատական գործողությունների ուղղությամբ կատարված քայլերը: «Ի՞նչ արդյունք տվեց «Համազգային շարժման» (ներկայում Միխայիլ Սահակաշվիլիի հիմնած և սատարած ընդդիմադիր կուսակցություն) իննամյա գործունեությունը: – Ավտորիտարիզմ, ինքնաֆետիշացում, վախի և խոշտանգումների վրա հիմնված բռնապետություն, հանրային տարածքի գրավում, կեղծ քարոզչություն և անձնական իշխանությունը ամրապնդելու և հարատևելու փորձ: Սա էր Սահմանադրության փոփոխության և երկրի կառավարման կեղծ խորհրդարանական ձևի անցնելու միակ պատճառը: Էլ չենք խոսում պատերազմի ողբերգության, փախստականների, կորցրած տարածքների և ռուսական օկուպացիայի մասին, որոնք մեզ ավելի ծանր ժառանգություն են թողել», – ասված է ուղերձում: «Ո՞րն է «Վրացական երազանքի» կառավարման ութ տարիների արդյունքը. – Խաղաղություն, բաց և բազմակարծիք ժողովրդավարություն՝ բաց հանրային և տեղեկատվական տարածքով, սահմանադրական բարեփոխումներով ամրապնդված խորհրդարանական կառավարում, իշխանությունների ֆետիշացման մերժում, ինստիտուցիոնալ հավասարակշռված կառավարություն, դատական համակարգ և հասարակական ինստիտուտներ, որոնք կտրված են քաղաքականությունից, օրենքի գերա-

կայություն և դրա առջև հավասարություն, արդար ընտրությունների պրակտիկայի հաստատում և վերջապես քաղաքականությունից ժամանակին հեռանալ սույն նամակում քննարկված պատճառներով: Ես քաջատեղյակ եմ, թե ընդդիմությունն ինչպես է մեկնաբանելու իմ յուրաքանչյուր բառը, և, չնայած այս ամենին, ես, այնուամենայնիվ, կասեմ այն, ինչ պետք է ասեմ՝ ի շահ բոլոր նորմալ և մտածող ընթերցողների: Իսկ մնացածը ժամանակը ցույց կտա...» (*Georgian Dream 2021*):

Պետք է նշել, որ Իվանիշվիլիի հրաժարականը, հատկապես դրան ուղեկցող ուղերձը միանշանակ չընդունվեցին ընդդիմադիրների կողմից: Մասնավորապես, «Միացյալ ազգային շարժման» առաջատար գործիչ Խատիա Դեկանոիձեն համոզված չէր, որ Իվանիշվիլին իսկապես մտադիր էր թողնել քաղաքականությունը: «Սա զուտ ձևական փախուստ է», - ասում է նա: «Սա տեղի է ունենում այն պատճառով, որ նա չի ցանկանում որևէ պատասխանատվություն ստանձնել: Նրա նամակի ամենակարևոր մասը ընդդիմության հասցեին ուղղված քննադատության և վիրավորանքի կենտրոնական լեյտմոտիվն է. նա այլ բան չունի ասելու վրաց ժողովրդին» (*Grzegorzcyk 2021*):

Մեկ այլ ընդդիմադիր՝ «Եվրոպական Վրաստան» կուսակցությունից Գրգի Ուգուլավան նույնպես սուր քննադատության ենթարկեց նրան. «Իվանիշվիլիի հայտարարությունը ծայրահեղ անպատասխանատվության և թուլության դրսևորում է: Անպատասխանատու է, երբ միլիարդատերը ութ տարի ղեկավարում է երկիրը՝ թողնելով այն եռապատկված պարտքով: Համաճարակի ժամանակ փախչելն անպատասխանատու է» (*Grzegorzcyk 2021*):

Քաղաքական վայրիվերումները շարունակվեցին վարչապետ Գիորգի Գախարիայի հրաժարականով, որը պայմանավորված էր «Միացյալ ազգային շարժում» ընդդիմադիր կուսակցության առաջնորդ Նիկա Մելիայի ձերբակալման շուրջ աղմկահարույց միջադեպով: Կառավարությունը Մելիային մեղադրում էր հակակառավարական ցույցերի ժամանակ ցուցարարներին Խորհրդարան ներխուժել դրդելու մեջ՝ ռուս պատգամավորի՝ վրացական խորհրդարան հրավիրելուն ի պատասխան: Ոստիկանության կոշտ արձագանքից վիրավորվել էր ավելի քան 200 մարդ: Ավելի ուշ Մելիան ազատ էր արձակվել գրավի դիմաց, սակայն պետական դատախազները

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

կրկին հետապնդել են նրան, երբ նա պոկել է իր տեղաշարժն արձանագրող թանոցը՝ ի նշան բողոքի 2020 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների:

Իր ելույթում Գախարիան հայտարարեց, որ հույս ունի՝ իր հրաժարականը կնվազեցնի քաղաքական բևեռացումը: «Իմ հաստատական դիրքորոշումն է, որ եթե մեկ կոնկրետ անձի նկատմամբ արդարադատության իրականացումը՝ թեկուզ օրինական, վտանգի է ենթարկում մեր քաղաքացիների առողջությունն ու կյանքը կամ ընդհանրապես վտանգ է ստեղծում երկրում քաղաքական էսկալացիայի համար, անընդունելի է»: Նա նշեց, որ դա հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե չլիներ էսկալացիայի վտանգ, «հատկապես երբ քաղաքական լարվածությունն ու բևեռացումը վտանգի տակ են դնում երկրի զարգացումը, անվտանգությունը և ապագան, երբ մենք բոլորս մեր քաղաքացիների հետ պայքարում ենք համաճարակի, տնտեսական ճգնաժամի, տարածաշրջանային մարտահրավերների, և որ ավելի կարևոր է՝ մենք բոլորս միասին պայքարում ենք բևեռացման դեմ՝ հանուն մեր երեխաների համար ավելի լավ ապագայի: Քանի որ ես և իմ թիմը չկարողացանք ընդհանուր համաձայնության գալ այս հարցում (Ն. Մելիայի կալանավորման շուրջ), ես որոշեցի հրաժարական տալ իմ պաշտոնից: Իհարկե, ես հավատում եմ և ուզում եմ հավատալ, որ դա կնպաստի մեր երկրում բևեռացվածության նվազեցմանը», - եզրափակեց նա (*OC Media 2021*): Գախարիայի հրաժարականից անմիջապես հետո ոստիկանությունը Նիկա Մելիայի գործով վարույթը հետաձգելու մասին տեղեկություն տարածեց (*Ministry of Internal Affairs of Georgia 2021*):

2020 թ. խորհրդարանական ընտրություններից հետո քաղաքական բևեռացումը կաթվածահար էր արել քաղաքական գործընթացները. ընտրված ընդդիմադիր պատգամավորները հրաժարվում էին ընդունել ընտրությունների արդյունքները և բոյկոտում էին խորհրդարանի աշխատանքը: Օր օրի խորացող քաղաքական ճգնաժամը չէր կարող անտարբեր թողնել Վրաստանի միջազգային գործընկերներին: ԵՄ և ԱՄՆ միջնորդությամբ նախաձեռնվեցին ճգնաժամը հաղթահարելու բանակցություններ: Երկարատև քննարկումները ավարտվեցին «ապրիլի 19-ի համաձայնագրով»: Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հրապարակեց իր



նոր առաջարկը, որը դրվել էր Վրաստանի իշխող և ընդդիմադիր կուսակցությունների հետ քննարկման սեղանին: Այն անդրադառնում էր ընդդիմության երկու առանցքային մտահոգություններին՝ «քաղբանտարկյալների» համաներմանը և 2022 թ. հնարավոր արտահերթ ընտրություններին:

Ենթադրյալ քաղբանտարկյալներ «Միացյալ ազգային շարժման» նախագահ Նիկա Մելիայի և ընդդիմադիր «Մտավարի Արխի» հեռուստաընկերության բաժնետեր Գիորգի Ռուրուայի գործերի վերաբերյալ փաստաթղթում առաջարկվում էր կողմերին պարտավորել այս համաձայնագրի ստորագրումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, անդրադառնալ քաղաքականացված արդարադատության երկու դեպքերին՝ կա՛մ համաներմամբ և/կամ այնպիսի քայլերով, որոնք արդյունավետ կլինեն (*EEAS 2021*): Այս կապակցությամբ ուշագրավ է նախագահ Զուրաբիշվիլիի հայտարարությունը հնարավոր համաներման շուրջ շահարկումները կասեցնելու նպատակով: «Կարծում եմ՝ ոչ ոք չի զարմանա՝ լսելով, որ ինձ համար և ողջ հասարակության համար այդքան հայտնի անցյալ ունեցող մեկին կարելի է շատ բաներ վերագրել, բայց ոչ քաղբանտարկյալ: Այդ անհատը ոչ մի կերպ չի տեղավորվում ներման որևէ կատեգորիայի մեջ՝ լինի դա արդարադատություն, բարոյականություն թե քաղաքականություն: Այդուհանդերձ, ես հավատում եմ, որ եթե վտանգված են երկրի քաղաքական գործունեությունը, նրա կայունությունը, առաջընթացը և ապագան, Նախագահի պարտականությունն է երկիրը վեր դասել իր տեսակետներից և սկզբունքներից: Դա նկատի ունենալով՝ ես պատրաստ եմ սկանդալային որոշում կայացնել նաև ինձ համար: Բայց ես այս որոշումը կայացնում եմ միայն իմ պայմանով, որ նման քայլը պետք է լինի վերջինը ճգնաժամին վերջ դնելու և երկրի ու խորհրդարանի համար նորմալ քաղաքական կյանք մտնելու ճանապարհին: Սա նշանակում է, որ իմ որոշումը կկատարվի միայն այն դեպքում, երբ մի կողմից քաղաքական կուսակցությունները կստորագրեն վերջնական փաստաթուղթը և կմտնեն խորհրդարան, իսկ մյուս կողմից՝ Եվրամիության և ԱՄՆ-ի ներկայացուցիչները կհայտարարեն, որ այդ պայմանավորվածությունը ձեռք է բերվել: Երբ այս հայտարարությունը տեղի ունենա, ես մեկ շաբաթվա ընթացքում կստորագրեմ համաներման ակտը» (*RUSTAVI 2 2021*):

Բոյկոտող ընդդիմության պահանջած արտահերթ ընտրությունների վերաբերյալ փաստաթուղթը պարունակում է դրույթ առ այն, որ 2021 թ. ապրիլի 16-ին արած առաջարկից հետո արտահերթ խորհրդարանական ընտրություններ կնշանակվեն 2022 թվականին, եթե 2021 թ. հոկտեմբերին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Վրացական երազանք» կուսակցությունը հավաքի վավեր համամասնական ձայների 43 տոկոսից պակաս: Ուշագրավ է, որ հոկտեմբերի 31-ի խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանք» կուսակցությունը հավաքել էր ձայների 48%-ը (60 մանդատ):

Փաստաթղթով կողմերն ընդունում էին 2020 թ. ընտրությունների վերաբերյալ իրենց տարբեր գնահատականները և համաձայնում ստանձնել իրենց պատգամավորական մանդատները և դրա հիման վրա մասնակցել ապագա ընտրություններին՝ ըստ համաձայնեցված ընտրական բարեփոխումների՝ ի շահ Վրաստանի քաղաքական կայունության և սույն պայմանագիրը կյանքի կոչելու նպատակով (*EEAS 2021*):

Ու թեև որոշ ընդդիմադիր ներկայացուցիչներ ստորագրեցին Համաձայնագիրը որպես անհատ պատգամավորներ, Միացյալ ազգային շարժման հիմնադիր Մ. Սահակաշվիլին և կուսակցության նախագահ Ն. Մելիան մերժեցին այդ առաջարկը:

Հուլիսին իշխող ուժը հանդես եկավ ելույթով, որում «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն չեղյալ հայտարարեց ԵՄ միջնորդությամբ ապրիլի 19-ի գործարքը՝ նշելով, որ միջազգային գործընկերները հարկ չեն համարում արմատական ընդդիմությանը պարտադրել ստորագրելու և մասնակցելու փաստաթղթի իրականացմանը (*Commonspace.Eu 2021*):

Օգոստոսի 31-ին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը կիրաժարվի Եվրամիության 75 միլիոն եվրո վարկից, որի տրամադրման հիմքում ընկած էր դատական բարեփոխումների և ԵՄ միջնորդությամբ ապրիլի 19-ի համաձայնության պահպանման պայմանը՝ վկայակոչելով կառավարության փորձերը՝ կրճատել արտաքին պարտքը և խուսափել քաղաքական շահարկումներից (*Civil.Ge 2021a*):

Այս հայտարարությունից անմիջապես հետո ամիսներ տևած դժկամությունից հետո «Միացյալ ազգային շարժումը» հայտարարեց, որ կմիանա ԵՄ միջնորդությամբ ապրիլի 19-ին ընդդիմության և իշխող «Վրացական երազանք» կուսակցության միջև ստորագրված համաձայնագրին: Կուսակցության նախագահ Նիկա Մելիան սեպտեմբերի 1-ի ուշ երեկոյան իր ելույթում ասաց, որ իշխող կուսակցության վերջին հայտարարությունները, որոնք մերժում են ԵՄ-ի մակրոֆինանսական օգնությունը, ստիպեցին ընդդիմադիր կուսակցությանը դիմել այդ քայլին՝ չնայած փաստաթղթում տեղ գտած որոշ «անընդունելի» դրույթներին:

Ըստ Մելիայի՝ ԵՄ-ի օգնությունից հրաժարվելը «բաց հայտարարություն» էր իշխող կուսակցության կողմից արտաքին քաղաքականության կուրսի փոփոխության և եվրոպական ճանապարհից հրաժարվելու մասին: Կուսակցության նախագահի խոսքով՝ ՄԱԾ-ը միանում է համաձայնագրին, որպեսզի «արևմտյան գործընկերները չհեռանան վրաց ժողովրդից անվստահելի կառավարության պատճառով» (*Civil.Ge 2021b*):

Վրաստանում քաղաքական ճգնաժամի խորացմանը նպաստեց մեկ այլ նշանակալից իրադարձություն ևս. Մ. Սահակաշվիլին հոկտեմբերի մեկին ձերբակալվեց Վրաստանի սահմանը ապօրինաբար հատելու պատճառաբանությամբ: Դատարանը Սահակաշվիլին երեք տարվա ազատազրկման դատապարտեց՝ Գիրգվիանիի գործով լիազորությունները չարաշահելու և այդ գործով դատապարտված ՆԳՆ նախկին պաշտոնյաներին ներում շնորհելու համար: Նախկին նախագահը պնդում էր, որ ինքը չէր կարող դատապարտվել ներման իր սահմանադրական իրավունքն իրացնելու համար, և որ իր նկատմամբ կիրառված պատիժները քաղաքական դրդապատճառներ ունեն: Նա նաև վեց տարվա ազատազրկման է դատապարտվել ընդդիմադիր պատգամավոր Վալերի Գելաշվիլիի վրա հարձակում կազմակերպելու համար:

Սահակաշվիլիի ձերբակալումը մեծ աղմուկ բարձրացրեց ինչպես Վրաստանի ներսում, այնպես նրա սահմաններից դուրս: Իրավիճակի նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ, երբ Սահակաշվիլին հացադուլ հայտարարեց, որի հետևանքով օրեցօր վատթարանում էր նրա առողջական վիճակը: Ընդդիմադիր տարբեր գործիչներ նույնպես հացա-

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

դուլ հայտարարեցին՝ պահանջելով Սահակաշվիլիի ազատումը կամ առնվազն քաղաքացիական հիվանդանոց տեղափոխումը: Իշխանությունները, անսալով բժիշկների եզրակացություններին, նրան տեղափոխեցին քրեակատարողական հիմնարկի հիվանդանոց՝ նշելով, որ այն բավարար հագեցված է բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ Սահակաշվիլիի ձերբակալումից ժամեր անց նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին հայտարարեց, որ երբևէ ներում չի շնորհի Սահակաշվիլիին: «Որովհետև ես երբեք չեմ մոռանա Իրինա Ենուկիձեի կամ այն մարդկանց աչքերը, ովքեր սպասում էին արդարության, բայց այդպես էլ չհասանքին մինչ այդ օրը».- նա նկատի ունենար 28-ամյա Սանդրո Գիրգվիանիի մորը, որը ծեծի ենթարկվեց անվտանգության աշխատակիցների կողմից և մահացավ 2006 թ. (*Civil.Ge 2021c*):

Բանտախցից գրած նամակում Սահակաշվիլին մերժում է իրեն վերագրված բոլոր մեղքերը և նշում, որ «իմ ազատությունը և ամենակարևորը Վրաստանի ազատությունն ամբողջությամբ կախված են ձեր ակտիվությունից և առաջիկա օրերին պայքարելու պատրաստակամությունից» (*Agenda.Ge 2021*):

Առաջացած քաղաքական ճգնաժամը հանգուցալուծվեց Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ. 2020 թ. ապրիլի 19-ին Վրաստանի քաղաքական կուսակցությունների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով վերջ դրվեց երկրում տիրող քաղաքական ճգնաժամին: Այդ համաձայնագիրը Բոյուսելը համարեց ԵՄ-ի մեծ հաղթանակ աշխարհաքաղաքական այդ կարևոր հատվածում:

«ԵՄ-ն կարող է հույս դնել կայուն, հույժ եվրոպամետ գործընկերոջ վրա մի տարածաշրջանում, որը կարևոր է եվրոպական արժեքների, անվտանգության և միմյանց հետ կապի համար: Տարածաշրջանային վերափոխումների լույսի ներքո Վրաստանն ավելի է կարևորվում, քան երբևէ», - գրել են Միշելն ու Ջուրաբիշվիլին (*Euronews 2021*):

Քաղաքական կայունությանը նպաստող և խոչընդոտող գործոններից խոսելիս անհրաժեշտ է ուրվագծել նաև ներպետական այնպիսի խնդիրների շրջանակ, ինչպիսիք են կոռուպցիայի ընկալումն ու դրա դեմ պայ-

քարը, քաղաքական իրավունքների և ազատությունների նկատմամբ վերաբերմունքը և դրանց հարակից խնդիրներ:

Վրաստանը տարիներ շարունակ ջանքեր է գործադրել կոռուպցիայի դեմ պայքարում՝ կատարելով բարեփոխումներ տարբեր ոլորտներում, ստեղծելով հակակոռուպցիոն մարմիններ և ապահովելով թափանցիկություն: Պարզեցվեցին նաև վարչական ընթացակարգերը, թվայնացվեցին հանրային ծառայությունները, բարելավվեցին պետական գնումների գործընթացները: Ու թեև երկիրը բավարար դիրքեր է զբաղեցնում Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վարկանիշային աղյուսակում, սակայն մասնագիտորեն դիտարկելիս դրանց արդյունքներն այնքան էլ տեսանելի չեն: Այստեղ հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում՝ 2018-2021 թթ., ամենաբարձր ցուցանիշը եղել է 2018 թ.՝ 58, իսկ հետագա տարիներին (2019, 2020 և 2021 թթ.) գրանցվել է համապատասխանաբար 56, 56, 55 ցուցանիշը: 2018 թ. համեմատ, նվազած վարկանիշը վիճակագրորեն աննշան է համարվում. Վրաստանը դեռևս առաջատար դիրքերում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում (*Transparency International Georgia 2023*): Սակայն այդ փոքր անկումը վկայում է, որ երկրում հակակոռուպցիոն բարեփոխումների գործընթացը լճացման շրջան է ապրում:

Մտահոգիչ ոլորտներից մեկը արդարադատության համակարգն է: Եղել են մեղադրանքներ քաղաքական ազդեցության, դատարանների անկախության բացակայության և դատական վարույթում խախտումների մասին: Քննադատները մտահոգություն են հայտնել հատկապես դատական ադմկահարույց գործերի անաչառության վերաբերյալ (*Transparency International Georgia 2023*): Սա հիմնավորվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության այն դիտարկմամբ, որ «իշխող կուսակցության հիմնադիր, իրականում պաշտոնաթող Բիծինա Իվանիշվիլիի ազդեցությունը առանցքային ինստիտուտների վրա համապատասխանում է «պետական զավթում» սահմանմանը: Նրա կուսակցությունը՝ «Վրացական երազանքը», վերջին տարիներին ամրապնդել է իր դիրքերը դատական և իրավապահ մարմինների նկատմամբ՝ փաստացիորեն ոչնչացնելով կոռուպ-

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---


ցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ քաղաքական թափը» (*Transparency International 2022*):

Քաղաքական բևեռացումը ուղղակիորեն ազդում է նաև քաղաքական իրավունքների և ազատությունների իրացման վրա: 2021 թ. «Ազատության տան» հետազոտության արդյունքներով Վրաստանի վարկանիշը 100 հնարավոր միավորից 60 էր, այսինքն՝ այն «մասամբ ազատ» կատեգորիային էր համապատասխանում (*Freedom House 2021*): Այս ընթացքում տեղի ունեցան համապետական կարևորության մի շարք իրադարձություններ (նախագահական և խորհրդարանական ընտրություններ, Սահմանադրական փոփոխություններ և այլն), Վրաստանի հասարակությունը դիմել է քաղաքացիական անհնազանդության տարբեր ձևերի՝ արտահայտելու իր դժգոհությունը և ուշադրություն հրավիրելու իրեն հուզող խնդիրների վրա: Պետք է նշել, որ պետական և հատկապես իրավապահ մարմինները տարբեր դեպքերում տարբեր վերաբերմունք են ցուցաբերել հանրային ընդվզումներին: Հատկապես կոշտ միջոցներ են կիրառվել այսպես կոչված «Գավրիիլովի գործով» հանրային բողոքի ցույցերի մասնակիցների նկատմամբ: Ոստիկանությունը հունիսի 21-ին՝ առավոտյան ժամը 2-ի սահմաններում, ռետինե փամփուշտներ և արցունքաբեր գազ է կիրառել՝ փորձելով ցրել խորհրդարանի շենքի մոտ մնացած ցուցարարներին: Հաղորդվում էր, որ տուժել է մոտ 70 մարդ, որից՝ 39-ը ոստիկան (*RFE/RL's Georgian Service 2019*): Խոսքի ազատությունը նման լարված քաղաքական պայմաններում նույնպես տուժել է: Ինչպես նշում է «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպությունը, «Պաշտոնական միջամտությունը խաթարում է մամուլի ազատության բարելավմանն ուղղված ջանքերը: Միջավայրը գնալով ավելի թշնամական է դառնում անկախ և ընդդիմադիր լրատվամիջոցների համար. երկիրը 2021 թ. ականատես եղավ լրագրողների նկատմամբ աննախադեպ թվով ֆիզիկական հարձակումների» (*RSF n.d.*):

### 3.2 Տնտեսական քաղաքականություն, թե՛ քաղաքական տնտեսություն

Գծապատկեր 3

Վրաստանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2021)\*



Գծապատկեր 3-ում տեղ գտած Տնտեսական գործոնների ինդեքսի ( $S_{գի}$ ) կորը ցցուն կերպով արտացոլում է երկրում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական գործընթացների փոխկապակցվածությունը: Ընդ որում, հաճախ այդ գործընթացները ոչ միայն ներերկրային, այլև գլոբալ բնույթ են կրում: Այսպես,  $S_{գի}$ -ի 2008-2009 թթ. անկումը բացատրվում է ինչպես 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքով տնտեսական աճի կասեցմամբ և օտարերկրյա ներդրումների հոսքի անկմամբ (*CACI Analyst 2008*), այնպես էլ նույն թվականի սեպտեմբերին ամերիկյան շուկայից ազդված գլոբալ ֆինանսական ճգնաժամով (*Bosworth, Flaen 2009*): Թերևս 2009 թ. ամենաճանրն էր պատերազմի հետևանքների հաղթահարման և տնտեսական զարգացման հետագիծը ճիշտ ուղու վրա դնելու տեսանկյունից: 2010-2014 թթ.  $S_{գի}$ -ի կտրուկ աճն անկում ապրեց, քանի որ 2014-2015 թթ. Վրաստանը ստիպված էր դիմակայել տարածաշրջանային դրամավարկային ճգնաժամին: Արտահանման չափերի կտրուկ անկումը և

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

դրամական մուտքերի կրճատումը հանգեցրին լարիի արժեզրկմանը: Տասնյակ հազարավոր մարդիկ, ովքեր վարկեր էին վերցրել արտարժույթով, լուրջ խնդիրների առջև կանգնեցին: Քանի որ լարին շարունակում էր արժեզրկվել, կառավարությունը սահմանեց «լարիզացիայի» ծրագիր և վարկառուներին սուբսիդիաներ առաջարկեց արժույթը փոխելու համար (*Tkeshelashvili 2021*): Ու թեպետ ազգային արժույթն արժեզրկվում էր, 2017-2019 թթ. հաջողվեց ապահովել տնտեսական աճ՝ ենթակառուցվածքային մի շարք ծրագրերի իրականացման և միջազգային զբոսաշրջության աճի շնորհիվ: ՏԳԻ-ի հաջորդ նկատելի անկումը 2020 թ.-ին էր՝ COVID-19 համավարակով պայմանավորված: Հետպանդեմիական ժամանակահատվածում ՏԳԻ-ի աճ գրանցվեց կառավարության մի շարք որոշումների շնորհիվ: Օրինակ, հյուրընկալության ոլորտում ժամանակավորապես սառեցվեց գույքահարկի և եկամտահարկերի հավաքագրումը, մեղմվեցին բանկային վարկերի տրամադրման կանոնները, ենթակառուցվածքների վրա ծախսերն ավելացան (*ADB 2020*):

Վրաստանը շարունակում է համարվել աշխարհի ամենաբաց առևտրային տնտեսություն ունեցող երկրներից մեկը: Այն 2000 թ. միացել է Առևտրի միջազգային կազմակերպությանը. և ներկայումս ազատ առևտրի համաձայնագիր ունի Եվրոպական Միության և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի, ինչպես նաև Թուրքիայի, ԱՊՀ-ի և Չինաստանի հետ: Վրաստանը նաև բիզնեսի համար առավել բարենպաստ անցումային տնտեսություն ունեցող երկրներից է: Նրա առևտրային քաղաքականության հիմնական նպատակներն են համաշխարհային տնտեսական գործընթացներին ինտեգրումը, ազատականացումը, դիվերսիֆիկացիան և թափանցիկությունը: ԵՄ-ի հետ ստորագրված Ասոցացման համաձայնագրով (*Official Journal of the European Union 2014*) հիմք է դրվել քաղաքական և տնտեսական բազմակողմ համագործակցությանը, որի շրջանակներում քաղաքական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ են իրականացվում: Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը (DCFTA), որ Ասոցացման համաձայնագրի մաս է, նախատեսում է բարեփոխումների աստիճանական իրականացում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, շրջակա միջավայրը, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, էներգետիկան, տրանսպորտը և կրթությունը՝ նպատակ ունենալով Վրաստանը համա-



պատասխանեցնել ԵՄ-ին հատուկ չափանիշներին: Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը (ԽՀԱԱՀ) սահմանում է առևտրին վերաբերող քաղաքականության այնպիսի բարեփոխումներ, ինչպիսիք են գյուղատնտեսական ապրանքների հիգիենայի չափանիշները (SPS), արդյունաբերական արտադրանքի կանոնակարգերի մոտարկումը (TBT), սահմանին մտավոր սեփականության իրավունքի կիրարկումը, պետական գնումների կարգը և ծառայությունների ոլորտում ԵՄ կանոններին մոտարկումը (*Akhvlediani, Havlik 2019*):

Վրաստանը, իր մրցակցային առավելություններից օգտվելով, կարողացել է ամուր տեղ զբաղեցնել հատկապես զբոսաշրջության և տարանցիկ տրանսպորտի ոլորտներում՝ ուղղակի օտարերկրյա ներդրումներ խրախուսելու համար: Ու թեև դիտարկվող ժամանակահատվածում համաշխարհային միտումներում ահազանգվում էին էներգետիկայի ոլորտի ծախսերի աճ, գնաճ, աշխարհաքաղաքական անկայունություն և մատակարարման շղթայի խափանումներ, այնուամենայնիվ Վրաստանին հաջողվել է 2018-2021 թթ. ապահովել օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) աճ: Նշված ժամանակահատվածում երկիրը վայելում է ՕՈՒՆ-ի կայուն հոսք. 2019 թ. ներհոսքը կազմել էր ավելի քան 1.3 միլիարդ դոլար՝ 17.5 միլիարդ դոլար ՀՆԱ-ի դիմաց: Համաճարակից հետո տնտեսությունը վերականգնվեց 2021 թ., ընդ որում ՕՈՒՆ-ի ընդհանուր ծավալը մոտ 1.2 միլիարդ դոլար է՝ ՀՆԱ-ի 18.7 միլիարդ դոլարի պարագայում: 2022 թ. առաջին եռամսյակում ՕՈՒՆ-ի ներհոսքը գրանցել է ռեկորդային ամենաբարձր ցուցանիշը՝ 568.19 մլն դոլար, ինչը 4.3 անգամ ավելի է 2021 թ. նույն ժամանակահատվածի համեմատ (*Bloomberg 2022*):

Վերջին շրջանում ՕՈՒՆ-ի ամենամեծ հոսքը բաժին է ընկել տրանսպորտին (մոտ 25%), որին հաջորդում են ֆինանսական և շինարարական ոլորտները: ՕՈՒՆ-ը բարձր է նաև անշարժ գույքի և էներգետիկայի ոլորտներում: Ինչ վերաբերում է ծագման երկրներին, ապա ԵՄ-ից ՕՈՒՆ-ը արագ աճում է և գերազանցում է ԱՊՀ-ից ներհոսքերը: 2018 թ. վերջում ՕՈՒՆ-ի տեմպերի դանդաղումը պայմանավորված էր ենթակառուցվածքային մի քանի խոշոր նախագծերի ավարտով: 2019 թ. ՕՈՒՆ-ի ներհոսքը վերականգնվել էր Անակլիայի՝ խորը ծովային նավահանգստի շինարարության երկրորդ փուլով և ճանապարհների պլանային շինարարությամբ և

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

անվտանգային միջոցառումներով պայմանավորված (ճանապարհներ, որոնք անցնում են Տրանսեվրոպական տրանսպորտային (TEN-T) ցանցով): Այս ամենը կատարվում է Եվրոպական ներդրումային բանկի ներգրավմամբ: Տրանսպորտային այս ուղիների նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունները «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում ՕՈՒՆ-ը խրախուսելու հեռանկար էր ստեղծել: Մինչ այժմ երկու չինական ընկերություն է ներդրումներ կատարել ռազմավարական առումով կարևոր վրացական երկու նավահանգիստներում՝ Փոթիի ազատ արդյունաբերական գոտում և Անակլիայի խոր ծովային նավահանգստում (*Akhvlediani, Havlik 2019, 3*): Վրաստանում օտարերկրյա հիմնական ներդրողներն են Ադրբեջանը, Թուրքիան (հիմնականում էներգետիկայի և ենթակառուցվածքների ոլորտում), Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները և Չեխիան (*Geostat 2021, 5*): Հարկ է նշել, որ Վրաստանի բարենպաստ հարկային քաղաքականությունը և ԵՄ-ի, Չինաստանի և այլ երկրների հետ ազատ առևտրի մասին համաձայնագրերը մեծացնում են նրա գրավչությունը ներդրողների համար:

Այս առումով հավելենք նաև, որ ՕՈՒՆ-ների ներգրավման առումով Վրաստանի՝ տարբեր կարևոր ոլորտների միջազգային վարկանիշները շարունակում են մնալ խոստումնալից: Այսպես, Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինության» ցուցանիշներով Վրաստանը պահպանում է իր կարգավիճակը առաջատար երկրների շարքում և 2019 թ. 190 երկրների վարկանիշային աղյուսակում զբաղեցնում էր 6-րդ տեղը, իսկ 2020 թ.՝ 7-րդ (*Invest in Georgia n.d*): Այս առումով տեղին է նշել նաև, որ, Եվրոպական պալատի հրապարակած վերջին զեկույցի համաձայն, Վրաստանը ճանաչվել է 16-րդ լավագույն եվրոպական երկիրը 2019 թ. եվրոպական ուղղությամբ բիզնես վարելու համար (*EuCham 2019*): Վրաստանի կարգավիճակը բարձրացել է նաև «BB-»-ից «BB»-ի Fitch-ի վարկանիշում 2019 թ. մարտի թողարկման մեջ (*FitchRatings 2019*):

Վրաստանի ՀՆԱ-ի աճի տեմպը 2017-ից մինչև 2020 թ. մշտապես եղել է տարեկան շուրջ 5%: 2020 թ. COVID-19 համավարակով պայմանավորված՝ 2006 թ.-ից ի վեր ՕՈՒՆ-ի պատմականորեն ամենացածր մակարդակն արձանագրելուց հետո (*UNCTAD 2021*) վրացական տնտեսությունը սկսեց թափ հավաքել՝ 2021 թ. ունենալով 10.4% աճ, իսկ 2020 և 2021 թթ.

համար ՕՈՒՆ-ն կազմեց ՀՆԱ-ի համապատասխանաբար 3.4% և 6.3% (*World Bank Open Data n.d*): 2021-ին ՀՆԱ-ի աճի ամենամեծ բաժինն ընկել է արտադրությանը, անշարժ գույքին, շինարարությանը (*Agenda.Ge 2022*):

### **Երկկողմանի տնտեսական հարաբերություններ**

2003 և 2008 թթ. հայտնի պատմական իրադարձություններից հետո ռուսական տնտեսական ներկայության թուլացմանը համընթաց՝ Վրաստանը նաև գործընկերներ գտնելու փնտրտուքի մեջ հայտնվեց: Հատկապես 2003 թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո ավելի ակներև դարձավ դեպի Արևմուտք կողմնորոշումը: Քաղաքական և հատկապես անվտանգության նկատառումներից ելնելով՝ ՆԱՏՕ-ի հարաբերությունները սերտացնելու ճանապարհին Թուրքիան դիտարկվում էր որպես միջնորդ օղակ: Թուրքիայի հետ հարաբերությունները կառուցողական հետագիծ ունեն. այն առաջիններից էր ճանաչել Վրաստանի անկախությունը՝ 1992թ. հաստատելով երկկողմանի դիվանագիտական հարաբերություններ: Բացի այդ, Թուրքիան միշտ ընդգծել է, որ ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը՝ Հարավային Օսիան և Աբխազիան ներառյալ (*Kirikcioğlu 2019*): Այս համատեքստում պատահական չեն թուրք-վրացական տնտեսական համագործակցության ծավալն ու խորությունը: Դրանք էլ ավելի զարգացնելու և համակարգելու նպատակով 2016 թ. հիմնադրվեց Վրաստան-Թուրքիա «Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդը»: Թուրքական ներդրումների հիմնական ոլորտները տարանցիկ տրանսպորտային ուղիներն են, կապիտալ շինարարությունը, տարածաշրջանային էներգետիկ խոշոր ծրագրեր: Հարկ էր նշել, որ հատկապես էներգետիկայի բնագավառում համագործակցությունը երկկողմանիից վերածվել է եռակողմ՝ Ադրբեջանի գործուն մասնակցությամբ, որի հիմքերը դրվել էին դեռ 2012 թ. Տրապիզոնի հռչակագրով (*Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey 2012*): Ըստ 2021 թ. Վիճակագրության՝ Վրաստանի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը կազմել է 2.15 մլրդ ԱՄՆ դոլար (*Daily Sabah 2022*):

Ինչպես և Թուրքիայի պարագայում, հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ունեն երեսնամյա պատմություն: ԱՄՆ-ն նույնպես Վրաստանի անկախությունը ճանաչել է 1991 թ. և արդեն 1992 թ. բացել իր դեսպանատունը

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

Թբիլիսիում: Հարաբերություններում քաղաքական բաղադրիչի գերակշռությունը, սակայն, չէր նվազեցնում տնտեսական հենքի կարևորությունը: Այսպես օրինակ, 2009 թ. Միացյալ Նահանգների և Վրաստանի միջև ստորագրվում է ռազմավարական գործընկերության կանոնակարգը՝ չորս հիմնական ուղղություններով. ա) ժողովրդավարություն և կառավարում, բ) պաշտպանություն և անվտանգություն, գ) տնտեսական, առևտրային և էներգետիկ համագործակցություն, (դ) մարդկանց և մշակութային փոխանակումներ (*United States Department of State 2021*):

Միացյալ Նահանգները և Վրաստանը շարունակում են բացահայտել ամերիկյան բիզնեսի համար Վրաստանում ներդրումներ կատարելու հնարավորությունները: Այդ նպատակով ստորագրվել են երկկողմանի ներդրումային պայմանագիր և առևտրի ու ներդրումների շրջանակային համաձայնագիր: Վրաստանը կարող է առանց մաքսատուրքի արտահանել շատ ապրանքներ դեպի ԱՄՆ՝ «Արտոնությունների ընդհանրացված համակարգ» ծրագրի շրջանակներում (*Office Of the United States Trade Representative 2013*): Առևտրային և ներդրումային Բարձր մակարդակի երկխոսության միջոցով երկու երկրները քննարկում են տնտեսական համագործակցության և երկկողմ առևտրի բարելավման մի շարք տարբերակներ: Այսպես, ԱՄՆ Առևտրի նախարարությունն ու Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը 2019 թ. փոխըմբռնման հուշագիր են ստորագրել՝ առևտրային երկկողմ հարաբերությունների ընդլայնման նպատակով համագործակցության վերաբերյալ: Այն պետք է ապահովի Վրաստանի հետ առևտրի «շոշափելի, ներառական աճը առաջիկա տարիներին» (*Agenda.Ge 2019*): ԱՄՆ հետ առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 2 մլրդ ԱՄՆ դոլար, որը ութերորդն է առևտրի գործընկերների ցանկում (*Geostat 2022a, 6*):

Հարավկովկասյան երեք պետություններից չինական ներդրումների մեծ մասը բաժին է ընկել Վրաստանին՝ հաշվի առնելով Վրաստանի՝ որպես տարանցիկ երկրի կարողությունները: Այդ ներդրումների առյուծի բաժինը կատարվել է ենթակառուցվածքների և ճանապարհաշինության ոլորտներում:

Բացի սևծովյան նավահանգիստներից՝ Վրաստանը կարող է առաջարկել Արևելք-Արևմուտք մայրուղին՝ երկրի գլխավոր ցամաքային տրանսպոր-

տային ճանապարհը, որը Ադրբեջանը միացնում է սևծովյան ափին: Կարևոր հանգույց է 2017 թ. բացված Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին: Եվ իսկապես, Հարավային Կովկասում չինական երեք ամենաառանցքային նախագծերն անցնում են Վրաստանով: Դրանք ներառում են Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, որը 45%-ով արագացրել է Ասիայից Եվրոպա բեռնարկղերի, բեռների և ուղևորների տեղափոխումը: Երկրորդ՝ Անակլիայում՝ Սև ծովի ափին, սկսվել է խորջրյա նավահանգստի կառուցումը, որի տարեկան թողունակությունը 100 միլիոն տոննա է: Այն կարող է ընդունել «Պանամաքս» տեսակի խոշոր նավեր: Երրորդ՝ Վրաստանն ընդլայնում է Արևելք-Արևմուտք մայրուղին՝ Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ կազմակերպությունների համագործակցությամբ, որը դիտարկվում էր որպես Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը նպաստող օղակ (*Avdaliani 2018*): Ի լրումն հսկայածավալ ներդրումային ծրագրերի՝ Վրաստանի և Չինաստանի կառավարությունները հետևողական են նաև երկու երկրների միջև առևտրային կապերի զարգացմանը: Վրաստանի և Չինաստանի միջև Ազատ առևտրի համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2018 թ. հունվարի 1-ից՝ Վրաստանը դարձնելով տարածաշրջանում առաջին երկիրը, որ նման գործարք է կնքել Չինաստանի հետ:

Համաձայնագրով նախատեսված է, որ վրացական գինին, հանքային ջրերը, մեղրը, թեյը, միրգը, բանջարեղենը և գյուղմթերքը կարտահանվեն Չինաստան՝ 1.4 միլիարդ բնակչությամբ սպառողների շուկա՝ զրոյական մաքսատուրքերով, առանց հավելյալ մաքսավճարների և առանց անցումային շրջանի (*China FTA Network 2018*):

Այստեղ հարկ է նշել նաև, որ մեկ այլ Ազատ առևտրի համաձայնագիր էր ստորագրվել Հոնկոնգի և Վրաստանի միջև 2018 թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2019 թ. փետրվարի 13-ին: Այն տարածվում է ապրանքների առևտրի, ծառայությունների ներդրումների, վեճերի կարգավորման մեխանիզմի և հարակից այլ ոլորտների վրա (*Minister of Economy and Sustainable Development of Georgia 2018*):

Վրաստան-ԵՄ հարաբերությունները, թերևս, ամենաբարձր մակարդակի վրա են: Ընդ որում, այս հարաբերությունների շրջանակներում կատարվում է հսկայածավալ աշխատանք ինստիտուցիոնալ առումով: Ասոցացման

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

համաձայնագիրը (*Official Journal of the European Union 2014*) իր հսրը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրով, որն ուժի մեջ է մտել 2016 թ., քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման հիմք է: Պատահական չէ, որ հենց 2016-2018 թթ. նկատվում է ՏԳԻ-ի կտրուկ աճ (տե՛ս *Գծապատկեր 3*): Նշված համաձայնագրերի շնորհիվ մեծանում է ԵՄ դերը Վրաստանի տնտեսական ներուժը զարգացնելու հարցում: Երկիրն աջակցություն է ստանում նաև իր օրենսդրական դաշտը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործում: Այդ առումով ԽՀԱԱՀ-ն ԵՄ ներքին շուկայի հետ ինտեգրվելու հավակնոտ նպատակ է սահմանել և համարվում է ազատ առևտրի եզակի համաձայնագիր: Որպես ԱՀ-ի հիմնական հենասյուն՝ այն նպաստում է Վրաստանի տնտեսության արդիականացմանն ու դիվերսիֆիկացմանը: ԵՄ և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը տարեցտարի անշեղորեն աճում է: ԽՀԱԱՀ-ն խորացնում է Վրաստանի տնտեսական կապերը ԵՄ-ի հետ և ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են պետական գնումները, ընդհանուր մաքսային կանոնակարգերը, ապրանքների տեխնիկական և սանիտարական չափանիշները, մտավոր սեփականության իրավունքները և մրցակցության կանոնները և այլն:


ԵՄ-ն նաև հանձնառու է աջակցել Վրաստանի կառավարությանը արտահանման մրցունակության ամրապնդման հարցում. օրինակ՝ որակի կառավարման համակարգերի և որակի ենթակառուցվածքի համակարգերի ստեղծման միջոցով՝ ապահովել ստանդարտների պահպանումը:

Այստեղ կարևոր էր նշել, որ Վրաստանը Հարավային Կովկասի միակ երկիրն է, որն ունի ազատ առևտրի համաձայնագրեր ԵՄ և Չինաստանի հետ, ինչի շնորհիվ այդ երկու տարածաշրջանները միմյանց կապող եզակի երկիր է դարձել:

Վրաստանի տնտեսական զարգացման ուղղությունների համատեքստում այժմ զուտ պետական մակարդակում տեղի ունեցող գործընթացների քննարկմանը հետաքրքիր է հավելել նաև վրաց հասարակության ընկալումները գործընկեր երկրների վերաբերյալ: Ստորև բերված տվյալները վերցված են Կովկասյան բարոմետր 2021 տվյալադարանից (*Caucasus Barometer 2021a*):


Գծապատկեր 4

Հասարակական կարծիքի հարցում Վրաստանի բարեկամ երկրի վերաբերյալ (2021, %)




Գծապատկեր 5

Հասարակական կարծիքի հարցում Վրաստանի թշնամի երկրի վերաբերյալ (2021, %)



Գծապատկեր 6

Վրաստանում հասարակական կարծիքի հարցում զարգացման համար օրինակելի երկրի վերաբերյալ (2021, %)




Վերոնշյալ գծապատկերները (տե՛ս Գծապատկերներ 4, 5, 6) ավելի տեսանելի են դարձնում պետության վարած տնտեսական քաղաքականության նկատմամբ բնակչության վերաբերմունքը. հասարակությունը անտարբեր է տնտեսական գործընթացների նկատմամբ: Դրա վառ ապացույցն է, որ գծապատկերներից ոչ մեկում չեն հիշատակվում Չինաստանի հետ հարաբերությունները: Անվիճելի է, որ նման հարցումների արդյունքներն ավելի շատ արտահայտում են հասարակության կենցաղային ընկալումները երկրի այս կամ այն հարցի վերաբերյալ: Սակայն միևնույն ժամանակ կարող ենք արձանագրել, որ հասարակության լայն շրջանակներում իներցիայի ուժով շարունակում են կարծրատիպային պատկերացումները տնտեսական հարաբերություններում աշխարհագրորեն մոտ գտնվելու հանգամանքը:



### 3.3 Անվերջ սոցիալացում, վերջանալի ռեսուրսներ

Գծապատկեր 7

Վրաստանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2021)\*



Գաղտնիք չէ, որ ցանկացած երկրի սոցիալական քաղաքականությունն ուղիղ համեմատական է տնտեսական ցուցանիշներին. սոցիալական ոլորտի կայունությունն անմիջականորեն կապված է տնտեսության աճի հետ: Այս առումով գծապատկերում տեղ գտած Սոցիալական գործոնների (ՍԳԻ) 2015-2019 թթ. անկումը բացատրվում է տարածաշրջանում ընդհանուր առմամբ և Վրաստանում՝ մասնավորապես դրամավարկային ճգնաժամով: Երկիրը ստիպված էր դիմակայել լարիի արժեզրկման և դրանից բխող խնդիրներին, ինչն իր հերթին ազդել է սոցիալական ոլորտի հատկացումներին: 2020 թ. COVID-19 համավարակով պայմանավորված՝ առողջապահական և սոցիալական ապահովության ոլորտների հատկացումների հիմնավորված ծավալները վերստին գծապատկերի կորի աճ արձանագրեցին:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ըստ ԵՄ-Վրաստան Ասոցացման համաձայնագրի՝ Վրաստանը պարտավորություն է ստանձնել սահմանված ժամկետում իր օրենսդրությունն աստիճանաբար համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությանը: Այսպես՝ «Կողմերը ճանաչում են լիարժեք և արդյունավետ զբաղվածությունը և բոլորի համար արժանապատիվ աշխատանքը որպես գլոբալացման կառավարման հիմնական տարրեր և վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ խթանելու միջազգային առևտրի զարգացումն այնպես, որ նպաստավոր լինի լիարժեք և արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի համար: Կողմերը պարտավորվում են իրենց օրենսդրության և պրակտիկայի մեջ, ինչպես նաև իրենց ողջ տարածքում հարգել, խթանել և իրականացնել միջազգայնորեն ճանաչված աշխատանքային հիմնական չափանիշները, որոնք ամրագրված են ԱՄԿ-ի հիմնարար կոնվենցիաներում» (*Official Journal of the European Union 2014*):

2020 թ. սեպտեմբերի 29-ին աշխատանքային փոփոխված օրենսգրքում ամրագրվել են աշխատավայրում խտրականության, արձակուրդի կանոնակարգերի, վճարումների, գիշերային հերթափոխի, աշխատանքային հերթափոխի և գիշերային աշխատանքի, անհատական աշխատանքային հարաբերությունների և աշխատանքի հետ կապված այլ էական հարցերի մասին ավելացված և վերաձևակերպված նոր հոդվածներ (*Parliament of Georgia 2010*): Կարևոր տեղ է տրվում փոփոխություններն Աշխատանքի պետական տեսչության մանդատի ընդլայնմանը՝ վերջինիս տալով բոլոր աշխատանքային ոլորտներում նախապես չհայտարարված քննություններ իրականացնելու լիազորություն:

Աշխատանքի տեսչության գործունեությունը դադարեցվեց 2006 թ.-ին: Դադարեցման հիմնական փաստարկն այն էր, որ տեսչությունը կոռումպացված է և չի կարող կատարել իր գործառույթները: Տարածված կարծիք կար, որ այն խոչընդոտում է բիզնեսի զարգացումը: Տեսչության կասեցումը միանշանակ բացասական հետևանքներ ունեցավ աշխատողների համար: Զգալիորեն աճեց աշխատավայրում պատահարների, մահերի և վիրավորումներ ստացողների թիվը: Այսպես օրինակ՝ տեսչության վերացումից հետո աշխատավայրում մահվան ելքով դժբախտ պատահարների միջին թիվը հասել էր 41.36-ի, ինչը 74.1%-ով ավելի է նախորդ ժամանակահատվածի համեմատ (*Tchanturidze 2018*):


Պետք է նշել, որ և՛ Վրաստանի արտաքին գործընկերները, և՛ տեղական շահառու կազմակերպությունները բարձր են գնահատել կատարված փոփոխությունները ոլորտի կարգավորման կարևորության տեսակետից: Ութեն առջևում երկարատև և հետևողական աշխատանք է սպասում, այն պիտի իր շոշափելի արդյունքները բերի աշխատողների շահերի պաշտպանության և առավել արդյունավետ միջավայր ստեղծելու առումով:

Անշուշտ, կարևոր և հետաքրքիր կլինեք չափել Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների ազդեցությունն ընդհանուր աշխատաշուկայի և զբաղվածության վրա, սակայն դիտարկումներ անելու համար երկար ժամանակային շարք է անհրաժեշտ: Մինչ այդ ուղղակի անդրադառնանք զբաղվածության և գործազրկության ոլորտին՝ որոշակի լույս սփռելու վրաստանաբնակների զբաղվածության տեսակների և եկամտի աղբյուրների վրա: Ըստ 2021 թ. Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վրաստանցիների շուրջ 70%-ը վարձու աշխատող է, 30%-ը՝ ինքնազբաղված (*Geostat 2022b, 3*): 2018-2021 թթ. գործազրկության ամենացածր մակարդակը գրանցվել էր 2019 թ.՝ 17.6%, 2020 թ.՝ 18.5% և 2021 թ.՝ 20.6% (*Geostat 2022b, 1*): Ինչպես աշխարհի այլ հատվածներում, գործազրկության աճն արձանագրվել է COVID-19 համավարակի ազդեցությամբ և հետևանքով: Ընդ որում, առավել մեծ հարված է ստացել քաղաքի աշխատաշուկան (*Geostat 2022b, 4*): Հետաքրքիր է արձանագրել, որ տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակն ավելի բարձր է, քան կանանց՝ 2021 թ. համապատասխանաբար 22.7% և 17.8% (2018-2020 թթ. համար նույն միտումն է) (*Geostat 2022b, 6*):

Ըստ Կովկասյան բարոմետր 2021 թ. հարցման՝ վրաստանաբնակների 35%-ը երկրի առջև ծառայած հիմնական խնդիր է համարում գործազրկությունը, 20%-ը՝ աղքատությունը (*Գծապատկեր 8*) (*Caucasus Barometer 2021b*):

Գծապատկեր 8

Վրաստանում հասարակական կարծիքի հարցում երկրի առջև ծառայած հիմնական խնդրի վերաբերյալ (2021, %)




Վրաստանը միջազգային համաձայնագրերով պարտավորված է պարբերաբար զեկուցել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ: Պաշտոնական վիճակագրությունը այդ տեսակ հանցագործությունների աճ է գրանցել 2018-2012 թթ. համար: Այսպես, եթե 2018 թ. ոստիկանու-

թյունն արձանագրել էր 344 նման դեպք, ապա արդեն 2021 թ.՝ 1703, այսինքն՝ շուրջ հինգ անգամ ավելի շատ (OSCE/HCRW n.d):

Ստորև ներկայացված են ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ վրաստանաբնակ հասարակության ընկալումները՝ ըստ «Ատելության հիմքով հանցագործությունը, ատելության խոսքը և խտրականությունը Վրաստանում» հարցման տվյալների շտեմարանի: Հարցվածների 18% կարծում է, որ ատելության հիմքով հանցագործությունը շատ լուրջ խնդիր է Վրաստանում (Գծապատկեր 9):

### Գծապատկեր 9

Վրաստանում հասարակական կարծիքի հարցում երկրում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ (2021, %)<sup>7</sup>




Ընդ որում, ըստ հարցվածների 42%-ի՝ առավել հաճախ այդ տեսակի հանցագործության ենթարկվում են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները: Հետաքրքիր է, որ դրանց անմիջապես հաջորդում են կանայք, թեև անհամեմատ ավելի ցածր արդյունքով՝ ընդամենը 3% (Գծապատկեր 10) (Caucasus Barometer 2021a):

<sup>7</sup> Գնահատված է 1-5 միավորանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ «բոլորովին լուրջ խնդիր չէ», 5-ը՝ «շատ լուրջ խնդիր է»:

Գծապատկեր 10


Վրաստանում հասարակական կարծիքի հարցում երկրում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ (2021, %)



### 3.4 Կայուն քաղաքական կայունություն

Գծապատկեր 11

Վրաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2021 թթ.)\*



Գծապատկեր 11-ում ներկայացված են Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) միտումները 2000-2021 թթ.: Գծապատկերի առավել ուշագրավ միջակայքերն են 2008-2014 թթ. և 2017-2021 թթ.: Առաջին միջակայքի կտրուկ աճի միտումը պայմանավորված էր 2008 թթ. պատերազմով և դրա հետևանքների հաղթահարմամբ. քաղաքական, տնտեսական և սոցիալական ողջ ներուժն օգտագործվեց՝ երկիրը դուրս բերելու հետպատերազմյան ճգնաժամից: Պետք է նշել, որ միջազգային գործընկերների շնորհիվ նաև Վրաստանը կարճ ժամանակահատվածում արձանագրեց սրընթաց աճ՝ նշյալ ժամանակային միջակայքում բացասական ցուցանիշներից անցում կատարելով բավականին լուրջ դրական ցուցանիշների: Այս միջակայքում դրական միտումը որոշակի խաթարում ապրեց 2015 թ.,

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

որը կապված էր երկրում ֆինանսական տատանումների և որպես հետևանք՝ տնտեսական ցնցման հետ:

2017-2021 թթ. միջակայքը լի էր այնպիսի իրադարձություններով, որոնք լրջորեն խարխլեցին Վրաստանի քաղաքական կայունությունը. սահմանադրական բարեփոխումները, նախագահական և խորհրդարանական ընտրությունները, երկրում առաջացած կառավարման ճգնաժամը, COVID-19 համաճարակը ՔՀԿԻ-ն հետ զցեցին ընդհուպ 2018 թ. ցուցանիշները:

Դիտարկելով  $S_{q,t}$ -ի և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի տվյալներն ու միտումները հատկապես վերջին տասնամյակում՝ նկատելի է դրանց կոռելացումը, ինչը վկայում է, որ Վրաստանում տնտեսական աճը և քաղաքական կայունությունը սերտորեն փոխկապակցված են: Մի կողմից՝ անկայուն քաղաքական միջավայրի հետ կապված անորոշությունը կարող է նվազեցնել ներդրումները և տնտեսական զարգացման տեմպերը, մյուս կողմից՝ տնտեսական վատ ցուցանիշները կարող են հանգեցնել կառավարության անկման և քաղաքական անկարգությունների: Այդուհանդերձ, համընդհանուր ընկալմամբ, քաղաքական կայունության կարելի է հասնել նաև ճնշումների կամ գերիշխող քաղաքական ուժի (կուսակցության) միջոցով, որի իշխանության վերարտադրության համար բոլորովին պարտադիր չէ մրցակցել վերընտրվելու համար: Նման պարագայում քաղաքական կայունությունը երկսայրի սուր է դառնում պետական կառավարման համակարգի համար: Թեև քաղաքական կայունությամբ առաջարկվող խաղաղ միջավայրը ցանկալի է, այն հեշտությամբ կարող է անպատժելիության բարենպաստ միջավայր դառնալ: Սրանք այն խութերն են, որոնց կարող են բախվել քաղաքական «փխրուն» համակարգ ունեցող երկրները, և որոնց անտեսման պարագայում անխուսափելի են քաղաքական անկայունությանը բնորոշ ախտանիշները:

Կա նաև ընկալում, որ ցանկացած փոփոխություն բացառող քաղաքական կայունությունը նպաստում է լճացմանը: Նորարարությունն ու հնարամտությունը հետին պլան են մղվում: Սակայն մարդուն բնորոշ հետաքրքրասիրությամբ անխուսափելի են դառնում հասարակական տարբեր ոլորտներում՝ քաղաքական, բիզնես, մշակութային, փոփոխությունների փնտրտուքը՝ ավելի բարեկեցիկ ապագա ունենալու ակնկալիքով: Ավելորդ է նշել, որ ցանկացած փոփոխություն միշտ ռիսկային է: Այնուամենայնիվ, այն



անհրաժեշտ է, որպեսզի կառավարման համակարգը չընկնի մրցակցությունը բացառող ինքնագոհության և լճացման ծուղակը: Ընդ որում, մրցակցության սկզբունքները միայն բիզնես միջավայրին չեն վերաբերում: Այս առումով քաղաքական կայունությունը կարող է բնորոշվել որպես իշխանական վերնախավում իրական մրցակցության բացակայություն: Ծայրահեղ դեպքերում դա կարող է հանգեցնել իշխանության չարաշահման և կոռուպցիայի: Պետական կառավարման հիմնական գործառույթն է ապահովել օրենքի գերակայությունը, երաշխավորել իրավական հարաբերությունները, պաշտպանել իր իրավասության տակ գտնվող սուբյեկտներին արտաքին սպառնալիքներից, ինչպես նաև ապահովել ներդրումներ տնտեսության առավել մրցակցային ոլորտներում: Այս առումով կառավարությունը որոշումներ կայացնելու հարձ է: Իշխանությունը կորցնելու հավանականությունն ուղղակիորեն կապվում է երկրում քաղաքական անկայունության հաստատման հետ: Անկայունություն, որ կարող է լուրջ հետևանքներ ունենալ տնտեսական աճի վրա, քանի որ ուղղակիորեն ազդում է կապիտալի արտահոսքի վրա: Երբ քաղաքական ռեժիմն անկայուն է, խնայողությունների մակարդակը կտրուկ անկում է ապրում. անկայունությունը սպառողներին դրդում է չնախատեսված մեծաքանակ ծախսեր անել՝ խնայողությունների արժեզրկման սպառնալիքի ազդեցությամբ: Փոխվում է նաև ներդրումների պարադիգման. ներդրողները նախապատվություն են տալիս իրացվելի և սպեկուլյատիվ ոլորտներին: Արդյունքում տնտեսական աճն ապահովող ամենակարևոր գործոններից երկուսը՝ ներդրումները և խնայողությունները, դիմակայուն չեն քաղաքական վայրիվերումների նկատմամբ:

Այսպես, ամփոփելով նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածը նախորդ տարիների համեմատ Վրաստանում ունի մի քանի յուրահատկություն՝ Սահմանադրության բարեփոխում, երկու համապետական ընտրություն՝ նախագահական և խորհրդարանական, քաղաքական ճգնաժամ, տնտեսական ցուցանիշների ավելի սերտ փոխկապվածություն, COVID-19 համաճարակի պայթյունն ողջ աշխարհում և դրա հետևանքների դեմ պայքար: Սակայն, ի պատիվ վրաց հասարակության, պետք է նշել, որ պետությանը հաջողվել է իր ներդրած մեխանիզմների շնորհիվ կայունացնել իրավիճակը և նույնիսկ COVID-19 համաճարակին հաջորդած տարուն տնտեսական աճ գրանցել:

### Գրականության ցանկ

- ADB. 2020. “Georgia’s Economy to Recover From COVID-19 Impact in 2021 with 4.5% Growth — ADB.” Asian Development Bank. July 29, 2020. Accessed March 12, 2023. <https://www.adb.org/news/georgias-economy-recover-covid-19-impact-2021-45-growth-adb>.
- Agenda.Ge. 2019. “US, Georgia Agree to Enhance Bilateral Trade Relations.” <https://agenda.ge/en/news/2019/1552>.
- Agenda.Ge. 2021. “Saakashvili in Letter from Detention: The Charges Are False.” October 2, 2021. Accessed January 22, 2023. <https://agenda.ge/en/news/-2021/2916>.
- Agenda.Ge. 2022. “Georgia’s GDP growth rate reaches 10.4% in 2021.” March 21, 2022. Accessed February 11, 2023. <https://agenda.ge/en/news/2022/824>.
- Akhvediani, Tinatin & Peter Havlik. 2019. “Georgia’s Economic Performance: Bright Spots and Remaining Challenges.” The Vienna Institute for International Economic Studies. Policy Notes and Reports 29, April 2019. Accessed January 29, 2023. <https://wiiw.ac.at/georgia-s-economic-performance-bright-spots-and-remaining-challenges-dlp-4892.pdf>.
- Al Jazeera. 2020. “Georgia Opposition Rejects Election Results, Stages Protest.” News | Al Jazeera, November 1, 2020. Accessed February 2, 2023. <https://www.aljazeera.com/news/2020/11/1/georgia-ruling-party-declares-victory>.
- Avdaliani, Emil. 2018. “Growing Chinese Interests in Georgia.” The Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program Joint Center. March 15, 2018. Accessed February 17, 2023. <https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13503-growing-chinese-interests-in-georgia.html>. Accessed January 22, 2023.
- Bloomberg. 2022. “Primed for Investment: Georgia in Focus.” Invest In Georgia, October 10, 2022. Accessed January 26, 2023. <https://sponsored.bloomberg.com/smart-paper/primed-for-investment-georgia-in-focus->.
- Bosworth, Barry & Aaron Flaaen. 2009. “America’s Financial Crisis: The End of an Era.” Asian Development Bank Institute. ADBI Working Paper Series. Accessed March 15, 2023. <https://www.adb.org/sites/default/files/publication/155997/adbi-wp142.pdf>.
- CACI Analyst. 2008. “Post-War Georgia’s Economic Challenges.” November 26, 2008. Accessed March 5, 2023. <https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/11742-analytical-articles-caci-analyst-2008-11-26-art-11742.html?tmpl=component&print=1>.
- Caucasus Barometer. 2021a. “Caucasus Barometer 2021 Georgia: Codebook.” Accessed March 12, 2023. <https://caucasusbarometer.org/en/cb2021ge/codebook/>.
- Caucasus Barometer. 2021b. “Caucasus Barometer 2021 Georgia: Most Important issue facing the country.” Accessed March 14, 2023. <https://caucasusbarometer.org/en/cb2021ge/IMPIS1/>.

- China FTA Network. 2018. “China-Georgia FTA Comes into Force Today.” Ministry of Commerce People’s Republic of China. January 1, 2018. Accessed March 17, 2023. [http://fta.mofcom.gov.cn/enarticle/chinageorgiaen/chinageorgiaennews/201801/36885\\_1.html](http://fta.mofcom.gov.cn/enarticle/chinageorgiaen/chinageorgiaennews/201801/36885_1.html).
- Civil.Ge. 2017. “Opposition Parties Reject Constitution Changes, Boycott Commission.” Civil Georgia, April 21, 2017. Accessed March 12, 2023. <https://civil.ge/archives/126342>.
- Civil.Ge. 2020. “International Reactions to Georgia’s October 31 General Election.” Civil Georgia, November 4, 2020. Accessed February 5, 2023. <https://civil.ge/archives/379621>.
- Civil.Ge. 2021a. “Georgia to Refuse Conditional EU Loan, Garibashvili Says.” Civil Georgia, August 31, 2021. Accessed January 17, 2023. <https://civil.ge/archives/437831>.
- Civil.Ge. 2021b. “UNM to Sign EU-Brokered Deal.” Civil Georgia, September 1, 2021. Accessed January 17, 2023. <https://civil.ge/archives/438177>.
- Civil.Ge. 2021c. “Zurabishvili Vows to ‘Never’ Pardon Saakashvili.” Civil Georgia, October 1, 2021. <https://civil.ge/archives/444908>. Accessed January 17, 2023.
- Commonsplace.Eu. 2021 “Georgian Opposition Outraged as Ruling Party Tears up EU Brokered Deal.” July 28, 2021. Accessed February 15, 2023. <https://www.commonspace.eu/news/georgian-opposition-outraged-ruling-party-tears-eu-brokered-deal>.
- Constitution of Georgia (adopted on 2015). Accessed March 4, 2023. <https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36>
- Council of Europe. 2017. “Georgia: Opinion on the Draft Revised Constitution.” Adopted by the Venice Commission at its 111th Plenary Session (Venice, 16-17 June 2017). Accessed March 10, 2023. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)013-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)013-e).
- Council of Europe. 2018. “Georgia: on the Draft Constitutional Amendments Adopted on 15 December 2017 at the Second Reading by the Parliament of Georgia.” Adopted by the European Commission for Democracy through Law (Venice Commission) at its 114th Plenary Session. Accessed March 10, 2023. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2018\)005-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)005-e).
- Daily Sabah. 2022. “Turkey Supports Georgia’s Territorial Integrity, Sovereignty.” May 22, 2022. Accessed January 8, 2023. <https://www.dailysabah.com/politics/turkey-supports-georgias-territorial-integrity-sovereignty/news>.
- EEAS. 2021. “A way ahead for Georgia.” April 11, 2021. Accessed February 20, 2023. Accessed February 8, 2023. [https://www.eeas.europa.eu/sites/default/files/210418\\_mediation\\_way\\_ahead\\_for\\_publication\\_0.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/210418_mediation_way_ahead_for_publication_0.pdf).

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՞նք

---

- EuCham. 2019. “Best European Countries for Business 2019.” Accessed March 10, 2023. <https://eucham.eu/wp-content/uploads/2019/09/2019-BECB-full-report-FINAL-2019-02-190911.pdf>.
- Euronews. 2021. “Georgia and EU Jointly Celebrate Political Agreement Exclusively on Euronews.” Euronews, May 19, 2021. Accessed January 24, 2023. <https://www.euronews.com/2021/05/19/georgia-and-eu-announce-political-agreement-exclusively-on-euronews>.
- FitchRatings. 2019. “Georgia’s JSC Partnership Fund to ‘BB’/Stable on Sovereign Rating Action.” March 05, 2019. Accessed March 12, 2023. <https://www.fitchratings.com/research/international-public-finance/fitch-upgrades-georgia-jsc-partnership-fund-to-bb-stable-on-sovereign-rating-action-05-03-2019>.
- Freedom House. 2021. “Georgia.” Accessed March 12, 2023. <https://freedomhouse.org/country/georgia/freedom-world/2021>.
- Georgian Dream. 2021. “Bidzina Ivanishvili Letter.” Georgian Dream - Democratic Georgia, January 11, 2021. Accessed February 20, 2023. <https://rb.gy/fbbgg>.
- Geostat. 2021. “Foreign Direct Investments/2021 Preliminary.” National Statistics office of Georgia, March 11, 2022. Accessed December 15, 2022. <https://www.geostat.ge/media/43855/Foreign-Direct-Investments-2021-and-Q4-2021.pdf>.
- Geostat. 2022a. “External Merchandise Trade of Georgia 2021”. National Statistics of Georgia, January 20. Accessed March 22, 2023. <https://www.geostat.ge/media/42737/External-Merchandise-Trade-of-Georgia-in-2021.pdf>.
- Geostat. 2022b. “Indicators of The Labour Force (Employment and Unemployment) 2021.” National Statistics office of Georgia, May 15, 2022. Accessed March 17, 2023. <https://www.geostat.ge/media/45151/Indicators-of-the-Labour-Force-%28Employment-and-Unemployment%29—2021.pdf>.
- Grzegorzczuk, Marek. 2021. “Bidzina Ivanishvili, the Richest Person in Georgia, Has Quit Politics - Again.” Emerging Europe. January 20, 2021. Accessed January 8, 2023. <https://emerging-europe.com/news/bidzina-ivanishvili-georgias-richest-person-quits-politics-again/>.
- Invest in Georgia. n.d. “Foreign Direct Investment.” Accessed January 17, 2023. <https://investinggeorgia.org/en/why-invest/georgia-economy/foreign-direct-investments>.
- IRI. 2021. “Technical Election Assessment Mission: Georgia 2020 National Parliamentary Elections.” International Republican Institute. Accessed March 10, 2023. [https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/team\\_georgia\\_2021\\_v2.pdf](https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/team_georgia_2021_v2.pdf).
- Isfed. 2018. “The Presidential Runoff Should Be Scheduled on A Non-Work Day.” International Society for Fair Elections and Democracy, November 14, 2018. Accessed March 6, 2023. <https://isfed.ge/eng/gantskhadebebi/saprezidento-archevnebis-ll-turis-tarighad-arasamushao-dghe-unda-ganisazghvros>.
- Journal of the European Union. 2014.” Association Agreement Between the European Union and the European Atomic Energy Community and their Member

- States, of the one Part, and Georgia, of the other Part.” August 30, 2014. Accessed March 18, 2023. [https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830\(02\)](https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830(02)).
- Kirikçioğlu, Mustafa. 2019. “Georgian Ambassador to Ankara: Turkey is Closest Friend and Strategic Partner of Georgia.” Daily Sabah. May 26, 2019. <https://www.dailysabah.com/diplomacy/2019/05/25/georgian-ambassador-to-ankara-turkey-is-closest-friend-and-strategic-partner-of-georgia>. Accessed January 29, 2023.
  - Minister of Economy and Sustainable Development of Georgia. 2018. “Georgia – Hong Kong, China Free Trade Agreement,” signed on 28 June 2018. Accessed March 17, 2023. [https://www.economy.ge/uploads/files/2017/foreign\\_trade/georgia\\_hong\\_kong/eng\\_1/georgia\\_hong\\_kong\\_china\\_free\\_trade\\_agreement\\_main\\_agreement.pdf](https://www.economy.ge/uploads/files/2017/foreign_trade/georgia_hong_kong/eng_1/georgia_hong_kong_china_free_trade_agreement_main_agreement.pdf).
  - Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey. 2012. “Trabzon Declaration of The Ministers of Foreign Affairs of The Republic Of Azerbaijan, Georgia And The Republic Of Turkey, 08 June 2012, Trabzon.” Accessed March 17, 2023. [https://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan\\_-georgia-and-the-republic-of-turkey\\_-08-june-2012\\_-trabzon.en.mfa](https://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan_-georgia-and-the-republic-of-turkey_-08-june-2012_-trabzon.en.mfa).
  - Ministry of Internal Affairs of Georgia. 2021. “Statement of the Ministry of Internal Affairs.” February 18, 2021. Accessed January 15, 2023. <https://police.ge/en/shinagan-saqmeta-saministros-gantskhadeba/14411>.
  - Nemtsova, Anna. 2018. “The First Woman President in the Caucasus Is Already Facing Death Threats.” The Daily Beast, December 4, 2018. Accessed March 1, 2023. <https://www.thedailybeast.com/the-first-woman-president-in-the-caucasus-is-already-facing-death-threats>.
  - Nikoladze, Tatia. 2020. “Opposition Parties in Georgia Sign Joint Statement Renouncing Their Seats in Parliament.” English Jamnews, November. Accessed February 9, 2023. <https://jam-news.net/georgia-document-nika-melia-opposition-parliament-boycott-national-movement-lelo/>.
  - OC Media. 2021. “Gakharia Resigns as Georgian PM over Melia Arrest.” OC Media, February. Accessed March 9, 2023. <https://oc-media.org/gakharia-resigns-as-prime-minister-of-georgia/#:~:text=for%20our%20children-,our%20country%2C%20he%20concluded>.
  - Office of the United States Trade Representative. 2013. “Georgia and the U.S. Generalized System of Preferences (GSP) Program.” May, 2013. Accessed March 12, 2023. <https://ustr.gov/sites/default/files/Georgia%20GSP%20handout%20for%-20CLDP.pdf>.
  - Official Journal of the European Union. 2014. “Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part” (30.8.2014). Accessed

### Գլուխ 3. Քաղաքական կայունությունը Վրաստանում որպես լավ կառավարման հե՛նք

---

- March 17, 2023. [https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:-22014A0830\(02\)](https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:-22014A0830(02)).
- OSCE/HCRW. n.d. “Georgia.” OSCE Office for Democratic Institutions and Human Rights, Hate Crime Reporting. Accessed March 19, 2023. <https://hatecrime.osce.org/georgia>.
  - OSCE/ODIHR. 2018. “Georgia, Presidential Election, 28 October and 28 November 2018.” ODIHR Election Observation Mission Final Report. Accessed March 1, 2023. [https://www.osce.org/files/f/documents/9/4/412724\\_2.pdf](https://www.osce.org/files/f/documents/9/4/412724_2.pdf).
  - OSCE/ODIHR. 2020a. “International Election Observation Mission Georgia – Parliamentary Elections, 31 October 2020.” Accessed January 15, 2023. <https://www.osce.org/files/f/documents/a/d/469005.pdf>.
  - OSCE/ODIHR. 2020b. Georgia, Parliamentary Elections, 31 October 2020.” ODIHR Election Observation Mission Final Report. Accessed March 1, 2023. <https://www.osce.org/files/f/documents/1/4/480500.pdf>.
  - Parliament of Georgia. 2010. “Organic Law of Georgia – Labour Code of Georgia.” Date of issuing: 17/12/2010. Accessed March 12, 2023. <https://matsne.gov.ge/en/document/view/1155567?publication=24>.
  - RFE/RL’s Georgian Service. 2019. “Furious Anti-Russia Protesters in Tbilisi Demand Speaker’s Resignation, Clash with Police.” RadioFreeEurope/Radio-Liberty, June 20, 2019. Accessed March 12, 2023. <https://www.rferl.org/a/anti-russia-protesters-in-tbilisi-demand-speaker-s-resignation/30011083.html>.
  - RSF. n.d. “Georgia.” Reporters Without Borders. Accessed March 12, 2023. <https://rsf.org/en/country/georgia>.
  - RUSTAVI 2. 2021. “I am surprised by the use of my name by the Georgian Dream relating to pardon without my consent - the President.” April 19, 2021. Accessed March 12, 2023. <https://rustavi2.ge/en/news/196611>.
  - Tchanturidze, Giorgi. 2018. “Abolition of Labour Inspection in Georgia/ Consequences for Workers and the Economy.” Friedrich-Ebert-Stiftung, Tbilisi, September, 2018. Accessed March 19, 2023. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/14675.pdf>.
  - Tkeshelashvili, Shota. 2021. “The Georgian economy over the past eight years.” Forbes Georgia, April. Accessed March 12, 2023. <https://forbes.ge/the-georgian-economy-over-the-past-eight-years/>.
  - Transparency International Georgia. 2018. “The Initiative to Write-off Debts Represents Unprecedented Case of Alleged Vote-buying.” November 21, 2018. Accessed March 7, 2023. <https://www.transparency.ge/en/post/initiative-write-debts-represents-unprecedented-case-alleged-vote-buying>.
  - Transparency International Georgia. 2023. “Corruption Perception Index 2022: Georgia Has Stagnated in the Fight.” January 31, 2023. Accessed March 12, 2023. <https://www.transparency.ge/en/post/corruption-perception-index-2022-georgia-has-stagnated-fight-against-corruption-last-10-years>.

- Transparency International. 2022. “CPI 2021 for Eastern Europe & Central Asia: Democratic Hopes in the Shadow of Growing Authoritarianism - News.” February 28, 2022. Accessed March 7, 2023. <https://www.transparency.org/en/news/cpi-2021-eastern-europe-central-asia-democratic-hopes-growing-authoritarianism>.
- UNCTAD. 2021. “World Investment Report 2021: Investing in Sustainable Recovery.” United Nations Conference on Trade and Development. Accessed January 25, 2023. [https://unctad.org/system/files/official-document/wir2021\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/wir2021_en.pdf).
- United States Department of State. 2021. “United States-Georgia Charter on Strategic Partnership.” January 14, 2021. Accessed March 8, 2023. <https://www.state.gov/united-states-georgia-charter-on-strategic-partnership/>.
- World Bank Open Data. n.d. World Bank Open Data. Accessed January 26, 2023. <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=GE>.

## ԳԼՈՒԽ 4.

# ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ

## ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 3-ին ադրբեջանական «Ազերթաջ» պետական գործակալությունը հրապարակեց այդ երկրում իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության երիտասարդական խորհրդի կառավարման անդամ Անաստասիա Լավրինայի հոդվածը՝ վերնագրված «Համազգային առաջնորդ Հեյդար Ալիևը՝ որպես Ադրբեջանում քաղաքական կայունության հիմնադիր» (*Лаврина 2022*): Այնտեղ մասնավորապես նշված է. «*Հեյդար Ալիևը դարձավ երկրում քաղաքական կայունության հիմնադիրը: Նա փրկեց ոչ միայն Ադրբեջանը, այլև ամբողջ Հարավային Կովկասը՝ հիմք դնելով տարածաշրջանի զարգացմանը*»: Ադրբեջանում իշխող կուսակցության հանրային ակտիվ գործիչները նույնպես հետ չեն մնում հայր և որդի Ալիևներին գովերգելու հարցում: Օրինակ, Ադրբեջանի խորհրդարանի խոսնակ Սահիրա Գաֆարովան 2021 թ. դեկտեմբերի 24-ին հայտարարել է. «*Այսօր Ադրբեջանը՝ նախագահ Իլիամ Ալիևի գլխավորությամբ, աշխարհում ճանաչված է որպես քաղաքական կայունության, զարգացման, համաշխարհային նախաձեռնությունների և տոլերանտության երկիր*» (*Azernews 2021*):

Քաղաքական կայունության մասին Ադրբեջանի ներքին քաղաքական խոսույթում իշխանական և իշխանամետ գործիչների հայտարարությունները ոչ թե անհատ քաղաքական գործիչների կարծիքներ են, այլ պարզապես նախագահ Իլիամ Ալիևի հնչեցրած թեզերի պարզ կրկնություններ: Այսպես, օրինակ, նույն ինքը՝ Իլիամ Ալիևը, 2022 թ. մայիսի 27-ին Արցախի



Հանրապետությունից բռնազավթված Կովսականի շրջանի գյուղերից մեկում հայտարարել է. «Մեզանից յուրաքանչյուրը տեսնում է, թե ինչ է կատարվում այսօր աշխարհում: Ես կարող եմ ասել, որ Ադրբեջանը մի երկիր է, որ նման է կայունության և անվտանգության կղզու» (Trend 2022): Ադրբեջանում քաղաքական կայունության հաստատման գործում Հեյդար Ալիևի «բացառիկ դերի» թմբկահարումը ևս տեղավորվում է Իլիամ Ալիևի առաջադրած թեզերի շրջանակում: Օրինակ, 2012 թ. նոյեմբերին՝ հոր հիմնադրած «Նոր Ադրբեջան» կուսակցության 20-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ, հայտարարել է. «Մեր կուսակցության առաջին քայլերը միտված են եղել Ադրբեջանում քաղաքական կայունության վերականգնմանը: Պատահական չէ, որ 1993 թ.՝ այն ժամանակ, երբ Ադրբեջանում սկսվել էին քաղաքացիական կռիվներ, մեր ողջ հասարակությունն իր հույսը դրել էր Հեյդար Ալիևի տաղանդի վրա» (Алиев 2012):

Ադրբեջանի պատմության հետխորհրդային շրջանում քաղաքական հարաբերական կայունության հաստատումը (սկսած 1994-1995 թթ.) և դրա շարունակական ապահովումը Ալիևների իշխանության հետևողական քարոզչության միջոցով ներկայացվում են հայր և որդի Ալիևների կարևորագույն ձեռքբերում: Սակայն պետք է փաստել, որ ադրբեջանական հասարակությունը այդ ամենի համար վճարում է շատ ծանր գին՝ ապրելով բռնատիրության և ժողովրդավարության բացակայության պայմաններում<sup>1</sup>:

Սույն գլխում ներկայացվում են քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոններով ձևավորվող ինդեքսների ( $P_{գր}$ ,  $S_{գր}$  և  $U_{գր}$ ) ազդեցությունը Ադրբեջանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ( $ԲՀԿԻ$ ) վրա և դրանում տեղի ունեցած դինամիկ փոփոխությունները (տե՛ս Գծապատկեր 1, նաև Աղյուսակ 1), սակայն ի տարբերություն նախորդ աշխատանքների (*Տոնոյան 2018*)՝ այստեղ հիմնականում վերլուծվում են 2018-2021 թթ. ժամանակահատվածի գործընթացները: Զուգահեռներ են անցկացվում ինչպես Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության, մինչևհամաճարակային և համաճարակային (COVID-19) շրջանի, այնպես էլ Արցախ-


<sup>1</sup> Ադրբեջանում ժողովրդավարության հիմնախնդիրների և քաղաքական կայունության առանձնահատկությունների՝ 2000-2017 թթ. գործընթացների մասին տե՛ս Ա. Տոնոյանի (2018, 2019), Վ. Հունանյանի (2016) և Տ. Հայրապետյանի (2017) աշխատությունները:

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

յան 44-օրյա պատերազմի, դրան հաջորդած գործընթացների և Ադրբեջանում ծավալված իրադարձությունների միջև:

**Գծապատկեր 1**

**Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2021 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

Ադրբեջանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2021 թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	ՔՀԿԻ
2000	-0.219	-0.502	0.185	<b>-0.141</b>
2001	-0.327	-0.410	0.175	<b>-0.189</b>
2002	-0.148	-0.376	0.238	<b>-0.067</b>
2003	-0.047	-0.303	0.262	<b>0.007</b>
2004	-0.225	-0.264	0.252	<b>-0.088</b>
2005	-0.081	-0.266	0.276	<b>-0.002</b>
2006	-0.204	-0.021	0.291	<b>-0.028</b>
2007	-0.154	0.033	0.377	<b>0.033</b>
2008	-0.137	0.170	0.341	<b>0.053</b>
2009	-0.199	0.282	0.375	<b>0.045</b>
2010	-0.138	0.416	0.396	<b>0.106</b>
2011	-0.055	0.488	0.404	<b>0.164</b>
2012	0.023	0.624	0.534	<b>0.267</b>
2013	-0.078	0.654	0.546	<b>0.219</b>
2014	-0.057	0.612	0.517	<b>0.216</b>
2015	-0.057	0.437	0.398	<b>0.154</b>
2016	-0.260	0.192	0.310	<b>-0.021</b>
2017	-0.080	0.001	0.345	<b>0.060</b>
2018	-0.117	0.177	0.374	<b>0.075</b>
2019	-0.145	0.224	0.402	<b>0.074</b>
2020	-0.552	0.034	0.415	<b>-0.174</b>
2021	-0.162	0.164	0.300	<b>0.025</b>


\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի, Ս<sub>ԳԻ</sub>-ի և դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի որոշ տարիների արժեքները հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

## 4.1 Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունության վրա ազդող քաղաքական գործոնները և դրանց առանձնահատկությունները

Գծապատկեր 2

Ադրբեջանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2021)



Խորհրդային միության փլուզումից և Ադրբեջանի անկախացումից հետո այս երկրում եռամյա քաղաքական ապակայունությունը պայմանավորված էր ոչ միայն հետխորհրդային մյուս հանրապետություններին հատուկ պատճառներով (նախկին սոցիալիստական համակարգից անցում կապիտալիստականի, անցումային շրջաններին հատուկ բնակչության լայն շերտերի սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացում, աղքատության ու գործազրկության բարձր ցուցանիշներ, ազգային դրամական արժեքի ներդրում, պարբերական դեալվացիաներ), այլ նաև Արցախյան առաջին պատերազմով, որի ընթացքում (1991-1994) Բաքվում տեղի ունեցավ երեք իշխանափոխություն: 1992 թ. մարտի 6-ին իշխանությունից հեռացվեց առաջին նախագահ Այազ Մութալիբովը, և նախագահի պարտականությունները ժամանակավորապես ստանձնեց Յադուբ Մամեդովը: Հայկական ուժերի կողմից Շուշիի ազատագրումից և առաջնագծում հաջո-

ղություններից հետո մայիսի 14-ին հեռացվեց նաև Յաղուբ Մամեդովը, և խորհրդարանի 250 պատգամավորներից 219-ի քվեով նախագահի պաշտոնում նորից վերականգնվեց Այազ Մութալիբովը: Սակայն անգամ մեկ օր չանցած՝ մայիսի 15-ի գիշերը, ծայրահեղական ազգայնական գաղափարախոսությամբ աչքի ընկնող Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցությունը (ԱԺԾԿ) ու «Մուսավաթը» մինչև առավոտ զավթեցին իշխանությունը<sup>2</sup>: Երրորդ իշխանավորությունը տեղի ունեցավ ընդամենը մեկ տարի անց՝ 1993թ. հունիսին, երբ Սուրաթ Հուսեյնովի ապստամբությունից և Լենքորանում Թալիշ-Մուղանյան Հանրապետության հռչակումից հետո Նախիջևանի խորհրդարանի նախագահ և ինքնավարության դե ֆակտո բացարձակապես անկախ ղեկավար Հեյդար Ալիևը<sup>3</sup> ԱԺԾԿ առաջնորդ և Ադրբեջանի երկրորդ նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի (1932-2000 թթ.) հրավերով Նախիջևանից մեկնեց Բաքու և ստանձնեց երկրի ղեկը, իսկ ինքը՝ Էլչիբեյը, հեռացավ ծննդավայր՝ Նախիջևանի Քաղաքիկ<sup>4</sup> գյուղ, և իշխանության վերադառնալու հնարավորություն հետագայում ո՛չ ինքը, ո՛չ իր քաղաքական ուժը այլևս չունեցան:

Թեև Հեյդար Ալիևին և որդուն՝ Իլիամ Ալիևին, հաջողվել է հետխորհրդային երկրներին հատուկ ժողովրդավարացման գործընթացները խոչընդոտելու հաշվին և բռնապետություն հաստատելու միջոցով ապահովել հարաբերական քաղաքական կայունություն Ադրբեջանում, սակայն նախընթաց տարիների փորձը և Ադրբեջանի Ք<sub>գ</sub> ինդեքսը (տե՛ս *Գծապատկեր 2*) ձևավորող էական բաղադրիչներից զանգվածային անհնազանդությունների ժամանակագրական խորքային վերլուծությունները (*Տնոյան*

<sup>2</sup> Խորհրդարանի նախագահ դարձավ «Մուսավաթի» առաջնորդ Իսա Գամբարովը, իսկ հանրապետության նախագահ՝ ԱԺԾԿ առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը:

<sup>3</sup> 1991-1993 թթ. Նախիջևանի խորհրդարանի նախագահ էր Հեյդար Ալիևը, որը այնտեղ վարում էր կենտրոնից անկախ քաղաքականություն. կատարում էր պաշտոնական այցեր հարևան երկրներ, կնքում պայմանագրեր, վերցնում դրամական վարկեր՝ չունենալով Բաքվի ո՛չ համաձայնությունը, ո՛չ թույլտվությունը: Հեյդար Ալիևի այդ թվականների հարցազրույցներն ու հետագայում հրապարակած հուշերը այդ շրջանի մասին վկայում են, որ Նախիջևանը դե ֆակտո անկախ քաղաքական միավոր էր, և Հեյդար Ալիևը միջպետական հարաբերություններ էր հաստատել Նախիջևանի բոլոր հարևանների, այդ թվում ՀՀ-ի հետ (*Տնոյան 2021ա, նաև՝ Hemid 2022a; 2022b; 2022c*):

<sup>4</sup> Ադրբեջանցիներն այժմ այն անվանում են Քալաքի (*աղբբ. Kələki*):

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

2018; 2019) ցույց են տալիս, որ, որպես օրինաչափություն, այդ երկրի քաղաքական կայունության վրա մեծ ազդեցություն ունեցող և ընդհանուր առմամբ ապակայունացնող գործոնների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հետևյալները՝

- հետխորհրդային և Մերձավոր Արևելքի երկրներում ընթացող քաղաքական գործընթացները, հեղափոխությունները,
- ընտրական գործընթացները (նախագահական, խորհրդարանական, ՏԻՄ) և սահմանադրական փոփոխությունների հանրաքվեները,
- սոցիալ-տնտեսական ճգնաժամերը,
- կրոնական և ազգային-էթնիկական շարժումները (*Տոնյան 2018, 125*):

Այս տարիների ընթացքում վերևում թվարկված գործոններից առաջինը Ադրբեջանում ունեցել է տարբեր աստիճանի ապակայունացնող ազդեցություններ: Երկրի քաղաքական համակարգի կայունությունը սպառնալիքի տակ է հայտնվել և՛ 2003-2005 թթ. Վրաստանում, Ուկրաինայում ու Ղրղզստանում ծավալված քաղաքական գործընթացների (*Chivers 2005*), և՛ 2010 թ. դեկտեմբերին Թունիսում ու Եգիպտոսում սկսված և ապա ամբողջ Հյուսիսային Աֆրիկայով ու Մերձավոր Արևելքով տարածված «արաբական գարուն» անվամբ հայտնի ցույցերի և հանրահավաքների հեղափոխական ալիքի ժամանակ (*Aliiev 2013, 5*): Ադրբեջանական Հանրապետության քաղաքական համակարգի կայունության համար նույնպիսի մարտահրավեր էր նաև 2018 թ. ապրիլ–մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հեղափոխությունը, որի մանրամասն վերլուծությունը տրված է այս գլխի հաջորդ էջերում:

Թվարկվածներից երկրորդի՝ ընտրական գործընթացների (նախագահական, խորհրդարանական, ՏԻՄ) և սահմանադրական հանրաքվեների առնչությամբ հարկ է նշել, որ Ադրբեջանում ներքաղաքական և ընդհանրապես քաղաքական համակարգի կայունության վրա բացասական ազդեցություն են ունեցել քննարկվող ժամանակահատվածում ընտրակեղծիքներով՝ այսպես կոչված «կարուսելներով» և տարատեսակ այլ խախտումներով, անցկացված մի շարք՝ 2003, 2008 և 2013 թվականների նախագահական և 2000, 2005, 2010, 2015 թվականների խորհրդարանական ընտրությունները, ինչպես նաև 2002, 2009 և 2016 թվականներին անցկացված

սահմանադրական փոփոխությունների հանրաքվեները (*Snնոյան 2018, 107*): Հենց այս հանգամանքով էր պայմանավորված Ադրբեջանի իշխանությունների նախաձեռնած և 2016 թ. սեպտեմբերի 26-ին անցկացրած սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, որով հանրապետության նախագահի պաշտոնավարման ժամկետը 5 տարուց հասցվեց 7-ի: Ավելին, 2018 թ. ապրիլի 11-ին արտահերթ նախագահական և 2020 թ. փետրվարի 9-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու նպատակներից են նաև 2025 թ. ժամանակային առումով գրեթե միաժամանակ դրանք կազմակերպելը և այդկերպ նախընտրական ու հետընտրական լարվածությունները և ցնցումները նվազեցնելը կամ առնվազն դրանք նույն ժամանակային հատվածում տեղավորելը:

Երրորդ կարևոր գործոնի՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամերի առումով էական է այն, որ պատերազմները և ռազմական գործողությունները, որոնք նշանակալի ազդեցություն ունեն պետությունների քաղաքական համակարգի կայունության կարևոր բաղադրիչ կազմող Ք<sub>ԳԻ</sub> վրա, Ադրբեջանի դեպքում կարող են հենց սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումների և տնտեսական ճգնաժամերի տրամաբանական հետևանքը լինել: Այդպիսի նախադեպ կարող է համարվել 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը, որին ԱՀ իշխանությունները դիմեցին համաշխարհային շուկայում նավթի գնի անկումից, դրան հաջորդած ազգային արժույթի երկփուլ արժեզրկումից և ապա սոցիալ-տնտեսական ճգնաժամից և ԱՀ ողջ տարածքով ծայր առած ապակենտրոն սոցիալական բողոքի ցույցերից հետո (*Snնոյան 2018, 137*):

Վերևում առանձնացված չորրորդ գործոնի առաջին բաղադրիչի դեպքում Ադրբեջանում կրոնական շարժումների և ճգնաժամերի վառ դրսևորումներ կարող են համարվել 2015–2016 թթ. նարդարանյան (*Վարդանյան ժ. և այլք 2018*) և 2018 թ. Գանձակի դեպքերը (*USCIRF 2018*): Դրանք սաստելու համար ադրբեջանական իշխանությունները դիմել են ամենավայրագ բռնությունների (*IPHR 2020*): Կրոնական գործոնի և դրա արտաքին խաղարկման (Իրան, մասամբ նաև Թուրքիա) հանդեպ ԱՀ իշխանությունների զգուշավորությունը պետք է հաշվի առնել թերևս նաև 2015-2017 թթ. ըն-

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

թացքում Ադրբեջանում «Դավանանքի ազատության մասին» օրենքում կատարված որոշ փոփոխություններ մեկնաբանելիս<sup>5</sup> (*Տոնոյան 2019, 130*):

Նույն գործոնի երկրորդ բաղադրիչը՝ ազգային-էթնիկական շարժումները, ևս տարբեր կերպ է դրսևորվել. դրա վառ օրինակներից են 1993 թ. Լենքորան քաղաքում Թալիշ-Մուղանյան Ինքնավար Հանրապետության հռչակումը, 2012 թ. գարնանը Ղուբայում տեղի ունեցած ցույցերը, որոնք սկզբում սոցիալական դժգոհության բնույթի էին, սակայն այնուհետև կովկասյան պարսիկների (թաթերի) ակտիվ նախաձեռնությամբ և մասնակցությամբ սոցիալական բողոքից ազգային-էթնիկական շարժման վերածվելու միտումներ դրսևորեցին (*Տոնոյան 2018, 113-114*):

2018 թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը բավականին լուրջ մարտահրավեր էր նաև Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունության համար, եթե հաշվի է առնվում հեղափոխությունների և առհասարակ քաղաքական շարժումների՝ տվյալ պետության սահմաններից դուրս գալու և շղթայական ռեակցիայի օրինաչափությամբ նաև հարևան երկրներում տարածվելու կարևոր հանգամանքը: Ընդ որում, Ադրբեջանի դեպքում՝ որպես մի երկիր, որ տասնամյակներ շարունակ Արցախի և Հայաստանի հետ տևական հակամարտության և հետևաբար նաև մրցակցության մեջ է: Բացի այդ, Ադրբեջանը հարավկովկասյան երկրների շարքում միշտ ժողովրդավարության, մարդու իրավունքների և խոսքի ազատության ամենացածր մակարդակն է ունեցել, ուստի այդ գործոնի սրությունը կարող էր լինել ավելի շոշափելի: Միաժամանակ պետք է նաև հաշվի առնել նախորդ տարիների փորձը, երբ այս երկրի քաղաքական կայունության վրա բացասաբար են ազդել 2003-2005 թթ. Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում տեղի ունեցած քաղաքական շարժումների արձագանքները, նաև՝ 2010 թ. Մերձավոր Արևելքում սկիզբ առած «արաբական գարունները»: 2018 թ. ՔԳԻ ինդեքսում արձանագրված բացասական փոփոխությունը՝ համեմատ 2017 թ. (տե՛ս *Գծապատկեր 2*), այնուամենայնիվ, կարող էր ավելի շոշափելի լինել, եթե չմեղմվեր դրական դինամիկա

---

<sup>5</sup> «Դավանանքի ազատության մասին» օրենքն Ադրբեջանում հաճախակի և ամենաշատն է փոփոխությունների ենթարկվել: Այն կարելի է օգտագործել որպես գործիք՝ ԱՀ-ում կրոնական խնդիրների և քաղաքական համակարգի կայունության վրա կրոնական գործոնի ունեցած ազդեցության չափելիությանը վերաբերող ուսումնասիրություններում:



գրանցած տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսներով (S<sub>գր</sub> և Ս<sub>գր</sub>) մի կողմից, և եթե չլինեին նախագահ Իլիամ Ալիևի՝ ՀՀ հեղափոխության հետևանքով սեփական երկրի կառավարման համակարգում հարկադրաբար իրականացրած խորքային փոփոխությունները և կոռուպցիայի դեմ թեկուզ ձևական պայքարի շրջանակներում նախաձեռնած ծայրահեղ ռիսկային, բայց արդյունավետության բարձր մակարդակ գրանցած միջոցառումները մյուս կողմից: Բացի նշվածներից, մեկ այլ օգնող հանգամանք էր այն, որ մինչև Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը՝ 2018թ. ապրիլի 11-ին, ինչպես արդեն նշեցինք, Իլիամ Ալիևը հասցրել էր անցկացնել արտահերթ նախագահական ընտրություններ<sup>6</sup>, վերընտրվել և խուսափել ներքաղաքական այն լարվածությունից, որը, հաշվի առնելով արդեն նույն տարվա ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցածը, ամենայն հավանականությամբ անխուսափելի էր լինելու նաև Ադրբեջանում, եթե նախագահական ընտրություններն անցկացվեին ոչ թե արտահերթ, այլ ժամանակին՝ 2018 թ. աշնանը<sup>7</sup>:

2018 թվականին Ադրբեջանում շարունակվել են իշխանությունների կողմից խոսքի ազատության սահմանափակումները և լրագրողների դեմ բռնություններն ու նրանց ձերբակալությունները: Այսպես, 2018 թ. հունվարին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում Ադրբեջանի հատուկ ծառայությունները առևանգել և Բաքու են տեղափոխել ընդդիմադիր հայացքներով հայտնի լրագրող Աֆղան Մուխթարլիին, իսկ 2018 թ. տարեվերջի տվյալներով Ադրբեջանում անազատության մեջ էր գտնվում 10 լրագրող (*Freedom House 2019*): 2017 թ.-ից 2022 թ. շարունակվում են նաև օրենքի հատուկ փոփոխություններով ՋԼՄ-ների դեմ պետական վերահսկողությունը և

<sup>6</sup> Ինչպես նախորդ անգամները, 2018 թ. ապրիլի 11-ի նախագահական արտահերթ ընտրությունները ևս անցել են գործող իշխանությունների կազմակերպած բազմաթիվ ընտրակեղծիքներով, ծայրերի կեղծման արդեն ավանդական դարձած մեխանիզմների (լցոնումներ, կարուսելներ ևն) գործադրմամբ (*DW 2018*):

<sup>7</sup> Ադրբեջանի արմատական ընդդիմությունը, մասնավորապես Ժողովրդական ճակատ կուսակցությունը և «Մուսավաթը» բոյկոտեցին նախագահական արտահերթ ընտրությունները և չառաջադրեցին թեկնածուներ՝ հայտարարելով, որ ժամկետից շուտ անցկացվող ընտրությունները հնարավորություն չեն տալիս իրենց՝ պատրաստվելու ընտրարշավին և մասնակցելու դրանց (*Freedom House 2019*):

#### **Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

ազատության սահմանափակումները մեծացնելու քաղաքականությունը<sup>8</sup>: 2018 թ. Ադրբեջանում փակվել են մի շարք լրատվամիջոցներ, այդ թվում՝ նույն տարվա օգոստոս ամսին APA լրատվական գործակալությունը և այդ լրատվական հոլդինգի մեջ մտնող ևս 3 լրատվական կայքեր: Որպես ֆորմալ հիմք հայտարարվել է նախագահ Ի. Ալիևի՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին արած հայտարարությունները լրատվական հրապարակումներում աղավաղելը, սակայն, ըստ տարբեր կարծիքների, այդ որոշման իրական պատճառը կարող էին լինել ֆինանսական խնդիրները (*Freedom House 2019*)<sup>9</sup>: Ադրբեջանում տարբեր լրատվամիջոցների դեմ սահմանափակումների քաղաքականությունը (կայքերի հասցեների արգելափակումներ) շարունակվել է նաև հետագա տարիներին (մինչև 2022 թ.) և հիմքում ունեցել է ոչ միայն ներքաղաքական, այլ նաև ազգային-էթնիկական և կրոնական մոտիվացիաներ: Մասնավորապես, 2019 թ. թալիշ ակտիվիստ գործիչները հայտարարել են, որ Ադրբեջանում սահմանափակված է թալիշերենով լուրեր հրապարակող մի շարք, այդ թվում Tolishmedia.com, Tolishstan.com, Tolishpress.org և այլ լրատվական կայքերի հասանելիությունը: 2021 թ. հոկտեմբերին նույն խնդրի առաջ կանգնեցին նաև հիմնականում կրոնական բովանդակությամբ լուրեր տարածող Deyerler.az, Maide.az, Ahlibeyt.az, Shia.az, Islaminsesi.az կայքերը, իսկ պետանվտանգության ծառայության աշխատակիցները բերման ենթարկեցին

---

<sup>8</sup> 2017-ի իրավական փոփոխությունները ընդլայնել են Ադրբեջանի կառավարության վերահսկողությունը առցանց լրատվամիջոցների նկատմամբ. օրենքը թույլ է տալիս արգելափակել կայքերն առանց դատարանի որոշման, եթե համարվում է, որ դրանք պարունակում են պետության կամ հասարակության համար վտանգ ներկայացնող բովանդակություն: Ադրբեջանում անկախ լրատվական կայքերը պարբերաբար արգելափակվում են կամ ենթարկվում կիբերհարձակումների (*Freedom House 2020*):

<sup>9</sup> Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ APA լրատվական հոլդինգը պատկանում է Ադրբեջանի արտակարգ իրավիճակների նախարար Քամալադդին Հեյդարովի ընտանիքին, որը Ադրբեջանի խոշորագույն կլաններից է (Քամալադդին Հեյդարովի կլան): Նա թեև եղել է Իլիամ Ալիևի հոր՝ Հեյդար Ալիևի մերձավորներից և իշխանության նախիջևանյան թևի ներկայացուցիչ, սակայն իր ահռելի կարողությունների պատճառով հայտնվել է Փաշալենների ուշադրության կենտրոնում, և վերջին տարիներին Ադրբեջանի ներքին հասարակական խոսույթում անընդհատ շրջանառվում է այն թեզը, որ գործող իշխանության առաջին դեմքը Փաշալենների թելադրանքով թիրախավորել է Հեյդարովին և նրա ընտանիքին:

դրանց տնօրեններին և աշխատակիցներին: Հետաքրքրական է հատկապես այն, որ այդ հինգ կայքերի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների գործողությունները սոցիալական ցանցերում արժանացել են բնակչության մի հատվածի հավանությանը, որը կարող է պայմանավորված լինել այդ կայքերի գործունեությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապելու և այդ պետությունից իբր ֆինանսավորվելու հանգամանքով<sup>10</sup>:

Այս ամենից բացի, 2018 թ. ընդդիմադիր հայացքներով քաղաքական գործիչները և կուսակցական պաշտոնյաները կասկածելի մեղադրանքների հիման վրա ենթարկվել են կամայական ձերբակալությունների, ինչպես նաև ֆիզիկական բռնության և ահաբեկման այլ ձևերի: Օրինակ, այդ տարվա սկզբին ընդդիմադիր ԱԺԿ փոխնախագահ Գյոզալ Բայրամլին զարտուղի ճանապարհով Ադրբեջան ապրանքներ ներմուծելու մեղադրանքով դատապարտվել է երեք տարվա ազատազրկման, սակայն դատարանում հայտարարել է, որ իր ձերբակալությունն ու հետապնդումը քաղաքական դրդապատճառներ են ունեցել: «Ադրբեջանի քաղբանտարկյալների միասնական ցուցակ կազմող աշխատանքային խումբ» ՀԿ-ի տվյալներով՝ 2018 թ. սեպտեմբերի դրությամբ Ադրբեջանում եղել է 128 քաղբանտարկյալ (*Freedom House 2019*):

Ընդդիմադիր գործիչների և ազատ մամուլի նկատմամբ բռնաճնշումներին զուգահեռ՝ ադրբեջանական իշխանություններն ակտիվացրել են աշխատանքը կեղծ ընդդիմադիր ուժերի հետ, որոնք, ադրբեջանական հասարակությանը ներկայանալով որպես գործող իշխանությունների քննադատ, իրականում զբաղվել են իշխանություններից ստացած հանձնարարականները կատարելով: Այդ քաղաքականության մաս էր կազմում թերևս նաև 2018 թ. օգոստոսին Հանրապետական այլընտրանք քաղաքական ուժի առաջնորդ, 2013 թ.-ից անազատության մեջ պահվող առաջնորդ Իլգար Մամմեդովին ազատ արձակելը, որը ազատության մեջ հայտնվելուց հետո ոչ միայն դադարեց բացահայտ քննադատել Ադրբեջանի գործող իշխանություններին, այլև դրական դիրքորոշում որդեգրեց Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական հարցերի բաժնի պետի նախաձեռնած իշ-

---

<sup>10</sup> Նաև այս դրվագը ապացույց է այն բանի, որ հակաիրանական քարոզը ադրբեջանական հասարակության շրջանում վերջին տարիներին տվել է որոշակի արդյունքներ:

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

խանություն–ընդդիմություն երկխոսության առնչությամբ: Ավելին, 2020 թ. խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ Իլգար Մամմետովի գլխավորած ուժը չմիացավ արմատական ընդդիմության՝ ԱԺԿ և «Մուսավաթի» հայտարարած բոյկոտին: Հանրապետական այլընտրանքը մասնակցեց ընտրություններին և խորհրդարանում ստացավ պատգամավորական մեկ մանդատ<sup>11</sup>: Թե՛ Ալիևի հանդեպ քննադատություններից զերծ մնալու, թե՛ իշխանությունների նախաձեռնած իշխանություն–ընդդիմություն երկխոսությանը մասնակցելու և թե՛ հետագայում Արցախյան երկրորդ պատերազմից հետո իշխանությունների տրամադրած փոխադրամիջոցով մյուս կեղծ ընդդիմադիր գործիչների հետ Շուշի այցելելու պատճառով ադրբեջանական հասարակության շրջանում կտրուկ անկում ապրեց Հանրապետական այլընտրանք կուսակցության և անձամբ Իլգար Մամմետովի վարկանիշը: Ավելին, ԱԺԿ-ի ջանքերի շնորհիվ այս կուսակցությանը ևս փակցվեց «գրպանային ընդդիմություն» կամ «ավտորուսի ընդդիմություն» ծաղրական պիտակը:

Հատկապես 2019 թ. գործող նախագահը, կեղծ ընդդիմության հետ աշխատանքներին զուգահեռ, սկսում է ներիշխանական համակարգի լուրջ փոփոխություններ՝ նախևառաջ ազատվելով այն բոլոր ազդեցիկ գործիչներից, որոնք Ադրբեջանում հայտնի էին «հին գվարդիականներ» անունով: Դրանք հիմնականում Իլիամ Ալիևի հոր՝ Հեյդար Ալիևի մերձավոր ընկերներն ու զինակիցներն էին և մեծ դեր էին խաղացել նրա մահից հետո որդուն իշխանության բերելու և մոտ մեկուկես տասնամյակ նրա իշխանությունը պահպանելու գործում: Այսպես, 2019 թ. հոկտեմբերին Իլիամ Ալիևը նախ աշխատանքից հեռացնում է նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհդիևին<sup>12</sup>, ապա նաև փոխվարչապետներ Ալի Հասանովին, Հաջըբալա Աբութալիբովին, նախիջևանյան կլանը ներկայացնող վարչա-

---

<sup>11</sup> Ադրբեջանի խորհրդարանում Հանրապետական այլընտրանք կուսակցությունը ներկայացնում է պատգամավոր Էրբին Ղադիրլին:

<sup>12</sup> Ռամիզ Մեհդիևի հեռացումից հետո՝ 2019 թ. նոյեմբերի 1-ին, նախագահի աշխատակազմի ղեկավար է նշանակվում ադրբեջանական հասարակությանը մինչ այդ գրեթե անծանոթ Սամիր Նուրիևը (ծնվ. 1975 թ.), որը նույն պաշտոնում է մինչև այժմ և մնացել է նույնքան անդեմ:

պետ Նովրուզ Մամմադովին<sup>13</sup>, իսկ նոյեմբերին՝ նախագահի հասարակական-քաղաքական հարցերով օգնական Ալի Հասանովին: Ռամիզ Մեհդիևը, որը Ադրբեջանում «գորշ կարդինալի» համբավ ուներ, թեև նշանակվում է ԳԱԱ նախագահ, սակայն պարբերաբար հայտնվում է իշխանական լրատվամիջոցների թիրախում, հորջորջվում Ադրբեջանում ՌԴ 5-րդ շարասյան պարագլուխ, իսկ 2022 թ. «իր դիմումի համաձայն»՝ հեռացվում է նաև ԳԱԱ նախագահի պաշտոնից: Փոխվարչապետներ Ալի Հասանովին և Հաջըբալա Աբուֆալըբովին հաջողվում է խուսափել իշխանական լրատվամիջոցների թիրախավորումից, սակայն նախագահի հասարակական-քաղաքական հարցերով նախկին օգնական Ալի Հասանովը պարբերաբար հայտնվում է նրանց ուշադրության կենտրոնում և վարկաբեկվում: Խլում են ունեցվածքի մի մասը՝ նույն կերպ վարվելով նաև վերջինիս ընտանիքի<sup>14</sup>, թիմի անդամների և մերձավոր շրջապատի հետ:

Հասարակության շրջանում առանձնապես բարձր վարկանիշ չունեցող բարձրաստիճան այս պաշտոնյաների հետ հաշվեհարդարը նպաստում է գործող նախագահի՝ հասարակության շրջանում որոշակի դրական իմիջի ձևավորմանը: Այս գործողությունները շարունակվում են նաև 2020 թ. ընթացքում՝ իջնելով ավելի ցածր պետական պաշտոնյաների նկատմամբ՝ ուղեկցվելով կոռուպցիայի հետ կապված մեղադրանքներ պարունակող աղմկահարույց ձերբակալություններով: Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ և դրանից հետո առժամանակ դադարեցված այս քաղաքականությունը շարունակվում է նաև պատերազմից որոշ ժամանակ անց, երբ նկատվում են պատերազմական հաղթական էյֆորիայի աստիճանական անկում և գործող նախագահի վարկանիշի աննշան նվազում: Այսպես, 2019 թ. նոյեմբերից մինչև 2020 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում կոռուպցիայի, կաշառքի և պետական միջոցների յուրացման մեղադրանքներով Ադրբեջանի պետանվտանգության ծառայությունը (ՊԱԾ) ձերբակա-

<sup>13</sup> Նովրուզ Մամմադովի փոխարեն՝ վարչապետ է նշանակվում դարձյալ նախիջևանցի, արմատներով Քանգարիի շրջանից Ալի Ասադովը, որը շարունակում է պաշտոնավարել մինչև այժմ:

<sup>14</sup> Օրինակ, աշխատանքից հեռացվում է նշված անձի աղջիկը՝ Սաֆիյա Մոհաբալիևան, որը դասախոս էր նախագահի աշխատակազմին կից Պետական կառավարման ակադեմիայի Միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության ամբիոնում (*Aztoday* 2021):

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

լել է մի շարք վարչական շրջանների ղեկավարների, փոխնախարարների և պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաների: Չորս ամիս անց ևս, այսինքն՝ պատերազմի ավարտից հետո, ՊԱԾ-ը ձերբակալել է և՛ վարչական շրջանների ղեկավարների, և՛ պետական այլ, այդ թվում ռազմական ոլորտի ներկայացուցիչների<sup>15</sup>, նրանց հետ փոխկապակցված անձանց և ազգականների, տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, գիտակրթական հաստատությունների տնօրենների և ռեկտորների:

2019 թ. մարտին նախագահ Իլհամ Ալիևի՝ համաներման որոշումով ազատ են արձակվում նաև ադրբեջանական տարբեր կալանավայրերում պահվող մոտ 50 քաղբանտարկյալներ, այդ թվում՝ լրագրողներ, բլոգերներ և այլք (*Freedom House 2020*): Սակայն ամբողջ տարվա ընթացքում դարձյալ շարունակվում են ընդդիմադիր գործիչների և լրագրողների հանդեպ հետապնդումները: «Ադրբեջանի քաղբանտարկյալների միասնական ցուցակ կազմող աշխատանքային խումբ» ՀԿ տվյալներով՝ 2019 թ. նոյեմբերի վերջի դրությամբ Ադրբեջանում եղել է 112 քաղբանտարկյալ (*Freedom House 2020*), որը ընդամենը 16-ով է պակաս նույն կազմակերպության՝ 2018 թ. սեպտեմբերի ցուցակում ներառված քաղբանտարկյալների թվից:

2019 թ. Ադրբեջանում շարունակվում են բռնաճնշումները էթնիկական խմբերի և կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Ազատ կամարտահայտման իրավունքից շարունակում են զրկված մնալ հատկապես թալիշները և լեզգիները (*Freedom House 2020*): Մարտին ընդունված համաներումը չի տարածվում թալիշ ազգային գործիչ Ֆախրադդին Աբբասովի (Աբբոսզոդա) վրա, ով 2018 թ. օգոստոսին Մոսկվայում ձերբակալվել և Բաքու էր տեղափոխվել 2019 թ. սկզբին: Հետագայում՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին, վերջինս Գոբուստանի կալանավայրում մահանում է անհայտ հանգամանքներում: Թեև Ադրբեջանի քրեակատարողական ծառայությունը դեպքը ներ-

---

<sup>15</sup> Ժամանագրական առումով այստեղ վերապահումով պետք է մոտենալ, թերևս, միայն ԱՀ ՁՈՒ ԳՇ նախկին պետ Նաջմադդին Սադիկովի պաշտոնանկությանը: Վերջինիս առնչությամբ թեև պաշտոնական հայտարարության մեջ նշված է, որ նա աշխատանքից հեռացել է 2021 թ. հունվարին իր կամքով՝ առողջական խնդիրների պատճառով, սակայն ՊՆ պաշտոնական կայքից նրա մասին կենսագրական տեղեկությունները հեռացվել են դեռևս 2020 թ. հոկտեմբերին, ինչը մեծապես կարող է պայմանավորված լինել ռազմական գործողությունների՝ մինչ այդ պահը Ադրբեջանի նախագահի համար ոչ ցանկալի ընթացքով:

կայացնում է որպես ինքնասպանություն (*Vzglyad 2020, Media 2020*), սակայն թալիշները հայտարարում են, որ Ֆ. Աբբասովը սպանվել է ադրբեջանական իշխանությունների պատվերով (*Tolishmedia 2020, Talyshistantimes 2020*):

2019 թ. արմատական ընդդիմությունն ու ընդդիմադիր լրագրողները փորձել են կազմակերպել մի քանի ցույցեր, որոնցից 3-ը՝ հունվարին՝ ի պաշտպանություն անկախ բլոգեր Մեհման Հուսեյնովի ապօրինի ձերբակալության, իսկ 2-ը՝ հոկտեմբերին: Այդ բոլոր ցույցերն էլ ոստիկանական բիրտ ուժի գործադրմամբ ցրվել են, կազմակերպիչներից ԱԺԾԿ առաջնորդ Ալի Քարիմլին և Ադրբեջանում բավական հայտնի ընդդիմադիր գործիչ Թոֆիգ Յաղուբլուն ենթարկվել են ծեծի, իսկ մասնակիցներն ու ակտիվիստները՝ ձերբակալությունների<sup>16</sup> և տարատեսակ հետապնդումների, այդ թվում վարչական տուգանքների և աշխատանքից հեռացման (*HRW 2020, Freedom House 2020*):

2019 թ. դեկտեմբերի 5-ին նախագահ Իլիամ Ալիևի հրամանով լուծարվում է Ադրբեջանի 5-րդ գումարման խորհրդարանը, իսկ Սահմանադրական դատարանը հենց նույն օրը այդ հրամանը ճանաչում է Ադրբեջանի սահմանադրության դրոյթներին համապատասխան (*Azadliq 2019*):

2020 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանում սկսվում են արտահերթ խորհրդարանական ընտրությունները, որը բոյկոտում են արմատական ընդդիմությունը, մասնավորապես ԱԺԾԿ և «Մուսավաթ» կուսակցությունը: Ընտրակեղծիքների ձևերով ու ծավալներով նախկին ընտրություններից չտարբերվող խորհրդարանական արտահերթ ընտրություններով իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցությունը մեծամասնական կարգով ձևավորվող 125 մանդատներից ստանում է 70-ը: Մնացած 55 պատգամավորներից 41-ը թեև պաշտոնապես գրանցված են որպես անկուսակցական, սակայն իրականում այս կամ այն կերպ փոխկապակցված են գործող իշխանության և դրա մաս կազմող, տնտեսական ահռելի լծակների և կապիտալի տիրապետող Փաշալենների հետ: 1-ից 3-ական մանդատներով խորհրդարանում հայտնված մյուս 8 կուսակցությունները նույնպես իրական ընդդիմություն

---

<sup>16</sup> Միայն հոկտեմբերյան ցույցերի ժամանակ ձերբակալվել է 60 ակտիվիստ և մասնակից (*HRW 2020*):

#### **Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

չեն և Ադրբեջանում հայտնի են «գրպանային ընդդիմություն» հեգնական անվամբ:

Խորհրդարանական արտահերթ ընտրությունների նախապատրաստմանը զուգահեռ՝ ադրբեջանական իշխանությունները սկսում են քաղաքական երկխոսություն իրական և կեղծ ընդդիմադիր ուժերի հետ, իսկ որպես հիմնական երկխոսող և բանակցող հանդես է գալիս 2019 թ. նոյեմբերի 29-ին նախագահի աշխատակազմում ստեղծված քաղաքական կուսակցությունների և օրենսդիր մարմինների հետ կապերի բաժինը՝ ի դեմս դրա նորանշանակ պետ Ադալաթ Վալիևի: Վերջինս մարտի 12-ին<sup>17</sup> հանդիպում է նաև «Ժողովրդավարական ուժերի ազգային դաշինքի» հետ՝ ի դեմս ԱԺԾԿ-ն ներկայացնող Գյուլթաքին Հաջիբեյլիի, ստանում այդ դաշինքի՝ քաղաքական երկխոսությանը մասնակցելու հինգ նախապայմանները (քաղբանտարկյալների ազատ արձակում, հավաքների անխոչընդոտ անցկացման հնարավորություն, ընտրական բարեփոխումներ, խորհրդարանական նոր ընտրությունների անցկացում և ղարաբաղյան հակամարտության ու անվտանգային ոլորտում առկա վտանգների և սպառնալիքների շուրջ հանրային բաց քննարկումների կազմակերպում), որից հետո հանդիպումներն այս ուժի հետ դադարում են:

Այս ուսումնասիրության մեջ քննության առարկա ժամանակահատվածում 2020 թվականը Ադրբեջանի համար եղել է ամենաանկյունաքարայինը՝ հետևյալ զարգացումների առումով՝

- COVID-19 համաճարակի դեմ պայքար,
- հուլիսյան բախումներ Տավուշ-Թովուզի հատվածում,

---

<sup>17</sup> Մինչև այդ Վալիևը հանդիպել էր քաղաքական տարբեր ուժերի, այդ թվում «Միացյալ Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության առաջնորդ Գուրբաթ Հասանզուլիևի, «Մեծ կառուցարկում» կուսակցության առաջնորդ Ֆազիլ Մուսթաֆայի, այդ պահին դեռևս չգրանցված «Հանրապետական այլընտրանք» կուսակցության առաջնորդ Իլգար Մամմեդովի, «Մեծ հայրենիք» կուսակցության առաջնորդ Ֆազայիլ Աղամալիի, «Կանաչների շարժման» առաջնորդ Ջեյհուն Օսմանլիի, «Միասնություն» կուսակցության առաջնորդ Թահիր Քարիմլիի, «Միացյալ Ադրբեջան» կուսակցության առաջնորդ Թուրալ Աբբասլիի, «Ապագայի Ադրբեջան» կուսակցության առաջնորդ Աղասիֆ Շաքիրօղլուի, «Ադրբեջանի ժողովրդական կուսակցության» առաջնորդ Փանահ Հուսեյնի, «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Արիֆ Հաջիլիի և «Հոյս» կուսակցության առաջնորդ Իդրալ Աղազադեի հետ (*Turkustan 2020*):



– Արցախյան 44-օրյա պատերազմ:

Դեռևս 2019 թվականից սկսած՝ Ադրբեջանի իշխանությունները պետական կառավարման համակարգի օպտիմալացման և պետական ոլորտի աշխատողների դրույքաչափերի ու ծախսերի կրճատման նպատակով կատարել են որոշ լուրջ փոփոխություններ<sup>18</sup>։ Մասնավորապես՝ հին սերնդի պետական պաշտոնյաներին փոխարինել են երիտասարդներով, լուծարել են որոշ գերատեսչություններ կամ միավորել դրանք<sup>19</sup>, հիմնել են նոր ինստիտուտներ (*Valiyev & Valehli 2022, 104-105*): Սակայն այս ամենը բավարար չի եղել բարելավելու դիրքերը, խուսափելու հետընթացից համաշխարհային այն ինդեքսներում, որոնք ՔԳԻ և վերջնարդյունքում նաև ՔՀԿԻ ձևավորող կարևոր բաղադրիչներից են: Օրինակ, որևէ փոփոխություն տեղի չի ունեցել քաղաքական իրավունքների չափման սանդղակում, և 2018-2021 թթ.-ին ևս Ադրբեջանը շարունակել է մնալ որպես անազատ երկիր՝ արձանագրելով հնարավոր ամենավատ ցուցանիշը, որն առաջին անգամ գրանցել է 2015 թ. (*Freedom House, 2019; 2020; 2021, 2022*): Քաղաքացիական ազատությունների մասով 2018-2020 թվականներին որևէ դրական առաջընթաց չի արձանագրվել, իսկ 2021 թ. դրությամբ, նախորդ տարիների համեմատ, իրավիճակն ավելի է վատացել (*Freedom House 2022*): Մամուլի ազատության չափման համաշխարհային սանդղակում 2018-2021 թթ. Ադրբեջանը աշխարհի պետությունների շարքում եղել է 163-168 տեղերում (*PFI 2018-2021*)՝ գրեթե ամեն հերթական տարում գրանցելով հետընթաց<sup>20</sup>:

<sup>18</sup> 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը այդ շրջանում ամենաբարձր ազդեցությունն է ունեցել ադրբեջանական իշխանությունների ներքին քաղաքականության վրա, և նախաձեռնված բարեփոխումները ևս մեծապես պայմանավորված են եղել այդ հեղափոխության՝ Ադրբեջանի քաղաքական ղեկավարության համար հարուցած խնդիրներով ու մարտահրավերներով:

<sup>19</sup> Օրինակ, Էկոմոնոմիկայի նախարարությունը միավորվել է հարկերի նախարարության և պետական գույքի կոմիտեի հետ:

<sup>20</sup> Մամուլի ազատությամբ Ադրբեջանը 180 պետությունների շարքում 2018 թ. եղել է 163-րդ տեղում, 2019 թ.՝ 166-րդ տեղում, 2020 թ.՝ 168-րդում, 2021 թ.՝ 167-րդ տեղում (տե՛ս Մամուլի ազատության ցուցիչները 2018-2021 թթ.): Համեմատության համար նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը եղել է համապատասխանաբար 80-րդ, 61-րդ (2019 և 2020) և 63-րդ տեղերում:

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

Ք<sub>ԳԻ</sub> ձևավորող բաղադրիչներից թվարկված բացասականների կողքին 2018 թ. համեմատ՝ 2019 թ.-ին 5 միավորանոց դրական տեղաշարժ է արձանագրվել Կոռուպցիայի ընկալման ինդեքսում (*TICPI 2018, 2019*):

Թեև Ք<sub>ԳԻ</sub> ձևավորող բաղադրիչներից տնտեսական ազատության ոլորտում 2016 թ. սկսված դրական տեղաշարժերը շարունակվել են նաև 2018-2020 թթ. ընթացքում, սակայն 2021 թ. տեղի է ունեցել կտրուկ բացասական փոփոխություն: Այսպես, օրինակ, եթե «Heritage» հիմնադրամի՝ տնտեսական ազատության տարեկան ինդեքսներում Ադրբեջանը առավելագույն դրականի համար 100 միավորով գնահատվող սանդղակում 2020 թ. գրանցել է 70.1 միավորանոց արդյունք, 2021 թ. դա նվազել է՝ հասնելով 61.6-ի (2015-2021 թթ. արդյունքները ՀՀ հետ համեմատությամբ տե՛ս Աղ. 2-ում):

**Աղյուսակ 2**

**ՀՀ և Ադրբեջանի տնտեսական ազատությունների ինդեքսը (2015-2021) ըստ Heritage foundation կազմակերպության**

Տարեթիվ	Ադրբեջան	Հայաստան
2015	60.2	67.1
2016	63.6	67
2017	64.3	70.3
2018	65.4	68.7
2019	69.3	67.7
2020	70.1	70.6
2021	61.6	71.9

COVID-19 համաճարակի դեմ պայքարը, որն Ադրբեջանում սկսվեց 2020 թ. հունվարից, զգալիորեն ազդեց 2019 թ. սկսված կառավարման համակարգի արժանատական բարեփոխումների վրա, քանի որ գործող իշխանությունը, վախենալով ներքին ապակայունացումից և համակարգի կայունության խաթարումից, առժամանակ հրաժարվեց դրա խորքային փոփոխություններից (*Valiyev & Valehli 2022, 104*): 2020 թ. հունվարի 30-ին Ադրբեջանի կառավարությունը հրապարակում է COVID-19-ի տարածումը կանխելու գործողությունների ծրագիր և ստեղծում միջոցառումների համակարգման աշխատանքային խումբ, իսկ արդեն գարնանը՝ մարտի 19-ին, Ալիևի հրամանով Ադրբեջանում ուժեղացվում են համավարակի դեմ հա-

կազդող միջոցառումները, և սահմանվում է կարանտինային հատուկ ռեժիմ, որը ներառում էր սահմանների փակում<sup>21</sup>, Ադրբեջան մուտք գործող անձանց մեկուսացում, զանգվածային հավաքների արգելում, ներքին տեղաշարժերի սահմանափակում, ռեստորանների և հանրային որոշ այլ օբյեկտների, օդանավակայանների և տրանսպորտային հանգույցների փակում, սոցիալական հեռավորության պահպանման պարտադիրություն և հանրային տարածքների ախտահանում (*Valiyev & Valehli 2022, 105-106*)<sup>22</sup>:

Ընդհանուր առմամբ, COVID-19 համաճարակը ոչ միայն ավելի խորացրեց Ադրբեջանում սոցիալական խնդիրները հատկապես աղքատ և աղքատության շեմին մոտ գտնվող հասարակական խավերի շրջանում, այլ նաև ցույց տվեց գործող համակարգի՝ ճգնաժամային կառավարման ոլորտում առկա բացերը, մասնակի անկարողությունը և դիմադրողականության ցածր մակարդակը: Դրանք հատկապես սուր դրսևորվեցին առողջապահության, կրթության, սոցապահության, տնտեսության և դրա ոչ նավթահեն հատվածի և սրանց հարակից մի շարք այլ ոլորտներում (*Valiyev & Valehli 2022*):

Կորոնավիրուսի ակտիվ շրջանում, երբ կարանտինային սահմանափակումները հասել էին իրենց գագաթնակետին, ադրբեջանական իշխանությունները չկարողացան խուսափել նաև զանգվածային բռնություններից, սեփական բնակչության դեմ ոստիկանական բիրտ ուժ կիրառելուց, ինչպես նաև զանգվածային ձերբակալություններից և կարանտինի պայմաններում ճգնաժամային կառավարման ապաշնորհության պատճառով առաջացած հանրային դժգոհությունների խորացումից (*JAMnews 2020a, 2020b*):

2020 թվականին Ադրբեջանում տեղի ունեցած զանգվածային ցույցերը և անհնազանդությունները ՔՀԿԻ Ք<sub>ԳԻ</sub> վրա ազդած ակնառու ցուցիչներ են,

<sup>21</sup> Ցամաքային սահմանների փակ ռեժիմը շարունակվել է նաև 2021-2022 թթ. գրեթե ողջ ընթացքում, որը դժգոհության մեծ ալիք է առաջացրել հատկապես Ադրբեջանից դուրս, մասնավորապես Թուրքիայում ուսանողների, առողջական խնդիրներով ԻԻՀ այցելողների, վերջինիս հետ մանր առևտուր անող մերձսահմանային հատվածների բնակիչների շրջանում: Թուրքիայի և Իրանի հետ ցամաքային սահմանների փակ լինելը երկրի մյուս շրջանների հետ համեմատ դժգոհությունների ավելի մեծ ալիք է առաջացրել հատկապես Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում:

<sup>22</sup> Այդ նպատակների համար հատկացվել է երկու միլիարդ ԱՄՆ դոլար (*Valiyev & Valehli 2022, 105-106*):

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

որովհետև 1993 թ. ի վեր առաջին անգամ 2020 թ. հուլիսի 14-ի լույս 15-ի գիշերը ցուցարարները ներխուժում են խորհրդարանի շենք, և միայն ոստիկանական ուժի գործադրմամբ է հաջողվում նրանց հեռացնել այնտեղից: Ժամանակագրական առումով դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հուլիսի 12-21-ին Տավուշ–Թովուզի հատվածում ՀՀ և Ադրբեջանի ՁՈՒ-երի միջև ընթացած ինտենսիվ մարտական գործողությունների ժամանակ ադրբեջանական կողմը կորցնում է մի շարք բարձրաստիճան սպաների, այդ թվում՝ ՁՈՒ 3-րդ բանակային կորպուսի շտաբի պետ, գեներալ-մայոր Փոլադ Հաշիմովին: Կա տեսակետ, որ Ադրբեջանի իշխանությունները այդ ցույցերը խրախուսել են, սակայն մտավախություն ունենալով, որ հնարավոր է դրանք հակաիշխանական բնույթ ընդունեն, որոշել են ցրել ցուցարարներին (*Հովհաննիսյան 2020*): Սակայն ցուցարարների նկատմամբ հենց այդ գիշերվանից գործադրված ոստիկանական բռնի ուժի և հետագա հետապնդումների, հարցաքննությունների ու ձերբակալությունների փաստերը (*HRW 2021, Freedom House 2021*) հաշվի առնելով՝ ավելի իրատեսական է թվում, որ նշված ցույցերը հախուռն, տարերային և ոչ կազմակերպված բնույթ են ունեցել, որը կարող էր պայմանավորված լինել նաև իշխանությունների նկատմամբ տարիներով կուտակված դժգոհությունը ի ցույց դնելու մղումով, համաճարակային ճգնաժամի և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման ուղղակի և անուղղակի բացասական ազդեցություններով:

2020 թ. Ադրբեջանի քաղաքական կայունության վրա ազդած կարևոր գործոններից են նաև Ք<sub>ԳԻ</sub> կարևոր բաղադրիչ հանդիսացող պատերազմական գործողությունները: Հուլիս ամսին ՀՀ-Ադրբեջան սահմանի Տավուշ–Թովուզ հատվածում տեղի ունեցած բախումները և ռազմական գործողությունները<sup>23</sup> խիստ բացասական ազդեցություն են ունեցել Ադրբեջանի քաղաքական կայունության վրա, իսկ սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի ընթացքում և դրանից հետո քաղաքական համակարգի կայունությունն Ադրբեջանում ամրապնդվել է:

---

<sup>23</sup> Հուլիսյան բախումների ժամանակ Ադրբեջանի ՁՈՒ-ն պաշտոնապես հաստատել է, որ կորցել է առնվազն 12 զինծառայող, որոնց թվում են եղել նաև գեներալ-մայոր Փոլադ Հաշիմովը և գնդապետ Իլգար Միրզաևը (*Հովհաննիսյան 2020*):

Թուրքիայի աջակցությամբ պատերազմի հաջող ելքը և նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ նոր տարածքների զավթումը արմատապես փոխել են ներքաղաքական իրավիճակը և քաղաքական ուժերի հնարավորություններն Ադրբեջանում:

Ընդհանրապես, Արցախյան վերջին պատերազմը խորապես ազդել է ադրբեջանական հասարակության հայացքների և ազգային ինքնության վրա, իսկ հետպատերազմյան ներքին քաղաքականության առանցքը ձևավորվել է պատերազմի արդյունքներով պայմանավորված էական տեղաշարժերով (*Samadov 2021*): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ և դրանից անմիջապես հետո նախագահ Ալիևի վարկանիշը հասել էր իր գագաթնակետին: Ադրբեջանական հանրության ճնշող մեծամասնությունը հետևել է նրա հանրային ելույթներին, հարցազրույցներին, ակտիվ արձագանքել սոցցանցային գրառումներին և թվիթներին, տարածել դրանք (*Samadov 2021*): Թուրքիայի նախագահ Էրդողանի օրինակով Ալիևին ևս ամբողջ պատերազմի ժամանակ միջին վիճակագրական ադրբեջանցիները անվանում էին «Reis» (պետ, շեֆ), տարածում էին կոչեր, որ որպես միակ պաշտոնական և հավաստի աղբյուր՝ պետք է ընդունել միայն նախագահ Իլիամ Ալիևի թվիթները, ելույթներն ու հարցազրույցները: Պատերազմի հենց առաջին օրվանից Ադրբեջանի իշխանություններն արեցին ամեն ինչ համազգային միասնություն ապահովելու ուղղությամբ: Սեպտեմբերի 27-ին 50 կուսակցություններ ստորագրեցին համատեղ հայտարարություն «Ադրբեջանի դեմ հայկական սադրանքի» մասին (*AZERTAC 2020*)՝ պնդելով, որ հայկական կողմն է նախահարձակ եղել, ու թեև ցուցակում բացակայում էին արմատական ընդդիմությունը ներկայացնող «Ժողովրդական ճակատ» և «Մուսավաթ» կուսակցությունները, իսկ ցանկում տեղ գտած բազմաթիվ կուսակցություններ էլ գոյություն ունեն միայն անվանապես, այնուամենայնիվ դա ունեցավ դրական նշանակություն համազգային միասնություն ապահովելու հարցում: Ընդ որում, «Ժողովրդական ճակատ» և «Մուսավաթ» կուսակցությունները ձեռնպահ մնացին պատերազմի ժամանակ նախագահ Իլիամ Ալիևին քննադատելուց և հանդես եկան ազգային միասնության կոչերով՝ մի կողմից չցանկանալով հայտնվել լուսանցքում, մյուս կողմից հավաստիացնելով, որ ՀՀ և Արցախի դեմ քաղաքականության և հայատյացության հարցերում գործող իշխանու-

#### **Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

թյունների հետ համակարծիք են: Կուսակցությունների տարածած հայտարարությունը միակը չէր. ամենայն հավանականությամբ հենց իշխանությունների ցուցումով նրանց միացան նաև Ադրբեջանի՝ այսպես կոչված «ազգային համայնքների» ինքնակոչ առաջնորդները՝ ազգությամբ թալիշ Իմամվերդի Համիդովը, քուրդ Ահմադե Հափոն, լեզգի Իմրան Ռզակը, ավար Մահամմադ Նոսուր, ռուս Միխայիլ Զաբեյինը, կովկասյան պարսիկ (թաթ) Էլման Ահմադովը, լեռնային հրեա Միլիխ Եվդակը, ուտի Ռոբերտ Մոբիլին, հրեա Ալեքսանդր Շարովսկին, բուդուղ Ռաֆիգ Աբդուլլահը, թաթար Գյուլջան Միասաուրովան, մսխեթցի թուրք Իսմայիլ Ռահիմովը, ինգիլոյ Սևինջ Բուլաջովան և վրացի Ռաֆայել Գվալաձեն (*Medeniyet 2020*):

Ամբողջ պատերազմի ընթացքում իշխանական քարոզչության պարտադրած խոսույթի դեմ հանդես եկան միայն առանձին անհատներ, հիմնականում ֆեմինիստներ և այսպես կոչված՝ «պացիֆիստական» թևի ընդամենը 2-3 տասնյակի հասնող երիտասարդներ, որոնք իրենց սոցցանցային էջերում տարածում էին «Ոչ պատերազմին» կարգախոսը և կազմակերպում ստորագրահավաքներ: ՊԱԾ-ը առանձնապես չհետապնդեց նրանց<sup>24</sup> և բավարարվեց միայն հանրային պարսավանքով (*Samadov 2021*), որի ճնշման տակ սահմանափակվում էր ու անարդյունավետ դառնում այդ մարդկանց պայքարը:

Թեև 2020 թ.-ին, պայմանավորված հատկապես կորոնավիրուսային ճգնաժամով, նավթի գների անկմամբ, այնուհետև հուլիսյան պատերազմական գործողություններով, ցուցարարների՝ խորհրդարան ներխուժմամբ, դրան հաջորդած քաղաքական հետապնդումներով և Արցախյան 44-օրյա պատերազմով, ԱՀ ԲԳԻ-ում 2000-2021 թթ. ժամանակահատվածի չափմամբ

---

<sup>24</sup> ՊԱԾ-ը բավարարվել է միայն մի քանի հոգու՝ ֆեմինիստ Ն. Շահմարգադեին և «պացիֆիստ», երկար ժամանակ քաղաքանտարկյալի կարգավիճակով անազատության մեջ գտնված Գիյաս Իբրահիմին, կառույց հրավիրելով և այսպես կոչված «ռազմահայրենասիրական քարոզ» կարդալով: Բահրուզ Սամադովը ՊԱԾ նման մեղմ գործելակերպի համար առանձնացնում է երկու հիմնական պատճառ. «Ադրբեջանի ՊԱԾ-ը ճնշում է այն խմբերին, որոնք կարող են մարտահրավեր ներդրել պաշտոնական դիսկուրսին և մոբիլիզացնել մարդկանց, ինչպես օրինակ՝ Ժողովրդական ճակատ կուսակցությունը: [Այս դեպքում] մարզինալ այդ ծայրերը արժանացել են համադարձ արելության և չեն ունեցել մոբիլիզացնող որևէ ներուժ: Մյուս պարճառն այն էր, որ իշխանությունը չցանկացավ ընկնել արտասահմանյան լրատվամիջոցների լրացուցիչ ճնշման տակ» (*Samadov 2021*):

արձանագրվել է աննախադեպ անկում՝ արտահայտված  $-0.552$  ցուցանիշով (տե՛ս *Գծապատկերներ 1* և *2*, նաև *Աղյուսակ 1*), սակայն պատերազմի ավարտից հետո՝ 2021 թ. ողջ ընթացքում, Ադրբեջանի քաղաքական դաշտում տեղի են ունեցել նշանակալի տեղաշարժեր, որոնք հետևանքն են Արցախյան 44-օրյա պատերազմի թելադրած նոր իրողությունների: Նախ, Արցախյան երկրորդ պատերազմում տարած հաղթանակից հետո նախագահ Իլիամ Ալիևի ժողովրդականությունն ավելի բարձր է, քան երբևէ (*Samadov 2021*): Արմատական ընդդիմությունն այլևս կորցրել է անգամ սահմանափակ մոբիլիզացնող ներուժը: Եթե մինչև պատերազմը արմատական ընդդիմության (ԱԺԾԿ և «Մուսավաթ») հիմնական կոմանդ իշխանություններին մեղադրելն էլ Արցախի հիմնահարցում անգործության կամ ՀՀ հետ դավաճանական գործարքների մեջ, ապա նոր իրողությունների պայմաններում այդ թեզը ոչ միայն չի աշխատում, այլև ունի բացասական ազդեցություն ընդդիմության հանդեպ հասարակական վերաբերմունքի համատեքստում: Այդ հանգամանքը հաջողությամբ օգտագործում են նաև իշխանական քարոզչամեքենան և անձամբ ինքը՝ Իլիամ Ալիևը՝ ներկայանալով հաղթած առաջնորդ և քաղաքական գործիչ, որը կարողացել է ադրբեջանական ենթակայությանը վերադարձնել այն տարածքները, որոնք 1992-1993 թթ.-ին իբր դավաճանաբար հայկական կողմին են հանձնած եղել այդ տարիներին Ադրբեջանում իշխանություն կիսող «Մուսավաթ» և «Ժողճակատ» կուսակցությունները (*Aliyev 2021a, 2021b, 2021c, 2021d*)<sup>25</sup>: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ քաղաքական տարբեր դերակատարներ ընտրել են հատուկ ռազմավարություններ՝ նոր քաղաքական դաշտում արդիական մնալու համար:

<sup>25</sup> Ուշագրավ է, որ «Ժողճակատ» և «Մուսավաթ» կուսակցությունների դեմ Ադրբեջանի նախագահը մեղադրանքներ է հնչեցրել նաև Արցախյան 44-օրյա պատերազմի հենց առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին հրավիրած Անվտանգության խորհրդի նիստում՝ նշելով. «*Ղարաբաղյան տարածքները կորցնելու մեղավորները Ադրբեջանի «Ժողճակատ» և «Մուսավաթ» կուսակցություններն են: Մեր տարածքները բռնազավթվել են հենց նրանց իշխանության ժամանակ: Այդ տարածքները կորցրել ենք նրանց դավաճանական և անօգուտ գործունեության պատճառով: ... Մենք այսօր Ադրբեջանի վրայից սրբում ենք ԱԺԾ և «Մուսավաթ» կուսակցությունների թողած բիծը*» (*Aliyev 2020*).

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

Հետպատերազմական նոր իրողություններով պայմանավորված՝ արմատական ընդդիմությունը Ալիևի քաղաքական կոմպետենտությունը քննադատելու համար 2021 թ. սկսած օգտագործում է մեկ հիմնական թեզ, որը վերաբերում է Արցախում ռուսական խաղաղապահ ներկայությանը: Նրանց հիմնական փաստարկն այն է, որ հաղթանակն ամբողջական չէ, և Արցախում ՌԴ ռազմական ներկայությունը սպառնալիք է Ադրբեջանի ինքնիշխանությանը (*Samadov 2021*): Այս տեսակետը ուղիղ կապ ունի նաև Ադրբեջանի ներսում ընթացող գաղափարախոսական փոփոխությունների և ազգային ինքնության խորքային կերպափոխումների հետ: Թուրքիայի ակտիվ ներգրավվածությունը Արցախյան երկրորդ պատերազմում ուժեղացրել է Ադրբեջանում նաև թյուրքականության (*türkçülük*) գաղափարախոսության դիրքերը, որը բացահայտ գերիշխող է և շատ մեծ արագությամբ դուրս է մղում ադրբեջանականության (*azərbaycançılıq*) գաղափարախոսությունը: «Ադրբեջանականությունը» մեծ հաշվով խորհրդային քաղաքականության արտադրանքն է, և որի ամենաուժեղ ջատագովներից էր Հեյդար Ալիևը (*Ergun 2021*): Հեյդար Ալիևին և որդուն՝ Իլհամ Ալիևին, թյուրքականության գաղափարախոսության պաշտպանները կամ այսպես կոչված Ադրբեջանի ընդգծված ազգայնական, թուրքամետ ուժերը՝ ԱԺԿ-ն և «Մուսավաթը», համարում են «պրոռուսական դիրքորոշման կրողներ», «ՌԴ գործակալներ», «ՌԴ շահերը սպասարկողներ», և այժմ, երբ Իլհամ Ալիևի իշխանության ժամանակ Թուրքիան քաղաքական և ռազմական գործուն մասնակցություն ունեցավ Արցախյան վերջին պատերազմում, և Ադրբեջանի հանրության շրջանում թյուրքականության գաղափարախոսությունը դարձավ գերիշխող, արմատական ընդդիմությունը կանգնած է մեկ այլ լուրջ մարտահրավերի առաջ՝ ադրբեջանականության (պայմանական ռուսամետության) և թյուրքականության (պայմանական թուրքամետության, պանթյուրքական ազգայնականության) պայքարում թույլ չտալ Իլհամ Ալիևին հոր գաղափարախոսական գծից՝ ադրբեջանականությունից, անցում կատարել դեպի թյուրքականություն և թուլացած արմատական ընդդիմության ձեռքից խլել սրա վերջին խաղաքարտը՝ գաղափարականը: Այս է պատճառը նաև, որ ՌԴ խաղաղապահների՝ Արցախում տեղակայվելու հարցում արմատական ընդդիմության քննադատությունները Ալիևի հասցեին ստանում են առանձնակի սուր բնույթ և ընդհանուր առմամբ նաև



նպատակ են հետապնդում սեփական հանրության առաջ բացահայտելու Ալիևի «պրոռուսական» դեմքը, ներկայացնելու նրան որպես մի «ապերախտ» քաղաքական գործիչ, որը այդ ակնառու աջակցության համար ոչնչով չնորհակալ չի եղել Թուրքիային, այլ հակառակը՝ թույլ է տվել ՌԴ խաղաղապահների մուտքը իրենց տարածք:

Աստիճանաբար ուշքի եկող ընդդիմությունը 2021 թ. ընթացքում փորձել է նաև Ալիևի իշխանությունը քննադատելու այլ փաստարկներ գտնել. դրանք հիմնականում վերաբերում են սոցիալ-տնտեսական և այսպես կոչված «բարոյական» խնդիրներին, մասնավորապես գնաճին, աղքատությանը, գործազրկությանը, սոցիալական բևեռացվածության խորացմանը և նաև պատերազմի մասնակիցների ու սպանվածների ընտանիքների հանդեպ պետական անուշադրությանը, այդ շերտի կարիքների նկատմամբ անտարբերությանը, հոգաճության բացակայությանը: Այս քննադատությունները թեև երբեմն ստանում են նաև բավականին լայն հանրային արձագանք, սակայն ընդհանուր առմամբ չեն պարունակում այնպիսի ներուժ, որ վտանգեն գործող իշխանության և նրա առաջնորդ Իլհամ Ալիևի՝ պատերազմից հետո աննախադեպ ուժեղացած դիրքերը:

2021 թ. շարունակվել են նաև քաղաքական գործիչների հանդեպ բռնությունները (*Isayev 2021*), քաղաքական մոտիվացիաներով ձերբակալությունները, և դրանցից ամենաաղմկահարույցը, թերևս, «Քաղաքացի և զարգացում» կուսակցության առաջնորդ Ալի Ալիևի ձերբակալությունն էր, սակայն դրանք ԱՀ քաղաքական համակարգի կայունության վրա չնչին ազդեցություն անգամ չեն ունեցել:

Թեև Արցախյան երկրորդ պատերազմում ԱՀ իշխանությունները մեծապես օգտագործել են Ադրբեջանում բնակվող տեղաբնիկ ժողովուրդների մարդկային ռեսուրսը, սակայն պատերազմից հետո այդ ժողովուրդների ոտնահարված իրավունքների վերականգնման ուղղությամբ չի գրանցվել որևէ փոփոխություն. նրանց հանդեպ պետական վերաբերմունքը Ադրբեջանում շարունակում է մնալ նույնը: Ավելին, 2021 թ. փետրվար ամսվա սկզբում Լենքորան քաղաքում ձերբակալվել և ոստիկանական բաժանմունքներ են տարվել «Ուսանողական ուժային կառույց» կազմակերպության անդամ չորս թալիշ ուսանողներ, որոնք տեղի պետական համալսարանի ղեկավար կազմին ներկայացրած բարեփոխումների՝ 8 կետից բաղկացած

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

ծրագրում ներառել են նաև համալսարանում «Թալիշագիտություն» առարկա ներդնելու պահանջ: Համալսարանի ղեկավարությունը ուսանողներին մեղադրվել է «անջատողականության քարոզի» մեջ: Թալիշ ուսանողների ձերբակալության և ոստիկանական բաժանմունք տանելու փաստը դատապարտող հայտարարություն է տարածել Ադրբեջանի թալիշների հանրային խորհուրդը: Բացի այդ՝ տեղի ունեցածը խստորեն դատապարտել են նաև վտարանդի մի շարք թալիշ գործիչներ (Ալաքրամ Հումմաթով, Ջաբիլ Մահարամով, Աթախան Աբիլով և այլք) և արտերկրի թալիշական կազմակերպություններ (*Տոնոյան 2021թ*):

2021 թ. փետրվարի վերջին սոցիալական ցանցերի և առցանց տարբեր հարթակների միջոցով էթնիկական ճնշումների և խտրական վերաբերմունքի մասին են բարձրաձայնել նաև Ադրբեջանի հյուսիսում բնակվող լեզգիները, որոնց հայտարարություններից դատելով՝ անասնապահությամբ զբաղվող լեզգիներին հարկադրել են լքել Ուջարի և Ջարդաբի վարչական շրջանների միջև ընկած այն տարածքները, որոնք նրանք ավանդաբար օգտագործել են որպես ձմեռանոցներ (*Տոնոյան 2021թ*):

## **4.2 Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունության վրա ազդող տնտեսական գործոնները և դրանց առանձնահատկությունները**

ԱՀ քաղաքական համակարգի կայունության վրա ազդեցություն ունեցող Տնտեսական գործոնների ինդեքսը ( $S_{գր}$ ) ձևավորող տարբեր բաղադրիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի տնտեսության վրա շարունակաբար չափազանց մեծ դեր է խաղում նավթի գործոնը, և համաշխարհային շուկայում նավթի գնի տատանումները ուղղակի և անուղղակի ազդում են այդ երկրի տնտեսական իրավիճակի և քաղաքական համակարգի կայունության վրա:

Ադրբեջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վրա նավթի կտրուկ գնանկման ազդեցության և հետևանքների համեմատական վերլուծությունը (2015-2016 թթ. և 2020 թ.) ի հայտ է բերում պետության կողմից


դրանց արձագանքելու ձևերի ինչպես որոշակի տարբերություններ, այնպես էլ ուշագրավ ընդհանրություններ:

2015 թ. ընթացքում նավթի գների անկումը Ադրբեջանում ուղեկցվել է արտարժույթի նկատմամբ ազգային դրամի՝ ադրբեջանական մանաթի փուլային արժեզրկմամբ (դևալվացիա)<sup>26</sup>: Մասնավորապես, առաջին փուլով՝ 2015 թ.-ի փետրվարի 21-ին դոլարի նկատմամբ մանաթի արժեքը նախկին 0.7844-ից նվազել է մինչև 1.05, իսկ նույն տարվա դեկտեմբերի 21-ին հասել 1.55 ցուցանիշի: Արդյունքում, ըստ ԱՀ ԿԲ վիճակագրության, եթե 2014 թ.-ին 1 ամերիկյան դոլարի տարեկան միջին փոխարժեքը ըստ մանաթի եղել է 0.7844, ապա 2015-ին դարձել է 1.0261, 2016-ին՝ 1.5959, իսկ արդեն 2017-ին՝ 1.7001 (*Տնոյան 2018, 129*): Նավթի գնանկմամբ պայմանավորված դրամային դևալվացիային հաջորդել են ապրանքների գնաճը, բանկային համակարգի ճգնաժամը, սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումը, ապակենտրոն սոցիալական անհանգստությունները: 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը ժամանակային առումով տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ԱՀ ամբողջ տարածքով 2016 թ. հունվարից տեղի էին ունենում սոցիալական բողոքի ցույցեր:

2017-2019 թթ. թեև համաշխարհային շուկայում նավթի գների աճը և շուկայի կայունացումը հանգեցրել են նաև Ադրբեջանում տնտեսական իրավիճակի ժամանակավոր կայունացման, որը երևում է նաև այս հետազոտության ՏԳԻ-ում (տե՛ս *Գծապատկեր 3*), սակայն 2020 թ. իրավիճակը կրկին վատացել է (տե՛ս *Գծապատկեր 3*), որը պայմանավորված է նախևառաջ COVID-19 համաճարակով, ապա նաև դրա հետևանքով նավթի համաշխարհային շուկայում արձանագրված գնային կտրուկ անկմամբ և շարունակական տատանումներով:

<sup>26</sup> Մանաթի փոխարժեքը կայուն պահելու համար Ադրբեջանի Կենտրոնական բանկը 2015 թ. ընթացքում ծախսել էր մոտ 7 մլրդ դոլար, որի հետևանքով ԿԲ ռեզերվները մեկ տարվա ընթացքում 13.8 մլրդ դոլարից հասել էին 6.8 մլրդ դոլարի: Այդ պատճառով էլ Ադրբեջանի ԿԲ-ն իր հաշվին մնացած պահուստային ռեզերվն ամբողջապես չսպառելու համար ստիպված էր անցնել մանաթի «լողացող փոխարժեքի» քաղաքականության՝ տեղի տալով դոլարի նկատմամբ մանաթի փուլային արժեզրկմանը (*Տնոյան 2018, 129*):

**Ադրբեջանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2021)\***



Այն, որ 2020 թվականին Ադրբեջանի քաղաքական կայունությունը ձևավորող երեք հիմնական ինդեքսներն ունեցել են խիստ ընդգծված բացասական ազդեցություն  $\rho_{\text{ԳԻ}}$  կորի վրա (տե՛ս Գծապատկեր 2), պայմանավորված է ոչ միայն COVID-19 համաճարակի հարուցած կառավարման ճգնաժամով, այլ նաև հիմնականում դրա հետևանքով համաշխարհային շուկայում նավթի գնի կտրուկ անկմամբ, ուստի և՛ ֆինանսական հոսքերի նվազմամբ: Ընդ որում, նավթագազային սեկտորն Ադրբեջանի տնտեսության մեջ ունի շոշափելի տեսակարար կշիռ և նաև մեծ ազդեցություն նույնիսկ տնտեսության ոչ նավթային սեկտորի վրա<sup>27</sup>: Եթե 2018 թ. համաշ-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

<sup>27</sup> Վերջին տասնամյակներին բնական ռեսուրսների վաճառքից կուտակվող մեծ եկամուտների շնորհիվ Ադրբեջանը թեև բարձր տնտեսական աճ է գրանցել, սակայն 2014 թվականից սկսած՝ նավթի գնանկման պատճառով առաջացած բարդությունները վկայում են, որ Ադրբեջանի տնտեսությունը մեծապես կախված է էներգակիրներից: Հետազոտությունները ցույց են տալիս՝ Ադրբեջանի դեպքում առկա է էական գծային կապ համաշխարհային շուկայում նավթի գնի տատանումների և

խարհային շուկայում նավթի միջին գինը մեկ բարելի համար եղել է 69.78 ԱՄՆ դոլար, 2019 թ.՝ իջել 64.04-ի, ապա 2020 թ. այն անկում է ապրել՝ հասնելով մինչև 41.47 ԱՄՆ դոլարի (*Statista 2022*)՝ ընդ որում գրանցելով խիստ կտրուկ տատանումներ նույն տարվա տարբեր ամիսների ընթացքում: Օրինակ, 2020 թ. ապրիլի 24-ին մեկ բարելը կազմել է 16.94 ԱՄՆ դոլար, հուլիսի 2-ին՝ 40.65, իսկ սեպտեմբերի 25-ին՝ 40.25 ԱՄՆ դոլար (*Macrotrends 2022*):

Ուշագրավ է, որ 2020 թ. գարնանը բազմաթիվ փորձագետներ կանխատեսում էին, որ Ադրբեջանում տեղի է ունենալու մանաթի հերթական արժեզրկում: Եվ այս առումով ադրբեջանական իշխանությունները, հավանաբար նաև աչքի առաջ ունենալով 2015-2016 թթ. փորձը, դրա սոցիալ-տնտեսական հետևանքները և դրանցից բխող՝ Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունությանը սպառնացող գործոնները, ԿԲ պահուստային ֆոնդերի և ԱՊՆՀ միջոցների հաշվին ամեն ինչ արեցին՝ թույլ չտալու մանաթի հերթական արժեզրկում: Եվ իզուր չէ, որ մոտավորապես 40-45 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ ակտիվներ ունեցող ԱՊՆՀ-ն համարվում է Ադրբեջանի «անվտանգության բարձիկը» (*Федоровская 2021, 180-181*): Թեև նավթի գների անկմանը արձագանքելու Ադրբեջանի քաղաքական ղեկավարության մոտեցումները 2015 և 2020 թվականներին եղել են տարբեր, սակայն երկու դեպքում էլ Ադրբեջանը հրահրել է պատերազմ:

2020 թվականը կտրուկ անկումային է եղել Ադրբեջանի համար նաև  $S_{\text{ԳԲ}}$  բաղադրիչներից առևտրաշրջանառության ոլորտում, որը, 2019 թ. համեմատ, նվազել է 36.54%-ով՝ 33 միլիարդ 302 միլիոն ԱՄՆ դոլարից իջնելով մինչև 24 միլիարդ 464 միլիոնի<sup>28</sup>: Հաջորդ տարում՝ 2021 թ., իրավիճակը

Ադրբեջանի տնտեսական ակտիվության միջև՝ միաժամանակ նաև ոչ նավթային սեկտորում, քանի որ նավթային եկամուտների կտրուկ նվազումը սահմանափակում է տնտեսության մյուս ճյուղերը սուբսիդավորելու կառավարության կարողությունները: Հետևաբար, նավթազագային հատվածի ցնցումները (անկումներ կամ վերելքներ) առաջացնում են նաև ոչ նավթային հատվածում համապատասխան ցնցումներ՝ անկումներ կամ վերելքներ: Ընդ որում, ըստ տնտեսական բազմապլան հետազոտություններով ստացված տվյալների՝ բացասական ցնցումները ավելի են ազդում Ադրբեջանի տնտեսության վրա, քան նավթի գնի դրական տատանումները՝ տնտեսական աճի վրա (*Zulfugarli 2020*):

<sup>28</sup> Տվյալները վերցված են Ադրբեջանական Հանրապետության վիճակագրության պետական կոմիտեից (մանրամասն տե՛ս <https://stat.gov.az.source.trade.?lang=en>):

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

կայունացել է. մասնավորապես՝ մոտ 33 միլիարդ 902 միլիոն ԱՄՆ դոլարի առևտրաշրջանառությունը ընդհանուր առմամբ դրական է ազդել նաև ՏԳԻ 2021 թ. պատկերի վրա (տե՛ս *Գծապատկեր 3*): Համեմատական վերլուծության համար պետք է նշել, որ վերջին 15 տարիների ընթացքում ամենացածր արդյունքը չափման այս դաշտում եղել է 2016 թ.-ին (2 միլիարդ 214 միլիոն ԱՄՆ դոլար), իսկ ամենաբարձրը՝ 2011 թ.-ին (44 միլիարդ 661 միլիոն ԱՄՆ դոլար), որը համընկնում է Ադրբեջանում նավթային բարձր եկամուտներ ստանալու ամենաձաղկուն շրջանի հետ: Առևտրաշրջանառության ծավալները մոտավորապես նույնական են Արցախյան քառօրյա պատերազմի տարվա՝ 2016 թ., նախորդ՝ 2015 թ. (25 միլիարդ 360 միլիոն), հաջորդ՝ 2017 թ. (24 միլիարդ 189 միլիոն) և Արցախյան 44-օրյա պատերազմի տարվա՝ 2020 թ. (24 միլիարդ 464 միլիոն) դեպքում<sup>29</sup>:

Պատերազմական 2016 և 2020 թվականների միջև որոշակի ընդհանրություն կա նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի առումով: 2016 թ. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով եղել է 14.371, իսկ 2020 թ.՝ 14.478 ԱՄՆ դոլար<sup>30</sup>: Համեմատության համար նշենք, որ 2014 և 2015 թթ. այն եղել է համապատասխանաբար 17.443 և 14.938, իսկ 2019 և 2021 թթ.՝ համապատասխանաբար 15.051 և 15.842 ԱՄՆ դոլար<sup>31</sup>:

2000-2021 թթ. ընթացքում, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, ԱՀ-ում շոշափելի գնաճ է գրանցվել երկու անգամ՝ 2007-2008 թթ. (համապատասխանաբար 16.6% և 20.8%) և 2016-2017 թթ. (12.4% և 12.9%)<sup>32</sup>: Առաջին դեպքում պատճառը համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր, երկրորդ դեպքում՝ նավթի համաշխարհային շուկայում գների անկումը և դրա պատճառով Ադրբեջանում մանաթի փուլային արժեզրկումը: Թեև, 2018-2020 թթ. ընթացքում, ըստ Համաշխարհային բանկի տվյալների,

---

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>30</sup> Տվյալները վերցված են Համաշխարհային բանկի պաշտոնական կայքից (մանրամասն տե՛ս GDP per capita, PPP (current international \$) - Azerbaijan | Data (worldbank.org)):

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>32</sup> Մանրամասն տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում (<https://data.worldbank.org/indicator.FP.CPI.TOTL.ZG?locations=AZ>):

գնաճն Ադրբեջանում չի անցել անգամ 3%-ը<sup>33</sup>, սակայն թե՛ իրական ընդդիմությունը, թե՛ հանրային լայն զանգվածները թերահավատ են պաշտոնական վիճակագրության նկատմամբ. այդ տարիներին Ադրբեջանում իրական գնաճի թեման եղել է արդիական և հանրային բողոքի մշտական աղբյուր: 2021 թ., դարձյալ ըստ Համաշխարհային բանկի տվյալների, գնաճը Ադրբեջանում, նախորդ տարիների համեմատ, աճել է ավելի քան 2.5 անգամ՝ կազմելով 6.7 տոկոս: Ինչպես նշված տարիների դեպքում, 2021 թ. տվյալների հանդեպ ևս դրսևորվել է հանրային խորը թերահավատություն, մանավանդ որ 2021 թ. նոյեմբերի 12-ին Ադրբեջանի կենտրոնական բանկը հայտարարել էր, որ մինչև տարեվերջ տարեկան գնաճն այդ երկրում կազմելու է մոտ 11.4-11.9% (*Marja 2021*):

Թերևս COVID-19 համաճարակով և դրա հետևանքներով պայմանավորված՝ Ադրբեջանի պետական բյուջեն<sup>34</sup> 2020 թ. ունեցել է 2.4 % պակասուրդ, որն ամենավատ ցուցանիշն է 2000-2021 թթ. ընթացքում: Համեմատության համար նշենք, որ պատերազմական 2016 թ.-ին այն եղել է -0.4%, իսկ հետպատերազմական՝ 2017 թ.՝ -1.6%: 44-օրյա պատերազմին նախորդած երկու տարիների (2018 և 2019) ընթացքում բյուջեի պակասուրդը, 2020 թ. համեմատ, եղել է համապատասխանաբար 6 և 8 անգամ քիչ՝ կազմելով 0.4% և 0.3% (*Tradingeconomics 2022*):

<sup>33</sup> 2018 թ. եղել է 2.3%, 2019 թ.-ին՝ 2.6%, իսկ 2020 թ. 2.8% (տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում՝ <https://data.worldbank.org/indicator.FP.CPI.TOTL.ZG?locations=AZ>):

<sup>34</sup> Ադրբեջանում պետական բյուջեն կոչվում է կոնսոլիդացված, քանի որ ձևավորվում է ոչ միայն հարկերից ու մաքսատուրքերից, այլ նաև՝ ԱՊՆՀ միջոցներից, իսկ հաճախ նաև վերանայվում է տարվա կեսին՝ պայմանավորված նավթի համաշխարհային գների տատանումներով և նախնական հաշվարկների փոփոխմամբ:


### 4.3 Սոցիալական գործոնները և դրանց ազդեցությունը Ադրբեջանի քաղաքական կայունության վրա

2000-2021 թթ. ընթացքում քաղաքական համակարգի կայունության վրա էական ազդեցություն ունեցող երեք ինդեքսներից ( $P_{\text{ԳԻ}}$ ,  $S_{\text{ԳԻ}}$ ,  $U_{\text{ԳԻ}}$ )  $U_{\text{ԳԻ}}$ -ն Ադրբեջանի դեպքում էական բացասական դինամիկա է դրսևորել 2015 և 2016 թվականներին՝ մասամբ պայմանավորված արդեն վերևում նշված որոշ գործոնների, մասնավորապես համաշխարհային շուկայում նավթի գնանկման, մանաթի արժեզրկման, գնաճի և այլնի հարուցած հետևանքներով (իրական աշխատավարձերի էական նվազում, սոցիալական վիճակի կտրուկ վատացում, սոցիալական բևեռացվածության խորացում, հանցագործությունների աճ և այլն): Սակայն, ի տարբերություն  $P_{\text{ԳԻ}}$  և  $S_{\text{ԳԻ}}$  ձևավորող որոշ կարևոր բաղադրիչների, որոնցում 2015-2016 և 2020 թվականները՝ որպես նավթի կտրուկ գնանկում գրանցած և պատերազմական տարիներ, դրսևորվել են գրեթե նույնական միտումներով,  $U_{\text{ԳԻ}}$  դեպքում նմանատիպ համընկնումներ գրեթե չկան: Դա պայմանավորված է մի կողմից ադրբեջանական իշխանությունների՝ 2020 թ. ճգնաժամային իրավիճակում իրականացրած սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձնահատկություններով և հատկապես դրամի արժեզրկումը կանխելու հարցում ցուցաբերած համառությամբ, համաճարակի պայմաններում բնակչության գրեթե բոլոր շերտերին և հասարակական տարբեր խմբերին մեծ չափերի ֆինանսական նպաստ հատկացնելով, մյուս կողմից՝ Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած հեղափոխությունից հետո որպես կանխարգելիչ արձագանք՝ տարբեր ոլորտներում նախաձեռնած խորքային բարեփոխումներով (պետական կառավարման համակարգի օպտիմալացում և երիտասարդացում, կոռուպցիայի դեմ պայքար, բիզնեսի որոշակի ազատականացում, առողջապահական և կրթական համակարգի բարեփոխումներ (*Samadov 2021*) և այլն): Այս ամենը դրական ազդեցություն է ունեցել հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածներում ոչ միայն սոցիալական կայուն իրավիճակ ապահովելու, այլ հանրության լայն շրջանում հակաիշխանական և ընդդիմադիր տրամադրությունները մեղմելու, իշխանությունների բարեփոխումների նկատմամբ որոշակի լավատեսություն ձևավորելու առումով:



Գծապատկեր 4

Ադրբեջանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2021)\*



Այս ուսումնասիրության մեջ քննության առարկա ժամանակահատվածում (2000-2021 թթ.) ԱՀ ԲՀԿԻ Ս<sub>ԳԻ</sub> բաղադրիչներից Մարդկային զարգացման համաթիվը (ՄՀՀ)<sup>35</sup> մշտապես ունեցել է փոփոխության դրական դինամիկա, և միակ բացառությունը եղել է համաճարակային և պատերազմական 2020 թ., երբ արձանագրվել է ՄՀՀ նկատելի անկում: Մասնավորապես, եթե 2000 թ. ՄՀՀ-ն եղել է 0.622 միավոր, որը, շարունակաբար աճելով, 2019 թ. հասել է 0.761-ի, ապա 2020 թ. այն նվազել է՝ հասնելով 0.730-ի, և գրեթե նույնական դարձել 2011 թ. ցուցանիշի հետ (0.729)<sup>36</sup>: 2021 թ. Ադրբեջանում այնուամենայնիվ արձանագրվել է նորից դրական դինա-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

<sup>35</sup> Մարդկային զարգացման ինդեքսն ամեն տարի պատրաստում և հրապարակում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը: Այն կազմվում է մարդու կյանքի որակի վրա էական նշանակություն ունեցող տարբեր գործոնների, այդ թվում՝ տնտեսական վիճակի, կրթական և առողջապահական համակարգերի վիճակի, 1 շնչին ընկնող եկամտի և այլնի հիման վրա:

<sup>36</sup> Տե՛ս ՄԱԿ Զարգացման ծրագրի պաշտոնական կայքը՝ <https://hdr.undp.org/data-center/specific-country-data#.countries.AZE>:

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

միկա, և ՄՁՀ-ն 2020 թ. 0.730-ից բարձրացել է և հասել 0.745-ի<sup>37</sup>: ՄՁՀ բաղադրիչներից մարդու կյանքի միջին տևողությունը եթե 2000 թ. եղել է 64.9 տարի, ապա մինչհամաճարակային 2019 թ. այն հասել է մինչև 73.1-ի: Համաճարակային 2020 թ.-ին այս ցուցանիշը կտրուկ անկում է ապրել. կյանքի միջին տևողությունը նվազել է՝ հասնելով 66.9-ի, և սա նույնպես, ընդհանուր առմամբ, ինչպես աշխարհի մյուս վայրերում<sup>38</sup>, այնպես էլ Ադրբեջանում բացասական է ազդել 2020 թ. ՄՁՀ-ի վրա:

Թեև 2020 թ. եղել է ճգնաժամային ամբողջ աշխարհում, այդ թվում և՛ Ադրբեջանում, իսկ վերջինի դեպքում, բացի COVID-19 համաճարակի մարտահրավերներից, նաև նավթի գներն են ընկել, և սկսվել է 44-օրյա պատերազմը, սակայն իրական աշխատավարձը զգալիորեն աճել է: Եթե 2016 թ. իրական աշխատավարձը Ադրբեջանում եղել է 277.34 ԱՄՆ դոլար, որը 37.57%-ով պակաս է նախորդ տարվա՝ 2015 թ.-ի՝ 444.25 ԱՄՆ դոլար ցուցանիշից, ապա 2020 թ. այն կազմել է 404.79 ԱՄՆ դոլար, որը 10.23%-ով գերազանցել է նախորդ տարվա՝ 2019 թ., 363.36 ԱՄՆ դոլար իրական աշխատավարձի չափը\*։ Դա, իհարկե, հնարավոր չէր լինի, եթե ԱՊՆՀ-ն իր միջոցների հաշվին չզուպեր մանաթի անկումը<sup>39</sup>, ինչը, բնականաբար, դրա-

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>38</sup> Հայաստանի Հանրապետությունում կյանքի միջին տևողությունը 2019 թ. եղել է 75.4, իսկ 2020 թ. իջել է 72.2-ի: Վրաստանում 2019 թ. այն եղել է 73.5, իսկ 2020 թ. համեմատաբար ավելի քիչ նվազմամբ դարձել 72.8: Բացասական փոփոխություն է տեղի ունեցել այս առումով նաև Ադրբեջանի հարևան մյուս երկրներում՝ ԻԻՀ-ում (2019 թ.՝ 76.1, 2020 թ.՝ 74.8 տարի), ՌԴ-ում (2019 թ.՝ 73.9, 2020 թ.՝ 71.3 տարի) և ԹՀ-ում (2019 թ.՝ 77.8, իսկ 2020 թ.՝ 75.9) (տե՛ս ՄԱԿ Զարգացման ծրագրի պաշտոնական կայքը՝ <https://hdr.undp.org/data-center/specific-country-data#.countries.TUR>):

\* Իրական աշխատավարձի հաշվարկները հեղինակին են, որոնք արվել են գլխ. խմբ. Ար. Ալեքսանյանի առաջարկած հաշվարկի մեթոդաբանությամբ:

<sup>39</sup> Այս առումով ուշագրավ է 2020թ. ամռանը նախագահ Իլհամ Ալիևի հրամանով Ադրբեջանի Կենտրոնական բանկի նախագահի պաշտոնում նշանակված էլման Ռուսթամովի՝ տարեկերջին՝ դեկտեմբերի 24-ին, կատարած հետևյալ հայտարարությունը. «Վերջին օրերին ադրբեջանական մանաթի արժեզրկման մասին լուրեր են պարփվում: Բայց դրա համար ոչ մի պարճառ չկա: Կոչ են անում մեր քաղաքացիներին չհավապալ նման լուրերին: Թեև 2020 թվականին համաաշխարհային շուկայում նավթի գներն անկայուն էին, սակայն Ադրբեջանի վճարային հաշվեկշիռը պահպանվեց: Երկրի արժույթային պահուստները կայուն են մնացել՝ ներկայումս 50 մլրդ ԱՄՆ դոլարի մակարդակում: Թեև տարվա ընթացքում նավթի գների զգալի անկումը անհանգստություն է առաջացրել արժույթային շուկայում, սակայն իրակա-

կան է ազդել Ադրբեջանի քաղաքական համակարգի կայունության պահպանման վրա և որոշակիորեն արտացոլվել նաև այդ երկրի ԲՀԿԻ 2020 թ. ընդհանուր պատկերում:

2020 թ. ՍԳԻ ձևավորող բաղադրիչների մի մասում տեղի ունեցած բացասական փոփոխություններից պետք է առանձնացնել աղքատության մակարդակի սանդղակում արձանագրված տեղաշարժերը: Ըստ ադրբեջանական պաշտոնական վիճակագրության՝ այդ երկրում աղքատության մակարդակը եղել է 6.2%, այնինչ դրա նախորդ տարում՝ 2019 թ., աղքատ է եղել բնակչության 4.8%-ը<sup>40</sup>: Թեև Ադրբեջանական պաշտոնական վիճակագրության՝ աղքատության և գործազրկության ցուցանիշները հասարակության, փորձագիտական ու մասնագիտական շրջանակներում կասկածներ են առաջացնում, այնուամենայնիվ դրանցում արձանագրվել է բացասական փոփոխություն: Ընդ որում, 2020 թ.-ին գրանցված աղքատության այդ մակարդակը 2000-2021 թթ.-ին որոշակիորեն համեմատելի է 2012 թ. ցուցանիշի հետ (6%)<sup>41</sup>, երբ սոցիալական խնդիրներով պայմանավորված՝ անհնազանդություններ են եղել Ադրբեջանի վարչական տարբեր շրջաններում՝ հատկապես իրենց ծավալով և սոցիալականից էթնիկականի վերաճելու միտումներով առանձնացող հյուսիսում՝ Ղուբայում (*Տոնոյան 2018, 113-114*): Ուշագրավ է, որ Ադրբեջանում 2006 թ.-ից տրվող պետական անվանական սոցիալական նպաստից օգտվողների և աղքատների թվաքանակի միջև տարբերությունը շոշափելի չի եղել միայն 2015 և 2016 թվականներին: Նախորդ երկու տարիներին՝ 2013-2014 թթ., այդ նպաստից օգտվողների թվաքանակը գերազանցել է աղքատների թվին, իսկ 2017-2020 թթ. այն էապես պակաս է եղել աղքատության մակարդակից (տե՛ս *Աղյուսակ 3*):

---

*նացված միջոցառումների արդյունքում ապահովվել է մանաթի փոխարժեքի կայունությունը» (Tribunainfo 2020):*

<sup>40</sup> Տվյալները վերցվել են Ադրբեջանական Հանրապետության Վիճակագրության պետական կոմիտեի կայքէջից (տե՛ս [https://stat.gov.az.source.budget\\_households.az.5.4.xls](https://stat.gov.az.source.budget_households.az.5.4.xls)):

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում:

**Աղյուսակ 3**

**ՊԱՍՆ (պետական անվանական սոցիալական նպաստ) ստացողների թվաքանակը և դրա՝ բնակչության թվաքանակի ու աղքատության մակարդակի հետ հարաբերակցությունը 2006-2020 թթ. (Veliyev 2022)**

Տարի	ՊԱՍՆ ստացածների թվաքանակ	ՊԱՍՆ ստացածների քանակը (%) բնակչության ամբողջ կազմի հարաբերությամբ	Աղքատության մակարդակը (%) ըստ ՎՊԾ	ՊԱՍՆ ստացածներ – աղքատության մակարդակ հարաբերակց. (%)
2006	218673	2.52	20.8	12.13
2007	364059	4.15	15.8	26.24
2008	749965	8.41	13.2	63.68
2009	657317	7.31	10.9	67.02
2010	552514	6.06	9.1	66.64
2011	541989	5.87	7.6	77.22
2012	589922	6.30	6.0	105.08
2013	625808	6.60	5.3	124.59
2014	415198	4.33	5.0	86.56
2015	451538	4.65	4.9	94.95
2016	558133	5.69	5.9	96.43
2017	326631	3.30	5.4	61.11
2018	174659	1.75	5.1	34.31
2019	298881	2.97	4.8	61.85
2020	323996	3.20	6.2	51.64

2020 թ. արդեն նշված պատճառներով Ադրբեջանում աճել է նաև գործազուրկների թիվը՝ հասնելով 6.6%-ի: Համեմատության համար նշենք, որ, ըստ Ադրբեջանի ՎՊԾ-ի, 2018 և 2019 թթ. գործազուրկները կազմել են 5.4%, 2014, 2015 և 2017 թթ.՝ 5.6%, իսկ 2016 թ.՝ 5.7%<sup>42</sup>:

Քննարկվող ժամանակահատվածում (2000-2021 թթ.) հանցագործությունների քանակ – բնակչության թվաքանակ հարաբերակցությամբ (1000 շնչին) կատարվող հաշվարկում ամենաբացասական նիշը գրանցվել է 2021 թ.-ին (3.01): Համեմատության համար ասենք, որ 2020 թ. այն եղել է 2.52, ինչը նշանակում է, որ հանցագործությունները Ադրբեջանում 2021 թ. ըն-


<sup>42</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի կայքում (<https://data.worldbank.org.indicator.SL.UEM.TOTL.ZS>):

թացքում բնակչության թվաքանակի հետ հարաբերակցության մեջ աճել են մոտավորապես 20%-ով: Եթե 2020 թ., ըստ Ադրբեջանի ՊՎԾ-ի, գրանցվել է 26004 հանցագործություն, ապա 2021 թ. դրանց թիվը հասել է 31131-ի<sup>43</sup>:

#### 4.4 Ադրբեջանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միտումները

Գծապատկեր 5

Ադրբեջանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2021 թթ.)<sup>\*</sup>



Ք<sub>ԳԻ</sub>, Տ<sub>ԳԻ</sub> և Ս<sub>ԳԻ</sub> հանրագումարով կատարված ՔՀԿԻ վերլուծությունը 2000-2021 թթ. ընթացքի համար ցույց է տալիս, որ 2001 թ.-ից հետո ԱՀ քաղաքական համակարգի կայունության համար ամենաճանաչատարաբան

<sup>43</sup> Մանրամասն տե՛ս Ադրբեջանի ՊՎԾ պաշտոնական կայքում, Azərbaycanla cinayətkarlığın əsas göstəriciləri [Ադրբեջանում հանցագործությունների հիմնական ցուցանիշները] <https://stat.gov.az.source.crimes>):

<sup>\*</sup> Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

տարին եղել է 2020 թ.՝  $-0.174$  միավորով (տե՛ս *Գծապատկեր 5*): Ընդ որում, սա պայմանավորված է եղել  $u'$   $S_{qH}$ , և՛  $P_{qH}$  գործոններով: Եթե առաջինի՝  $S_{qH}$  դեպքում էական է եղել COVID-19 համաճարակի հետևանքով նավթի համաշխարհային գների կտրուկ անկումը, ապա երկրորդի՝  $P_{qH}$  դեպքում՝ ռազմական գործողությունները (հուլիսի 12-21)՝ ՀՀ-Ադրբեջան սահմանի Տավուշ-Թովուզ ուղղությամբ, և Արցախյան 44-օրյա պատերազմը՝ (սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9):

Ուշագրավ է, որ գրեթե նույն օրինաչափությունն ենք նկատում նաև 2015 և 2016 թվականների ցուցանիշներում, երբ դարձյալ, համաշխարհային շուկայում նավթի գների անկմամբ պայմանավորված, որին հետևում են մանաթի փոխարժեքի արժեզրկում և սոցիալ-տնտեսական ճգնաժամ, ՔՀԿ ինդեքսում ընդհատվում է 2009-2014 թթ. բարձր դինամիկայի ու կայունության շրջանը, և 2015 թ. ՔՀԿ-ն իջնում է  $0.154$ , այն դեպքում, երբ դրա նախորդ տարում այն եղել էր  $0.216$ : Անկումը շարունակվում է նաև 2016 թ.՝ մինչև  $0.060$ ՝ արդեն  $P_{qH}$  գործոններով, մասնավորապես Ապրիլյան քառօրյա պատերազմով պայմանավորված: Երկու դեպքում էլ դրսևորվում են  $S_{qH}$  անկումից դեպի  $P_{qH}$  անկում և ապա՝ պատերազմ օրինաչափությունը ( $S_{qH} \rightarrow P_{qH} \rightarrow$  պատերազմ):

### **Գրականության ցանկ**

- Հայրապետյան, Տաթևիկ. 2017. «Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը», Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Արուսյակ Ս. Ալեքսանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 100-131:
- Հովհաննիսյան, Տարոն. 2020. «Հուլիսյան մարտեր. պատճառները և հնարավոր հետևանքները», «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոն, 29.07.2020 (վերջին մուտքը՝ 20.11.2022)՝ <https://orbeli.am/hy/post/517/2020-07-29/Հուլիսյան+մարտեր.+պատճառները+և+հնարավոր+հետևանքները>:
- Հունանյան, Վահան. 2016. «Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը», Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան,

Ուկրաինա, Մոլդովա, խմբ.՝ Արուսյակ Ս. Ալեքսանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 73-95:

- Վարդանյան, Ժաննա, Սոնա Սուքիասյան և Տարոն Հովհաննիսյան. 2018. «Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը երեկ և այսօր», Ադրբեջան. Ռազմա-քաղաքական հանդես, № 1, խմբ.՝ Կարեն Վրթանեսյան, Երևան, Զորակն ԳԿԵՀ, 141-166:
- Տոնոյան, Արտյոմ. 2018. «Ադրբեջանի քաղաքական կայունության գինը. Ժողովրդավարության հակոտնյաները», Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Արուսյակ Ս. Ալեքսանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 101-147:
- Տոնոյան, Արտյոմ. 2019. «Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. կարգախոս, թե՛ չափելի արժեք», Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները. ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Արուսյակ Ս. Ալեքսանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 101-144:
- Տոնոյան, Արտյոմ. 2021ա. «Սյունիքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունները և Նախիջևանի խնդրի ազդեցությունն այդ ամենի վրա», Դրօշակ. Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ, 75-րդ տարի, № 8 (1654), օգոստոս, 17-19:
- Տոնոյան, Արտյոմ. 2021բ. «Հետպատերազմական Ադրբեջանը. հայացք դեպի ներս», Դրօշակ. Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ, 75-րդ տարի, № 3 (1649), մարտ, 15-17:
- Лаврина, Анастасия. 2022. “Общенациональный лидер Гейдар Алиев– основоположник политической стабильности в Азербайджане”. Азербайджанское государственное информационное агентство «Азертадж», 03.09.2022. Дата доступа: 11.11.2022. <https://azertag.az/ru/print/2277140>.
- Тренд. 2022. “Президент Ильхам Алиев: Политическая и экономическая независимость позволила нам строить свою жизнь так, как считаем нужным”. Информационное агентство Тренд, 27.05.2022. Дата доступа: 12.11.2022. <https://www.trend.az/azerbaijan/politics/3601575.html>.
- Федоровская, Ирина. 2021. “COVID и экономика Азербайджана”. Россия и новые государства Евразии, № II (LI), 180-188. doi: 10.20542.2073-4786-2021-2-180-188.
- Aliev, Arif. 2013. “Ismayilli: The Winter of Our Alarm.” Caucasus Analytical Digest, No. 46, February, pp. 4-8. Accessed November 11, 2022. <https://css.ethz.ch/content/dam/ethz/special-interest/gess/cis/center-for-securities-studies/pdfs/CAD-46-4-8.pdf>.
- Aliyev, Ilham. 2012. “Speech by Ilham Aliyev at the reception to mark the 20th anniversary of the establishment of the “Yeni Azerbaijan Party””. Official website of the President of the Republic of Azerbaijan. November 16. Accessed November 12, 2022. <https://president.az/en/articles/view/6667>.

#### **Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները**

---

- Aliyev, İlham. 2020. “İlham Aliyev chaired a Security Council meeting”. Official website of the President of the Republic of Azerbaijan. September 27. Accessed November 22, 2022. <https://president.az/en/articles/view/40969>.
- Aliyev, İlham. 2021a. “İlham Aliyev received Aydın Karimov in a video format on his appointment as Special Representative of President in the Shusha district”. Official website of the President of the Republic of Azerbaijan. January 27. Accessed November 22, 2022. <https://president.az/en/articles/view/50399>.
- Aliyev, İlham. 2021b. “İlham Aliyev and first lady Mehriban Aliyeva visited Fuzuli, Zangilan, Lachin and Jabrayil districts”. Official website of the President of the Republic of Azerbaijan. February 14. Accessed November 22, 2022. <https://president.az/en/articles/view/50632>.
- Aliyev, İlham. 2021c. “Opening speech by İlham Aliyev at the 7th Congress of New Azerbaijan Party”. Official website of the President of the Republic of Azerbaijan. March 05. Accessed November 22, 2022. <https://president.az/en/articles/view/50805>.
- Aliyev, İlham. 2021d. “İlham Aliyev was interviewed by Azerbaijan Television”. Official website of the President of the Republic of Azerbaijan. May 10. Accessed November 22, 2022. <https://president.az/en/articles/view/51454>.
- Azadliq. 2019. “Parlament seçkiləri bu tarixdə keçiriləcək” [Ո՞ր օրն են անցկացվելու խորհրդարանական ընտրությունները]. Azadliq radiosu, December 05. Accessed November 15, 2022. <https://www.azadliq.org.a.millimeclis-secki.30302794.html>.
- Azernews. 2021. “Azerbaijan led by President İlham Aliyev recognized in world as country of political stability, tolerance - Speaker of Azerbaijani Parliament”. Azernews Information Agency. December 25. Accessed November 12, 2022. <https://www.azernews.az/nation/187369.html>.
- AZERTAC. 2020. “Azerbaijan’s political parties issue joint statement on Armenian provocation against Azerbaijan”. The Azerbaijan State News Agency (AZERTAC). September 27. Accessed November 15, 2022. <https://azertag.az/en/print/1596575>.
- Aztoday. 2021. “Əli Həsənovun qızı işdəən çıxarıldı” [Ալի Հասանովի աղջիկը աշխատանքից հեռացվեց]. Aztoday informasiya agentliyi, August 25. Accessed November 11, 2022. <https://aztoday.az.news.158449.html>.
- Chivers, Christopher. 2005. “Police Break Up Peaceful Demonstration in Azerbaijan”. The New York Times. November 27. Accessed November 11, 2022. <https://www.nytimes.com.2005.11.27.world.asia.police-break-up-peaceful-demonstration-in-azerbaijan.html>.
- DW. 2018. “ОБСЕ заявила о нарушениях на выборах в Азербайджане”. Deutsche Welle, 12.04.2018. Дата дотупа: 14.11.2022. <https://p.dw.com/p/2vuVj>.
- Ergun, Ayça. 2021. “Citizenship, National Identity, and Nation-Building in Azerbaijan: Between the Legacy of the Past and the Spirit of Independence.” Nationalities Papers. Vol. 50, Issue 4, pp. 813-830. doi:10.1017.nps.2020.81.



- Freedom House. 2019. “Freedom in the World 2018: Azerbaijan.” Freedom House international human rights organization. Accessed November 11, 2022. <https://freedomhouse.org.country.azerbaijan.freedom-world.2019>.
- Freedom House. 2020. “Freedom in the World 2019: Azerbaijan.” Freedom House international human rights organization. Accessed November 11, 2022. URL: <https://freedomhouse.org.country.azerbaijan.freedom-world.2020>.
- Freedom House. 2021. “Freedom in the World 2020: Azerbaijan.” Freedom House international human rights organization. Accessed November 11, 2022. <https://freedomhouse.org.country.azerbaijan.freedom-world.2021>.
- Freedom House. 2022. “Freedom in the World 2021: Azerbaijan.” Freedom House international human rights organization. Accessed November 11, 2022. <https://freedomhouse.org.country.azerbaijan.freedom-world.2022>.
- Həmid, Tural. 2022a. “Naxçıvan Muxtar Respublikası Heydər Əliyevin hakimiyyəti illərində (1-ci hissə)” [Նախիջևանի ինքնավար հանրապետությունը Հեյդար Ալիևի իշխանության տարիներին (մաս 1)]. Azlogos – Dünya azərbaycanlılarının intellektual platforması, 15.06.2022 (վերջին մուտքը՝ 12.11.2022)՝ <https://azlogos.eu.naxcivan-muxtar-respublikasi-heyder-aliyevin-hakimiyyeti-illərində-1-ci-hissə>.
- Həmid, Tural. 2022b. “Naxçıvan Muxtar Respublikası Heydər Əliyevin hakimiyyəti illərində, 1991-1993 (2-ci hissə)” [Նախիջևանի ինքնավար հանրապետությունը Հեյդար Ալիևի իշխանության տարիներին, 1991-1993 (մաս 2)], Azlogos – Dünya azərbaycanlılarının intellektual platforması, 24.06.2022 (վերջին մուտքը՝ 12.11.2022)՝ <https://azlogos.eu.naxcivan-muxtar-respublikasi-heyder-aliyevin-hakimiyyeti-1991-1993-illərində-2-ci-hissə>.
- Həmid, Tural. 2022c. “Naxçıvan Muxtar Respublikası Heydər Əliyevin hakimiyyəti illərində, 1991-1993 (3-cü hissə)” [Նախիջևանի ինքնավար հանրապետությունը Հեյդար Ալիևի իշխանության տարիներին, 1991-1993 (մաս 3)]. Azlogos – Dünya azərbaycanlılarının intellektual platforması, 01.07.2022 (վերջին մուտքը՝ 12.11.2022)՝ <https://azlogos.eu.naxcivan-muxtar-respublikasi-heyder-aliyevin-hakimiyyeti-illərində-1991-1993-3-cu-hissə>.
- HRW. 2020. “Azərbaycan: 2019-ci ildə baş verənlərin xülasəsi” [Ադրբեջան. 2019թ. իրադարձությունների ամփոփ նկարագրություն]. Human Rights Watch. Accessed November 15, 2022. <https://www.hrw.org.az.world-report.2020.country-chapters.336549>.
- HRW. 2021. “World report 2021. Azerbaijan: Events of 2020.” Human Rights Watch. Accessed November 20, 2022. <https://www.hrw.org.world-report.2021.-country-chapters.azerbaijan>.
- IPHR. 2020. “Azerbaijani government crackdown in Ganja: extrajudicial killings, torture, arbitrary detention, unfair trials and unlawful restrictions on the freedom of assembly.” International Partnership for Human Rights, January, 29. Accessed November 11, 2022. <https://www.iphronline.org.wp-content/uploads.2020.01.updated-Ganja-report.pdf>.

#### Գլուխ 4. Հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական կայունության բազմակողմ չափումները

---

- Isayev, Heydar. 2021. “Azerbaijani government adopts still harsher tactics against opposition.” Eurasianet, December 16. Accessed November 25, 2022. <https://eurasianet.org.azerbaijani-government-adopts-still-harsher-tactics-against-opposition>.
- JAMnews. 2020a. “Azerbaijanis called in for questioning over coronavirus posts on social media.” JAM news. March 25. Accessed November 15, 2022. <https://jam-news.net.azerbaijanis-called-in-for-questioning-over-coronavirus-posts-on-social-media>.
- JAMnews. 2020b. “Repression in the time of pandemic: Azerbaijani opposition members arrested “for violating quarantine.” JAM news, March 23. Accessed November 15, 2022. <https://jam-news.net.repression-in-the-time-of-pandemic-azerbaijani-opposition-members-arrested-for-violating-quarantine>.
- Macrotrends. 2022. “WTI Crude Oil Prices - 10 Year Daily Chart.” Macrotrends. Accessed November 15, 2022. <https://www.macrotrends.net.2516.wti-crude-oil-prices-10-year-daily-chart>.
- Marja. 2021. “Azərbaycandaki əmanətçilərin banklardaki pulları “əridi” – REAL ZƏRƏR” [Ադրբեջանի ավանդատուների բանկային գումարները «հավվեցին» – իրական կորուստ]. Marja-Biznes və Maliyyə Xəbərləri Agentliyi, December 20. Accessed November 29, 2022. <https://marja.az.80890.azerbaycandaki-emanet-cilerin-banklardaki-pullari-eridi-real-zerer>.
- Medeniyyet. 2020. “Azərbaycanda yaşayan etnik icma rəhbərlərinin bəyanatı” [Ադրբեջանում բնակվող էթնիկ համայնքների ղեկավարների հայտարարությունը]. Azərbaycan Respublikasının Mədəniyyət Nazirliyinin nəşri – Mədəniyyət, 29.09.2020 (վերջին մուտքը՝ 15.11.2022)՝ <https://medeniyyet.az.-page.news.54098.Azerbaycanda-yasayan-etnik-icma-rehberlerinin-beyanati.html>.
- Media. 2020. “Фахраддин Аббасов повесился после освобождения города Шуша”. Информационный портал Media.az, 13.11.2020. Дата обращения: 12.11.2022. <https://media.az.read.1067799172>.
- PFI. 2018-2022. “Press Freedom Index.” Reporters Without Borders. Accessed November 15, 2022. <https://rsf.org.en.index?year>.
- Report. 2021. “Azərbaycanda partiya sədri həbs edildi” [Ադրբեջանում ձերբակալվեց կուսակցության առաջնորդ]. Report informasiya agentliyi, 06.01.2022. Վերջին մուտք՝ 20.11.2022: <https://report.az.hadise.azerbaycanda-partiya-sedri-hebs-edilib>.
- Samadov, Bahruz. 2021. “Politics in Azerbaijan after the Second Karabakh War: Actors and Shifting Internal Discourses.” Policy Brief. Issue 37, December, pp. 1-8.
- Statista. 2022. “Average annual OPEC crude oil price from 1960 to 2022 (in U.S. dollars per barrel).” Statista. Accessed November 11, 2022. <https://www.statista.-com.statistics.262858.change-in-opec-crude-oil-prices-since-1960>.
- Talyshistantimes. 2020. “Убит Фахраддин Абосзода - лидер Талышского Национального Движения”. Международный информационно-аналитический и научный портал Talyshistantimes 09.11.2020. Дата доступа: 14.11.2022. <https://www.talyshistantimes.com.content.aboszodaiskilled>.

- TICPI. 2018. “Transparency International Corruption Perceptions Index 2018.” Transparency International 2018. Accessed November 11, 2022. [www.transparency.org](http://www.transparency.org).
- TICPI. 2019. “Transparency International Corruption Perceptions Index 2019.” Transparency International 2019. Accessed November 15, 2022. [www.transparency.org](http://www.transparency.org).
- Tolishmedia. 2020. “Fəxrəddin Abbasov həbsxanada öldürüldü” [Ֆախրադդին Աբբասովը բանտում սպանվեց]. Tolishmedia informasiya agentliyi, 09.11.2020 (վերջին մուտքը՝ 15.11.2022)՝ <https://tolishmedia.com.az.2020.11.23932>.
- Tradingeconomics. 2022. “Azerbaijan Government Budget.” Trading Economics. Accessed November 29, 2022. <https://tradingeconomics.com.azerbaijan.-government-budget>.
- Tribunainfo. 2020. “Elman Rüstəmov haqlidir, devalvasiya riski hələlik yoxdur” - Rövşən Ağayev [Ռոշվան Աղաև. «Էլման Ռուսթամովը ճիշտ է, դևալվացիայի ռիսկ առայժմ չկա», Tribunainfo onlayn qəzeti, 24.12.2020 (վերջին մուտքը՝ 30.11.2022)՝ <https://tribunainfo.az/elman-rustemov-haqlidir-devalvasiya-riski-helelik-yoxdur-rovsen-agayev/>
- Turkustan. 2020. “Siyasi dialoq – Prezident adminstasiyasina hansı partiyalar çağırilib: siyahi”, Turkustan informasiya agentliyi, March 11. Accessed November 16, 2022. <https://turkustan.info.2020.03.11.siyasi-dialoq-prezident-adminstrasiya-sina-hansi-partiyalar-cagirilib-siyahi>.
- USCIRF. 2018. “United States Commission report on International Religious Freedom: Azerbaijan 2018.” US Commission on International Religious Freedom. Accessed November 13, 2022. <https://www.state.gov/wp-content/uploads.2019.05.-AZERBAIJAN-2018-INTERNATIONAL-RELIGIOUS-FREEDOM-REPORT.pdf>.
- Valiyev, Anar, and Fikrat Valehli. 2022. “COVID-19 and Azerbaijan: Is the System Resilient Enough to Withstand the Perfect Storm?” Problems of Post-Communism, Vol. 69, Issue 1, pp. 103-114. <https://doi.org.10.1080.10758216.2021.1920840>.
- Valiyev, Anar, and Inara Yagubova. 2022. “Azerbaijan’s Strategic Patience in a Changing World.” The Central Asia-Caucasus Analyst. August 30. Accessed November 11, 2022. <https://www.cacianalyst.org/resources.pdf.220830-FT-Azerbaijan.pdf>.
- Veliyev, Toghrol. 2022. “The Poor and Unemployed in Azerbaijan.” Baku Research Instituteş June 06. Accessed November 18, 2022. <https://bakuresearchinstitute.org.en.the-poor-and-unemployed-in-azerbaijan-2>.
- Vzglyad. 2020. “Фахраддин Аббасов повесился после освобождения города Шуша - Пенитенциарная служба”. Информационное агенство Vzglyad, 14.11.2020. Дата доступа: 12.11.2022. <https://vzglyad.az.news.181503>.
- Zulfugarli, Farid. 2020. “The Impact of Oil Price Shocks on The Economy of Azerbaijan: A Vector – Autoregressive Analysis.” Baku Research Institute, March 03. Accessed November 15, 2022. <https://bakuresearchinstitute.org.en.the-impact-of-oil-price-shocks-on-the-economy-of-azerbaijan-2>.

**ԳԼՈՒԽ 5.**  
**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ**  
**ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ**  
**ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**  
**ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002-2021)**

**ՎԱՆԱՏՈՒՐ ՇԵՐԵՆՑ**

Քաղաքական գիտության մեջ մշտապես առաջ են քաշվել քաղաքական կայունության տարբեր, իսկ շատ դեպքերում՝ միմյանց արմատապես հակասող մոդելներ, որոնք, ձևավորվելով տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքականության և մասնավոր սուբյեկտի ներքաղաքական զարգացումների պայմաններում, մեծ մասամբ կա՛մ արդյունավետ չեն եղել և դադարել են գոյություն ունենալուց, կա՛մ թերի արդյունավետության բացը լրացրել են՝ հարկադրված դիմելով վարչակարգի առերևույթ փոփոխության: Վերջինս թեպետ երկարաձգել է քաղաքական կայունության ապահովման մոդելի կյանքը, սակայն նմանակման պատճառով լիովին չի նպաստել գործող համակարգի վերափոխմանը:

Նոր շրջանում, իշխանությունների տարանջատման սկզբունքի հրամայականով պայմանավորված, քաղաքական կայունության հիմքում դրվում է հավասարակշռման մոդելը, քանի որ այս եղանակով զսպումների և հակակշռումների ներդրման հնարավորություն է ստեղծվում՝ ինքնադրսևորման լայն դաշտ բացելով քաղաքական ամենատարբեր ուժերի համար: Այս տեսանկյունից Թուրքիայի համար նոր շրջանը թեպետ բացվել է 1946-1950 թթ., երբ առաջին ընդդիմադիր ուժը՝ Ժողովրդավարական կուսակցությունը (Demokrat Parti), եկավ իշխանության, իսկ 1962 թ. Սահմանադրական դա-


տարանի ձևավորմամբ ավարտվեց իշխանությունների բաժանման ձևական գործընթացը, սակայն փոփոխվող աշխարհում, հասարակական հարաբերությունների զարգացմամբ ու սոցիալական ինտեգրման բարդություններով պայմանավորված, անգամ կուսակցական համակարգի կայացումն ու պլյուրալիստական մոտեցումների ներդրումը չնպաստեցին ներքին կայունության ինստիտուցիոնալացմանը:

Սառը պատերազմից ու Խորհրդային Միության փլուզումից հետո կոմունիստական սպառնալիքի չեզոքացմամբ Թուրքիայի քաղաքական համակարգն աստիճանաբար ձեռք բերեց հարաբերականորեն կայուն բնույթ, քանի որ մյուս պետությունների օրինակով նմանվեց այնպիսի կենդանի օրգանիզմի, որն արտաքին աշխարհից կախվածության և հասարակական-քաղաքական ներքին տեղաշարժերի պայմաններում անշարժ ու անփոփոխ մնալ չէր կարող: Այս պատկերացումները հատկապես մեծ տեղ գտան 2002 թ. նոյեմբերին իշխանության եկած Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ, Adalet ve Kalkinma Partisi, հապավումը՝ AKP) քաղաքական օրակարգում, քանի որ թե՛ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, թե՛ իր մերձավոր շրջանակները քաղաքական կայունության ապահովման հիմքում դրեցին համակարգային մոտեցման և ինքնակազմակերպման գաղափարները:

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

**Գծապատկեր 1**

**Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2021 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

Թուրքիայի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2021թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	ՔՀԿԻ
2000	-0.084	-0.502	0.210	<b>-0.058</b>
2001	-0.078	-0.691	0.142	<b>-0.104</b>
2002	-0.045	-0.465	0.148	<b>-0.050</b>
2003	-0.040	-0.286	0.228	<b>0.004</b>
2004	0.001	-0.044	0.321	<b>0.090</b>
2005	0.088	0.095	0.400	<b>0.182</b>
2006	0.190	0.137	0.350	<b>0.230</b>
2007	0.068	0.238	0.336	<b>0.174</b>
2008	0.161	0.355	0.373	<b>0.254</b>
2009	0.056	0.151	0.320	<b>0.149</b>
2010	0.062	0.353	0.357	<b>0.194</b>
2011	0.071	0.569	0.353	<b>0.230</b>
2012	0.029	0.569	0.341	<b>0.204</b>
2013	-0.066	0.692	0.376	<b>0.180</b>
2014	0.018	0.707	0.371	<b>0.227</b>
2015	0.065	0.641	0.341	<b>0.234</b>
2016	-0.448	0.588	0.391	<b>-0.041</b>
2017	-0.392	0.654	0.335	<b>-0.017</b>
2018	-0.325	0.657	0.266	<b>0.000</b>
2019	-0.363	0.582	0.242	<b>-0.040</b>
2020	-0.377	0.504	0.105	<b>-0.101</b>
2021	-0.389	0.649	0.069	<b>-0.096</b>

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

## 5.1 Թուրքիայի քաղաքական կայունության դիֆուզիան

Հիմք ընդունելով այն իրողությունը, որ պետության քաղաքական կայունությունը պայմանավորված է քաղաքական համակարգի ճկունությամբ և դրա գործառույթների արդյունավետությամբ, ինչն էլ իր հերթին ուղղակիորեն կախված է հանրային աջակցությունից, Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության տարիներին Թուրքիայի քաղաքական համակարգի պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի: Առաջինը **համակարգային կամ զանգվածային աջակցության** փուլն է (2002-2012), երբ վարչակարգի և քաղաքական առաջնորդների նկատմամբ բարձր վստահության շնորհիվ իշխանական կառույցների որդեգրած ներքին ու արտաքին քաղաքականությունն ընդհանուր առմամբ արժանացել է հանրության հավանությանը: Երկրորդ փուլը **իրավիճակային աջակցության** շրջանն է (2013-2021), երբ իշխանությունների իրավաքաղաքական գնահատականներից հետո կայացված որոշումների նկատմամբ հանրային դրական կարծիքը գերակշռել է մասնավոր դեպքերում: Այս երկու շրջափուլերի համար ջրբաժան են «Արաբական գարունը»՝ որպես Թուրքիայի քաղաքական կայունության վրա էապես ազդած արտաքին գործոն, և Գեզի պուրակի իրադարձությունները (Gezi Parki olaylari)<sup>1</sup>՝ որպես ներքին գործոն, որը կանխորոշեց երկարաժամկետ անկայունության աճի միտումներն ու վարչակարգի փոխակերպման բացասական դինամիկան: Բայցևայնպես, թե՛ առաջին, թե՛ երկրորդ շրջափուլերի համար նույնական է դատական համակարգի և հատկապես զինվորականության քաղաքական դերի նվազեցմանը միտված պետական համալիր

---


<sup>1</sup> Այս հավաքական անվամբ են հայտնի 2013 թ. մայիս-օգոստոս ամիսներին Բեյոջլուում տեղի ունեցած ցույցերը, որոնք համարվում են, այսպես կոչված, համաշխարհային «Զավթելու շարժման» տեղական դրսևորում: Բողոքի արտաքին կողմը Գեզի պուրակի ծառահատման, առևտրային կենտրոնների և ստորգետնյա կապուղիների կառուցման որոշումն էր, ներքին կողմը՝ կառավարության ավտորիտար քաղաքականությունը, որը շեղվում էր աշխարհիկության սկզբունքից՝ հովանավորելով քաղաքական իսլամը: Ըստ թուրքական իշխանությունների պաշտոնական տվյալների՝ առնվազն 3,5 միլիոն մարդ է մասնակցել 2013 թ. իրադարձություններին:



քաղաքականությունը, որը հատկանշական է եղել Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման բոլոր տարիներին:

**Գծապատկեր 2**

**Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2021 թթ.)\***



Վերլուծելով Քաղաքական գործոնների ինդեքսի (ՔԳԻ) միտումները 2002-2021 թթ. (տե՛ս Գծապատկեր 2)՝ կարելի է արձանագրել, որ համակարգային և իրավիճակային աջակցության շրջափուլերն էական ազդեցություն ունեն Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության վրա: Առաջին փուլում՝ 2002-2012 թթ., ՔԳԻ-ն բացառապես դրական տիրույթում է, ընդ որում դիտարկվող ժամանակահատվածում այն ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է 2006 թվականին (0.190): Երկրորդ փուլում՝ 2013-2021 թթ., նկատվում է անկայունության խորացման դինամիկա: Ավելին, 2016 թվականից Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) և ՔԳԻ-ի ցուցանիշները կտրուկ անցել են բացասական տիրույթ և ցայսօր չունեն վերականգնման միտում:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---


Այն հանգամանքը, որ Թուրքիան իր ռազմական ինտերվենցիաները սկսել է 2015-ին, իսկ ԱԶԿ-ի կառավարման շրջանում Քաղաքական գործոնների ինդեքսի դիտարկվող ժամանակահատվածի պատմական ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2016-ին (-0.45), բայց իբրև քաղաքական անկայունության կամ իրավիճակային աջակցության մեկնակետ ընտրվել է 2013 թվականը, պայմանավորված է այն իրողությամբ, որ Գեզի պուրակի բնապահպանական ակցիայի ճնշմամբ չեզոքացվեց քաղաքական ընդդիմությունը, իսկ «Արաբական գարնան» հեղափոխական ալիքը Թուրքիա արտահանելու փորձը խեղդվեց օրորոցում: Մյուս կողմից՝ 2013 թ. բացառիկ կարևոր էր այն առումով, որ առաջին անգամ համակարգային պայքար սկսվեց գյուլենականների դեմ, իսկ իշխանության ու ազատական մտավորականության միջև առաջացավ խզվածք, այնինչ հենց այդ զանգվածն էր ԱԶԿ-ի գովազդային դեմքն ու Եվրոպական միության (ԵՄ) էլիտաների հետ հարաբերությունների հաստատման միջնորդը (*Йанлик 2019, 158*): Այդ ընդվզումն ամենևին էլ ինքնաբերական չէր, քանի որ «դատական հեղաշրջման փորձով»<sup>2</sup> Ֆեթհուլլահ Գյուլենը 2013-ին լրջորեն նախաձեռնել էր Էրդողանին հեղինակազրկելու և իշխանությունից հեռացնելու գործընթաց: Բացի այդ, ի տարբերություն 2013 թվականի կայունության ցուցանիշի, օրինակ՝ 2009 թ. արձանագրված կայունության անհամեմատ ավելի ցածր ցուցանիշը (0.056) պայմանավորված է ոչ այնքան քաղաքական, որքան տնտեսական գործոններով, ավելին՝ ոչ թե թուրքական շուկայի անկայունությամբ, այլ համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով: Հետևապես, 2009 թ. ևս չի կարող դիտարկվել մասնավոր աջակցության ջրբաժան: Ի վերջո ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո 2013-ն առաջին տարին էր, երբ քաղաքական կայունությունը բնութագրող քաղաքական գործոնը (փոփոխական) բացասական էր:

---

<sup>2</sup> Քրեական հետաքննությունը, որում ներգրավված էին ինչպես Էրդողանի ընտանիքի անդամները, այնպես էլ կառավարության առանցքային մի շարք պաշտոնյաներ, հայտնի է «Կոռուպցիայի և կաշառակերության դեմ գործողություն» (17-25 Aralık Yolsuzluk ve Rüşvet Operasyonu) անվամբ:

Գծապատկեր 3

Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հոսքերի (մլրդ դոլար) համադրված տվյալներն<sup>3</sup> ըստ միտումների<sup>4</sup>



<sup>3</sup> Հետազոտության 3-րդ և 5-րդ գծապատկերների, ինչպես նաև Աղյուսակ 3-ի քանակական տվյալները հիմնված են Համաշխարհային բանկի ցուցիչների վրա: Ավելի մանրամասն տե՛ս՝ <https://data.worldbank.org/indicator> (վերջին մուտքը՝ 04.09.2022):

<sup>4</sup> ՕՈՒՆ-ի հոսքերի և ԿԸՀ-ի ընդհանուր միտումների զուգադրումը պայմանավորված է ակադեմիական հանրայնությամբ ներդրումների և կոռուպցիայի կապի վերաբերյալ բանավեճով: 2014-ին էմպիրիկ հետազոտությամբ ցույց էր տրվել, որ կոռուպցիան քայքայիչ ազդեցություն է գործում Թուրքիայում օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումով, մինչդեռ քաղաքական ռիսկի աճը կարճաժամկետ հեռանկարում նպաստում է ՕՈՒՆ-ի հոսքերին: Ավելի մանրամասն տե՛ս՝ Tosun, Umur, Onur Yurdakul, and Pelin Varol İyidoğan. 2014. “The Relationship between Corruption and Foreign Direct Investment Inflows in Turkey: an Emperical Examination.” *Transylvanian Review of Administrative Sciences*. No 42 E/2014: 247-57.

**Քաղաքական կայունության տնտեսական գործոնների ազդեցության չափումը.** Ինչպես բխում է Թուրքիայի Ք<sub>գո</sub>-ի ձևավորման տնտեսական փոփոխականների ուսումնասիրությունից, օտարերկրյա ուղղակի ներդրումները թույլ կախվածություն ունեն կոռուպցիայի ընկալման համաթվից: Այսպես, օրինակ՝ ԱԶԿ-ի կառավարման շրջանում ՕՈՒՆ-ի ամենամեծ հոսքը Թուրքիա է ուղղվել 2007-ին (22.04 մլրդ ԱՄՆ դոլար), երբ ԿԸՀ-ն կազմել է 4.1, մինչդեռ օրինակ՝ 2018-ին, երբ ըստ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության՝ Թուրքիայում ԿԸՀ-ն դարձյալ կազմել է 4.1 միավոր, ՕՈՒՆ-ների ներհոսքը շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլարով նվազել է՝ հասնելով 12.82 մլրդ ԱՄՆ դոլարի: Իսկ ահա 2013-ին, երբ ԿԸՀ-ն եղել է ամենաբարձրը (5), ներդրումները կազմել են 13.56 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն՝ գրեթե այնքան, որքան 2021-ին, մինչդեռ դիտարկվող ժամանակահատվածի ավարտին Թուրքիայի ԿԸՀ-ն կազմել է ընդամենը 3.8, ինչը շատ ավելի ցածր է, քան դիտարկված 180 երկրների ԿԸՀ-ի միջինացված ցուցանիշը (*Transparency International 2022, 3-4*): Ավելին, Թուրքիայում ՕՈՒՆ-ներն էապես կախված չեն նաև տնտեսական ազատության ինդեքսից (ՏԱԻ): Այսպես, եթե ճգնաժամային 2009-ին ՏԱԻ-ն կազմել է 63.8, իսկ ՕՈՒՆ-երը՝ ընդամենը 8.58 մլրդ ԱՄՆ դոլար, և նման հարաբերակցությունը կարելի է բացատրել տնտեսական ճգնաժամով (այս տրամաբանությունը գործել է նաև 2019-2020 թթ.), ապա նույն մոտեցմամբ չի կարելի մեկնաբանել մյուս տարիների ցուցանիշները: Օրինակ՝ 2017-ին արձանագրվել է ՏԱԻ-ի ամենաբարձր ցուցանիշը (65.4), մինչդեռ ՕՈՒՆ-ների ներհոսքը կազմել է 11 մլրդ ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ 2021-ին ՕՈՒՆ-ները կազմել են 13.60 մլրդ այն դեպքում, երբ ՏԱԻ-ն եղել է 56.9, ինչի պատճառով Թուրքիան հայտնվել է եվրոպական այն հինգ երկրների շարքում, որոնք դասակարգվել են որպես «հիմնականում անազատ» (*Miller, Kim, and Roberts 2022, 53*): Մյուս կողմից՝ հարկ է նկատել նաև, որ, ի տարբերություն նախորդ կառավարությունների, ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայում զգալիորեն ավելացել է կոռուպցիայի դեմ պայքարը, և էապես մեծացել են ներդրումների ծավալները, սակայն տնտեսական ազատության ցուցանիշները մնացել են

գրեթե նույնը: Օրինակ՝ 1996-2000 թթ. ՏԱԻ-ն, տատանվելով 59.2-63.4-ի սահմաններում, ավելի բարձր է եղել, քան 2021-ի համաթիվը:

**Զանգվածային աջակցությունը և Թուրքիայի քաղաքական համակարգը.** Համակարգային աջակցության շրջափուլում Թուրքիայի քաղաքացիների մեծամասնությունը պատրաստակամությամբ է ընդունել քաղաքական հիմնական արժեքները: Ըստ էության, որքան էլ քաղաքական կուսակցությունները գաղափարախոսական տարբեր արժեհամակարգ են ունեցել, այնուամենայնիվ քաղաքական համընդհանուր այն արժեքները, որոնք վերաբերել են քաղաքական համակարգի բնույթին ու երաշխավորել դրանց բնականոն գործունեությունը, անվերապահորեն ընդունվել են բոլոր մասնակիցների կողմից: Պատճառն այն է, որ այդ արժեհամակարգում ներառված են եղել իշխանությունների տարանջատման սկզբունքը, բազմակարծությունն ու խոսքի ազատությունը, զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) անկախությունը, թափանցիկությունն ու պարբերական հաշվետվողականությունը, իսկ քաղաքական գործընթացներում մասնակցության տեսանկյունից՝ ժողովրդավարական ինստիտուտների և մեխանիզմների առկայությունը: Զանգվածային աջակցության մասին են վկայում խորհրդարանական (2002, 2007, 2011) և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) 2004 և 2009 թթ. ընտրությունները, որոնց արդյունքներով ԱԶԿ-ն բացարձակ հաղթանակ է տոնել և միանձնյա իշխանություն ձևավորել: Փաստորեն, հիմք ընդունելով Ջ. Սարտորիի կուսակցական համակարգի տիպաբանությունը, կարելի է վստահաբար պնդել, որ ԱԶԿ-ի ստացած քվեների քանակի (խորհրդարան անցած 2-րդ կուսակցությունից մշտապես 10%-ով ավելի քվե է վաստակել), կառավարման տևականության, ինչպես նաև թույլ և մեկուսացված ընդդիմության հետևանքով Թուրքիան չափավոր պլյուրալիզմից (1991-2002 թթ.) անցում է կատարել գերիշխող կուսակցությամբ համակարգի (*Хасанов 2017, 58-59*): Թեպետ ռուսաստանցի թյուրքագետ Խասանովը ԱԶԿ-ին գերիշխող կուսակցություն է համարում նաև 2015 թ. խորհրդարանական 2 ընտրություններից հետո, բայց նայնպես ընդունում է, որ Թուրքիայի կուսակցական համակարգը կայուն չէ, իսկ երկրի քաղաքական գործընթացն աչքի է ընկնում ծայրաստիճան տուրբուլենտու-

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

թյամբ՝ որպես օրինակ բերելով 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձն<sup>5</sup> ու խորհրդարանում ներկայացված կուսակցությունները, որոնք ունակ չգտնվեցին համախմբելու թուրքական հասարակությունը: Հիմք ընդունելով Մ. Դյուվերժեի մոտեցումը, ըստ որի՝ գերիշխող է այն կուսակցությունը, որի գաղափարական ոճը համընկնում է դարաշրջանի բնութագրին, ընդունված է ԱԶԿ-ն համարել գերիշխող կուսակցություն՝ նկատի ունենալով «պահպանողական ժողովրդավարության» գաղափարախոսությունը, որն իր ճկունության ու հայացքների չափավորության շնորհիվ կարողացել է գաղափարախոսական այլ հոսանքների ներկայացուցիչների ներառել՝ ազդելով նաև իսլամական աշխարհի զարգացման հիմնախնդիրները նորովի մեկնելու պրակտիկայի վրա (*Матюхин 2016, 31-33*):

2002-2019 թթ. ընթացքում իշխող ԱԶԿ-ն կայուն կերպով կարողացել է պահպանել իր ընտրազանգվածը (տե՛ս *Աղյուսակ 2*)՝ կրկնակի (2004, 2007) կամ գրեթե կրկնակի (2011, 2015) առաջ անցնելով երկրորդ տեղը զբաղեցրած ՀԺԿ-ից: Այս տեսանկյունից կասկածից վեր է, որ Թուրքիայի՝ գերիշխող կուսակցությամբ համակարգը չի կարող համարվել քաղաքական կայունության թուլացման գործոն: Բայցևայնպես, երբ խոսքն իշխող ուժի համաժողովրդական աջակցության նվազման մասին է, հարկ է քննության առարկա դարձնել հանրաքվեները, մանավանդ որ համաժողովրդական նման քվեարկությունը սովորական պրակտիկա է դարձել ԱԶԿ-ի կառավարման շրջանում և 3 անգամ կազմակերպվել է՝ հաջորդելով խորհրդարանական ընտրություններին:

---

<sup>5</sup> Հուլիսի 15-ի գիշերը և հուլիսի 16-ի առավոտյան թուրք զինվորականները փորձեցին ռազմական հեղաշրջում իրականացնել՝ գրավելով ռազմավարական նշանակության մի շարք օբյեկտներ: «F-16» կործանիչներով ավիահարվածներ հասցվեցին նաև նախագահական նստավայրին և խորհրդարանի շենքին: Ժողովրդական լայն զանգվածների, հոգևոր դասի, ոստիկանության և հավատարիմ սպայակազմի շնորհիվ հեղաշրջման փորձը տապալվեց, իսկ օրինական նախագահը և կառավարությունը պահպանեցին իշխանությունը:

Աղյուսակ 2

2002-2019 թթ. ընթացքում անցկացված ընտրությունների և հանրաքվեների արդյունքում ԱԶԿ-ի և գլխավոր ընդդիմադիր ուժի՝ ՀԺԿ-ի<sup>6</sup> ստացած քվեների համեմատական վերլուծությունը (%) ըստ Թուրքիայի Բարձրագույն ընտրական հանձնաժողովի (YSK) տվյալների

Ընտրությունը (թթ.)		Կուսակցությունների ստացած ձայները (%)		ԱԶԿ-ի կորցրած մանդատների թվաքանակը
Խորհրդարանական	ՏԻՄ	ԱԶԿ (AKP)	ՀԺԿ (CHP)	
2002		24.28	19.39	
	2004	41.67	18.23	
2007		46.58	20.88	-22 <sup>7</sup>
	2009	38.39	23.08	
2011		49.83	25.98	-14
	2014	42.87	26.34	
2015, հունիս		40.87	24.95	-69
2015, նոյեմբեր		49.50	25.32	
2018		42.56	22.65	-22
	2019	42.56	29.36	

<sup>6</sup> Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալի Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), որի գործունեությունն արգելվել էր 1980 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջման պատճառով, 1999-ին չհաղթահարեց բարձր ընտրաշեմը և միայն 2002-ին անցավ խորհրդարան՝ ԱԶԿ-ի հետ ձևավորելով երկկուսակցական խորհրդարան (ևս 9 մանդատ ստացել էին անկուսակցականները):

<sup>7</sup> Թեպետ 2007-ի ընտրությունների ժամանակ ԱԶԿ-ն գրեթե կրկնապատկեց քվեները, սակայն 22 մանդատ կորցրեց 23-րդ գումարման խորհրդարանում: Պատճառն այն էր, որ եթե 2002-ին 550 մանդատները բաշխվեցին ԱԶԿ-ի և ՀԺԿ-ի միջև, ապա 2007-ին 10%-անոց ընտրաշեմը Դեվրե Բահչելիի գլխավորությամբ հաղթահարեց նաև երրորդ ուժը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը (14.27%, 71 մանդատ):

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

Այսպես, 2007-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքների համեմատությամբ 2010-ին «այո»-ի արշավը կորցրել է 11.07%, իսկ 2017-ին՝ 17.54% քվե: Թեպետ հանրաքվեների ժամանակ քաղաքացիները չեն քվեարկել այս կամ այն կուսակցության օգտին, սակայն Թուրքիայում «այո»-ի քարոզարշավը մշտապես նույնականացվել է Արդարություն և զարգացում կուսակցության հետ, քանի որ սահմանադրության փոփոխության առաջարկներն առաջ է քաշել հենց Էրդողանը: Խորհրդարանական և ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի պահպանումը, իսկ հանրաքվեների ընթացքում հանրային աջակցության նվազման դինամիկան փաստում են, որ թեպետ Էրդողանն անվիճելիորեն շարունակում է մեծ լեգիտիմություն վայելել, սակայն անգամ նրա ընտրազանգվածն անհամաձայնություններ ունի սահմանադրական կարգը վերանայելու և կառավարման համակարգն արմատապես փոխելու հարցում: Այլ կերպ ասած՝ հանրաքվեների ընթացքում ԱԶԿ-ի՝ «այո»-ի արշավի վաստակած քիչ քվեները չպետք է պայմանավորել այն հանգամանքով, որ ավանդական ընդդիմադիրների ձայներին ավելացել են նաև քաղաքական գործընթացներին նախկինում գրեթե չմասնակցած և քաղաքացիական պարտքի նկատմամբ կրավորական կեցվածք դրսևորած քաղաքացիների քվեները, կամ առավել ևս այն իրողությամբ, որ հանրաքվեների ժամանակ տեղի է ունեցել ոչ իշխանական ուժերի համընդհանուր համախմբում: Պատճառն ինչպես խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններին, այնպես էլ հանրաքվեներին Թուրքիայում բարձր մասնակցայնությունն է: Օրինակ, եթե 2017 թ. սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որը հանրաքվեին շուրջ 86% մասնակցայնության դեպքում հավանության արժանացավ ընդամենը 3% առավելությամբ, ապա 2018 թ. խորհրդարանական ընտրություններում Էրդողանի կուսակցությունն ավելի քան 20%-ով առաջ անցավ իր հիմնական հակառակորդից շատ ավելի բարձր՝ 88.18% մասնակցայնությամբ: Հետևապես, Թուրքիայի ներքաղաքական կյանքի բոլոր այն փոփոխությունները, որոնք արմատական բնույթի են և շրջադարձային նշանակություն կարող են ունենալ, որոշակիորեն անհանգստացնում են նաև Էրդողանի հավատարիմ ընտրազանգվածին: Սա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այդ ընտրազանգվածի պահպանողական հայացքներով, որը նկատելի է անգամ (որքան էլ առաջին հայացքից հարա-



կարծ կարող է թվալ) քեմալական ժառանգությունը պահպանելու հարցում: Այլ կերպ ասած՝ որքան էլ Էրդողանի ընտրազանգվածի համար խորթ կամ անընդունելի լինեն իսլամի թուլացման հաշվին լայիցիզմի առաջնուման նախկին պրակտիկան ու միակուսակցական ավտորիտար համակարգը, միևնույնն է, քեմալական հանրապետական կարգը շարունակում է նույնականացվել պետականաշինության ավանդույթների հետ:

Հարկ է նկատել, որ թուրքական իշխող կուսակցությունը մշտապես զգացել է քաղաքական համակարգային աջակցության կարիք, որովհետև առաջադրած հավակնոտ նպատակները բխել են ոչ այնքան հանրության ստվար զանգվածի օբյեկտիվ պահանջարկի, որքան Էրդողանի անձով պայմանավորված սուբյեկտիվ առաջարկի տրամաբանությունից: Այդ է պատճառը, որ ԱԶԿ-ն համապետական նշանակության գրեթե ցանկացած բարեփոխում իրականացնելիս ձգտել է արժանանալ հանրության քաղաքական համերաշխությանը, մինչդեռ նման պրակտիկան 2013 թվականի աննախադեպ բռնություններից հետո դատապարտված էր անհաջողության: Ամենևին զարմանալի չէ, որ 2015 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԱԶԿ-ն առաջին անգամ կորցրեց բացարձակ մեծամասնությունը և չկարողանալով անգամ կոալիցիոն կառավարություն ձևավորել՝ նույն տարվա նոյեմբերին հարկադրված կազմակերպեց արտահերթ ընտրություններ: Մյուս կողմից՝ անընդհատ փոփոխությունների (այդ թվում՝ անվտանգային միջավայրի) հետևանքով ինչպես թուրքական հասարակությունը, այնպես էլ նրա քաղաքական համակարգը, պարբերաբար գտնվելով անցումային վիճակում, ի վերջո կորցրին հավասարակշռող դիմադրողականությունը՝ երկարատև անկայունության արմատավորման հիմք նախապատրաստելով:

Թուրք ընդդիմադիր հետազոտողների շրջանում տարածված և չափազանց հիմնավոր կարծիք կա, որ 2014-ից Թուրքիան մուտք է գործել բևեռացման և ժողովրդավարության փլուզման կործանարար ժամանակաշրջան՝ պայմանավորված էլեկտորալ-ավտորիտար վարչակարգի հաստատմամբ: Այս միտումը կապվում է նախագահական համակարգի հետ, որն արմատավորվել է իշխանությունների կողմից հրամցվող «գոյաբանական անվտանգության մտահոգությունների» թեզերով՝ հասարակությանը կանգնեցնելով մի կողմից՝ նախագահական համակարգի, մյուս կող-

մից՝ անկայունության ու ահաբեկչության միջև ընտրություն կատարելու խնդրի առջև (*Somer 2019, 54*): Թուրք հասարակության բևեռացման պատճառներից են նաև մի կողմից՝ իսլամականների և աշխարհիկության կողմնակիցների միջև խորացող անջրպետը, իսկ մյուս կողմից՝ մեծամասնականության գործոնը, որոնք մարզինալացնում են առանց այդ էլ անմիաբան ընդդիմությունը: Սաբանջը համալսարանի պրոֆեսոր Այդըն-Դյուզգիթը, ամփոփելով սոցիոլոգիական հարցումների մի շարք տվյալներ, եզրահանգում է, որ Թուրքիայում բևեռացումը պայմանավորված է ինքնության հիմնահարցերով, իսկ հասարակական ճեղքվածքները գործիքի են վերածվում հիմնականում այն դեպքում, երբ ունեն կուսակցական շրջանակ (*Aydin-Düzgit 2019, 28*): Փաստորեն, կուսակցական համակարգից դուրս բևեռացումն անհամեմատ ավելի թույլ է, քանի որ սոցիալական ճեղքվածքը պայմանավորված է քաղաքական ընտրանու, այն է՝ ԱԶԿ-ի և ՀԺԿ-ի պայքարով:

**Հեղաշրջման ձախողված փորձի հետևանքները.** Հարկ է արձանագրել, որ քաղաքական պայքարը մի կողմից ժողովրդավարացման գործընթացի բնութագրիչ է, մյուս կողմից՝ քաղաքական անկայունության գործոն, ընդ որում ժողովրդավարացումը կայունությանն առնչվող խնդիրների լուծմանը հաճախ չի նպաստում այն հասարակություններում, որոնք քաղաքական և տնտեսական բնույթի հիմնախնդիրներ ունեն (*Семченко 2015, 55-56*): Այս տեսանկյունից ակնհայտ է, որ Թուրքիայի նման բազմաշերտ հասարակություն ունեցող երկրում անգամ գերիշխող կուսակցությամբ համակարգը քաղաքական երկարաժամկետ կայունության երաշխավոր չէ: Սակարելի է մասամբ բացատրել նաև այն հանգամանքով, որ քաղաքականության մեջ զինվորականների ավտորիտար դերի թուլացումը տեղի ունեցավ ոչ թե ժողովրդավարական բարեփոխումների, այլ էրդողանին ենթակա կուսակցական բյուրոկրատիայի ավտորիտարիզմի արդյունքում (*Кудряшова 2017, 64*):

Զուգահեռաբար հարկ է նկատել, որ ԱԶԿ-ն ընդդիմության քաղաքական նախաձեռնությունները մեկնաբանում է որպես անվտանգության ու կայունության սպառնալիք, մինչդեռ սեփական քաղաքականությունը՝ ժողովրդավարական կարգի պահպանմանն ուղղված առաքելություն: Ընդ որում, եթե 2013-ի իրադարձությունների ժամանակ դժվար էր ցուցարար-

ներին ցրելը ներկայացնել որպես ժողովրդավարության ամրապնդում, ապա 2016-ի հուլիսին և դրան հաջորդած ժամանակահատվածում զինվորականների, լրագրողների ու իրավաբանների համայնքի դեմ բռնությունները մատուցվեցին որպես ժողովրդավարական կարգի պահպանում, քանի որ բոլոր հետապնդումներն իրականացվում էին գյուլենական «ահաբեկչության» և խորքային պետության (derin devlet) կազմաքանդման կարգախոսներով: Գործնականում, հատկապես 2016-2017 թթ.-ին, այս ամենը դրսևորվում էր Էրդողանին սատարած քաղաքացիների փառաբանությամբ, որոնք, ժողովրդավարությանը սատարելով, կարողացան պահպանել սահմանադրական կարգը: Այլ կերպ ասած՝ 2016-ից հետո Թուրքիայում ժողովրդավարությունը կապվեց Էրդողանի, նրա թիմի և բոլոր այն քաղաքացիների անվան հետ, ովքեր տապալեցին զինվորական դասի պլանները:

Գիտակցելով, որ հաղթանակը երկար կյանք չի ունենա, եթե բացառապես համարվի իշխանության և նրա ընտրազանգվածի սեփականությունը, ԱԶԿ-ն ահռելի ջանքեր է գործադրում՝ խորհրդանշանների և ծեսերի միջոցով հեղաշրջման տապալման նկատմամբ ձևավորելու հավաքական հիշողություն: Որպես օրինակ՝ «nöbet» (թարգմանաբար՝ հերթապահություն, պարեկային ծառայություն) բառը, որը ռազմական նշանակություն ունի, սկսեց գործածվել ժողովրդավարության պահպանման համատեքստում (demokrasi nöbeti), քանի որ մեկ ամիս շարունակ ժողովուրդը կամավոր ապահովել էր ժողովրդավարական կարգը: Զուգահեռաբար ներմուծվեց «հուլիսյան նահատակ» (15 Temmuz Şehidi) եզրը՝ իշխանության և ժողովրդավարության պահպանումը կապելով հայրենիքի փրկության հետ, իսկ որպես վերջնարդյունք՝ հուլիսի 15-ը հռչակվեց ժողովրդավարության և ազգային միասնության օր (*Yılmaz ve Musa 2020, 413-14*): Այս ամենին զուգահեռ՝ տեղի ունեցավ հանրային պարսավանքի ինստիտուցիոնալացում, ինչը գործնականում դրսևորվեց «Դավաճանների գերեզմանատուն» (Hainler Mezarlığı) կառուցելով: Մասնավորապես, 2016-ի հեղաշրջմանը մասնակցած և զոհված սպայակազմի ապամարդկայնացման և կարգավիճակի նվազեցման նպատակով որպես սոցիալ-քաղաքական տեխնոլոգիա կիրառվեց, այսպես կոչված, «սխալ հանգուցյալի» հայեցակարգը, ինչը նշանակում էր խունտայի աջակիցների մեկուսացում «կեղտոտ» վայրերում (*Морозов и Ткачук 2019, 14*): Ավելին, ԱԶԿ-ի վարած նեկրոքաղաքական

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

բռնությանը հավանություն տվեց նաև Կրոնական գործերի վարչությունը (ԿԳՎ, թուրքերեն՝ Diyanet İşleri Başkanlığı), որը Թուրքիայի կրոնական բարձրագույն մարմինն է և սերտաճած է գործող իշխանություններին: Մասնավորապես, ԿԳՎ-ն փորձեց հետմահու պատժել և հրնթացս խրատել ողջերին, ուստի իր ենթակայությամբ գործող իմամներին հրահանգեց չմասնակցել հեղաշրջման կազմակերպիչների հուղարկավորությանը՝ այդպիսով նպաստելով ինչպես քաղաքական, այնպես էլ իսլամական համայնքի սահմանազատմանը (*Balkan 2020, 242-43*):

**Կառավարման համակարգի փոփոխությունները.** Բարեփոխումների և առհասարակ փոփոխությունների ժամանակ քաղաքական կայունության ապահովման գործում անփոխարինելի են սահմանադրության և դրանից բխող ներպետական ամբողջ օրենսդրության խստագույն պահպանումն ու անխափան կիրարկումը: Թե՛ քաղաքագետների և թե՛ առավել ևս իրավաբանների շրջանում գերակա է այն կարծիքը, որ իրավական համակարգը պետք է փոփոխության ենթարկվի ժամանակի նոր մարտահրավերներին համահունչ և կարգավորի օրենսդրական բացերը՝ նվազագույնի հասցնելով հայեցողական լիազորությունների շրջանակը: Ի հակառակ այս մոտեցումների՝ Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո 7 անգամ հանրաքվե է կազմակերպվել, որից 5-ը՝ հողվածները փոփոխելու նպատակով: Բացառությամբ 1988 թ. հանրաքվեի՝ բոլորում հաղթել է «այո»-ի ճամբարը: Ընդ որում, սահմանադրական հանրաքվեների կազմակերպման առաջամարտիկն ԱԶԿ-ն է, քանի որ հիմնական օրենքի 3 կարևորագույն փոփոխությունները կատարվել են հենց Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2007, 2010, 2017):

Հատկանշական է, որ մի շարք գիտնականների կարծիքով՝ Թուրքիայում ավտորիտարիզմի հիմքերը դրվել են հենց 2007-ին՝ նկատի ունենալով խորհրդարանական և նախագահական ընտրությունների և հանրաքվեի արդյունքները: Քաղաքագիտության դոկտոր Ա. Կաստալոն 2007-ի ընտրությունները համարում է ինստիտուցիոնալ ճգնաժամի մեկնակետ և նշում, որ Թուրքիայում ձևավորվել է մրցակցային ավտորիտարիզմ, որին նպաստել են մի կողմից հորիզոնական հաշվետվողականության շրջանցումը, մյուս կողմից՝ թույլ ժողովրդավարություններին բնորոշ անապահով միջավայրը (*Castaldo 2018, 16-17*): Բայցևայնպես, ժամանակակից Թուրքիայի

քաղաքական պատմության մեջ դարակազմիկ նշանակություն ունեն 2016-2017 թթ. զարգացումները:

Արտակարգ դրության պայմաններում 2017 թ. ապրիլի 16-ին անցկացված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն (2017 Türkiye Anayasa Değişikliği Halkoylamasi) ոչ միայն բավարարեց իշխանության նկրտումները (Արդարադատության նախկին նախարար Ջ. Չիչեքը 2005 թվականից բարձրաձայնում էր կառավարման նախագահական համակարգի անցնելու հրամայականը), այլև կապիտալացրեց մեկ տարի առաջ ավելի քան 10 քաղաքներում (գլխավորապես Ստամբուլում, Անկարայում, Մարմարիսում և Մալաթիայում) հակաիշխանական ապստամբություն բարձրացրած հեղափոխականների դեմ տարած հաղթանակը: Հանրաքվեն, փաստացի, հաջողեց շնորհիվ ներկուսակցական և արտակուսակցական հետևողական պայքարի: 2016 թ. էրդողանը նախ չեզոքացրեց իշխող կուսակցության ղեկավար և գաղափարախոս Ա. Դավութօղլուին, ապա օգտվեց Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ, թուրքերեն՝ Milliyetçi Hareket Partisi, MHP) ներսում ի հայտ եկած ճգնաժամից, քրեական գործեր հարուցեց ժողովուրդների ժողովրդավարական կուսակցության (ԺԺԿ, թուրքերեն՝ Halkların Demokratik Partisi, HDP) համանախագահներ Ս. Դեմիրթաշի և Ֆ. Յուքսեքդադի նկատմամբ, իսկ հեղաշրջման փորձը տապալելուց հետո Ֆ. Գյուլենի կողմնակիցներին համարեց ներքին թշնամի՝ «ժողովրդավարությունը պաշտպանելու» հռետորաբանությամբ իշխանամետ ընտրազանգվածի մոբիլիզացումից սահուն անցում կատարելով թուրք ժողովրդի համախմբման (*Avatkov 2017, 93-95*): Բայցևայնպես, թեպետ հանրային լայն զանգվածների կողմից հեղաշրջման փորձի կանխումն իսկապես ընկալվեց որպես ժողովրդավարական կարգի պահպանման հրամայական, սակայն քաղաքական ազգին բնորոշ համախմբման գործընթաց այդպես էլ տեղի չունեցավ: Ավելին, թեպետ նշվում էր, որ արտակարգ դրության պայմաններում բացառապես հետապնդվելու են պետական համակարգում ներգրավված գյուլենականները (շուրջ 40 հազար մարդ կալանավորվեց, իսկ ավելի քան 125 հազարը հեռացվեց աշխատանքից), սակայն «Հիզմեթ» շարժման կազմակերպչական բարդ և անորոշ կառուցվածքի պատճառով շատ դժվար էր որոշել, թե ով է իրականում գյուլենական, ով՝ ոչ (*Adsay 2020, 17-18*): Այսինքն, զանգվածային հետապնդումների ենթարկվեցին ոչ

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

միայն այն քաղաքացիները, ովքեր մասնակցել էին հեղաշրջման փորձին, այլև նրանք, ովքեր աշխատանքի բերումով առնչվել էին կրոնական քարոզչին:

Հարկ է նկատել, որ փոփոխված Սահմանադրության մեջ քաղաքական կայունության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է ոչ թե խորհրդարանական համակարգից նախագահական կառավարման մոդելի անցումը (որովհետև թե՛ մեկը, թե՛ մյուսը որպես կառավարման համակարգ հանրապետական կարգի տարածն են և չեն հակասում քեմալականության հռչակած հանրապետականության (cumhuriyetçilik) գաղափարախոսությամբ), այլ իշխանության տարանջատման սկզբունքի միտումնավոր անտեսումն ու սուպերնախագահական համակարգի կենսագործումը: Ընդ որում գլխավորապես հենց այս հանգամանքի պատճառով ԱԶԿ-ի կառավարման պատմության մեջ առաջին անգամ Թուրքիան «Freedom House» իրավապաշտպան կազմակերպության տարեկան աղյուսակում 34 տեղով նահանջեց՝ որակվելով որպես «անազատ» պետություն (*Abramowitz 2018, 7*):

2017 թվականի հանրաքվեով ներմուծված փոփոխություններից առավել ուշագրավ են այն դրույթները, որոնք վերաբերում են նախագահի ինստիտուտին: Այսպես, նախագահն այլևս ոչ միայն պետության, այլև կառավարության գլուխն է և իրավունք ունի նշանակելու ու պաշտոնից ազատելու նախարարներին և փոխնախագահներին, ինչպես նաև կազմակերպելու հանրաքվեներ (հոդված 104), որոշում կայացնելու արտահերթ ընտրությունների անցկացման վերաբերյալ (հոդված 116), հայտարարելու արտակարգ դրություն (հոդված 119), նշանակելու Դատավորների և դատախազների խորհրդի 13 անդամներից 4-ին (հոդված 159): Հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Վենետիկի հանձնաժողովը, 2017 թ. մարտին ընդունելով Թուրքիայի սահմանադրական փոփոխությունների զեկույցը, 14-րդ փոփոխությամբ (հոդված 159) նախատեսվող Դատավորների և դատախազների խորհրդի անդամների նշանակման վերաբերյալ բարեփոխումը համարել է միջազգային չափանիշներին համապատասխանող: Այսպիսի գնահատականը չափազանց խոցելի է, քանի որ նախ՝ մյուս 2 անդամներն ի պաշտոնե Արդարադատության նախարարն ու տեղակալն են, ընդ որում՝ նախարարն է խորհրդի նախագահը, երկրորդ՝ սահմանադրական փոփոխությունների արդյունքում գործադիր իշխանությունն ամբողջությամբ

կենտրոնացել է նախագահի ձեռքում, ինչը նշանակում է, որ պորտֆելը կորցնելու վախի պատճառով առնվազն 6 անդամ կաշկանդված են լինելու անաչառ որոշումներ կայացնելու հարցում: Ավելին, իշխող ուժի խորհրդարանական խմբակցությունը մեծամասնություն է կազմում Թուրքիայի ազգային մեծ ժողովում, մինչդեռ Խորհրդի մյուս 7 թեկնածուներն առաջին փուլում պետք է ստանան պատգամավորների  $\frac{2}{3}$ -ի աջակցությունը: Այսինքն, Արդարություն և զարգացում կուսակցության բացասական կարծիքի դեպքում թեկնածուն չի կարող ստանալ անհրաժեշտ 400 քվե: Խնդրահարույց է նաև այն, որ նախագահն այլևս պարտավոր չէ երկրի ղեկը ստանձնելուց հետո դադարեցնել քաղաքական կուսակցության անդամակցությունը (հոդված 101): Հանուն արդարության պետք է արձանագրել, որ այս առումով գոյություն ունի թեպետ կողմնակալ, բայց հակառակ մոտեցում, այն է՝ նախագահի անկուսակցական լինելու պահանջը «Ֆիկցիա» է, քանի որ խորհրդարանական կառավարման դեպքում անգամ անկուսակցական նախագահն արժանանում է «վերացական ընդունելության» (*Kartal ve Ataseven 2018, 154*): Այդ է վկայում այն, որ խորհրդարանական Թուրքիայում Օզալից ընդհուպ Էրդողան հայտնի է եղել, թե թուրք առաջնորդները որ կուսակցությանն ու ինչ գաղափարների են հարում:

Բայցևայնպես, ընդհանուր առմամբ հիմնավոր է ԵԽ Վենետիկի հանձնաժողովի այն մտահոգությունը, որ սահմանադրական փոփոխությունները կարող են հանգեցնել սոսկ ֆորմալ անկախության, մինչդեռ գործնականում օրենսդիր իշխանությունը կաշկանդված է լինելու գործադիր իշխանության լայն լիազորությունների պատճառով: Ահա թե ինչու նախընտրական քարոզչությունը կազմակերպվեց ընտրական համակարգին և մրցակցային գործընթացներին հակասող լայնածավալ խախտումներով. քաղաքացիական հասարակությունը չկարողացավ իրականացնել ինչպես երկարաժամկետ մշտադիտարկում, այնպես էլ հանրային վերահսկողություն, իսկ հեղաշրջման փորձից հետո «սահաբեկչությանն աջակցելու» մեղադրանքով փակված 158 ԶԼՄ-ներ զրկվեցին ընտրազանգվածին այլընտրանքային տեսակետներ ներկայացնելու հնարավորությունից: Բայց անգամ այս իրավիճակում իշխանությանը դժվարությամբ հաջողվեց աննշան առավելությամբ (51.41%) հաղթանակ տոնել (*T.C. Yüksek Seçim Kurulu 2017*): Ամենևին զարմանալի չէ, որ Եվրոպայում անվտանգության և համա-

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

գործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) դիտորդական միասնական առաքելության եզրակացությունը բացասական էր, քանի որ արձանագրվել էր ժողովրդավարական գործընթացի համար անհրաժեշտ հիմնական ազատությունների բաց, որը հակասում էր ԵԱՀԿ-ի 1990 թ. Կոպենհագենի փաստաթղթին: Քվեարկությունից առաջ դատական համակարգի  $\frac{1}{3}$ -ը, այն է՝ շուրջ 4000 դատավոր և դատախազ պաշտոնանկ էին արվել, հեղաշրջման փորձին մասնակցելու և/կամ լուսաբանելու մեղադրանքով կալանավորված 21 լրագրողներին ազատ արձակած 3 դատավորի և 1 դատախազի նկատմամբ հետաքննություն էր սկսվել, իսկ քվեարկության օրը, հակառակ օրենքի պահանջներին, ընտրատեղամասերում ոստիկանության ներկայությունը համատարած էր (*OSCE/ODIHR 2017, 12-13*):

Հարկ է նկատել, որ 2017 թ. սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ նման կարծիքի ձևավորումը պարզապես անխուսափելի էր, քանի որ ոչ միայն քվեարկության կազմակերպման ընթացակարգն էր հակաժողովրդավարական, այլև բովանդակային կողմը: Մասնավորապես, բովանդակային վերլուծության մեթոդաբանությամբ հիմնավորվել է, որ Թուրքիայի սահմանադրական հանրաքվեների տեքստերում հանրային կառավարման հիմնախնդիրները գերակա են մարդու իրավունքների հիմնահարցերի նկատմամբ: Այսպես, եթե 2010-ի հանրաքվեի ժամանակ առաջարկվող սահմանադրական փոփոխությունների 55%-ն էր առնչվում մարդու իրավունքներին, ապա 2017-ին՝ ընդամենը 16%-ը կամ 19 հոդվածներից 3-ը (*Çolak 2022, 91*):

**Հակամարտությունների ապակայունացնող ազդեցությունը.** Ի տարբերություն մերձավորարևելյան տարածաշրջանի մյուս պետությունների՝ Թուրքիայում քաղաքական համակարգի անկայունության շարունակականությունը մեծապես պայմանավորված է նաև երկրի ռազմադիվանագիտական ակտիվությամբ ու աշխարհաքաղաքական կշռի կտրուկ աճով: Այլ ձևակերպմամբ՝ տարածաշրջանային (Սիրիա, Իրաք, Լիբիա, Արցախ, Արևելյան Միջերկրածով) և արտատարածաշրջանային (Աֆղանստան, Ուկրաինա) հակամարտություններում Թուրքիայի բազմաշերտ ներգրավումն ու միջնորդական տարբեր հանձնառությունների ստանձնումը շարունակում են ցնցել երկիրը՝ խորթ կենսամիջավայր ստեղծելով քաղաքական համա-



կարգն ապահովող գործառույթների համար: Այս իրողության պատճառներից է նաև այն, որ Թուրքիան ինքն է հակամարտություններում ներգրավվելու նախաձեռնողական քաղաքականություն վարում (2015 թվականից ի վեր անկաշկանդ որդեգրել է կոշտ ուժի ռազմավարության գործիքակազմ), և երկրորդ՝ բոլոր այդ հակամարտությունները գրեթե միաժամանակ և զուգահեռաբար են ընթանում՝ պետությունից պահանջելով մարդկային ու ֆինանսական ահռելի ռեսուրսներ:

Թուրքիայի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան վեկտորի և քաղաքական կայունության փոխկախվածության ամենանորը և միաժամանակ ուշադրությունից հաճախակի վրիպող հանգամանքն ԱԶԿ-ի առաջնորդների, հատկապես Ռ. Էրդողանի քաղաքական հոետորաբանության և Թուրքիայում հակակառավարական ցույցերի ու ակցիաների ուղղակի կապն է, որն առաջին անգամ դրսևորվել է 2013-ին, իսկ մշտական բնույթ է ստացել 2015 թ. կեսերից: Ընդ որում, խնդիրն առաջին հայացքից թեպետ կապված է մի կողմից՝ Թուրքիայի արևելյան և հարավարևելյան նահանգներում, իսկ մյուս կողմից՝ Սիրիայում և Իրաքում իրականացվող հակաքրդական ռազմական ինտենսիվ գործողությունների հետ («Եփրատի վահան», 2016-2017, «Ձիթենու ճյուղ», 2018, «Խաղաղության ակունք», 2019 և այլն), սակայն պակաս կարևոր նշանակություն չունի նաև մերձավորարևելյան հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցում Թուրքիայի պաշտոնական դիրքավորումը: Այսպես, «Արաբական գարնան» առաջին իսկ օրերից մերձավոր հարևանության իսլամադավան երկրներում ծագած ճգնաժամերի հաղթահարումը պաշտոնական Անկարան պայմանավորել է վարչակարգից տուժած ժողովրդին ականջալուր լինելու և քաղաքական իշխանությունն ուզուրպացրած գործիչների անցնցում հեռացնելու անհրաժեշտությամբ: Այդ է պատճառը, որ 2013-ին Գեզի պուրակի ակցիայի մասնակիցների պահանջներն աստիճանաբար վերածվեցին քաղաքական կոնոտացիայի՝ ակնկալիքով, որ իշխանությունները կաշկանդված կլինեն Ասադին ուղղված «ժողովրդին ականջալուր լինելու» խոսույթով: Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա զարգացումը, ցուցարարները չէին սխալվում. թեպետ 11 անձ զոհվեց, իսկ ավելի քան 8000 հոգի վիրավորվեց, սակայն Էրդողանը տուրք չտվեց ավելորդ լարվածությանը, և Գեզի պուրակը՝ որպես նորոսմանականությանը հակադրվող և խորքային

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

առումով նաև քաղաքական իսլամը մերժող քեմալականության խորհրդանիշ, մնաց անձեռնմխելի: Այս համատեքստում ամենևին զարմանալի չէ, որ արևմտյան մասնագիտական համայնքը 2013-ի իրադարձությունները համարում է էրդողանական ավտորիտարիզմի մեկնակետ, իսկ սիրիական հակամարտության, «Իսլամական Պետության» և քրդական հարցի ակտիվացումը՝ Թուրքիայի անվտանգային միջավայրն ու կայունությունը խաթարող գործոնների համախումբ (*Merz 2018*): Պատճառն այն է, որ Սիրիայում քրդական ինքնավարության ձևավորումը կանխելու համար Թուրքիան աջակցում է ջիհադականներին, որի պատճառով 2014 թ. վերջից քրդական բողոքի ալիքը չի դադարում նաև բուն Թուրքիայում:

Կարևոր է արձանագրել նաև, որ թուրքական իշխանությունները թեպետ ներպետական և արտապետական ագրեսիվ քաղաքականությամբ ապակայունացնում են երկիրն ու սեփական անվտանգությունն ապահովելու անվան տակ խնդիրներ են հարուցում գրեթե բոլոր մերձավոր հարևան պետությունների համար, բայցևայնպես, որոշակի վերապահումներով հանդերձ, ապահովում են համակարգերի պահպանման համար անհրաժեշտ գործառույթների բնականոն աշխատանքը: Մասնավորապես, ապահովվում են քաղաքական սոցիալականացման, ներքին և արտաքին միջավայրին հարմարվելու, ներսից և դրսից ստացվող ազդանշաններին արձագանքելու և համանման այնպիսի գործառույթների աշխատանքը, որոնք, ըստ ամերիկյան քաղաքագիտական դպրոցի, ընկած են համակարգերի պահպանման հիմքում: Բացակայում է, թերևս, այսպես կոչված, բաշխման գործառույթը, որովհետև Թուրքիայի քաղաքական համակարգում հատկապես 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձին հաջորդած ժամանակաշրջանում քայլեր չեն ձեռնարկվում հասարակության տարբեր խմբերի շահերը համաձայնեցնելու ուղղությամբ, ինչի հետևանքով ավելի ակնառու են դառնում գաղափարախոսական տարբերություններով պայմանավորված բևեռացման միտումները:

## 5.2 Թուրքական տնտեսության զարգացման միտումներն ԱԶԿ-ի իշխանության օրոք

ԱԶԿ-ի կառավարման տարիներին Թուրքիան՝ որպես զարգացող (նվազ զարգացած) երկիր, տնտեսական զարգացման բարձր տեմպերի, կենցաղային տեխնիկայի, հագուստի և կոշիկեղենի արտադրության, արտահանման ծավալների աճին միտված տնտեսական քաղաքականության (կամ ասիական մոդելի), ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների կիրառության ու կրթությանը հատկացվող առանձնակի ուշադրության շնորհիվ դարձել է նոր արդյունաբերական երկիր: Այս գործընթացը, ինչպես համանման այլ երկրների դեպքում, ուղեկցվում է հասարակության վերակազմակերպմամբ և ուրբանացմամբ: Բայցևայնպես, ի տարբերություն զարգացող մյուս երկրների, Թուրքիայում ուրբանացումը ծայրահեղ դրսևորումներ է ստանում: Օրինակ՝ 2021 թ. Թուրքիայի քաղաքաբնակ բնակչությունը կազմել է 93.2% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 93%), իսկ գյուղաբնակ բնակչությունը՝ 6.8% (*Turkish Statistical Institute Press Release 2022*): Մասնագետների կարծիքով՝ շարունակական ուրբանացումը հիմնական երեք գործոններից է (ի թիվս ժողովրդագրական փոփոխությունների և սիրիացի փախստականների ընդունելության), որը խիստ բացասական ազդեցություն է ունենալու Թուրքիայի տնտեսության վրա, քանի որ ԱԶԿ-ն ՏԻՄ-երի հետ համագործակցելու փոխարեն ընտրել է կենտրոնացված կառավարման մոդելը, ինչի հետևանքով երկրի քաղաքները բախվել են օտարերկրյա ընկերությունների և ներդրողների հետ արդյունավետ համագործակցության խոչընդոտների (*Center for American Progress, Istanbul Policy Center, and Istituto Affari Internazionali 2016, 21-23*):

Թուրքիայի ժողովրդագրական վիճակագրությունն ուղիղ համեմատական է երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման մեջ տնտեսության ճյուղերի համամասնությանը: 2021 թ. գյուղատնտեսական հատվածը կազմում է Թուրքիայի ՀՆԱ-ի ընդամենը 5.65%-ը՝ 10 տարվա ընթացքում նվազելով 2.52%-ով: Փաստորեն, դա տեղի է ունենում ի հաշիվ արդյունաբերության համամասնության աճի (2010-ին՝ 26.84%, իսկ 2021-ին՝ 31.07%), քանի որ ծառայությունների ոլորտը դիտարկվող ժամանակահատվածում գրեթե նույն բաժինն ունի ՀՆԱ-ի գոյացման մեջ (2010-ին՝ 53.05%,

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

իսկ 2021-ին՝ 52.74%): Արտահանման մեջ ևս գերակշռում է արդյունաբերական արտադրանքը: 2021 թ. տվյալներով՝ Թուրքիան ամենից շատ արտահանում է ավտոմոբիլներ (25.55%), քիմիական նյութեր (18.26%), հագուստ (17.14%), պողպատ (12.68%) և էլեկտրոնիկա (11.06%), իսկ գլխավոր գործընկերն են Գերմանիան, Միացյալ Թագավորությունը, Միացյալ Նահանգները, Իրաքն ու Իտալիան (*Türkiye İhracatçılar Meclisi 2021, 27-28*):

Հատկանշական է, որ ակադեմիական գրականության մեջ Թուրքիայի տնտեսությունը բնութագրելու համար «զարգացող երկիր» և «նոր արդյունաբերական երկիր» բնորոշումներն աստիճանաբար ավելի ու ավելի քիչ են գործածվում, քանի որ ԱԶԿ-ի իշխանության գալուց ընդամենը 3 տարի անց Թուրքիան դասվել է «Next Eleven» (առավելապես հայտնի է որպես «N-11») պետությունների շարքին, այսինքն՝ մեծ է հավանականությունը, որ 2050-ին «BRICS»-ի երկրների հետ երկրի ազգային տնտեսությունը կարող է առանցքային նշանակություն ձեռք բերել և դառնալ տնտեսական հարաբերությունների միջազգային համակարգի առաջատարներից մեկը: Ավելին, «Goldman Sachs» ներդրումային բանկի ակտիվների կառավարման նախագահի կանխատեսումների համաձայն՝ 2050-ին Թուրքիան 1 շնչի հաշվով ունենալու է այնքան եկամուտ, որքան 2005 թվականին Միացյալ Նահանգները (*O'Neill et al. 2005, 8*):


**Աղյուսակ 3**

**ԱԶԿ-ի կառավարման շրջանում արձանագրված տնտեսական հիմնական ցուցանիշների համեմատական տվյալներն ըստ Համաշխարհային բանկի (ՀԲ)**

Թիվը	ՀՆԱ-ն ըստ գնողունակության (\$)	ՀՆԱ-ն ըստ գնողունակության 1 շնչի հաշվով (\$)	Գնաճ	Արտաքին պարտքն անվանական ՀՆԱ-ի հարաբերակցությամբ
2002	612.45 միլիարդ	9,401.2	45%	55%
2010	1.27 տրիլիոն	17,542.2	8.6%	39.5%
2021	2.59 տրիլիոն	30,472.4	19.6%	54.3%

Գծապատկեր 4

Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության  
Տնտեսական գործոնների ինդեքսը  
(2000-2021 թթ.)\*



Ինչպես երևում է տնտեսական գործոնների (սովերային տնտեսություն, բյուջեի դեֆիցիտ, ֆինանսական հատվածի կողմից տրամադրվող ներքին վարկեր և այլն) վերլուծությունից, Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման շրջանում Թուրքիայում արձանագրվել է ֆինանսատնտեսական երկու խոշոր ճգնաժամ. 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որի հետևանքները Թուրքիայում առավելապես զգացվել են 2009-ին (Տնտեսական գործոնների ինդեքսը ( $S_{գր}$ ) կազմել է 0.151), և 2018-ին սկսված, այսպես կոչված, արժույթի և պարտքի ճգնաժամը (Döviz ve borç krizi), որը Թուրքիայի Տնտեսական գործոնների ինդեքսի վրա ազդել է հատկապես 2020-ին (0.504): Այս երկու ճգնաժամերի միջև ընկած ժամանակահատվածում էական անկում է արձանագրվել նաև 2015-2016 թթ., ինչը հիմնականում պայմանավորված է առևտրաշրջանառության բացասական դինամիկայով: Գծապատկեր 5-ը վկայում է, որ


\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

ներկրման և արտահանման 2016-ի ցածր ցուցանիշը չի կարող բացատրվել հուլիսյան իրադարձություններով, քանի որ նման միտում արձանագրվել է նաև 2015-ին, և մեծապես պայմանավորված է տարածաշրջանային հակամարտություններում Թուրքիայի ներգրավմամբ (պատճառներից մեկն էլ այն է, որ արտահանման տեսանկյունից արևմտյան երկրներից հետո Թուրքիայի գլխավոր գործընկերն Իրաքն է): Այսպես, 2014-ի համեմատությամբ (504.84 մլրդ դոլար) Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառությունը 2016-ին նվազել է 84.53 մլրդ դոլարով՝ կազմելով 420.31 մլրդ դոլար: Ցուցանիշն զգալիորեն բարելավվել է 2021-ին և հատել 580 մլրդ դոլարի սահմանը: Կտրուկ գնաճի ֆոնին այս հանգամանքը փրկողակ է թուրքական տնտեսության համար, մանավանդ որ արտահանման ծավալների աճն էրդողանական տնտեսության ինքնաբավության կարևոր երաշխիքներից է:

**Գծապատկեր 5**

**Թուրքիայի առևտրաշրջանառության (ներառյալ ծառայությունների) ծավալների համեմատական վերլուծությունն ըստ ՀԲ-ի տվյալների (մլրդ դոլար)**



ԱՂԿ-ի օրոք ծագած երկու ճգնաժամերի միջև ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ 2009-ին Թուրքիայի տնտեսության անկումն ուղղակիորեն կապված էր Միացյալ Նահանգներում սկիզբ առած և Եվրոպայում տարածված ճգնաժամի հետ (ինչն էլ իր հերթին պայմանա-

վորված էր գործարար ցիկլերով, միջազգային առևտրի և կապիտալի շարժի անհավասարակշռությամբ, հիփոթեքային ճգնաժամով և այլն), մինչդեռ 2018 թվականից քրոնիկ բնույթ ստացած ճգնաժամը գերազանցապես Թուրքիայի ներքին և մասամբ նաև արտաքին քաղաքականության հետևանք է, որի վրա լրացուցիչ ազդեցություն է գործել նաև կորոնավիրուսային համավարակը: Այլ ձևակերպմամբ՝ եթե 2009-ի տնտեսական աննախադեպ անկումը ֆինանսատնտեսական բնույթ ունի և պայմանավորված է արևմտյան շուկայի անկայունությամբ, ապա տասը տարի անց արձանագրված տնտեսական հերթական անկայունության պատճառը տնտեսության զարգացման չինական մոդելի ընդօրինակումն էր, ինչպես նաև զիջումների անպատրաստ արտաքին քաղաքականությունը, պետությունը կաթվածահար արած հեղաշրջման փորձն ու հետհուլիսյան իրադարձությունները: Օրինակ՝ Թուրքիայում Շվեդիայի նախկին դեսպան Մ. Սահլինը երկրի անկայունությանը նպաստող 5 հիմնական գործոններ է նշում և դրանք բնութագրում «ապակառուցողական հետցնցումներ»: Ընդ որում, որպես 5-րդ գործոն կամ «հիմնարար խնդիր» համարում է տնտեսության վրա մյուս 4 հետցնցումների<sup>8</sup> բացասական ազդեցությունը (*Sahlin 2017, 155-57*): Սա, իհարկե, հիմնավոր և փաստարկված տեսակետ է, քանի որ ԱԶԿ-ի՝ գյուլենականությունն արմատախիլ անելու նարատիվային օրակարգում կարևոր տեղ է զբաղեցնում Ֆ. Գյուլենի հետ ասոցիացվող մասնավոր գործարարության դեմ արշավը: Ֆինանսական խորհրդատու Քուրիլայն էլ երկու տարվա ընթացքում խորացած տնտեսական ճգնաժամը կապում է նախագահական համակարգի, համավարակի և ուկրաինական ճգնաժամի հետ՝ նշելով, որ 2022-ի աշնանը գնաճը կազմել է 83.45% (գրեթե մոտեցել է 1998-ի մակարդակին), գործազրկության բնական մակարդակը՝ 10%, իսկ աշխատողների 1/3-ը վաստակում է նվազագույն աշխատավարձ (մոտ 300 ԱՄՆ դոլար) (*Kubilay 2022, 2*): Ավելին, ըստ տնտեսագետի, արժույթի նոր ցնցման դեպքում գնաճը կարող է դառնալ եռանիշ:

<sup>8</sup> Ըստ Սահլինի՝ հեղաշրջման փորձին հաջորդած ցնցումներից առավել կարևոր են՝ գյուլենականների ներգրավվածությունը պետական և մասնավոր հատվածում, ընտրված կառավարության աջակցության հարցում Արևմուտքի զուսպ կեցվածքը, Քուրդիստանի բանվորական կուսակցության «ահաբեկչական» գործունեությունն ու փախստականների ճգնաժամը:

**«Արժույթի և պարտքի ճգնաժամը»՝ որպես տնտեսական նոր քաղաքականության հետևանք.** Սովորաբար զարգացող երկրների տնտեսությունները ճգնաժամային իրավիճակներում հաճախ են բախվում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ ազգային արժույթի արժեզրկումը,<sup>9</sup> պետական պարտքի մեծացումն ու բարձր գնաճը: Բայցևայնպես, Թուրքիայի դեպքում 2019 թ. արձանագրված տնտեսական անկումը, որի բացասական դինամիկան շարունակվում է նաև 2020-ին, ոչ այնքան պայմանավորված է որպես զարգացող երկիր տնտեսական մարտահրավերներին պատշաճ դիմակայելու ռազմավարության բացակայությամբ կամ Կենտրոնական բանկի անհաշվենկատ քաղաքականությամբ, որքան նախագահ Էրդողանի՝ թուրքական տնտեսության վերափոխման նորարարական տեսլականով: Քաջ գիտակցելով, որ օտարերկրյա կապիտալի արտահոսքի դեպքում թուրքական տնտեսությունն արագորեն հայտնվում է ցնցումների մեջ, Էրդողանն առաջարկում է որդեգրել տնտեսական անկախության քաղաքականություն, այն է՝ նվազագույնի հասցնել օտարերկրյա ներդրումներից կախվածությունն ու հաշվարկային դրույքի իջեցմամբ խթանել երկրի ներքին շուկան: Այս տեսանկյունից հիմնավոր են ինչպես Էրդողանի, այնպես էլ նրա կառավարության մտահոգությունները, քանի որ դեռևս 2013 թ. ամերիկյան անդրազգային խոշորագույն երկրորդ կորպորացիան Բրազիլիայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի և Հարավային Աֆրիկայի հետ Թուրքիան ընդգրկել էր, այսպես կոչված, «փխրուն հնգյակում»՝ ձևավորվող շուկա ունեցող այն պետությունների ցանկում, որոնք իրենց աճող հավակնությունների ֆինանսա-

---

<sup>9</sup> Տնտեսական նոր քաղաքականության մեջ ԱԶԿ-ի համար չափազանց զգայուն է ազգային արժույթի արժեզրկման թեման, քանի որ 2000-ականների սկզբին հենց իրենք են հաջողել լիրայի վերաարժևորումը: 1999-2004 թթ. լիրան՝ որպես առավել նվազ արժեք ունեցող միավոր, հայտնվել էր Գինեսի ռեկորդների գրքում (նման բացասական ցուցանիշ գրանցվել էր նաև 1994-95 թթ.), ուստի իշխանության գալուց հետո ԱԶԿ-ն ամիջապես գործուն քայլեր ձեռնարկեց արժույթի շարունակական արժեզրկումը կանխելու և իր նախընտրական խոստումները կատարելու ուղղությամբ: Լիրայի ճգնաժամը կամ Էրդողանի բնորոշմամբ՝ «ազգային ամոթը» հաղթահարելու նպատակով 2003 թ. դեկտեմբերին ԹԱՄԺ-ն օրենք ընդունեց, որը թույլ էր տալիս 6 զրոների կրճատմամբ դեմոմինացիա իրականացնել և անցում կատարել թուրքական նոր լիրայի: 2009 թ. հունվարի 1-ից շրջանառության մեջ դրվեց արժույթի վերանվանված տարբերակը՝ թուրքական լիրան (Türk lirası, հավավումը՝ TL):



վորման առումով չափազանց շատ են կախված անվստահելի օտարերկրյա ուղղակի ներդրումներից:

Ըստ Էրդողանի՝ տնտեսական անկախության ոչ ավանդական մոտեցմամբ հնարավոր է կտրուկ մեծացնել արտահանման ծավալներն ու նոր աշխատատեղեր ստեղծել: Այս ռազմավարական գաղափարը բխում է 2023 թ. ընդհանուր տեսլականից և նվիրված է Հանրապետության հոշակման 100-ամյակին: Նոր Թուրքիայի ծնունդն ազդարարող մանիֆեստային թիրախները շրջադարձային փոփոխություններ են նախատեսում ինչպես տնտեսության, այնպես էլ ծառայությունների ոլորտում: Մասնավորապես, ակնկալվում է ՀՆԱ-ի ցուցանիշներով Թուրքիան ընդգրկել թոփ-10 երկրների շարքում, արտահանման ծավալը հասցնել 500 միլիարդ ԱՄՆ դոլարի և տարեկան հյուրընկալել 50 միլիոն զբոսաշրջիկի: Եթե 2023-ին ընդառաջ վստահաբար կարելի է պնդել, որ այս ցուցանիշներին անհնար է հասել, ապա Թուրքիայում առաջին լուրջ նախազգուշացումները կատարվել են դեռևս հեղաշրջման փորձից առաջ՝ ամփոփելով ընդհուպ 2015 թ. տնտեսական տվյալները: Մասնավորապես, թուրքական տնտեսությունը «Փոքր բաց տնտեսության» (SOE) մեթոդաբանությամբ մոդելավորելու միջոցով և «DSGE-VAR» մոդելի բայեսյան գնահատման պրոյեկցիաներով կանխատեսվել էր, որ 2023-ին Թուրքիայի անվանական ՀՆԱ-ն կազմելու է 942.4 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով՝ 90% հավանականությամբ առավելագույնը 12000 ԱՄՆ դոլար (*Arslan, Serttas, and Aydin 2016, 112-16*): Փաստորեն, այն տեսլականը, որն ԱԶԿ-ն մշակել էր 2010-2011 թթ. ընթացքում, թեպետ հավակնոտ է, սակայն անիրատեսական, քանի որ հանգամանքների բերումով հնարավոր չէ անգամ սահմանված ցուցանիշը կիսով չափ ապահովել: Այս հանգամանքն ամենայն հավանականությամբ պայմանավորված է նաև 2014-2015 թթ. ԱՄՆ դոլարի նկատմամբ թուրքական լիրայի զգալի արժեզրկմամբ:

Ռազմական հեղաշրջման փորձի պատճառով 2016-2017 թթ. թուրքական տնտեսությունում ի հայտ եկած խնդիրներն արմատախիլ անելու համար Էրդողանն առաջ է քաշել դրամավարկային նոր քաղաքականություն, որի իրականացման նպատակով ճնշում է գործադրում Կենտրոնական բանկի վրա՝ փորձելով փոխել տոկոսադրույքի քաղաքականության պայմանները: Փաստացի օգտվելով, իսկ շատ դեպքերում՝ չարաշահելով պաշ-

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

տոնեական լիազորությունները՝ նախագահ Էրդողանը ստիպում է հաշվարկային ցածր դրույք սահմանել, մինչդեռ անկախությունից ու ինքնուրույնությունից զրկված Կենտրոնական բանկը չի կարողանում մակրոֆինանսական հարաբերական կայունություն ապահովել: Ընդ որում, Կենտրոնական բանկի (ԿԲ) և Էրդողանի հարաբերությունները ներդաշնակ չեն անգամ ԿԲ-ում կառավարության ամենավստահելի մարդկանց հայտնվելուց հետո: Էրդողանը նախ անիրատեսական պահանջներ է ներկայացնում նոր նշանակված կադրերին և համառորեն պնդում իր տեսլականի հեռանկարայնությունը, ապա հեռացնում պաշտոնից՝ մեղադրելով ցածր տոկոսադրույքների քաղաքականությունը տապալելու մեջ: Ասվածի ցցուն օրինակ է ԱԶԿ-ի անդամ, 2015-2018 թթ. Ֆինանսների նախարար, ապա Ռազմավարության և բյուջեի նախագահության (ՌԲՆ, թուրքերեն՝ Strateji ve Bütçe Başkanlığı) ղեկավար Նաջի Աղբալի պաշտոնանկությունը, որը 2020 թ. նոյեմբերին նշանակվեց ԿԲ-ի նախագահ, սակայն ընդամենը չորս ամիս անց՝ 2021 թ. մարտին, ազատվեց աշխատանքից, քանի որ, անկախ օբյեկտիվ հիմնավորումներից, նախկին նախագահի օրինակով չհաջողեց լիրայի անկումը սեղմ ժամկետում կասեցնելու հանձնառությունը:

Էրդողանի ապակառուցողական գործելաճը չի սահմանափակվում միայն Կենտրոնական բանկի գործունեությանն անհարկի միջամտելով: Ամենևին զարմանալի չէ, որ Էրդողանականությունը սահմանելու նպատակով նշվում են չորս չափումներ, իսկ որպես տնտեսական համակարգի ձև առաջ է քաշվում նորպատրիմոնիալիզմի գաղափարը: Պատճառն այն է, որ Էրդողանի հովանավորչական քաղաքականությունը պահպանողական, ազգայնական և կրոնամետ ոչ հարուստ համախոհներին դարձրել է բուրժուազիայի մի նոր տեսակ: Ավելին, ստեղծվել են բարեգործական բազմաթիվ կազմակերպություններ (ազդեցիկ է հատկապես «TURGEV»-ը), որոնք պետական գործառույթներով են օժտված, սակայն հարկ չեն վճարում և պատկանում են նախագահի ընտանիքին, ինչպես նաև մենաշնորհել է պետական ռեսուրսները՝ ներառյալ աշխատատեղերն ու պետմրցույթները (*Yilmaz and Bashirov 2018, 1819-20*): Փաստորեն, Թուրքիայում ձևավորվել են քաղաքաբնակ աղքատների և կախյալ գործարարների դասակարգեր, որոնք ՏԻՄ-երի ֆինանսական աջակցությամբ վերածվել են Էրդողանի տնտեսական և քաղաքական հենարանի: Կախյալ գործարար դասի ձևա-

վորման գործում էական նշանակություն են ունեցել և շարունակում են ունենալ հատկապես պետական գնումների համակարգը, սեփականաշնորհումները և մասնավոր կապիտալի զավթումն այլախոհներից հոգուտ ԱԶԿ-ի կողմնակիցների: Ասվածի լավագույն վկայությունն են Պետական գնումների մասին օրենքում կատարված ավելի քան 150 փոփոխությունները, որոնք լայն հնարավորություններ ընձեռեցին էրդողանին հավատարիմ գործարար շրջանակներին: Այսպես օրինակ՝ 2002-2014 թթ. կառավարությանը հաջողվեց 500 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ պետական մրցույթները հեռու պահել բյուրոկրատական և դատական վերահսկողությունից (*Esen and Gümüşçü 2020, 9-11*):

2018 թվականից ի վեր թուրքական տնտեսությունն ապակայունացնող գործոնների թվին ավելացել է նաև արտաքին քաղաքական ազդեցությունը, ինչը պայմանավորված է Թուրքիայի՝ ռազմավարական դաշնակից Միացյալ Նահանգների և մերձավոր հարևանության գործընկերների հետ սրված հարաբերություններով: Այսպես, 2018 թ. Սիրիայում թուրքական ռազմական արկածախնդրության, ինչպես նաև այլախոհների զանգվածային հետապնդումների պատճառով ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը որպես պատժամիջոց կրկնապատկեց Թուրքիայից արտահանվող այլումինի և պողպատի մաքսատուրքերը, ինչը խիստ բացասաբար ազդեց ինչպես Թուրքիայի վճարային հաշվեկշռի, այնպես էլ լիրայի վրա: Այն հանգամանքը, որ «առևտրային պատերազմն» ուղղված էր Չինաստանի դեմ, իսկ դա քաղաքական որոշում էր, հրաշալի գիտակցեցին նաև Թուրքիայում. չէ՞ որ Թուրքիան ԱՄՆ-ի համար տնտեսական սպառնալիք չէ և, ի տարբերություն Չինաստանի, ԱՄՆ-ի հետ արտաքին առևտրում ունի բացասական սալդո (*Kaya 2019, 26*): Օրինակ, եթե 2017-ին Թուրքիայից ԱՄՆ 951.6 մլն դոլարի պողպատ էր արտահանվել, ապա պատժամիջոցներից հետո՝ 2018-ին, այն կազմեց 566.8 մլն դոլար, իսկ 2019-ին՝ ընդամենը 106.3 մլն դոլար: 2022 թվականի դրությամբ այս սահմանափակումները տարածվում են միայն Թուրքիայի վրա (*Aran 2022, 2-4*):

Պետք է նշել նաև, որ պակաս կարևոր չեն Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ ծագած քաղաքական տարածայնությունները, որոնք ուղղակիորեն ազդում են թուրքական տնտեսության վրա:

### 5.3 Սոցիալական գործոնը՝ որպես ընդհանուր կայունության երաշխիք

Ի տարբերություն քաղաքական և տնտեսական կայունության համաթվերի՝ Թուրքիայի Սոցիալական գործոնների ինդեքսը (Ս<sub>ԳԻ</sub>) ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո երեք տարի շարունակ թռիչքաձև աճ է գրանցել, այնուհետև ավելի քան 10 տարի (2005-2016) կայուն է մնացել՝ հավասարակշռելով տնտեսական աճի ու քաղաքական անկայունության հակադիր զարգացման միտումները (տե՛ս *Գծապատկեր 7*): Մեծապես կախված լինելով տնտեսության դրական դինամիկայից՝ սոցիալական կայունության ինդեքսն ԱԶԿ-ի կառավարման ամբողջ շրջանում երբեք բացասական չի եղել, ավելին՝ անգամ նորագույն Թուրքիայի պատմության ամենաճանաժամային տարիներին (2016 թ. ռազմական հեղաշրջման փորձ, բազմիցս երկարաձգված արտակարգ դրության պայմաններում խորքային պետության վերացմանն ուղղված ծայրահեղ միջոցառումներ, հակաահաբեկչական պայքարի անվան ներքո քրդամետ այլախոհների ճնշումներ և զանգվածային հետապնդումներ) Ս<sub>ԳԻ</sub>-ի ցուցանիշը նկատելիորեն աճել է (0.40): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալական քաղաքականություն մշակելիս ԱԶԿ-ն ճիշտ է սահմանել նպատակն ու խնդիրները՝ սոցիալական պաշտպանության ենթակա խմբերի կարիքները հոգալու համար հստակեցնելով ռազմավարական հիմնական ուղղությունները: Օրինակ՝ բնակչության առանձին շերտերի, ինչպես նաև խոցելի խմբերի սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համալիր միջոցառումներն այնքան արդյունավետ էին, որ ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակի ընթացքում Թուրքիայի ձեռքբերումներին անդրադարձավ նաև Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Զարգացման ծրագիրը՝ մեջբերելով Ջնդեթ Յըլմազի ներկայացրած ցուցանիշները: Այսպես, 2002 թ. Թուրքիայի բնակչության մոտ 30%-ն օրական վաստակում էր 4.30 ԱՄՆ դոլար, ինչն ավելի ցածր էր, քան կառավարության սահմանած աղքատության շեմը, մինչդեռ 2010-ին օրական 4.30 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցող քաղաքացիների տեսակարար կշիռը կտրուկ անկում ապրեց՝ հասնելով 3.7%-ի (*UNDP 2013, 83*): Փաստորեն, սոցիալական աջակցության փաթեթներով թուրքական կառավարությանը հաջողվեց եկամուտների բաշխման հաշվենկատ քաղաքականություն

վարել, ինչպես նաև ապահովել անաշխատունակ և չքավոր շերտերի պաշտպանությունը: Ընդ որում, հարկ է նկատել, որ թուրքական տնտեսության աճի հաշվին ֆինանսական մեծ պաշարների ներգրավմամբ աղքատության արագ հաղթահարումը ոչ միայն և ոչ այնքան պայմանավորված էր աղքատ և չքավոր շերտերին թիրախավորելու պրակտիկայով, որքան ռազմավարական մոտեցմամբ՝ սոցիալական անվտանգության երկարաժամկետ երաշխիքներ ապահովելու պետական համալիր քաղաքականությամբ:

#### Աղյուսակ 4

**ԱԶԿ-ի կառավարման շրջանում Թուրքիայի Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) համեմատական տվյալներն ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի զեկույցների**

ՄԶ զեկույ- ցը	ՄԶՀ արժե- քը	Փոփոխականները			
		Կյանքի միջին սպասվող տևողություն	Կրթություն		Համախառն ազգային եկամուտը 1 շնչի հաշվով (\$)
			Ուսման միջին տևողություն (տարի)	Ուսման սպասվող տևողություն (տարի)	
2003	0.690	72.9	12.1	5.8	15.665
2010	0.745	75.1	13.8	7.1	19.909
2017	0.833	77.1	18.0	8.3	27.553
2021	0.838	76.0	18.3	8.6	31.033

Գրեթե բոլոր ցուցանիշներով Թուրքիան հաջողել է սոցիալական քաղաքականությունը (տե՛ս Աղյուսակ 4) և դասվում է ՄԶՀ ամենաբարձր արժեքն ունեցող 50 երկրների շարքին (2021-ի դրությամբ՝ 48-րդ տեղ): Բացառությամբ 2020 թվականի (2019-ի համեմատությամբ նվազել է 0.009-ով)՝ մյուս բոլոր տարիներին Թուրքիայի ՄԶՀ-ն կայուն աճ է գրանցել, ավելին՝

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

2014 թվականից Թուրքիայի մարդկային զարգացման որակավորումը համարվում է «շատ բարձր», քանի որ ՄՀՀ արժեքը գերազանցում է 0.800-ը:

Առանձնակի կարևոր է այն հանգամանքը, որ իշխանության 20 տարիների ընթացքում ԱԶԿ-ն մշտապես ուշադրության կենտրոնում է պահել կրթությունը՝ ընդհանուր բարեկեցության և կենսամակարդակի բարձրացումը կապելով միջնակարգ և բարձրագույն որակյալ կրթություն ապահովելու հետ: Որպես օրինակ՝ եթե 1997 թ. բարեփոխումներով պարտադիր էր համարվում 8-ամյա կրթությունը, ապա 2012 թ. մարտին ընդունված նոր օրենսդրությամբ 2012-13 ուսումնական տարվանից գործարկվեց «4+4+4 կրթական համակարգը» (12 Yıllık Zorunlu Eğitim Sistemi), և 12-ամյա կրթությունը դարձավ համապարտադիր: Այս փոփոխությունը մեծ քննարկումների առիթ դարձավ Թուրքիայում, քանի որ առաջին հայացքից դրական փոփոխության ետևում թաքնված էին նաև կրոնաքաղաքական դրդապատճառներ: ԱԶԿ-ի հինգ պատգամավորների կողմից 2012 թ. փետրվարին ԹԱՄԺ-ին ներկայացված «4+4+4» օրենսդրական նախագիծը 15-ամյա դադարից հետո նախատեսում էր նաև, այսպես կոչված, Իմամ-հաթիփ միջին դպրոցների<sup>10</sup> (ԻՀԴ, թուրքերեն՝ İmam hatip ortaokulu, İHO) վերականգնում: Այս նախաձեռնությունն էրդողանի համար անձնական կարևորություն ուներ, քանի որ ինքը ևս ԻՀԴ-ի շրջանավարտ էր և անթույլատրելի էր համարում թուրքի աշխարհաընկալողական կրթությունից իսլամի զատումը: Հատկանշական է, որ 2012-13 ուսումնական տարում հոգևոր-կրոնական ուղղվածության միանգամից մի քանի առարկաներ սկսեցին դասավանդվել ոչ միայն նորաբաց ԻՀԴ-ներում, այլև աշխարհիկ միջին դպրոցներում: Մասնավորապես, որպես ընտրովի առարկաներ ներմուծվեցին Ղուրանը (Kur'an-i Kerim), Մուհամմադ մարգարեի վարքը (Hz.


---

<sup>10</sup> Իմամ-հաթիփ դպրոցներն ի սկզբանե նախատեսված են եղել հոգևոր առաջնորդներ պատրաստելու համար, սակայն մեր օրերում վերածվել են Թուրքիայի կրթական համակարգին լիարժեքորեն ինտեգրված հաստատությունների, որտեղ խորությամբ ուսումնասիրվում է իսլամ: Տարրական կրթություն (ilköğretim) ստանալուց հետո սովորողներն իրենց ուսումը կարող են շարունակել Իմամ-հաթիփ միջին (orta, 4 տարի), ապա տղաների և աղջիկների համար նախատեսված ավագ (lise, 4 տարի) դպրոցներում: Իմամ-հաթիփ դպրոցների կառուցվածքի և գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Tanrikulu, Faik and Muhammed Ali Uçar. 2019. “Religious Teaching in Turkish Educational System: Imam Hatip Schools.” ÖNDER Imam-Hatip School Graduates and Members.

Muhammed'in Hayati) և Կրոնագիտության հիմունքները (Temel Dini Bilgiler): Թեպետ ՀԺԿ-ն այս նորամուծությունը համարեց հանրապետական աշխարհիկությունը խարխլող և դիմեց Սահմանադրական դատարան, սակայն որևէ հաջողության չհասավ. դատարանը մերժեց դիմումը (*Çelik et al. 2013, 30-31*): Փաստորեն ԱԶԿ-ի կուսակցական գաղափարախոսությունը, որը ենթադրում է իսլամի ու ժողովրդավարության համադրում և հասարակական-քաղաքական կյանքում իսլամական գործոնի գերարժևորում, ԻՀԴ-ների միջոցով նոր կյանք ստացավ և պարարտ հող նախապատրաստեց, որ ԱԶԿ-ի համախոհները ներթափանցեն միջին դարոց:

**Գծապատկեր 6**

**Չբաղվածության և աղքատության մակարդակների հարաբերակցությունն (%) ըստ ՀԲ-ի տվյալների**



Ինչպես բխում է սոցիալական գործոնների վերլուծությունից, դիտարկվող ժամանակահատվածի վերջին հինգ տարիների ընթացքում Թուրքիայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի վրա առավել բացասաբար են ազդում այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են՝ զբաղվածության և բնակչության հարաբերակցությունը, աշխատավարձերը, Ջինի գործակիցը և հանցագործությունների քվաքանակը, իսկ առավել դրական՝ աղքատության

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

տության մակարդակի նվազման միտումներն ու ՄԶՀ-ն: Ընդ որում, այս դինամիկան անմիջականորեն պայմանավորված է տնտեսական գործոններով, որոնց ազդեցությունը սոցիալական ոլորտի վրա առավել ակնառու է 2017-ից (0.335): Բայց եթե տնտեսական գործոնների դինամիկայում 2021 թվականին դրական միտում է նկատվում, ապա սոցիալական գործոնների կորը շարունակաբար անկում է ապրում (2021 թ. դրությամբ՝ 0.069): Այս է պատճառը, որ վերջին հինգ տարիների ընթացքում սոցիալական գործոնները կորցրել են իրենց՝ ընդհանուր կայունության երաշխավորի տևական նշանակությունը:

ԱԶԿ-ի կառավարման տարիներին Թուրքիայում զբաղվածության և բնակչության հարաբերակցության ու աղքատության մակարդակները մշտապես ուղիղ համեմատական են եղել, սակայն դա որոշակիորեն խախտվել է 2020-2021 թթ., քանի որ զբաղվածության մակարդակը նվազել է՝ հավասարվելով 2003 թ. ցուցանիշին (43%): Ի հակառակ այս վիճակագրության՝ զգալի առաջընթաց է գրանցվել աղքատության հաղթահարման հարցում: Իշխանության 20 տարիների ընթացքում ԱԶԿ-ին հաջողվել է գրեթե կրկնակի կրճատել աղքատության մակարդակը: Որպես օրինակ՝ եթե 2003-ին աղքատությունը կազմում էր 28.1%, ապա 2020-ին՝ 14.4%: Ընդ որում, սա ամենևին էլ լավագույն ցուցանիշը չէ: 2016-ին աղքատության մակարդակը կազմել է 13.5%: Զարմանալի չէ, որ ի տարբերություն քաղաքական և տնտեսական գործոնների համաթվերի՝ ճգնաժամային 2016-ին Սոցիալական գործոնների ինդեքսն աճ է արձանագրել (0.391):


**Ինստիտուցիոնալ վերակազմակերպման դրսևորումները.** Թուրքական իշխանությունների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հաջողելու հարցում կարևոր նշանակություն են ունեցել և ցայսօր ունեն այդ գործում ներգրավված ու հանձնառություններ ստանձնած հաստատությունները: Օրինակ՝ 1960-ից ընդհուպ 2011 թ. հունիսն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական քաղաքականության մշակման հարցում Թուրքիայում անփոխարինելի դեր է խաղացել Պետական պլանավորման կազմակերպությունը (ՊՊԿ, թուրքերեն՝ Devlet Planlama Teşkilati, հապավումը՝ DPT): Այս կառույցը, կառավարության սահմանած նպատակներին համաձայն, հնգամյա պլաններ է մշակել՝ խորհրդատվություն տրամադրելով տնտեսական, սոցիալական և մշակութային խնդիրների լուծման հնարա-



վոր եղանակների վերաբերյալ: Բայցևայնպես, տնտեսության ազատակա-նացման պատճառով ՊՊԿ-ն վաղուց չէր համապատասխանում ժամանակի պահանջներին և կորցրել էր իր նախկին նշանակությունը, ուստի զարմա-նալի չէ, որ 2011-ին այն ցրվեց, և ձևավորվեց Զարգացման նախարարությունը (Kalkinma Bakanliđi):

Գծապատկեր 7

Թուրքիայի քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2021 թթ.)\*



Այն հանգամանքը, որ 2017 թվականից Թուրքիայի Սոցիալական գոր-ծոնների ինդեքսը նվազման դինամիկա ունի (տե՛ս Գծապատկեր 7), վկա-յում է այն մասին, որը Զարգացման նախարարությունը չի հաջողել սոցիալ-տնտեսական քաղաքականության վերափոխման դժվարին գործը, մինչդեռ հիմնադրման պահից այդ գերատեսչությանը վերապահվել էր հովիստիկ մոտեցմամբ ռազմավարական մշակույթ ձևավորել՝ ստանձնելով Թուրքիա-յի զարգացման առաջնորդությունը: Բայցևայնպես, ինչպես երևում է կա-ռույցների փոփոխության պրակտիկայից, նախագահ Էրդողանը սոցիալ-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

տնտեսական ոլորտում պետական քաղաքականության անհաջողությունը պայմանավորում է ոչ այնքան բովանդակային թերացումներով, որքան գերատեսչությունների կազմակերպչական ոչ լիարժեք գործունեությամբ: Այս առումով բավական է նշել այն փաստը, որ Ջարգացման նախարարությունը նույնպես ցրվեց. ձևավորվեցին Արդյունաբերության և տեխնոլոգիաների նախարարությունը (Sanayi ve Teknoloji Bakanligi) ու Ռազմավարության և բյուջեի նախագահությունը: Ընդ որում, այս նախաձեռնությունն ամենևին էլ օպտիմալացմանն ուղղված քայլ չէր, քանի որ նորաստեղծ Նախագահությանը միացվեց նաև Բյուջեի գլխավոր վարչությունը (Bütçe Genel Müdürlüğü): Պարզապես այս անգամ սոցիալ-տնտեսական ռազմավարական քաղաքականության մշակման համար պատասխանատու կառույցը սկսեց գործել նախագահի անմիջական ենթակայությամբ՝ զրկվելով նախկին ինքնուրույնությունից: Փաստորեն ինչպես ԿԲ-ի, այնպես էլ ՌԲՆ-ի դեպքում 2016 թ. հեղաշրջման փորձին հաջորդած ճգնաժամն արագորեն հաղթահարելու անկարողությունը ոչ այնքան այդ հաստատությունների ձախողումն է, որքան նախագահի ոչ ստանդարտ գործելաոճը. չէ՞ որ խնդիրների լուծման դասական մոտեցումները չեն կարող սոցիալ-տնտեսական անվտանգություն ապահովել Թուրքիայի համար: Բայցևայնպես, այս ամենին զուգահեռ, կա նաև ինստիտուցիոնալ փոխակերպման հաջողված օրինակ: Այսպես՝ 2008-ին որդեգրվեց սոցիալական ապահովության պետական միասնական քաղաքականություն, և Թուրքիայի սոցիալական համակարգի գլխավոր կառույցները (SSK, ESK, Bağ-Kur) միավորվեցին: Նույն թվականին իրականացված կարևոր քայլերից են նաև «Ընտանիքի պաշտպանության մասին օրենքի կիրարկման կարգի» ընդունումը, որով ընդլայնվեցին ընտանեկան բռնության դեպքում պետության իրավունքները, և «Սոցիալական ու ընդհանուր առողջապահական ապահովագրության մասին օրենքը», որի ներդրմամբ պետությունը երաշխավորեց, որ մինչև 2036 թիվը չի բարձրացնելու կենսաթոշակային տարիքը (Плотников 2016):

## 5.4 Թուրքիայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ձևավորման քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխականների համալիր վերլուծության հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին. առաջին՝ ԱԶԿ-ի կառավարման տարիներին Թուրքիայում հինգ անգամ արձանագրվել է քաղաքական համակարգի կայունության գործակցի նվազում (2007, 2009, 2013, 2016, 2019-2021), սակայն առավել խնդրահարույց էին միայն վերջին ժամանակահատվածի անկումները (2016, 2019-2021), որի մասին են վկայում ՔՀԿԻ-ի՝ -0.041-ից -0.101-ի սահմաններում տատանվող բացասական ցուցանիշները: Ընդ որում, թեպետ Ք<sub>ԳԻ</sub>-ն առաջին անգամ բացասական է եղել 2013-ին, սակայն տնտեսական և սոցիալական գործոնների հաշվին Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը մնացել է դրական:

Երկրորդ, եթե ՔՀԿԻ-ի 2007-ի անկումն առաջին հերթին ունի քաղաքական (սահմանադրական փոփոխություններ, էլեկտրոնային հուշագիր), իսկ 2009-ի անկումը՝ տնտեսական (ֆինանսական ճգնաժամ) բնույթ, ապա 2016-2021 թթ. անկայունությունը թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական գործոնների հավասար ազդեցության հետևանք է: Սա էլ իր հերթին պայմանավորված է այն իրողությամբ, որ եթե 2009-ի տնտեսական ճգնաժամի պատճառը համաշխարհային շուկայի անկայունությունն էր, ապա «Արժույթի և պարտքի ճգնաժամն» արհեստական բնույթ ունի և ուղղված է թուրքական տնտեսության վերակազմակերպմանն ու անկախության մակարդակի բարձրացմանը:


Եվ, վերջապես, երրորդ, հակառակ ներթուրքական կայունության վրա բացասաբար ազդող գործոնների առատությանը (ռազմական հեղաշրջման փորձերից ընդհուպ արտատարածքային զինված ներխուժումներ), Թուրքիայի քաղաքական կայունության վրա դրականորեն է ազդում ԱԶԿ-ի գերիշխանությամբ ձևավորված քաղաքական համակարգը: Քանի որ ԱԶԿ-ի իշխանությունը բաժանվում է զանգվածային և իրավիճակային աջակցության շրջափուլերի, իսկ որպես ջրբաժան հանդես է գալիս ոչ թե 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձը, այլ Գեզի պուրակի 2013 թ.

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

իրադարձությունները, կարելի է եզրահանգել, որ Թուրքիայի քաղաքական կայունության ամենամեծ մարտահրավերն ավտորիտարիզմի ամրապնդումն է, որը տարածվել է նաև տնտեսական քաղաքականության վրա: Այլ ձևակերպմամբ՝ թեպետ Թուրքիան բավականին բարդ և բազմաշերտ պետություն է, սակայն ժողովրդավարական վարչակարգը գործել է՝ ԱԶԿ-ի կառավարման առաջին շրջանում երաշխավորելով երկրի քաղաքական կայունությունը: Բայցևայնպես, էրդողանականության ինստիտուցիոնալացումը (մասնավորապես՝ 2017-ի սահմանադրական փոփոխություններից հետո) հասարակության բևեռացման պայմաններում հանգեցրել է տևական անկայունության, քանի որ քաղաքական, սոցիալական և տնտեսական քաղաքականություն իրականացնող բոլոր ինստիտուտներն անխտիր զրկվել են ինքնուրույնությունից:

**Գծապատկեր 8**

**Թուրքիայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2021 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿ-ի մեթոդաբանությամբ:

## Գրականության ցանկ

- Abramowitz, Michael. 2018. “Freedom in the World 2018: Democracy in Crisis.” Freedom House.
- Adsay, Ismail. 2020. “The Impact of the 2016 Turkish Military Coup on Politics in Turkey.” *International Journal of Science and Society*, volume 2, issue 2: 15-20.
- Aran, Bozkurt. 2022. “Türkiye demir-çelik ihracatında ABD pazarında darboğaza mi giriyor?” *Türkiye Ekonomi Politikaları Araştırma Vakfı (TEPAV)*. № 202207: 1-6.
- Arslan, Mesut Murat, Fatma Özgü Serttaş, and Recai Aydin. 2016. “A Projection for the Turkish Economy in 2023 with a Bayesian Approach.” *Sarajevo Journal of Social Sciences Inquiry*, volume 2, no. 1: 103-16.
- Aydin-Düzgit, Senem. 2019. “The Islamist-Secularist Divide and Turkey’s Descent into Severe Polarization.” In the Carothers, Thomas and O’Donohue, Andrew, (eds.) *Democracies Divided: The Global Challenge of Political Polarization*. Washington, D.C.: Brookings Institution Press: 17-37.
- Balkan, Osman. 2020. “The Cemetery of Traitors.” In the *Turkey’s Necropolitical Laboratory: Democracy, Violence and Resistance*, edited by Banu Bargu, 232-52. Edinburgh: Edinburgh University Press.
- Castaldo, Antonio. 2018. “Populism and competitive authoritarianism in Turkey.” *Southeast European and Black Sea Studies*, volume 18, issue 4: 467-87.
- Çelik, Zafer, Nevfel Boz, Sedat Gümüş, ve Fatih Taştan. 2013. “4+4+4 Eğitim Reformunu İzleme Raporu.” *Eğitimciler Birliği Sendikası*. Ankara: Hermes Tanitim Ofset Baski Hizmetleri Kağıtçılık Limited Şirketi.
- Center for American Progress, Istanbul Policy Center, and Istituto Affari Internazionali. 2016. “Turkey’s Path to Prosperity in 2023: How to Avoid the Middle-Income Trap through Inclusive Economic Growth.”
- Çolak, Çağrı. 2022. “The Main Focus of the Referendum Texts in Turkey: Human Rights or Public Administration?” *Journal of Political Administrative and Local Studies*, volume 5, issue 2: 81-94.
- Esen, Berk, Sebnem Gümüştü. 2020. “Why did Turkish democracy collapse? A political economy account of AKP’s authoritarianism.” *Party Politics*, volume 27, issue 6: 1-17.
- Kartal, Nazim, Emrullah Ataseven. 2018. “The presidential Government System in Turkey: Discussions, Shortcomings, Suggestions.” *Journal of Public Administration and Governance (JPAG)*, volume 8, no. 1: 144-64.

**Գլուխ 5. Թուրքիայում քաղաքական կայունության կերպափոխումներն արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին (2002-2021)**

---

- Kaya, Melek. 2019. “ABD-Çin Ticaret Savaşları ve Türkiye.” Türkiye Mesleki ve Sosyal Bilimler Dergisi. Yil: 1, sayı 2: 18-30.
- Kubilay, Murat. 2022. “The Turkish Economy under the Presidential System.” Middle Eastern Institute (MEI).
- Merz, Fabien. 2018. “Security and Stability in Turkey.” CSS Analyses in Security Policy, edited by Christian Nünlist. Center for Security Studies (CSS), ETH Zurich, no. 221: 1-4.
- Miller, Terry, Anthony B. Kim, and James M. Roberts. 2022. “2022 Index of Economic Freedom.” Washington, D.C.: The Heritage Foundation.
- O’Neill, Jim, Dominic Wilson, Roopa Purushothaman, and Anna Stupnytska. 2005. “How Solid are the BRICs?” Global Economics Paper, no. 134.
- OSCE/ODIHR. 2017. “International Referendum Observation Mission. Republic of Turkey - Constitutional Referendum, 16 April 2017. Statement of Preliminary Findings and Conclusions.”
- Sahlin, Michael. 2017. “Turkey’s search for stability and legitimacy in 2016.” In the SIPRI Yearbook 2017, 151-62.
- Somer, Murat. 2019. “Turkey: The Slippery Slope from Reformist to Revolutionary Polarization and Democratic Breakdown.” The Annals of the American Academy of Political and Social Science, volume 681 (1): 42-61.
- T.C. Yüksek Seçim Kurulu. 2017. Karar no. 663, Resmî Gazete. 30050.
- Transparency International. 2022. “Corruption Perceptions Index 2021.” Berlin.
- Turkish Statistical Institute Press Release. 2022. The Results of Address Based Population Registration System, 2021. Number: 45500.
- Türkiye İhracatçılar Meclisi. 2021. İhracat 2021 Raporu: Yeni Vizyon, Yeni Yol Haritası.
- UNDP (United Nations Development Programme). 2013. “Human Development Report 2013: The Rise of the South: Human Progress in a Diverse World.” New York.
- Yılmaz, Demirhan, Musa Öztürk. 2020. “15 Temmuz Darbe Girişimi Sonrasında Demokratik Bilincin Kutsal Bileşenleri.” Selçuk Üniversitesi Edebiyat Fakültesi Dergisi, no. 43: 405-20.
- Yılmaz, İhsan, Galib Bashirov. 2018. “The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey.” Third World Quarterly, volume 39, no. 9: 1812-30.
- Аватков, Владимир Алексеевич, Михаил Валерьевич Кочкин. 2017. «Современные тенденции внутренней политики Турции». Мировая политика, № 2: 92-103.

- Կанлик, Левант. 2019. «Новый строй Турции». Свободная мысль, no. 3 (1675): 153-62.
- Кудряшова, Юлия Сергеевна. 2017. «Годовщина попытки военного переворота в Турции 15-16 июля 2016 г. Эволюция политической системы». Международная аналитика, № 2: 63-68.
- Матюхин, Владимир Владимирович. 2016. «Доминирование партии Справедливости и развития в турецком политическом процессе: идеологический аспект». Вестник РУДН. Серия: Политология. № 2: 25-38.
- Морозов, Игорь Алексеевич, Лилия Александровна Ткачук. 2019. «Правила смерти»: концепты «неправильный мертвец» и «неправильное погребение» в инструментарии социальных и политических технологий. Этнографическое обозрение, no 1: 11-26.
- Плотников, Андрей Андреевич. 2016. «Развитие системы государственного социального обеспечения в Турецкой Республике». Общество: философия, история, культура. Издательский дом «ХОРС». № 2.
- Семченко, Ольга Ростиславовна. 2015. «Политическая стабильность: сущность, понятие, информационные механизмы». Вопросы управления. № 1 (13): 53-59.
- Хасанов, Резван Ширваниевич. 2017. «Трансформация партийной системы современной Турции». ПОЛИТЭКС. Том 13, № 1: 56-69.

**ԳԼՈՒԽ 6.**  
**ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**  
**ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ**  
**ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ**

**ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

Մինչ 1979 թ. Իրանը ավելի քան 2500 տարի միապետական երկիր է եղել, որտեղ անսահմանափակ իրավունքներով իշխել է շահը: 1979թ. միապետության տապալումից հետո երկիրը վերափոխվեց Իսլամական Հանրապետություն, որի նմանօրինակը աշխարհում գոյություն չուներ: Հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնին կյանքի կոչեց վելայաթ-ե ֆաղիհի գաղափարը<sup>1</sup>:

Պետության յուրահատուկ կառուցվածքը, որը համալրված է շիայական կրոնական դրույթներով և վելայաթ-ե ֆաղիհի սկզբունքով, համարվում է Խոմեյնիի նորանուծությունը: Փաստորեն սկզբունքն ընդգծում է ֆաղիհի առաջնային դերը Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծի և պետական ապարատի բոլոր ճյուղերի նկատմամբ: Խոմեյնին իր ուսմունքում հենվում էր ինչպես դասական շիայականության, այնպես էլ արևմտյան փիլիսոփայության վրա: Հայտարարելով, թե վերադառնում են արմատներին՝ Խոմեյնին և իր կողմնակիցները վելայաթ-ե ֆաղիհի գաղափարի հիմքում դրեցին շատ ավելի լուրջ դրույթներ: Երկրի ղեկն այդուհետ պատկանելու էր Հեղափոխության առաջնորդին (այսուհետ Առաջնորդ), և ԻԻՀ

---


<sup>1</sup> Վելայաթ նշանակում է առաջնորդություն, գերիշխանություն, ֆաղիհ՝ մուսուլմանական իրավունքի գիտակ, այսինքն՝ վելայաթ-ե ֆաղիհ բառացի կթարգմանվի մուսուլման իրավագետի առաջնորդություն:



սահմանադրությունն ամբողջովին հարմարեցվեց շիայականության գաղափարներին:

Գծապատկեր 1

ԻԻՀ կառավարման համակարգի վերին օղակը



Առաջնորդը՝ երկրի գերագույն ղեկավարը, ունի անսահմանափակ իրավունք երկրի կառավարման համակարգում. նա ընտրվում է Փորձագետների խորհրդի<sup>2</sup> կողմից և կառավարում է ցմահ: Առաջնորդն է որոշում երկրի թե՛ արտաքին, թե՛ ներքին ուղղվածությունը:

Երկրի արտաքին և ներքին գաղափարախոսությունը խարսխված է այաթոլլահի հստեյնու 1970 թ. հռչակած Քաղաքական տրակտատի հիման վրա (Jones 2009, 15): Այս առումով տեղին է անդրադառնալ իրանագետ-վերլուծաբան Սերգեյ Վոտյագովի՝ Իրանը բնութագրող այն տեսակետին,

<sup>2</sup> ԻԻՀ սահմանադրության 107-րդ և 108-րդ հոդվածներում հանդիպում ենք Բանիմացների խորհրդին, որը ստեղծվեց Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո, և նրան վերապահվեցին ԻԻՀ սահմանադրության մշակման պարտականությունը և հաջորդ Առաջնորդի ընտրությունը: Բանիմացների խորհուրդի ընտրությունները կազմակերպվում են Սահմանադրության պահապանների խորհրդի միջոցով, 8 տարին մեկ անգամ, որոնց հավանությանն արժանացած թեկնածուներից ժողովուրդը ընտրում է Բանիմացների խորհուրդը, որը այսօր բաղկացած է 88 անդամից:


**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

որ Իրանն այսօր ունի «սահմանափակ բազմակարծություն, գերիշխող գաղափարախոսություն, մոբիլիզացիա և ուժեղ առաջնորդություն» (Votyagov 2009, 8):

Նշենք նաև, որ Սահմանադրության պահապանների խորհրդի ուսումնասիրությունից ու թույլտվությունից հետո միայն ԻԻՀ քաղաքացին կարող է դառնալ Բանիմացների խորհրդի, Մեջլիսի պատգամավորի և անգամ նախագահի թեկնածու, իսկ Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները ուղղակի կամ անուղղակի նշանակվում են Առաջնորդի կողմից:

**Գծապատկեր 2**

**Իրանի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2021 թթ.)\***



Սույն գլխում անդրադարձ է կատարվում Իրանի Իսլամական Հանրապետության վերջին 25 տարիների քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձություններին, որոնք խնդրահարույց են եղել քաղաքական համակարգի կայունության համար, և ներկայացվում են հետազոտության արդյունքները, թե որքանով է Իրանի քաղաքական համակարգը պատրաստ դիմակայելու նոր մարտահրավերներին:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

Իրանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2021թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	ՔՀԿԻ
2000	-0.151	0.063	0.029	<b>-0.102</b>
2001	-0.115	0.150	0.120	<b>-0.070</b>
2002	-0.097	0.148	0.118	<b>-0.057</b>
2003	-0.223	0.026	0.000	<b>-0.141</b>
2004	-0.054	0.048	0.023	<b>-0.025</b>
2005	-0.020	0.066	0.041	<b>0.014</b>
2006	-0.197	0.046	0.019	<b>-0.085</b>
2007	-0.063	0.203	0.176	<b>0.071</b>
2008	-0.020	0.265	0.239	<b>0.084</b>
2009	-0.342	0.332	0.307	<b>-0.055</b>
2010	-0.010	0.349	0.323	<b>0.161</b>
2011	-0.024	0.202	0.175	<b>0.114</b>
2012	0.045	0.202	0.175	<b>0.143</b>
2013	0.019	0.188	0.161	<b>0.083</b>
2014	-0.012	0.024	-0.003	<b>0.032</b>
2015	-0.061	-0.023	-0.052	<b>-0.019</b>
2016	0.010	0.032	0.004	<b>0.065</b>
2017	-0.122	0.054	0.029	<b>0.015</b>
2018	-0.331	-0.024	-0.051	<b>-0.155</b>
2019	-0.373	-0.007	-0.040	<b>-0.202</b>
2020	-0.386	0.041	0.008	<b>-0.215</b>
2021	-0.276	0.204	0.171	<b>-0.089</b>

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

## 6.1 Իրան. ուժեղ առաջնորդություն՝ սահմանափակ բազմակարծությամբ

Ուշագրավ է, որ Իրանի ուժեղ առաջնորդության և սահմանափակ բազմակարծության ֆոնին երկրի քաղաքացիները հաճախ են դիմում անհնազանդությունների՝ արտահայտելով իրենց բողոքը քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ոլորտներում անհանգստացնող խնդիրների վերաբերյալ: Անշուշտ, իշխանությունները միշտ էլ ձեռնարկել են կանխարգելիչ միջոցառումներ՝ անհնազանդությունները զսպելու, իսկ բռնկման դեպքում՝ ճնշելու համար:

Դիտարկելով գծապատկեր 3-ում պատկերված Քաղաքական գործոնների ինդեքսի միտումները՝ նկատում ենք, որ Իրանն Իսլամական հեղափոխությունից հետո անընդհատ հայտնվել է քաղաքական վայրիվերումների մեջ: Բացի այն, որ Իրանը մշտապես գտնվել է ԱՄՆ-ի կողմից հնարավոր պատերազմական գործողություններ սկսելու սպառնալիքի տակ, պետությունը դիմագրավել է ինչպես տարածաշրջանային վայրիվերումներին, այնպես էլ երկրի ներսում ծագող դժգոհություններին: Այս առումով տեղին է նշել, որ Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Բլինթոնը 1995 թ. մարտի 15-ին ընդունեց № 12957 հրամանագիրը՝ Իրանի նկատմամբ ազգային արտակարգ դրություն հաստատելու վերաբերյալ, որը, փաստորեն, թույլ է տալիս «ԱՄՆ-ին՝ դիմագրավելու ազգային անվտանգությանը, արտաքին քաղաքականությանը և տնտեսությանը սպառնացող արտակարգ վտանգներին, որոնք առաջացել են Իրանի իշխանությունների գործողությունների հետևանքով»<sup>3</sup>: Այս որոշումը հնարավորություն է տալիս ԱՄՆ-ին ցանկացած պահի ռազմական գործողություն սկսել Իրանի դեմ:

Ինչ վերաբերում է ներքաղաքական դժգոհություններին, ապա 1990-ականների սկզբին դրանք հիմնականում եղել են տնտեսական և սոցիալական բնույթի և արտահայտվել ցույցերի ու անհնազանդությունների տեսքով: Այդ օրինակների շարքին էր պատկանում 1995 թ. ապրիլի 4-ին ավտո-


---

<sup>3</sup> U.S. Department of the Treasury. 1995. The President, Part X, Executive Orders 12957—Prohibiting Certain Transactions with Respect to the Development of Iranian Petroleum Resources, March 17, 1995. <https://home.treasury.gov/system/files/126/12957.pdf> (30.01. 2023).

բուսաների վարորդների բողոքի ակցիան Թեհրանի արվարձան Էսլամշահ-րում, որի պատճառը վառելիքի անբավարար մատակարարումներն էին, իսկ ուղևորները միացան նրանց՝ բողոքելով քաղաքային տրանսպորտի ուղեվարձի 30%-ով թանկանալու դեմ: Մոտ 50 հազար մարդ հավաքվեց բենզալցակայանների և կառավարության շենքերի առջև: Ցույցերը ճնշվեցին ուժի կիրառմամբ. Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հատուկ գործողությունների հետևանքով բախումների ժամանակ զոհվեց 50 մարդ (Alfoneh 2019): Ուշագրավ է, որ ԻՀՀ իշխանությունները, ուժ կիրառելուց զատ, հետագայում կատարեցին որոշակի բարեփոխություններ, որպեսզի մեղմեն հանրության շրջանում առաջացած բացասական տրամադրությունները: Օրինակ՝ սուբսիդավորվեց բենզինի տրամադրումն անապահով խավերին, ինչը որոշակիորեն մեղմեց լարվածությունը:

**Գծապատկեր 3**

**Իրանի քաղաքական համակարգի կայունության  
Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2021 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

Իսլամական հեղափոխությունից հետո առաջին անգամ ուսանողական հուժկու ցույց տեղի ունեցավ 1999 թ.: Յուցարարները պահանջում էին խոսքի և մամուլի ազատություն, որը խոստացել էր բարեփոխիչ նախագահ Մոհամմեդ Խաթամին նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ: Յույցերն ուղեկցվում էին քաղաքական աննախադեպ ակտիվությամբ, հակակառավարական կոշտ կարգախոսներով, որոնք մինչ այդ քչերն էին համարձակվել բարձրաձայնել: Դրանք տևեցին 6 օր՝ տարածվելով Թեհրանում, Մաշհադում, Թավրիզում, Շիրազում, Սպահանում և այլուր: Քանի որ երկրում ըստ էության գոյություն չունեին իրական ընդդիմություն, չկային կուսակցություններ, իշխանությունների շրջանում մտավախություն առաջացավ, որ ուսանողական շարժումը կարող է իր շուրջը համախմբել դժգոհ զանգվածներին: Պետք է նշել, որ ուսանողների պահանջներին համակարծիք էին բարձրաստիճան հոգևորականներ այաթոլլահ Աբդուլ-Քարիմ Մուսավի Արդեբիլին, Յուսուֆ Սանահին, Ալի Մոնթազերին: Հետագա բարդություններից խուսափելու համար ԻԻՀ իշխանությունները ստիպված եղան ներքին զորքերը մտցնել համալսարանների տարածք: Անվտանգության մարմինների հետ բախման հետևանքով զոհվեց չորս ուսանող, 150-ը՝ վիրավորվեց, 200 քաղաքացի ձերբակալվեց (*Refworld 2000*): Սակայն, այս ամենով հանդերձ, հանրության շրջանում ի չիք դարձավ այն մտայնությունը, թե կառավարությունն ամբողջովին վերահսկում է քաղաքական դաշտը: Ուսանողական այս շարժման յուրաքանչյուր տարելիցին երկրում կրկին տեղի էին ունենում ցույցեր և բողոքի ակցիաներ:

2005 թ. Մոհամմեդ Խաթամիին փոխարինեց քաղաքականության մեջ մինչ այդ քիչ հայտնի, Թեհրանի քաղաքապետ Մահմուդ Ահմադինեժադը, որը աչքի էր ընկել ծայրահեղական հայացքներով: Նրա ընտրվելուց անմիջապես հետո հայտնի դարձավ, որ Մոհամմեդ Խաթամին տնային կալանքի տակ է, որովհետև չէր կարողացել վերահսկել իրավիճակը երկրում:

Վերլուծելով Քաղաքական գործոնների ինդեքսի ( $P_{\text{գ}}$ ) տվյալները Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին (տե՛ս *Գծապատկեր 3*)՝ նկատելի է, որ մասնավորապես 2005-2010 թվականներին դրանք առանձնանում են մեծ տատանումներով, ինչը նշանակում է, որ այդ տարիներին քաղաքական գործոնները նկատելի բացասական ազդեցություն են ունեցել համակարգի կայունության վրա:

Ահմադինեժադը Իրանի կառավարման համակարգի ամենապոպուլիստ առաջնորդն էր: Նա աչքի էր ընկնում ԱՄՆ-ի և Իսրայելի հասցեին հնչեցրած կոշտ հայտարարություններով: 2005 թ հոկտեմբերի 26-ին նորընտիր նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հանդես եկավ ելույթով և նշեց. «Ինչպես ասել է իմամ Խոմեյնին, Իսրայելը պետք է ջնջվի աշխարհի երեսից: Իսլամական աշխարհը թույլ չի տա իր դարավոր թշնամուն ապրել մուսուլմանական աշխարհի կենտրոնում»: Ելույթը պարբերաբար ընդհատվում էր 4000 ուսանողների բուռն ծափահարություններով և «Մահ Իսրայելին», «Մահ ԱՄՆ-ին» բացականչություններով (*Al Jazeera 2005*): Նախագահ Ահմադինեժադի վերոհիշյալ հայտարարությունը առաջին հերթին արված էր ներքին լսարանի սպառման համար՝ իր դիրքը կայունացնելու, երկրում ծայրահեղ պահպանողականներին և հոգևորականներին գոհացնելու նպատակով (*Իսկանդարյան 2005, 28*): Նրա իրականացրած անհեռատես քաղաքականության պատճառով Իրանի տնտեսությունը հասավ ծայրահեղ ծանր վիճակի:

Եթե Մոհամմեդ Բաթամիին հաջողվել էր ինչ-որ չափով համագործակցել արևմտյան երկրների հետ և ապահովել միջուկային ոլորտում թափանցիկություն՝ ի հաշիվ 2003 թ. դեկտեմբերի 18-ին ստորագրած երաշխիքների համաձայնագրին զուգահեռ «Հավելյալ արձանագրության»<sup>4</sup>, ապա Մահմուդ Ահմադինեժադի ընտրություններից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Վերջինս հրաժարվեց նախկին իշխանության կնքած պայմանագրից, որի պատճառով ԻԻՀ միջուկային ծրագիրը դարձավ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի քննարկման առարկա: Իրանի նկատմամբ կիրառվեցին մի շարք պատժամիջոցներ, որոնք էականորեն ազդեցին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Դժգոհությունների նոր ալիք բարձրացավ սոցիալական անհավասարության, կոռուպցիայի մակարդակի աճի, ԻՀՊԿ-ի ազդեցության կտրուկ ընդլայնման պատճառով: Այդ ակցիաները առավել ահագնացան 2009 թ. ԻԻՀ նախագահական ընտրություններից հետո. Մահմուդ Ահմադինեժադի հիմնական մրցակցի՝ Միր Հուսեյն Մուսավիի կողմնակիցները դուրս եկան փողոց՝ «Ո՛ր է իմ ձայնը» կարգախոսով

---

<sup>4</sup> Համաձայն հավելյալ ծրագրի՝ ԱԷՄԳ-ի ներկայացուցիչները կարող էին նախապես զգուշացնելուց հետո մուտք գործել երկիր և կատարել ուսումնասիրություններ:

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

(*Tohidi 2009, p. 7*): Այս հուժկու ցույցերը Իրանի պատմության մեջ գրանցվեցին «Կանաչ շարժում» անվամբ:

«Կանաչ շարժումը» իր ծավալով մինչ այդ եղած դժգոհություններից ամենամեծ շարժումն էր Իսլամական հեղափոխությունից հետո, սակայն՝ ոչ ամենավերջինը: Տույցերի թե՛ աշխարհագրությունը, թե՛ մարդկանց թիվն օր օրի աճում էին, և շուտով ընտրակեղծիքներից դժգոհողները սկսեցին բողոք հնչեցնել համակարգի հասցեին, և սլաքները ուղղվեցին Առաջնորդի դեմ: Առաջին անգամ հնչեց «Մահ բռնապետին» կարգախոսը, ցուցարարները պատռեցին փողոցներում փակցված Առաջնորդի նկարները: Ակնհայտ էր, որ հասարակությունը հուսահատ փորձեր էր կատարում երկրի կառավարման համակարգում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Պետք է արձանագրել սակայն, որ կառավարությունը ի վիճակի եղավ հանդարտեցնել և ցրել ցուցարարներին: Տեղեկությունների համաձայն՝ կառավարական ուժերի հետ բախումների ժամանակ զոհվել է 38 մարդ (ընդդիմության տվյալներով՝ 102 զոհ) (*Reisinezhad 2015, 204*), ձերբակալվել՝ 1000-ից ավելի:

«Կանաչ շարժման» առաջնորդ Միր Հուսեյն Մուսավիի ու նրա կնոջ՝ Ջահրա Ռահնավարի, հնչալես նաև նրանց աջակցող մի շարք ազդեցիկ քաղաքական գործիչների նկատմամբ կիրառվեց տնային կալանք:

Կանաչ շարժման և դրա հետցնցումների հետևանքներն ակնառու են գծապատկեր 3-ում: 2009 թ. գրանցեց դիտարկվող ժամանակահատվածի ՔԳԻ-ի (-0,342) ամենացածր և վտանգավոր ցուցանիշներից մեկը: Ուշագրավ է, որ զուտ առերևույթ հանդարտեցնելով ցույցերը՝ ԻԻՀ իշխանություններն ըստ էության ի վիճակի չէղան լուծելու խորքային ու համակարգային մի շարք խնդիրներ, ինչն էլ բողոքի նոր օջախների առիթ էր դառնում: Այսպես, օրինակ, մեծ այաթոլլահ Հուսեյն Ալի Մոնթազերիի<sup>5</sup> (*Akhavi*

---

<sup>5</sup> Ալի Մոնթազերին հեղափոխության սկզբնական շրջանում համաձայն էր «վելալաթ-ե ֆադիհ հայեցակարգին, ավելին, նա համրվում էր Խոմեյնիի իրավահաջորդը: համաձայն Մեհդի Քյարոբիի (Իրանի մեջլիսի նախագահ)՝ Մոնթազերիի և Խոմեյնու հարաբերությունները լարվեցին 1986 թ., երբ Մոնթազերին նամակ էր հղել Խոմեյնուն, որով իբրև թե կասկածի տակ էր առել ընդհանրապես ողջ պետական համակարգը: Այս ելույթները ու քննադատությունները ստիպեցին Խոմեյնուն վերանայել իր իրավահաջորդի թեկնածությունը, և նա 1989 թ. մարտին վերջնականապես հանեց իր ցուցակից Մոնթազերիին:



2008, 651) հուղարկավորության ժամանակ՝ դեկտեմբերի 21-ին, հազարավոր մարդիկ կրկին հակակառավարական ցույցեր կազմակերպեցին, նորից հնչեց «Մահ բռնապետին» կարգախոսը (CNN 2009):

Ի վերջո «Կանաչ շարժումը» ճնշվեց: Սակայն Իրանի հոգևոր դասը և զինվորականությունն այս ամենի համար առաջին հերթին մեղադրեցին Ահմադինեժադին՝ համարելով դա ոչ ճիշտ կառավարելու հետևանք: Դրանով փորձում էին սահմանափակել նրա լիազորություններն ընդհանրապես: Իրանում ակնհայտորեն նկատելի էին Առաջնորդի և նախագահի խիստ լարված հարաբերությունները: Ուշագրավ է, որ ինչպես վերջին երկու նախագահները՝ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին և Մոհամմադ Խաթամին, այնպես էլ Մահմուդ Ահմադինեժադը փորձում էին մեծացնել նախագահի ինստիտուտի լիազորությունները, ինչը ուղղակի սպառնում էր հոգևոր դասի շահերին: Ահմադինեժադը իր նախագահության երկրորդ շրջանում նախաձեռնեց մի գործընթաց, որի պատճառով երկրում լարվածությունը հասավ այն աստիճանի, որ ԻՀՊԿ հրամանատար Մոհամմադ Ալի Ջաֆարին դիմեց Առաջնորդին՝ համաձայնություն տալ իրեն ձերբակալելու ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Ինչպես հավաստիացնում է «MIGnews»-ը, հրամանատարին թույլ է տրվել ձերբակալել բոլոր նրանց, ովքեր մասնակցել են Խամենեիի տապալման փորձին՝ բացի նախագահից: Սկսվեցին նախագահի կողմնակիցների ձերբակալությունները, որը ստիպեց Մահմուդ Ահմադինեժադին այդուհետ առավել հաշվետու լինել հոգևորականությանը (MIGnews.com 2011):

Ինչպես կարող ենք տեսնել գծապատկեր 3-ում, 2010 թ.-ին իրավիճակն արդեն հանդարտվել էր, պետական համակարգն ամբողջովին իր ձեռքն էր վերցրել երկրի քաղաքական կայունության և անվտանգության վերահսկողությունը, նախագահն էլ առանց ընդդիմանալու կատարում էր Առաջնորդի հրամանները: Նախագահի և նրա կողմնակիցների գործողությունները սահմանափակելու արդյունքում արձանագրվեց ՔԳԻ-ի ամենաբարձր ցուցանիշը, ինչը ինքնին վկայում է հոգևոր դասի և ԶՈՒ աներկբա համագործակցության մասին:

2013 թ. հունիսի 14-ին Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցան նախագահական ընտրություններ. նախագահ դարձավ չափավորական թևի ներկայացուցիչ Հասան Ռոհանին, որն իր նախընտրական

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

Ելույթներում խոստացել էր լուծման տարբերակներ գտնել Իրանի միջուկային ծրագրի համար և թուլացնել պատժամիջոցները, որոնք իսկապես լրջորեն ազդում էին քաղաքացիների կյանքի որակի վրա: Ռոհանիի ընտրությամբ ԱՄՆ-Իրան փոխհարաբերություններում լարվածության թուլացման միտումներ նկատվեցին: ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի նախաձեռնությամբ՝ երկու երկրների նախագահների միջև կայացավ հեռախոսազրույց, ինչն աննախադեպ էր 1979 թ. նոյեմբերի 4-ից ի վեր (*Mason, Charbonneau 2013*):

Իրանի միջուկային խնդրին առնչվող բանակցային գործընթացն ավելի կառուցողական ուրվագծեր սկսեց ստանալ: Ի վերջո 5+1<sup>6</sup> և հատկապես ԱՄՆ և Իրանի արտգործնախարարների երկար ու ձիգ քննարկումներից ու մի շարք հարցեր հստակեցնելուց հետո 2015 թ. հուլիսի 14-ին կողմերը եկան վերջնական համաձայնության, ստորագրվեց Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր (Joint Comprehensive Plan of Action-JCPA, հայերեն՝ ՀԳՀԾ), որն իրավամբ գնահատվեց պատմական՝ դարի համաձայնագիր: Իրանի փողոցներ դուրս եկան հազարավոր մարդիկ՝ հայտնելու իրենց գոհունակությունը երկրի նախագահ Հասան Ռոհանիին և արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆին: Բնականաբար սա դուր չեկավ հոգևոր դասին, քանզի կրկին գրանցվում էր նախագահական ինստիտուտի հեղինակության անթույլատրելի բարձրացում, ուստի Առաջնորդը նախագահին կոչ արեց Իրանի ժողովրդի հաղթանակը չվերագրել իրենց:

Պատահական չէ, որ հենց Հ. Ռոհանիի նախագահության առաջին շրջանն է (2013-2017 թթ.) առանձնանում Ք<sub>ԳԻ</sub>-ի ցուցանիշների համեմատաբար կայունությամբ և կտրուկ տատանումների բացակայությամբ: Ավելին՝ այդ տատանումները դրական և բացասական տիրույթների միջակայքում են և ամենաբարձրերից են դիտարկվող 2000-2021 թթ. ժամանակահատվածում (տե՛ս *Գծապատկեր 3*):

Սակայն Իրանի հետ ԱՄՆ քաղաքականությունը վերանայվեց 2017 թ., երբ երկրի նախագահի պարտականությունները ստանձնեց Դոնալդ Թրամփը: Նա սկսեց իրագործել նախագահական քարոզարշավի ժամանակ հնչեցրած իր խոստումները: Սա բնականաբար մեծ հիասթափություն

---

<sup>6</sup> ՄԱԿ-ի ԱԽ մշտական հինգ անդամները + Գերմանիան բանակցում էին Իրանի հետ միջուկային ծրագրերի հետ կապված:

առաջացրեց Իրանում, և պահպանողական թևի ներկայացուցիչները սուր քննադատության ենթարկեցին Ռոհանիի կառավարությանը՝ հայտարարելով, որ վերջինս չպետք է հավատար ԱՄՆ-ին և համաձայնագիր կնքեր, այլ պետք է շարունակեր գիտահետազոտական աշխատանքները միջուկային ոլորտում: Խնդիրը բարդանում էր այնքանով, որ 2017 թ. Իրանը կրկին կանգնած էր նախագահական ընտրությունների նախաշեմին, և ըստ մեր կարծիքի, ԻԻՀ Առաջնորդը նախապատվությունը տալիս էր Էբրահիմ Ռայիսիի<sup>7</sup> թեկնածությանը: Սակայն բարեփոխումների կողմնակիցների և Առաջնորդի անսահմանափակ լիազորություններին դեմ զանգվածի շնորհիվ՝ Ռոհանին հաղթանակ տարավ հենց առաջին փուլում, ինչը Առաջնորդին այնքան դուր չեկավ, որ նախագահ դառնալու հրամանագիրը ստորագրելիս անգամ չշնորհավորեց Ռոհանիին (*Առաքելյան 2019*):

2017 թ. դեկտեմբերի 28-ին Իրանում սոցիալական բնույթի դժգոհություններ սկսեցին Մաշհադ քաղաքում, որի առիթ դարձավ առաջին անհրաժեշտության որոշ ապրանքներ թանկացումը: Արդեն 2018 թ. հունվարի առաջին օրերին սոցիալական ցույցերը քաղաքական ենթատեքստ ստացան՝ տարածվելով երկրի 20 քաղաքներում: Թեպետ ԻԻՀ նախագահը հստակ հայտարարեց, որ ցույցերը Իրանի քաղաքացիների անքակտելի իրավունքն են, և նրանք կարող են արտահայտել իրենց դժգոհությունները, ու նրանց նկատմամբ ուժ չի կիրառվելու, այնուամենայնիվ Միացյալ Նահանգների պահանջով ՄԱԿ-ի ԱԽ-ում տեղի ունեցան լսումներ Իրանի ներքաղաքական խնդիրների շուրջ: ԱՄՆ նախագահ Թրամփը իր ելույթներով ուղղակիորեն և անուղղակիորեն խրախուսում էր ցուցարարներին՝ փաստացի միջամտելով այլ ինքնիշխան երկրի ներքին գործերին (*Իսկանդարյան 2018, 39*):

2018 թ. ԱՄՆ-ն միակողմանիորեն դուրս եկավ ՀԳՀԾ-ից և Իրանի դեմ նոր պատժամիջոցներ կիրառեց, ինչը մեծ հարված էր երկրի տնտեսությանը: Դրան էր գումարվում նաև ԻՀՊԿ-ի անթաքույց ներկայությունը

<sup>7</sup> Էբրահիմ Ռայիսիի ծնողները սեյիդների ընտանիքից են, իսկ դա նշանակում է՝ Մուհամմեդ Մարգարեի տոհմից են: Էբրահիմ Ռայիսիի 2014-2016 թթ. եղել է ԻԻՀ գլխավոր դատախազը, 2016-2019 թթ. զբաղեցրել է Իրանի խոշորագույն «Աստան Դոդա Ռազավի» հողիինգի ղեկավարի պաշտոնը: Կազմակերպությունը բաղկացած է բարեգործական մի քանի հիմնադրամներից (բոնյադներից)՝ տասնյակ մասնաճյուղերով և հազարավոր աշխատակիցներով:

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

երկրի տնտեսության տարբեր ճյուղերում: Փաստորեն նախագահի ինստիտուտը չէր կարողանում արդյունավետ իրականացնել իր գործառույթները: Տնտեսական աննախադեպ ծանր իրավիճակից դուրս գալու և քաղաքական կայունությունը շտկելու համար Ռոհանիի կառավարությունը գնաց վառելիանյութի սուբսիդավորումից<sup>8</sup> հրաժարվելու ճանապարհով: Դրա հետևանքով 2019 թ. Իրանում վառելիքը թանկացավ 50%-ով, ինչն առաջացրեց մասսայական դժգոհություն, որն էլ հանգեցրեց զանգվածային ցույցերի: Մոտ 87 հազար մարդ փողոց դուրս եկավ: Անվտանգության աշխատողների հետ բախման հետևանքով, ըստ Նյու Յորք Թայմսի, զոհվել է 180-450 քաղաքացի (*Fassihi, Gladstone 2019*): TACC-ը, վկայակոչելով Իրանի պաշտոնական տվյալները, հայտնում է 200 զոհի մասին ու նշում, որ այս դեպքը ամենարյունալին էր վերջին 30 տարիների ընթացքում (*Смазун 2021*):

Փաստորեն Ռոհանիի կառավարությունը, որը 2016 թ. կազմել էր «հույսի ցուցակ» և 2017 թ. կրկին ընտրվեց նախագահի պաշտոնում, չկարողացավ դիմակայել իր առջև ծառայած մարտահրավերներին, որոնց մի մասը իրապես անհաղթահարելի էր: Հիշեցնենք, որ 2015 թ. 5+1 հետ համաձայնությունից հետո ԱՄՆ-ն Իրանին էր վերադարձրել 150 մլրդ ԱՄՆ դոլար (*Kessler 2018*), որը մինչև Իսլամական հեղափոխությունը տարբեր անավարտ մնացած գործարքների գումարներն էին ու դրանից գոյացած տոկոսները: Իրանի հասարակությունը հույս ուներ, որ այդ գումարները կուղղվեն երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելուն: Սակայն երկրի բարձրագույն իշխանությունը Առաջնորդի գլխավորությամբ որոշում կայացրեց այդ գումարների մեծ մասն ուղղել Սիրիայում և Պաղեստինում Իրանի շահերի ամրապնդմանը: Սա լուրջ դժգոհության պատճառ դարձավ: Ցուցարարների բողոքի հիմնական կարգախոսն էր. «Ո՛չ Գազային, ո՛չ Լիբանանին, կյանքս կտամ միայն Իրանին» (*Jonbesh 2016*): Ժողովուրդը հուսահատ փորձ էր անում իր խնդիրների վրա սևեռել Իրանի իշխանությունների ուշադրությունը՝ առաջին անգամ դեմ արտահայտվելով տարածաշրջանում Իրանի արտաքին քաղաքականությանը, որը ավելի քան չորս տասնամյակ Իրանի իշխանությունները որդեգրել էին և փորձում էին անշեղո-

---

<sup>8</sup> ԻհՀ երբեմն սուբսիդավորում է առաջին անհրաժեշտության ապրանքները, որպեսզի թեթևացնի քաղաքացիների կյանքը:

րեն կյանքի կոչել: Ռոհանին ի վիճակի չեղավ տնտեսությունից դուրս մղել ԻՀՊԿ-ի ներկայացուցիչներին, չկարողացավ կանխել կոռուպցիայի աճը:

2019-2020 թթ. Իրանում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր, որոնց պատճառներն էին երկրում բենզինի գնի բարձրացումը, ցուցարարների նկատմամբ բռնությունների կիրառումը, ուկրաինական քաղաքացիական ինքնաթիռի խոցումը և դրա մասին հանրությանը ոչ արժանահավատ տեղեկատվություն հաղորդելը, տնտեսության ծանր վիճակը, ազգային արժույթի՝ ռիալի արժեզրկումը:

Ռոհանիի կառավարությանը բաժին հասավ ևս մեկ մարտահրավեր, որը վերջնականապես հարվածեց բարեփոխականների հեղինակությանը: Խոսքը COVID-19-ի մասին է. Իրանի հանրությունը մեղադրում էր իշխանություններին ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: 2020 թ. փետրվար և մարտ ամիսներին Իրանն աշխարհում կորոնավիրուսից մահացության թվով Չինաստանից հետո երկրորդն էր: Կորոնավիրուսի մասին Իրանի իշխանություններն առաջին անգամ խոսեցին փետրվարի 19-ին, երբ արձանագրվեց մահվան առաջին դեպքը: Փաստորեն Իրանի իշխանությունները թերագնահատել էին վիրուսի վտանգավորության աստիճանը, թաքցրել դրա ծանր հետևանքները՝ չցանկանալով ստվերել 2020 թ. փետրվարի 21-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունները (*Իսկանդարյան 2020*):

Խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Սահմանադրության պահապանների խորհուրդը բարեփոխականների թևի շուրջ 7000 ներկայացուցչի արգելեց մասնակցել ընտրարշավին, նաև մերժեց գործող Մեջլիսի 90 պատգամավորի գրանցումը: Այդպիսով ակնհայտ դարձավ, որ Իրանի իշխանությունները կոշտացնում են իրենց դիրքերը: Ընտրություններում բնականաբար հաղթեցին պահպանողական թևի ներկայացուցիչները՝ 290 պատգամավորական տեղերից վերցնելով 220-ը (*Irandataportal 2020*): Արդեն պարզ էր, որ հաջորդ՝ 2021 թ. նախագահական ընտրություններին հաղթանակ էր տանելու այդ ուժի ներկայացուցիչը: 2021 թ. Սահմանադրության պահապանների խորհուրդը կրկին արգելեց ընտրություններին մասնակցել այնպիսի քաղաքական գործիչների, որոնք կարող էին խնդիրներ ստեղծել Էբրահիմ Ռայիսիի համար, որը նախորդ նախագահա-

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

կան ընտրություններում պարտվելուց հետո ստանձնել էր ԻԻՀ դատական համակարգի ղեկավարի պաշտոնը, որին նշանակում է Առաջնորդը:

2021 հունիսի 18-ի նախագահական ընտրություններում հաղթեց Էբրահիմ Ռայիսին, որը աչքի էր ընկնում առավել պահպանողական հայացքներով: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա այս ոլորտում նրա հիմնական քաղաքական ուղենիշը տարածաշրջանի բոլոր երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելն էր:

Ուշագրավ է, որ Ռայիսիի կառավարությունը իր ուշադրության կենտրոնում էր պահում ոչ միայն Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումները, այլև մեծապես ներգրավված էր Կովկասում տեղի ունեցող գործընթացներում: Հայաստան-Ադրբեջան սահմանային խնդիրները, մասնավորապես ՀՀ տարածքային ամբողջականության հարցը Ռայիսիի կառավարությունը, ինչպես նաև հոգևոր դասը դիտարկում էին որպես Իրանի ազգային անվտանգությանը ուղղված մարտահրավեր:

Իրանի քաղաքական համակարգի կայունությունը ևս մեկ անգամ փորձության ենթարկվեց 2022 թ. սեպտեմբերին՝ գլխաշոր պարտադիր կրելու հետ կապված միջադեպի պատճառով:

Դեռևս 2017 թ. Իրանում սկսել էր «Իմ գաղտագողի ազատությունը» շարժումը. կանայք որպես բողոքի նշան կրում էին սպիտակ գլխաշոր, իսկ առավել համարձակները գլխաբաց կանգնում էին հանրային վայրերում՝ գլխաշորը որպես դրոշակ կապած փայտից: Բողոքի այս ակցիան մեծ թափ առավ 2022 թ. սեպտեմբերի 14-ից հետո, երբ Թեհրանում Բարոյականության ոստիկանության աշխատակիցները բերման էին ենթարկել 22-ամյա Մահսա Ամինին գլխաշորը պատշաճ չկրելու համար, որտեղ նա առեղծվածային պայմաններում կորցնում է գիտակցությունը և մի քանի օր անց մահանում: Իշխանության ներկայացուցիչներն անմիջապես հրապարակեցին ոստիկանության բաժանմունքից տեսաձայնագրություններ, որտեղ երևում է՝ ինչպես է Մահսա Ամինին մտնում բաժանմունք, խոսում ներկաների հետ, այնուհետև ուշաթափվում (*RealPolitik 2022*): Իրանի պաշտոնական տարբերակն այն էր, որ Մահսա Ամինին ունեցել է առողջական խնդիրներ, և հենց ոստիկանությունում գրանցվել է սրտի կաթված: Ընդդիմադիրները հակված են կարծելու, որ Մահսա Ամինին ենթարկվել է դաժան ծեծի, որի հետևանքով գրանցվել է ուշագնացություն, և կենսաբանական

մահ: Այս միջադեպը ընդվզման լուրջ ազդակ էր: Այս անգամ հանրությունը պահանջում էր փոխել մայր օրենքը, և գլխաշոր կրելը դարձնել ոչ պարտադիր:

Գլխաշորի պարտադիրությանը դեմ է հասարակության ազատամիտ հատվածը: Հասարակության զգալի հատվածը կրկին բողոքի ձայն բարձրացրեց՝ պահանջելով նաև սոցիալական բնույթի բարեփոխումներ: Առիթից օգտվեցին նաև քրդերը, թյուրքախոս իրանցիները, և սոցիալական բնույթի ցույցերը կրկին վերածվեցին քաղաքական բողոքի՝ ուղղված համակարգի դեմ: Այս ամենն ուղեկցվում էր Կովկասում թուրք-ադրբեջանական տանդեմի խիստ ագրեսիվ քաղաքականությամբ, որին փորձում է դիմակայել Իրանը: Տեղին է նշել, որ Իրանում ծավալվող սոցիալական բողոքներին քաղաքական բնույթ են հրահրում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հովանավորվող Իրանի թյուրքախոս բնակչության որոշ շրջանակներ: Անշուշտ, ԻԻՀ-ն ունի հակակառավարական և հակահամակարգային անկարգությունները զսպելու բազմաթիվ գործիքներ, և դրանք այսօր արդեն գործի են դրվել: Սակայն ԻԻՀ իշխանությունները, կարծում ենք, պետք է հետևություններ անեն:

Իրանում կոռուպցիայի ընկալման ինդեքսն ուսումնասիրելիս ակնհայտ երևում է, որ այն նվազման միտում է ունեցել Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում: Սա թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ գալով իշխանության՝ նա ձգտում էր զարկ տալ խոմեյնիականությանը, որի հիմնական արժեքներն էին ազնվությունը, նյութական բարիքների հավասար բաշխումը: Այս պատկերը էապես փոխվեց 2010 թ-ին, երբ գրանցվեց նախագահ-հոգևոր առաջնորդ հարաբերությունների վատթարացում, որից հետո նախագահը, կարելի է ասել, որևէ էական ազդեցություն չկարողացավ ունենալ ո՛չ քաղաքականության, ո՛չ էլ տնտեսության ոլորտում: Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում Կոռուպցիայի ընկալման ինդեքսն աստիճանաբար նահանջեց՝ 2.9-ից (2005 թ.) հասնելով 1.8-ի (2009 թ.), իսկ արդեն 2010 թ. այն փոքր-ինչ բարելավվեց՝ հասնելով 2.2, սակայն Իրանի հաջորդ իշխանություններին այլևս չհաջողվեց այդ սանդղակը մոտեցնել 2005 թ. մակարդակին: 2021 թ. տվյալներով Իրանը, Կոռուպցիայի ընկալման ինդեքսում գրանցելով 25 միավոր (2.5՝ մինչև 2012 թ. մեթոդաբանությամբ), զբաղեցրել է 150-րդ տեղը 180

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

երկրների շարքում: Իրանի առաջնորդ Ալի Խամենեյին թեպետ ստորագրել է հակակոռուպցիոն հրամանագիր՝ պահանջելով կառավարության երեք ճյուղերի ղեկավարներից չթուլանալ կաշառակերության դեմ պայքարում (*iranintl.com. 2022*), սակայն ուսումնասիրելով տվյալները՝ հանգում ենք այն եզրակացման, որ դա չի տվել անհրաժեշտ արդյունք:

Օտարերկրյա ընկերությունները, որոնք պատրաստվում են ներդրումներ կատարել Իրանում, բախվում են կոռուպցիայի շատ բարձր ռիսկի հետ: Քաղաքական հովանավորչության, նեպոտիզմի և հովանավորչության հզոր համակարգը նկատվում է տնտեսության բոլոր ճյուղերում: ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին կոռուպցիան սահմանափակելու բազմաթիվ փորձեր կատարեց, սակայն չկարողացավ բավարար չափով ազդել կոշտ գծի կողմնակիցների վրա, որոնք վերահսկում են պետական հիմնական ինստիտուտները՝ ներառյալ ԻՀՊԿ և դատական համակարգը: Թեև կան բազմաթիվ օրենքներ, որոնք քրեականացնում են կոռուպցիայի տարբեր ձևերը ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում, սակայն գործնականում դրանք արդյունավետ չեն կիրառվում (*ganintegrity.com. 2020*): Այսպիսով, ամփոփելով քաղաքական կայունության վերաբերյալ դիտարկումները՝ եզրահանգում ենք, որ Իրանի տնտեսության ծանր իրավիճակը, կոռուպցիան, պետական համակարգի ուռճացվածությունը, եկամուտների ոչ ճիշտ բաշխումը, նախկին ղեկավարների պոպուլիստական հայտարարություններն ու համաշխարհային քաղաքական վայրիվերումները պատշաճ չգնահատելն այսօր Իրանին կանգնեցրել են ծանր վիճակի առջև: Ուկրաինական պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Իրանի տարածքում և նրա սահմանների մոտ տարատեսակ խնդիրներ ստեղծելը հավելյալ բարդություններ են առաջացնում ԻԻՀ պետական համակարգի կայունության ապահովման համար: Իրանի իշխանություններն այսօր որոշակի ազատություններ են տվել հանրությանը՝ կանանց հագուկապի և խոսքի ազատության առումով, դրանով փորձում են մեղմել հանրության դժգոհությունը: Բայց առավել քան վստահ ենք, որ տնտեսական որոշակի կայունության պարագայում ականատես կլինենք պետական համակարգի առավել կոշտ գործելաճի, որով կփորձեն կրկին մոտեցնել իսլամի նորմերին: Հակառակ դեպքում իսլամական հայեցակարգը որոշակիորեն կթուլանա, իսկ հանրապետականության հայեցակարգը՝ կակտիվանա:



## 6.2 Իրանի տնտեսության վայրիվերումները

Իսլամական հեղափոխությունից, ամերիկյան դեսպանատան գրավման հետևանքով առաջացած ճգնաժամից, այնուհետև ամերիկյան տարբեր պատժամիջոցներից և ի վերջո իրանա-իրաքյան պատերազմից հետո Իրանի տնտեսությունը գրեթե ամբողջովին քայքայվել էր: Այն վերականգնելու նպատակով 1990-ականներին իրականացվել են բարեփոխումների բազմապիսի ծրագրեր: Սակայն Իրանի տնտեսությունը խթանելու փորձերն անարդյունավետ էին հիմնականում ոչ թափանցիկ գործելաոճի պատճառով, ինչը նպաստեց սովետային տնտեսության աճին: Իրանը, հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի կողմից ենթարկվելով մի շարք պատժամիջոցների, որդեգրեց հովանավորչական քաղաքականություն՝ մի կողմից աջակցելով սեփական արտադրողին, մյուս կողմից առավել մեծ հարկեր դնելով ներմուծվող ապրանքների վրա՝ դրանով անհավասար պայմաններ ստեղծելով իրանական մեծ շուկայում:

Եթե փորձենք մեկ նախադասությամբ սահմանել Իրանի տնտեսությունը, ապա պետք է նշենք, որ այն կենտրոնացված պլանավորման, պետական սեփականություն համարվող խոշոր և գիտելիքահեն ձեռնարկությունների, գյուղատնտեսության և մասնավոր առևտրի փոքր մասնաբաժնի համակցություն է (*Ганиев, Задонский, Карякин 2019, 187*):

Իրանի տնտեսության մասին պատկերացում ունենալու համար նախ և առաջ պետք է նշենք, որ այնտեղ գործում է սեփականության երեք ձև՝ պետական, մասնավոր և կոոպերատիվ, ինչն ամրագրված է ԻԻՀ սահմանադրությամբ: Եթե պետական հատվածը ներառում է արդյունաբերական բոլոր խոշոր ձեռնարկությունները, արտաքին առևտուրը, հանքարդյունաբերությունը և այլն, ապա կոոպերատիվ հիմունքներով գործող արտադրական և սպասարկման ընկերություններն ու ձեռնարկություններն ստեղծվում են իսլամական նորմերին համապատասխան: Մասնավոր հատվածը ներառում է գյուղատնտեսության, անասնապահության, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների այն բաժինը, որը լրացնում է պետական և տնտեսական գործունեությունը (*ԻԻՀ Սահմանադրություն 2005, 54-55*):

1989 թ. ԻԻՀ նախագահ ընտրված Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին ջանքեր գործադրեց շտկելու տնտեսությունը, փորձեց ազատականացնել

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

այն և տնտեսական բազմաթիվ խոշոր ծրագրեր կյանքի կոչեց: Անցումը տնտեսական նոր մոդելի երկրում հնարավոր դարձավ Խոմենիի մահից հետո միայն՝ հոգևորականների ուժերի վերախմբավորման շնորհիվ:

Ռաֆսանջանիի օրոք վերաբացվեց անհրաժեշտության պարագայում օտարերկրյա կապիտալի օգտագործման և օտարերկրյա մասնագետների ծառայությունից օգտվելու սահմանադրական արգելքը (*Mamedova 1997, 96-97*): Տնտեսության որդեգրած քաղաքական նոր կուրսը խթանում էր օտարերկրյա ներդրումները երկրներում, ինչը հոգևորականության մի մասի համար անընդունելի էր: Կառավարությունն արտերկրի ներդրողների հետ կնքեց բազմամիլիարդանոց պայմանագրեր շինարարության ոլորտում, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների արտադրությունը խթանելու համար սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Մեծ ուշադրություն դարձվեց առաջին հերթին նավթաքիմիայի, էներգետիկայի ու մետալուրգիայի զարգացմանը, որոնք դարձան տնտեսությունն առաջ մղող ուղղություններ: Ռաֆսանջանիի օրոք հիմք դրվեց նաև ազատ տնտեսական գոտիների ստեղծմանը, որտեղ պետական, մասնավոր և օտարերկրյա կապիտալը կարող էր աշխատել միասին (*Maloney 2010*):

Սակայն Ռաֆսանջանիի կառավարությունը բախվեց մի շարք խնդիրների, որոնք անլուծելի էին: Նախ՝ 1995 թ. Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Բլինթոնը Իրանի նկատմամբ սկսում է կիրառել ավելի խիստ պատժամիջոցներ՝ արգելելով երկրի նավթարդյունաբերության ոլորտում գործարքներ կնքել<sup>9</sup>, այնուհետև՝ ընդհանրապես առևտուր անել, որը սկսել էր աշխուժանալ հատկապես իրանա-իրաքյան պատերազմի ավարտից հետո: 1996 թ. ընդունվեց Դ՛Ամատոյի օրենքը, որն, ըստ էության, ամերիկյան պատժամիջոց էր նախատեսում նաև երրորդ երկրների նկատմամբ, որոնք 20 մլն դոլարից ավելի ներդրում կանեին Իրանի նավթարդյունաբերության ոլորտում<sup>10</sup>: Բացի այդ՝ Ռաֆսանջանին չկարողացավ նաև լուծել

---

<sup>9</sup> Senate.1995. “Iran Oil Sanctions Act of 1995.” 1st Session, December 15. <https://www.govinfo.gov/content/pkg/CRPT-104srpt187/html/CRPT-104srpt187.htm?fbclid=IwAR2L1ymcyjGoIWwZQJi7nxGBFFhBfy6X6JaqDB4dxeVcgyahc13rvKWP6Xs> (11.12.2022).

<sup>10</sup> Congress. 1996. “Iran and Libya Sanctions Act note of 1996, Public Law 104-172 104th Congress.” <https://www.govinfo.gov/content/pkg/STATUTE-110/pdf/STATUTE-110->

կառավարման համակարգի ուռճացվածության, ստվերային տնտեսության, ինչպես նաև կոռուպցիայի աճի հետ կապված հիմնախնդիրները: Այս ամենը թույլ չստվեցին վերջինիս իրականացնել տնտեսական իր ծրագրերը ողջ ծավալով:

Պետք է փաստել, որ ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը նախագահության երկրորդ շրջանում որոշ չափով վերանայման ենթարկեց իր արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ Իրանի նկատմամբ: Դա համընկավ ԻԻՀ հաջորդ նախագահ **Մոհամմեդ Խաթամիի** կառավարման ժամանակաշրջանի հետ: Վերջինս առավելապես հայտնի է որպես բարեփոխական, որը փորձում էր Իրանը դուրս բերել տնտեսական մեկուսացումից:

Խաթամին, ընտրվելով ԻԻՀ նախագահ, հանրային հեռուստատեսությամբ իր ուղերձում Իրանի տնտեսական կառուցվածքը բնորոշեց որպես «հիվանդ»: Նա դժգոհում էր եկամուտների անհամամասնությունից, չափից ավելի սպեկուլյատիվ գործունեությունից, հանքարդյունաբերության անբավարար ծավալներից և նավթի արտահանումից մեծ կախվածությունից: Նա գտնում էր, որ պետք է կրճատել պետական հատվածը և նվազեցնել պետական մենաշնորհները (*Amuzegar 1999, 536*):

Խաթամին Իրանի առաջին նախագահն էր, որը շրջափայության մեկնեց Եվրոպա, համագործակցության լավ հիմքեր դրեց Արևմուտքի և իր երկրի միջև: Դրան նպաստեցին մի շարք գործընթացներ. 1997 թ. Իրանը ստորագրեց Քիմիական զենքի մասին կոնվենցիան, Խաթամին ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց Քաղաքակրթությունների երկխոսության մասին (*Freedman 1999, 72*): Այս ամենից հետո եվրոպական երկրները Իրանի հետ համագործակցելու հարցում ակտիվացան, իսկ ԱՄՆ-ի նավթի և գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչները լուրջ ճնշում գործադրեցին իրենց կառավարության վրա՝ միակողմանի պատժամիջոցները հանելու համար:


Խաթամին նաև առավել թափանցիկ սկսեց համագործակցել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ, որի շնորհիվ որոշ ժամանակ մեղմվեցին պատժամիջոցները: Թեպետ 2002 թ. տեղի էր ունեցել տեղեկատվական արտահոսք Իրանի միջուկային ծրագրի մասին,

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

այնուամենայնիվ նրա նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ն լուրջ պատժամիջոցներ սկսեց կիրառել միայն հաջորդ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին:

**Գծապատկեր 4**

**Իրանի քաղաքական համակարգի կայունության Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2021 թթ.)\***



Դիտարկվող ժամանակահատվածում վերլուծելիս Տնտեսական գործոնների ինդեքսի ( $S_{ԳԻ}$ ) միտումները (տես *Գծապատկեր 4*) ակնհայտորեն երևում է, որ Իրանի տնտեսության առողջացումը սկսվել է հենց 2002 թ.-ից: Այսինքն՝ Մոհամմեդ Խաթամիի՝ տնտեսության առողջացման մոդելը, ազատ աշխարհին ինտեգրվելու քաղաքական մոտեցումները դրական ազդեցություն ունեցան տնտեսության զարգացման վրա:

2005 թ. ԻԻՀ հաջորդ նախագահ **Մահմուդ Ահմադինեժադը** ժառանգեց շատ ավելի կայուն տնտեսությամբ Իրան, քան Ռաֆսանձանին ու Խաթամին էին ստացել իրենց նախորդներից:

Մահմուդ Ահմադինեժադը, որը նախընտրական փուլում սոցիալական ոլորտը զարգացնելու մեծ խոստումներ էր տվել, 2005-2008 թթ. համաշ-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

խարհային նավթի գների<sup>11</sup> շեշտակի աճի պարագայում փորձեց իրականացնել դրանք՝ սուբսիդավորելով մի շարք ոլորտներ, թեթևացնելով սոցիալապես անապահով խավի բեռը: Այսինքն՝ նորընտիր նախագահը փորձեց արագ բարձրացնել իր հեղինակությունը, այլ ոչ թե տնտեսական խնդիրները լուծել: Ինչն էլ հետագայում դարձավ իր կառավարության համար լուրջ խնդիրների պատճառ: Տնտեսության զարգացման գործում Ահմադինեժադի ազատությունը ևս սահմանափակ էր, քանզի նա պետք է հետևեր «Տնտեսական զարգացման հնգամյա ծրագրին», որը վերջնական հավանության էր արժանացել Առաջնորդի կողմից: Մ. Ահմադինեժադի՝ միջուկային ոլորտում իրականացրած քաղաքականության, ինչպես նաև նրա կոշտ հռետորաբանության պատճառով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նրա կառավարման շրջանում Իրանի նկատմամբ կիրառեց վեց պատժամիջոց, որոնք լուրջ հարված հասցրին երկրի տնտեսությանը, ինչն էլ ուղղակիորեն ազդեց երկրի ներքաղաքական կայունության վրա: Այս պատժամիջոցների պատճառով նավթի արտահանումը կիսով չափ նվազեց, իսկ, ինչպես գիտենք, Իրանի տնտեսությունը հիմնականում խարսխված է նավթարդյունաբերության վրա: Ուշագրավ է, որ 2008 թ. գրանցվեց նավթի համաշխարհային գների անկում, ինչը հավելյալ ազդեց առանց այն էլ թուլացած իրանական տնտեսության վրա: Ըստ արժույթի միջազգային հիմնադրամի՝ 2012 թ. Իրանում գրանցվեց ռեկորդային գնաճ՝ 30.6%, իսկ հաջորդ տարվա ցուցանիշը գերազանցեց՝ հատելով 34.7%-ի նշաձողը<sup>12</sup>: Տնտեսական ծանր վիճակը սոցիալական անհնազանդությունների ալիք առաջացրեց:

2013 թ. ԻԻՀ նախագահ ընտրվեց **Հասան Ռոհանին**: Ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 4-ում, տնտեսությունը այդ փուլում գահավիժում էր աննախընթաց տեմպերով: Եվ քանի որ ակնհայտ էր Իրանի ընտրազանգվածի հիմնական պահանջը՝ էական փոփոխություններ իրականացնել հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում, Հասան Ռոհանին ակնարկեց, որ իրենք կհեռանան նախորդի պայթյունավտանգ գործելաո-

<sup>11</sup> Տվյալների աղբյուրը տե՛ս Macrotrends.net. n.d. “Crude Oil Prices - 70 Year Historical Chart” (11.12.2022):

<sup>12</sup> Տվյալների աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2022/October> (11.12.2022):

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

ճից, քանի որ տեսնում են, որ արտաքին քաղաքականությունը «առանցքային է ներկայիս խնդիրների լուծման առումով» (BBC 2013): Փաստորեն, իրենց որդեգրած քաղաքականության շնորհիվ՝ Ռոհանիի վարչակարգը ի վիճակի եղավ նախորդ տարվա ռեկորդային գնաճը հենց հաջորդ տարի՝ 2014 թ., կիսով չափ կանխել՝ նվազեցնելով դրա տեմպերը 15.6%-ի<sup>13</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, 2013 թ. Ռոհանիի ընտրվելուց հետո ԱՄՆ և Իրանի միջև հարաբերությունների լարվածությունը որոշ չափով թուլացել էր, իսկ 2015 թ. ստորագրվեց ՀԳՀԾ (*iranprimer 2015*): Հենց այս ժամանակահատվածում էլ գրանցվեց գնաճի շարունակական նվազում. ավելին՝ 2016 թ. այն հասավ 9.1 %-ի<sup>14</sup>, որը նվազագույնն է Իսլամական Հանրապետության տնտեսության պատմության մեջ (90-ականներից ի վեր):

Եվ ինչպես կարող ենք ակնհայտորեն տեսնել Գծապատկեր 4-ից, ԱՄՆ և Իրանի միջև հարաբերականորեն բարիդրացիական հարաբերությունների հաստատումը դրական ազդեցություն ունեցավ տնտեսության ոլորտի վրա, իսկ պայմանագրի կնքումից և ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի չեղարկումից հետո երկրի շուկայի նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերեց արևմտյան բիզնես էլիտան: Կանխատեսվում էր, որ մեծ ներդրումներ էր իրականացվելու երկրում, և գործընթացը իսկապես սկսվել էր. Իրանի տնտեսությունը սկսեց վերակենդանացման նշաններ ցույց տալ:

Եթե 2014 թ. երկրում ընդհանուր ներդրումները կազմել էին 2.1 մլրդ ԱՄՆ դոլար, ապա վերոնշյալ պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց՝ 2017 թ. այն ավելի քան կրկնապատկվեց՝ հասնելով 5.02 միլիարդի<sup>15</sup>:

Թեև Ռոհանիի ներդրած ջանքերը դանդաղ էին արդյունք տալիս, բայց, այնուամենայնիվ, այն նպաստում էր տնտեսության աշխուժացմանը. այս քաղաքականության շնորհիվ կասեցվեց ՀՆԱ-ի անկումը, բացվեցին նոր աշխատատեղեր, բարեփոխումներ իրականացվեցին բանկային համակարգում: Այսպես, 2016 թվականին հաջողվեց ապահովել ՀՆԱ-ի դրական աճ՝ նախորդ տարվա 1.4% տնտեսական անկումից հետո գրանցելով 8.8%

---

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>15</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝

<https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD?locations=IR> (06.04.2023):

արդյունք<sup>16</sup>: Սակայն 2016 թ. ԱՄՆ նախագահական ընտրություններում հաղթանակած Դոնալդ Թրամփը 2018 թ. Միացյալ Նահանգներին միակողմանիորեն հանեց ՀԳՀԾ-ից և Իրանի նկատմամբ սահմանեց լուրջ պատժամիջոցներ և անգամ կոչ արեց բոլոր երկրներին միանալ այդ ձեռնարկին<sup>17</sup>: Տնտեսական գործոնների ինդեքսի միտումների վերլուծությունը (տե՛ս *Գծապատկեր 4*) մատնանշում է, որ հենց այդ պահից մինչ 2020 թ. ԻԻՀ տնտեսությունն արձանագրեց խորը անկում. տնտեսական ճգնաժամը իր հետ բերեց ներքաղաքական բազմաթիվ լուրջ խնդիրներ հատկապես սոցիալ-տնտեսական տիրույթում:

Վերլուծելով Քաղաքական և Տնտեսական գործոնների ինդեքսները՝ հանգում ենք այն եզրակացության, որ տնտեսական ազատությունները, ինչպես նաև ներդրումների հոսքերը գերակշռել են Հասան Ռոհանիի կառավարման շրջանում, որն իր բարձրակետին հասավ 2017 թ.: Սա անշուշտ արդյունք էր Իրանի միջուկային ծրագրի շուրջ համաձայնության, երբ ՄԱԿ-ի պատժամիջոցները չեղարկվեցին: Միևնույն ժամանակ պետք է փաստենք, որ չնայած Ռոհանին ջանում էր պայքարել կոռուպցիայի դեմ, այնուամենայնիվ նրա օրոք կոռուպցիայի ցուցանիշները չհասան Ահմադինեթադի կառավարման տարիների արդյունքին, որի պարագայում տնտեսությունը էլ ավելի մեծ աճ կարձանագրեր:

Թեպետ Հասան Ռոհանիի կառավարությունը փորձում էր նոր ներդրումներ բերել՝ թեթևացնելու երկրի տնտեսական ճգնաժամը, սակայն Իրանի օրենսդրությունը բավական, խիստ է օտարերկրյա ներդրումների նկատմամբ. այն թույլ չի տալիս գերակայություն ազգային տնտեսության մեջ: Օրինակ, Իրանում օտարերկրյա ներդրողներն անշարժ գույք ձեռք բերելու իրավունք չունեն: 2018 թ.-ին երկրի ՀՆԱ-ն նվազեց, իսկ գնաճի ցուցանիշներն աճեցին՝ 10%-ից հասնելով 40%-ի: Կառավարությունն ի վիճակի չէր իրանական դիալի գահավիժումը կանխել. երկու տարվա ընթացքում այն դոլարի նկատմամբ արժեզրկվեց գրեթե չորս անգամ (*Смагун 2021*):

<sup>16</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=IR> (15.12.2022):

<sup>17</sup> Տվյալների աղբյուրը՝ Սպիտակ տան պաշտոնական կայք (The White House, May 21, 2017, “President Trump’s Speech to the Arab Islamic American Summit”)՝ <https://www.whitehouse.gov/the-press-office/2017/05/21/presidenttrumps-speech-arab-islamic-american-summit> (18.07.2022):

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

Իրանի տնտեսության, բանկային համակարգի վրա մեծ ազդեցություն ունի նաև Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, ինչը ևս հավելյալ դժվարություններ է ստեղծում գործող իշխանությունների համար՝ իրականացնելու տնտեսության առողջացման գործընթացներ:

2021 թ. էբրահիմ Ռայիսիին ընտրվեց ԻԻՀ հաջորդ նախագահ և փաստացիորեն կրկին ժառանգեց տնտեսապես ծայրահեղ ծանր վիճակում հայտնված երկիր: Նա պետք է միաժամանակ պայքարեր COVID-19 համավարակի, բանկային համակարգի ճգնաժամի, կոռուպցիայի դեմ: Նոր նախագահը փորձեց գտնել տնտեսության վերականգնման ելքեր: Իրանի տնտեսական ծանր վիճակը ուղղակիորեն կապված է վերը նշված բոլոր խնդիրների հետ: 2020 թ. Իրանի ՀՆԱ-ն կազմում է 192 միլիարդ դոլար և երկրների վարկանիշում զբաղեցնում էր 50-րդ տեղը: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 13 073 դոլար էր, 189-ը երկրների շարքում՝ 91-րդը (ըստ ԱՄՀ-ի): Տարեկան գնաճը 2021 թվականի հունիսի դրությամբ կազմել է 47.6%, իսկ պարենային ապրանքների գնաճը նույն ժամանակահատվածում՝ 62.7%: Գործազրկության մակարդակը 2020 թվականի երրորդ եռամսյակում եղել է 9.5%, իսկ երիտասարդների շրջանում՝ 23.1% (*Сажин 2021*):

Իրանն այսօր փորձում է ԵԱՏՄ-ի հետ խորացնել առևտրաշրջանառությունը, մեծացնել Չինաստանի հետ ծրագրերը, պատժամիջոցները որոշակի չափով թուլացնելու համար կարողացել են գտնել համագործակցության եզրեր Հնդկաստանի հետ, ինչը խիստ կարևոր է այդ իրավիճակի պայմաններում: Տնտեսական ճգնաժամը երկրում հաճախ դառնում է սոցիալական անհնազանդությունների պատճառ, որոնք տարեցտարի հաճախակիանում են: Այսօր էլ պետական միջամտությունը մեծ է Իրանի տնտեսության համակարգում, ինչը նպաստում է կլանային հարաբերությունների սերտաճմանը կառավարման համակարգում, իսկ տնտեսության ոչ թափանցիկությունը, ստվերային հատվածի գործոնը բավականին մեծ տոկոս են կազմում Իրանի տնտեսության մեջ: Հայտնի իրանագետ Աբբաս Միլանին նշում է, որ ԻՀՊԿ-ն վերահսկում է երկրի տնտեսության 60%-ը (*Milani 2010*): Այս առումով տեղին է նշել, որ 2010 թվականին Հարավային Ֆարս գազային նախագծից (21 միլիարդ դոլար արժողությամբ) դուրս եկան եվրոպական էներգետիկ ընկերությունները, քանի որ շահագործման պայ-



մանագրերի մեծ մասը անցել էր ԻՀՊԿ-ի ձեռքը (*Фитч, Фокон, Мейчтру 2016*):

Իրանի Տնտեսական ազատության 2022 թ. ինդեքսը կազմել է 42.4 միավոր: Աշխարհի 177 երկրների շարքում Իրանը զբաղեցնում է 170-րդ հորիզոնականը և գտնվում է ճնշված տնտեսություն ունեցող երկրների շարքում: Վերջին հինգ տարիների ընթացքում Իրանը գրանցել է խիստ դանդաղ աճ՝ ընդամենը 1.2 միավոր<sup>18</sup>:

Իրանի տնտեսության դանդաղ զարգացման գլխավոր խնդիրներն են Իրանի նկատմամբ ԱՄՆ շարունակական պատժամիջոցները, հիմնականում նավթարդյունաբերության վրա խարսխվելը, կոռուպցիայի մեծ ծավալը, տնտեսական ազատությունը խոչընդոտող հանգամանքները, օտարերկրյա ներդրումների համար ոչ բարենպաստ դաշտը: Եվ քանի դեռ այս խնդիրները չեն վերացել կամ նվազել, Իրանի իշխանությունները բախվելու են տնտեսական նոր խնդիրների և քաղաքացիական անհնազանդությունների:

### 6.3 ԻԻՀ սոցիալական վիճակը

Իրանում սոցիալական խնդիրները միշտ էլ խիստ օրակարգային են եղել, ինչն էլ Իսլամական հեղափոխության հիմնական պատճառներից մեկն էր: Ժողովուրդը պայքարի դուրս եկավ հանուն սոցիալական հավասարության, արդարության, բարեկեցության և հավասար պայմանների: Այս գաղափարների հետևից գնացին միլիոնավոր քաղաքացիներ, ինչի հետևանքով էլ տապալվեց շահի իշխանությունը:

Իսլամական հեղափոխության ժամանակ այաթոլլահ Խոմեյնին խոսում էր հենց այդ արժեքների հաստատման մասին: ԻԻՀ Սահմանադրության 43-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում է ժողովրդի սոցիալական կարիքների ապահովմանը, սոցիալական արդարության հաստատմանը (*ԻԻՀ*

<sup>18</sup> Տվյալների աղբյուրը՝ «Հերիթիջ» հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://indexdotnet.azurewebsites.net/index/explore?view=by-region-country-year&countryids=76&regionids=&yearids=28&fbclid=iwar1fghw-kkfnfo71wkgf5-2wq71kn2ll91-xeuw3zaixgroeansauc1tc7k0> (06.04.2023):

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---


*Սահմանադրություն 2005, 51*): Սակայն Իսլամական Հանրապետության կազմավորումից անմիջապես հետո Իրանը մխրճվեց իրանա-իրաքյան երկարուժիգ պատերազմի մեջ (1980-1988), ինչը մեծ դժվարություններ ստեղծեց աստվածապետական հանրապետության ինստիտուտներ ձևավորելու համար: Պատերազմի ավարտից հետո առաջնային էին ուղի կանգնեցնել տնտեսությունը ու նրա կաթվածահար ենթակառուցվածքները, լուծել ժողովրդի սոցիալական խնդիրները: Աներկբա է, որ տնտեսական զարգացման դինամիկայից է մեծապես կախված պետության սոցիալական քաղաքականությունը, ինչպես նաև հասարակության սոցիալական զարգացումը:

Տեղեկատվական բազաների ուսումնասիրությամբ կարող ենք եզրակացնել, որ Իրանի իշխանությունները երբեմն աղքատության մակարդակի, հանցագործությունների, կոռուպցիայի և այլ տվյալների վերաբերյալ լիարժեք տեղեկություններ չեն տրամադրել միջազգային կազմակերպություններին: Այս հանգամանքը, անշուշտ, մեզ թույլ չի տալիս ճշգրիտ և ամբողջական պատկեր ստանալ Իրանի սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ: Այնուամենայնիվ, փորձենք եղածի հիման վրա ներկայացնել ընդհանրական պատկերը:

1990-ական թվականների կեսերից Ռաֆսանջանիի իրականացրած տնտեսական բարեփոխումներից հետո ի հայտ եկան սոցիալական բնույթի առաջին խնդիրները, որոնք ավելի շատացան Մ. Խաթամիի կառավարման ժամանակաշրջանում: Ուսանողական շարժումն ակտիվ մնաց մինչ 2002 թ.: Իշխանությունը իրականացրեց որոշ բարեփոխումներ, սակայն դիմեց նաև ճնշումների, և ակնհայտ դարձավ, որ պայքարն անհիմաստ է, ու շարժումն աստիճանաբար մարեց: Սակայն դա չէր նշանակում, որ սոցիալական խնդիրներն ընդհանրապես մոռացության մատնվեցին երկրում: Սա էր հենց գլխավոր կռվանը, որն օգտագործվեց Թեհրանի քաղաքապետ Մահմուդ Ահմադինեժադի կողմից հաջորդ նախագահական նախընտրական քարոզարշավի ժամանակ: Փորձելով ստանալ հասարակության, հատկապես անապահով խավերի ձայները՝ նա անդադար շեշտում էր սոցիալական արդարության ապահովման անհրաժեշտության, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, կաշառակերությունն արմատախիլ անելու, իսլամական արժեքների կամ խոմեյնիականության գաղափարախոսության նորովի մատուցման մասին:

Գծապատկեր 5

Իրանի քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2021 թթ.)\*



Ինչպես ակնհայտ երևում է գծապատկերից, 2006 թ.-ից, այսինքն՝ Մահմուդ Ահմադինեժադի նախագահ դառնալուց մեկ տարի անց սոցիալական խնդիրների կարգավորման գործում գրանցվել է որոշակի ակտիվություն: Սոցիալական արդարությանը հասնելու համար Ահմադինեժադի կառավարությունը ակտիվացրեց պետական գույքի սեփականաշնորհման գործընթացը. նախատեսվում էր առաջին հերթին բաժնետոմսեր տրամադրել իրանա-իրաքյան պատերազմի մասնակիցների ընտանիքներին, սոցիալապես անապահով խմբերին: Ծրագիրն իրականացվեց կրոնական արդարության սկզբունքով: Դրանից օգտվեց ավելի քան 7 մլն քաղաքացի (Mamedova 2013, 16-19): Սոցիալական քաղաքականության մեկ այլ ծրագիր նախատեսում էր արվարձաններում և գյուղական համայնքներում շուկայականից մատչելի բնակարանների կառուցում երիտասարդ ընտանիքների համար. այն առավել հայտնի էր Մեիր անվամբ:

Սակայն Մահմուդ Ահմադինեժադի վարած արտաքին կոշտ քաղաքականության պատճառով ԻԻՀ-ի նկատմամբ կիրառվեցին բազմաթիվ պատ-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

Ժամիջոցներ, որոնք լրջորեն հարվածեցին տնտեսությանը: Նա չկարողացավ կյանքի կոչել սոցիալական մի շարք այլ ծրագրեր միջոցների սղության պատճառով: 2009 թ. նախագահական ընտրարշավից առաջ Ահմադինե-ժադը, գիտակցելով, որ կորցնում է քաղաքաբնակ միջին և բարձր խավի աջակցությունը, ուշադրությունը կենտրոնացրեց երկրի ծայրամասերի անապահով ընտրազանգվածի վրա՝ խոստանալով նրանց հատկացնել վարկեր և թեթևացնել հարկային բեռը: Ահմադինե-ժադի խոստումները երբեմն անիրատեսական ու պոպուլիստական էին:

Սա էր հիմնական պատճառը, որ քաղհասարակությունը 2009 թ. ընդդիմացավ Իրանի նախագահի պաշտոնում Ահմադինե-ժադի վերընտրվելու ցանկությանը, քանզի նրա խոստացած սոցիալական արդարությունը տեսանելի չէր: Չնայած Իրանի իշխանությունները կարողացան հաղթահարել հակակառավարական հուժկու ցույցերը, այնուամենայնիվ Ահմադինե-ժադը ի վիճակի չէր, որ լուծելու ծառայած սոցիալական խնդիրները: Ավելին, նրա կառավարման երկրորդ շրջանում երկրում գրանցվեց գործազրկության ամենամեծ ցուցանիշը: Եթե 2005 թ. գործազրկության մակարդակը, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, կազմում էր 11.8%, ապա կառավարությունում 2009-2010 թթ. տեղի ունեցած ճգնաժամի ընթացքում 2010թ. գործազրկությունն աճեց՝ հասնելով 13.7%-ի<sup>19</sup>: Ուշագրավ է, որ այս ընթացքում ըստ Իրանի վիճակագրական կենտրոնի՝ գրանցվեց հանցագործությունների թվի կտրուկ նվազում՝ հասնելով վերջին 30 տարիների նվազագույն շեմին՝ 3-ի (1000 շնչի հաշվով)<sup>20</sup>:

Փաստենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում միշտ էլ եղել է աղքատության դեմ պայքարը, որի վկայությունն են Ս<sub>գր</sub>-ի ցուցանիշները: Եթե 1994 թ. աղքատության մակարդակը 48% էր (ըստ օրական 6.85 ԱՄՆ դոլար ծախսի), ապա Ռաֆսանջանիի տնտեսական բարեփոխումների, Խաթամիի ազատականացման ու Ահմադինե-ժադի սոցիալական խոցելի խավերին ուշադրություն դարձնելու շնորհիվ արդյունքում այդ ցուցանիշը թեկուզ և դանդաղ, սա-

---

<sup>19</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=IR> (10.12.2022):

<sup>20</sup> Տվյալների աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները Իրանի վիճակագրական կենտրոնի պաշտոնական տվյալների հիման վրա՝ <https://www.amar.org.ir> (10.12.2022):

կայն նվազման միտում գրանցեց: Առաջին նվազումը նկատվեց Խաթամիի կառավարման շրջանում, ինչը հենց իր նախընտրական խոստումներից էր՝ լուծել սոցիալական խնդիրները: Եվ թեև 2005 թ. աղքատության մակարդակը հասել էր 23.5%-ի, այնուամենայնիվ հանրությունը սոցիալական բարեփոխումների առումով ավելին էր ակնկալում Խաթամիի կառավարությունից: Իսկ Ահմադինեժադը, որը փորձում էր նոր շունչ հաղորդել Խոմեյնիի և Իսլամական հեղափոխության գաղափարներին, խոցելի խավերին տարբեր հատկացումների և օգնությունների միջոցով աղքատությունը հասցրեց Իսլամական Հանրապետության շրջանում մինչ այդ գրանցված նվազագույն շեմին՝ 18.8-ի%<sup>21</sup>: Հարկ է նշել նաև, որ եթե 1995 թ. Իրանի բնակչությունը 60 մլն էր, ապա Ահմադինեժադի կառավարման ավարտին՝ 2013-ին, այդ թիվը հասել էր 78 միլիոնի շեմը<sup>22</sup>, այսինքն՝ սոցիալական խնդիրները ևս սրվել էին: Ահմադինեժադի կառավարման տարիներին պետությունը զսպում էր առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների՝ (հաց, էլեկտրաէներգիա, վառելանյութ, դեղորայք, կոմունալ ծառայություններ, հանրային տրանսպորտ) գնաճը: Սակայն ուսումնասիրելով Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալները՝ ակնհայտ է դառնում, որ եթե Ահմադինեժադի առաջին նախագահության շրջանում (2005-2009 թթ.) հաջողվում էր զսպել ապրանքների գնաճը, ապա նրա վարած արտաքին կոշտ քաղաքականության պատճառով Իրանը ենթարկվեց ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցներին, և 2012-2013 թվականներին որոշ ապրանքների գները կտրուկ բարձրացան:

Ուշագրավ է, որ եթե 1995 թ. Ջինի գործակիցը, որը ցույց է տալիս հանրության միջև շերտավորման աստիճանն ըստ եկամուտների, կազմել է 0.430, ապա հաջորդ տարիներին թեկուզ շատ դանդաղ, բայց նվազման միտում է արձանագրում: Ջինի գործակցի նվազագույն շեմ (2012-2013 թթ.) արձանագրվել է Ահմադինեժադի կառավարման վերջին և Ռոհանիի իշխա-

<sup>21</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC?locations=IR> (10.12.2022):

<sup>22</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=IR> (06.04.2023):

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

նության գալու առաջին տարիներին: Այսպիսով, ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2013 թ.՝ 0.365<sup>23</sup>:

Ահմադինեժադից հետո հասարակությունն ակնկալում էր սոցիալական լուրջ բարեփոխումներ՝ երկիրը ծանրագույն իրավիճակից հանելու համար: Հասան Ռոհանին այդ խնդիրների լուծումը տեսնում էր հիմնականում Արևմուտքի հետ հարաբերությունների կարգավորմամբ, որի շնորհիվ կհանվեին կամ կմեղմացվեին պատժամիջոցները, տնտեսությունը ոտքի կկանգներ: Տնտեսական գործոնների ինդեքսը վերլուծելիս արդեն անդրադարձել ենք թե՛ ներդրումներին, թե՛ տնտեսական ակտիվության միտումներին, որոնք հնարավորություն տվեցին Ռոհանիի կառավարությանը որոշակի չափով ուշադրություն դարձնել նաև սոցիալական ոլորտի խնդիրներին:

Այդուամենայնիվ, վերլուծելով Սոցիալական գործոնների ինդեքսի (U<sub>ԳԻ</sub>) միտումները (տե՛ս *Գծապատկեր 5*), կարող ենք արձանագրել, որ Ռոհանիի կառավարման առաջին փուլում U<sub>ԳԻ</sub>-ի կորն ունի նվազման միտում՝ չնայած Տնտեսական գործոնների ինդեքսի աճին: Միևնույն ժամանակ Ռոհանիի կառավարման ողջ շրջանում երկրում բարձրացավ աղքատության մակարդակը, քանզի նա հրաժարվեց իր նախորդի տրամադրած սոցիալական բազմաթիվ նպաստների ձևաչափից՝ բյուջեի ճեղքվածքը կարգավորելու նպատակով: Այսպիսով, Ռոհանիի կառավարման շրջանում աղքատության մակարդակը 2013 թ. 19%-ից 2019 թ. հասնել էր 28%-ի (ըստ օրական 6.85 ԱՄՆ դոլար ծախսի)<sup>24</sup>: Միևնույն ժամանակ Ռոհանին, արտաքին քաղաքականության մեջ լինելով ավելի կառուցողական, կարողացավ հանել Իրանի նկատմամբ պատժամիջոցները, ապահովեց օտարերկրյա կապիտալի որոշակի ներհոսք, և ԻԻՀ ողջ պատմության ընթացքում արձանագրվեց ապրանքների գնաճի ամենացածր ցուցանիշը՝ 9.1%<sup>25</sup>:

---

<sup>23</sup> Տվյալների աղբյուրը՝ Իրանի վիճակագրական կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.amar.org.ir/english/Statistics-by-Topic/Household-Expenditure-and-Income#2220530-releases> (10.12.2022):

<sup>24</sup> Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC?locations=IR> (10.12.2022):

<sup>25</sup> Տվյալների աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2022/October> (11.12.2022):

Բայց, քանի որ նա հրաժարվեց սուբսիդավորել վառելանյութը, առաջին անհրաժեշտության ապրանքները, տրանսպորտը, սա առաջին հերթին հարվածեց սոցիալապես անապահով խավին, որն էլ բողոքի ձայն բարձրացրեց ընդդեմ գործող իշխանության: Սակայն հարկ է նշել, որ երկրի բարձրագույն իշխանությունը՝ հոգևոր դասը, այս ընթացքում սոցիալական աջակցություն է ցուցաբերել աղքատ խավին տարբեր հիմնադրամների միջոցով: Դրանցից էին իմամ Խոմեյնիի հանձնաժողովը, Շահիդների, 15-մորդադի, Ընչագուրկների հիմնադրամները:

2016 թ. մեծ երթ տեղի ունեցավ Կյուրոս Մեծի դամբարանի մոտակայքում: Ակնհայտ էր, որ սոցիալական խնդիրները վերաճում են համակարգային պահանջների: Սրանով հասարակությունը փորձում էր իշխանությունների ուշադրությունը հրավիրել երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների վրա և կոչ անում թուլացնել ներգրավվածությունը տարածաշրջանային գործընթացներին. ի դեպ դա նաև Միացյալ Նահանգների պահանջն էր: Ցուցարարները դժգոհում էին, որ Միացյալ Նահանգների կողմից վերադարձրած միլիարդավոր դոլարները չեն ներդրվել տնտեսության մեջ կամ չեն լուծել սոցիալական խնդիրները, այլ ուղղվել են Պաղեստինում ու Լիբանանում Իրանի դիրքերը էլ ավելի ամրացնելուն: Սակայն Իրանի իշխանությունները չէին պատրաստվում շեղվել իրենց որդեգրած արտաքին քաղաքական կուրսից:

Իրանում ապրանքների գների զգալի թանկացումները սկսվեցին 2018 թ. հետո. դա տեղի ունեցավ Միացյալ Նահանգների ՀԳՀԾ-ից միակողմանի դուրս գալու և Իրանի նկատմամբ միակողմանի պատժամիջոցներ կիրառելու հետևանքով: Այս հանգամանքը ծանր դրության մեջ դրեց Ռոհանիի կառավարությանը, որը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ստիպված դիմեց ապրանքների թանկացմանը: 2018 թ. Իրանում գրանցվեց կտրուկ գնաճ, որը նախորդ տարվա 9.6%-ից հասավ 30.2%-ի:

Ուշագրավ է, որ երկրի նախագահ Հասան Ռոհանին հանրայնորեն հայտարարեց, որ ժողովուրդը լիովին իրավունք ունի արտահայտելու իր բողոքը, և ցուցարարների դժգոհությունները չեն սահմանափակվում միայն տնտեսական հարցերով, այլ առնչվում են «սոցիալական, քաղաքական և արտաքին քաղաքականության» (*AP Archive 2018*) խնդիրներին: Այսպիսով, Ռոհանին ակնարկում էր, որ բողոքի այս ալիքը իր կառավարության դեմ չէ,

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

որովհետև նախագահի ինստիտուտը չունի մեծ լիազորություններ այս հարցում՝ փաստորեն սլաքները ուղղելով բարձրագույն իշխանության կողմը: 2019-2020 թթ. ցույցերի ուժգնության պատճառն էր վառելանյութի, առաջին ապրանքների թանկացումը, նաև սակավաջրությունը, իսկ 2021 թ. նոյեմբերին քաղաքացիները բողոքում էին պարենային գների բարձրացման դեմ (*Isfahani 2022*):

## **6.4 Իրանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը**

Ավելի քան 2500 տարի Իրանը կառավարած շահական միապետությունը փլուզվեց 1978-1979 թթ.: Ժողովրդի ընդլվածան պատճառներից էին՝ Փահլավի հարստության ոչ ճիշտ կառավարումը, կոռուպցիայի մեծ չափերը, գանձագողությունը, հովանավորչությունը, երկրի հարստության ոչ հավասար բաշխումը: Սակայն պետք է արձանագրենք նաև, որ Փահլավի հարստության շրջանում Իրանն այդպես էլ մեծ պատերազմների մեջ չներքաշվեց՝ տարածաշրջանում պահպանելով իր կայուն տեղն ու դերը:

Իսլամական Հանրապետության հիմնումից մեկ տարի անց երկիրը ներքաշվեց իրանա-իրաքյան արյունալի և հյուժող պատերազմի մեջ, որը խանգարեց, որ նորաստեղծ հանրապետությունն արագ և արդյունավետ կառուցի պետական իր նոր համակարգը: Միայն պատերազմից հետո Իրանը սկսեց աստիճանաբար վերականգնել իր սոցիալ-տնտեսական կյանքը, փորձեց դիրքավորվել ու ապահովել իր տեղն ու դերը տարածաշրջանային գործընթացներում: Սակայն դա բավականին դժվար էր, քանզի Իրանը Իսլամական հեղափոխությամբ որդեգրել էր մի հիմնարար սկզբունք՝ «Ոչ Արևելք, ոչ Արևմուտք»՝ սահմանափակելով իր համագործակցությունը հատկապես Արևմտյան բլոկի երկրների հետ: 1980 թ. գրավելով Իրանում ԱՄՆ դեսպանատունը և 444 օր դիվանագետներին պահելով պատանդառության մեջ՝ բնականաբար խզվեցին երբեմնի դաշնակցային հարաբերությունները երկու երկրների միջև: Պատմական այս դեպքերից հետո Իրանը Միացյալ Նահանգների ու տարածաշրջանում նրա դաշնակիցների հետ



ունեցել է լարված, գերզգայուն հարաբերություններ: Միացյալ Նահանգների տարատեսակ պատժամիջոցների պատճառով Իրանի տնտեսությունը զրկվեց այն հնարավորություններից, որ ուներ տնտեսական վերելքներ արձանագրելու առումով՝ հաշվի առնելով թե՛ մարդկային ռեսուրսը, թե՛ օգտակար հանածոների առկայությունը, թե՛ աշխարհագրական տարածաշրջանային դիրքը: Իրանը երկար տարիներ մեկուսացվեց. փորձեր էր արվում նրան լիովին դուրս թողնել տարածաշրջանային զարգացումներից:

Ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (ՔՀԿԻ), որը ամփոփ ներկայացված է Գծապատկեր 6-ում, ակնհայտ է դառնում բոլոր այն վայրիվերումները ու անկայուն իրավիճակները, որ գրանցվել են վերջին 43 տարիների ընթացքում: Փաստորեն Իսլամական հեղափոխությունից մինչ այժմ երկիրը գտնվում է տուրբուլենտության շրջապտույտի մեջ, որի պատճառները և բացատրությունները բազմազան են:

Առաջին ակնհայտ գահավիժումը նկատվում է 2003 թ.: Թեպետ Խաթամին կարողացավ այդ տարի որոշակիորեն բարելավել երկրի տնտեսական վիճակը, համագործակցել Արևմուտքի հետ, Իրանը հեռու պահել հավելյալ պատժամիջոցներից, այնուամենայնիվ նրան չհաջողվեց կարգավորել խնդիրները սոցիալ-քաղաքական ոլորտում: Շարունակվում էին ուսանողական ցույցերը, որոնք Իսլամական հեղափոխությունից հետո ամենակտիվն էին երկրում: Բացի այդ, 2003 թ. Միացյալ Նահանգները հարձակվեց Իրանի հարևան Իրաքի վրա. ակնհայտ էր, որ այն ազդելու էր Իրանի բոլոր ոլորտների վրա: Ակնհայտորեն մեծացան Իրանի թե՛ ներքաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական խնդիրները:

ՔՀԿԻ-ի երկրորդ նկատելի անկումը տեղի է ունեցել 2006 թ.՝ պայմանավորված Քաղաքական և Սոցիալական գործոնների ինդեքսների միաժամանակյա նվազմամբ: Մահմուդ Ահմադինեժադը, 2005 թ. գալով իշխանության, հանդես եկավ կոշտ ելույթներով, հրաժարվեց նախկին իշխանության՝ Արևմուտքի հետ համագործակցելու պատրաստակամությունից և փորձեց նոր շունչ հաղորդել խոմեյնիականությանը և Իսլամական հեղափոխությանը: Նրա օրոք Իրանը, հղում կատարելով Միջուկային զենքի չտարածման պայմանագրի 4-րդ հոդվածին, նշում էր, որ ինքը իրավունք ունի

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

ուրան հարստացնել խաղաղ նպատակներով<sup>26</sup>: Եվ քանի որ, ըստ ԱԷՄԳ-ի, Իրանի գործողությունները միջուկային ոլորտում թափանցիկ չէին, Իրանի նկատմամբ կիրառվեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը, ինչն անշուշտ մեծ հարված հասցրեց երկրի սոցիալ-տնտեսական ոլորտներին: Նվազեցին ներդրումները, աճ գրանցվեց աղքատության և Ջինի ինդեքսի ցուցանիշներում:

Քաղաքական գործոնների ինդեքսի երրորդ կտրուկ նվազումը տեսնում ենք 2009 թ., քաղաքացիական անհնազանդությունների շրջանում, որին ավելացավ նաև Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ նոր պատժամիջոցները, ինչն էլ ավելի թուլացրեց Իրանի տնտեսությունը: Թեպետ Ահմադինեժադի կառավարությունը սուբսիդավորում էր առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքներ, որպեսզի շահեր խոցելի խավերի աջակցությունը, բայց սրանով չէր լուծվում սոցիալ-տնտեսական ճգնաժամը, քանի որ փորձ էր արվում արհեստականորեն, առանց խնդիրների խորքային լուծման պահել անկման միտումները: Դա երկար տևել չէր կարող, ինչը և ակնհայտորեն երևում է ՍԳԻ-ի և ՏԳԻ-ի միտումներում. սկսած 2010 և 2011 թթ.՝ այդ ինդեքսները սկսում են գահավիժել (տե՛ս *Գծապատկեր 2*):

Իրանի հաջորդ նախագահը՝ Հասան Ռոհանին, կարծում էր, որ տնտեսությունը վերականգնելու, տարածաշրջանում ազդեցիկ պետություն դառնալու համար անհրաժեշտ է Արևմուտքի հետ վերականգնել երկխոսությունը: Սա էր պատճառը, որ Ռոհանիի կառավարությունը, ի դեպ՝ որի բոլոր անդամները ստացել էին արևմտյան կրթություն, սկսեցին ստեղծված ծանր կացությունից դուրս գալու ուղիներ որոնել: Եվ ի վերջո 2015 թ. Իրանը ստորագրեց ՀԳՀԾ-ի փաստաթուղթը, որով հանվեցին Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցները, և ինչպես արդեն նշել ենք՝ Օբամայի վարչակարգը, ըստ Դոնալդ Թրամփի, Իրանին վերադարձրեց սառեցված ակտիվներից 150 մլրդ դոլար, փոխարենը վերջինս կրճատեց ուրանի հարստացման ծավալները, թույլ տվեց ԱԷՄԳ-ի ներկայացուցիչներին անխափան մշտադիտարկում իրականացնել Իրանում, հանձնեց հարստաց-

---

<sup>26</sup> Տվյալների աղբյուրը՝ Միացյալ ազգերի կազմակերպության պաշտոնական կայք (Treaty on the Non-Proliferation of Nuclear Weapon)  
<https://www.un.org/disarmament/wmd/nuclear/npt/text> (09.04.2023):

ված ուրանի որոշ պաշարներ և այլն: Այս քայլերով էր պայմանավորված 2015 թ. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի կորի՝ երեք տարի շարունակ անկման կանգը (տե՛ս *Գծապատկեր 6*): Այդուհանդերձ, ՔՀԿԻ-ի նվազման միտումը հնարավոր եղավ կանգնեցնել շատ կարճ ժամանակահատվածով: Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի՝ 2016 թվականի աճից հետո դարձյալ գրանցվեց անկում՝ ընդհուպ 2020 թվականը՝ պայմանավորված տնտեսական և քաղաքական ցուցանիշների կտրուկ վատթարացմամբ: Ակնհայտ էր, որ Ռոհանիի կառավարությունը սպառել էր իրեն, որովհետև արտաքին և ներքին քաղաքական իր ողջ ծրագրերը խարսխել էր Արևմուտքի հետ համագործակցելու և դրանով իսկ Իրանին պատժամիջոցներից հեռու պահելու վրա: Փաստորեն Դոնալդ Թրամփը ձախողեց այս ծրագրերը, և Իրանի իշխանություններն այլևս չունեին իրավիճակից դուրս գալու այլ տարբերակներ:


2021 թ. ԻԻՀ-ում նախագահական ընտրություններում հաղթեց Էբրահիմ Ռայիսին, որի կառավարությունը ժառանգեց տնտեսական ծանր վիճակում գտնվող Իրան՝ սոցիալական բազմաթիվ խնդիրներից մինչև սահմանների մոտ լարվածություն՝ պայմանավորված Արցախյան վերջին պատերազմով: Այդուհանդերձ Էբրահիմ Ռայիսի կառավարությունը որդեգրեց բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու ուղենիշը՝ զարկ տալով տարածաշրջանային ակտիվությանը, միևնույն ժամանակ մեծ աշխատանք տանելով տնտեսության վերականգնման ուղղությամբ: Երկարատև անկումից հետո 2021 թ.-ին ՔՀԿԻ-ին գրանցում է վերելք՝ Ք<sub>ԳԻ</sub>-ի, Ս<sub>ԳԻ</sub>-ի և Տ<sub>ԳԻ</sub>-ի միաժամանակյա աճով:

Այսպիսով, ամփոփելով Իրանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի տվյալները, հանգում ենք այն եզրակացության, որ Իսլամական հեղափոխությունից, հանրապետության հիմնադրումից հետո էլ Իրանը դեռևս գտնվում է վտանգավոր և բարձր տուրբուլենտության գոտում, քանի որ նկատվում են ՔՀԿԻ-ի ուժեղ տատանումներ, իսկ 2017 թվականից հետո դրանք տեղափոխվել են բացասական գոտի:

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

**Գծապատկեր 6**

**Իրանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը  
(2000-2021 թթ.)\***



**Գրականության ցանկ**

- Առաքելյան, Գրիգոր. 2021. «Ռայխին Իրանի ապագա հոգեւոր առաջնորդ», Ազգ, հուլիսի 14: Վերջին մուտք՝ 18.09.2022: <https://shorturl.at/noruC>.
- ԻԻՀ սահմանադրություն. 2005. Թեհրան, Գ. Բաղայյանի թարգմանությամբ:
- Իսկանդարյան, Գոհար. 2005. «Իրանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների շուրջ», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N10(16), 26-32: Վերջին մուտք՝ 20.11.2022: [http://www.noravank.am/upload/pdf/61\\_am.pdf](http://www.noravank.am/upload/pdf/61_am.pdf).
- Իսկանդարյան, Գոհար. 2018. «ԱՄՆ-Իրան քաղաքականության շրջափոխումը 2009-2018 թթ.», Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերու-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

- թյուններ, Քաղաքագիտություն, №2(26), 30-42: Վերջին մուտք՝ 18.09.2022: <http://test.journals.sci.am/index.php/banber-ysu-rel-pol/issue/view/59>.
- Իսկանդարյան, Գոհար. 2020. «Փակ համակարգի պտտուղները», Аналитикон: Վերջին մուտք՝ 18.09.2022: [https://www.researchgate.net/publication/3411346-44\\_Pak\\_hamakargi\\_ptugner\\_Analitikon](https://www.researchgate.net/publication/3411346-44_Pak_hamakargi_ptugner_Analitikon).
  - Akhavi, Shahrugh. 2008. “The Thought and Role of Ayatollah Hossein'ali Montazeri in the Politics of Post-1979 Iran.” *Iranian Studies*. 41(5): 645-666. <https://doi.org/10.1080/00210860802518301>.
  - Alfoneh, Ali. 2019. “More bloodshed, harsher repression in Iran’s protests.” *The Arab Weekly*, December 8. Accessed September 15, 2022. <https://the arabweekly.com/more-bloodshed-harsher-repression-irans-protests>.
  - Al Jazeera. 2005. “Ahmadinejad: Wipe Israel off map.” October 25. Accessed November 18, 2022. <https://www.aljazeera.com/news/2005/10/26/ahmadinejad-wipe-israel-off-map>.
  - Amuzegar, Jahangir. 1999. “Khatami and the Iranian Economy at Mid-Term.” *Middle East Journal*, N4(53): 534-552. Accessed September 10, 2022. <http://www.jstor.org/stable/4329389>.
  - AP Archive. 2018. “Rouhani: Establishment has heard voice of demonstrators.” YouTube, February 12. Accessed August 25, 2022. <https://www.youtube.com/watch?v=Kj40qNhu-8>.
  - BBC. 2013. “Iran’s Hassan Rouhani pledges 'slogan-free diplomacy.’” August 18. Accessed August 19, 2022. <https://www.bbc.com/news/world-middle-east-23744267>.
  - CNN. 2009. “Iranian cleric's funeral draws protesters.” December 21. Accessed September 11, 2022. <http://edition.cnn.com/2009/WORLD/meast/12/21/iran.cleric.-dies/index.html>.
  - Fassihi, Farnaz, Rick Gladstone. 2019. “With Brutal Crackdown, Iran Is Convulsed by Worst Unrest in 40 Years.” *The New York Times*, December 3. Accessed September 18, 2022. <https://www.nytimes.com/2019/12/01/world/middleeast/iran-protests-deaths.html>.
  - Freedman, Robert. 1999. “U.S. Policy Toward the Middle East in Clinton’s Second Term.” *Middle East Review of International Affairs* 3 (1). Accessed September 8, 2022. [https://ciaotest.cc.columbia.edu/olj/meria/meria99\\_freedman01.html#txt\\*](https://ciaotest.cc.columbia.edu/olj/meria/meria99_freedman01.html#txt*).
  - Ganintegrity.com. 2020. “Iran risk report.” September 30. Accessed September 10, 2022. <https://ganintegrity.com/country-profiles/iran/>
  - Irandatportal. 2020. “**Eleventh Parliamentary Election.**” Accessed September 10, 2022. <https://irandatportal.syr.edu/2020-parliamentary-election>.
  - Iranintl.com. 2022. “Iran Ranks Among Most Corrupt Countries in The World.” January 28. Accessed September 10, 2022. [www.iranintl.com/en/202201284141](http://www.iranintl.com/en/202201284141).
  - Iranprimer. 2015. “The Final Deal: Rouhani Statement.” July 14. Accessed August, 18, 2022. <https://iranprimer.usip.org/blog/2015/jul/14/final-deal-rouhani-statement>.

**Գլուխ 6. Իրանի քաղաքական համակարգի կայունությունը.  
Ազդեցության գործոններն ու սպառնալիքները**

---

- Isfahani, Sayeh. 2022. “The Ebrahim Raisi government just jacked up food prices. Iranians are understandably angry.” Atlantic Council, May 12. Accessed August 25, 2022. <https://www.atlanticcouncil.org/blogs/iransource/the-ebrahim-raisi-government-just-jacked-up-food-prices-iranians-are-understandably-angry/>.
- Jonbesh. 2016. “Iranian dar ruz-e Kurush-e Bozorg: Na Ghaza, na Lobnan, janam feda-e Iran” [Իրանցիները Կյուրուս Մեծի օրը. ոչ Գազա, ոչ Լիբանան, ես իմ կյանքը կտամ Իրանին]. YouTube, October 28. Accessed September 20, 2022. <https://www.youtube.com/watch?v=wOZK6pgXprk&t=9s>.
- Jones, Stephen. 2009. “The Islamic Republic of Iran: An introduction.” Research paper 09/92, 11 December. Accessed September 10, 2022. <http://www.refworld.org/pdfid/4b41bca92.pdf>.
- Kessler, Glenn. 2018. “President Trump’s claim that Democrats gave Iran \$150 billion.” The Washington Post, December 13. Accessed September 18, 2022. <https://www.washingtonpost.com/politics/2018/12/13/president-trumps-claim-that-democrats-gave-iran-billion/>.
- Maloney, Suzanne. 2010. “The Revolutionary Economy.” The Iran Primer. Accessed September 10, 2022. [https://iranprimer.usip.org/sites/default/files/The%20Revolutionary%20Economy.pdf?fbclid=IwAR0R4cUdEm2b0s\\_xUmYG7SYA bBMiusZ7\\_-Wqm0QWg4HqJu7MpXrhfRceE8](https://iranprimer.usip.org/sites/default/files/The%20Revolutionary%20Economy.pdf?fbclid=IwAR0R4cUdEm2b0s_xUmYG7SYA bBMiusZ7_-Wqm0QWg4HqJu7MpXrhfRceE8).
- Mason, Jeff & Louis Charbonneau. 2013. “Obama, Iran’s Rouhani hold historic phone call.” Reuters, September 28. Accessed September 18, 2022. <http://www.reuters.com/article/us-un-assembly-iran-idUSBRE98Q16S20130928>.
- MIGnews. 2011. “Ахмадинежад может закончить карьеру на виселице.” 3 июня. Accessed September 11, 2022. [http://web.archive.org/web/20110605-060125/http://www.mignews.com/news/society/world/030611\\_32819\\_21470.html](http://web.archive.org/web/20110605-060125/http://www.mignews.com/news/society/world/030611_32819_21470.html).
- Milani, Abbas. 2010. “Taking Tehran’s Temperature: One Year On.” Carnegie Endowment for International Peace, June 8. Accessed August 30, 2022. <https://carnegieendowment.org/files/0609carnegie-tehran.pdf>.
- RealPolitik. 2022. “Mahsa Amini police station footage Sept 17, 22.” YouTube, September 20. Accessed September 12, 2022. <https://www.youtube.com/watch?v=J9UEu8amtMk>.
- Refworld. 2000. “Iran: July 1999 Demonstrations in Tehran, Chronology.” Research Directorate Immigration and Refugee Board Ottawa, Canada, December. Accessed November 20, 2022. <https://www.refworld.org/pdfid/3df9ba6f2.pdf>.
- Reisinezhad, Arash. 2015. “The Iranian Green Movement: Fragmented Collective Action and Fragile Collective Identity.” Iranian Studies, 48(2): 193–222. <https://doi.org/10.1080/00210862.2013.859885>.
- Tohidi, Nayereh. 2009. “Iran’s Presidential Elections: Women’s Role in the Preand Post-Election Politics.” Middle East Program: Occasional Paper Series: 4–9. Accessed September 10, 2022. <https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/documents/publication/Women%20in%20Iranian%20Election.pdf>.

- Votyagov, Sergey. 2009. “Islamic Republic of Iran, Comparative National Systems.” November 19. Accessed November 23, 2022. <http://www.mitchellorenstein.com/wp-content/uploads/2012/07/Iran.pdf>.
- Ганиев, Тахир, Сергей Задонский, Владимир Карякин. 2019. Военная мощь Исламской Республики Иран: Военная политика и вооруженные силы страны. Т 1, Москва: ИБВ.
- Мамедова, Нина. 1997. Иран в XX веке. Роль государства в экономическом развитии. Ин-т изучения Израиля и Ближ. Востока, Москва.
- Мамедова, Нина. 2013. “Социальная политика Ирана в исламском контексте.” Азия и Африка сегодня, №4.
- Сажин, Владимир. 2021. “Президент Раиси и будущее Ирана.” Редакция журнала «Международная жизнь». Дата обращения: 25.08.2022. <https://interaffairs.ru/news/show/31167>.
- Смагин, Никита. 2021. “Как президент Роухани не стал спасителем иранской нации.” ТАСС, 5 августа. Дата обращения: 18.09.2022. <https://tass.ru/opinions/-12067633>.
- Фитч, Аса, Бенуа Фокон, Стэйси Мейчтри. 2016. “Правительство Ирана борется со стражами исламской революции за контроль над экономикой.” Ведомости, 19 мая. Дата обращения: 18.09.2022. <https://www.vedomosti.ru/economics/articles/2016/05/19/641661-irana-strazhami-revoljutsii-kontrol-ekonomikoi>.

## **ԳԼՈՒԽ 7.**

# **ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

## **ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

21-րդ դարում աշխարհաքաղաքական վերափոխումները զգալի ազդեցություն են ունեցել համաշխարհային հանրության և պետությունների կայուն զարգացման ընթացքի վրա: Գլոբալիզացիայի գործընթացներն ուղեկցվում են սոցիալական զարգացման մոդելների և ապագա աշխարհակարգում տեղ գրավելու մրցակցության ուժեղացմամբ. որոշ պետություններ ցանկանում են փոխել ներկա աշխարհակարգը, գոյություն ունեցող սահմանները, վերաբաշխել մոլորակի ռեսուրսները և ազդեցության գոտիները: Այս միտումները 2020-2024 թվականներին միջազգային հարաբերությունների համակարգում անհավասարակշռության, ամբողջ աշխարհում ռազմաքաղաքական անկայունության, կոնֆլիկտային տարածքների ընդլայնման և մոլորակի շատ շրջաններում «վերահսկվող քաոսի» պատճառ դարձան:

ՌԴ քաղաքական դաշտում շարունակել են գերակայող մնալ այն դիրքորոշումն ու խոսույթը, որոնց համաձայն՝ միաբևեռ աշխարհը պահպանելու ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից տեղի են ունեցել անդադար միջամտություն ինքնիշխան պետությունների ներքին գործերին՝ օգտագործելով բոլոր հնարավոր մեթոդները՝ ներառյալ ռազմական ուժը, զինված ագրեսիան և լրկալ պատերազմները:



Ռուսական քաղաքական ընտրանու գնահատմամբ՝ երկրի հեղինակության աճը միջազգային ասպարեզում, անկախ ինքնիշխան քաղաքականությունը ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ղեկավարությանը դրդում են մեկուսացնել Ռուսաստանը համաշխարհային հանրությունից պատժամիջոցների, նույնիսկ ռազմական ուժի կիրառման ճանապարհով: Այս ամենը վկայում է ռուսական պետությանը սպառնացող ռազմական սպառնալիքների աճի մասին, ինչը ստիպում է դրանց համարժեք արձագանքել ի շահ երկրի ազգային անվտանգության ապահովմանը: Այս նպատակին հասնելու համար ՌԴ-ն փորձում է ամեն կերպ չեզոքացնել ռազմական մարտահրավերներն ու սպառնալիքները: Երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը ձգտում է օգտագործել իր բոլոր ռեսուրսները՝ ռազմական, քաղաքական, իրավական, դիվանագիտական և այլն: Ռազմական ուժի կիրառումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե ազգային անվտանգության ապահովման այլ միջոցները չեն տալիս ցանկալի արդյունք: Այս առնչությամբ ՌԴ նախագահ Վ. Վ. Պուտինը նշել է. «Ռուսաստանը չի կարող ապավինել միայն հակասությունների վերացման և հակամարտությունների լուծման դիվանագիտական և տնտեսական մեթոդներին: Մեր երկրի առջև խնդիր է դրված զարգացնել ռազմական ներուժը զսպման ռազմավարության շրջանակներում և պաշտպանունակության մակարդակով: Իսկ զինված ուժերը, հատուկ ծառայությունները և ուժային այլ կառույցները պետք է պատրաստ լինեն արագ և արդյունավետ արձագանքելու նոր մարտահրավերներին: Սա անհրաժեշտ պայման է, որպեսզի Ռուսաստանը իրեն ապահով զգա, և մեր երկրի փաստարկներն ընդունվեն միջազգային տարբեր ձևաչափերի գործընկերների կողմից» (*Putin 2012a*):

Ոչ ցիվիլիարխիկ պայմաններում, երբ պատերազմներն ու զինված հակամարտությունները մեր ժամանակների իրողություն են, ռազմաքաղաքական խնդիրների լուծման ռազմական գործոնը մնում է շատ նշանակալից հասարակական-քաղաքական բոլոր զարգացումներում: Պետական ինստիտուտների ռազմաքաղաքական գործունեությունն իրականացվում է հասարակության անվտանգության ապահովման երաշխիքներում<sup>1</sup>, որոնց

<sup>1</sup> Постановление Совета Федерации Федерального Собрания РФ от 22.02.2022 № 35-СФ “Об использовании Вооруженных Сил РФ за пределами территории РФ”.

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

շրջանակներում ձևավորվում է կենսունակ երաշխիքների ընթացակարգերը: Այս հանգամանքն է պայմանավորում ռազմաքաղաքական անվտանգության ոլորտի դերն ու նշանակությունը երկրի քաղաքական կյանքում և դրա արդիականացման անհրաժեշտությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո ՌԴ-ն բախվեց մի այնպիսի անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակի, երբ հին դաշնակիցները, ինչպես նաև նոր գործընկերները և ոչ դաշնակցային կարգավիճակ ունեցող երկրները դառնում են Ռուսաստանի կարգավիճակի պահպանման և արդյունավետ գործունեության առանցքային գործոնը տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում:


Շարունակվող աշխարհաքաղաքական «տուրբուլենտությունն» առավել քան կենսական է դարձրել ՌԴ քաղաքական համակարգի կայունության խնդիրը. այն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում զարգացման կարևորագույն նախապայման է: Դրանց որակական-քանակական բնութագրիչները ներկայացված են Գծապատկեր 1-ում, իսկ մշակված տվյալներն ամփոփված են Աղյուսակ 1-ում:

2020-2022 թթ. ՌԴ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) գործոնների շարքում առանցքային են եղել սահմանադրական կարգի ամրապնդումը, պայքարը ներհասարակական ծայրահեղականության, ահաբեկչական գործողությունների և ներքաղաքական ամենաարմատական երևույթների դեմ՝ ներառյալ թշնամանքի և ատելության դրսևորումները, որոնք սպառնալիք են երկրի ազգային անվտանգությանը:

ՌԴ ՔՀԿԻ-ի գործոններն ուսումնասիրելու անհրաժեշտությունը թելադրված է այն պայմանների և հնարավորությունների բացահայտմամբ, որոնք ապահովում են երկրի բնակչության հիմնական քաղաքական ուժերի, շերտերի և խմբերի համախմբումը, հասարակության հիմնական արժեքների ձևավորումը և, ի վերջո, ժամանակակից ռուսական հասարակության կայուն քաղաքական զարգացման ձեռքբերումը:

Գծապատկեր 1

ՌԴ քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ՔՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Աղյուսակ 1

ՌԴ Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2022 թթ.)\*

Տարեթիվ	Ք <sub>ԳԻ</sub>	Ս <sub>ԳԻ</sub>	Տ <sub>ԳԻ</sub>	ԲՀԿԻ
2000	-0.201	0.042	-0.375	-0.154
2001	-0.189	0.055	-0.318	-0.135
2002	-0.185	0.153	-0.354	-0.109
2003	-0.184	0.142	-0.300	-0.103
2004	-0.215	0.148	-0.158	-0.098
2005	-0.200	0.061	-0.024	-0.096
2006	-0.160	0.052	0.078	-0.061
2007	-0.167	0.156	0.139	-0.024
2008	-0.386	0.279	0.269	-0.089
2009	-0.192	0.283	-0.160	-0.045
2010	0.088	0.389	0.077	0.177
2011	0.015	0.481	0.411	0.214
2012	0.016	0.418	0.434	0.199
2013	0.130	0.506	0.476	0.295
2014	-0.237	0.541	0.430	0.096
2015	-0.272	0.399	0.171	-0.005
2016	-0.268	0.451	0.102	0.003
2017	-0.293	0.525	0.398	0.056
2018	-0.348	0.546	0.543	0.054
2019	-0.323	0.561	0.528	0.070
2020	-0.247	0.537	0.417	0.088
2021	-0.216	0.556	0.663	0.147
2022	-0.633	0.567	0.632	-0.083

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ք<sub>ԳԻ</sub>-ի, Տ<sub>ԳԻ</sub>-ի, Ս<sub>ԳԻ</sub>-ի և դրանց հիման վրա հաշվարկված ԲՀԿԻ-ի որոշ տարիների արժեքները հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

## 7.1 Քաղաքական տուրբուլենտության համակարգային շրջափուլերը և դերակատարների ռազմավարությունները

### Ուժեղ նախագահական իշխանության ուղղահայացը և պառլամենտարիզմը

ՌԴ նախագահի կարգավիճակի խնդիրը ռուսական սահմանադրականության տեսության և պրակտիկայի հիմնական հարցերից է: Ամենայն հավանականությամբ՝ այս թեման հավակնում է դառնալ ՌԴ քաղաքական համակարգի առանցքային հիմնախնդիրներից մեկը, քանի որ նախագահը հատուկ դիրք է զբաղեցնում կառավարման ոլորտում: Դրանցից առաջնայինն օրենսդրական գործընթացում պետության ղեկավարի մասնակցության դերի ու նշանակության ուսումնասիրությունն է: ՌԴ նախագահի իրավասությունների լայն շրջանակը, որով նա առանձնանում է երկրի Սահմանադրությամբ նախատեսված պետական այլ մարմիններից, օրենսդրության և խորհրդարանի հետ հարաբերություններում նրա լայն լիազորությունները վկայում են, որ նա օրենսդրական գործընթացի և դրա գրեթե բոլոր փուլերի ակտիվ մասնակից է: Հարկ է նշել, որ ՌԴ նախագահի և ՌԴ դաշնային ժողովի միջև օրենսդրության ոլորտում հարաբերությունների հաստատված պրակտիկան ի հայտ է բերել կազմակերպարավական որոշակի խնդիրներ և հակասություններ պետության ղեկավարի ու խորհրդարանի ղեկավարի միջև փոխգործակցության կազմակերպման գործընթացում: Սա թույլ կտա մեզ մոտենալ այնպիսի կարևոր խնդրի լուծմանը, ինչպիսին է Ռուսաստանում պետականաշինության ներկա փուլի կարիքները բավարարող օրենսդրության հավասարակշռված և արդյունավետ մեխանիզմի մշակումը: Դիտարկվող ժամանակահատվածում վերափոխումների ենթարկվող Ռուսաստանը նշանավորվում է պետական-իրավական հարթությունում սահմանադրականության ի հայտ գալով, որովհետև ակնհայտ է, որ չափազանց շահագրգռված է քաղաքական կայունությամբ, առավել քան երբևէ անհրաժեշտ է արդյունավետ փոխգործակցող խորհրդարան և պետության ղեկավար:

ՌԴ քաղաքական համակարգի կայունության վերլուծությունը սկսվում է քաղաքական գործոնների և ուժերի հարաբերակցության վերլուծությունից:

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

Սա միանգամայն արդարացված է, երբ խոսքը վերաբերում է ՌԴ շուրջ ծավալված միջազգային իրավիճակի զարգացման սցենարների քննությանը և ռազմավարական գործընթացների կանխատեսմանը: Դրանք ձևավորվում են երեք խմբի գործոնների ազդեցության տակ՝ միջազգային հարաբերությունների դերակատարներ, համաշխարհային միտումներ և նրանց միջև հարաբերություններ: Այս առումով սցենարը, որը հիմնված է միջազգային հարաբերություններում ՌԴ դերակատարության ուժերի հարաբերակցության գնահատականների՝ որպես ապագա միջազգային իրավիճակը ձևավորող գործոնների կարևորագույն խմբի վրա, ոչ միայն բավականին ավանդական է, այլև գործնականում օգտագործվող սակավաթիվ սցենարներից է: Այն հիմնված է միջազգային հարաբերություններում որոշակի դերակատարների ապագա հզորության ու ազդեցության չափման և այդ հարաբերակցության վրա ազդող միտումների վրա:

2020-2022 թվականներին ՌԴ քաղաքական կայունությունը պայմանավորված է եղել հետևյալ հանգամանքներով.

- նախ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ժառանգած և եվրասիական ինտեգրմամբ փոխակերպված աշխարհատնտեսական և ռազմաքաղաքական գործոնների, ինչպես նաև հետերկբևեռ տասնամյակներում առաջացած ողջ համալիրի ազդեցությունը,
- երկրորդ՝ երկարաժամկետ էկզոգեն գլոբալ միտումները՝ մի կողմից, բայց մյուս կողմից՝ էկզոգեն խնդիրների լուծման ռազմավարությունների և մարտավարությունների արդյունավետությունը կամ ճախողումը (կլիմայական աշխարհաքաղաքականություն, համաշխարհային պարենային անվտանգության հակասական դինամիկա, անկայունության աճ՝ պայմանավորված COVID-19-ի դեմ իշխանությունների կենսաքաղաքականությամբ),
- երրորդ՝ ճգնաժամային ռազմաքաղաքական դինամիկան և այս ֆոնին նոր հակամարտությունների առաջացման մեծ հավանականությունը հետխորհրդային տարածքում:

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի է եղել խորհրդարանական ընթացակարգերի առանձնահատկությունը, որը դրանք տարբերում է բոլոր տեսակի իրավական գործընթացներից, այն է, որ դրանք ապահով-

վում են նախագահական իշխանության ուղղահայացի (պետական հարկադրանքի) ուժով, այլ ոչ թե դրանք վիճարկելու հնարավորությամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առավել կարևոր է Ռուսաստանի խորհրդարանի պալատների կանոնակարգերում ամրագրել իրավական երաշխիքների նվազագույն նախապայմաններ, որոնք ապահովում են խորհրդարանական ընթացակարգերի դերակատարների իրավունքների իրականացումը: Այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ մինչ օրս, չնայած բազում փորձերին, Ռուսաստանի խորհրդարանի աշխատանքի հիմնական սկզբունքները չեն ինստիտուցիոնալացվել դաշնային սահմանադրական օրենքին համապատասխան, իսկ Դաշնային ժողովի պալատների կարգավորող նորմերը հաճախակի փոփոխության են ենթարկվում՝ ժամանակի միտումներին համահունչ դարձնելու և ապահովելու համար, որ խորհրդարանն արագ և ամենակարևորը հարմար որոշումներ կայացնի նախագահական իշխանության համար:

Ռուսաստանում խորհրդարանական շատ ընթացակարգեր փոխառված են օտարերկրյա դարավոր փորձից, և խորհրդարանի գործունեության մի շարք ժամանակակից սկզբունքներ հիմնված են միջազգային իրավունքի նորմերի և ՌԴ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի վրա, որոնք կարևոր են երկրի իրավական համակարգի միջազգայնացման առումով: Միևնույն ժամանակ, ներկայացուցչական տարբեր տեսակի ինստիտուտների գործունեության սեփական պրակտիկան ազդել է Ռուսաստանի խորհրդարանական գործընթացի առանձնահատկությունների վրա: Խորհրդարանական ընթացակարգերի օտարերկրյա և սեփական պատմական փորձը հաշվի առնելը կարևոր է, սակայն դրանք կարգավորելիս նախևառաջ պետք է ապահովվեն սահմանադրական համակարգի հիմնարար սկզբունքների պահպանումը, մարդու և քաղաքացու իրավունքները, որոնք խորհրդարանի ընթացակարգերի սահմանադրական չափանիշներն են: Դրա օրինակներից էր, երբ 2020 թվականի հունվարին Դաշնային ժողովին ուղղված ուղերձում (*Kremlin.ru 2020*) ՌԴ նախագահ Պուտինը բարձրաձայնեց Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու գաղափարը: Դրանից հետո Սահմանադրության փոփոխության աշխատանքային խումբը նախաձեռնեց փոփոխություններ ՌԴ Սահմանադրության մեջ, որոնք այնուհետև հաստատվեցին համազգային քվեարկությամբ և

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

ուժի մեջ մտան 2020 թվականի հուլիսի 4-ին (ԴՃ ՓՇ ՔՓ 2023): Այդ փոփոխությունները վերաբերում են նախագահին, կառավարության անդամներին և կառավարության տարբեր պաշտոնյաներին, խորհրդարանի լիազորությունների վերափոխմանը, դաշնային տարածքների օտարման արգելքին, ռուսաց լեզվի կարգավիճակի ամրագրմանը և այլն (ԴՃ ՓՇ ՔՓ 2023): Բացի այդ, փոփոխությունները թույլ են տալիս գործող նախագահին կրկին առաջադրել իր թեկնածությունը 2024 թվականին: Այս առումով երկրի Սահմանադրությունից նախագահական ժամկետների թվի սահմանափակման բացառման իրավաքաղաքական ընթացակարգերը նոր իրողություններ են ձևավորում, քանի որ հասարակությունը կզրկվի իշխանական կանոնավոր փոփոխությունների երաշխիքներից:

Հետազոտության թեմայի արդիականությունը մեծապես պայմանավորված է ռուսական հասարակության անցումային բնույթով, քանի որ առկա է քաղաքական կայունության ուղիների և ընթացակարգերի որոնման, սոցիալական լարվածության թուլացման և քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթաց: Այս խնդիրների լուծումը որոշակիորեն կախված է քաղաքական ընտրությունների ընթացակարգի ձևավորումից և կիրարկումից: Այն խնդիրները, որոնց բախվեց Ռուսաստանը 2021 թվականի Պետական դումայի ընտրությունների ինստիտուցիոնալացման ճանապարհին, պահանջում էին տեսական պարադիգմների, ընտրական մոդելների մշակում՝ երկրի նոր աշխարհաքաղաքական պայմաններին համահունչ:

ՌԴ 8-րդ գումարման Պետական դումայի պատգամավորների ընտրությունները տեղի են ունեցել 2021 թվականի սեպտեմբերի 17-19-ը (տե՛ս *Աղյուսակ 2*): Այդ ընտրություններն անցկացվեցին «խառը» ընտրակարգով, որին մասնակցեցին 14 կուսակցություն, որոնցից 4-ը հաղթահարեցին համամասնական ընտրակարգով սահմանված արգելքը, իսկ երեք կուսակցության («Հայրենիք», «Քաղաքացիական հարթակ» և «Աճի կուսակցություն») մեկական ներկայացուցիչներ ընտրվեցին մեծամասնական ընտրակարգով (տե՛ս *Աղյուսակ 2*):



Աղյուսակ 2

ՌԴ Պետական դումայում կուսակցությունների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը<sup>2</sup>

Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ	Համամասնական		Մեծամասնական	Ընդամենը
	%	տեղ	տեղ	
«Միասնական Ռուսաստան»	49.82	126	198	324
ՌԴ կոմունիստական կուսակցություն	18.93	48	9	57
Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցություն	7.55	19	2	21
«Արդար Ռուսաստան՝ հանուն ճշմարտության» կուսակցություն	7.46	19	8	27
«Նոր մարդիկ» կուսակցություն	5.32	13	0	13
«Հայրենիք» կուսակցություն	0.80	0	1	1
«Աճի կուսակցություն»	0.52	0	1	1
«Քաղաքացիական հարթակ» կուսակցություն	0.15	0	1	1
Այլ կուսակցություններ		0	0	0
Ինքնաառաջադրմամբ			5	5
<b>Ընդամենը</b>	<b>100</b>	<b>225</b>	<b>225</b>	<b>450</b>

2021 թվականի Պետական դումայի ընտրությունները որպես քաղաքական երևույթ ունեն հետազոտական խնդիրների առանձնահատուկ շրջանակ: Խոսքն առաջին հերթին աշխարհաքաղաքական ուժեղ տուրբուլենտության պայմաններում տեղի ունեցած ընտրությունների մասին է՝ որպես

<sup>2</sup> Տվյալների աղբյուրը՝ The Federal Assembly of the RF. 2021. “Results of elections to State Duma of the Federal Assembly of the RF of the eighth convocation.” Accessed July 19, 2023. <http://duma.gov.ru/news/52313/>.

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

քաղաքական ժողովրդավարության ինստիտուտ անցումային և փոխակերպվող ռուսական հասարակության մեջ: Խորհրդարանի՝ որպես ժողովրդի ներկայացուցչության կոլեգիալ մարմնի գործունեության ամենակարևոր երաշխիքը ժողովրդավարական առանցքային սկզբունքի պահպանումն է, այն է՝ հաշվի առնել քաղաքական բոլոր խմբակցությունների դիրքորոշումները: Այս ընտրությունները հերթական անգամ փաստեցին, որ անհրաժեշտ է ամրապնդել խորհրդարանական ու արտախորհրդարանական քաղաքական ընդդիմության կարգավիճակը և նրա իրավունքների իրականացման երաշխիքները: Այս առումով քաղաքական ընտրություններն առաջին հերթին կապված են հանրային իշխանության բաշխման և վերաբաշխման, պետության և նրա քաղաքականության վրա ունեցած ազդեցության և կառավարման մարմինների ձևավորման հետ: Մասնավորապես, Պետական դումայի պատգամավորի, ՌԴ սենատորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և նրան անձեռնմխելիությունից զրկելու կարգը, որը կատարվում է ՌԴ գլխավոր դատախազի միջնորդությամբ, լիովին չի արտացոլում երկրի խորհրդարանի անկախության և ժողովրդական ներկայացվածության երաշխիքները: Պետական դումայի պատգամավորի և ՌԴ սենատորի կարգավիճակի լրացուցիչ երաշխիքը պետք է լինի ձայների որակյալ մեծամասնությունը (2/3), որն անհրաժեշտ է լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և դրա առնչությամբ անձեռնմխելիությունից զրկելու մասին որոշում կայացնելու համար: Մեկ այլ օրինակ է, երբ օրենսդրությամբ նախատեսված է պատժամիջոց Պետական դումայի լիազումար և հանձնաժողովների նիստերին մեկ ամիս առանց հիմնավոր պատճառի բացակայության համար: Այնինչ քվորում ապահովելու նպատակին կարելի է հասնել ավելի մեղմ պատժամիջոցներով՝ տվյալ ամսվա աշխատավարձից զրկելով, իսկ մեկ տարվա ընթացքում պարբերաբար բացակայության դեպքում՝ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելով և այլն: Ընդ որում, նման պատժամիջոցներ պետք է նախատեսվեն ոչ միայն Պետական դումայի պատգամավորների, այլև ՌԴ սենատորների համար, քանի որ քվորումը կարևոր է նաև Դաշնային խորհրդի աշխատանքներում:

Ներկայացուցչական և էլեկտրոնային ժողովրդավարության սկզբունքների համադրումը կօգնի բարձրացնել քաղաքացիական հասարակության

վստահությունը խորհրդարանի ընդունած որոշումների նկատմամբ: Այս առումով նպատակահարմար է ապահովել օրենսդրական նախաձեռնությունների հանրային քննարկման հարթակներ, ինչպես նաև հնարավորություն՝ թեկուզ անուղղակիորեն, դաշնային մակարդակում ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրավունք տրամադրելով:

Մեկ այլ վերահսկողական ընթացակարգ է ՌԴ կառավարությանն անվստահություն (վստահություն) հայտնելը, որը նույնպես իրավական բարելավման կարիք ունի: Անվստահության քվեի (վստահության մերժման) իրավական հետևանքները գործադիր իշխանության օգտին անհավասարակշռություն են պարունակում, և, հաշվի առնելով կատարված վերլուծությունը, եզրակացնում ենք, որ առկա է այն հաղթահարելու երկու ճանապարհ: Առաջինն այն է, որ ՌԴ Սահմանադրությունը (հոդված 116) կարող է լրացվել նորմով, որով ՌԴ կառավարությունից կպահանջվի հրաժարվել իր լիազորություններից՝ հօգուտ նորընտիր Պետական դումայի: Երկրորդը ներառում է Պետական դումայի միաժամանակյա լուծարումը և ՌԴ կառավարության հրաժարականն այն դեպքում, եթե Պետական դուման անվստահություն (վստահության մերժում) հայտնի ՌԴ կառավարությանը, իսկ երկրի նախագահը համաձայնություն տա Պետական դումայի որոշմանը:

### **Արտաքին քաղաքական կուրսի արդարացման «կոշտ ուժի» ռազմավարություններ**

2022 թվականի փետրվարի 24-ին «Ռոսիա 24» հեռուստաալիքով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն իր ուղերձում հայտարարեց Դոնբասում հատուկ ռազմական գործողություն (<ՌԳ> սկսելու մասին (*Kremlin.ru* 2022): Ըստ նրա՝ <ՌԳ-ի ընթացքում Ռուսաստանի իշխանությունները ձգտելու են Ուկրաինայի «ապառազմականացմանը» (դեմիլիտարիզացիա) և «ապաազգայնացմանը» (դենացիֆիկացիա): Մինչ այդ իրականացվեցին մի շարք գործողություններ<sup>3</sup>, վավերացվեցին Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական հանրապետությունները ճանաչելու, ինչպես նաև նրանց հետ բարեկա-

---

<sup>3</sup> Указ Президента РФ от 18.02.2022 № 67 “О призыве граждан РФ, пребывающих в запасе, на военные сборы в 2022 году”. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202202180067>.

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

մության, համագործակցության և փոխօգնության մասին պայմանագրերը<sup>4</sup>: Այս համատեքստում նախագահ Պուտինն անդրադարձել է Դոնեցկի (ԴԺՀ) և Լուգանսկի (ԼԺՀ) ժողովրդական հանրապետությունների ղեկավարների կողմից ռազմական օգնության խնդրանքներին՝ հղում կատարելով ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի 7-րդ մասին, ԴԺՀ-ի և ԼԺՀ-ի հետ վերոհիշյալ պայմանագրերին:

Ռուսաստանի նախագահ Պուտինը ստորագրել է չորս դաշնային սահմանադրական օրենք Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական հանրապետությունների, Ջապորոժիեի և Խերսոնի շրջանները Ռուսաստանի Դաշնության կազմ մտնելու մասին: Նա նաև վավերացրել է օրենքներ, որոնցով այդ շրջանների՝ Ռուսաստանի կազմում ընդգրկվելու օրվանից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կգործի անցումային շրջան:

Նախագահ Պուտինի կարծիքով՝ Ռուսաստանը չի կարող իրեն ապահով զգալ ժամանակակից Ուկրաինայում առկա սպառնալիքների պայմաններում. որպես օրինակ նա հիշեցրել է ուկրաինական իշխանությունների հայտարարությունները միջուկային զենքը վերադարձնելու հնարավորության մասին և կրկին մատնանշել ՆԱՏՕ-ի ուժերի առաջխաղացումը դեպի ռուսական սահմաններ (*Kremlin.ru 2023*):

Ուկրաինական ճգնաժամը համախմբեց ԵՄ երկրներին ընդդեմ ՌԴ-ի: Հակամարտության սկզբից Ուկրաինային օգնություն տրամադրելու և Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև էներգետիկ

---

<sup>4</sup> Указ Президента РФ от 21.02.2022 № 71 “О признании Донецкой Народной Республики”. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202202220002>; Указ Президента РФ от 21.02.2022 № 72 “О признании Луганской Народной Республики”. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202202220001>; Федеральный закон от 22.02.2022 № 15-ФЗ “О ратификации Договора о дружбе, сотрудничестве и взаимной помощи между РФ и Донецкой Народной Республикой”. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202202220032>; Федеральный закон от 22.02.2022 № 16-ФЗ “О ратификации Договора о дружбе, сотрудничестве и взаимной помощи между РФ и Луганской Народной Республикой”. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202202220033>; Указ Президента РФ от 29.12.2022 г. № 968 “Об особенностях исполнения обязанностей, соблюдения ограничений и запретов в области противодействия коррупции некоторыми категориями граждан в период проведения специальной военной операции”. Дата доступа: 10.02.2023. <http://www.kremlin.ru/acts/bank/48747>.

անվտանգության ապահովման միջոցների վերաբերյալ որոշումներն ընդունվել են արագ և միաձայն: Ամենակարճ ժամկետում Ուկրաինային ու Մոլդովային շնորհվեց ԵՄ թեկնածու երկրների կարգավիճակ: Թեև մի շարք հարցերում (էներգետիկ ոլորտում Ռուսաստանի հետ համագործակցության ձևաչափը, Ուկրաինային մահաբեր զենքի մատակարարումը և այլն) կան տարաձայնություններ ԵՄ երկրների միջև, այնուամենայնիվ այդ ամենը կշարունակվի: Նման պայմաններում ՆԱՏՕ-ի ղեկավարությունը փորձել է ճկունություն հաղորդել Դաշինքին՝ բազմաֆունկցիոնալ արձագանքման ժամանակակից մեթոդների ներդրմամբ տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում հավաքական անվտանգության խնդիրները լուծելու համար: Դա վերաբերում էր նաև ՆԱՏՕ-ի պատասխանատվության տարածքի, ինչպես նաև Դաշինքի ուղղահայաց և հորիզոնական կապերի կերպափոխումներին, որոնք անհրաժեշտ են ռազմաքաղաքական արդյունավետության բարձրացման առումով:

ՌԴ քաղաքական համակարգի կայունության առանձնահատկությունների, կառուցվածքի և ժամանակակից պայմաններում դրա արդիականացման առաջնահերթ ուղղությունների ուսումնասիրությունը միջգիտակարգային խնդիր է, որի լուծումը ԲՀԿԻ վերլուծության մեթոդի կիրառմամբ տեսական և գործնական նշանակություն ունի: Այս առումով հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Նախ, քաղաքական համակարգի կայունությամբ ամրապնդվում է հանրային կառավարման որակը, որի արդյունավետության ներուժը հզոր գործոն է ազգային անվտանգության ապահովման և պետության ինքնիշխանության պաշտպանության գործում: Սա պահանջում է քաղաքական կայունության հիմնախնդիրների գիտական զարգացում և հանրայնացում:

Երկրորդ, Ռուսաստանի դերը միջազգային հարաբերություններում, որը պայմանավորված է հակամարտությունների լուծման և միջազգային ահաբեկչության դեմ պայքարում երկրի ռազմական ներուժի օգտագործմամբ: Արտաքին քաղաքական այս խնդիրների լուծումը պահանջում է ռազմական ոլորտի հզորացում, ինչը հնարավոր է միայն գիտական հիմքի վրա՝ դրա ամրապնդման և արդիականացման խնդիրների տեսական մշակման միջոցով:

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

Երրորդ, նոր սերնդի պատերազմների հայեցակարգի ձևավորումը, դրանցում ռազմական և ոչ ռազմական գործոնների դերի հարաբերակցության փոփոխությունը պետության ժամանակակից ռազմական քաղաքականության տեսական հիմքերի հետագա զարգացման խնդրին նորովի մոտեցման անհրաժեշտություն են թելադրում: Դա ենթադրում է հակամարտության և ռազմական ոլորտի ժամանակակից հնարավորությունների հստակ սահմանում: Առանց դրա առանձնահատկությունների խորը գիտական ըմբռնման դժվար է պատկերացնել և կանխատեսել ռազմաքաղաքական գործունեության հիմնական միտումներն ու ուղղությունները:

Չորրորդ, վերջին տասնամյակների ընթացքում երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները՝ սոցիալ-քաղաքական կառուցվածքի նոր մոդելին համապատասխան, օբյեկտիվորեն պահանջում էին լուրջ վերափոխումներ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ռազմական: Լինելով սերտորեն փոխկապակցված՝ բոլոր ոլորտներն իրենց բարեփոխման ընթացքում էական ազդեցություն են ունենում ռազմական ոլորտի արդիականացման վրա, ինչը օբյեկտիվորեն պահանջում է գիտական համակողմանի աջակցություն այդ գործընթացներին:

Հինգերորդը Ռուսաստանի դեմ Արևմուտքի կողմից վարվող տեղեկատվական-հաղորդակցական, արժեքային և մշակութային ճնշումների համատեքստում երկրի ռազմական ոլորտի արդիականացումն է: Այս առումով պաշտպանական ենթակառուցվածքների զարգացումը արժեքային-գաղափարական, քաղաքական-գաղափարախոսական և կրթական կարևոր նշանակություն ունի: Այդ ուղղությամբ իրականացվող ռազմավարությունները պետք է նպաստեն քաղաքացիական գիտակցության խթանմանը իրենց հայրենիքի անվտանգությունն ամրապնդելու անհրաժեշտության մասին՝ ի շահ խաղաղ կեցության և երկրի անվտանգության պահպանման: Այս համատեքստում կարևորվում է պաշտպանունակության ամրապնդման գործում անձնական ներդրում ունենալու մոտիվացիան: Այս գիտելիքներն առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ միայն քաղաքացիների, այլև զինծառայողների բարոյահոգեբանական բարձր որակների ձևավորման համար:

Վեցերորդը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների կողմից տեղեկատվական-քարոզչական առճակատման աննախադեպ ինտենսիվացման համատեքստում Ռուսաստանի պաշտպանությունն արդիականացնելու հիմնախնդիրն է: Այս հարցի համակարգված մոտեցումների բացակայությունը վկայում է Ռուսաստանի քաղաքական կայունության առանձնահատկություններին առնչվող խնդիրների ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

### **Նորացող պետության ազդեցության գոյաբանական հիմքերը**

21-րդ դարում Ռուսաստանի՝ նախկինում աննախադեպ արդիականացման ցուցանիշները հաստատեցին ռազմական անվտանգության մնալուն նշանակությունը ռուսների գոյաբանական հիմքերի առումով: Նորացող պետության ազդեցությունը դրա վրա նկատելի է մի շարք դիրքերով:

Նախ՝ քաղաքական դաշտում առաջնայինը երկրի ժողովրդավարական հիմքերի կառուցումն ու շահերի ու արժեքների վրա հիմնված անվտանգության ապահովումն է: Երկրորդ դիրք՝ տնտեսությունում աճում է Ռուսաստանի ինտեգրման մակարդակը համաշխարհային տնտեսության մեջ, որտեղ սրվում է պայքարը ռազմավարական ռեսուրսների համար: Երրորդ՝ սոցիալական ոլորտում նախընտրելի են դառնում անհատի ներդաշնակ զարգացման պայմանները կյանքի կոչելու փորձերը: Չորրորդ՝ նշանակալից վերափոխումները ընդգրկում են հոգևոր տարածությունը՝ անքակտելիորեն կապված մշակութային այլ նորմերի հետ: Հինգերորդ դիրքը վերաբերում է ռազմական ոլորտում փոփոխություններին՝ զինված ուժերի զարգացում 2016-2020 թվականներին, ՌԴ ռազմական (2014) և ռազմածովային (2015) դոկտրինաների ընդունում, օդատիեզերական ուժերի ստեղծում (2015 թ.) և այլն:

ՌԴ և հետխորհրդային մյուս երկրների քաղաքական կայունությունը սոցիալ-մշակութային, քաղաքատնտեսական, քաղաքակրթական և արժեքային բարդ երևույթ է, որը կախված է ներազգային և վերազգային ինստիտուցիոնալ ու ընթացակարգային բազմաթիվ գործոններից: Քաղաքական անվտանգությունը, քաղաքացիական կայունությունը, տնտեսական առաջընթացը և սոցիալական բարեկեցությունը «Միասնական Ռուսաստան» իշխող կուսակցության անդամների գերիշխող մեծամասնության

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

կողմից ընկալվում են ՌԴ նախագահ Պուտինի հիմնական ձեռքբերումը: Քննարկելով նախագահ Պուտինի քաղաքական գիծը՝ մի շարք վերլուծաբաններ այն նույնացնում են նրա բարեփոխիչ և կայունության ջատագովի հանրային կերպարի հետ՝ փորձելով ամրապնդել պուտինյան Ռուսաստանի մոդելի մասին պատկերացումները:

Ռուսաստանի քաղաքական համակարգի կայունությունը վերջին քսան տարիների ամենակարևոր ձեռքբերումն է: Միգուցե Ռուսաստանի քաղաքական կայունության ձեռքբերումներն ու թերություններն այնքան ակնառու չեն, որքան աննախադեպ իրադարձություններն ու տնտեսական ձեռքբերումները: Բայց առանց դրանց մնացած ամեն ինչ չէր լինի: Սա ավելի լավ հասկանալու համար բավական է վերհիշել 90-ականների իրողությունները:


Ժամանակը ցույց տվեց, որ միայն միասնական ջանքերի և համակարգված փոխգործակցության միջոցով կարելի է կառուցել ուժեղ Ռուսաստան, դաշնային կառավարման և տարածքային ինքնակառավարման համակարգեր: Կենտրոնական մակարդակում նույնպես չկար քաղաքական համակարգի կայունություն: Հասարակության մեջ գաղափարական առճակատում և օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև հակամարտությունը սոցիալական անկայունության և տնտեսական ճախողման ֆոնին հանգեցրին 1993 թվականի հոկտեմբերին Մոսկվայում արյունալի դեպքերի պատճառ դարձան: Սակայն այդ ամենը հնարավորություն տվեց հասնել հասարակության միասնությանը, ապահովելու խաղաղություն և քաղաքացիական ներդաշնակություն՝ սոցիալական տարբեր խմբերի շահերի հավասարակշռության, օրենքի գերակայության և ի հայտ եկած խնդիրներն ու հակասությունները ժամանակին լուծելու շնորհիվ:

Մյուս գործոններն են քաղաքական համակարգի կայունությունը և արտաքին գործոնների նվազագույն ազդեցությունն ինքնիշխան տնտեսության վրա, ընտրության ազատությունը և ժողովրդավարական արժեքների պահպանումը: Սակայն ինչպես պատմությունն է ապացուցել, կենսակերպի ու արժեքների համար պայքարը սովորական բան չէ: Սա դժվար ու երկար ճանապարհ է, որը Ռուսաստանն անցել և շարունակում է անցնել հասարակական համաձայնությամբ և պահպանելով իր մշակութային ու ազգային ինքնությունն ու ավանդույթները:



Գծապատկեր 2

ՌԴ քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



ՌԴ քաղաքական համակարգի կայունության 2000-2022 թթ. Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք<sub>ԳԻ</sub>) կորի դիտարկումը ցույց է տալիս երկրի կենսունակության վրա բացասական ազդեցություն ունեցող քաղաքական գործոնների հիմնական միտումները (տե՛ս *Գծապատկեր 2*):

Մասնավորապես 2014-2022 թթ. Ք<sub>ԳԻ</sub>-ի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված էր միջպետական հակամարտություններով, քաղաքական փոփոխություններին ուղղված ներպետական շարժումներով և զինված բախումներով, որոնց զգալի մասը կորցրել է կրավորական բնույթը՝ պատերազմը դարձելով սովորական երևույթ: Այս առումով Ղրիմում և Դոնբասում առճակատումը բացահայտում է ժամանակակից հակամարտությունների բարձր ինտենսիվությունը: Այդ հակամարտությունները բազմաշերտ են իրենց մասնակիցների և կոնցեսիոնների կազմով: Այն բաց ռազմական գործողություններից փոխվեց տևական զինված դիրքային դի-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

մակայության: Բացի Ռուսաստանից, Ուկրաինայից և ոչ պետական դերակատարներից, այս հակամարտությունում կան բազմաթիվ անուղղակի մասնակիցներ, ինչը երևում է դրա կարգավորման շուրջ բանակցություններին մասնակցող կողմերի կազմաձևից: Այս ամենը չափազանց դժվարացնում է դրա լուծումը:

2020-2021 թթ. ՌԴ քաղաքական համակարգի կայունության քաղաքական գործոնների շարքում առանցքային են եղել սահմանադրական կարգի ամրապնդումը, պայքարը ներհասարակական ծայրահեղականության, ահաբեկչական գործողությունների և ներքաղաքական ամենաարմատական երևույթների դեմ՝ ներառյալ թշնամանքի և ատելության դրսևորումները, որոնք սպառնալիք են երկրի ազգային անվտանգությանը:

Ժամանակակից Ռուսաստանի և նրա կայուն երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացման համար շատ արդիական է քաղաքական և տնտեսական անվտանգության ամրապնդման խնդիրը:

**Աղյուսակ 3**

**2014-2021 թթ. ՌԴ համաշխարհային ռազմականացման ինդեքսը<sup>5</sup>**

<i>Տարի</i>	<i>Ռազմական ծախսերի համաթվի միավոր</i>	<i>Ռազմական անձնակազմի համաթվի միավոր</i>	<i>Ծանր զենքերի համաթվի միավոր</i>	<i>ՀՌԻ միավոր</i>	<i>Վարկանիշ</i>
<b>2021</b>	2.15	0.92	2.65	286	8
<b>2020</b>	2.21	0.92	2.66	289	9
<b>2019</b>	2.08	0.9	2.65	282	8
<b>2018</b>	2.06	0.9	2.65	280	9
<b>2017</b>	2.22	0.91	2.71	292	7
<b>2016</b>	2.54	0.93	2.71	309	6
<b>2015</b>	2.4	0.84	2.71	297	6
<b>2014</b>	2.2	0.82	2.71	286	10

Աղյուսակ 3-ից երևում է, որ 2014-2021 թթ. համաշխարհային ռազմականացման ինդեքսի (<ՌԻ) միավորներով 150-ից ավելի երկրների շարքում ՌԴ համապատասխանաբար զբաղեցնել է 6-ից 10-րդ վարկանիշային

<sup>5</sup> Տվյալների աղբյուրը՝ «Bonn International Centre for Conflict Studies»-ի պաշտոնական կայքի՝ <https://gmi.bicc.de/ranking-table> (վերջին մուտք՝ 23.03.2023):

տեղերը (*Bayer and Rohleder 2022, Bayer 2021*): 2014-2021 թթ. Ռուսաստանի ռազմական ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ-ի 3.72%-5.43%-ը<sup>6</sup>:

2020 թվականի քաղաքական գործընթացները ցույց են տալիս COVID-19-ի համաճարակի հետևանքով առաջացած ճգնաժամի խորությունը և ծավալները: 2020-2022 թվականների քաղաքական համակարգի կայունության առանձնահատկությունը գլոբալ մարտահրավերների և սպառնալիքների էկզիստենցիալ բնույթն է: Դրանք պահանջում են համախմբված, երկարաժամկետ, պատասխանատու և ինչ-որ առումով ակտիվիստական որոշումներ, որոնց համաշխարհային հանրությունն ակնհայտորեն պատրաստ չէր: Աշխարհաքաղաքական ավանդական հակասությունների և հակամարտությունների ֆոնին առաջին պլան է մղվում կլիմայի փոփոխության, տեխնոլոգիական կարգի և սոցիալական անկայունության հետ կապված խնդիրների համալիրը: Խոսքը վերաբերում է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ոլորտում համագործակցության հնարավորություններին, տնտեսական համագործակցության և ազատ առևտրի գոտիների ընդլայնմանը, համաճարակային հիվանդություններին դիմակայելուն և այլն:

## 7.2 Տնտեսական անվտանգության սպառնալիքների վերափոխում

Տնտեսական անվտանգության ապահովումը հետխորհրդային Ռուսաստանի քաղաքական զարգացման կենսական խնդիրներից է: ՌԴ տնտեսության բոլոր ոլորտները պարունակել են ռիսկեր և վտանգներ, որոնք պետք է հաշվի առնել հասարակության կողմից առաջադրված նպատակները որոշելիս և իրականացնելիս: Երկրի տնտեսական անվտանգությունն առաջնային նշանակություն ունի նրա զարգացման համար, քանի որ այն ուղեցույց է սոցիալ-քաղաքական ճիշտ որոշումներ կայացնելու համար:

---

<sup>6</sup> Տվյալների աղբյուրը՝ «Stockholm International Peace Research Institute (SIPRI) Military Expenditure Database» // <https://www.sipri.org/databases/milex> (վերջին մուտք՝ 23.03.2023):

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

Դիտարկվող ժամանակահատվածում սոցիալ-տնտեսական արագ փոփոխվող համակարգի պայմաններում էապես սրվել են տնտեսական անվտանգության խնդիրները: Այսօրվա անվտանգության սպառնալիքները զգալիորեն գերազանցում են Սառը պատերազմի սպառնալիքները (Davidzon 2022): Աշխարհը փոխվում է դինամիկ կերպով, և սպառնալիքները փոխվում են աննախադեպ արագությամբ: Արդյունքում տնտեսական զարգացման կոնկրետ փուլում որոշված անվտանգության առաջնահերթությունները հաստատուն չեն և էական փոփոխություններ են կրում կոնկրետ իրավիճակների պայմաններում:


Պոտենցիալ և իրական սպառնալիքների համակարգը ՌԴ-ում նույնպես չի կարող մշտական լինել, քանի որ դրանք ի հայտ են գալիս ու անհետանում, ավելանում ու նվազում, մինչդեռ տնտեսական անվտանգության վրա դրանց ազդեցության տեղն ու նշանակությունը փոխվում են: Ռուսաստանում և աշխարհում տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվում է, բազմաթիվ սպառնալիքներ կորցնում են իրենց նշանակությունը, արդիականությունն ու սրությունը, միևնույն ժամանակ ի հայտ են գալիս տնտեսական անվտանգությանը սպառնացող նոր մարտահրավերներ:

ՌԴ տնտեսական կայունության գործոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2000-2022 թթ. ժամանակահատվածում տնտեսական հիմնական ցուցանիշները որոշ տատանումներով բարելավվել են՝ պահպանելով աճի դրական միտումները: 2000-2022 թթ. ժամանակահատվածում Տնտեսական գործոնների ինդեքսի (S<sub>ԳԻ</sub>) գրանցած ամենաբարձր արժեքը 2021 թ.-ին էր, իսկ ամենացածրը՝ 2000 թ.-ին: Ընդ որում, եթե 2020 թ. S<sub>ԳԻ</sub>-ի ցուցանիշը համեմատ 2018-2019 թթ. նվազել է, ապա 2021 թ. աճել է 2020 թ. նկատմամբ (տե՛ս *Գծապատկեր 3, Աղյուսակ 1*):

**Գծապատկեր 3**

**ՌԴ քաղաքական համակարգի կայունության Տնտեսական**

գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



2020 թ. Ռուսաստանի տնտեսությունը, ինչպես աշխարհի տնտեսությունների մեծ մասը, բախվեց խորը ճգնաժամային ցնցման՝ պայմանավորված կորոնավիրուսային վարակի տարածմամբ: Այս պայմաններում, ինչպես 2008-2009 թվականների ճգնաժամի դեպքում, Ռուսաստանը դարձավ համաշխարհային տնտեսական ցնցումներից ամենաշատը տուժած երկրներից մեկը:

2020 թ. կորոնավիրուսային ճգնաժամի ժամանակ Ռուսաստանի տնտեսության դինամիկայի տարբերությունների հիմնական պատճառը կենսաանվտանգության ճգնաժամի առանձնահատկություններն են: 2020 թ. համաշխարհային տնտեսության վնասի պատճառը ոչ միայն կորոնավիրուսն էր, այլև դրա դեմ պայքարի համար ընդունված կարանտինային սահմանափակումները, որոնք խաթարել են տնտեսական գործընթացների գործունեությունը ինչպես ազգային տնտեսություններում, այնպես էլ միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում (*Makarychev 2020, Wegren and Nilssen 2022*): Այս պայմաններում այն երկրները, որոնք հրաժարվեցին լիակատար «փակման» քաղաքականությունից, հայտնվեցին տնտեսական ավելի բարենպաստ իրավիճակում: Ռուսաստանում կորոնա-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

վիրուսային վարակի տարածման դեմ պայքարի քաղաքականությունը բացասաբար է ազդել ազգային տնտեսության վրա: Քանի որ երկրի առողջապահական համակարգը կարողացել է դիմակայել համաճարակային ծանրաբեռնվածության մարտահրավերներին, բայց հակակորոնավիրուսային քաղաքականությունը պահանջեց զգալի միջոցներ:

Տնտեսական և առողջապահական մի շարք գործոնների ֆոնին հակաճգնաժամային քաղաքականության ներդրումը կորոնավիրուսային շոկի պայմաններում Ռուսաստանի տնտեսության կայունության ապահովման գործում բավականին համեստ է ստացվել (*Nunes Silva 2022, Glezer et al. 2022, 545-552*): Նախ, չնայած հակաճգնաժամային փաթեթի ձևական առումով մեծ մասշտաբին՝ հարկաբյուջետային և հատկապես դրամական լրացուցիչ խթանների ծավալը բավականին սահմանափակ է այն ամենի համեմատ, ինչ արվել է աշխարհի տնտեսապես զարգացած առաջատար երկրներում (*Elvestad and Isachenko 2022*): Երկրորդ, ձեռնարկված միջոցառումների զգալի մասը տեղավորվում է Քեյնսյան պահանջարկի աջակցության գործիքների մեջ, մինչդեռ նպատակաուղղված միջոցառումները միտված են բնակչության առավել տուժած հատվածներին և հատկապես բիզնեսին (ներառյալ ծառայությունների ոլորտի փոքր և միջին բիզնեսը): Վերջապես՝ երրորդ, հակաճգնաժամային քաղաքականությունը չկարողացավ կանխել տնային տնտեսությունների եկամուտների կտրուկ անկումը, ինչը զգալիորեն բարդացնում է միջնաժամկետ հեռանկարում Ռուսաստանի տնտեսության ճգնաժամային միտումների հաղթահարման հեռանկարները:

Մյուս կողմից, ճգնաժամային ցնցումների ժամանակ բնակչության եկամուտների ապահովման քաղաքականությունը հիմնականում կենտրոնանում է քաղաքացիներին (երեխաներով ընտանիքներ, գործազուրկներ, թոշակառուներ) բյուջետային վճարումների վրա, այլ ոչ թե աշխատատեղերի պահպանման և աշխատավարձի վճարման հարցում ընկերություններին օժանդակելու վրա: 2020 թվականին դա արտահայտվել է, մասնավորապես, հարկադիր ինքնամեկուսացման ժամանակահատվածում ոչ աշխատանքային օրերի համար աշխատավարձի վճարման բեռը գործատուների վրա դնելու որոշման մեջ:

Միևնույն ժամանակ, նույնիսկ այն ոլորտներում, որոնք ամենաշատն էին տուժել ճգնաժամից, սահմանափակումների պատճառով եկամուտների

անկման (կամ տնտեսական գործունեությունը դադարեցնելու) պայմաններում աշխատավարձի պարտավորությունները կատարելու համար միջոցներ գտնելու խնդիրն ամբողջությամբ վստահված է եղել պետական նշանակալի աջակցություն չստացած տնտեսվարող սուբյեկտներին (*Borozna 2022*): Հետևանքը եղավ այն, որ փոքր և միջին բիզնեսը շուկաներից զանգվածային դուրս մղվեց: Դրա հետևանքներն արտացոլվում են վիճակագրության մեջ՝ 2020 թվականին ամենաազդեցիկ ճյուղերի որոշ ընկերությունների սնանկության վերաբերյալ մշտադիտարկումների արդյունքներով: Այդ ամենը հանգեցրեց սնանկության կտրուկ աճի այն ընկերությունների համար, որոնք փաստացի արդեն դադարեցրել էին իրենց տնտեսական գործունեությունը 2020 թվականին:

2020 թվականի շարունակվող հակաճգնաժամային քաղաքականության մեկ այլ անսպասելի հետևանք էր պաշտոնապես գրանցված գործազուրկների թվի կտրուկ աճը, որը մի քանի անգամ ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Միաժամանակ, ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների՝ գործազուրկ քաղաքացիների թիվը նույն ժամանակահատվածում աճեց ընդամենը 1,2%-ով (*World Bank Group 2023*): Այս անհամապատասխանության պատճառը գործազրկության նպաստի ավելացումն էր և գործազուրկ ծնողներ ունեցող ընտանիքների երեխաների համար հավելավճարների ժամանակավոր սահմանումը: Արդյունքում նկատելիորեն աճել են քաղաքացիներին որպես գործազուրկ գրանցելու դեպքերը, իսկ կորոնավիրուսի տարածման համատեքստում ընձեռված առցանց դիմելու հնարավորությունը զգալիորեն նվազեցրել է զբաղվածության կենտրոններում գրանցվելու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ վերլուծությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանի աշխատաշուկայի տնտեսական ցնցումներին հարմարվելու ընթացակարգերը ոչ այնքան զբաղվածության նվազման և գործազրկության աճի, որքան աշխատաժամանակի կրճատման և աշխատավարձի նվազման արդյունքն են: Մինչև նույն ժամանակ, աշխատողի կարգավիճակի պաշտոնապես պահպանումը կարևոր ռեսուրս է աշխատողների շրջանում սոցիալական վստահության և հոգեբանական հարմարավետության պահպանման առումով, բայց ոչ մի կերպ չի պաշտպանում նրանց բարեկեցության մակարդակի անկումից:

Բնակչության իրական եկամուտների երկարատև անկումը, զուգորդված փոքր և միջին բիզնեսի (հատկապես սպասարկման ոլորտում) կրճատմամբ, հիմք են տալիս ընթացող ճգնաժամի միջնաժամկետ և երկարաժամկետ հետևանքների վերաբերյալ հոռետեսական կանխատեսումների (*Godzimirski 2021*): Նախ, իրական եկամուտների բացասական դինամիկան նվազող միտում կունենա սպառողական ծախսերի վրա՝ զսպելով ազգային արտադրանքի (ներառյալ ներմուծմանը փոխարինող) պահանջարկը:

Երկրորդ՝ փոքր և միջին բիզնեսի զանգվածային արտահոսքը շուկայից պետք է համարել ճգնաժամի անդառնալի ծախսերի հիմնական աղբյուրներից մեկը, որը չափազանց դժվար կլինի փոխհատուցել (հատկապես կորսված աշխատատեղերի առումով) առաջիկա տարիներին: Այս միտումների հետևանքները գոնե մասամբ չեզոքացնելու համար անհրաժեշտ է հակաճգնաժամային քաղաքականությունը արմատապես շրջել բիզնեսի աջակցության ուղղությամբ, բայց ներկա ինստիտուցիոնալ պայմաններում նման հակադարձման հավանականությունը խիստ կասկածելի է (*Wishnick 2022*):

Հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսության մեջ պետական ծախսերի և միջբյուջետային տրանսֆերտների ավանդաբար մեծ դերը՝ պետական հատվածում տիրող իրավիճակը հատուկ ուշադրության է արժանի: Կորոնավիրուսային ճգնաժամի հետևանքով 2020 թվականի դաշնային բյուջեի եկամուտները նվազել են, իսկ ծախսերը աճել են, որովհետև անհրաժեշտություն առաջացավ ֆինանսավորել հակաճգնաժամային միջոցառումները<sup>7</sup>:

Սակայն նույնիսկ այս դեպքում արտաքին շուկայում երկրի կախվածությունը փոխառությունից նկատելիորեն ավելի մեծ կլինի, քան 2015–2019 թթ., ինչը լրացուցիչ ռիսկեր է ստեղծում՝ Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցների խստացման և արտաքին պարտքի սեփականատերերի նկատմամբ նույնպես դրանց տարածման պարագայում: ԱՄՆ-ում Ջորջ Բայդենի վարչակազմի իշխանության գալը, որն ավելի վաղ հայտարարել

---

<sup>7</sup> Федеральный закон от 08.12.2020 № 385-ФЗ “О федеральном бюджете на 2021 год и на плановый период 2022 и 2023 годов”. Номер опубликования: 0001202012080106. Дата доступа: 10.02.2023. <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202012080106>.



էր Ռուսաստանի դեմ պատժամիջոցների քաղաքականության ուժեղացման անհրաժեշտության մասին, և 2020 թվականի վերջին թարմացված Բիմիական զենքի կոնվենցիայի խախտման մեղադրանքները կարող են բացասաբար ազդել երկրի տնտեսության վրա:

Տնտեսական անկայունության ռիսկի լրացուցիչ աղբյուր է դաշնության սուբյեկտների բյուջեների աճող դեֆիցիտը (*Минфин России 2020, СФ ФС РФ 2022, European Council/Council of the EU 2023*): 2020-2021 թթ. Դաշնության սուբյեկտների կեսից ավելին ունեին եկամուտները գերազանցող ծախսեր: Չնայած միջբյուջետային տրանսֆերտների աճին՝ դրանց ծավալն անբավարար է մարզային բյուջեի եկամուտների ճգնաժամային անկումը փոխհատուցելու համար: Իրավիճակն ավելի է սրվում, որովհետև դաշնային կենտրոնը որոշել է չվերանայել ազգային նախագծերի ֆինանսավորման՝ ֆեդերացիայի սուբյեկտների պարտավորությունները, ինչը եկամուտների նվազման և հակաճգնաժամային հավելյալ ծախսերի անհրաժեշտության պայմաններում լրացուցիչ բեռ է դնում մարզային բյուջեների վրա: Լավագույն լուծումը կլինի կորոնավիրուսային ճգնաժամի համատեքստում ազգային նախագծերի ֆինանսավորման պլանների վերանայումը՝ դրանցում նախանշված նպատակների իրականացումը տեղափոխելով ավելի ուշ ժամանակաշրջան և համապատասխան ֆինանսական ռեսուրսներն ուղղելով հակաճգնաժամային քաղաքականության նպատակներին՝ ներառյալ աջակցություն բնակչությանը և օգնություն փոքր ու միջին բիզնեսին՝ զբաղվածության և աշխատավարձերի չնվազեցման պարտավորությունների դիմաց:

Հակաճգնաժամային քաղաքականության ոլորտում առաջնահերթությունների սահմանման մոտեցումների առաջարկվող վերանայումը բավականին արմատական է, բայց անհրաժեշտ: Դրա իրագործումը պահանջում է ոչ այնքան քաղաքական կամք, որքան ողջախոհություն և ուշադրություն տնտեսության ոլորտի պրոֆեսիոնալ մասնագետների ողջամիտ առաջարկություններին (*Sakwa 2020*): Եթե դա իրականացվի, ներկայիս ճգնաժամի հետևանքները (համաճարակային ռիսկերի զսպման դեպքում) կարող են վերացվել արդեն 2024-2025 թթ.: Հակառակ դեպքում տնային տնտեսությունների եկամուտների անկումը և բյուջետային ճգնաժամերը կերկարաձգեն ճգնաժամային միտումները:

Ռուսաստանի տնտեսության զարգացման հիմնական ռիսկային գործոնները կարելի է բաժանել երկու խմբի. առաջին՝ առևտրային պատերազմների սպառնալիք, անկայունություն նավթի շուկայում: Երկրորդը կապված է կորոնավիրուսի ռիսկերի կառավարման հետ՝ ինչպես փոխակերպվեց համաճարակի հետ կապված իրավիճակը, պատվաստումը և կոլեկտիվ իմունիտետի ձևավորումը:

Ռուսաստանի պետականության անվտանգային իրավիճակի վրա բացասաբար է անդրադառնում հատկապես ստվերային տնտեսությունը, որը խորապես արմատավորված է բոլոր ոլորտներում՝ կառավարման համակարգից մինչև բիզնես: Ստվերային տնտեսությունը պետական գրանցում չունեցող, հետևաբար չհարկվող տնտեսական գործունեությունն է, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների օրինական արտադրության մի մասի թաքցնելը: Ստվերային տնտեսության դեմ պայքարի ընթացակարգերը քաղաքականություն մշակողներին ու տնտեսագետներին հնարավորություն է ընձեռնում համեմատելու և վերականգնելու ընդհատակյա տնտեսության և համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) հարաբերակցությունը:

Ստվերային տնտեսությունը բացասաբար է ազդում բոլոր ոլորտների գործունեության վրա: Դրա հետևանքները միշտ չէ, որ հնարավոր է գնահատել քանակական ցուցանիշների օգնությամբ: Ստվերային տնտեսության վնասը կարող է լինել ուղղակի և անուղղակի: Ուղղակի վնասը վերաբերում է ուղղակի կորուստներին կամ օրինական հատվածում գործելու ունակության կորստին, ինչպես նաև ներառում է ծախսեր, որոնք ուղղված են ստվերային գործունեությանը հակազդելուն: Կորցրած շահույթը կարող է նաև վերագրվել ուղղակի վնասին՝ որպես կորցրած եկամուտ, որը կարող էր ստացվել, եթե չլիներ ստվերային գործունեություն:

Ստվերային տնտեսության անուղղակի վնասը ոչ այնքան ստվերային գործունեության, որքան այլ ուղեկցող հանգամանքների պատճառած կորուստների հետ կամ միայն անուղղակիորեն կապված է ստվերային հատվածի գործունեության հետ: Ստվերային տնտեսական գործունեության վնասը գնահատելիս չի կարելի սահմանափակվել միայն չվճարված հարկերի չափով: Ստվերային տնտեսության վնասը պետք է հաշվի առնի տարածքի կենսագործունեության այլ ոլորտների վրա ունեցած հետևանքները:

Աշխարհի երկրների համար կան մի քանի կարևոր պատճառներ՝ մտահոգվելու ստվերային տնտեսության չափերով և ընդլայնման միտումներով: Ստվերային տնտեսության մասշտաբների ավելացման պատճառներից է տնտեսվարողների համար հարկային ծանր բեռը: Դա հաճախ պատճառ է դառնում հարկային բազայի էրոզիայի և տարբեր մակարդակներում բյուջեների հարկային եկամուտների նվազման, ինչը կարող է առաջացնել բյուջեի դեֆիցիտի աճ և/կամ ուղղակի և/կամ անուղղակի հարկերի դրույքաչափերի ավելացում: Երկրորդ բացասական դրսևորումը մակրոտնտեսական ցուցանիշների խեղաթյուրումն է: Պետության տնտեսական քաղաքականության կառուցումը պաշտոնական սխալ ցուցանիշների հիման վրա կարող է նաև լուրջ հետևանքներ ունենալ հասարակության և պետության զարգացման վրա (*Andrei 2022*):

Ստվերային տնտեսության վիճակի վերլուծությունից պարզ է դառնում, որ երկրի տարբեր մարզերում այն անհավասար է տարածված. որոշ մարզերում ստվերը կայուն է, այլ տեղ նկատվում է նվազման միտում, իսկ որոշ շրջաններում՝ աճ: Ստվերային գործունեության տարածաշրջանային առանձնահատկությունների շարքում պետք է նշել նաև, որ նշանակություն ունեն աշխարհագրական դիրքը, ռեսուրսային ներուժը, տնտեսության ընդհանուր տնտեսական վիճակը և մասնագիտացումը, սոցիալական կազմը, մշակութային և այլ հատկանիշներ: Հետազոտություններ ցույց են տվել, որ մարզերի մեծ մասում ստվերային տնտեսության հասցրած վնասի չափը գերազանցում է իրենց բյուջեի եկամուտները (*Eltanskaya, Generalova and Arzhanovskaya 2022, Shirov 2023*):

Ստվերային տնտեսության տնտեսական անսպառ ներուժը, տեսակներն ու ձևերն արագ փոխելու նրա կարողությունը, պետական կառույցների կողմից պատշաճ վերահսկողության բացակայությունը, անպատժելիությունն ու կամայականությունը և մի շարք այլ գործոններ ստվերային տնտեսության արմատավորման պարարտ հող են ստեղծում (*Cherednichenko and Komarova 2021*):

Այս երևույթների անտեսումը և խնդրի լուծման ոչ բավարար կամքը խաթարում են տնտեսական գործընթացները (*Sakwa 2021*): Տնտեսության ստվերային հատվածի բերած վնասի գնահատմամբ որոշվել է, թե ինչ է պետք այդ երևույթը արմատախիլ անելու կամ գոնե նվազագույնի հասցնե-

լու համար: Անհրաժեշտ է առաջին հերթին՝ մի շարք ոլորտներում համապարփակ որոշումներ ընդունել: Քանի որ ստվերը ժամանակակից հասարակության յուրօրինակ ինստիտուտ է, ուստի պետք է առաջին հերթին փոխել կառավարման սոցիալ-տնտեսական պայմանները:

Ստվերային տնտեսական գործունեությունը զգալի վնաս է հասցնում ժամանակակից պետության կյանքի տարբեր ոլորտներին՝ սպառնալիքներ ստեղծելով տնտեսական անվտանգության համար և խոչընդոտելով կայուն զարգացումը: Ունակ լինելով արագ հարմարվելու նոր իրողություններին՝ այն սնուցում է հանցավոր տնտեսությունը և նպաստում է կոռուպցիայի տարածմանը, ինչը էապես խոչընդոտում է տնտեսական և սոցիալական զարգացման պետական առաջնահերթությունների իրականացումը (*Srinivas 2022*): Այս ամենը վկայում է, որ անհրաժեշտ է ստվերի դեմ պայքարի համալիր գործունեություն ծավալել:

Ցավոք, ստվերի դեմ պայքարի ներկայիս պետական միջոցառումները ցանկալի արդյունք չեն տալիս: Ստվերային տնտեսության խնդիրներով զբաղվող հետազոտողները դեռևս համաձայնության չեն եկել այն արմատախիլ անելու հարցում: Որոշ փորձագետներ պնդում են, որ անհրաժեշտ է ուժեղացնել պետական վերահսկողությունը և ընդլայնել իրավապահ մարմինների գործունեությունը (*Allan 2021, Kirkham 2022*): Այլ հետազոտողներ հանդես են գալիս օրենքների ազատականացման և գործունեության որոշակի տեսակների մասնակի օրինականացման օգտին (*Plotnikov, Golovko, Fedotova and Rukinov 2020*): Ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված պետական կարգավորման միջոցառումներ մշակելիս պետք է որոշակի փոխզիջում գտնել վարչական և տնտեսական միջոցառումների միջև (*Limonov and Kadochnikov 2023*): Ստվերային տնտեսության աճն ուղղակիորեն կախված է պետական մարմինների ոչ պատշաճ գործողություններից, հարկերի չափից և ձեռնարկատերերի իրավունքները ոտնահարող օրենքներից: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը նոր հնարավորություններ է բացում թվային միջավայրում հանցավորության աճի համար, ինչը կարգավորող և պետական մարմիններից պահանջում է մեծ ուշադրություն և վերահսկողություն: Հաշվի առնելով գլոբալացման գործընթացները և ստվերային գործընթացների անդրազգային բնույթը՝ անհրաժեշտ է միավորել տարբեր երկրների պրակտիկաների և գիտնականների ջանքերը՝

մշակելու արդյունավետ գործիքներ (այդ թվում՝ թվային)՝ ստվերային հատվածը զսպելու համար:


### **7.3 Սոցիալական քաղաքականությունը բնակչության հարմարվողականության գործոն**

Ժամանակակից աշխարհում Ռուսաստանը չի կարող հույսը դնել միայն բնական ռեսուրսների վրա, քանի որ դա հանգեցնում է հասարակության վտանգավոր շերտավորման, տնտեսության անկման: Բայց երկրում շատ դժվար է հրաժարվել ռեսուրսների վրա հիմնված տնտեսության մոդելից: Կան տարածաշրջաններ, որտեղ ռեսուրսների առևտուրը հիմնական եկամուտն է: Հատկապես տեսանելի է Հեռավոր Արևելքի և Հյուսիսարևելյան Ասիայի տարածաշրջանի տնտեսությունների միջև բացը (*Timushev 2022*): Որպեսզի լուծվեն երկրի աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական տարածքի տրանսպորտային ինտեգրման հետ կապված հիմնախնդիրը, հրատապ են դառնում միջազգային տրանսպորտային միջանցքները (*Gurba, Konovalov, Martirosyan, Ovrutskaya and Lukichev 2020, Shcherbak 2023*):

Նպատակային և արդյունավետ սոցիալական քաղաքականությունը հետխորհրդային վերափոխումների պայմաններում երկրի քաղաքական կայունության պահպանման կարևորագույն նախապայմանն է (*Cook, Iarskaia-Smirnova and Tarasenko 2021, Cherednichenko, Dovgotko, Rybasova, Vorontsova and Momotova 2022*): Ռուսաստանի բնակչության զգալի մասի կարիքների բավարարման նվազ շեմը քաղաքական բողոքի տրամադրություններ է առաջացնում, ուստի անհրաժեշտ է սոցիալական հետևողական քաղաքականություն՝ նպաստելու երկրի բնակիչների հարմարումը փոփոխվող կենսապայմաններին (*Petratis 2021*): Դա կարող է մեղմել բողոքի աճող տրամադրությունների քաղաքական հետևանքները:

Գծապատկեր 4

ՌԴ քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



Դիտարկվող ժամանակահատվածում Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս<sub>ԳԻ</sub>) գրանցած ամենաբարձր արժեքը 2022 թ.-ին էր, իսկ ամենացածրը՝ 2000 թ.-ին: Ընդ որում 2022 թ. Ս<sub>ԳԻ</sub>-ի ցուցանիշն աճել է նախորդ տարվա համեմատ՝ արձանագրելով երրորդ բարձր ցուցանիշը 2000-2022 թթ. ժամանակահատվածում (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1):

2021-2022 թթ. ՌԴ-ի Ս<sub>ԳԻ</sub>-ի կորի աճը պայմանավորված էր ՄՀՀ-ի, իրական աշխատավարձի և զբաղվածության ցուցանիշների բարելավման, ինչպես նաև աղքատության և սոցիալական բևեռացման դեմ պայքարի արդյունավետ քաղաքականությամբ:

Սոցիալական քաղաքականությունը սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում կարևոր գործիք է ՌԴ տարբեր մարզերում կենսամակարդակի հիմնական ցուցանիշների հավասարեցման համար: Սակայն այդ տարբերությունները դեռևս շատ մեծ են, ինչը պոտենցիալ սպառնալիք է: Նման պայմաններում ազգային սոցիալական քաղաքականության շրջանակներում կյանքի որակի հավասարեցման ռազմավարությունը պետք է

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

դառնա առաջնահերթություն: Այս առումով բնակչության սոցիալական հարմարվողականության հիմնական չափումները ներառում են՝ քաղաքացիների սոցիալական ազատության և գործունեության մակարդակը, սոցիալական քաղաքականության դերակատարների միջև փոխգործակցության արդյունավետությունը, հանրային կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությունը, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության մակարդակը (*Prokhorova 2020, Malkova 2020, Breskaya, Giordan and Trophimov 2022*):

Ռուսաստանի քաղաքական տարածքի արդիականացման նպատակով 2020-2022 թթ. իրականացվել են վարչական բարեփոխումներ: Դրանք ենթադրում են հանրային քաղաքականության արդյունավետության բարձրացում բոլոր ոլորտներում՝ ներառյալ սոցիալական: Գործադիր իշխանության բարեփոխումների համատեքստում այս ոլորտի առանձնահատկությունը կառավարման գործունեության տեսակների և հանրային ծառայությունների մեծ քանակն է, որոնք պահանջում են կարգավորում: Դրանք պետք է համակարգվեն և միասնականացվեն սոցիալական քաղաքականության շրջանակներում (*Qiang 2021, Carrosio and De Vidovich 2023*):

Սոցիալական քաղաքականության իրականացման ժամանակակից պայմաններում, որը մեծապես ձևավորվել է ՌԴ-ի դեմ պատժամիջոցների ազդեցությամբ, մեծ նշանակություն ունի բնակչության հարմարվողականության քաղաքական կառավարման արդյունավետությունը:

Դիտարկվող ժամանակահատվածում դաշնային և դաշնության սուբյեկտների մակարդակներում պետական մարմինների սոցիալական քաղաքականության հարմարվողականության ներուժը մնում է ցածր՝ 1) իշխանությունների ցածր կատարողականի հետևանքով, 2) կառավարման համակարգի բարեփոխման գործընթացի թերության պատճառով, 3) իշխանության ակնհայտ գերակայությունը սոցիալական քաղաքականության ձևավորման և իրականացման գործում: Պատժամիջոցների սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքով պետության սոցիալական քաղաքականության հարմարվողական ներուժը նվազել է: Ռուսաստանի մարզերի տնտեսական զարգացման մակարդակների և կյանքի որակի տարբերությունները կարևոր գործոն են իշխանությունների հարմարվողական ներուժի ձևավորման հարցում (*Sedykh et al. 2022, Mazin et al. 2022, Osipov et al. 2022*):

Մարզերում կյանքի որակի հավասարեցումը խոչընդոտող պատճառները հետևյալ հանգամանքներն են՝

- տարածաշրջանային տնտեսությունների ոլորտային և արդյունաբերական կառուցվածքի տարբերությունները, որոնք պատմականորեն գոյություն ունեն մինչ օրս, և դրանց արդիականացման մակարդակը,
- բնակչության կյանքի որակի տարբերությունները՝ կրթության միջին մակարդակը և արդյունավետ աշխատանքով զբաղվելու կարողությունը, աշխատունակ բնակչության մասնաբաժինը ընդհանուր բնակչության մեջ,
- սոցիալ-մշակութային վիճակի արդիականացման ցածր տեմպերը,
- ներդրումային գրավչության մակարդակների տարբերությունները:

Կորպորացիաների սոցիալական քաղաքականությունը Ռուսաստանում աստիճանաբար դառնում է ընդհանուր համակարգի նշանակալի տարր, որն իրականացվում է ՏԻՄ-երի հետ սերտ համագործակցությամբ: Հենց դրա շնորհիվ է, որ կորպորատիվ սոցիալական քաղաքականության հարմարվողական ներուժն աճի միտում ունի: Կորպորացիաների համար սոցիալական քաղաքականության համապատասխանությունը որոշվում է նրանց կողմից սոցիալական կապիտալի կուտակման անհրաժեշտությամբ: Ներկայումս ռուսական կորպորացիաների սոցիալական ներդրումների առաջնահերթությունը ներքին սոցիալական քաղաքականությունն է, որը ընկերության աշխատակիցներին խթանելու և աջակցելու նպատակ է հետապնդում (*Mironova, Ruonala and Volodarskaya 2022, Repushevskaya 2022*): Միևնույն ժամանակ, կորպորացիաների սոցիալական քաղաքականությունը զգալիորեն նպաստում է սոցիալական զարգացմանը և քաղաքական կայունության ապահովմանն այն տարածքներում, որտեղ դրանք գործում են:

Բնակչության սոցիալական պաշտպանվածությունը ներկայումս Ռուսաստանում սոցիալական քաղաքականության ամենակարևոր խնդիրներից է, որը պայմանավորված է աղքատության բարձր ցուցանիշներով: ՌԴ-ին բնորոշ է սոցիալական քաղաքականության տրանսֆորմացիան՝ կախված հիմնական գործոնից՝ դրա իրականացման համար գործողությունների ռեսուրսային աջակցության ծավալից: Ընդ որում՝ սոցիալական



քաղաքականության դերակատարները, առաջին հերթին պետությունը, հակված են փոխելու այս քաղաքականության հիմքում ընկած հիմնական սկզբունքների համակարգը՝ կախված ֆինանսական և այլ ռեսուրսների հնարավորություններից (*Palkina et al. 2023, Karpova and Miroshnichenko 2023, Konina and Tekin 2023*):

Դիտարկվող ժամանակահատվածում նկատելի է, որ ռեսուրսային հնարավորություններն ավելանալիս ակտիվանում է սոցիալական քաղաքականությունը, իսկ երբ դրանք կրճատվում են, ապա այն զգալիորեն թուլանում է: Այս շրջափուլում սոցիալական քաղաքականության սկզբունքները նվազ են. դրանք առավելապես սոցիալական քաղաքականությանը նվիրված նորմատիվ իրավական ակտերի գաղափարախոսության տարր են: Մինչդեռ սոցիալական քաղաքականության արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակի ձևավորումը ներառում է այնպիսի հիմնական խնդրի լուծում, ինչպիսին է սոցիալական քաղաքականության գործառնական նպատակների մշակումը, որոնք կարող են օբյեկտիվորեն գնահատվել: Գնահատման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ պայման է՝ առաջին հերթին սոցիալական քաղաքականության ակնկալվող արդյունքների համապատասխանությունը համայնքի զարգացման հիմնարար, երկարաժամկետ նպատակներին, երկրորդ՝ կենտրոնանալ անձի, նրա շահերի և ռեսուրսների վրա՝ որպես սոցիալական քաղաքականության նպատակ և որոշիչ գործոն:

## 7.4 Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը


ՌԴ քաղաքական համակարգի կայացման նախադրյալները փոփոխությունների են ենթարկվում՝ կապված համաշխարհային առաջնորդության ճգնաժամի և մեծ տերությունների միջև հարաբերությունների, ինչպես նաև տնտեսական և տեխնոլոգիական միջավայրի էվոլյուցիայի հետ: Այս առումով քաղաքագիտական նշանակություն ունի ՔՀԿԻ-ի գործոնների համեմատական վերլուծության միջոցով ձևակերպված նոր մոտեցումները, որոնք բացահայտում են ոչ միայն Ռուսաստանի և հետխորհրդային երկրների, այլև աշխարհում փոփոխությունների անկայուն դինամիկան: Ընդ որում՝

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

աշխարհի ճգնաժամային զարգացման թեման այսօր կրկին արդիական է դարձնում գլոբալ կառավարման ընթացակարգերի հիմնահարցը: Ակնհայտ է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամերը, քաղաքացիական անհնազանդությունները, էթնոքաղաքական կոնֆլիկտների նոր բռնկումները, ինչպես նաև բնապահպանական օրակարգի հարցերը լուծելու անհաջող փորձերը հանգեցրել են համաշխարհային կառավարման մոդելի նոր ճգնաժամի, որն ուղեկցվում է ոչ արևմտյան երկրների ազդեցության աճով և աշխարհակարգի «ցնցումներով»: Սկսած 2014 թ.-ից և հատկապես Ռուսաստանի և Արևմուտքի հակամարտության սկզբից ի վեր՝ ՌԴ-ԱՄՆ շարունակվող աննախադեպ և վտանգավոր էսկալացիայի պայմաններում «տուրբուլենտություն» հասկացությունն ակտիվորեն օգտագործվում է գիտնականների և քաղաքական գործիչների կողմից՝ նկարագրելու հիմնական ճգնաժամերն ու անկայունությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգությունը, տնտեսությունը, էկոլոգիան, իրավունքը և նույնիսկ բարոյականությունը:

**Գծապատկեր 5**

**ՌԴ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2022 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Գծապատկեր 5-ում ներկայացված են 2000-2022 թթ. ՌԴ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (ՔՀԿԻ), որի ցուցանիշները 2021 թ.-ին որոշ տատանումներով պարբերաբար աճել են նախորդող տարիների համեմատությամբ, իսկ արդեն 2022 թ.-ին՝ կտրուկ նվազել: Գծապատկեր 5-ից երևում է, որ ՔՀԿԻ-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2013 թ.-ին, որից հետո տեղի է ունեցել կտրուկ անկում մինչև 2015 թ.: Չնայած 2015-2018 թթ.-ին ՔՀԿԻ-ի բացասական ցուցանիշներին, այնուամենայնիվ 2019-2021 թթ. ՔՀԿԻ-ին հաջողվել է պահպանել աճի միտումները, որոնք պայմանավորված էին ՏԳԻ-ի և ԱԳԻ-ի դրական ցուցանիշներով:

ՌԴ ՔՀԿԻ-ի կտրուկ նվազման վրա ազդել է երկրի զինված ուժերի կողմից 2022 թ.-ի փետրվարի 24-ին Ուկրաինայի տարածքում «հատուկ ռազմական գործողություն» սկսելը, որը կերպափոխվեց լայնածավալ և ասիմետրիկ պատերազմի: ՌԴ նման դիրքավորումը հանգեցրեց ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի և Եվրոպայի երկրների մեծ մասի հետ ուղղակի առճակատման, որոնք ՌԴ-ի այդ քայլը որակեցին «թշնամական»: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ի և ԵՄ-ի պաշտոնական կառույցները, ինչպես նաև ՔՀԿ-ներն օգտագործում են ռուսական գործոնը՝ արդարացնելու Հյուսիսատլանտյան դաշինքի գործողությունները: Այս առումով ՌԴ քաղաքական համակարգում բացասական միտումները խորացան նաև երկրի ռազմականացման գործընթացին զուգահեռ, որն իրականացվեց՝ ի պատասխան ՆԱՏՕ-ի անդամ երկրների թվի ավելացման, իր ազդեցության գոտու ընդլայնման, ՌԴ սահմանների մոտ բազաներ և ենթակառուցվածքներ տեղակայելու գործընթացի: Ակնհայտ էր, ԱՄՆ-ի ղեկավարությամբ ՆԱՏՕ-ի ռազմական դոկտրինը և միջազգային գործունեության գրեթե բոլոր տեսակետները ՌԴ-ի նկատմամբ փոփոխությունների ենթարկվեցին: Ըստ այդմ, ՌԴ-ի կողմից ՆԱՏՕ-ի պարադիգմը բնութագրվեց որպես ոչ բարեկամական և պոտենցիալ ռազմական վտանգ երկրի համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ ռազմական քաղաքականությունը ճկուն հարմարվում է ժամանակակից պայմաններին՝ հաճախ հակասելով միջազգային պայմանագրերին և խախտելով հավասարության ու փոխադարձության սկզբունքները, որոնք ուղղված էին մասնավորապես աշխարհում միջուկային զսպմանը, ապա այս աշխատանքի հիմնական նպատակն է նաև հա-

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

մարտեքորեն գնահատել դրա ազդեցությունը ՌԴ-ի և ՆԱՏՕ-ի ռազմական դոկտրինաների էվոլյուցիայի վրա 2022 թ.-ից հետո:

ՌԴ ՔՀԿԻ-ի կտրուկ նվազման պատճառներից էին նաև ՌԴ արտաքին քաղաքականության մեջ տուրբուլենտության և անորոշության աճը, ուժերի գլոբալ հավասարակշռության փոփոխությունը: Ընդ որում ՌԴ ազդեցության ոլորտների վերաբաշխմանը զուգահեռ՝ հետխորհրդային տարածաշրջանի նշանակությունը համաշխարհային քաղաքական գործընթացներում արագորեն մեծացել է: Համաշխարհային կարգի բազմակենտրոն մոդելի ձևավորման համատեքստում հետխորհրդային տարածաշրջանը իր բնական ներուժով և ռազմավարական դիրքով Հյուսիսի և Հարավի, Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում որոշում է գլոբալ և տարածաշրջանային դերակատարների արտաքին քաղաքական գործունեությունը՝ ընդլայնելով իր ազդեցության ոլորտները: Այս համատեքստում սրվում են հակասությունները ԱՄՆ-ի և Չինաստանի, Արևմուտքի երկրների և Ռուսաստանի միջև՝ խորացնելով առճակատումը Եվրասիայի կենտրոնում: Ռազմավարական նշանակություն ունեցող այս տարածաշրջանում իրավիճակի զարգացումը մեծապես կորոշի ուժերի նոր հավասարակշռությունը համաշխարհային ասպարեզում և ապագա աշխարհակարգի ուրվագծերը:

ՌԴ քաղաքական համակարգի կայունության նոր պարադիգմի ձևավորման և գլոբալ կառավարման կառուցվածքի փոփոխությունների համատեքստում մեծացել է հետխորհրդային տարածաշրջանի նշանակությունը համաշխարհային քաղաքականության մեջ, հատկապես ավելացել է առաջատար կենտրոնների ազդեցությունը: Վերջիններիս աշխարհաքաղաքական նախագծերն ուղղված են հետխորհրդային տարածաշրջանում իրենց դիրքերի ամրապնդմանը և տնտեսական ու քաղաքական շահերի ապահովման արդյունավետ ընթացակարգերի ստեղծմանը: ԱՄՆ-ն, ԵՄ-ն, Չինաստանը, Թուրքիան, Իրանը և Ճապոնիան հավակնում են հատուկ դերակատարություն ստանձնել հետխորհրդային երկրների զարգացման հարցում՝ ցուցաբերելով տարածաշրջանում քաղաքական և դիվանագիտական բարձր ակտիվություն:

Վերոնշյալ միտումները, գործոնները և զարգացումները պարունակում են տեսական և գործնական բազմաթիվ մարտահրավերներ: Նախ, համաշխարհային քաղաքականության մեջ ՌԴ քաղաքական համակարգի տուր-

բուլենտության մասին հայեցակարգերը ոչ միայն տարասեռ են, հակասական և ճգնաժամային, այլև քառասյին, ռիսկային և սպառնալից: Դրանք նույնիսկ որոշակիորեն կարող են քողարկել քաղաքական սխալ հաշվարկները և լեգիտիմացնել ապակառուցողական քաղաքականությունը: Երկրորդ, ՌԴ քաղաքական համակարգի տուրբուլենտության պայմաններում դերակատարների խնդիրն է առաջանում. ճի՞շտ է այն դիսկուրսը, որը տուրբուլենտությունը ներկայացնում է որպես օբյեկտիվ և դերակատարների գործունեությունից անկախ, թե՛ կարող է տուրբուլենտություն կառուցվել և փոխվել համաշխարհային քաղաքականության դերակատարների ռազմավարությունների ազդեցության տակ:

Այսպիսով, ՌԴ քաղաքական համակարգի տուրբուլենտությունը երևույթը պահանջում է ՔԳԻ-ի, ՏԳԻ-ի և ՍԳԻ-ի հետագա միտումների համապարփակ հետազոտություն: Նախ, այն պետք է դիտարկվի որպես ժամանակակից համաշխարհային քաղաքականության գերիշխող առանցքային դիսկուրսներից մեկը, որը ենթադրում է ՌԴ քաղաքական համակարգի մի շարք դիսկուրսիվ ռազմավարությունների կիրառում: Երկրորդ, պետք է ուսումնասիրել ՌԴ քաղաքական համակարգի տուրբուլենտության աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործնական կողմը, ինչպես են ներպետական և միջազգային դերակատարները կառավարում այդ տուրբուլենտությանը և արձագանքում դրան:

Այսպես՝ ամփոփելով նշենք, որ ՌԴ քաղաքական համակարգում տեղի ունեցող արդիականացման գործընթացները պայմանավորված են հասարակության ռազմականացման, սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի նոր մոդելի վերակազմակերպմամբ՝ աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական իրավիճակին համապատասխան: Դա կապված է գլոբալիզացիայի շարունակական ոչ միանշանակ գործընթացների, ձևավորվող նոր աշխարհակարգի հետ:

Ռուսական հասարակության ռազմաքաղաքական ոլորտի արդիականացման օպտիմալ տարբերակի իրականացումը պայմանավորված է տարբեր գործոններով, կախված է բազմաթիվ հնարավորություններից ու պայմաններից: Դրանցից ամենակարևորը քաղաքական համակարգի կայունության առանձնահատկությունների և միտումների տեսական խորը վերլուծությունն է, դրա արդիականացման գործընթացի գիտական աջակցությունը:

Ժամանակակից ռուսական հասարակության քաղաքական համակարգի կայունության և արդիականացման վերլուծությունը հնարավորություն է տվել ձևակերպելու հետևյալ եզրակացությունները.

- ՌԴ քաղաքական համակարգի կայունությունը բազմաբնույթ և բազմամակարդակ գործընթաց է, որում ներգրավված են դաշնային և տարածքային հանրային կառավարման դերակատարներ՝ քաղաքական առաջնորդները, ռազմավարություն մշակող ընտրանին, խորհրդարանական կուսակցությունները, քաղաքացիական հասարակությունը և այլ հաստատությունները: Դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են քաղաքականության իրականացման վրա:
- Ռուսական հասարակության քաղաքական կայունության տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ այն ապահովում է ոչ միայն ներերկրային ազգային անվտանգությունը, այլև կատարում է արտաերկրային կարևորագույն գործառույթ. ազդում է հետխորհրդային երկրների անվտանգության վրա:
- ԲՀԿԻ գործոնների բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք զարգանում և գործում են հասարակական այլ ոլորտների հետ զուգակցված՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ գործոնների կիրառմամբ:
- ՌԴ քաղաքական համակարգի կայունությունն ամրապնդվում է պետության ռազմական հզորությամբ, որը կարող է օգտագործվել տարբեր քաղաքական նպատակներով: Ռուսաստանի հասարակության ռազմական ոլորտի նպատակն է ապահովել երկրի ազգային անվտանգությունը, պաշտպանությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը: Ռազմական ոլորտն ուղղակիորեն ազդում է քաղաքական անվտանգության վրա, որը երկրի ազգային անվտանգության ամենակարևոր բաղադրիչն է: Դրա միջոցով ապահովվում է երկրի հուսալի պաշտպանությունը ռազմական վտանգներից և սպառնալիքներից, կանխվում կամ զսպվում է զինված ագրեսիան, իսկ ազգային շահերին ուղղակի ռազմական վտանգի դեպքում՝ կազմակերպում զինված պաշտպանությունը:

- Քաղաքական համակարգի կայունությունը պետք է ապահովվի ժամանակակից ռուսական հասարակության մեջ տեղի ունեցող արդիականացման և սոցիալական փոխակերպումների համաձայն՝ ապագայի մշակված և հիմնավորված հեռանկարային մոդելի հիման վրա: Մինչդեռ դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ քաղաքական համակարգում արդիականացման գործընթացների հիմնական նպատակներն են եղել պետության ռազմական հզորության վերականգնումը՝ ռազմավարական զսպման, պետության գոյության և դինամիկ զարգացման խաղաղ պայմանների ապահովման, երկրի դեմ պատերազմի կամ զինված հակամարտությունների բռնկման կանխարգելման նպատակով:
- ՌԴ քաղաքական կայունության օրինաչափությունները, հակասությունները և մակարդակները ցուցիչներ են, որոնք բնութագրում են ռազմական անվտանգության ներքին և արտաքին միջավայրերը: Դրանք ամրապնդվում են օգտագործվող միջոցների, փոխազդեցության մեթոդների և դրանց շարժիչ ուժերի փոխկապակցման ձևերի համադրությամբ՝ նրանց դինամիկ զարգացման և սահմանված նպատակներին արդյունավետ արձագանքելու հանգամանքների հաշվառմամբ:
- Ռուսական պետականության և քաղաքական կայունության դերակատարների համար փափուկ ուժի հայեցակարգի առանձնահատկությունների փիլիսոփայական ըմբռնումը կարևոր է: Ռուսաստանի նկատմամբ փափուկ ուժի ֆենոմենը մարմնավորված է արևմտյան երկրների ռազմաքաղաքական պրակտիկայում գործող դերակատարների որդեգրած գաղափարական և բարոյական գաղափարախոսության մեջ: Փափուկ ուժի կողմնակիցներն օգտագործում են հանրային միավորումների կողմից ընդունելի լոբբիստական տեխնոլոգիաներ, որոնք դրանց մտավոր ներուժի որակի թաքնված վերափոխում են: Դա թույլ է տալիս համարժեքորեն գնահատել Ռուսաստանի քաղաքական համակարգի կայունության և ռազմական անվտանգության վիճակը:
- ՌԴ նախագահի և խորհրդարանի միջև հարաբերությունների իրավական հիմքը քաղաքական կայունության գործոնների դիտարկումն

է իշխանությունների տարանջատման հայեցակարգի պրիզմայով: Դրա կենսունակության համար առավել քան կարևոր են սահմանադրական համակարգի կայուն զարգացման հուսալի երաշխիքների մշակումը, պետության համար քաղաքական նշանակություն ունեցող նման ճգնաժամերը կանխելու իրավական և սոցիալական ընթացակարգերի մշակմանը նպաստելը:

- Քաղաքական և իրավական նոր իրողությունների համատեքստում (բազմակուսակցական համակարգի զարգացում, ՔՀԿ-ների ամրապնդում և սոցիալական գործընթացների վրա դրանց ազդեցության աճ, քաղաքական համակարգի կայունացում, կառուցողական երկխոսություն պետության ղեկավարի և խորհրդարանի միջև) հիմնարար նշանակություն ունեն օրենսդրական գործընթացում երկրի նախագահի և Դաշնային ժողովի փոխգործակցության բարելավման ուղղությունները: Անհրաժեշտ է հստակեցնել օրենսդրական գործընթացին երկրի նախագահի մասնակցության իրավական կարգավորման ընթացակարգը: Այդ իրավահարաբերությունները օրենսդրորեն կարգավորելուց հրաժարվելը կարող է հանգեցնել օրենսդրական գործընթացի խախտումների և արդյունքում էապես նվազեցնել դրա արդյունավետությունը:
- Օրենսդրական գործընթացի ավանդական մասնակիցների շրջանակի սահմանափակումը ցույց է տալիս Ռուսաստանում ՔՀԿ-ների նոր մոդելի և հանրային վերահսկողության ընթացակարգի աստիճանաբար վերացման միտումները՝ ազդելով վարչակարգային ավանդույթների վրա:
- Թվայնացման և տեղեկատվական հասարակության պայմաններում երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական դիմակայության տեխնոլոգիաներն ավանդական տարածությունից տեղափոխվել են տեղեկատվական ցանց և կիբերտարածություն: Դրանցում տեղեկատվական պատերազմների առաջացումը և տեղեկատվական գերակայության հասնելու ընթացակարգերը ազդում են երկրի թվային ինքնիշխանության և ցանցային հասարակության վրա:
- ՌԴ տեղեկատվական նոր տնտեսությանն անհրաժեշտ է սոցիալ-քաղաքական անվտանգության բոլորովին նոր ճարտարապետու-



թյուն՝ որպես մեկ միասնական համակարգի մեջ կազմակերպված բազմակողմ ինստիտուտների և ընթացակարգերի համալիր: Այս առումով ՌԴ-ի դեմ պատժամիջոցների հաղթահարման քաղաքական գործընթացների արդյունքը կախված կլինի դրա դերակատարների ազդեցության ռեսուրսների հարաբերակցությունից, կառավարող ընտրանու և խորհրդարանական կուսակցությունների ռազմավարությունների կենտրոնացվածության և հետևողականության աստիճանից:

- Ռուսաստանում սոցիալական քաղաքականության արդիականացման հիմնական ուղղությունը ռեսուրսների հնարավորությունների կրճատումից նրա անկախության բարձրացումն է: Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնական դերակատարը պետությունն է, ինչը վկայում է սոցիալական պաշտպանության իրականացման համեմատաբար ցածր արդյունավետության մասին: Սոցիալական պաշտպանության ձևավորման և իրականացման գործում՝ նոր ոչ պետական դերակատարների ներգրավումը կարող է զգալիորեն նպաստել սոցիալական պաշտպանության համակարգի արդիականացմանը:

## Գրականության ցանկ

- Ali, S. Mahmud. 2022. Triangular Dynamics in the Imperial Era. In: The US-China-Russia Triangle. Global Power Shift, 41-81. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-04847-0\\_2](https://doi.org/10.1007/978-3-031-04847-0_2).
- Allan, Duncan. 2021. Trade, Investment and Politics: Prospects for Russian Economic Cooperation with the Gulf. In: Russia's Relations with the GCC and Iran, edited by Nikolay Kozhanov, 133-158. Palgrave Macmillan, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-33-4730-4\\_6](https://doi.org/10.1007/978-981-33-4730-4_6).
- Andrei, Roxana. 2022. Russia's Energy Policy and Strategy: From a Reliable Partner to an Unwanted Supplier. In: Natural Gas at the Frontline Between the EU, Russia, and Turkey. Palgrave Macmillan, Cham, 197-229. [https://doi.org/10.1007/978-3-031-17057-7\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-17057-7_6).
- Balci, Bayram, and Nicolas Monceau. 2021. "Introduction: Turkey, Russia, and Iran—New Dominant Powers in the Middle East?" In: Turkey, Russia and Iran in the Middle East. The Sciences Po Series in International Relations and Political

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

- Economy, edited by Bayram Balci, and Nicolas Monceau, 1–14. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80291-2\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-80291-2_1).
- Bayer, Markus, and Paul Rohleder. 2022. Global Militarization Index 2022. Bonn: BICC.
  - Bayer, Markus. 2021. Global Militarization Index 2021. Bonn: BICC.
  - Bielieskov, Mykola. 2022. Russia and Conventional Arms Control in Europe. In: Arms Control and Europe. Contributions to International Relations, edited by Polina Sinovets, and William Alberque, 35–43. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-03891-4\\_5](https://doi.org/10.1007/978-3-031-03891-4_5).
  - Borozna, Angela. 2022. Change and Continuity in Russian Strategic Culture. In: The Sources of Russian Foreign Policy Assertiveness, 23–54. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-83590-3\\_3](https://doi.org/10.1007/978-3-030-83590-3_3).
  - Borozna, Angela. 2022. Geoeconomics and Foreign Policy. In: The Sources of Russian Foreign Policy Assertiveness. Palgrave Macmillan, Cham, 175–219. [https://doi.org/10.1007/978-3-030-83590-3\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-83590-3_7).
  - Borozna, Angela. 2022. Resurgent Russia (2008–2021). In: The Sources of Russian Foreign Policy Assertiveness, 103–158. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-83590-3\\_5](https://doi.org/10.1007/978-3-030-83590-3_5).
  - Breskaya, Olga, Giuseppe Giordan, and Sergey Trophimov. 2022. “Social construction of religious freedom: a comparative study among youth in Italy and Russia.” Religion, State and Society 50 (3): 254–276, <https://doi.org/10.1080/09637494.2022.2099217>.
  - Carrosio, Giovanni, and Lorenzo De Vidovich. 2023. “Towards eco-social policies to tackle the socio-ecological crisis: energy poverty as an interface between welfare and environment.” Environmental Sociology 9 (3): 243–256, <https://doi.org/10.1080/23251042.2023.2207707>.
  - Cherednichenko, Larisa G., and Irina P. Komarova. 2021. “Russian Economy: The Reality of Stagnation.” In: Socio-economic Systems: Paradigms for the Future. Studies in Systems, Decision and Control, vol. 314, edited by Elena G. Popkova, Victoria N. Ostrovskaya, and Aleksei V. Bogoviz, 1655–1660. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-56433-9\\_171](https://doi.org/10.1007/978-3-030-56433-9_171).
  - Cherednichenko, Olga, Natalia Dovgotko, Yulia Rybasova, Galina Vorontsova, and Oksana Momotova. 2022. “Implementation of the UN sustainable development goals in the agri-food system of Russia: regional and sectoral features.” International Journal of Sustainable Development & World Ecology 29 (6): 483–498. <https://doi.org/10.1080/13504509.2022.2040635>.
  - Cook, Linda J., Elena Iarskaia-Smirnova, and Anna Tarasenko. 2021. “Outsourcing social services to NGOs in Russia: federal policy and regional responses.” Post-Soviet Affairs 37 (2): 119–136, <https://doi.org/10.1080/1060586X.2020.1853454>.
  - Davidzon, Igor. 2022. “The Major Geopolitical Disaster” as the Prerequisite for the Post-soviet Regional Security Governance. In: Regional Security Governance in

Post-Soviet Eurasia. Palgrave Macmillan, Cham, 1-11. [https://doi.org/10.1007/978-3-030-82886-8\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-82886-8_1).

- Delanoë, Igor. 2021. "Moscow and the Challenge of Rebuilding Syria." In: Turkey, Russia and Iran in the Middle East. The Sciences Po Series in International Relations and Political Economy, edited by Bayram Balci, and Nicolas Monceau, 79–95. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80291-2\\_5](https://doi.org/10.1007/978-3-030-80291-2_5).
- Eltanskaya, Elena A., Larisa M. Generalova, and Anastasia V. Arzhanovskaya. 2022. "Practice of Infrastructural Transformations of Educational Environment as a Key Factor of Inclusive Growth of the Russian Economy." In: New Technology for Inclusive and Sustainable Growth. Smart Innovation, Systems and Technologies, vol. 287, edited by Elena I. Inshakova, and Agnessa O. Inshakova, 303-308. Springer, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-16-9804-0\\_27](https://doi.org/10.1007/978-981-16-9804-0_27).
- Elvestad, Christel, and Tatiana Isachenko. 2022. "Chapter 6: Russia's Regional Free Trade Agreements and Agri-Food Trade After 2014." In: Russia's Role in the Contemporary International Agri-Food Trade System, edited by Stephen K. Wegren, and Frode Nilssen, 167-193. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77451-6\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-77451-6_7).
- European Council/Council of the EU. 2023. Infographic - Impact of sanctions on the Russian economy. Accessed July 19, 2023. <https://www.consilium.europa.eu/en/infographics/impact-sanctions-russian-economy/>.
- Freire, Maria Raquel. 2022. "The quest for status: how the interplay of power, ideas, and regime security shapes Russia's policy in the post-Soviet spac." In: Russia's Role in World Politics, edited by Elias Götz, and Neil MacFarlane, 87–101. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-19519-8\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-19519-8_6).
- Frye, Timothy. 2021. Weak Strongman: The Limits of Power in Putin's Russia. Princeton: Princeton University Press. <https://doi.org/10.1515/9780691216980>.
- Galeotti, Mark. 2022. Putin's Wars: From Chechnya to Ukraine. Osprey Publishing.
- Glezer, Olga, Evgeny Antonov, Sergey Safronov, Alexander Sheludkov, Kirill Strakhov, and Maria Zotova. 2022. "The Role of Regional and Local Governance in Dealing with the Socioeconomic Consequences of the COVID-19 Pandemic in Russia." In: Local Government and the COVID-19 Pandemic: A Global Perspective, edited by Carlos Nunes Silva, 537-585. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-91112-6\\_21](https://doi.org/10.1007/978-3-030-91112-6_21).
- Godzimirski, Jakub M. 2021. "Russian Strategic Communication Towards Europe: Goals, Means and Measures." In: The Russian Federation in Global Knowledge Warfare: Influence Operations in Europe and Its Neighbourhood, edited by Holger Mölder, Vladimir Sazonov, Archil Chochia, and Tanel Kerikmäe, 51-78. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-73955-3\\_4](https://doi.org/10.1007/978-3-030-73955-3_4).
- Götz, Elias, and Neil MacFarlane. 2022. "Russia's role in world politics: power, ideas, and domestic influences." In: Russia's Role in World Politics, edited by Elias

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

- Götz, and Neil MacFarlane, 1-13. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-19519-8\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-19519-8_1).
- Greene, Samuel A., and Graeme B. Robertson. 2019. *Putin v. the People: The Perilous Politics of a Divided Russia*. New Haven, Connecticut: Yale University Press. <https://doi.org/10.12987/9780300245059>.
  - Gurba, Vladimir N., Valeri N. Kononov, Sofia A. Martirosyan, Gulnora K. Ovrutskaya, and Pavel N. Lukichev. 2020. "Economic Federalism: Interaction of Federal Authorities and Regions." In: *Public Administration and Regional Management in Russia: Challenges and Prospects in a Multicultural Region*, edited by Elena G. Popkova, and Konstantin V. Vodenko, 51-58. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-38497-5\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-38497-5_7).
  - Jönsson, Christer. 2022. "From the End of History to the End of the World? A Tale of Unforeseen Global Changes." In: *Democracy under Pressure. Challenges to Democracy in the 21st Century*, edited by Ursula van Beek, 11-36. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-09123-0\\_2](https://doi.org/10.1007/978-3-031-09123-0_2).
  - Karpova, Julia S., and Olga I. Miroshnichenko. 2023. "Remote Justice Procedures During the COVID-19 Pandemic in the Russian Federation." In: *Sustainable Development Risks and Risk Management: A Systemic View from the Positions of Economics and Law*, edited by Elena G. Popkova, 83-88. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-34256-1\\_15](https://doi.org/10.1007/978-3-031-34256-1_15).
  - Kirkham, Ksenia. 2022. *Russia: Institutional Design*. In: *The Political Economy of Sanctions: Resilience and Transformation in Russia and Iran*. International Political Economy Series. Palgrave Macmillan, Cham, 89-126. [https://doi.org/10.1007/978-3-031-04055-9\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-04055-9_4).
  - Konina, Olga V., and Alexander V. Tekin. 2023. "Business Management in the Context of the Sustainable Development Paradigm." In: *Smart Green Innovations in Industry 4.0 for Climate Change Risk Management*, edited by Elena G. Popkova, 57-63. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28457-1\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-28457-1_6).
  - Kravtsov, Vlad. 2022. *Personalistic Regimes and the Processes of Governance*. In: *Autocracy and Health Governance in Russia*, 1-39. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-05789-2\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-05789-2_1).
  - Kremlin.ru. 2020. "Послание Президента Федеральному Собранию", 15 января 2020 года. Дата доступа: 10.02.2023. <http://kremlin.ru/events/president/-news/62582>.
  - Kremlin.ru. 2022. "Обращение Президента РФ от 24 февраля 2022 года". Дата доступа: 10.02.2023. <http://www.kremlin.ru/events/president/transcripts/-statements/67843>.
  - Kremlin.ru. 2023. "Послание Президента Федеральному Собранию от 21 февраля 2023 года". Дата доступа: 10.07.2023. <http://kremlin.ru/events/-president/news/70565>.
  - Kunz, Barbara. 2022. "Europe in the U.S.-Russian Security Dilemma: Is There a Way Out?" In: *Polarity in International Relations. Governance, Security and*

Development, edited by Nina Græger, Bertel Heurlin, Ole Wæver, and Anders Wivel, 333-349. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-05505-8\\_17](https://doi.org/10.1007/978-3-031-05505-8_17).

- Lieber, Robert J. 2022. “Polarity, Non-polarity, and the Risks of A-Polarity.” In: *Polarity in International Relations. Governance, Security and Development*, edited by Nina Græger, Bertel Heurlin, Ole Wæver, and Anders Wivel, 171-189. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-05505-8\\_9](https://doi.org/10.1007/978-3-031-05505-8_9).
- Limonov, Leonid, and Denis Kadochnikov. 2023. “Natural Resources, Geography, and Climate.” In: *The Contemporary Russian Economy: A Comprehensive Analysis*, edited by Marek Dabrowski, 3-20. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-17382-0\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-17382-0_1).
- Loftus, Suzanne. 2023. *Russian-Western Relations: A Trust Never Built*. In: *Russia, China and the West in the Post-Cold War Era. New Security Challenges*, 59-91. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-20089-2\\_3](https://doi.org/10.1007/978-3-031-20089-2_3).
- Makarychev, Andrey. 2020. “Russia’s European Policies in a Post-liberal World.” In: *Russia in the Changing International System*, edited by Emel Parlar Dal, and Emre Erşen, 39-57. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-21832-4\\_3](https://doi.org/10.1007/978-3-030-21832-4_3).
- Malkova, Polina. 2020. “Images and perceptions of human rights defenders in Russia: An examination of public opinion in the age of the ‘Foreign Agent’ Law.” *Journal of Human Rights* 19 (2): 201-219, <https://doi.org/10.1080/14754835.2019.1647098>.
- Mazin, Alexander L., Anna A. Troitskaya, Victor P. Kuznetsov, Natalia V. Shmeleva, and Elena E. Frantseva-Kostenko. 2022. “The Relationship Between the Workers Competitiveness and Their Labor Mobility in a Digital Economy.” In: *Cooperation and Sustainable Development. Lecture Notes in Networks and Systems*, vol. 245, edited by Aleksei V. Bogoviz, Alexander E. Suglobov, Alexander N. Maloletko, and Olga V. Kaurova, 123-131. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77000-6\\_15](https://doi.org/10.1007/978-3-030-77000-6_15).
- Mironova, Oksana I., Lydia A. Ruonala, and Elena A. Volodarskaya. 2022. “Socio-psychological Conditions for Forming Trust-Based Relationships Between Employees in Commercial Organizations.” In: *Cooperation and Sustainable Development. Lecture Notes in Networks and Systems*, vol. 245, edited by Aleksei V. Bogoviz, Alexander E. Suglobov, Alexander N. Maloletko, and Olga V. Kaurova, 213-222. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77000-6\\_25](https://doi.org/10.1007/978-3-030-77000-6_25).
- Monceau, Nicolas. 2021. “Relations Between Turkey and Russia: Between Strategic Partnerships and Regional Rivalries.” In: *Turkey, Russia and Iran in the Middle East. The Sciences Po Series in International Relations and Political Economy*, edited by Bayram Balci, and Nicolas Monceau, 167-195. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80291-2\\_10](https://doi.org/10.1007/978-3-030-80291-2_10).
- Navari, Cornelia, and Tonny Brems Knudsen. 2022. “Power Transition and Institutional Change: Theorizing the New World Order.” In: *Power Transition in*

- the Anarchical Society. Palgrave Studies in International Relations, edited by Tonny Brems Knudsen, and Cornelia Navari, 1-28. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-97711-5\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-97711-5_1).
- Nunes Silva, Carlos. 2022. “Local Government and the Covid-19 Pandemic: An Introduction.” In: *Local Government and the COVID-19 Pandemic: A Global Perspective*, edited by Carlos Nunes Silva, 1-23. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-91112-6\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-91112-6_1).
  - Osipov, Vladimir S., Lilia V. Matraeva, Alexander N. Alekseev, Svetlana V. Lobova, and Tatyana P. Baranovskaya. 2022. ““Smart Cooperation””: Prospects for Optimizing Decision-Making in Business Cooperation via Artificial Intelligence.” In: *Cooperation and Sustainable Development. Lecture Notes in Networks and Systems*, vol. 245, edited by Aleksei V. Bogoviz, Alexander E. Suglobov, Alexander N. Maloletko, and Olga V. Kaurova, 149-156. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77000-6\\_18](https://doi.org/10.1007/978-3-030-77000-6_18).
  - Palkina, Marina V., Nadezhda K. Savelyeva, Andrey I. Kostennikov, and Maria V. Ivanova. 2023. “Investment Risks of a Depressed Region in the Context of the Sustainable Development Paradigm.” In: *Smart Green Innovations in Industry 4.0 for Climate Change Risk Management*, edited by Elena G. Popkova, 95-104. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28457-1\\_10](https://doi.org/10.1007/978-3-031-28457-1_10).
  - Petraitis, Daivis. 2021. “The Russian Doctrine—A Way for the Political Elite to Maximise the Efficiency of Information Warfare.” In: *The Russian Federation in Global Knowledge Warfare: Influence Operations in Europe and Its Neighbourhood*, edited by Holger Mölder, Vladimir Sazonov, Archil Chochia, and Tanel Kerikmäe, 107-122. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-73955-3\\_6](https://doi.org/10.1007/978-3-030-73955-3_6).
  - Plotnikov, Vladimir, Maria Golovko, Gilyan Fedotova, and Maksim Rukinov. 2020. “Ensuring National Economic Security Through Institutional Regulation of the Shadow Economy.” In: *Digital Economy: Complexity and Variety vs. Rationality*, edited by Elena G. Popkova, and Bruno S. Sergi, 342-351. ISC 2019. *Lecture Notes in Networks and Systems*, vol. 87. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-29586-8\\_40](https://doi.org/10.1007/978-3-030-29586-8_40).
  - Politkovskaya, Anna. 2007. *Putin’s Russia: Life in a Failing Democracy*. New York: Henry Holt and Company, LLC.
  - Prokhorova, Anna. 2020. “Diaspora Policies, Consular Services and Social Protection for Russian Citizens Abroad.” In: *Migration and Social Protection in Europe and Beyond (Volume 3): A Focus on Non-EU Sending States*, edited by Jean-Michel Lafleur, and Daniela Vintila, 263-276. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-51237-8\\_15](https://doi.org/10.1007/978-3-030-51237-8_15).
  - Putin, Vladimir. 2012a. “Russia and the changing world.” *Vestnik of Russian Nation* 2-3 (22-23): 13-23.
  - Putin, Vladimir. 2012b. “To be strong: guarantees of national security for Russia.” *Vestnik of Russian Nation* 2-3 (22-23): 24-34.

- Putin, Vladimir. 2012c. “Democracy and quality of the state.” *Vestnik of Russian Nation* 2-3 (22-23): 44-50.
- Putin, Vladimir. 2012d. “Russia: national question.” *Vestnik of Russian Nation* 2-3 (22-23): 59-65.
- Putin, Vladimir. 2012e. “Russia is concentrating – challenges which we should answer.” *Vestnik of Russian Nation* 2-3 (22-23): 66-71.
- Qiang, Ma. 2021. “Three Decades of Social Transformation in Russia: From a Totalist Society to a Civil Society.” *Social Sciences in China* 42 (4): 179-193. <https://doi.org/10.1080/02529203.2021.2003602>.
- Repushevskaya, Olga A. 2022. “Assessment of the Economic Potential of Entrepreneurship and Modern Consumer Cooperation in the Modern Economy.” In: *Cooperation and Sustainable Development. Lecture Notes in Networks and Systems*, vol. 245, edited by Aleksei V. Bogoviz, Alexander E. Suglobov, Alexander N. Maloletko, and Olga V. Kaurova, 237-248. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77000-6\\_28](https://doi.org/10.1007/978-3-030-77000-6_28).
- Rothacher, Albrecht. 2021. External Trade: The Roles of the EU, of the Eurasian Economic Union and of China. In: *Putinomics*. Springer, Cham, 305-315. [https://doi.org/10.1007/978-3-030-74077-1\\_12](https://doi.org/10.1007/978-3-030-74077-1_12).
- Rothacher, Albrecht. 2021. Putin’s Autocracy: Siloviki Rule and Their Kleptocracy. In: *Putinomics*. Springer, Cham, 105-155. [https://doi.org/10.1007/978-3-030-74077-1\\_3](https://doi.org/10.1007/978-3-030-74077-1_3).
- Rothacher, Albrecht. 2021. The State-Controlled Banks and the State-Owned Enterprises and Their Privileges. In: *Putinomics*. Springer, Cham, 213-225. [https://doi.org/10.1007/978-3-030-74077-1\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-74077-1_7).
- Sakwa, Richard. 2020. “Stasis and Change: Russia and the Emergence of an Anti-hegemonic World Order.” In: *Russia in the Changing International System*, edited by Emel Parlar Dal, and Emre Erşen, 17-37. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-21832-4\\_2](https://doi.org/10.1007/978-3-030-21832-4_2).
- Sakwa, Richard. 2021. “Sad Delusions: From Greater Europe to Greater Eurasia.” In: *The Return of Eurasia: Continuity and Change*, edited by Glenn Diesen, and Alexander Lukin, 1-31. Palgrave Macmillan, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-16-2179-6\\_1](https://doi.org/10.1007/978-981-16-2179-6_1).
- Sakwa, Richard. 2022. “Political Leadership.” In: *Putin’s Russia*, edited by Darrell Slider, and Stephen K. Wegren, 39-60. Rowman & Littlefield Publishing Group, Inc.
- Sedykh, Ekaterina P., Valeria A. Zhitkova, Anna V. Lapshova, Galina A. Paputkova, and Anna V. Khizhnyi. 2022. “Consolidation Activities of Universities in the Digital Economy.” In: *Cooperation and Sustainable Development. Lecture Notes in Networks and Systems*, vol. 245, edited by Aleksei V. Bogoviz, Alexander E. Suglobov, Alexander N. Maloletko, and Olga V. Kaurova, 97-104. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77000-6\\_12](https://doi.org/10.1007/978-3-030-77000-6_12).

**Գլուխ 7. Պետականության և հասարակության քաղաքական կայունության մարտահրավերները. Ռուսաստանը կոնֆլիկտների և պատժամիջոցների միջև**

---

- Shcherbak, Andrey. 2023. "Russia's "conservative turn" after 2012: evidence from the European Social Survey." *East European Politics* 39 (2): 194-219. <https://doi.org/10.1080/21599165.2022.2084077>.
- Shirov, Alexander A. 2023. "Development of the Russian Economy in the Medium Term: Risks and Opportunities." *Studies on Russian Economic Development* 34: 159-166. <https://doi.org/10.1134/S1075700723020120>.
- Sinovets, Polina, and Valeriia Hesse. 2022. Russia's Foreign and Security Policy: The Evolution of the Escalation Strategy. In: *Arms Control and Europe. Contributions to International Relations*, edited by Polina Sinovets, and William Alberque, 21-28. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-03891-4\\_3](https://doi.org/10.1007/978-3-031-03891-4_3).
- Slider, Darrell. 2022. "Vladimir Putin in Historical Context." In: *Putin's Russia*, edited by Darrell Slider, and Stephen K. Wegren, 3-38. Rowman & Littlefield Publishing Group, Inc.
- Song, Wei. 2023. Germany and Russia: Potential Contender or Contender. In: *Positional Realism. Contributions to International Relations*, 175-215. Springer, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-19-6829-7\\_6](https://doi.org/10.1007/978-981-19-6829-7_6).
- Srinivas, Junuguru. 2022. Introduction and Conceptual Framework. In: *Future of the BRICS and the Role of Russia and China*. Palgrave Macmillan, Singapore, 1-28. [https://doi.org/10.1007/978-981-19-1115-6\\_1](https://doi.org/10.1007/978-981-19-1115-6_1).
- Stent, Angela. 2019. *Putin's World: Russia Against the West and the Rest*. New York: Hachette Book Group, Inc.
- Sukhov, Ivan. 2008. "The Power Vertical and the Nation's Self-Consciousness." *Russia in Global Affairs* 2 (April/June). June 15, 2008. <https://eng.globalaffairs.ru/articles/the-power-vertical-and-the-nations-self-consciousness/>.
- Therme, Clément. 2021. "The Iran-Russia Geopolitical Encounter: A Marriage of Convenience Rather Than a Strategic Alliance." In: *Turkey, Russia and Iran in the Middle East. The Sciences Po Series in International Relations and Political Economy*, edited by Bayram Balci, and Nicolas Monceau, 153-166. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80291-2\\_9](https://doi.org/10.1007/978-3-030-80291-2_9).
- Timushev, Evgeny. 2022. "Drivers of Fiscal Resources at the Local Level in Russia: Role of Institutions Reflected in Regional Debt." *Journal of Political Science: Bulletin of Yerevan University* 1 (3): 60-72. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.060>.
- Wegren, Stephen K., and Frode Nilssen. 2022. "Introduction: Is Russia's Role in the International Agri-Food System Sustainable?" In: *Russia's Role in the Contemporary International Agri-Food Trade System*, edited by Stephen K. Wegren, and Frode Nilssen, 1-34. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-77451-6\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-77451-6_1).
- Wishnick, Elizabeth. 2022. "The Paradox of Sino-Russian Partnership: Global Normative Alignment and Regional Ontological Insecurity." In: *The United States and Contemporary China-Russia Relations: Theoretical Insights and Implications*,



edited by Brandon K. Yoder, 155-180. Palgrave Macmillan, Cham.  
[https://doi.org/10.1007/978-3-030-93982-3\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-93982-3_7).

- World Bank Group. 2023. Unemployment, total (% of total labor force) (national estimate) - Russian Federation. Accessed July 19, 2023. <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?end=2021&locations=RU&start=1992>.
- ГД ФС РФ. 2023. “Что изменилось в Основном законе страны”, 12.12.2020. Дата доступа: 10.02.2023. <http://duma.gov.ru/news/50244/>.
- Минфин России. 2020. Бюджет для граждан. Дата доступа: 10.02.2023. [https://minfin.gov.ru/common/upload/library/2020/10/main/0778\\_Minfin\\_Budget.pdf](https://minfin.gov.ru/common/upload/library/2020/10/main/0778_Minfin_Budget.pdf).
- СФ ФС РФ. 2022. “О параметрах проекта федерального бюджета на 2023 год и на плановый период 2024 и 2025 годов: Рекомендации парламентских слушаний на тему “О параметрах проекта федерального бюджета на 2023 год и на плановый период 2024 и 2025 годов””. Дата доступа: 30.07.2023. <http://council.gov.ru/activity/activities/parliamentary/138882/>.

## **ԳԼՈՒԽ 8.**

# **ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԵՎ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ. ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՄԱԶԱՓ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ**

## **ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքական գլոբալ զարգացման բնորոշ առանձնահատկություններից է ինտեգրացիոն գործընթացների դինամիկան: Ընդ որում, նույնիսկ այն երկրները, որոնք ինտեգրացիոն միավորումների մաս չեն կազմում, այս կամ այն կերպ զգում են դրանց ազդեցությունը: Եվրոպական վեկտորը պատահական չի ընտրվել. Ուկրաինայի քաղաքական ընտրանին դրական է գնահատում Եվրոպական միության (ԵՄ) շրջանակներում ինտեգրման գործընթացը, քանի որ, ի վերջո, դա նշանակում է կայունության, անվտանգության և տնտեսական բարգավաճման գոտու ընդլայնում (*Miller and Tabachnik 2023, Oleinikova 2020, Raik et al. 2023, U.S. Department of State 2023*): Միևնույն ժամանակ, Ուկրաինան՝ որպես համաշխարհային հանրության լիիրավ անդամ, դե յուրե ընտրություն կատարելով հոգուտ եվրաինտեգրման, դե ֆակտո շարունակում է բախվել ռազմավարական ուղենիշներ փնտրելու դժվարին երկընտրանքի առաջ: Վերլուծելով Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների

2020-2022 թթ. ինդեքսները՝ պետք է նշել, որ երկրում եվրաինտեգրման վեկտորի հետ կապված բարեփոխումները դանդաղ են ընթացել, սակայն այնուամենայնիվ ցանկալի արդյունք տվել են: Ուկրաինան ներկայումս գտնվում է մշակութային և քաղաքական տարբեր արժեքներ որդեգրած պետությունների շահերի բախման կիզակետում, որոնցում կարևոր տեղ են զբաղեցնում ոչ միայն ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն, այլև այնպիսի հզոր առանցքային խաղացողներ, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ) և Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ): Ընդ որում, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ժողովրդավարության գլոբալ խթանման ԱՄՆ ռազմավարությունը դարձել է երկրի կառավարող շրջանակների հոչակած նպատակներին հասնելու ամենակարևոր միջոցը: Միացյալ Նահանգները հետխորհրդային ավտորիտար ռեժիմները համարեց նաև ազգային անվտանգության սպառնալիք:

Ժամանակակից Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները հիմնված են բազմավեկտոր արտաքին քաղաքականության սկզբունքների վրա, որը լայն հնարավորություններ է բացում: Նման հայեցակարգային մոտեցումների համատեքստում Ուկրաինան ներառված է ԱՄՆ-ի տարածաշրջանային առաջնահերթությունների շարքում՝ նպաստելով ամերիկյան գերակայության պահպանմանը, նրա ազդեցության ամրապնդմանն ու ընդլայնմանը: Նա ոչ միայն ռազմական բազմակողմ դաշնակցային հարաբերություններ է հաստատել Ուկրաինայի և այլ հետխորհրդային շատ պետությունների հետ: Եթե Ուկրաինայի հետ համագործակցության խորացման շնորհիվ ԱՄՆ-ն կարողանում է ավելացնել իր ճնշումները Ռուսաստանի վրա, ապա Ճապոնիայի և Հարավային Կորեայի հետ դաշինքների ամրապնդմամբ նա դիմակայում է նաև Չինաստանի ազդեցությանն ու հզորացմանը:

Ուկրաինայի ինտեգրացիոն նպատակին հասնելու գործընթացը բարդանում է նրանով, որ ինչպես ԱՄՆ, այնպես էլ ԵՄ քաղաքական համակարգը նույնպես տրանսֆորմացիոն զգալի փոփոխությունների է ենթարկվում (*Zubok 2023, Topychkanov 2022*): Այս իրավիճակում խիստ հրատապ է դառնում եվրաստլանտյան և եվրաինտեգրման համակարգերում Ուկրաինայի տեղը որոշելու, Եվրոպայում քաղաքական իրավիճակի զարգացումը գնահատելու և կանխատեսելու խնդիրը (*Barbieri 2020, European Council 2023*):

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունությունը և ինտեգրացիոն գործընթացները խոչընդոտող օբյեկտիվ գործոններից են քաղաքական ինստիտուտների չկայացվածությունը, անվտանգային միջավայրի վատթարացումը, նոր ռիսկերի անկառավարելիությունը, սոցիալ-տնտեսական շերտավորման խորացումը, քաղաքական ընտրանու անկարողությունը և այլն: Տեղին է նշել, որ Արևելյան գործընկերության (ԱլԳ) իշխող շրջանակները մտավախություն ունեն, որ ինտեգրացիոն գործընթացների հետևանքով Ուկրաինան կկորցնի իր ազգային ինքնիշխանության և տնտեսական անկախության մի մասը՝ հոգուտ տարածաշրջանային բարձր մակարդակի ինտեգրման (*Smyrnova 2023, Lonardo 2022, Kropp and Aasland 2021*): Դրա հիմնական պատճառը, ի թիվս այլոց, օբյեկտիվ խոչընդոտներ են, որոնք վտանգում են ԱլԳ տարածաշրջանի երկրների կենսունակությունը և ինտեգրացիոն նախագծերի արդյունավետ իրականացումը (*Hesse 2023, Golovashchuk 2022*): Այս առումով 2020-2022 թթ. Ուկրաինայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) մեթոդաբանության մեջ հատուկ ուշադրության են արժանացել 2014 թ.-ից երկրի դեմ հիբրիդային հակամարտությունը և ռազմական ագրեսիան<sup>1</sup>, 2022 թ. փետրվարի 24-ից ռուսական լայնածավալ զինված ներխուժումն Ուկրաինայի տարածք (երկրում հայտարարվեց ռազմական դրություն)<sup>2</sup>, ինչպես նաև պետական ինքնիշխանության, եվրոպական և եվրաստլանտյան ինտեգրացիոն քաղաքականության իրականացման վրա անմիջական ազդեցություն ունեցող գործոնների և նախադրյալների բացահայտումն ու վերլուծությունը (*Götz and MacFarlane 2022, Farhadi 2023, Fedorenko and Umland 2021*): Դրանց որակական-քանակական բնութագրիչները ներկայացված են Գծապատկեր 1-ում, իսկ մշակված տվյալներն ամփոփված են Աղյուսակ 1-ում:


---

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Закон України “Про оборону України”. Верховна Рада України, 21.03.2023. <https://zakon.rada.gov.ua/laws/show/1932-12#Text> (վերջին մուտք՝ 19.09.2023):

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս Указ Президента України №64/2022 “Про введення воєнного стану в Україні”. *Офіс Президента України, 24 лютого 2022 року.* <https://www.president.gov.ua/documents/642022-41397> (վերջին մուտք՝ 19.09.2023):

Գծապատկեր 1

Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական, Տնտեսական և Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ: ԲՀԿԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

**Աղյուսակ 1**

**Ուկրաինայի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսները (2000-2022 թթ.)\***

Տարեթիվ	Ք <sub>գր</sub>	Տ <sub>գր</sub>	Ս <sub>գր</sub>	ՔՀԿԻ
2000	-0.008	-0.260	-0.198	<b>-0.103</b>
2001	0.007	-0.203	-0.121	<b>-0.063</b>
2002	0.167	-0.129	-0.048	<b>0.058</b>
2003	0.083	-0.076	-0.140	<b>-0.008</b>
2004	-0.026	-0.028	-0.048	<b>-0.033</b>
2005	0.258	0.039	0.056	<b>0.164</b>
2006	0.365	0.186	0.185	<b>0.284</b>
2007	0.347	0.368	0.373	<b>0.358</b>
2008	0.448	0.649	0.451	<b>0.479</b>
2009	0.378	0.337	0.334	<b>0.359</b>
2010	0.128	0.374	0.284	<b>0.212</b>
2011	0.307	0.600	0.304	<b>0.350</b>
2012	0.232	0.597	0.440	<b>0.349</b>
2013	0.018	0.629	0.319	<b>0.200</b>
2014	-0.413	0.527	0.257	<b>-0.071</b>
2015	-0.341	0.326	0.113	<b>-0.105</b>
2016	-0.155	0.360	0.122	<b>0.005</b>
2017	-0.103	0.412	0.249	<b>0.080</b>
2018	-0.178	0.570	0.341	<b>0.090</b>
2019	-0.179	0.619	0.456	<b>0.131</b>
2020	-0.244	0.500	0.617	<b>0.126</b>
2021	-0.067	0.608	0.655	<b>0.251</b>
2022	-0.445	0.232	0.353	<b>-0.104</b>

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ք<sub>գր</sub>-ի, Տ<sub>գր</sub>-ի, Ս<sub>գր</sub>-ի և դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի որոշ տարիների արժեքները հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

## 8.1 Ուկրաինայի եվրոպական վեկտորը՝ որպես ինքնիշխան ինտեգրման ռազմավարական առաջնահերթություն

ԵՄ-ին Ուկրաինայի ինտեգրումը երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն առաջնահերթությունն է, որը ենթադրում է, որ «եվրոպական ընտրությունը» հաջորդ տասնամյակի համար Ուկրաինայի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման ռազմավարության առանցքն է (*MFA of Ukraine 2021, Blyzniuk 2023, Dovgan et al. 2023*): Դա ներառված էր 2020-2022 թթ. Ուկրաինայի միջազգային և եվրոպական ինտեգրմանն ուղղված գործնական քայլերի հետևյալ ոլորտներում.

- Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ Ուկրաինայի համագործակցության խորացում, որը պետության արտաքին տնտեսական քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից է, քանի որ խթանում է երկրի տնտեսության զարգացումը: ԱՀԿ-ն նպաստում է երկրի մրցունակության բարձրացմանը, արտաքին առևտրի ազատականացմանը, օտարերկրյա ուղղակի և անուղղակի ներդրումներ ներգրավելու համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը և այլն:
- ԵՄ-ի հետ քաղաքական երկխոսության և գործընկերության խորացում: Դա անհրաժեշտ է ԵՄ-Ուկրաինա հարաբերությունների նոր ձևաչափի որոշման համար, որը կհամապատասխանի երկրի երկարաժամկետ շահերին և կմոտեցնի վերջնական նպատակին՝ ԵՄ լիիրավ անդամություն ստանալուն:
- Ուկրաինայի և ԵՄ-ի միջև ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցային գործընթացի վարում, որը կապահովի բիզնես ոլորտում իրավական նորմերի երաշխիքներ, կայուն իրավական դաշտ, սահմանային ենթակառուցվածքների պատշաճ կազմակերպում և այլն:
- Ուկրաինական օրենսդրության համապատասխանեցում ԵՄ օրենսդրության պահանջներին առաջնահերթ ոլորտներում: 2022 թ. հունիսի 23-ին ԵՄ խորհուրդն Ուկրաինային շնորհեց ԵՄ-ին անդամակցելու թեկնածուի կարգավիճակ, որի շնորհիվ Ուկրաինան կկարողա-

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

նա ավելի լավ տեղեկացված լինել էՄ ներքին փոփոխություններին, մասնակցել համաեվրոպական մասշտաբի և նշանակության տարբեր խնդիրների շուրջ բանակցություններին և օգտվել էՄ ֆինանսական ռեսուրսներից (*European Council 2022, The Council of the EU and the European Council 2023, European Council 2023b*):

Եվրոպական ինտեգրացիոն գործընթացներին մասնակցությունը Ուկրաինայի ինքնիշխանության ամրապնդման հիմնական ուղիներից է: Ուկրաինայի ինտեգրացիոն ընթացակարգերը թե՛ արտաքին քաղաքականության ռազմավարության, թե՛ տարածաշրջանի պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի անբաժանելի մասն են (*Åslund 2023, Filippova and Deineko 2021, Groitl 2023, Minesashvili 2022*): Ակնհայտ է, որ ինչպես Ուկրաինայի, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ որևէ երկրի տարածքային անձեռնմխելիության գերակայությունը դրսևորվում է այլ պետությունների և միջազգային դերակատարների իրավահարաբերություններում՝ յուրաքանչյուր ինքնիշխան պետությանը պատկանող ազատ գործունեության սկզբունքներով:

Դիտարկվող ժամանակահատվածում 2014 թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և 2022 թ.-ից Ուկրաինայի տարածքում ընթացող պատերազմի հետևանքների վերացման նպատակով<sup>3</sup> երկրի կառավարող ընտրանին և խորհրդարանական կուսակցությունները պարբերաբար քննարկել են միջազգային իրավական այն սկտերը, որոնք բացահայտում են «ինքնիշխան հավասարություն, ինքնիշխանությանը բնորոշ իրավունքների հարգում» սկզբունքի բովանդակությունը (*Welfens 2022b, Thompson and Zakhirova 2023, Soltanieh 2023, Kugler and Tammen 2023, Martínez-Otero 2023*): Ըստ այդ մոտեցումների՝ պետությունները պարտավոր են հարգել միմյանց՝ ազատ ընտրելու և զարգացնելու իրենց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերը, ինչպես նաև սեփական օրենքներ և վարչական կանոնակարգեր սահմանելու իրավունքը:

---

<sup>3</sup> Стів Закон України “Про правовий режим воєнного стану” (Відомості Верховної Ради (ВВР), 2015, № 28, ст.250), *Верховна Рада України, 20.09.2023*. <https://zakon.rada.gov.ua/laws/show/389-19#Text> (վերջին մուտք՝ 16.09.2023):



Վերլուծելով 2022 թ. փետրվարի 24-ին ՌԴ-ի կողմից Ուկրաինայում սկսված «հատուկ ռազմական գործողությունը»՝ ակնառու է դառնում, որ դա հիբրիդային առճակատում է, քանի որ այն սպառնում է երկրի ինքնիշխանությանը, ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքներին, ինչպես նաև կուսակցություններին, ՔՀԿ-ներին և հասարակական այլ միավորումներին: Այն հիբրիդային առճակատման այնպիսի անհամաչափ պատերազմի տեսակ է, որն արդեն իսկ վտանգել է երկրի քաղաքական համակարգի կայունության սահմանադրական հիմքերը<sup>4</sup> (*Marsh 2023*):

Ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում առանձնահատուկ նշանակություն և իմաստ են ստացել ինքնիշխանության առնչությունն այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են «ժողովրդի ինքնիշխանությունը», «ազգի ինքնիշխանությունը» և «պետական ինքնիշխանությունը» (*Tallis 2023a, Myshlovska 2020, Perez Bustamante 2023*):

ԽՍՀՄ փլուզումից ի վեր ԵՄ-ի հետ համագործակցությունը դարձել է հետխորհրդային տարածքում եվրոպական ինտեգրացիոն նախագծերի գլխավոր նպատակը՝ կուտակելով տարածաշրջանային ինտեգրման ամուր փորձ: Այնուամենայնիվ, Ուկրաինայի և ԱլԳ այլ երկրների հետ հարաբերություններն ու ինտեգրումը պաշտոնապես սահմանելով որպես իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններ և նախաձեռնելով տարածաշրջանում ինտեգրացիոն նախագծերի մեծ մասը՝ ԵՄ-ն բախվում է ինչպես իր գործընկերների պասիվությանը, այնպես էլ Ռուսաստանի անմիջական հակազդեցությանը (*Tarkhanova 2021, Sushentsov and Wohlforth 2023, Russo 2023*):

Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության 2000-2022 թթ. Քաղաքական գործոնների ինդեքսի (ՔԳԻ) կորի դիտարկումը ցույց է տալիս քաղաքական ռիսկերի աճը՝ պայմանավորված ռազմաքաղաքական իրավիճակի վատթարացմամբ, անհամաչափ պատերազմով և ինտեգրացիոն կուրսով (*տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1*): Դրանք հրատապ են դարձնում եվրոպական և եվրաստլանտյան ինտեգրման քաղաքականության, դրա


<sup>4</sup> Տե՛ս “Конституція України (Відомості Верховної Ради України (ВВР), 1996, № 30, ст. 141)”. <https://zakon.rada.gov.ua/laws/show/254%D0%BA/96-%D0%B2%D1%80#Text> (վերջին մուտք՝ 16.09.2023):

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

խնդիրների և գործիքների, ինչպես նաև դրա իրականացումը խոչընդոտող և դյուրինացնող գործոնների համարժեք գնահատումը (տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1):

**Գծապատկեր 2**

**Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\***



2000-2022 թթ. ժամանակահատվածում Ք<sub>գր</sub>-ն ամենաբարձր արժեքը գրանցվել է 2008 թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2022 թ.-ին: Ընդ որում՝ 2014-2022 թթ. Ք<sub>գր</sub>-ի ցուցանիշները բացասական են (տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1): 2022 թ. Ք<sub>գր</sub>-ի կորի կտրուկ անկումը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանի և արտատարածաշրջանային այլ դերակատարների՝ Ուկրաինայի համար մրցակցությամբ՝ սրելով ՌԴ հարաբերություններն Արևմուտքի հետ, ինչպես նաև հետաձգելով Ուկրաինայի անդամակցությունը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին: Դա էլ իր հերթին մեծացրեց հետխորհրդային տարածքի մասնատվածությունը՝ փակուղի մտցնելով Ուկրաինայի ինտեգրումը:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

Ք<sub>գր</sub>-ի ցածր մակարդակը 2020 թ. հիմնականում պայմանավորված էր ռազմաքաղաքական ինտեգրման գործընթացներին մասնակցող Ուկրաինայի և ԱլԳ երկրների քաղաքականության և նպատակների անորոշությամբ ու անհամապատասխանությամբ, որոնք հաճախ լարվածություն են հրահրում գործընկեր պետությունների հարաբերություններում (*Douglas and Slobodchikoff 2023, Bulatov and Kheifets 2023*): ԱլԳ երկրների կառավարող ընտրանիները և խորհրդարանական կուսակցությունները միշտ չէ, որ ձգտում են հաղթահարել տարածայնությունները՝ յուրաքանչյուրն ակնկալելով օգուտներ և արտոնություններ պոկել ինտեգրումից՝ սուբսիդիաներ ստանալու, շուկայական գներից ցածր էներգառեսուրսների, տարանցիկ ենթակառուցվածքների և ԵՄ շուկայի միակողմանի արտոնյալ մուտքի տեսքով (*Brusylovska 2022, Sokov 2023, Petrov 2023, Akande and Goodman 2023, Egeli 2023*):

2020-2022 թթ. ՔՀԿԻ-ի այս հետազոտության շրջանակը ներառում է Ուկրաինայի հայեցակարգային մոտեցման խորը վերլուծություն հետխորհրդային տարածքում եվրոպական ինտեգրման ճանապարհին իր նպատակների իրականացման վերաբերյալ: Ուշադրության են արժանի Ուկրաինայի արտաքին քաղաքականության հիմնարար փաստաթղթերը, ինտեգրացիոն քաղաքականության նվաճումները և ձախողումները, որպեսզի վերանայվի երկրի լիարժեք երկարաժամկետ ինտեգրման ռազմավարությունը: Ներկայումս Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարությունը հաճախ համալրվում է հակասական և չհամակարգված արտաքին քաղաքականության հայեցակարգերով և տեղային ռազմավարություններով, որոնք հիմնականում նույնական են, թեև ընդհանուր առմամբ կարևորում են հետխորհրդային տարածքում ինտեգրումը (*Freire 2022, Horiunova et al. 2022, Loftus 2023a*): Այս առումով, հիմնվելով Ուկրաինայի ինտեգրացիոն քաղաքականության խորքային վերլուծության վրա, կարելի է առաջադրել երկրի ինտեգրացիոն կուրսի վերանայված եռաստիճան պարբերականացում: Եթե առաջին երկու փուլերը, որոնցից առաջինն ավարտվեց մինչև 2004 թ., իսկ երկրորդը՝ 2010 թ., բնութագրվում էին տարածաշրջանը վերջնականապես ապակայունացնելու և ճգնաժամային երևույթները հաղթահարելու Ուկրաինայի փորձերով, ապա երրորդ փուլում (2014 թ.-ից այն

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

կողմ) Ուկրաինան հնարավորություն չունեցավ ինտեգրացիոն նախագծերը զարգացման գործիքների վերածել (*Loftus 2023b, Oakley 2023*):

2014 թ.-ից ի վեր առաջին անգամ հետխորհրդային տարածքում ի հայտ եկավ ինտեգրացիոն նախագծերի և միավորումների շատ բարդ ու հիմնականում հակասական կառուցվածք: Ընդ որում՝ ինտեգրացիոն հակամարտությունների պատճառով Ուկրաինայի շուրջ ԱՄՆ-ՌԴ և ԵՄ-ՌԴ անհամաչափ առճակատումը դրսևորվեց միջպետական այլ միավորումների մակարդակներում: Դրանց թվում հիշատակելի են Ռուսաստանի նախաձեռնությամբ և առաջնորդությամբ տեղծված ինտեգրացիոն միավորումները՝ Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), Ռուսաստան-Բելառուս միութենական պետությունը (ՌԲՄՊ), ինչպես նաև նախաձեռնվեցին մաքսային և տնտեսական միասնական տարածքի ձևավորման մի շարք ծրագրեր:

Հետխորհրդային տարածքի այդպիսի բարդ ինտեգրացիոն կառույցի առկայությունն Ուկրաինայի և ԱլԳ այլ երկրների եվրոպական ինտեգրացիոն քաղաքականության դեմ Ռուսաստանի հակազդեցության հետևանք է: Ուստի անհրաժեշտ է դիտարկել այդ միավորումների ներկա ներուժը, նրանց տեղը Ուկրաինայի արտաքին քաղաքականության տեսլականներում և վեր հանել շահերի իրականացման հիմնախնդիրները:

2020 թ. հոկտեմբերի 25-ի տեղական ընտրությունների արդյունքները ցույց տվեցին կուսակցությունների ընդհանուր վարկանիշը և սոցիալական հենարանը (*տե՛ս Գծապատկեր 2*): Նրանց ստացած ձայների հանրագումարն ապահովեց կուսակցությունների քաղաքական ներկայացվածությունը և ազդեցությունը մարզային խորհուրդներում, Կիևի քաղաքային խորհրդում, Դոնեցկի և Լուգանսկի շրջանային խորհուրդներում: Ընդ որում՝ ՏԻՄ ընտրություններ չեն անցկացվել Ղրիմի թերակղզում, Դոնեցկի և Լուգանսկի շրջանների որոշ հատվածներում, որոնք խորհրդարանը հայտարարել է ժամանակավոր օկուպացված տարածքներ:

2020 թ. հոկտեմբերի 25-ի՝ Ուկրաինայի ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքները<sup>5</sup>

<i>N</i>	<i>Մասնակիցներ</i>	<i>Ընտրված ավագանիների թիվը</i>	<i>Ընտրված քաղաքապետների թիվը</i>
1.	Ինքնառաջադրվածներ	6,623	661
2.	«Ժողովրդի ծառա» քաղաքական կուսակցություն	6,393	226
3.	«Բատկիվչինա» համաուկրաինական միավորում քաղաքական կուսակցություն	4,461	53
4.	«Ընդդիմադիր հարթակ՝ հանուն կյանքի» քաղաքական կուսակցություն	4,207	53
5.	«Հանուն ապագայի» քաղաքական կուսակցություն	4,072	92
6.	«Եվրոպական համերաշխություն» քաղաքական կուսակցություն	3,906	41
7.	«Մեր երկրամասը» քաղաքական կուսակցություն	1,899	44
8.	«Ազատություն» համաուկրաինական միավորում քաղաքական կուսակցություն	891	18
9.	«Գրոյսմանի ուկրաինական ռազմավարություն» քաղաքական կուսակցություն	680	28
10.	Օլեգ Լյաշկոյի «Արմատական կուսակցություն»	582	2
11.	«Պրոպոզիցիա» քաղաքական կուսակցություն	574	18
12.	«Ուժ և պատիվ» քաղաքական կուսակցություն	570	3

<sup>5</sup> Տվյալների աղբյուրը՝ OSCE/ODIHR. 2021. “Ukraine: Local Elections, 25 October 2020 ODIHR. Limited Election Observation Mission Final Report.” January 29, 2021. Warsaw. [https://www.osce.org/files/f/documents/3/e/476974\\_1.pdf](https://www.osce.org/files/f/documents/3/e/476974_1.pdf) (վերջին մուտք՝ 16.09.2023):

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

13.	«Վստահություն» քաղաքական կուսակցություն	458	23
14.	«Հայրենի տուն» քաղաքական կուսակցություն	441	19
15.	«Կերենս դաշինք - Հաջողակ Խարկով» քաղաքական կուսակցություն	433	11
16.	«Հայրենի Անդրկարպատներ» քաղաքական կուսակցություն	354	9
17.	«Չերկաշչաններ» համաուկրաինական միավորում քաղաքական կուսակցություն	343	8
18.	«Ձայն» քաղաքական կուսակցություն	335	0
19.	«Սվետլիչնայա դաշինք - «Միասին»» քաղաքական կուսակցություն	320	12
20.	Ուկրաինայի ագրարային կուսակցություն	313	2
21.	Այլ	4,636	71

Ուկրաինան վավերացրել է մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերը, որոնք վերաբերում են ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը: ՏԻՄ ընտրությունները կայացել են նոր՝ էապես վերանայված օրենսգրքով: Դրանք տեղի ունեցան երկրի արևելքում շարունակվող զինված հակամարտության ու ռազմական այլ գործողությունների և ՌԴ-ի կողմից Ղրիմի թերակղզու անօրինական բռնակցման պայմաններում (*Tallis 2023b, Sussman 2023, Tonlorenzi 2023*): Չնայած հայտարարված զինադադարին՝ իրավիճակն Արևելյան Ուկրաինայի հակամարտությունից տուժած շրջաններում մնում էր լարված և անկայուն՝ մշտական զինված հարձակումներով և մարդասիրական իրավիճակի վատթարացմամբ:

ՏԻՄ ընտրություններում, կուսակցությունների ընդհանուր վարկանիշի համաձայն, առաջատար են եղել «Ժողովրդի ծառա», «Եվրոպական համերաշխություն», «Ընդդիմադիր հարթակ՝ հանուն կյանքի», «Հանուն ապագայի» և «Բատկիվշինա» քաղաքական կուսակցությունները: Վերջիններիս

սատարած ընտրողների ծայների ընդհանուր թիվը վկայում է, որ Ուկրաինայի արևմտյան շրջաններում ընտրողների մասնակցությունն ավելի բարձր է եղել, քան հարավարևելյան հատվածում: Ընդ որում՝ խորհրդարանական հինգ կուսակցությունների համակիրների թիվը նախորդ ընտրությունների համեմատ համեմատաբար նվազել է: Միևնույն ժամանակ, այն տարածքներում, որտեղ տեղական ազդեցիկ կուսակցությունները ներկայացված չէին, խորհրդարանական կուսակցությունները շատ ավելի մեծ աջակցություն են ստացել: Դա էլ հերթական անգամ փաստում է, որ իշխանության կենտրոնը բարեփոխումների շնորհիվ «տեղաշարժվել» է, որը մարզերին հնարավորություն է տալիս տեղական սոցիալական խնդիրները լուծելու (*Welfens 2022a, Koval 2020*): Հարկ է նշել, որ խորհրդարանական կուսակցությունները հաշվի չեն առել, որ տեղի է ունեցել կառավարման ժողովրդավարական ապակենտրոնացում. շրջաններին են փոխանցվել հանրային քաղաքականության մշակման մի շարք լծակներ: Այսինքն, քաղաքական անհավասարակշռություն տեղի ունեցավ. տեղական կառավարման մարմիններն ու առաջնորդները շատ ավելի ընդունելի դարձան, քան համաուկրաինական քաղաքական նախագծերը: Հասարակության և իշխանության իրական կապը պետք է փնտրել տեղերում, քանի որ երկրի նախագահի կամ կառավարության գործունեությունը հաճախ հակասական և տարօրինակ է թվում բնակչությանը: Սրա պատճառով Ուկրաինան հայտնվել է ինչ-որ խաչմերուկում, և իրավիճակի զարգացման մի քանի տարբերակներ կան: Մի կողմից՝ անհրաժեշտ է վարչական և ֆինանսական ավելի շատ իրավունքներ փոխանցել ՏԻՄ-երին, ամրապնդել տեղական ընտրանիների իրական անկախությունը գոնե այն չափով, որը դե ֆակտո առկա է այդ պահին: Սա անհրաժեշտ է կենտրոնի ու մարզերի միջև կայունություն և կառուցողական հարաբերություններ պահպանելու համար: Մյուս կողմից, կարելի է չնկատելու տալ այս գործընթացը, բայց հետո կարող է տեղի ունենալ փափուկ «ֆեդերալիզացիա»: Վերջին տարբերակը կհանգեցնի այն բանին, որ ՏԻՄ-երը ոչ պաշտոնապես ձեռք կբերեն հսկայական իշխանություն՝ չունենալով դրա համար սահմանադրական լիազորություններ, և դա հղի է կենտրոնի և շրջանների միջև անվերջ հակամարտություններով:

Ինչ վերաբերում է «Ժողովրդի ծառա» կառավարող կուսակցությանը, ապա նա կարողացել է առաջատար դիրք գրավել Ուկրաինայի միայն չորս

մարզերում, բայց խորհրդարանական մյուս կուսակցություններից դրանց տարբերությունը չի գերազանցել 2-3 տոկոսը: Գերագույն ռադայում ներկայացված քաղաքական ուժերից նրա հիմնական մրցակիցներն էին «Ընդդիմադիր հարթակ՝ հանուն կյանքի» և «Եվրոպական համերաշխություն» քաղաքական կուսակցությունները: Ստացվում է, որ ՏԻՄ ընտրություններում երեք կուսակցություններն էլ, ըստ էության, ստացել են համարյա հավասար արդյունքներ, այսինքն՝ կորել է իշխող կուսակցության առավելությունը: Ուշագրավ է նաև այն, որ «Ժողովրդի ծառա» քաղաքական կուսակցության փոքր խմբակցությունները՝ կառավարության, խորհրդարանական մեծամասնության և նախագահի աջակցությամբ բոլոր հնարավորություններն ունեն ազդելու մարզային կոալիցիաների և տեղական ընտրանիների գործունեության վրա՝ դառնալով առանցքային քաղաքական ուժ:

Այսպիսով, իշխանության ուղղահայացն ամրապնդվեց տեղական ինքնակառավարման մակարդակում, այսինքն՝ ամեն դեպքում սա հաջողություն է «Ժողովրդի ծառա» քաղաքական կուսակցության համար: Այդուհանդերձ, քվեարկությունը ցույց տվեց, որ կուսակցությունն ուներ նախորդ տարվա վարկանիշի կեսը: Դա փաստում է, որ այն իր ընտրազանգվածը և հասարակական-քաղաքական հենարանը կորցնելու վտանգի առաջ է: Իսկ անարդյունավետ աշխատանքի դեպքում այս իրավիճակը կարող է խորացնել ճգնաժամը թե՛ խորհրդարանում, թե՛ կառավարությունում, թե՛ մեծամասնության ներսում, թե՛ նախագահի շրջապատում:


## **8.2 Ինտեգրման գործընթացների ազդեցությունն Ուկրաինայի տնտեսության վրա**

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական անվտանգության խնդիրը կենսական նշանակություն է ունեցել Ուկրաինայի կայուն զարգացման համար: Միանգամայն իրավացիորեն կարելի է փաստել, որ 2014 թ.-ից ուկրաինական հասարակության կյանքի բոլոր ոլորտները զգալիորեն պարունակել են անվտանգության ցուցիչներ, որոնք ազդարարել են հնարավոր ռիսկերի և սպառնալիքների մասին:



Գծապատկեր 3

Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության Տնտեսական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\*



2022 թվականի Ուկրաինայի ՔՀԿԻ-ի Տ<sub>գր</sub>-ի ցուցանիշների կտրուկ անկման վրա զգալի են եղել Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա և անհամաչափ պատերազմը (տե՛ս Գծապատկեր 3): Դրանք կտրուկ դանդաղեցրել են երկրի տնտեսական աճի տեմպը, որի պատճառով էլ կազմալուծվել են ենթակառուցվածքները, իսկ տնտեսության ծավալները կրճատվել են 45%-ով՝ խորացնելով մարդասիրական ճգնաժամը (World Bank 2022a): Ընդ որում՝ Ուկրաինայի կառավարության, Եվրահանձնաժողովի և Համաշխարհային բանկի 2022 թվականին համատեղ կատարած գնահատմամբ՝ երկրի վերակառուցման և վերականգնման ընթացիկ արժեքը կազմել է 349 միլիարդ դոլար (World Bank 2022b): Ակնհայտ է, որ այս ցուցանիշն աճում է, քանի որ պատերազմը շարունակվում է (World Bank 2023): Թերևս պատերազմի տնտեսական հետևանքների վերացման ջանքերն առանցքային նշանակություն ունեն, քանի որ դրա նպատակն է գնահատել պատե-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

րազմի ընթացքում Ուկրաինայի գոյատևման և դրանից հետո բարգավաճման սոցիալ-տնտեսական կարիքների ծավալները:

Ըստ պաշտոնական տվյալների՝ պատերազմի մեկ տարում (2023 թվականի փետրվարի 24-ի դրությամբ) Ուկրաինայում ուղղակի վնասը հասել է ավելի քան 135 միլիարդ ԱՄՆ դոլարի: Ամենաշատը տուժել են բնակարանաշինությունը, տրանսպորտը, էներգետիկան, առևտուրն ու արդյունաբերությունը (*World Bank Group, the Government of Ukraine, the EU and the UN 2023*):

Տնտեսական ներդրումների և արտադրության խափանումների, ինչպես նաև պատերազմի հետ կապված լրացուցիչ ծախսերը կազմել են մոտ 290 միլիարդ ԱՄՆ դոլար (*World Bank Group, the Government of Ukraine, the EU and the UN 2023*): Դրանց համարժեք արձագանքը հրատապ և անհրաժեշտ է պետության, ընկերությունների և անհատների կողմից առաջադրված նպատակները որոշելիս և իրականացնելիս: Բացի այդ, ներկայումս մեծանում է անվտանգության հիմնախնդրի կարևորությունը՝ պայմանավորված տնտեսական զարգացման աճող այլընտրանքայնությամբ և բազմազանությամբ: Անհնար է ընտրել տնտեսական զարգացման, ներդրումների կամ երկրի բյուջեի պլանի մշակման այս կամ այն տարբերակը՝ չգնահատելով դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները՝ տնտեսական անվտանգության չափանիշներից բխող: Այս եզրակացությունը հատկապես արդիական է Ուկրաինայի տնտեսական համակարգի փոխակերպման ժամանակաշրջանում, որը 2014 թ.-ից ի վեր միշտ էլ հղի է ճգնաժամային իրավիճակներով և թեժացող հակամարտությամբ: Առանց հասարակության, պետության, մարզերի, կորպորացիաների և քաղաքացիների համար տնտեսական բարեփոխումների անվտանգության ճիշտ գնահատման՝ դրանք կարող են հանգեցնել պետության և նրա կենսաապահովման համակարգերի կործանման: Ուստի ժամանակակից պայմաններում երկրի տնտեսական անվտանգությունն առաջնային նշանակություն ունի, քանի որ այն ուղենիշներ է տալիս սոցիալ-տնտեսական համարժեք որոշումներ կայացնելու համար:

Ուկրաինայի ՔՀԿԻ-ի ՏԳԻ-ի ցուցանիշներն ուրվագծում են տնտեսական անվտանգության և սպառնալիքների հիմնական ընթացակարգերը: Այս առումով երկրի տնտեսական քաղաքականության մեջ գերակա են եղել

Ռուսաստանի ագրեսիայի վտանգները: Վերջիններիս բացասական ազդեցությունները կրել են ոչ միայն Ուկրաինական հասարակությունը, պետական ինստիտուտները, արդյունաբերությունը, այլև նրա միջազգային և տարածաշրջանային գործընկերները: Դրանց հետևանքով Ուկրաինան կրել է տնտեսական զգալի վնասներ՝ վատթարացնելով նաև վերջիններիս վիճակը և բացասական դինամիկա հաղորդելով նրանց տնտեսության զարգացմանը: Այս առումով 2020-2022 թթ. տնտեսական վտանգները, կործանարար բնույթ պարունակող պայմաններն ու գործոնները մեկնարկային նախադրյալ են Ուկրաինայի տնտեսական անվտանգության խնդիրներն ուսումնասիրելիս: Ընդ որում՝ Ուկրաինայի տնտեսական սպառնալիքների շարքում զգալի են եղել արտաքին միջավայրում բացասական փոփոխությունները՝ պատճառելով պոտենցիալ և իրական վնաս ինչպես տնտեսական համակարգին որպես ամբողջություն, այնպես էլ նրա առանձին կառուցվածքային տարրերին:

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայի կառավարությունն իրականացրեց տնտեսական ենթակառուցվածքների քաղաքականության բարելավմանն ուղղված միջոցառումների համալիր: Դրա նպատակն է ապահովել երկրի տնտեսական անվտանգությունը նորարարական բազմաֆունկցիոնալ կառավարման և ներդրումային ակտիվության աճի միջոցով՝ հարթելու բացասական ազդեցությունները:

Ազգային տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգների վերլուծության մեջ ներկայումս զգալի տեղ են զբաղեցնում դրա սպառնալիքների վերափոխման գործընթացները, որոնք ստանում են համաշխարհային մասշտաբներ: Ուկրաինայի պարագայում տնտեսական սպառնալիքների փոխակերպում նշանակում է դրանց որակական փոփոխություն, գործընթաց, որի հետևանքով նախկին սպառնալիքները ձեռք են բերում որակական նոր հատկանիշներ: Այս առումով S<sub>գր</sub>-ի տվյալների վերլուծությունը բացահայտում է մի շարք ոլորտներում պետության տնտեսական անվտանգության սպառնալիքների վերափոխման հետևյալ տեսակները.

1) Տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգների հիերարխիայի փոխակերպումը, ներառյալ փոխանակման (անհավասար փոխանակում, պարենային կախվածություն, պարենային փակ շուկաներ) և սպառման (սննդի ոչ արդյունավետ սպառում) ոլորտին առնչվող սահմանափա-

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

կումների հետ միասին: Միջպետական հակամարտությամբ և անհամաչափ պատերազմով պայմանավորված սպառնալիքներ, սպառնալիքներ, որոնք դրսևորվում են հասարակական արտադրության փուլերում (գյուղատնտեսական լանդշաֆտների ոչնչացման էկոլոգիական սպառնալիքներ, հողի բերրիության նվազում, ջրերի, անտառների և այլ ռեսուրսների ոչնչացում զինված բախումների տարածքների ընդլայնման պատճառով) և բաշխման փուլերում (աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության տակ ենթահամակարգերի ոչնչացում, սննդի արդյունաբերության թերակատարում):

2) Պետության տնտեսական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքների բացասական սիներգիա՝ կապված ազգային տնտեսության տարբեր ոլորտների (սննդի, էներգետիկայի, արդյունաբերության, սովետային տնտեսության և այլն) հետ՝ հանգեցնելով անվտանգության համակարգում էնտրոպիայի աճի:

3) Պարենային ոլորտին առնչվող ոչ համակարգային սպառնալիքների (ֆինանսական, արժույթային, գնային և այլն) վերափոխում տնտեսական անվտանգության համակարգային վտանգների (աշխարհաքաղաքական բնույթի սպառնալիքներ): Այս սպառնալիքները ձեռք են բերում ընդգծված գլոբալ հատկություններ, և, հետևաբար, համակարգային սպառնալիքները դառնում են դժվար կանխատեսելի, ուստի և՛ վտանգավոր:

4) Միջպետական հակամարտությամբ և անհամաչափ պատերազմով պայմանավորված սպառնալիքների՝ որպես սննդի անվտանգության մասին պատկերացումների առավել սուբյեկտիվ ընկալման փոխակերպումը արտադրողի և սպառողի շահերի դիրքերից՝ որպես ողջամիտ գներով սննդամթերքի հասանելիություն բնակչության լայն շրջանակներին, ֆիզիկական և տնտեսական անհասանելիություն և արտահայտված «պարենային անկախություն-սննդամթերքի տնտեսական մատչելիություն» երկրնտրանքի տեսքով:

2020-2022 թթ.-ին երկրի կառավարության հիմնական ջանքերն ուղղված էին «պարենային անկախություն-սննդի տնտեսական մատչելիություն» երկրնտրանքի լուծման ուղիներին, որոնք հիմնված էին տարբեր մոտեցումների վրա՝ սննդամթերքի ներմուծման և արտահանման փոխարինման միջև հավասարակշռություն ապահովելու և յուրաքանչյուր տարբերակի հետ կապված տնտեսական անվտանգության սպառնալիքները բա-

ցահայտելու համար: Դրանք տնտեսական կայունությանը սպառնացող ռիսկերի կառավարման և սպառնալիքների համահարթեցման մոդելի մշակման հիմք հանդիսացան:

### **8.3 Չինված հակամարտությունների մարտահրավերներն Ուկրաինայի սոցիալական ոլորտին. սոցիալական անվտանգություն և կառավարում**


Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայի սոցիալական քաղաքականության վրա զգալի են եղել միջազգային երկու իրադարձություն, որոնք արմատապես փոխեցին աշխարհը: Նախ՝ գլոբալ կորոնավիրուսային համաճարակը՝ COVID-19-ը, որը հանգեցրեց անվտանգության միջոցառումների և սոցիալական վերահսկողության աննախադեպ խստացման ամբողջ աշխարհում: Երկրորդ՝ 2022 թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում Ռուսաստանի «հատուկ ռազմական գործողության» մեկնարկը, որը վերածվեց գլոբալ առճակատման Ռուսաստանի և հավաքական Արևմուտքի միջև (*Melnychuk 2023b, Anderson 2023*): Այս երկու իրադարձությունները մի տեսակ պատմական հանգրվան դարձան, որով անցնելով՝ Ուկրաինան թևակոխեց միջազգային նոր դարաշրջան: Եթե COVID-19 համաճարակը մեծապես ամրապնդել է արդեն իսկ ձևավորվող միտումները դեպի ապագլոբալացում և ազգային պետությունների աճող դերը համաշխարհային քաղաքականության մեջ, ապա ուկրաինական իրադարձությունները բացահայտեցին միջազգային անվտանգության ժամանակակից ճարտարապետության ամենասուր հակասությունները, որ կուտակվել էին վերջին 10 տարիներին (*Kopper, Szalai and Góra 2023, Maruniak and Dronova 2022*): Այս հակասությունները ակնհայտորեն դրսևորվում են միմյանց բացառող երկու ռազմավարություններով. մի կողմից՝ ռազմավարություն, որ գոյություն ունեցող աշխարհակարգը մարտահրավեր է նետում ավտոկրատական պետություններին և այսպես կոչված «ռևիզիոնիստական երկրներին», որոնք էկզիստենցիալ սպառնալիք են գլոբալ անվտանգության և ժողովրդավարա-

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

կան արժեքների համար: Մյուս կողմից՝ ռազմավարությունն առ այն, թե ինչպես է մի պետություն իր շահերը վեր է դասում և պարտադրում իր կամքն ու խաղի կանոնները մեկ ուրիշի՝ իր անպատասխանատու քաղաքականությամբ էկզիստենցիալ վտանգ ներկայացնելով համընդհանուր խաղաղությանն ու զարգացմանը:

**Գծապատկեր 4**

**Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսները (2000-2022 թթ.)\***



Գծապատկեր 4-ից երևում է, որ Ուկրաինայի ՔՀԿ-ի ՍԳԻ-ի 2022 թվականի ցուցանիշները կտրուկ անկում են կատարել նախորդ տարվա համեմատ: Դա հիմնականում պայմանավորված է եղել 2022 թվականի փետրվարի 24-ին ՌԴ-ի ներխուժմամբ, որը զգալի զոհեր ու վնասներ է հասցրել քաղաքացիական բնակչությանը, ենթակառուցվածքներին ու արդյունաբերությանը: Մասնավորապես, 2022 թվականին Ուկրաինայի ՀՆԱ-ն կրճատվել է 29.2%-ով, իսկ աղքատությունը 5.5%-ից հասել է 24.1%-ի (*World Bank Group, the Government of Ukraine, the EU and the UN 2023*): Ըստ պաշտոնական տվյալների՝ վերակառուցման և վերականգնման կարիքները 2023 թվականի փետրվարի 24-ի դրությամբ գնահատվում են մոտ 411

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿ-ի մեթոդաբանությամբ:

միլիարդ ԱՄՆ դոլար (*World Bank Group, the Government of Ukraine, the EU and the UN 2023*):

Պատերազմի սոցիալական հետևանքների հաղթահարման ուղղությամբ զգալի են եղել ԵՄ-ի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից սոցիալական առաջնահերթությունների ամրագրումը և բնակչության կարիքների համարժեք գնահատումը: Դա համահունչ է ԵՄ սոցիալական քաղաքականությանն ու չափանիշներին, որպեսզի Ուկրաինան պատրաստ լինի ԵՄ-ին անդամակցությանը: Այդ իսկ պատճառով էլ ԵՄ աջակցությամբ լուծվում են բնակչության խոցելի խմբերի հիմնախնդիրները՝ ապահովելով մարդկանց սոցիալական բարեկեցության պայմանները:

2020-2022 թվականների Ուկրաինայի սոցիալական աջակցության առաջնահերթությունները հիմնականում ուղղված են եղել ամենահրատապ կարիքների չեզոքացմանը, ներառյալ էներգետիկայի, բնակարանային, սոցիալական կարևոր ենթակառուցվածքների վերականգնումը, առավել խոցելի խավի հիմնական ծառայությունները և միգրացիոն իրավիճակի կառավարումը, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը: Թեև կառավարությունն արդեն քայլեր է ձեռնարկել այս կարիքներից մի քանիսը բավարարելու համար, բայց դեռևս անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական աջակցության կարիք, այդ թվում՝ պետական բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացնելու և սոցիալական ներդրումները հեշտացնելու համար: Ակնհայտ է, որ Ուկրաինայում սոցիալական կապիտալի զարգացման առումով հրատապ է ֆինանսական և գործառնական համապարփակ ռազմավարության, ինչպես նաև երկրի կարճաժամկետ ու երկարաժամկետ վերականգնման սոցիալական աջակցության ծրագրերի ընդունումը: Պետք է դիտարկել Ուկրաինայի ազգային և տարածքային իշխանությունների համախմբող և ինստիտուցիոնալ կարողությունների մեծացման տարբերակները, որպեսզի դրանք համարժեք լինեն ոչ միայն պատերազմի սոցիալական հետևանքների վերացման, այլև եվրոպական սոցիալական ինտեգրացիայի համար (*Pawłuszko 2023, Myronova 2022, Melnychuk 2023a*):

ՌԴ-ի ներխուժումն Ուկրաինա, պատերազմի ընթացքն ու հետևանքները անհաղթահարելի դժվարություններ են առաջացրել բնակչության հա-

մար, քանի որ նրանք կորցրել են ապրուստի միջոցները, իսկ սոցիալական հիմնական ծառայություններից օգտվելը, ինչպիսիք են առողջապահությունն ու կրթությունը, լրջորեն խաթարվել է (*Thiel et al. 2023, Poita 2023*): Մասնավորապես, 2022 թվականի ծմռանը զգալի մարտահրավերներ են առաջացրել բնակչության համար, հատկապես նրանց համար, ովքեր տուժել են արևելյան և հարավային շրջաններում շարունակվող մարտերից: Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա առաջացրել է տնտեսական խափանումներ, աշխատատեղերի աննախադեպ կրճատում և ներդրողների ցածր վստահություն՝ ազդելով պետական և մասնավոր ֆինանսավորման վրա: Հաշվի առնելով ավերածությունների և խափանումների ծավալները՝ նկատելի է, որ պատերազմը մարդկային զարգացման աննախադեպ բացասական ազդեցություն է թողել:

## **8.4 Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը**

Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունությունը գլխավորապես պայմանավորված է միջազգային անվտանգության ճարտարապետության վերակառուցման թեմայի շուրջ երկարաժամկետ քննարկումների վերջնարդյունքներով: Ժամանակն է գործնական ռելսերի վրա դնել այն հարցը. թե ինչպիսին պետք է լինի ավելի արդար աշխարհակարգն Ուկրաինայի համար, և ինչպես կանխել նմանատիպ պատերազմներն ապագայում:

Ներկայիս ուկրաինական քաղաքական համակարգի կայունության երկրնտրանքի էությունն այն է, որ ազգային անվտանգության մասին այսօր գերիշխող պատկերացումները միջազգային հարաբերությունների տեսության մեջ ամենևին չեն նպաստում հենց այս անվտանգության ամրապնդմանը (*Gonchar and Stukalenko 2022, Kazimov and Zakharov 2021*): Համաշխարհային քաղաքականության տարածության որակումը որպես միջպետական առճակատումների դաշտ կամ անարխիայի տարածք, որտեղ նա, ով ունի իշխանություն, իրավացի է, խնդրի մի մասն է, բայց ոչ լուծում: Ամենակարևորն այն է, որ նման մոտեցումները գոնե պետությունների, հասարակությունների և մարդկանց կյանքում իրական դրական փոփոխությունների հանգեցնեն: Այնինչ ճիշտ հակառակն է, ազգային




անվտանգության և միջազգային վերահսկողության ուկրաինական պրակտիկան գնալով ավելի է թափանցում հետխորհրդային այլ երկրների քաղաքական կյանք՝ անընդհատ հիշեցնելով մեզ շրջապատող աշխարհում թաքցված բազմաթիվ վտանգների մասին (*Andrei 2022, Bureiko, Maksak and Shelest 2022, Federico and Baglioni 2021*):

Հաշվի առնելով նաև ժամանակակից հակամարտությունների և պատերազմների աղետալի հետևանքները Ուկրաինայում՝ պետք է սոցիալական պատասխանատվությամբ մոտենալ միջազգային անվտանգության ժամանակակից խնդիրների լուծմանը, որոնց թիվը տարեցտարի աճում է: Այս հարցերի նկատմամբ անուշադրությունը կարծեզրկի ցանկացած ռազմական հաղթանակ և ապարդյուն կդարձնի ռուս-ուկրաինական անհամաչափ պատերազմում պայմանական հաղթողի ջանքերը:

**Գծապատկեր 5**

**Ուկրաինայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2022 թթ.)\***



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ԲՀԿԻ-ի մեթոդաբանությամբ:

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

Գծապատկեր 5-ում ներկայացված է 2000-2022 թթ. Ուկրաինայի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը, որի ցուցանիշները 2021 թ.-ին աճել են 2000 թ. համեմատ, բայց կտրուկ անկում են ապրել 2022 թ.-ին: Գծապատկեր 5-ից երևում է, որ ՔՀԿԻ-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2008 թ.-ին, որից հետո տեղի է ունեցել կտրուկ անկում մինչև 2010 թ.: Չնայած 2011-2012 թթ.-ին ՔՀԿԻ-ի ցուցանիշների բարելավմանը, այնուամենայնիվ 2013-2015 թթ.-ին արձանագրվել է ցուցանիշների կտրուկ անկում: Դրանք պայմանավորված էին ՔԳԻ-ի և ՍԳԻ-ի ցուցանիշների զգալի նվազմամբ:

2022 թվականի ՔՀԿԻ-ի անկման վրա զգալի են եղել համաշխարհային քաղաքականության նոր միտումները, գլոբալիզացիայի գործընթացների բարդացումը, COVID-19 համաճարակի շարունակական հետևանքները և աշխարհակարգի մոդելի ակնհայտ ճգնաժամը, որոնք բացասաբար ազդեցին երկրի քաղաքական կայունության և ժողովրդավարության մակարդակի վրա:

Ուկրաինայի քաղաքական համակարգի ժողովրդավարական արդիականացման արդյունքների ի հայտ գալուց ի վեր Արևմուտքը փորձում է իր առաջնորդությունը հաստատել հետխորհրդային տարածքում՝ գիտակցելով իր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը: Սակայն լիբերալ-դեմոկրատական մոդելի ճգնաժամը դարձավ Ուկրաինայում արտատարածաշրջանային դերակատարների և ՌԴ-ի միջև բուռն մրցակցության կատալիզատոր:

Երեք տասնամյակ Ուկրաինան ձգտում էր վարել բազմավեկտոր արտաքին քաղաքականություն. այն է՝ արտատարածաշրջանային դերակատարների և ՌԴ-ի հետ պրագմատիկ հարաբերություններ կառուցել: Սակայն ռեսուրսային մեծ ներուժ և աշխարհաքաղաքական զգալի դիրք ունեցող ՌԴ-ի նկրտումները չեն համընկնում տարածաշրջանային քաղաքական գործընթացների զարգացման հետ:

Անկախության տարիների ընթացքում Ուկրաինան դարձավ համաշխարհային քաղաքական գործընթացների ակտիվ մասնակից՝ բազմազանեցնելով արտաքին քաղաքական կապերը: Ձևավորվող նոր համաշխարհային քաղաքական իրականության մեջ Ուկրաինան ձգտում էր հարաբերությունների մոդել ձևավորել համաշխարհային քաղաքականության առա-

ջատար ուժային կենտրոնների՝ որպես իրավահավասար գործընկերների հետ: Վերջիններիս փափուկ ուժի ընթացակարգերը դարձան քաղաքական և տնտեսական ազդեցության հասնելու արդյունավետ լծակներից մեկը: Այս առումով Ուկրաինան աշխարհաքաղաքական տարբեր դերակատարների կողմից փափուկ ուժի բազում գործիքների կիրառման օրինակ է. նրանք հասնում են իրենց ռազմավարական նպատակներին գաղափարական, լեզվական, կրթական և կրոնական գործիքների միջոցով:

2020-2021 թվականներին ՌԴ-ի և Ուկրաինայի միջև հարաբերությունները դարձան կոնֆլիկտային, որն անհանգստություն առաջացրեց արևմտյան երկրներում, հատկապես ԱՄՆ-ում: Թեժացող հակամարտության վրա բացասաբար ազդեց նաև COVID-19-ի համաճարակը, որը սրեց առկա հակասությունները և ապակառուցողական միտումները, որոնք խորացել էին վերջին տարիների ընթացքում: Նման պայմաններում մեծացավ տարածաշրջանի կոնֆլիկտային ներուժը, ինչպես նաև համաաշխարհային քաղաքականության առաջատար պետությունների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի բախման հավանականությունը: Դրա վկայությունն էր 2022 թվականի փետրվարի 24-ին ՌԴ ներխուժումն Ուկրաինա, որի պատերազմական մասշտաբներն արմատապես վերափոխեցին ոչ միայն Ուկրաինայի, այլև համաաշխարհային քաղաքականության օրակարգը:

Ուկրաինայի համար եվրոպական և եվրասիական ինտեգրման ընթացակարգերը կենսական նշանակություն են ստանում հատկապես կայունության և անվտանգության տեսանկյունից: Այնուամենայնիվ, Ուկրաինայի աշխարհաքաղաքական մրցակիցները շահագրգռված են Ուկրաինայի սահմանների երկայնքով անբարյացակամ, հաճախ թշնամական պետությունների գոտի ստեղծելով:

Նման իրավիճակում Ուկրաինայի համար չափազանց կարևոր է կանխել տարածաշրջանում ապակայունացումը և բարիդրացիական հարաբերություններ պահպանել նախկին խորհրդային պետությունների հետ: Չնայած պատերազմական իրավիճակին, այնուամենայնիվ աճել է Ուկրաինայի աշխարհաքաղաքական նշանակությունը նոր աշխարհակարգի ձևավորման համատեքստում: Ընդ որում՝ Ուկրաինայի աշխարհառազմավարական աճող դերը գլոբալ քաղաքականության մեջ պայմանավորված է նաև միջազգային հարաբերությունների համակարգի կերպափոխմամբ, շուկաների և հումքի աղբյուրների համար պայքարով:

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

Այսպես՝ 2020-2022 թթ. Ուկրաինայի ՔՀԿԻ-ի հետազոտությունը խնդրո առարկա հիմնախնդիրներին հաղորդում է միջգիտակարգային բնույթ: Այս խնդիրների գիտական հիմնավորման և համարժեք լուծումների հրատապ որոնման անհրաժեշտությունը, ինչպես նաև այս աշխատանքի շրջանակներում ձևակերպված տեսական և գործնական առաջարկությունները հիմնավորում են ՔՀԿԻ-ի հետազոտության արդիականությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ձևակերպել մի շարք եզրահանգումներ.

1. 2020-2022 թթ. Ուկրաինայի քաղաքական համակարգի կայունության համեմատական վերլուծության մեջ զգալի են պետական ինքնիշխանության ամրապնդման և ինտեգրման գործոնները: Պետական ինքնիշխանությունը երկրի ազգային անվտանգության հիմքն է՝ ենթադրելով սահմանադրաիրավական աջակցություն դրա պաշտպանության միջոցառումներին, ինչպես նաև տարածքային ամբողջականությանը, անջատողականության վերացմանը, կառավարության լիազորությունների անխոչընդոտ իրականացմանը և օրենսդրության գերակայությանը Ուկրաինայում: Այս առումով ռուս-ուկրաինական անհամաչափ պատերազմի խնդիրը, ինչպես նաև Ուկրաինայի ազգային անվտանգության հայեցակարգի հիմնական դրույթները դիտարկված են երկրի պետական ինքնիշխանության ապահովման տեսանկյունից:
2. Ուկրաինան զգալի հաջողությունների է հասել ԵՄ-ի հետ գործընկերության շրջանակներում: Ակնհայտ է, որ երկրի ներկայիս եվրաինտեգրման վիճակը և ԵՄ-ին անդամակցելու քաղաքական ու տնտեսական չափանիշներին չհամապատասխանելը հակամարտությունների սրման և պատերազմի հետևանք էին, որի պատճառով էլ առաջացան ժողովրդավարական բարեփոխումների իրականացման անհամապատասխանություններ և ձգձգումներ:
3. Ռուս-ուկրաինական անհամաչափ պատերազմի պայմաններում եվրոպական ինտեգրման ամենաբարձր մակարդակով հաստատված ռազմավարական ծրագրերի արդյունավետ իրականացման համար զգալի ջանքեր են պահանջվում: Այս առումով պետք է ընդգծել, որ ուկրաինական պետականության համար առանձնահատուկ նշանա-

կություն ունի հավասարակշռված, գիտականորեն մշակված եվրոպական ինտեգրացիոն ռազմավարության և մարտավարության հետևողական իրականացումը: Միայն այս դեպքում կարող են ստեղծվել արտաքին բարենպաստ պայմաններ, առաջին հերթին՝ երկրի ներսում սոցիալ-տնտեսական բարդ խնդիրների լուծման, պետականության զարգացման և ամրապնդման, երկրորդ՝ քաղաքական համակարգի կայունությունը, պետության միջազգային հեղինակությունը և նրա ազդեցությունն ամրապնդելու համար:

4. Ուկրաինայի եվրաինտեգրման մարտավարությունն ավելի մեծ ռազմավարական հաջողություն կբերի. անհամաչափ պատերազմի պայմաններում երկիրը կարող է հասնել իր նպատակին միմիայն աննախադեպ դժվարությունները հաղթահարելու միջոցով: ԵՄ-ին լիարժեք ինտեգրվելու և անդամակցելու ճանապարհին երկրի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն համառության աստիճանով, այլև տնտեսության և քաղաքականության մեջ կոնկրետ ձեռքբերումներով:
5. Եվրոպական ինտեգրման ընտրության իրականացումը պահանջում է ոչ միայն քաղաքական կամք, այլև համապատասխան պատրաստվածություն ունեցող հանրային կառավարման համակարգ և քաղաքացիական ծառայողներ ոչ միայն կենտրոնական գերատեսչություններում, այլև տարածաշրջանային և տեղական մարմիններում: Նրանց ընդհանուր վերապատրաստման ծրագիրը պետք է ապահովի անհրաժեշտ գիտելիքներ ԵՄ-ին անդամակցելու նպատակների, նրա հիմնական ինստիտուտների և որոշումների կայացման գործընթացի, բանակցային հմտությունների և եվրոպական տեղեկատվական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ:
6. Սխալ կլինի գերազնահատել կամ անտեսել Ուկրաինայի լիարժեք եվրաինտեգրման և ԵՄ-ին անդամակցության ողջ բարդությունը: Պարզ է, որ դա երկար ու դժվարին գործընթաց է: Միևնույն ժամանակ ցավալի հետևանքներն անխուսափելի են տնտեսության առանձին ոլորտների և նույնիսկ ԱԳ տարածաշրջանի համար: Այնուամենայնիվ, եվրաինտեգրման հնարավոր օգուտները գերազանցում են հնարավոր կորուստներն ու ռիսկերը: Այս պնդումը համոզիչ կերպով

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

ապացուցվել է առանց բացառության բոլոր եվրոպական երկրների նախկին փորձով, ներառյալ նրանց, որոնց տնտեսական զարգացման մակարդակը միջինից ցածր է եղել (Պորտուգալիա, Հունաստան, Լեհաստան, Բալթյան երկրներ):

7. Արտադրողական ուժերի միջազգայնացումը, ազգային տնտեսությունների համագործակցության անվերապահ առավելությունները, զգալի ներուժը և Ուկրաինայի աշխարհաքաղաքական յուրահատուկ դիրքն օբյեկտիվորեն որոշում են նրա ինտեգրումը համաեվրոպական տնտեսական կառույցներին: Ուստի եվրոպական վեկտորի կենսունակ կայացման համար անհրաժեշտ է ձեռնարկել վճռական գործողություններ, որոնք կարող են հանգեցնել դրական արդյունքների և չսահմանափակվել արձանագրված ձեռքբերումներով:
8. Ուկրաինայում աշխարհաքաղաքական դերակատարների մրցակցությունը զգալիորեն աճել է համաշխարհային քաղաքականության արմատական վերափոխումների համատեքստում: Ուկրաինայի նկատմամբ ուշադրության ավելացման ցուցիչներից է փոխգործակցության ձևերի բազմազանությունը, որոնք նախաձեռնում են արտատարածաշրջանային դերակատարները: Բազմակողմ կառուցակարգերում փոխգործակցության և ներգրավվածության տարբեր ձևեր ներառում են եվրոպական քաղաքական և սոցիալ-տնտեսական ինտեգրում, ամերիկյան համագործակցության նախագծեր, ՆԱՏՕ-ի շրջանակներում խորհրդատվական հանդիպումներ և ռազմաքաղաքական փոխգործակցության այլ ձևաչափեր: Միջազգային հարաբերությունների փոփոխվող համակարգի համատեքստում համագործակցության այս ձևերը որպես արդյունավետ գործիքներ են արտատարածաշրջանային պետությունների համար՝ Ուկրաինայում իրենց շահերն առաջ մղելու առումով:
9. Չնայած համաշխարհային քաղաքականության մեջ ռազմական ուժի և տնտեսական պատժամիջոցների գործնական կարևորության աճին՝ «փափուկ» և «խելացի ուժի» գործիքները պահանջված են պատերազմական իրավիճակում գտնվող Ուկրաինայի ինտեգրման ռազմավարության մեջ: Դրանք էական ազդեցություն են ունեցել

աշխարհի տարբեր երկրներում Ուկրաինայի բարենպաստ իմիջի ձևավորման վրա:

10. Բացահայտված են ընդհանուր առմամբ Ուկրաինայում ԱՄՆ-ի և ՌԴ-ի քաղաքականության հիմնական նպատակները և տարածաշրջանի երկրների հետ երկկողմ համագործակցության առանձնահատկությունները: Ուկրաինայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը պատերազմի ավարտն է, կայունության և անվտանգության պահպանումն է՝ համատեղելով սպառնալիքները կասեցնելու կամ նվազագույնի հասցնելու ընդհանուր ջանքերը:

### Գրականության ցանկ

- Akande, Adebawale, and Mark Goodman. 2023. "Introduction: Who Rules the World? After War Ends, Who Wins the Peace?" In: *Politics Between Nations: Power, Peace, and Diplomacy*, edited by Adebawale Akande, 3-25. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-24896-2\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-24896-2_1).
- Anderson, Richard D. 2023. "Failed Assault on Ukraine: Russian Corruption and the Politics of Military Incompetence." In: *Politics Between Nations: Power, Peace, and Diplomacy*, edited by Adebawale Akande, 151-169. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-24896-2\\_8](https://doi.org/10.1007/978-3-031-24896-2_8).
- Andrei, Roxana. 2022. *Natural Gas at the Frontline of the Energy Crisis and the War in Ukraine: A Material Perspective*. In: *Natural Gas at the Frontline Between the EU, Russia, and Turkey: A Conflict-Cooperation Perpetuum*. Palgrave Macmillan, Cham, 87-133. [https://doi.org/10.1007/978-3-031-17057-7\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-17057-7_4).
- Åslund, Anders. 2023. "Reconstruction, EU Accession, and Reform of Ukraine." In: *Fault Lines After COVID-19: Global Economic Challenges and Opportunities*, edited by Robert Z. Aliber, Már Gudmundsson, and Gylfi Zoega, 149-164. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-26482-5\\_9](https://doi.org/10.1007/978-3-031-26482-5_9).
- Barbieri, Jaroslava. 2020. "The Dark Side of Decentralization Reform in Ukraine: Deterring or Facilitating Russia-Sponsored Separatism?" In: *Decentralization, Regional Diversity, and Conflict: The Case of Ukraine*, edited by Hanna Shelest and Maryna Rabinovych, 211-256. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-41765-9\\_8](https://doi.org/10.1007/978-3-030-41765-9_8).
- Blyzniuk, Marharyta. 2023. "Ukraine's Attempts to Join the West." In: *Politics and Security of Central and Eastern Europe: Contemporary Challenges*, edited by Ryszard Zięba, 137-158. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-16419-4\\_7](https://doi.org/10.1007/978-3-031-16419-4_7).

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

- Brusylovska, Olga. 2022. “Security and Defense Policy of Ukraine in the Main Provisions and Objectives of its Strategic Documents.” In: Arms Control and Europe: New Challenges and Prospects for Strategic Stability, edited by Polina Sinovets and William Alberque, 111-124. Springer, Cham. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-03891-4\\_12](https://doi.org/10.1007/978-3-031-03891-4_12).
- Bulatov, Alexander, and Boris Kheifets. 2023. “World Economy Major Trends: New Normal, The Fourth Industrial Revolution, Globalization, Sustainable Development.” In: World Economy and International Business: Theories, Trends, and Challenges, edited by Alexander Bulatov, 57-77. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-20328-2\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-20328-2_4).
- Bureiko, Nadiia, Hennadiy Maksak, and Hanna Shelest (eds.) 2022. Ukrainian Prism: Foreign Policy 2020. Analytical study. “Vistka” LTD - Kyiv: Foreign Policy Council “Ukrainian Prism”, Friedrich Ebert Foundation, Office in Ukraine. Accessed August 19, 2023. <https://library.fes.de/pdf-files/bueros/ukraine/19292.pdf>.
- Diesen, Glenn. 2022. Ukraine and the Civilizational Choice of the Shared Neighbourhood. In: Russophobia: Propaganda in International Politics. Palgrave Macmillan, Singapore, 201-228. [https://doi.org/10.1007/978-981-19-1468-3\\_8](https://doi.org/10.1007/978-981-19-1468-3_8).
- Douglas Davis, G., and Michael O. Slobodchikoff. 2023. “Great Power Competition Following the Ukraine War.” In: The Great Power Competition Volume 5: The Russian Invasion of Ukraine and Implications for the Central Region, edited by Adib Farhadi, Mark Grzegorzewski, and Anthony J. Masys, 35-45. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-40451-1\\_3](https://doi.org/10.1007/978-3-031-40451-1_3).
- Dovgan, Valeriy, Yaroslav Chmyr, Andrey Moshnin, Maxym Kravtsov, and Iryna Yermolenko. 2023. “Review of the Ukrainian Discourse Field of National Security Issues of the Modern State.” In: National Security Drivers of Ukraine: Information Technology, Strategic Communication, and Legitimacy, edited by Oleksandr Radchenko, Valeriia Kovach, Inna Semenets-Orlova, and Artur Zaporozhets, 3-23. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-33724-6\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-33724-6_1).
- Egeli, Sitki. 2023. “Emerging and Disruptive Technologies in Russia’s War against Ukraine.” In: Russia’s War on Ukraine: The Implications for the Global Nuclear Order, edited by Adérito Vicente, Polina Sinovets, and Julien Theron, 55-68. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-32221-1\\_5](https://doi.org/10.1007/978-3-031-32221-1_5).
- European Council. 2022. “Communication from the Commission to the European Parliament, the European Council and the Council: Commission Opinion on Ukraine’s application for membership of the European Union.” Brussels, 17.6.2022 COM(2022) 407 final. Accessed September 19, 2023. <https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2022-06/Ukraine%20Opinion%20and%20Annex.pdf>.
- European Council. 2023a. “European Neighbourhood Policy and Enlargement Negotiations (DG NEAR): Support for Ukraine.” Accessed September 19, 2023. [https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/european-neighbourhood-policy/countries-region/ukraine\\_en](https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/european-neighbourhood-policy/countries-region/ukraine_en).



- European Council. 2023b. “Special meeting of the European Council (9 February 2023) – Conclusions. Brussels.” Accessed September 19, 2023. <https://data.consilium.europa.eu/doc/document/ST-1-2023-INIT/en/pdf>.
- Farhadi, Adib. 2023. “Russia’s Invasion of Ukraine: Evolving Crises and Economic Power Politics in the Central Asia-South Asia (CASA) Region.” In: *The Great Power Competition Volume 5: The Russian Invasion of Ukraine and Implications for the Central Region*, edited by Adib Farhadi, Mark Grzegorzewski, and Anthony J. Masys, 1-17. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-40451-1\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-40451-1_1).
- Federico, Veronica, and Simone Baglioni. 2021. “Europe’s Legal Peripheries: Migration, Asylum and the European Labour Market.” In: *Migrants, Refugees and Asylum Seekers’ Integration in European Labour Markets: A Comparative Approach on Legal Barriers and Enablers*. IMISCOE Research Series, edited by Veronica Federico and Simone Baglioni, 1-18. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-67284-3\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-67284-3_1).
- Fedorenko, Kostiantyn, and Andreas Umland. 2021. “A Triadic Nexus Conflict? Ukraine’s Nationalizing Policies, Russia’s Homeland Nationalism, and the Dynamics of Escalation in 2014-2019.” In: *The Accommodation of Regional and Ethno-cultural Diversity in Ukraine. Federalism and Internal Conflicts*, edited by Aadne Aasland and Sabine Kropp, 53-82. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80971-3\\_3](https://doi.org/10.1007/978-3-030-80971-3_3).
- Filippova, Olga, and Oleksandra Deineko. 2021. “The Politics of Identity in Ukrainian Border Regions.” In: *The Accommodation of Regional and Ethno-cultural Diversity in Ukraine. Federalism and Internal Conflicts*, edited by Aadne Aasland and Sabine Kropp, 211-236. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80971-3\\_8](https://doi.org/10.1007/978-3-030-80971-3_8).
- Freire, Maria Raquel. 2022. “The quest for status: how the interplay of power, ideas, and regime security shapes Russia’s policy in the post-Soviet space.” In: *Russia’s Role in World Politics: Power, Ideas, and Domestic Influences*, edited by Elias Götz and Neil MacFarlane, 87-101. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-19519-8\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-19519-8_6).
- Golovashchuk, Anna. 2022. “Legal and Regulatory Aspects of Assisted Reproductive Technologies in Ukraine and the EU Member-States.” In: *Ukrainian Healthcare Law in the Context of European and International Law. European Union and its Neighbours in a Globalized World*, vol. 7, edited by Roman Maydanyk, André den Exter, and Iryna Izarova, 187-203. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-05690-1\\_11](https://doi.org/10.1007/978-3-031-05690-1_11).
- Gonchar, Mykhailo, and Igor Stukalenko. 2022. “Gas Logistics Between Russia and the EU: Case of Ukraine, Belarus, Nord Streams and Other Routes of Supply.” In: *The Future of Energy Consumption, Security and Natural Gas: LNG in the Baltic Sea region*, edited by Kari Liuhto, 123-159. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80367-4\\_5](https://doi.org/10.1007/978-3-030-80367-4_5).

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

- Götz, Elias, and Neil MacFarlane. 2022. “Russia’s role in world politics: power, ideas, and domestic influences.” In: *Russia’s Role in World Politics: Power, Ideas, and Domestic Influences*, edited by Elias Götz and Neil MacFarlane, 1-13. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-19519-8\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-19519-8_1).
- Groitl, Gerlinde. 2023. “Strategic Choices: Neoclassical Realist Model of Order and Revisionism.” In: *Russia, China and the Revisionist Assault on the Western Liberal International Order*. Palgrave Studies in International Relations. Palgrave Macmillan, Cham, 79-123. [https://doi.org/10.1007/978-3-031-18659-2\\_3](https://doi.org/10.1007/978-3-031-18659-2_3).
- Hesse, Valeriia. 2023. “U-Factor: Russia’s War on Ukraine and the Deterrence vs. Disarmament Discussion. Pragmatic Internationalism.” In: *Russia’s War on Ukraine: The Implications for the Global Nuclear Order*, edited by Adérito Vicente, Polina Sinovets, and Julien Theron, 171-184. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-32221-1\\_12](https://doi.org/10.1007/978-3-031-32221-1_12).
- Horiunova, Yevheniia, Viktor Shemchuk, Pavlo Lysiatskyi, Zorina Vykhovanets, and Elvira Gerasymova. 2022. “Foreign Policy Strategy of Ukraine in the Context of the Russia-Ukraine War”. *Amazonia Investiga* 11 (60): 75-89. <https://doi.org/10.34069/AI/2022.60.12.8>.
- Kazimov, Rza, and Sergei V. Zakharov. 2021. “Combating Low Life Expectancy and Low Fertility in Tumultuous Political Times: A Comparison of the Ukraine, Russia and Belarus.” In: *Global Political Demography: The Politics of Population Change*, edited by Achim Goerres and Pieter Vanhuysse, 401-427. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-73065-9\\_16](https://doi.org/10.1007/978-3-030-73065-9_16).
- Kopper, Akos, Andras Szalai, and Magdalena Góra. 2023. “Populist Foreign Policy in Central and Eastern Europe: Poland, Hungary and the Shock of the Ukraine Crisis.” In: *Populist Foreign Policy: Regional Perspectives of Populism in the International Scene*, edited by Philip Giurlando and Daniel F. Wajner, 89-116. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-22773-8\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-22773-8_4).
- Koval, Nadiia. 2020. “Three Faces of Federalism in the Foreign Policy: Russian and German Approaches to the “Ukraine Crisis”.” In: *Decentralization, Regional Diversity, and Conflict: The Case of Ukraine*, edited by Hanna Shelest and Maryna Rabinovych, 187-210. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-41765-9\\_7](https://doi.org/10.1007/978-3-030-41765-9_7).
- Kropp, Sabine, and Aadne Aasland. 2021. “Political Reforms in Ukraine and Their Effects on Social Cohesion—A Conceptualization.” In: *The Accommodation of Regional and Ethno-cultural Diversity in Ukraine. Federalism and Internal Conflicts*, edited by Aadne Aasland and Sabine Kropp, 1-22. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-80971-3\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-80971-3_1).
- Kugler, Jacek, and Ronald L. Tammen. 2023. “Impact of the Rise of Eurasia on Grand Strategy for the Twenty-First Century.” In: *Turmoil and Order in Regional International Politics. Evidence-Based Approaches to Peace and Conflict Studies*, vol. 10, edited by William R. Thompson and Thomas J. Volgy, 263-281. Springer, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-99-0557-7\\_12](https://doi.org/10.1007/978-981-99-0557-7_12).

- Loftus, Suzanne. 2023a. “The Limits of Liberal Universalism and the Crisis in Ukraine.” In: *Russia, China and the West in the Post-Cold War Era: The Limits of Liberal Universalism*. Palgrave Macmillan, Cham, 129-168. [https://doi.org/10.1007/978-3-031-20089-2\\_5](https://doi.org/10.1007/978-3-031-20089-2_5).
- Loftus, Suzanne. 2023b. Pluralism and Pragmatism in International Relations. In: *Russia, China and the West in the Post-Cold War Era: The Limits of Liberal Universalism*. Palgrave Macmillan, Cham, 169-180. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-20089-2\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-20089-2_6).
- Lonardo, Luigi. 2022. EU Diplomacy: Foreign Policy Response to the War and Future EU-Russia Relations. In: *Russia's 2022 War Against Ukraine and the Foreign Policy Reaction of the EU: Context, Diplomacy, and Law*. Palgrave Macmillan, Cham, 39-60. [https://doi.org/10.1007/978-3-031-18694-3\\_3](https://doi.org/10.1007/978-3-031-18694-3_3).
- Marsh, Christopher. 2023. “Putin’s Playbook: The Development of Russian Tactics, Operations, and Strategy from Chechnya to Ukraine.” In: *The Great Power Competition Volume 5: The Russian Invasion of Ukraine and Implications for the Central Region*, edited by Adib Farhadi, Mark Grzegorzewski, and Anthony J. Masys, 161-183. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-40451-1\\_8](https://doi.org/10.1007/978-3-031-40451-1_8).
- Martínez-Otero, Valentín. 2023. “Pedagogy of Peace: The Key to Understanding Between East and West.” In: *Threats to Peace and International Security: Asia versus West: Current Challenges in a New Geopolitical Situation*, edited by an Cayón Peña and J. Martín Ramírez, 229-241. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28336-9\\_12](https://doi.org/10.1007/978-3-031-28336-9_12).
- Maruniak, Eugenia, and Olena Dronova. 2022. “The COVID-19 Pandemic in Ukraine: A Mosaic of Regional Patterns and Voices of Social Disparity.” In: *COVID-19 and a World of Ad Hoc Geographies*, edited by Stanley D. Brunn and Donna Gilbreath, 157-183. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-94350-9\\_11](https://doi.org/10.1007/978-3-030-94350-9_11).
- Melnychuk, Tetiana. 2023a. Organized Crime in Ukraine and Its Models in Transition. In: *Organized Crime as Institutional Cluster: Transition from Traditional to Informational Model in Ukraine*. Springer, Cham, 41-96. [https://doi.org/10.1007/978-3-031-39532-1\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-39532-1_4).
- Melnychuk, Tetiana. 2023b. Enemy at the Gate. The Impact of the Russian War in Ukraine. In: *Organized Crime as Institutional Cluster: Transition from Traditional to Informational Model in Ukraine*. Springer, Cham, 119-133. [https://doi.org/10.1007/978-3-031-39532-1\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-39532-1_6).
- MFA of Ukraine. 2021. European and Euro-Atlantic Integration, August 6, 2021. Accessed August 19, 2023. <https://mfa.gov.ua/en/about-ukraine/european-integration>.
- Miller, Benjamin, and Alexander Tabachnik. 2023. “States, Nations and Great-Power Expansion in Their Neighborhood: Explaining the Russian War Against Ukraine.” In: *Turmoil and Order in Regional International Politics. Evidence-Based Approaches to Peace and Conflict Studies*, vol. 10, edited by William R. Thompson and Thomas J. Volgy, 195-237. Springer, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-99-0557-7\\_10](https://doi.org/10.1007/978-981-99-0557-7_10).

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

- Minesashvili, Salome. 2022. Ukraine: European Identity Discourses and Elite Relations Under Crises. In: *European Identities During Wars and Revolutions: Change Under Crises in Georgia and Ukraine*. Palgrave Macmillan, Cham, 163-249. [https://doi.org/10.1007/978-3-030-96717-8\\_4](https://doi.org/10.1007/978-3-030-96717-8_4).
- Myronova, Galyna. 2022. “The Doctrine of the Patient’s Personal Autonomy in Absolute Legal Relations: Directions of Improvement of the Legislation of Ukraine.” In: *Ukrainian Healthcare Law in the Context of European and International Law. European Union and its Neighbours in a Globalized World*, vol. 7, edited by Roman Maydanyk, André den Exter, and Iryna Izarova, 99-113. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-05690-1\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-05690-1_6).
- Myshlovska, Oksana. 2020. “Regionalism in Ukraine: Historic Evolution, Regional Claim-Making, and Centre–Periphery Conflict Resolution.” In: *Decentralization, Regional Diversity, and Conflict: The Case of Ukraine*, edited by Hanna Shelest and Maryna Rabinovych, 17-47. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-41765-9\\_2](https://doi.org/10.1007/978-3-030-41765-9_2).
- Oakley, David. 2023. “Intelligence in Ukraine: Success, Failure, or Signaling Revolutionary Change?” In: *The Great Power Competition Volume 5: The Russian Invasion of Ukraine and Implications for the Central Region*, edited by Adib Farhadi, Mark Grzegorzewski, and Anthony J. Masys, 217-237. [https://doi.org/10.1007/978-3-031-40451-1\\_11](https://doi.org/10.1007/978-3-031-40451-1_11).
- Oleinikova, Olga. 2020. “Decentralization Reform: An Effective Vehicle for Modernization and Democratization in Ukraine?” In: *Decentralization, Regional Diversity, and Conflict: The Case of Ukraine*, edited by Hanna Shelest and Maryna Rabinovych, 311-338. Palgrave Macmillan, Cham. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-030-41765-9\\_11](https://doi.org/10.1007/978-3-030-41765-9_11).
- Pawłuszko, Tomasz. 2023. “Peripherality of the CEE Region.” In: *Politics and Security of Central and Eastern Europe: Contemporary Challenges*, edited by Ryszard Zięba, 11-32. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-16419-4\\_2](https://doi.org/10.1007/978-3-031-16419-4_2).
- Perez Bustamante, Rogelio. 2023. “Sovereignty and Defense in the European Union. A Historical and Current Essay.” In: *Threats to Peace and International Security: Asia versus West: Current Challenges in a New Geopolitical Situation*, edited by an Cayón Peña and J. Martín Ramírez, 3-36. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28336-9\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-28336-9_1).
- Petrov, Roman. 2023. “The EU-Ukraine Association Agreement as a General Framework of Contemporary EU–Ukraine Relations.” In: *Competition and Intellectual Property Law in Ukraine. MPI Studies on Intellectual Property and Competition Law*, vol. 31, edited by Heiko Richter, 15-35. Springer, Berlin, Heidelberg. [https://doi.org/10.1007/978-3-662-66101-7\\_2](https://doi.org/10.1007/978-3-662-66101-7_2).
- Poita, Yuri. 2023. “Opportunities and Risks from the Belt and Road Initiative in Ukraine.” In: *Securitization and Democracy in Eurasia: Transformation and Development in the OSCE Region*, edited by Anja Mihr, Paolo Sorbello, and

- Brigitte Weiffen, 313-327. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-16659-4\\_22](https://doi.org/10.1007/978-3-031-16659-4_22).
- Raik, Kristi et al. 2023. “Tackling the Constraints on EU Foreign Policy towards Ukraine: From Strategic Denial to Geopolitical Awakening.” JOINT Research Papers 20 (April). Accessed August 19, 2023. [https://www.jointproject.eu/wp-content/uploads/2023/04/joint\\_rp\\_20.pdf](https://www.jointproject.eu/wp-content/uploads/2023/04/joint_rp_20.pdf).
  - Russo, Teresa. 2023. “The Security Implications of Enlargement on EU Fundamentals.” In: *Solidarity and Rule of Law. European Union and its Neighbours in a Globalized World*, vol. 9, edited by Teresa Russo, Anna Oriolo, and Gaspare Dalia, 49-71. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-29227-9\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-29227-9_4).
  - Smyrnova, Kseniia. 2023. “The “Europeanization” of Competition Law in Ukraine.” In: *Competition and Intellectual Property Law in Ukraine. MPI Studies on Intellectual Property and Competition Law*, vol. 31, edited by Heiko Richter, 103-122. Springer, Berlin, Heidelberg. [https://doi.org/10.1007/978-3-662-66101-7\\_5](https://doi.org/10.1007/978-3-662-66101-7_5).
  - Sokov, Nikolai. 2023. “War in Ukraine and US–Russian Arms Control: Is It Needed? Is It Possible?” In: *Russia’s War on Ukraine: The Implications for the Global Nuclear Order*, edited by Adérito Vicente, Polina Sinovets, and Julien Theron, 97-108. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-32221-1\\_7](https://doi.org/10.1007/978-3-031-32221-1_7).
  - Soltanieh, Ali. 2023. “Threats for Peace and Security: Asia vs. West”. In: *Threats to Peace and International Security: Asia versus West: Current Challenges in a New Geopolitical Situation*, edited by an Cayón Peña and J. Martín Ramírez, 168-204. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28336-9\\_10](https://doi.org/10.1007/978-3-031-28336-9_10).
  - Sushentsov, Andrey A., and William C. Wohlforth. 2023. “The Tragedy of US–Russian Relations: NATO Centrality and the Revisionists’ spiral.” In: *Evaluating NATO Enlargement: From Cold War Victory to the Russia-Ukraine War*, edited by James Goldgeier and Joshua R. Itzkowitz Shiffrinson, 251-282. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-23364-7\\_8](https://doi.org/10.1007/978-3-031-23364-7_8).
  - Sussman, Gerald. 2023. “Propaganda, Political Economy, and Empire: The Russia-Ukraine Conflict.” In: *Russiagate Revisited: The Aftermath of a Hoax*, edited by Oliver Boyd-Barrett and Stephen Marmura, 107-130. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-30940-3\\_6](https://doi.org/10.1007/978-3-031-30940-3_6).
  - Tallis, Benjamin. 2023a. Introduction: Identities, Borders and Orders in Central and Eastern Europe. In: *Identities, Borderscapes, Orders. Frontiers in International Relations*. Springer, Cham, 1-13. [https://doi.org/10.1007/978-3-031-23249-7\\_1](https://doi.org/10.1007/978-3-031-23249-7_1).
  - Tallis, Benjamin. 2023b. Conclusion: A Moveable East and the EU’s Unfulfilled Potential. In: *Identities, Borderscapes, Orders. Frontiers in International Relations*. Springer, Cham, 201-215. [https://doi.org/10.1007/978-3-031-23249-7\\_7](https://doi.org/10.1007/978-3-031-23249-7_7).
  - Tarkhanova, Oleksandra. 2021. Studying Ukrainian State: Gender Policy and Politics Under Changing Conditions. In: *Compulsory Motherhood, Paternalistic*

**Գլուխ 8. Ուկրաինայի ինտեգրացիոն ռազմավարության առաջնահերթությունները միջպետական կոնֆլիկտի և հիբրիդային պատերազմի փոխակերպումներում. ...**

---

- State?. Palgrave Macmillan, Cham, 1-49. [https://doi.org/10.1007/978-3-030-73355-1\\_1](https://doi.org/10.1007/978-3-030-73355-1_1).
- The Council of the EU and the European Council. 2023. “Ukraine.” Accessed September 19, 2023. <https://www.consilium.europa.eu/en/policies/enlargement/ukraine/>.
  - Thiel, Markus, Ernesto Ficchetto, and Jeffrey D. Maslanik. 2023. The Euro-/Refugee-/Security/Fragmentation/Environment/Corona-Crises: The New Europeanized ‘Normal’?. In: *The Politics of Social In/Exclusion in the EU: Civic Europe in an Age of Uncertainty*. Palgrave Macmillan, Cham, 19-38. [https://doi.org/10.1007/978-3-031-31264-9\\_2](https://doi.org/10.1007/978-3-031-31264-9_2).
  - Thompson, William R., and Leila Zakhirova. 2023. “All that Glitters is not Gold: Comparing Regional Peace in the Caucasus and Central Asia.” In: *Turmoil and Order in Regional International Politics. Evidence-Based Approaches to Peace and Conflict Studies*, vol. 10, edited by William R. Thompson and Thomas J. Volgy, 239-261. Springer, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-99-0557-7\\_11](https://doi.org/10.1007/978-981-99-0557-7_11).
  - Tonlorenzi, Giovanni. 2023. “The Ukrainian Russian Conflict Between the International Liberal System and International Realist System.” In: *Threats to Peace and International Security: Asia versus West: Current Challenges in a New Geopolitical Situation*, edited by an Cayón Peña and J. Martín Ramírez, 3-36. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-28336-9\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-28336-9_4).
  - Topychkanov, Petr. 2022. “The Crisis of Nuclear Arms Control amid Russia’s Military Offense Against Ukraine.” In: *Arms Control and Europe: New Challenges and Prospects for Strategic Stability*, edited by Polina Sinovets and William Alberque, 29-33. Springer, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-03891-4\\_4](https://doi.org/10.1007/978-3-031-03891-4_4).
  - U.S. Department of State. 2023. “A special military operation in Ukraine.” Accessed September 19, 2023. <https://stories.state.gov/what-is-a-special-military-operation/>.
  - Welfens, Paul J. J. 2022a. Ukrainian Refugees and Ukrainian Guest Workers in EU Countries and Their Effects on Ukraine and the EU. In: *Russia’s Invasion of Ukraine: Economic Challenges, Embargo Issues and a New Global Economic Order*. Palgrave Macmillan, Cham, 155-165. [https://doi.org/10.1007/978-3-031-19138-1\\_9](https://doi.org/10.1007/978-3-031-19138-1_9).
  - Welfens, Paul J. J. 2022b. Key Ukraine-related Emigration Aspects and EU Enlargement Risks with Ukraine. In: *Russia’s Invasion of Ukraine: Economic Challenges, Embargo Issues and a New Global Economic Order*. Palgrave Macmillan, Cham, 167-180. [https://doi.org/10.1007/978-3-031-19138-1\\_10](https://doi.org/10.1007/978-3-031-19138-1_10).
  - World Bank, the Government of Ukraine, the EU, and the UN. 2023. *Ukraine Rapid Damage and Needs Assessment: February 2022 - February 2023*. Washington, D.C.: World Bank Group. Accessed September 19, 2023. <https://documents1.worldbank.org/curated/en/099184503212328877/pdf/P1801740d1177f03c0ab180057556615497.pdf>.

- World Bank. 2022a. “Russian Invasion to Shrink Ukraine Economy by 45 Percent this Year.” April 10, 2022. Accessed September 19, 2023. <https://www.worldbank.org/en/news/press-release/2022/04/10/russian-invasion-to-shrink-ukraine-economy-by-45-percent-this-year>.
- World Bank. 2022b. “Ukraine Recovery and Reconstruction Needs Estimated \$349 Billion.” September 9, 2022. Accessed September 19, 2023. <https://www.worldbank.org/en/news/press-release/2022/09/09/ukraine-recovery-and-reconstruction-needs-estimated-349-billion>.
- World Bank. 2023. “Updated Ukraine Recovery and Reconstruction Needs Assessment.” March 23, 2023. Accessed September 19, 2023. <https://www.worldbank.org/en/news/press-release/2023/03/23/updated-ukraine-recovery-and-reconstruction-needs-assessment>.
- Zubok, Vladislav M. 2023. “Myths and Realities of Putinism and NATO Expansion.” In: *Evaluating NATO Enlargement: From Cold War Victory to the Russia-Ukraine War*, edited by James Goldgeier and Joshua R. Itzkowitz Shiffrin, 145-159. Palgrave Macmillan, Cham. [https://doi.org/10.1007/978-3-031-23364-7\\_5](https://doi.org/10.1007/978-3-031-23364-7_5).

## ԳԼՈՒԽ 9.

### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՄԻՋԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան,  
Ուկրաինա)

#### ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հարավային Կովկասի և տարածաշրջանի այլ երկրների աշխարհաքաղաքական տիրույթը բնորոշվում է պատմական հիմնահարցերի, էթնիկ հակամարտությունների, տնտեսական մարտահրավերների, ներքին հիմնախնդիրների և արտաքին ուժերի ազդեցության բարդ համադրությամբ: Այս գործոններից յուրաքանչյուրը, անշուշտ, ազդեցություն ունի տարածաշրջանային կայունության վրա: Իրավիճակը հիմնականում պայմանավորված է նաև համաաշխարհային ուժային կենտրոնների և տարածաշրջանային դերակատարների փոխազդեցություններով: Ռուսաստանի քաղաքականությունը տարիներ շարունակ ուղղված է եղել տարածաշրջանում ազդեցության գոտիների ընդլայնմանն ու պահպանմանը, որը հաճախ բախվել և շարունակվում է հակադրվել ԱՄՆ-ի և ԵՄ-ի շահերին ու հետաքրքրություններին (*Hunter 2024; McFaul 2018; Mankoff 2014; Trenin 2011*): Այս առումով տարածաշրջանում էթնիկ և տարածքային վեճերը անկայունության մշտական աղբյուր են եղել, որոնք հաճախ են գերտերությունների կողմից ազդեցության գոտիների ընդլայնման և պահպանման գործիք ծառայում, իսկ ավտորիտար միտումները էլ ավելի են սրում իրավիճակը:




Սույն գլխում ներկայացվում է տարածաշրջանային երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) միջերկրային վերլուծությունը, որով պետությունները սանդղակավորվում և համեմատվում են ըստ կայունության ինդեքսի և դրա երեք ենթահինդեքսների՝ քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների:

## 9.1 Տարածաշրջանային երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի համեմատական վերլուծություն

Գծապատկեր 1

Տարածաշրջանի երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2022 թ.)\*



\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները ՔՀԿԻ-ի հեղինակային մեթոդաբանությամբ: Քաղաքական համակարգի կայունության միջերկրային ինդեքսն արտահայտվում է -100-ից +100-ը միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ պետությունները որակվում են հետևյալ կերպ՝ [-100;-50] - անկայուն, [-49;0] - ցածր մակարդակի կայունություն, [1;49] - միջին մակարդակի կայունություն, [50;100] - բարձր մակարդակի կայունություն:

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների քաղաքական համակարգի կայունության  
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

---

Գծապատկեր 1-ը ներկայացնում է տարածաշրջանի երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) միջերկրային վերլուծության 2022 թթ. արդյունքները: Ստացված տվյալների համաձայն՝ կայունության ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը (14 միավոր), որին հաջորդում են Հայաստանը և Ադրբեջանը՝ 5.7 և 0.9 միավորներով համապատասխանաբար: Թուրքիան (-19.4), Ռուսաստանը (-19.7) և Իրանը (-19.9), գտնվելով միավորային բացասական տիրույթում, ունեն մոտ ցուցանիշներ, իսկ Ուկրաինան ամփոփում է ՔՀԿԻ-ի վարկանիշային աղյուսակը նվազագույն՝ -22.1 միավորով:

ՔՀԿԻ-ի տվյալների համաձայն՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանն ունեն միջին մակարդակի կայունություն: Տեղին է նշել, որ Հայաստանը և Ադրբեջանը իրենց միավորներով մոտեցել են ցածր կայունության մակարդակի շեմին, ավելին՝ Ադրբեջանը գրեթե հատել է այդ սահմանագիծը: Ինչ վերաբերում է Թուրքիային, Ռուսաստանին, Իրանին և Ուկրաինային, ապա ՔՀԿԻ-ի մեթոդաբանության համաձայն՝ նշվածները որակվում են որպես ցածր մակարդակի կայունությամբ երկրներ:

Վրաստանը զգալի առաջընթաց է գրանցել ժողովրդավարության և կառավարման ոլորտի բարեփոխումներում, ինչը նպաստել է քաղաքական կայունությանը: Հաջողություններ են գրանցվել մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարում և տնտեսության վերակառուցման ոլորտներում: Այդուհանդերձ, քաղաքական դաշտը Վրաստանում բավականին բևեռացված է, իսկ Աբխազիայի և Հարավային Օսիայի չլուծված հակամարտությունները նույնպես սպառնում են քաղաքական համակարգի կայունությանը (*Jones & Macfarlane 2020*):

44-օրյա պատերազմը և հետագա իրադարձությունները բացասական ազդեցություն են ունեցել ինչպես Հայաստանի և Ադրբեջանի, այնպես էլ տարածաշրջանի քաղաքական կայունության վրա՝ հանգեցնելով ուժերի վերադասավորման և աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների (*Dumoulin, Gressel 2023*): Եվ եթե Հայաստանի քաղաքական համակարգի կայունության վրա ազդում են նաև այնպիսի ներքին գործոններ, ինչպիսիք են հակամարտության հետևանքով առաջացած ազգային ու հումանիտար ճգնաժամը և հասարակական լայնածավալ դժգոհությունը, բողոքի ցույցերը

և կառավարության հրաժարականի պահանջները, ապա Ադրբեջանի պարագայում դա ներքին լարվածությունն է՝ պայմանավորված հասարակության նկատմամբ բռնության և ճնշումների կիրառմամբ (*Human Rights Watch 2023, Freedom House 2023*): Դա ստեղծում է կայունության թվացյալ վիճակ, քանի որ տեղի է ունենում լարվածության ներքին կուտակում: Այն ավտորիտար կառավարման մոդելով ճնշված քաղաքական միջավայրի հաշվին ստեղծված կայունությունն է (*Shkel, Gareev 2015*): Արտաքին գործոնների առումով տեղին է նշել Անկարայի որոշումներից Ադրբեջանի ներկայիս գերկախվածության մասին, ինչպես նաև տնտեսության կախվածությունը նավթի և գազի արտահանումից, որոնք անմիջական ազդեցություն կարող են ունենալ երկրի քաղաքական կայունության վրա: Թեև մի շարք մասնագետների կարծիքով Ադրբեջանի ավտորիտար վարչակարգն իր կայունությունը կարողացել է պահպանել հիմնականում նավթային եկամուտների շնորհիվ (*Guliyev 2013*), այդուհանդերձ տնտեսական կախվածությունը համաշխարհային շուկայի գների տատանումներից խոցելի են դարձնում երկրի կայունությունը:

Թուրքիայի քաղաքական կայունության վրա նշանակալիորեն ազդում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները: Քրդական խմբավորումների հետ շարունակվող բախումներն ու լարվածությունը, հակամարտությունները Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, տնտեսական խնդիրները, մասնավորապես բարձր գնաճը, ինչպես նաև 2016 թ. հեղաշրջման անհաջող փորձը և դրան հաջորդող բռնաճնշումներն ու հետապնդումները բացասաբար են անդրադարձել երկրի անվտանգության և քաղաքական կայունության վրա (*Szymański 2022*):

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ռուս-ուկրաինական պատերազմը, միջազգային պատժամիջոցները, տնտեսական խնդիրները միմիայն խորացրել են երկրի անվտանգության և կայունության հետ կապված խնդիրները՝ հանգեցնելով նաև երկրի միջազգային մեկուսացմանը:

Իրանի պարագայում ևս կարող ենք փաստել, որ քաղաքական համակարգի կայունությունը մշտական սպառնալիքների է ենթարկվում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցության ներքո: Կառավարման համակարգը պարբերաբար բախվում է բողոքի ցույցերի՝ կապված սոցիալ-տնտեսական խնդիրների և քաղաքական ճնշումների հետ: Մասնա-

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջերկրային վերլուծություն**


---

վորապես, 2022 թ. Մահսա Ամինիի մահից հետո բռնկված քաղաքացիական անհնազանդությունների ալիքը (*Fassihi 2022, Sinaiee 2022*) վկայում է վարչակարգի նկատմամբ հասարակության խորքային դժգոհությունների մասին: Արտաքին գործոնների համատեքստում պետք է նշել, որ Իրանը շարունակում է ենթարկվել միջազգային խիստ պատժամիջոցների, իսկ տարածաշրջանային հակամարտությունները և աշխարհաքաղաքական լարվածությունը հատկապես ԱՄՆ-ի և հարևան երկրների հետ էլ ավելի են սրում իրավիճակը:

Ուկրաինայի քաղաքական կայունության ինդեքսը նշանակալիորեն նվազել է Ռուսաստանի՝ 2022 թ. լայնածավալ ներխուժումից հետո, որի հետևանքով երկիրն ամբողջությամբ ապակայունացել է՝ ենթարկվելով սոցիալական, տնտեսական և քաղաքական խիստ ցնցումների: Քաղաքական կայունության անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 22.1 միավոր, որի հետևանքով Ուկրաինան միջին մակարդակի կայունության ստորին սահմանից անցում է կատարել ցածր մակարդակի կայունության կատեգորիայի, ինչպես նաև 4-րդ հորիզոնականից՝ 7-րդի (տե՛ս *Գծապատկեր 1* և *2, Աղյուսակ 1*): Մեծ է նաև Ռուսաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի անկումը, որը 2021 թվականի համեմատությամբ կազմել է 15.2 միավոր: Կայունության իրավիճակի վատթարացում են ունեցել նաև Իրանը, Թուրքիան և Ադրբեջանը, և միայն Հայաստանում ու Վրաստանում է արձանագրվել ինդեքսի աճ: Հարաբերական ամենամեծ դրական փոփոխությունը Հայաստանում է՝ 1.7 միավոր (տե՛ս *Գծապատկեր 1* և *2, Աղյուսակ 1*):

Գծապատկեր 2

Տարածաշրջանային երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2021 թ.)\*



Աղյուսակ 1

Տարածաշրջանի երկրների ՔՀԿ-ն (2021, 2022 թթ.)


Երկրներ	2021	2022	Փոփոխություն
Վրաստան	13.1	14.0	↑ 0.9
Հայաստան	4.0	5.7	↑ 1.7
Ադրբեջան	1.8	0.9	↓ -0.9
Թուրքիա	-15.3	-19.4	↓ -4.1
Ռուսաստան	-4.5	-19.7	↓ -15.2
Իրան	-9.3	-19.9	↓ -10.6
Ուկրաինա	0.5	-22.1	↓ -22.6

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները ՔՀԿ-ի հեղինակային մեթոդաբանությամբ:

## 9.2 Քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսը (ՔԳԻ)

Գծապատկեր 3

Տարածաշրջանային երկրների ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը  
(2022 թ.)\*



Ինչպես նկարագրված է մեթոդաբանությունում, Քաղաքական համակարգի կայունության ինդեքսն ունի 3 ենթաինդեքսներ՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական: Գծապատեր 3-ում ներկայացված են ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսների տվյալները: Հաշվարկների համաձայն՝ տարածաշրջանային երկրների վարկանիշային վերոնշյալ սանդղակում Արաստանը 15.7 միավորով դարձյալ առաջին հորիզոնականում է, որին հաջորդում է Հայաստանը՝ 0.026 միավոր: Ադրբեջանը (-9.4), Ուկրաինան (-34.7), Իրանը (-37.3), Թուրքիան (-40.3) և Ռուսաստանը (-50.8) նշված հերթականությամբ գտնվում են բացասական տիրույթում:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ ՔՀԿԻ-ի հեղինակային մեթոդաբանությամբ:

Աղյուսակ 2

**Քաղաքական գործոնների ինդեքսի փոփոխականներն ու դրանց արժեքները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան, Ուկրաինա, 2022 թ.)<sup>1</sup>**

Ք <sub>գ</sub> -ի փոփոխականները	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան	Ռուսաստան	Ուկրաինա
1. ՕՈԻՆ (% ՀՆԱ)	5.1	8.6	-5.7	1.5	0.4	-1.8	0.2
2. Տնտ. ազատության ինդեքս (0-100)	65.1	68.7	61.4	56.9	42.2	53.8	54.1*
3. Քաղաքական իրավունքների ինդեքս (7-1)	4.0	4.0	7.0	5.0	7.0	7.0	4.0
4. Քաղաքացիական ազատ. ինդեքս (7-1)	4.0	3.0	7.0	6.0	6.0	6.0	4.0
5. Կոռուպցիայի ընկալման ինդեքս (0-100)	46	56	23	36	25	28	33
6. Քաղաքացիական անհնազանդ. (0-5)	2.9	2.0	1.1	3.0	4.0	3.1	3.3
7. Հակամարտության առկայություն (0, 1, 2)	1	1	1	2	1	2	2

Տարածաշրջանային երկրների Ք<sub>գ</sub>-ի փոփոխականների (տե՛ս Աղյուսակ 2) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈԻՆ) 2022 թ. ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը (8.6 ՀՆԱ%), որին հաջորդում է Հայաստանը՝ 5.1 ՀՆԱ տոկոս արդյունքով: Դիտարկվող երկրների շարքում Ադրբեջանը և Ռուսաստանն ունեն ՕՈԻՆ-ների բացասական ցուցանիշներ, ինչը մատնանշում է ներդրումների արտահոսքի մասին:

Ինչպես ՕՈԻՆ-ների, այնպես էլ «Տնտեսական ազատության ինդեքսի»<sup>2</sup>

<sup>1</sup> Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ **1** - <http://data.worldbank.org/indicator>, **2** - <http://www.heritage.org/index/>, **3, 4** -<http://www.freedomhouse.org>, **5** - <http://www.transparency.org> (մուտքը՝ 18.12.23), **6, 7** – գնահատված է հեղինակների/հետազոտողների կողմից, ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի մեթոդաբանությանը նվիրված բաժինը (Գլուխ 1):

\* 2022 թ. որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են տվյալ աղբյուրի նախորդ տարվա/տարիների հասանելի տվյալները:

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների քաղաքական համակարգի կայունության  
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

---

(ՏԱԻ) ցուցանիշների պարագայում առաջատարը Վրաստանն է՝ 68.7 միավորով, որին հաջորդում են Հայաստանն (65.1) ու Ադրբեջանը (61.4): Վարկանիշային աղյուսակը նվազագույն՝ 42.2 ցուցանիշով ամփոփում է Իրանը: Ըստ «Հերիթիջ» հիմնադրամի՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը դասվում են «չափավոր ազատ» երկրների շարքում, մինչդեռ Թուրքիան, Ռուսաստանն ու Ուկրաինան՝ «հիմնականում անազատ»: Եվ միայն Իրանն է համալրում «տնտեսապես ճնշված» երկրների շարքը (*Kim, Tyrrell, Roberts 2023*):

Ք<sub>ԳԻ</sub>-ի փոփոխականներից «Ազատության տան» Քաղաքական իրավունքների ինդեքսով Վրաստանը, Հայաստանը և Ուկրաինան գրանցել են 4 միավոր, Թուրքիան՝ 5, իսկ Իրանը, Ռուսաստանը և Ադրբեջանը ստացել են այդ ցուցանիշի վատթարագույն 7 միավորը, որը մատնանշում է այդ երկրներում քաղաքական իրավունքների ոլորտի խորքային խնդիրների մասին: Միևնույն ժամանակ Քաղաքացիական ազատությունների ինդեքսով Վրաստանը պահպանում է իր առաջատար դիրքերը՝ ստանալով 3 միավոր, որին հաջորդում են Հայաստանն ու Ուկրաինան՝ 4-ական միավորներով: Թուրքիան, Իրանն ու Ռուսաստանը գրանցել են 6-ական միավոր, իսկ Ադրբեջանը դարձյալ արձանագրել է նվազագույն 7 միավորը (տե՛ս *Աղյուսակ 2*): Դիտարկվող երկրներից միայն Ադրբեջանն է, որն ունի վատթարագույն ցուցանիշները և՛ Քաղաքական իրավունքների, և՛ Քաղաքացիական ազատությունների ինդեքսներում: Ըստ «Ազատության տան»՝ Ադրբեջանում այս ոլորտի հիմնախնդիրներն են իշխանությունների կողմից

---

<sup>2</sup> «Տնտեսական ազատության ինդեքսը» գնահատվում է «Հերիթիջ» հիմնադրամի կողմից ըստ 12 գործոնների՝ արտահայտված 0-100 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 49.9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59.9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69.9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79.9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: 2022 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել 2023 թ. ՏԱԻ-ին, քանի որ այն ընդգրկում է 2021 թ. հուլիսի 1-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ն ընկած դեպքերին վերաբերող ցուցանիշները: Տվյալ փոփոխականն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում, քանի որ այն արտահայտում է օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները, դատական համակարգի արդյունավետությունը և համարվում է քաղաքական կայունության ու ժողովրդավարության կարևոր ցուցանիշներից մեկը:



անկախ լրատվամիջոցների նկատմամբ ճնշումները, ազատ հավաքների սահմանափակումները, ընդդիմադիր կուսակցությունների գործունեության խոչընդոտումը և այլն: Երկրում արդարադատության համակարգը անկախ չէ, իսկ քաղաքացիական ազատությունները խստորեն սահմանափակված են, ինչը հանգեցնում է այլակարծության և անկախ գործունեության անհնարինության (*Freedom House 2023*): Այսպես՝ «Ազատությունն աշխարհում» զեկույցի<sup>3</sup> Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների միջինացված ցուցանիշներով Վրաստանը (3.5), Հայաստանը (4) և Ուկրաինան (4) «մասնակի ազատ» երկրներ են, իսկ Թուրքիան (5.5), Ռուսաստանը (6.5), Իրանը (6.5) և Ադրբեջանը (7)՝ «անազատ»:

Դիտարկվող պետությունների շարքում Կոռուպցիայի ընկալման ինդեքսի<sup>4</sup> (ԿԸԻ) լավագույն ցուցանիշը Վրաստանին է (56), որին հաջորդում է Հայաստանը՝ 46 միավորով: ԿԸԻ-ի նվազագույն ցուցանիշն ունի Ադրբեջանը (23) (*Transparency International 2022*):

Անդրադառնալով տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող քաղաքացիական անհնազանդություններին<sup>5</sup> պետք է նշել, որ 2022 թ. Հայաստանում դրանց մակարդակն ամենացածրն է եղել: Ի հակադրություն դրան՝ Իրանում տեղի են ունեցել աննախադեպ քանակի բողոքի ցույցեր: Սեպտեմբերին՝ Մահսա Ամինի մահվանից հետո, ով անպատշաճ հիջաբ կրելու մեղադրանքով ձերբակալվել և կալանավորումից մի քանի օր անց մահացել էր, Իրանի

<sup>3</sup> «Ազատությունն աշխարհում» 2023 թ. զեկույցը անդրադառնում է 2022 թ. իրադարձություններին: Զեկույցի Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2.5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5.5-ից 7-ը՝ «անազատ»:

<sup>4</sup> «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» գնահատվում է 0-100 բալային համակարգով, ընդ որում՝ 0-ն համապատասխանում է լիովին կոռումպացված երկրներին, 100-ը՝ կոռուպցիայից լիովին ձերբազատվածներին:

<sup>5</sup> «Քաղաքացիական անհնազանդություններ» փոփոխականը գնահատվում է հետազոտողների կողմից 0-5 սանդղակի շրջանակներում, որտեղ 0-ն քաղաքացիական անհնազանդությունների խսպառ բացակայությունն է, 5-ը՝ դրանց առավելագույն քանակը՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ: Գնահատումը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը, այդ թվում՝ նաև քաղաքական ձերբակալությունների ու սպանությունների դեպքերը (տե՛ս Աղյուսակ 2):

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների քաղաքական համակարգի կայունության  
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

---

տարբեր քաղաքներում քաղաքացիական անհնազանդությունների ակիբներ բարձրացան: Ըստ մի շարք լրատվամիջոցների՝ դրանք բողոքի ամենամեծ ցույցերն էին 2009 թ. ի վեր (*Fassihi 2022, Karadsheh & Qiblawi 2022*): Ոչ պաշտոնական տվյալներով՝ ցույցերի ընթացքում մահացել են հարյուրավոր մարդիկ, հազարավորները՝ ձերբակալվել և ստացել մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ (*BBC News 2022, Iran Human Rights 2022*):


Ինչ վերաբերում է «հակամարտության առկայությունը» փոփոխականին, ապա տարածաշրջանի բոլոր պետություններն ունեն տարբեր աստիճանների ներգրավվածություն կոնֆլիկտների և պատերազմների մեջ: Դիտարկվող պետություններից մասնավորապես Թուրքիան, Ռուսաստանը և Ուկրաինան են ներգրավված այնպիսի հակամարտություններում, որոնք ուղեկցվում են ռազմական ակտիվ գործողություններով: Եթե Ռուսաստանի և Ուկրաինայի պարագայում դա ռուս-ուկրաինական պատերազմն է, ապա Թուրքիայի դեպքում՝ նրա ռազմական գործողություններն են հարևան պետություններում: Մասնավորապես, 2022 թ. ապրիլին Թուրքիան Հյուսիսային Իրաքում նախաձեռնեց «Մագիլ-կողպեք» ռազմական գործողությունը՝ ուղղված իր համար ահաբեկչական դիտարկվող «Քուրդիստանի բանվորական կուսակցության» դեմ (*Outzen 2022*):

### **9.3 Քաղաքական համակարգի կայունության Տնտեսական գործոնների ինդեքսը (ՏԳԻ)**

ՔՀԿԻ-ի Տնտեսական գործոնների ինդեքսի հաշվարկված տվյալների համաձայն՝ դիտարկվող պետությունների շարքում առաջատարը Ռուսաստանն է (-13.7), որին հաջորդում է Հայաստանը (-16.6): Վրաստանը (-27.1), Ադրբեջանը (-29.6), Իրանը (-29.7) և Թուրքիան (-33.8) ունեն մոտ միավորներ, իսկ Ուկրաինան (-50.3) մեծ միավորային տարբերությամբ զբաղեցրել է վերջին հորիզոնականը (տե՛ս *Գծապատկեր 4*):

Գծապատկեր 4

Տարածաշրջանային երկրների ՔՀԿԻ-ի Տնտեսական գործոնների ինդեքսը (2022 թ.)\*



Ռուսաստանի առաջատար դիրքը Տնտեսական գործոնների ինդեքսում պայմանավորված է ամենաբարձր շնչային ՀՆԱ-ով, որը կազմել է 40813 ԱՄՆ դոլար (ԱՄՆ գնողունակության համարժեքով ճշգրտված): Դիտարկվող պետությունների շարքում շնչային ՀՆԱ-ի ամենացածր ցուցանիշներն ունեն Իրանն ու Ուկրաինան՝ 16591 և 16003 ԱՄՆ դոլար համապատասխանաբար: Ի հակադրություն դրա՝ Ռուսաստանն ունի արտաքին առևտրաշրջանառության ամենացածր ցուցանիշները, որը 2022 թ. կազմել է նրա ՀՆԱ-ի 43.8%-ը: Այս հանգամանքը, ըստ էության, պայմանավորված է եղել միջազգային պատժամիջոցների կիրառմամբ (տե՛ս Աղյուսակ 3):

Հատկանշական է, որ բոլոր պետություններն արձանագրել են բարձր գնաճ, ավելին՝ մի շարք երկրների պարագայում այն նույնիսկ աննախադեպ բարձր է: Այսպես՝ Թուրքիայի գնաճը 2022 թ. կազմել է 72.3%՝ նախորդ 2021 թ. արձանագրած 20% փոխարեն: Իրանը գրանցել է 43.5% գնաճ, թեև նման իրավիճակը շարունակվում է դեռևս 2019 թ.-ից սկսած: Տարածաշրջանի երկրների շարքում ամենացածր գնաճն ունի Հայաստանը՝ 8.6%: Համե-

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները ՔՀԿԻ-ի հեղինակային մեթոդաբանությամբ:

**Գլուխ 9. Տարածաշրջանային երկրների քաղաքական համակարգի կայունության  
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

մատած 2021 թ. հետ՝ նկատելի բարձր է եղել նաև Ուկրաինայի գնաճը, որը 2022 թ. կազմել է 20%՝ նախորդ տարվա 9.4%-ի փոխարեն: Մոդելում ընդգրկված փոփոխականների շարքում աննախադեպ է եղել Ուկրաինայի՝ 2022 թ. բյուջետային պակասուրդի ցուցանիշը, որը այդ տարի կազմել է 16.3 ՀՆԱ%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով գրեթե 13 տոկոսային կետով (տե՛ս Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3**

**Տնտեսական գործոնների ինդեքսի փոփոխականներն ու դրանց արժեքները  
(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան,  
Ուկրաինա, 2022 թ.)<sup>6</sup>**

Տգի-ի փոփոխականները	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան	Ռուսաստան	Ուկրաինա
1. ՀՆԱ 1 շնչի հաշվով, \$ (գնողունակության համարժեքով ճշգրտված)	20445	22063	22512	38355	16591	40813	16003
2. Արտաքին առևտրաշրջ. (% ՀՆԱ)	101.0	115.6	87.1	81.2	51.6	43.8	87.7
3. Տնտեսության վարկավորում (% ՀՆԱ)	65.0	66.9	14.7	73.9	77.6*	86.2*	49.6
4. Գնաճ (%)	8.6	11.9	13.9	72.3	43.5	13.8	20.2
5. Սովերային տնտեսություն (% ՀՆԱ)*	34.5	51.5	48.6	28.6	15.9	36.5	42.3
6. Բյուջեի հաշվեկշիռ (% ՀՆԱ)	-2.3	-3.0	-1.0	-1.0	-4.1	-2.3	-16.3


<sup>6</sup> Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ **1, 2, 3** - <http://data.worldbank.org/indicator>, **4** - <https://www.imf.org/>, **5** - [www.cesifo-group.org/wp/](http://www.cesifo-group.org/wp/), **6** - Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ:

\* 2022 թ. որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են տվյալ աղբյուրի նախորդ տարվա/տարիների հասանելի տվյալները:

## 9.4 Քաղաքական համակարգի կայունության Սոցիալական գործոնների ինդեքսը (ՍԳԻ)

Գծապատկեր 5

Տարածաշրջանային երկրների ՔՀԿԻ-ի Սոցիալական գործոնների ինդեքսը (2022 թ.)\*



Սոցիալական գործոնների ինդեքսում առաջին հորիզոնականը զբաղեցրել է Ադրբեջանը (34.9), որին մոտ միավորներով հաջորդում են Ռուսաստանն (34.2) ու Վրաստանը (31.5): Հայաստանն (27.3) ու Թուրքիան (26.2) 4-րդ և 5-րդ հորիզոնականներում են, իսկ Իրանն ու Ուկրաինան ամփոփում են վարկանիշային աղյուսակը՝ 17 և 15 միավորներով համապատասխանաբար:

\* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները ՔՀԿԻ-ի հեղինակային մեթոդաբանությամբ:

**Աղյուսակ 4**

**Սոցիալական գործոնների ինդեքսի փոփոխականներն ու դրանց արժեքները  
(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան,  
Ուկրաինա, 2022 թ.)<sup>7</sup>**

<b>Ս<sub>գ</sub>-ի փոփոխականները</b>	<b>Հայաստան</b>	<b>Վրաստան</b>	<b>Ադրբեջան</b>	<b>Թուրքիա</b>	<b>Իրան</b>	<b>Ռուսաստան</b>	<b>Ուկրաինա</b>
1. ՄՂՀ (0-1)	0.786	0.814	0.760	0.855	0.780	0.821	0.734
2. Իրական աշխատավարձ (\$, գնողունակության համարժեքով ճշգրտված)	1345	1423	1054	1066	320	1811	1114
3. Զբաղվածության մակարդակ (%)	57	56	66	48	39	60	16
4. Աղքատության մակարդակ (%)	24.8	15.6	5.9	14.4	30.0	9.8	24.2
5. Զինի ինդեքս (0-1)	0.352	0.340	0.382*	0.415	0.348	0.396	0.256*
6. Հանցագործությունների քանակը (1000 շնչի հաշվով)	13.5	14.6	3.5	30.0	14.7*	13.4	9.5

Ս<sub>գ</sub>-ում Ադրբեջանի՝ առաջատար դիրքում հայտնվելը պայմանավորված է դիտարկվող երկրների շրջանում գրանցած զբաղվածության մակարդակի ամենաբարձր, աղքատության ու հանցագործությունների ամենացածր ցուցանիշների արդյունքով: Միևնույն ժամանակ հանցագործությունների ամենաբարձր մակարդակը Թուրքիայում է և մի քանի անգամ գերազանցում է մյուս պետությունների ցուցանիշին (տե՛ս *Աղյուսակ 4*):

Իրական ամսական աշխատավարձի լավագույն ցուցանիշն ունի Ռուսաստանը (1811 ԱՄՆ դոլար), մինչդեռ Իրանում այն բավականին ցածր է և

<sup>7</sup> Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ **1** - <http://hdr.undp.org>, **2, 4, 5, 6** – Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, **3, 5** - <http://data.world-bank.org/indicator>:

\* 2022 թ. որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են տվյալ աղբյուրի նախորդ տարվա/տարիների հասանելի տվյալները:

2022 թ. կազմել է 320 ԱՄՆ դոլար: Իրանն ունի նաև աղքատության ամենաբարձր մակարդակը՝ 30%: Աղքատությունը բարձր է նաև Հայաստանում ու Ուկրաինայում և կազմում է շուրջ 25%: Ուկրաինան առանձնանում է նաև զբաղվածության աննախադեպ ցածր ցուցանիշով՝ 16%: Ուկրաինայում և՛ զբաղվածության, և՛ աղքատության մակարդակի տվյալները կտրուկ վատթարացել են պատերազմի հետևանքով:

## Եզրակացություններ

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի 2022 թվականի միջերկրային վերլուծության արդյունքներն ամփոփելով՝ նշենք.

- Տարածաշրջանային դիտարկվող երկրների շարքում Քաղաքական համակարգի կայունության ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը: Հայաստանը երկրորդ հորիզոնականում է, իսկ քաղաքական կայունության ամենացածր ցուցանիշն ունի Ուկրաինան: Միևնույն ժամանակ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը գտնվում են միջին մակարդակի կայունության կատեգորիայի միջակայքում, իսկ Թուրքիան, Ռուսաստանը, Իրանն ու Ուկրաինան՝ ցածր մակարդակի կայունության: Հայաստանն իր արձանագրած միավորով մոտեցել է ցածր կայունության մակարդակին, այն դեպքում, երբ Ադրբեջանը գրեթե հատել է այդ սահմանագիծը:
- ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսում լավագույն ցուցանիշը դարձյալ Վրաստանինն է, նվազագույնը՝ Ռուսաստանինը: Բոլոր պետություններն ունեն տարբեր աստիճանի ներգրավվածություն հակամարտություններում, ինչը կայունության տեսակետից տարածաշրջանը դարձնում է խոցելի: Ավելին՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Ուկրաինայի պարագայում այդ հակամարտություններն ուղեկցվում են ռազմական ակտիվ գործողություններով:
- Ի տարբերություն ՔԳԻ-ի՝ Տնտեսական գործոնների ինդեքսում Ռուսաստանն առաջատարն է, ինչը պայմանավորված է ամենաբարձր շնչային ՀՆԱ-ով: Ուկրաինան արձանագրել է ամենացածր ցուցանիշը վերոնշյալ ենթաինդեքսում՝ պայմանավորված բյուջետային

դեֆիցիտի աննախադեպ աճով և պատերազմի հետևանքով տնտեսական այլ ցուցանիշների վատթարացմամբ: Բոլոր պետություններն արձանագրել են բարձր գնաճ:

- Ադրբեջանը Սոցիալական գործոնների ինդեքսում հայտնվել է առաջին հորիզոնականում, Ուկրաինան՝ ամենավերջին՝ դարձյալ պայմանավորված պատերազմի հետևանքով սոցիալական կարևոր ցուցանիշների նշանակալի վատթարացմամբ:

### **Գրականության ցանկ**

- BBC News. 2022. “Массовые Протесты В Иране: Кратко о Причинах и Последствиях.” Октябрь 14. Дата доступа: 12.11.2023. <https://www.bbc.com/russian/features-63254777>.
- Dumoulin, Marie and Gustav Gressel. 2023. “After Nagorno-Karabakh: How Europeans Can Strengthen Armenia's Resilience.” European Council on Foreign Relations. November 24, 2023. Accessed December 25, 2023. <https://ecfr.eu/article/after-nagorno-karabakh-how-europeans-can-strengthen-armenias-resilience/>.
- Fassihi, Farnaz. 2022. “Iran Protests Surge to Dozens of Cities.” The New York Times, September 24, 2022. Accessed December 15, 2023. <https://www.nytimes.com/2022/09/24/world/middleeast/iran-protests.html>.
- Freedom House. 2023. “Freedom in the World 2023: Azerbaijan.” Accessed November 24, 2023. <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2023>.
- Guliyev, Farid. 2013 “Oil and Regime Stability in Azerbaijan.” Demokratizatsiya 21 (1):113–147.
- Human Rights Watch. 2023. “World Report 2023: Azerbaijan.” January 20, 2023. Accessed December 15, 2023. <https://www.hrw.org/world-report/2023/country-chapters/azerbaijan>.
- Hunter, Shireen T., ed. 2024. The New Geopolitics of the South Caucasus: Prospects for Regional Cooperation and Conflict Resolution. Rowman & Littlefield.
- Iran Human Rights. 2022. “At Least 100 Protesters Facing Execution, Death Penalty Charges or Sentences; At Least 476 Protesters Killed.” December 27. Accessed November 25, 2023. <https://iranhr.net/en/articles/5669/>.
- Jones, Stephen F., and Neil Macfarlane, eds. Georgia: From Autocracy to Democracy. University of Toronto Press, 2020. Accessed December 20, 2023. <http://www.jstor.org/stable/10.3138/j.ctv179h1gd>.



- Karadsheh, Jomana & Tamara Qiblawi. 2022. “A barrier of fear has been broken in Iran. The regime may be at a point of no return.” CNN, October 5. Accessed November 25, 2023. <https://edition.cnn.com/2022/10/05/middleeast/iran-protests-regime-intl>.
- Kim, Anthony B., Patrick Tyrrell, & Kevin D. Roberts. 2023. “2020 Index of Economic Freedom.” Heritage Foundation and the Wall Street Journal. Accessed December 25, 2023. [https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/book/2023\\_IndexOfEconomicFreedom\\_FINAL.pdf](https://indexdotnet.azurewebsites.net/index/pdf/2023/book/2023_IndexOfEconomicFreedom_FINAL.pdf).
- Mankoff, Jeffrey. 2014. Russian Foreign Policy: The Return of Great Power Politics. Rowman & Littlefield.
- McFaul, Michael. 2018. From Cold War to Hot Peace: An American Ambassador in Putin’s Russia. Houghton Mifflin Harcourt.
- Outzen, Rich. 2022. “Claw-Lock: An Assessment of Turkish Counter-PKK Operations in Northern Iraq in 2022.” The Jamestown Foundation, August 12. Accessed November 25, 2023. <https://jamestown.org/program/claw-lock-an-assessment-of-turkish-counter-pkk-operations-in-northern-iraq-in-2022/>.
- Shkel, Stanislav & Eduard Gareev. 2015. “Durability of the Authoritarian Regimes: The Role of Procedural Factors.” Asian Social Science 11 (19):205-210. DOI:10.5539/ass.v11n19p205
- Sinaiee, Maryam. 2022. “Protests Spread From Hijab Victim’s Hometown to Other Cities in Iran.” Iran International, September 18, 2022. Accessed December 14, 2023. <https://www.iranintl.com/en/202209189135>.
- Szymański, Adam. 2022. “Security in Turkish Politics: An Analysis of the Political Discourse of President Recep Tayyip Erdoğan.” Studia Europejskie – Studies in European Affairs 26 (3):55-70. DOI: <https://doi.org/10.33067/SE.3.2022.3>
- Transparency International. 2022 “Corruption Perceptions Index 2022.” Accessed November 25, 2023. <https://www.transparency.org/en/cpi/2022>.
- Trenin, Dmitri. 2011. Post-Imperium: A Eurasian Story. Carnegie Endowment for International Peace.

## ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

### Ա

Արխագիա, 70, 331

ագրեսիա, 241, 279, 293, 308

Ադրբեջան, 3, 4, 7, 9, 13, 15, 16, 18, 21, 22, 38, 39, 40, 41, 42, 43, 60, 91, 92, 94, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 154, 155, 215, 216, 217, 329, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 341, 342, 343, 344, 345, 365

Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցություն (ԱԺԾԿ), 9, 118, 124, 125, 128, 129, 136, 137

Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամ (ԱՊՆՀ), 9, 142, 144, 147

Ազատության տուն, 20, 26, 27, 44, 87, 337

Ազատությունն աշխարհում, 20, 26, 338  
ազգային անվտանգություն, 68, 205, 215, 242, 243, 254, 259, 279, 292, 313, 314, 317

ազգային արժույթ, 89

Ազգային ժողով (ԱԺ), 43, 44

ազգային ինքնություն, 134, 137, 257

Ազգային վիճակագրական ծառայություն, 19, 20, 21, 100, 341, 343

ազգային տնտեսություն, 181

Ազգայնական շարժում կուսակցություն (ԱՇԿ), 9, 168, 174

ազդեցության գոտի, 241, 276, 329

Ալիև, Իլիամ, 39, 113, 114, 118, 122, 123, 125, 127, 128, 131, 134, 136, 137, 138, 147

Ալիև, Հեյդար, 113, 114, 118, 123, 125, 137, 154

ահաբեկչություն, 171, 172, 254

Ահմադինեժադ, Մահմուդ, 207, 208, 210, 216, 221, 222, 224, 227, 228, 229, 230, 231, 234, 235

աղյուսակ, 36, 38, 42, 64, 72, 73, 114, 116, 131, 136, 148, 149, 160, 164, 167, 168, 181, 190, 204, 243, 245, 249, 250, 259, 261, 271, 293, 295, 298, 299, 302, 333, 334, 336, 337, 338, 340, 341, 343

աղքատության մակարդակ, 9, 21, 23, 25, 53, 54, 55, 56, 148, 149, 192, 193, 227, 229, 231, 343, 344

աղքատություն, 21, 23, 25, 32, 53, 54, 55, 56, 60, 100, 117, 132, 148, 149, 189, 190, 192, 193, 227, 229, 230, 231, 235, 271, 273, 311, 343, 344

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), 9, 13, 19, 20, 21, 29, 41, 42, 49, 50, 51, 54, 72, 81, 82, 92, 93, 132, 142, 143, 147, 165, 181, 183, 184, 186, 188, 189, 205, 208, 211, 212, 213, 218, 219, 220, 223, 224, 226, 229, 231, 232, 233, 234, 237, 241, 242, 256, 265, 275, 276, 277, 292, 301, 307, 312, 316, 320, 329, 333, 340, 343, 344

Ամինի, Մահսա, 215, 333, 338

այաթոլլահ, 201, 202, 207, 209, 226

Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ), 9, 89, 90, 301

անկայուն խաղաղություն, 15

- անկայունություն, 62, 106, 161, 162, 170, 171, 184, 196, 197, 247, 267, 329
- Անկարա, 38, 332
- անկարգություններ, 43, 105
- անհամաձայնություն, 67, 169
- անվտանգություն, 5, 9, 10, 11, 13, 18, 22, 76, 81, 85, 92, 114, 142, 170, 171, 176, 190, 208, 210, 242, 243, 247, 254, 255, 256, 261, 275, 279, 281, 291, 301, 305, 307, 308, 309, 310, 313, 316, 320, 332
- անցումային շրջան, 67, 94, 117, 253
- Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), 9, 19, 99, 264
- աշխատավարձ, 10, 21, 24, 29, 56, 145, 147, 184, 192, 251, 263, 264, 266, 271, 343
- աշխարհաքաղաքական անկայունություն, 90
- աշխարհաքաղաքական գործընթաց, 39
- աշխարհաքաղաքական գործոններ, 309
- աշխարհաքաղաքական իրավիճակ, 243
- աշխարհաքաղաքական լարվածություն, 333
- աշխարհաքաղաքական միտումներ, 15
- աշխարհիկություն, 161, 171, 192
- ապստամբություն, 118, 174
- ապրանք, 29, 52, 90, 94, 95, 140, 218, 225, 230, 231, 232, 233, 267
- Ապրիլյան պատերազմ, 38, 58
- Աջարիա, 70
- առաջին անհրաժեշտության ապրանքներ, 213, 230, 232
- առևտուր, 10, 25, 89, 90, 91, 93, 94, 95, 99, 184, 218, 260, 296, 307
- առևտրային գործընկեր, 51
- առևտրաշրջանառություն, 9, 20, 25, 51, 92, 93, 95, 142, 143, 182, 183, 225, 340
- Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), 9, 19, 76, 296
- Ասիա, 86, 94, 270
- Ասիական զարգացման բանկ, 94
- Ասոցացման համաձայնագիր, 89, 95, 99
- ավտորիտար քաղաքական համակարգ, 31
- ավտորիտարիզմ, 79, 171, 173, 179, 197
- Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ), 9, 208, 220, 235
- Արաբական Միացյալ Էմիրություններ, 188
- արդարադատություն, 25, 81, 82, 86, 338
- Արդարություն և զարգացում կուսակցություն (ԱԶԿ), 9, 158, 161, 163, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 175, 176, 178, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 196, 197
- արդյունաբերություն, 48, 307, 308
- Արևելյան գործընկերություն (ԱԷԳ), 9, 293, 298, 300, 301, 318
- Արևելյան Միջերկրածով, 177
- Արևելք, 93, 119, 233, 270, 277
- Արևելք-Արևմուտք մայրուղի, 93, 94
- Արևմուտք, 92, 93, 184, 220, 231, 233, 234, 235, 236, 255, 275, 277, 299, 310
- արժեհամակարգ, 166
- արժեք, 18, 19, 29, 30, 36, 52, 56, 64, 79, 85, 116, 140, 166, 190, 191, 226, 227, 243, 245, 256, 257, 261, 271, 295, 299, 306, 311, 336, 341, 343
- արժույթ, 19, 20, 120, 182, 184, 185, 196, 214, 222, 230, 231
- արտադրություն, 52, 92, 180, 219, 267, 307, 309
- արտակարգ դրություն, 174, 189
- արտահանման ծավալ, 52, 180, 183, 186
- արտահանում, 51, 52, 60, 88, 93, 94, 95, 163, 180, 181, 183, 186, 188, 220, 222, 309, 332
- արտահերթ ընտրություններ, 82, 83, 122, 125, 128, 129, 170, 175
- արտահոսք, 106, 185, 336
- արտաքին առևտուր, 188, 218, 296
- արտաքին քաղաքականություն, 84, 126, 178, 184, 205, 213, 215, 220, 222, 223,

## Անունների և հիմնաբառերի ցանկ

231, 232, 277, 292, 296, 297, 298, 300, 301  
Արցախ, 39, 60, 113, 121, 134, 136, 137, 177  
Արցախյան 44-օրյա պատերազմ, 38, 47, 58, 60, 115, 130, 135, 136, 143, 144, 147, 151  
Արցախյան առաջին պատերազմ, 117  
Արցախյան երկրորդ պատերազմ, 34, 125, 126, 136, 137, 138  
Արցախյան հակամարտություն, 34  
Արցախյան վերջին պատերազմ, 134, 137, 236  
Արցախյան քառօրյա պատերազմ, 143  
Աֆղանստան, 177

### Բ

բազմակարծություն, 26, 62, 71, 203  
Բալթյան երկրներ, 319  
Բախտաձե, Մամուկա, 76  
Բանհիմացների խորհուրդ, 202, 203  
բարեկեցություն, 28, 191, 226, 264, 312  
բարեփոխում, 67, 70, 71, 72, 83, 86, 89, 90, 129, 130, 131, 138, 145, 170, 171, 173, 175, 191, 209, 212, 216, 218, 223, 227, 229, 230, 231, 255, 272, 292, 304, 307, 317, 331  
Բարձրագույն դատական խորհուրդ (ԲԴԽ), 9, 45  
Բարոյականության ոստիկանություն, 215  
Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի, 94  
Բաքրաձե, Դավիթ, 73  
բևեռացում, 61, 66, 81, 170, 171, 179, 197, 271  
բևեռացվածություն, 61, 81, 138, 145  
Բյուջեի գլխավոր վարչություն, 195  
բյուջեի դեֆիցիտ, 9, 21, 25, 182, 268  
բնակչության բևեռացում, 32  
բնակչություն, 28, 32, 54, 55, 56, 66, 97, 117, 124, 132, 145, 148, 149, 150, 189, 192, 193, 216, 243, 263, 265, 266, 270, 272, 273, 282, 304, 309, 311, 312, 313

բողոքի ակցիա, 77, 206, 207  
բողոքի ցույց, 38, 43, 60, 61, 62, 87, 120, 140, 331, 332, 338  
Բոննի փոխարկման միջազգային կենտրոն, 42  
բռնություն, 132, 138, 170, 172, 214  
Բրազիլիա, 185

### Գ

գազ, 50, 51, 87, 225, 332  
Գախարիա, Գիորգի, 80, 81  
գաղափարախոսություն, 118, 137, 166, 167, 179, 192, 202, 203, 227, 255, 274, 280  
Գասպարյան, Օնիկ, 43, 44  
Գաֆարովա, Սահիրա, 113  
Գեզի պուրակ, 161, 163, 178, 196  
Գերագույն ուղթ, 305  
Գերմանիա, 181, 211  
Գիտությունների ազգային ակադեմիա (ԳԱԱ), 5, 9, 13, 18, 126  
գլխաշոր, 215, 216  
գծապատկեր, 24, 35, 37, 38, 39, 40, 41, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 57, 62, 63, 65, 88, 95, 96, 97, 98, 100, 101, 102, 103, 104, 114, 115, 117, 118, 121, 136, 140, 141, 143, 146, 150, 151, 159, 162, 164, 182, 183, 189, 192, 194, 197, 202, 203, 205, 206, 207, 209, 210, 211, 221, 222, 223, 224, 228, 231, 234, 235, 236, 237, 243, 244, 258, 261, 271, 275, 276, 293, 294, 298, 299, 301, 306, 311, 314, 315, 330, 331, 333, 334, 335, 339, 340, 342  
Գյուլեն, Ֆեթհուլլահ, 163, 174, 184  
գյուլենական, 163, 172, 174, 184  
գյուլենականություն, 184  
գյուղատնտեսություն, 48, 89, 218, 220  
գնաճ, 9, 20, 25, 90, 138, 140, 143, 144, 145, 181, 183, 184, 185, 222, 223, 224, 225, 230, 231, 232, 332, 340, 341, 345  
գնողունակություն, 29, 56

գոյաբանական պայքար, 34  
Գոտի և ճանապարհ, 91, 94  
գործադուլ, 28, 43, 338  
գործազրկության մակարդակ, 56, 229  
գործազրկություն, 56, 100, 117, 148, 184, 229, 264  
գործընթաց, 12, 13, 26, 27, 31, 34, 38, 60, 66, 67, 86, 88, 114, 118, 119, 158, 163, 174, 180, 210, 220, 223, 225, 228, 246, 249, 268, 269, 278, 279, 281, 291, 292, 293, 304, 308, 318

**Դ**

Դ՛Ամատոյի օրենք, 219  
Դավութթոլու, Ահմեդ, 174  
դատական համակարգ, 79  
դե յուրե, 77, 291  
դե ֆակտո, 77, 118, 291, 304  
դերակատար, 4, 15, 58, 136, 246, 247, 248, 272, 274, 277, 278, 279, 280, 282, 297, 299, 315, 316, 319, 329  
դիմակայող քաղաքական համակարգեր, 4, 15, 18  
դիմակայություն, 15  
դինամիկա, 189, 227  
դիրքային փոփոխություններ, 42  
դուլար, 19, 20, 21, 29, 41, 42, 49, 50, 51, 54, 90, 92, 93, 132, 140, 142, 143, 147, 164, 165, 183, 184, 186, 188, 189, 213, 219, 223, 224, 225, 229, 231, 232, 235, 306, 307, 312, 340, 343  
Դոնբաս, 252, 258  
Դոնեցկի ժողովրդական Հանրապետություն (ԴԺՀ), 9, 252, 253, 301  
դպրոց, 10, 179, 191  
դրամ, 50, 140, 145  
դրամավարկային ճգնաժամ, 88, 98

**Ե**

Եկամուտ, 28, 32, 141, 142, 189, 217, 220, 230, 263, 265, 266, 268, 332

ենթահինդքս, 17, 18, 19, 30, 42, 330, 335, 344  
ենթակառուցվածք, 89, 90, 91, 93, 95, 227, 255, 276, 296, 298, 300, 306, 308, 311, 312  
Եվրասիական ինտեգրացիոն քաղաքականություն, 293  
Եվրասիական ինտեգրում, 298, 316  
Եվրասիական ինտեգրում, 12, 13, 79, 291, 292, 317, 318  
Եվրասիական ինտեգրում, 247  
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ), 9, 16, 225, 301  
Եվրոպա, 9, 72, 76, 94, 176, 183, 220, 292  
Եվրոպական ինտեգրում, 296, 297, 298, 300, 301, 317, 318  
Եվրոպական խորհուրդ, 78, 81  
Եվրոպական համերաշխություն, 302, 303, 305  
Եվրոպական միություն / Եվրամիություն (ԵՄ), 9, 12, 16, 51, 66, 81, 82, 83, 84, 85, 89, 90, 91, 94, 95, 99, 163, 253, 254, 276, 277, 291, 292, 296, 297, 298, 299, 300, 301, 312, 317, 318, 329  
Եվրոպական ներդրումային բանկ, 91  
Եվրոպական չափանիշներ, 95  
Եվրոպական Վրաստան, 61, 73, 80  
Եվրոպայի խորհուրդ (ԵԽ), 9, 67, 85, 175, 176  
Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽՎԿ), 9, 177  
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), 9, 76, 77, 78, 177  
Երկիր, 4, 8, 15, 16, 18, 19, 21, 26, 27, 29, 30, 32, 39, 42, 44, 51, 52, 56, 60, 61, 67, 68, 77, 79, 80, 81, 82, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 93, 94, 95, 96, 97, 98, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 113, 117, 118, 119, 121, 122, 132, 139, 144, 147, 148, 152, 165, 166, 171, 176, 177, 178, 180, 181, 183, 184, 185, 186, 190,

197, 201, 202, 205, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 217, 219, 220, 222, 223, 224, 225, 226, 227, 229, 231, 232, 233, 234, 235, 242, 243, 246, 248, 249, 251, 252, 254, 255, 256, 258, 259, 260, 262, 263, 265, 266, 268, 269, 270, 274, 275, 276, 277, 279, 280, 281, 292, 293, 296, 297, 298, 300, 301, 303, 304, 306, 307, 308, 309, 312, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 340, 342, 343, 344

**Չ**

զանգվածային անհնազանդություններ, 42, 118  
զանգվածային լրատվության միջոցներ (ՀԼՄ), 9, 19, 27, 62, 122, 166, 176  
զանգվածներ, 167, 174  
Ջարգացման նախարարություն, 194, 195  
զարգացում, 11, 14, 21, 24, 28, 34, 35, 37, 38, 56, 61, 68, 75, 81, 93, 94, 97, 99, 113, 129, 146, 157, 167, 178, 180, 184, 189, 190, 191, 194, 219, 221, 222, 226, 241, 243, 247, 255, 256, 260, 267, 268, 269, 274, 275, 277, 280, 281, 291, 292, 296, 301, 304, 305, 308, 311, 312, 313, 315, 318  
Ջարիֆի, Մուհամմադ Ջավադ, 211  
զբաղված աղքատներ, 55  
զբաղվածության մակարդակ, 9, 21, 24, 193, 343  
զբաղվածություն, 9, 21, 24, 55, 56, 60, 99, 100, 192, 193, 264, 266, 271, 343, 344  
զբոսաշրջություն, 47, 58, 89, 90  
զեկույց, 22, 45  
զինված ուժեր (ՀՈՒ), 9, 43, 44, 59, 69, 127, 133, 210, 242, 256, 276  
զինվորական, 161, 167, 171, 172, 210  
զուտ հարկեր, 48  
Ջուրաբիշվիլի, Սալոմե, 73, 74, 75, 82, 85

**Է**

Էլեկտրաէներգիա, 51, 230  
Էլիտա, 163  
Էներգետիկա, 89, 90, 91, 92, 219, 307, 309, 312  
Էրդողան, Ռեջեփ Թայիփ, 134, 158, 163, 169, 170, 171, 172, 174, 178, 185, 186, 187, 188, 191, 194  
Էրդողանականություն, 187, 197

**Ը**

ընդդիմադիր, 43, 61, 66, 75, 77, 79, 80, 81, 82, 83, 84, 87, 122, 124, 127, 128, 129, 145, 157, 168, 170, 338  
ընդդիմադիր կուսակցություն, 43, 61, 62, 67, 71, 75, 77, 79, 80, 82, 84, 338  
Ընդդիմադիր հարթակ՝ հանուն կյանքի, 302, 303, 305  
ընդդիմություն, 44, 66, 70, 77, 80, 82, 83, 84, 122, 125, 128, 134, 136, 137, 138, 144, 163, 166, 171, 207, 209, 251  
ընտրազանգված, 169, 170, 172, 174, 222, 229  
ընտրական բարեփոխումներ, 67  
ընտրական գործընթաց, 61, 78  
ընտրական դաշինք, 69  
ընտրական կռալիցիա, 71  
ընտրական համակարգ, 71, 76  
ընտրակեղծիք, 119, 122, 128, 209  
ընտրանի, 279, 282, 291, 297, 300, 304, 305  
ընտրատարածք, 69, 76  
ընտրատեղամաս, 72, 78, 177  
ընտրարշավ, 122, 214, 229  
ընտրող, 69, 75, 76, 78, 304  
ընտրություններ, 44, 70, 71, 72, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 83, 122, 129, 166, 168, 169, 173, 202, 249, 250, 251, 301, 302, 303, 304, 305

**Թ**

թեկնածու, 5, 12, 13, 75, 203, 254  
 Թեհրան, 206, 207, 215, 227  
 Թուրքիա, 3, 4, 8, 13, 15, 18, 22, 34, 38, 39, 40, 41, 42, 60, 89, 91, 92, 120, 132, 134, 137, 138, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 216, 217, 277, 329, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 365  
 Թրամփ, Դոնալդ, 188, 211, 212, 224, 236  
 Թրանսփարենսի Ինթերնեշնլ, 26, 45, 86, 165

**Ժ**

ժողովուրդ, 172, 202, 232  
 ժողովուրդների ժողովրդավարական կուսակցություն (ԺԺԿ), 10, 174  
 ժողովրդավարական գործընթաց, 31, 32, 61, 177  
 ժողովրդավարական ինստիտուտներ, 62, 66, 166  
 ժողովրդավարական կարգ, 171, 172, 174  
 ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ), 10, 76  
 ժողովրդավարացում, 31, 118, 151, 171  
 ժողովրդավարություն, 12, 20, 26, 30, 61, 62, 114, 121, 151, 152, 167, 170, 172, 174, 192, 251, 292, 315, 331, 337  
 ժողովրդի ծառա, 302, 303, 304, 305

**Ի**

Իմամ-հաթիփ դպրոց (ԻՀԴ), 10, 191, 192  
 Ինդոնեզիա, 185  
 ինստիտուցիոնալացում, 197

ինտեգրացիոն նախագծեր, 293, 298, 301  
 իշխանություն, 19, 27, 31, 32, 43, 44, 71, 75, 79, 105, 106, 114, 117, 118, 120, 122, 123, 124, 125, 128, 130, 131, 133, 135, 136, 137, 138, 145, 154, 157, 158, 161, 163, 165, 166, 167, 170, 172, 174, 175, 176, 180, 181, 185, 189, 191, 193, 196, 205, 207, 208, 213, 216, 225, 226, 227, 231, 232, 233, 234, 246, 247, 248, 251, 252, 253, 257, 265, 272, 281, 304, 305, 312, 337  
 իշխող ուժ, 74, 75, 79, 167, 176  
 իսլամ, 170, 191, 192, 217  
 Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս (ԻՀՊԿ), 10, 206, 208, 210, 212, 214, 217, 225  
 Իսլամական հեղափոխություն, 202, 205, 207, 209, 213, 218, 234, 236  
 Իսրայել, 208  
 Իվանիշվիլի, Բիծինա, 75, 79, 80, 86  
 իրադարձություն, 43  
 իրական աշխատավարձ, 29  
 Իրան / Իրանի Իսլամական Հանրապետություն (ԻԻՀ), 3, 4, 5, 8, 10, 13, 15, 18, 22, 34, 39, 40, 41, 42, 120, 124, 132, 147, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 239, 277, 329, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 365  
 իրանա-իրաքյան պատերազմ, 218, 219, 227, 228, 233  
 իրավաբան, 172, 173  
 իրավական համակարգ, 173, 248  
 իրավիճակ, 34, 39, 43, 46, 58, 66, 84, 106, 120, 123, 130, 133, 139, 140, 142, 145, 161, 162, 163, 176, 185, 196, 207, 208, 210, 213, 217, 225, 231, 232, 234, 236, 247, 261, 262, 265, 266, 267, 277, 278, 292, 303, 304, 305, 307, 312, 316, 319, 329, 333, 340  
 Իրաք, 177, 178, 181, 183, 234, 332, 339

**Լ**

լարի, 89, 98  
լարվածություն, 34, 67, 120, 122, 178, 206,  
210, 211, 223, 236, 249, 300, 332  
լեզվիտիմություն, 32, 77, 78, 169  
Լեհաստան, 319  
լիազորություն, 68, 70, 84, 99, 173, 176,  
187, 210, 212, 233, 246, 249, 251, 252,  
304, 317  
Լիբանան, 232, 332  
Լիբիա, 177  
լիրա, 185, 186, 187, 188  
լճացում, 105  
Լուգանսկի ժողովրդական  
Հանրապետություն (ԼժՀ), 10, 252,  
253, 301  
լրագրող, 87, 122, 127, 172  
լրատվամիջոցներ, 66, 78

**Խ**

Խաթամի, Մուհամմեդ, 207, 208, 210,  
220, 221, 227, 229, 230, 234  
խաղաղության օրակարգ, 39  
Խամենեի, Ալի, 210, 217  
Խաչատրյան, Տիրան, 43  
խառը ընտրակարգ, 69, 71, 76  
խնդիր, 39, 53, 85, 87, 89, 121, 123, 127,  
132, 171, 185, 186, 189, 193, 195, 205,  
212, 213, 215, 219, 222, 223, 225, 226,  
227, 228, 229, 230, 231, 232, 234, 235,  
242, 243, 246, 247, 249, 250, 254, 256,  
257, 259, 260, 261, 292, 297, 299, 304,  
305, 308, 314, 317, 318, 332, 337  
Խոմեյնի, Ռուհոլլահ, 201, 202, 208, 209,  
219, 226, 230, 232  
խոմեյնիականություն, 216, 227, 234  
խոսքի ազատություն, 87, 166  
Խորը և համապարփակ ազատ առևտրի  
համաձայնագիր (ԽՀԱԱՀ), 10, 89, 90,  
95

Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների Միություն  
(ԽՍՀՄ), 10, 243, 247, 292, 298  
խորհրդարան, 43, 66, 67, 68, 69, 70, 76,  
77, 78, 80, 81, 82, 87, 113, 118, 125,  
128, 133, 135, 166, 167, 168, 246, 248,  
249, 251, 252, 280, 281, 301, 305  
խորհրդարանական ընտրություններ, 43,  
44, 58, 67, 69, 71, 72, 76, 77, 81, 83,  
87, 105, 119, 120, 128, 153, 167, 169,  
170, 173, 214  
խորհրդարանական համակարգ, 67  
խտրականություն, 99, 102

**Շ**

ծառայություններ, 21, 29, 47, 48, 90, 94,  
180, 183, 186, 218, 230, 263, 267, 272,  
341, 343

**Կ**

կայուն աճ, 190  
կայուն զարգացում, 31  
կայունություն, 4, 7, 8, 16, 23, 25, 30, 31,  
32, 34, 35, 37, 42, 46, 53, 58, 60, 61,  
62, 63, 65, 66, 71, 74, 82, 98, 104, 105,  
106, 113, 114, 115, 117, 118, 119, 120, 121,  
131, 133, 138, 139, 141, 145, 148, 150,  
151, 152, 158, 159, 161, 162, 163, 165,  
171, 179, 182, 187, 189, 193, 194, 196,  
201, 203, 206, 207, 213, 215, 217, 221,  
222, 228, 243, 244, 246, 247, 254, 256,  
257, 258, 259, 260, 261, 263, 271, 277,  
278, 279, 280, 291, 293, 294, 298,  
299, 304, 306, 311, 313, 316, 317, 318,  
320, 329, 330, 331, 332, 333, 344  
Կանաչ շարժում, 209, 210  
կանոնակարգ, 90, 93, 95, 99, 248, 297  
կապիտալ, 27, 52, 92, 106, 128, 184, 185,  
188, 219, 231, 273, 312  
կառավարման համակարգ, 66, 95, 105,  
106, 122, 130, 131, 145, 169, 173, 175,



202, 208, 209, 220, 225, 267, 272, 318, 332

կառավարություն, 25, 26, 43, 44, 60, 61, 62, 66, 67, 68, 69, 76, 79, 80, 83, 84, 89, 95, 105, 106, 123, 131, 142, 161, 163, 167, 170, 175, 184, 185, 187, 188, 189, 193, 206, 209, 212, 213, 214, 215, 217, 219, 220, 222, 224, 228, 231, 232, 235, 236, 249, 252, 304, 305, 306, 309, 317, 332

կարգախոս, 135, 172, 207, 208, 209, 210, 213

կենսամակարդակ, 56, 191, 227, 271

Կենտրոնական բանկ (ԿԲ), 10, 140, 142, 147, 185, 186, 187, 195

Կիև, 301

կոնֆլիկտ, 8, 32, 241, 275, 339

կոնֆլիկտային իրավիճակ, 28

կոռուպցիա, 25, 27, 45, 85, 86, 87, 106, 122, 126, 145, 164, 165, 208, 214, 216, 217, 220, 224, 225, 226, 227, 233, 269, 331

Կոռուպցիայի ընկալման ինդեքս (ԿԸԻ), 10, 45, 86, 131, 216, 336, 338

Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ), 10, 20, 24, 26, 27, 164, 165

Կովկաս, 215, 216

Կովկասի մուսուլմանների վարչություն (ԿՄՎ), 10

Կովկասյան բարոմետր, 95, 100

կորպորացիա, 12, 185, 273, 307

կուսակցական համակարգ, 158, 166

կուսակցություն, 8, 9, 10, 59, 61, 66, 67, 69, 70, 71, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 82, 83, 84, 85, 86, 105, 113, 114, 122, 125, 128, 129, 134, 135, 136, 138, 155, 157, 162, 166, 167, 169, 170, 171, 173, 174, 176, 207, 249, 250, 256, 279, 282, 297, 298, 300, 301, 302, 303, 304, 305

կրթություն, 13, 89, 191, 235, 313

Կրոնական գործերի վարչություն (ԿԳՎ), 10, 173

Հ

հակամարտություն, 10, 15, 20, 24, 28, 34, 37, 39, 47, 121, 129, 178, 179, 242, 247, 253, 254, 255, 257, 258, 259, 260, 275, 280, 293, 297, 301, 303, 304, 307, 309, 310, 314, 316, 317, 329, 331, 332, 333, 336, 339

հակասություն, 61, 257, 277, 280, 310, 316

համագործակցություն, 5, 9, 11, 13, 61, 76, 89, 92, 93, 177, 180, 210, 220, 225, 233, 253, 254, 260, 292, 296, 298, 301, 319, 320

համազգային միասնություն, 134

համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), 10, 19, 20, 21, 25, 28, 39, 40, 48, 49, 58, 90, 91, 92, 143, 180, 181, 186, 223, 224, 225, 260, 267, 311, 336, 340, 341, 344

համախմբում, 62, 152, 174

համակարգի անկայունություն, 177

համակարգի ապակայունացում, 31

համաձայնագիր, 10, 81, 82, 83, 84, 85, 89, 91, 93, 94, 95, 208, 211, 212

համաձայնություն, 67, 71, 77, 81, 83, 118, 210, 211, 213, 224, 252, 257, 269

համաճարակ, 78, 81, 90, 106, 129, 131, 141, 145, 147, 151, 260, 267, 315

համամասնական ընտրակարգ, 67, 72, 249

համամասնական համակարգ, 71

համաշխարհային անվտանգություն, 15

Համաշխարհային բանկ, 143

Համաշխարհային բանկ (ՀԲ), 10, 19, 20, 21, 27, 50, 91, 94, 143, 144, 149, 164, 181, 183, 192, 223, 224, 229, 230, 231, 306

Համաշխարհային ռազմականացման ինդեքս (ՀՌԻ), 10, 42, 259

համաշխարհային քաղաքականություն, 277, 278, 310, 313, 315, 316, 319

համապետական ընտրություններ, 61

## Անունների և հիմնաբառերի ցանկ

համավարակ, 47, 49, 54, 58, 89, 91, 98,  
100, 131, 184, 225

Համատեղ գործողությունների

համապարփակ ծրագիր (ՀԳՀԾ), 10,  
211, 212, 223, 224, 232, 235

համատեղ հայտարարություն, 43, 77, 134

համեմատական վերլուծություն, 4, 17, 18,  
19, 51, 60, 139, 143, 151, 152, 168, 183,  
274, 317, 330

հայ-ադրբեջանական բանակցություններ,  
39

Հայաստան / Հայաստանի

Հանրապետություն (ՀՀ), 3, 4, 5, 7, 10,  
12, 13, 14, 15, 16, 18, 33, 34, 35, 36, 37,  
39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 49,  
50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59,  
60, 114, 118, 119, 121, 122, 130, 131, 133,  
134, 136, 145, 147, 151, 152, 215, 329,  
331, 333, 334, 335, 336, 337, 338,  
339, 340, 341, 342, 343, 344, 365

հայեցակարգ, 172, 209, 217, 255, 274,  
278, 280, 281, 292, 300, 317

Հայրենիքի փրկության շարժում, 43

հանրահավաք, 44, 119

հանրային աջակցություն, 169

հանրային ընդվզում, 87

Հանրապետական ժողովրդական

կուսակցություն (ՀԺԿ), 10, 167, 168,  
171, 192

հանրաքվե, 119, 120, 167, 168, 169, 173,  
174, 177

հանցագործություն, 21, 22, 24, 56, 101,  
102, 103, 145, 149, 150, 192, 227, 229,  
343

հանցագործությունների մակարդակ, 22,  
56

հանքագործական արդյունաբերություն,  
50

հասարակական կազմակերպություն  
(ՀԿ), 10, 26, 67, 70, 75, 124, 127, 296

հասարակություն, 8, 11, 12, 23, 28, 31, 32,  
61, 75, 78, 79, 82, 87, 95, 97, 102, 106,  
114, 123, 124, 125, 126, 134, 148, 167,

170, 171, 176, 179, 180, 197, 209, 213,  
216, 227, 231, 232, 241, 242, 243, 249,  
251, 257, 260, 268, 269, 270, 278, 279,  
280, 281, 304, 305, 307, 308, 332, 333

հավաք, 28, 43, 129, 132, 338

Հավաքական անվտանգության  
պայմանագրի կազմակերպություն  
(ՀԱՊԿ), 10, 301

հավաքական Արևմուտք, 34

հատուկ ծառայություններ, 122, 242

հատուկ ռազմական գործողություն  
(ՀՌԳ), 10, 252, 276, 298, 310

Հարավային Աֆրիկա, 185

Հարավային Կովկաս, 16, 39, 60, 94, 95,  
113, 329

Հարավային Կորեա, 292

Հարավային Օսիա, 331

Հարավային Ֆարս, 225

հարկային բեռ, 25, 229

հեղաշրջման փորձ, 32, 44, 189

հեղաշրջում, 32, 44, 163, 167, 168, 172,  
173, 174, 175, 176, 177, 179, 184, 186,  
189, 195, 196, 332

Հեղափոխության առաջնորդ, 201

հեղափոխություն, 28, 92, 119, 121, 122,  
130, 145, 218, 338

Հետազոտական ռեսուրսների

կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ), 10, 12  
հետազոտություն, 12, 15, 19, 26, 30, 39,  
40, 41, 87, 140, 203, 254, 300, 317

հետախուզություն, 38

հետապնդում, 124, 127, 128, 133, 135,  
138, 172, 174, 188, 189, 273, 332

հետընթաց, 45, 58, 61, 75, 130

հետճգնաժամային շրջան, 53

հետպատերազմյան շրջան, 42, 46

Հերիթիջ հիմնադրամ, 20, 25, 52, 226,  
337

հիբրիդային պատերազմներ, 4, 15, 18

հիմնախնդիր, 45, 167, 171, 177, 220, 246,  
254, 270, 301, 307, 312, 317, 329, 337

ՀՀ վիճակագրական կոմիտե, 54, 55, 56,  
60

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ), 11, 66, 78, 92, 253, 254, 276, 277, 292, 299, 319  
 Հնդկաստան, 185, 225  
 հոգևոր դաս, 167, 210, 211, 215, 232  
 հուլիսյան նահատակ, 172  
 Հունաստան, 319  
 հրաժարական, 43, 44, 45, 59, 80, 81  
 Հրաժարվում եմ պատասխանել (ՀՊ), 10  
 հրամանագիր, 21, 205, 212, 217

**Ձ**

ծերբակալություն, 122, 124, 126, 128, 132, 133, 138, 210, 338

**Ղ**

Ղուրան, 191  
 Ղրիմ, 47, 258, 301, 303  
 Ղրիմի հիմնահարց, 47

**Ճ**

Ճապոնիա, 292  
 ճգնաժամ, 32, 49, 66, 81, 84, 85, 104, 105, 106, 119, 120, 133, 135, 140, 141, 151, 173, 174, 182, 183, 184, 185, 196, 218, 225, 229, 253, 260, 262, 263, 265, 266, 274, 275, 281, 305, 306, 315, 331  
 ճնշում, 78, 105, 135, 139, 186, 189, 220, 227, 255, 292, 332, 338

**Մ**

Մագիլ-կողպեք, 339  
 մամուլ, 28, 87, 124, 207  
 մանդատ, 68, 69, 71, 77, 83, 99, 125, 168  
 մասնակցայնություն, 169  
 մասնակցություն, 26, 38, 60, 76, 92, 121, 137, 166, 246, 272, 281, 297, 304  
 մասշտաբ, 38, 263, 268, 297, 308, 316

Մարդկային զարգացման ինդեքս (ՄԶԻ), 11, 146  
 Մարդկային զարգացման համաթիվ (ՄԶՀ), 11, 21, 24, 28, 56, 146, 147, 190, 191, 193, 271, 343  
 մարդկային կապիտալ, 47  
 մարդու իրավունքների պաշտպանություն, 31  
 մարզ, 55, 268, 271, 272, 273, 304, 305, 307  
 մարտահրավեր, 78, 119, 121, 130, 135, 173, 185, 203, 213, 214, 215, 242, 260, 261, 263, 277, 310, 313, 329, 331  
 մարտավարություն, 247, 318  
 մեթոդաբանություն, 4, 7, 12, 15, 16, 23, 25, 35, 36, 37, 46, 53, 57, 63, 64, 65, 88, 98, 104, 115, 116, 141, 146, 147, 150, 159, 160, 162, 177, 182, 186, 194, 197, 203, 204, 206, 216, 221, 228, 237, 244, 245, 258, 262, 271, 275, 294, 295, 299, 306, 311, 314, 330, 334, 335, 340, 342  
 Մելիա, Նիկա, 77, 80, 81, 82, 83, 84  
 Մեծ Բրիտանիա, 91, 256  
 մեծամասնական ընտրակարգ, 67, 249  
 Մեջլիս, 203, 214  
 Մերձավոր Արևելք, 121, 215  
 միամանդատ, 69  
 Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ (ՄԱԿ-ի ԱԽ), 10, 211, 212, 221, 223, 230, 235  
 Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), 10, 14, 21, 28, 77, 146, 147, 189, 190, 208, 211, 212, 220, 221, 222, 223, 224, 230, 235, 253, 297  
 Միացյալ ազգային շարժում (ՄԱՇ), 10, 61, 66, 73, 80, 82, 83, 84  
 միգրանտ, 47  
 Միշել, Շառլ, 81, 85  
 միջազգային անվտանգություն, 60, 310, 313, 314  
 միջերկրային վերլուծություն, 4, 8, 16, 17, 28, 29, 329, 330, 331, 344  
 միջին աշխատավարձ, 29

## Անունների և հիմնաբառերի ցանկ

Միջնաժամկետ ծախսերի ծրագիր  
(ՄԺԾ), 11, 47, 48, 49, 56, 60  
միջնորդ, 39  
միջուկային զենք, 234, 253  
միջուկային ծրագիր, 208, 211, 220, 224  
միջուկային ոլորտ, 208, 212, 222, 235  
միտում, 4, 16, 31, 32, 35, 38, 41, 46, 49,  
53, 54, 57, 63, 66, 90, 100, 104, 105,  
115, 121, 145, 148, 150, 151, 159, 161,  
162, 164, 170, 179, 180, 183, 189, 193,  
203, 205, 211, 216, 221, 224, 230, 231,  
235, 236, 241, 244, 247, 248, 255, 258,  
261, 263, 265, 266, 268, 273, 276, 277,  
278, 281, 294, 310, 315, 316, 329  
Միրզոյան, Արարատ, 43  
մոդել, 16, 19, 23, 26, 27, 28, 29, 32, 33,  
44, 52, 56, 70, 157, 175, 180, 184, 186,  
219, 257, 275, 277, 278, 280, 281, 297,  
310, 315, 341  
Մոսկվա, 39, 127, 257  
Մուսավի, Միր Հուսեյն, 207, 208, 209

### Ն

նախագահ, 21, 43, 45, 67, 68, 69, 70, 71,  
72, 74, 75, 79, 81, 82, 83, 84, 85, 113,  
117, 118, 120, 122, 123, 124, 125, 126,  
127, 128, 129, 134, 136, 147, 167, 175,  
176, 181, 185, 187, 188, 194, 195, 203,  
205, 207, 208, 209, 210, 211, 212, 213,  
216, 217, 218, 219, 220, 221, 222, 225,  
228, 229, 232, 233, 235, 242, 246, 248,  
249, 252, 253, 257, 280, 281, 304, 305  
նախագահական ընտրություններ, 67, 70,  
72, 73, 74, 87, 105, 122, 173, 207, 208,  
210, 212, 214, 215, 224, 236  
նախագահական համակարգ, 170, 174,  
184  
նախագահի լիազորություններ, 67  
նախընտրական դաշինք, 69  
նավթ, 9, 47, 120, 132, 135, 139, 140, 141,  
142, 143, 144, 145, 147, 151, 220, 222,  
267, 332

ներդրումներ, 19, 20, 25, 27, 28, 50, 92,  
93, 94, 105, 106, 164, 165, 219, 223,  
224, 226, 231, 235, 273, 307, 312, 336  
ներերկրային վերլուծություն, 4, 29  
ներխուժում, 43, 80, 133, 135, 196, 293,  
306, 311, 312, 313, 316  
ներկայացուցիչ, 82, 102, 127, 167, 208,  
212, 214, 220  
ներհոսք, 47, 51, 58, 90, 165  
ներմուծում, 51  
ներուժ, 38, 95, 104, 135, 136, 138, 242,  
254, 268, 272, 273, 277, 280, 301, 315,  
316, 319  
ներքաղաքական գործընթաց, 46  
ներքաղաքական գործոններ, 42  
ներքաղաքական իրավիճակ, 134  
ներքաղաքական կյանք, 169  
Ներքին գործերի նախարարություն  
(ՆԳՆ), 11, 22, 84  
Նոր Ադրբեջան, 113, 114, 128

### Շ

Շանհայի համագործակցության  
կազմակերպություն (ՇՀԿ), 11, 301  
շարժում, 209, 227  
շիպյականություն, 201, 202  
շինարարություն, 48, 90, 219  
Շիրակ, 55  
շուկա, 88, 94, 95, 120, 139, 140, 141, 142,  
143, 145, 147, 151, 163, 184, 185, 196,  
218, 223, 264, 265, 267, 300, 308, 316,  
332  
շուկայի անկայունություն, 163, 184, 196  
շտեմարան, 22  
շփման գիծ, 38

### Ռ

ռչ պատերազմ, ռչ խաղաղություն, 7, 34,  
39  
ռստիկանություն, 81, 87

**Չ**

Չգիտեմ (ՉԳ), 11  
 Չինաստան, 89, 91, 94, 95, 97, 188, 214, 225, 277, 292

**Պ**

Պաղեստին, 213, 232  
 պայքար, 66, 86, 131, 135, 165, 171, 229, 243, 256, 257, 259  
 պաշտոնական վիճակագրություն, 25, 101, 144, 148  
 Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան (ՊԱՀՀ), 5, 11, 18  
 Պաշտպանության նախարարություն (ՊՆ), 5, 11, 13, 18, 127  
 պատգամավոր, 68, 69, 70, 80, 81, 84, 118, 125, 128, 176, 191, 203, 214, 249, 251  
 պատերազմ, 8, 34, 38, 41, 43, 47, 54, 79, 88, 120, 127, 133, 134, 135, 136, 138, 140, 147, 217, 227, 233, 255, 258, 261, 267, 276, 280, 281, 291, 297, 298, 306, 307, 312, 313, 314, 317, 318, 320, 331, 332, 339, 344, 345  
 պատերազմական գործողություններ, 39, 133  
 պատժամիջոց, 8, 27, 47, 188, 208, 211, 212, 218, 219, 220, 221, 222, 224, 225, 226, 229, 230, 231, 232, 234, 235, 236, 241, 242, 251, 253, 265, 266, 272, 282, 319, 332, 333, 340  
 Պարեկապահակային ծառայություն (ՊՊԾ), 11, 38  
 Պետական անվանական սոցիալական նպաստ (ՊԱՄՆ), 11, 149  
 Պետական անվտանգության ծառայություն (ՊԱԾ), 11, 126, 135  
 պետական համակարգ, 174  
 պետական պարտք, 185

Պետական պլանավորման կազմակերպություն (ՊՊԿ), 11, 193  
 պետություն, 9, 16, 27, 28, 32, 34, 37, 39, 41, 42, 45, 68, 76, 78, 97, 120, 121, 123, 124, 130, 139, 158, 161, 172, 175, 177, 178, 179, 181, 185, 189, 195, 227, 241, 246, 251, 254, 255, 256, 268, 269, 272, 279, 280, 281, 292, 296, 297, 300, 301, 307, 308, 310, 313, 316, 318, 319, 330, 338, 339, 340, 343  
 պլանավորում, 11, 38, 193, 218  
 պլյուրալիզմ, 166  
 Պորտուգալիա, 319  
 Պուտին, Վլադիմիր, 39, 242, 248, 253, 257  
 Պրահայի գազաթափողով, 39

**Ջ**

Ջինի գործակից, 23, 192, 230  
 Ջինի ինդեքս, 11, 21, 25, 28, 56, 235, 343  
 Ջհանգիրյան, Գագիկ, 45

**Ռ**

ռազմական անձնակազմ, 42  
 ռազմական անվտանգություն, 280  
 ռազմական գործողություն, 28, 38, 120, 127, 133, 151, 258, 298, 339, 344  
 ռազմական դոկտրին, 276, 277  
 ռազմական դրություն, 43, 68, 293  
 ռազմական ծախսեր, 39, 40, 41, 42, 259, 260  
 ռազմական հզորություն, 280  
 ռազմական միջոցներ, 38  
 ռազմական ոլորտ, 127, 254, 255, 256, 279  
 ռազմական ուժ, 241, 242, 319  
 ռազմական վտանգ, 279  
 ռազմական քաղաքականություն, 276  
 Ռազմավարության և բյուջեի նախագահություն (ՌԲՆ), 11, 187, 195

ռազմավարություն, 8, 136, 178, 185, 202, 242, 246, 247, 252, 255, 271, 278, 279, 282, 291, 292, 296, 297, 300, 302, 310, 312, 318, 319  
 ռազմատեխնիկական աջակցություն, 38  
 ռազմաքաղաքական անկայունություն, 241  
 ռազմաքաղաքական գործոններ, 247  
 ռազմաքաղաքական ինտեգրում, 300  
 ռազմաքաղաքական իրավիճակ, 298  
 Ռայխսի, Էրրահիմ, 212, 214, 215, 225, 236, 237  
 Ռաֆսանջանի, Աքքար Հաշեմի, 210, 218, 219, 221, 227, 229  
 ռեսուրս, 10, 14, 138, 141, 187, 234, 241, 242, 256, 264, 266, 268, 270, 273, 274, 282, 297, 309, 315, 318  
 ռիսկ, 27, 44, 52, 74, 164, 217, 260, 265, 266, 267, 293, 298, 305, 310, 318  
 Ռոհանի, Հասան, 210, 211, 212, 213, 214, 217, 222, 223, 224, 230, 231, 232, 235, 236  
 Ռուսաստան / Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ), 3, 4, 8, 11, 15, 16, 18, 34, 39, 43, 47, 51, 52, 58, 60, 91, 126, 137, 138, 147, 151, 152, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 292, 298, 299, 301, 303, 306, 308, 310, 311, 312, 313, 315, 316, 320, 329, 331, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 365  
 Ռուսաստան-Բելառուս միության պետություն (ՌԲՄՊ), 11, 39, 301, 331, 332  
 ռուս-ուկրաինական պատերազմ, 35, 52, 58, 298  
 ռուս-վրացական պատերազմ, 40, 88

**Ս**

Սահակաշվիլի, Միխայիլ, 79, 84, 85  
 սահմանադրական բարեփոխումներ, 66, 67, 70, 71, 79, 105  
 Սահմանադրական դատարան, 128, 158, 192  
 սահմանադրական կարգ, 169, 172, 243, 259  
 սահմանադրական փոփոխություն, 176, 196, 197  
 սահմանադրական փոփոխություններ, 69, 70, 71, 87, 119, 120, 169, 174, 175, 177  
 սահմանադրության բարեփոխում, 106  
 սահմանադրության փոփոխություն, 79, 169, 248  
 սահմանադրություն, 67, 68, 70, 72, 79, 106, 128, 169, 173, 175, 202, 203, 214, 218, 226, 227, 237, 246, 248, 249, 252  
 սանդղակ, 26, 28, 29, 30, 32, 44, 45, 102, 130, 131, 148, 216, 335, 337, 338  
 Սաուդյան Արաբիա, 188  
 Սև ծով, 94  
 սեփականության իրավունք, 20, 25, 90, 95, 337  
 Սիրիա, 177, 178, 179, 188, 213, 332  
 Սյունիք, 55  
 սոցիալական անկայունություն, 257, 260  
 սոցիալական անկարգություն, 28, 338  
 սոցիալական գործոններ, 4, 18, 24, 30, 58, 62, 114, 192, 193, 196, 330  
 Սոցիալական գործոնների ինդեքս (ՍԳԻ), 11, 18, 30, 35, 36, 53, 56, 63, 64, 98, 114, 115, 116, 122, 145, 146, 150, 159, 160, 189, 193, 194, 203, 204, 228, 229, 231, 234, 235, 236, 244, 245, 271, 276, 278, 294, 295, 311, 315, 342, 343, 345  
 սոցիալական երաշխիք, 31  
 սոցիալական զարգացում, 227, 241, 269, 273, 296  
 սոցիալական ինտեգրում, 158  
 սոցիալական լարվածություն, 56

սոցիալական կոնֆլիկտ, 32  
 սոցիալական քաղաքականություն, 98, 189, 190, 193, 197, 227, 270, 271, 272, 273, 274, 282, 310, 312  
 սոցիալ-տնտեսական գործոններ, 31, 196  
 սոցիալ-տնտեսական զարգացում, 31, 259, 297  
 սոցիալ-տնտեսական խնդիրներ, 16, 227, 232, 234, 332  
 սոցիալ-տնտեսական քաղաքականություն, 193, 194  
 սպառնալիք, 8, 106, 119, 129, 137, 158, 171, 188, 201, 205, 242, 243, 253, 259, 260, 261, 267, 269, 271, 279, 292, 305, 307, 308, 309, 310, 320, 332  
 սպառողական գներ, 29  
 Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտ, 39, 40, 41  
 ստվերային տնտեսություն, 11, 20, 25, 182, 218, 220, 267, 268, 269, 309, 341

**Վ**

Վաշաձե, Գրիգոր, 73  
 Վարդազարյան, Ռուբեն, 45  
 վարկանիշային աղյուսակ, 86, 91, 331, 337, 342  
 վարչական ռեսուրս, 75, 76  
 վարչակարգ, 157, 161, 170, 197, 223, 235, 332, 333  
 վարչապետ, 43, 44, 58, 69, 76, 80, 83, 126  
 վելայթ-ե ֆադիհ, 201, 209  
 Վենետիկի հանձնաժողով, 67, 69, 72, 175, 176  
 վերլուծություն, 12, 15, 16, 19, 28, 45, 48, 60, 118, 119, 139, 150, 177, 182, 192, 196, 224, 246, 252, 254, 264, 268, 278, 279, 293, 300, 308  
 վերնախավ, 106  
 Վիճակագրության պետական ծառայություն (ՎՊԾ), 11, 149

Վրաստան, 4, 15, 40, 41, 42, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 119, 121, 122, 147, 331, 333, 335, 336, 337, 338, 339, 342, 344  
 Վրացական երազանք, 61, 66, 70, 72, 73, 75, 77, 78, 79, 83, 84, 86

**S**

տարածաշրջան, 4, 18, 34, 37, 38, 39, 42, 52, 58, 85, 86, 94, 98, 113, 177, 213, 215, 233, 235, 270, 277, 293, 297, 298, 316, 318, 320, 329, 331, 338, 339  
 տարածաշրջանային անկայունություն, 58  
 տարածաշրջանային անվտանգություն, 15  
 տարածաշրջանային կայունություն, 15, 16, 329  
 տարածաշրջանային հակամարտություն, 183  
 տարածաշրջանային մարտահրավերներ, 81  
 տարածքային ամբողջականություն, 92, 215, 279, 317  
 տարածայնություններ, 71, 188, 254, 300  
 Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ), 11, 119, 166, 168, 169, 180, 187, 273, 301, 302, 303, 304, 305  
 տեղեկատվական տեխնոլոգիաներ, 38, 47  
 Տնտեսական ազատության ինդեքս (ՏԱԻ), 11, 20, 24, 25, 52, 165, 166, 336, 337  
 տնտեսական ակտիվություն, 47, 142, 231  
 տնտեսական աճ, 46, 47, 48, 58, 88, 105, 106, 142, 189, 306  
 տնտեսական անկախություն, 185, 186, 293  
 տնտեսական անկայունություն, 184, 266  
 տնտեսական անկում, 47, 185

տնտեսական անվտանգություն, 259,  
260, 261, 269, 305, 307, 308, 309  
տնտեսական գործոններ, 30, 139, 163,  
165, 182, 193  
Տնտեսական գործոնների ինդեքս (S<sub>գոր</sub>),  
11, 18, 20, 30, 36, 46, 47, 58, 64, 88,  
89, 95, 105, 114, 116, 122, 139, 140, 141,  
143, 145, 150, 151, 160, 182, 204, 221,  
224, 231, 235, 236, 245, 261, 276, 278,  
295, 306, 307, 308, 339, 340, 341, 344  
տնտեսական զարգացում, 14, 88, 95,  
105, 180, 222, 227, 261, 272, 307, 319  
տնտեսական համակարգ, 187, 307, 308  
տնտեսական ճգնաժամ, 81, 163, 165,  
182, 184, 196, 224, 235, 271, 272  
տնտեսական ճյուղեր, 48  
տնտեսական քաղաքականություն, 97,  
145, 180, 197, 268, 296, 307  
տնտեսության վարկավորում, 20, 25  
տնտեսություն, 20, 25, 47, 50, 52, 60, 90,  
91, 95, 98, 106, 132, 139, 141, 142, 180,  
181, 183, 184, 185, 186, 188, 189, 190,  
194, 196, 205, 208, 212, 213, 214, 216,  
217, 218, 219, 221, 222, 223, 224, 225,  
226, 227, 229, 231, 232, 234, 235, 236,  
256, 257, 260, 262, 263, 265, 266, 267,  
268, 269, 270, 296, 305, 306, 308,  
309, 318, 331, 332  
տոկոսադրույք, 186, 187  
տուրբուլենտություն, 34, 57, 234, 236,  
243, 246, 250, 275, 277, 278  
տվյալներ, 4, 5, 18, 19, 21, 22, 26, 27, 28,  
29, 36, 39, 40, 41, 42, 47, 50, 51, 52,  
57, 64, 65, 95, 100, 102, 116, 142, 143,  
144, 161, 164, 168, 183, 186, 192, 207,  
213, 217, 222, 223, 224, 226, 227, 229,  
230, 231, 235, 236, 245, 250, 259, 260,  
264, 295, 302, 307, 308, 311, 331, 335,  
336, 339, 341, 343, 344  
տրանսպորտ, 89, 232, 307  
Տրոցկի, Լև, 34

**Ց**

ցնցում, 55, 61, 62, 105, 142, 184, 185,  
262, 263, 264, 275, 333  
ցույց, 28, 43, 61, 80, 119, 121, 128, 132,  
133, 161, 178, 205, 206, 207, 209, 210,  
212, 213, 214, 216, 229, 233, 234, 338,  
339  
ցուցանիշ, 17, 20, 21, 25, 26, 27, 28, 29,  
38, 39, 40, 44, 45, 47, 49, 50, 52, 53,  
54, 55, 56, 58, 86, 90, 91, 98, 104,  
105, 106, 117, 130, 140, 144, 146, 147,  
148, 150, 162, 163, 165, 181, 183, 186,  
189, 190, 193, 196, 209, 210, 211, 222,  
224, 229, 231, 236, 256, 261, 267, 268,  
271, 273, 276, 299, 306, 311, 315, 331,  
336, 337, 338, 340, 341, 343, 344, 345  
ցուցարար, 43, 77, 80, 87, 133, 135, 172,  
178, 207, 209, 212, 214, 232  
ցուցիչ, 26, 132, 280, 305, 319

**Ու**

Ուկրաինա, 3, 4, 8, 15, 16, 18, 47, 60, 119,  
121, 151, 152, 177, 252, 253, 254, 276,  
291, 292, 293, 294, 295, 296, 297, 298,  
299, 300, 301, 302, 303, 304, 305,  
306, 307, 308, 310, 311, 312, 313, 314,  
315, 316, 317, 318, 319, 320, 329, 331,  
333, 334, 335, 336, 337, 338, 339,  
340, 341, 342, 343, 344, 345, 365  
ուղերձ, 79  
ուրան, 235, 236

**Փ**

Փաշինյան, Նիկոլ, 39, 43, 44, 58, 59  
փափուկ ուժ, 280, 316  
փխրուն հնգյակ, 185  
Փոթի, 91  
փոխակերպումներ, 15, 16, 34, 37, 46,  
280



փոփոխական, 19, 23, 24, 25, 27, 28, 29, 44, 163, 165, 190, 192, 196, 336, 337, 339, 341, 343

**Ք**

քաղաքագետ, 173  
 քաղաքական ազատություններ, 87  
 քաղաքական անկայունություն, 105, 106, 163, 171, 189  
 քաղաքական բևեռացում, 62, 66, 81, 87  
 քաղաքական գործընթաց, 16, 66, 81, 119, 166, 169, 260, 277, 282, 315  
 քաղաքական գործիչ, 15, 70, 113, 124, 138, 209, 214, 275  
 քաղաքական գործոններ, 19, 20, 24, 26, 27, 30, 38, 46, 65, 117, 207, 246, 258, 259, 337  
 Քաղաքական գործոնների ինդեքս (ՔԳԻ), 11, 16, 18, 19, 30, 36, 37, 38, 58, 64, 65, 114, 116, 117, 118, 120, 130, 131, 132, 135, 141, 145, 150, 151, 160, 162, 163, 165, 196, 204, 205, 206, 207, 209, 210, 211, 235, 236, 245, 258, 278, 295, 298, 299, 300, 315, 335, 336, 337, 344  
 քաղաքական դաշտ, 65, 74, 136, 207, 241, 256, 331  
 քաղաքական ընտրանի, 171, 242, 293  
 քաղաքական իրավիճակ, 261, 292  
 քաղաքական իրավունքներ, 44, 86, 87, 130, 337  
 Քաղաքական իրավունքների ինդեքս (ՔԻԻ), 11, 20, 24, 26, 336, 337, 338  
 քաղաքական լանդշաֆտ, 61, 62  
 քաղաքական լարվածություն, 66, 81  
 քաղաքական կայունություն, 4, 7, 8, 12, 16, 17, 19, 20, 23, 25, 27, 28, 30, 32, 37, 57, 61, 62, 65, 67, 83, 105, 113, 114, 119, 121, 133, 145, 152, 157, 158, 161, 167, 173, 175, 178, 196, 197, 210, 217, 241, 249, 254, 256, 257, 270, 273, 279, 280, 315, 331, 332, 333, 337, 344

քաղաքական կյանք, 31, 62, 82, 139, 192, 243, 314  
 քաղաքական համակարգ, 4, 8, 13, 15, 23, 30, 31, 32, 34, 35, 37, 46, 53, 57, 58, 63, 115, 117, 119, 120, 121, 133, 138, 139, 142, 145, 148, 150, 158, 159, 161, 162, 166, 170, 177, 178, 179, 182, 194, 196, 201, 203, 206, 215, 221, 228, 243, 244, 246, 254, 257, 258, 259, 260, 261, 271, 274, 276, 277, 278, 279, 280, 281, 291, 292, 293, 294, 298, 299, 306, 311, 313, 315, 317, 318, 329, 331, 332  
 Քաղաքական համակարգի կայունության ինդեքս (ՔՀԿԻ), 4, 7, 8, 11, 12, 15, 16, 18, 19, 23, 24, 25, 26, 30, 35, 36, 37, 38, 46, 52, 53, 56, 57, 58, 63, 64, 65, 88, 98, 104, 105, 114, 115, 116, 130, 132, 141, 146, 148, 150, 151, 159, 160, 162, 182, 192, 194, 196, 197, 203, 204, 206, 221, 228, 233, 234, 236, 237, 243, 244, 245, 254, 258, 262, 271, 274, 275, 276, 277, 279, 293, 294, 295, 299, 300, 306, 307, 311, 313, 314, 315, 317, 330, 331, 333, 334, 335, 337, 339, 340, 342, 344  
 քաղաքական համակարգի կայունություն, 4, 7, 8, 11, 12, 15, 16, 18, 23, 24, 30, 33, 35, 36, 38, 46, 53, 57, 64, 65, 104, 105, 114, 116, 150, 160, 162, 192, 196, 197, 204, 233, 234, 236, 237, 243, 245, 274, 275, 276, 280, 293, 295, 313, 314, 315, 330, 331, 333, 334, 335, 339, 342, 344  
 քաղաքական ճնշում, 44, 332  
 քաղաքական ուժ, 61, 66, 105, 118, 124, 134, 243, 305  
 քաղաքական ռեժիմ, 106  
 Քաղաքական տրակտատ, 202  
 քաղաքականություն, 13, 27, 66, 74, 78, 80, 82, 89, 90, 91, 118, 123, 124, 126, 130, 134, 137, 140, 161, 162, 171, 178, 179, 185, 186, 187, 189, 190, 195, 207, 208, 211, 216, 218, 222, 223, 228, 230,

## Անունների և հիմնաբառերի ցանկ

237, 242, 251, 255, 263, 264, 265, 266,  
267, 270, 271, 272, 274, 278, 279, 298,  
300, 301, 304, 308, 311, 315, 316, 318,  
320, 329  
քաղաքացի, 27, 31, 62, 75, 76, 79, 81,  
147, 166, 169, 172, 189, 203, 211, 212,  
213, 248, 255, 263, 264, 272, 307  
Քաղաքացիական ազատությունների  
ինդեքս (ՔԱԻ), 11, 20, 24, 26, 336,  
337, 338  
Քաղաքացիական ազատությունների  
ինդեքս (ՔԻԻ), 337  
քաղաքացիական  
անհնազանդություններ, 11, 20, 24, 28,  
32, 43, 87, 226, 235, 275, 333, 336,  
338  
քաղաքացիական հասարակության  
կազմակերպություններ (ՔՀԿ), 11, 62,  
151, 276, 281, 298  
քաղաքացիական հասարակություն, 62,  
249, 251, 279  
քարոզարշավ, 76, 78, 169, 207, 211, 227  
քարոզչություն, 62, 79, 114, 135  
Քեմալ, Մուստաֆա, 168  
Քիմիական գեների մասին կոնվենցիա,  
220  
Քլինթոն, Բիլ, 205, 219, 220  
ՔՈՎԻԴ-19 / COVID-19, 47, 78, 89, 91,  
98, 100, 105, 106, 107, 114, 129, 131,  
132, 140, 141, 144, 147, 151, 152, 156,

214, 225, 247, 260, 284, 285, 287, 310,  
315, 316, 320, 324  
Քուրդիստանի բանվորական  
կուսակցություն, 184, 339  
քվե, 71, 166, 168, 169  
քվեարկություն, 67, 68, 72, 77, 177, 248

### Օ

Օրամա, Բարաք, 211, 235  
օտարերկրյա ուղղակի ներդրումներ  
(ՕՈՒՆ), 11, 19, 24, 27, 49, 50, 51, 58,  
88, 90, 91, 92, 164, 165, 186, 296, 336  
օրակարգ, 34, 35, 44, 60, 158, 184, 275,  
316  
օրենսգիրք, 99, 100, 303  
օրենսդրական դաշտ, 78, 95  
օրենսդրություն, 20, 25, 99, 173, 246,  
296, 317, 337  
օրենք, 21, 26, 31, 44, 78, 79, 106, 121,  
122, 123, 173, 177, 185, 188, 195, 216,  
217, 248, 253, 257, 269, 297  
օրենքի գերակայություն, 26, 31, 44, 80,  
106, 257

### Ֆ

ֆինանսական ճգնաժամ, 88  
ֆինանսատնտեսական ճգնաժամ, 47, 49,  
53, 58, 182, 275

**ԴԻՄԱԿԱՅՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ  
ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԵՎ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ**

*(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա,  
Իրան, Ռուսաստան, Ուկրաինա)*

*Խմբագիր՝  
ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագիր՝ Լ. Ավետիսյան

*Հեղինակները հաստատում են, որ ծանոթ են «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:*

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.ysu.am](http://www.publishing.ysu.am)

**Արուսյակ Ալեքսանյանը** քաղաքական գիտությունների թեկնածու է, դոցենտ, Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտությունների բաժնի ղեկավար և դասախոս: 2009 թ.-ին Արուսյակ Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում մշակել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը, իսկ 2012 թ.-ին ՀՌԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի հետազոտական ծրագրի շրջանակներում՝ Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը: Արուսյակ Ալեքսանյանի մասնագիտական խմբագրությամբ և համահեղինակությամբ հրատարակվել է 7 աշխատություն, որոնցից 6-ը՝ երկլեզու:

Աշխատանքը Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանության կիրառմամբ հերթական և շարունակական ուսումնասիրությունն է: Գրքում կիրառված տարածաշրջանային մոտեցումը շեշտադրում է այդ երկրների փոխկապվածությունը և ընդհանուր մարտահրավերները, որոնց նրանք առերեսվում են՝ սկսած չլուծված հակամարտություններից մինչև ներքաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները: Աշխատանքի ուսումնասիրություններն անդրադառնում են ինչպես առանձին երկրների կայունության միտումներին, այնպես էլ նրանց փոխազդեցության և աշխարհաքաղաքական փոխակերպումների հետևանքով առաջացած տարածաշրջանային օրինաչափություններին: Այսպիսի համալիր վերլուծությունները հնարավորություն են տալիս առավել խորքային հասկանալու տարածաշրջանային կայունության հետազոտությունները:

